ԼԵՋՎԻ ԵՎ ՈՃԻ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գ. Աբրահամյան,
բանասիրական գիտությունների թեկնածուներ
Ռ. Մ. Թոխմախյան, Ա. Մ. Աբամյան, Բ. Կ. Ղազարյան

Գիրքը հրատարակության են նախաշավորել
բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Մ. ԴՐԻԳՈՐՅԱՆԸ,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Հ. Գ. ՂԱԶԱՐՅԱՆԸ,
բանասիրական գիտությունների թեկնածուներ Բ. Ս. ԴՈՒԼԱԿՅԱՆԸ,
Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆԸ, Է. Լ. ՄԿՐՏՉՅԱՆԸ, Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆԸ,
Ն. Ժ. ՍԱՐԳՍՅԱՆԸ և Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆԸ

Ժողովածուում ներառված աշխատանքները նվիրված են ժամանակակից հայերենի գիտական-բանասիրական տեքստերում պարբերության կազմավորման առանձնահատկություններին և բացահայտմանը, հայերենի հնչաշղթայում հնչույթների հնարավոր կապակցությունների դրսևորումներին, ժամանակակից հայերենի միավորյալ նախադասության քերականական-կառուցվածքային, իմաստային-ներքերանգային և գործառական-ոճական առանձնահատկությունների քննությանը, ինչպես նաև ժամանակակից հաշվողական տեխնիկայի կիրառմամբ տեքստի որոշակիացման հարցերին։

Հասցեագրվում է հայոց լեզվի մասնագետներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, ուսուցչությանը։

4602000000
Լ ——————86—87
703 (02)—88

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988

Ա. Մ. ԱՐԱՄՅԱՆ

ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ

I. ՏԵՔՍՏԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

1. Վերջին տասնամյակում լեզվաբանության մեջ լայն թափ է առել տեքստի լեզվաբանությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությունը որն ընդգրկում է լեզվական երևույթների ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային կողմը։

Տեքստի լեզվաբանությունը, որպես լեզվաբանության նոր և հիմնավոր ճյուղ, ուշադրության առարկա է դառնում 40-ական թվականների կեսերից։ Որպես հետազոտության նյութ ուսումնասիրողները ընտրում են նախադասությունից դուրս լեզվական ավելի խոշոր միավորներ (վերֆրազային միասնություններ), որոնք ներկայացնելով նվաղագույնը երկու նախադասություններ, ընդգրկում են մինչև պարբերությունները։

Քանի որ պարբերությունն է մեր հետազոտության հիմնական նյութը, ապա նրա, որպես լեզվական ինքնուրույն միավորի կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ ենք գտնում ընդհանուր առմամբ անդրադառնալու «տեքստ» լեզվական միավորին, վերջինիս առանձնահատկություններին, տեքստն ամբողջացնող իմաստային ու ձևական կապակցություններին, տեքստակազմիչ այն հիմնական օղակներին, որոնց մեջ կարևորագույն գործառական դերը պատկանում է պարբերությանը։

Տեքստն իր բոլոր տեքստակազմիչ օղակներով ներքին և արտաքին կապերի մի ամբողջություն է։ Դրանք գործում են անդրադարձման և փոխպայմանավորվածության սկզբունքով։

Արտաքին կապերը իրականանում են տեքստ-պարբերություն կազապարով, իսկ ներքին կապերը հիմնականում գործում են պարբերություն-նախադասություն (պարբերություն) ուղղությամբ և ունեն դրսևորման բազմազան ձևեր, որոնք և ընկած են պարբերությունների կազմակերպման առանձնահատկությունների հիմքում։

Արտաքին կապերի դրսևորման պրոցեսում շարունակ առնչվում ենք ամբողջ տեքստի հետ, քանի որ վերջինիս ամբողջությունը փաստորեն պայմանավորվում է այն հանգամանքով, թե պարբերությունների ծավալման և գործառության ոլորտը որքանով է համապատասխանում տեքստի առաջադրած խնդիրներին:

Ներքին կապերի բացահայտման ընթացքում մեզ առավել հետաքրքրում են պարբերությունների, որպես տեքստակազմիչ հիմնական օղակների ա. միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները, բ. դրանց մեջ մտնող նախադասությունների՝ որպես պարբերությունների կազմիչների, իրար նկատմամբ եղած հարաբերությունները, գ. պարբերությունների ներսում գտնվող կապակցությունների իրականացման միջոցների (կրկնություններ, բառակապակցություններ, բառեր, կապեր, շաղկապներ, խոսքային իրադրություններ, քերականական ձևեր և այլն) դրսևորման ձևերը, դ. արդեն հայտնի և նոր տրվող հաղորդման (թեմա-ռեմա) և դրանց միջև եղած կապի դրսևորման ձևերը, ե. պարբերություն կազմող նախադասությունների հաղորդակցային տիպերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները և տեքստի ընդհանուր հնչերանգային ուղղվածության նկատմամբ դրանց ունեցած ազդեցությունը:

Նշենք, որ տեքստում գործող արտաքին և ներքին կապերը իրարից անջրպետել և բոլորովին առանձնացնել չի կարելի, քանի որ դրանք ողջ տրամաբանական ատաղձն են կազմում:

Հարցի հետազոտության հենց սկզբում մենք առնչվում ենք «կապակցված տեքստ» լեզվական երևույթի հետ: Սա նշանակում է, որ դրվում է կապակցված մտքով իրար հաջորդող նախադասությունների շղթայի առկայության անհրաժեշտությունը. այն նախադասությունների, որոնք իմաստային մեկ շրջանակի մեջ մեկ ամբողջություն են կազմում: Սա հենց այն օղակն է, որը համապատասխանում է «պարբերություն» (վերֆրազային միասնություն) լեզվական հասկացություններին: Հանդիսանալով կապակցված, ավարտուն իմաստային միավոր, նրանում խոսքային, քերականական իմաստային դանազան ձևերով արձագանք են գտնում նախորդ օղակներում, որ մենք կանվանենք պարբերություն՝ հր, արծարծված հարցերը (տեքստի բովանդակության առումով) և միաժամանակ իմաստային շղթա է ստեղծվում հետո եկող պարբերությունների հետ կապը ապահովելու համար: Այսինքն, իրականանում է արտաքին կապը ամբողջ տեքստի և նրա կազմիչների՝ պարբերությունների միջև: Նման գծային իմաստային հարաբերությունը լեզվային միավորների համար նշանակալից է, քանի որ այս հիմքի վրա կառուցվում է տեքստի բովանդակությունը: Այս հարաբերության ընթացքում նկատի են առնվում ակտուալ հատույթավորման հետ կապվող շատ հարցեր, թեմա-ռեմա հա-

բաբերությունը, ենթատեքստի և տեքստի հարաբերությունը, բառերի դասավորությունը, զանազան բառամիջոցների՝ հոդերի, կապական բառերի, շաղկապների օգտագործումը և այլն։ Ուրիշ խոսքով՝ պարբերության քերականական, իմաստային և ձևական կողմերի բացահայտումը կատարվում է ոչ թե ինքն իր մեջ, այլ ամբողջ տեքստի՝ ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող օղակների ֆոնի վրա. այսինքն՝ տեքստով դիտվում է որպես բարձր կարգի մեկ ամբողջություն, իսկ պարբերությունները որպես դրա մեջ մտնող առանձին կապակցված և կապակցող օղակներ։

2. Տեքստի լեզվաբանական գաղափարի հետ կապված շատ հարցեր ուշադրության կենտրոնում են եղել դեռևս Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների մոտ։ Հիշենք օրինակ Վ. Սկալիչկայի 1948 թ. հրատարակած հոդվածը խոսքի լեզվաբանության կառուցվածքի ուսումնասիրման անհրաժեշտության մասին, Շ. Բալլի, Ջ. Հարիսի դիտողությունները ակտուալիզացիայի, կորեֆերենցիայի մասին և այլն։

Սովետական լեզվաբանության մեջ տեքստի լեզվաբանության շատ հարցեր բավականաչափ ուսումնասիրվել են, և հիմա ունենք բազմաթիվ մենագրություններ և դիսերտացիաներ՝ նվիրված լեզվաբանության այդ նոր զարգացող բնագավառին (18)։

Սկզբնական շրջանում տեքստի լեզվաբանությունը դիտվել է որպես մի բնագավառ, որտեղ ուսումնասիրվում է «լեզուն գործողության մեջ» (24)։ Եվ սա տեքստի լեզվաբանության բնորոշումներից ամենից հաջողն է, քանի որ մինչ այդ միտում կար այն կոնկրետացնել միայն սոսյուրյան «parole»-ի շրջանակներում։

Սակայն տեքստի լեզվաբանության նպատակը և խնդիրները չեն շրջափակվում սոսկ անհատական, երբեմն նաև պատահական բնութագրումների բացահայտումով։ Ճիշտ հակառակը։ Տեքստի լեզվաբանության նպատակը և խնդիրների ընդհանուր օրինաչափություններ գտնելը և հաստատելն է, տեքստի քերականական կարգերի ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական միավորների հայտնաբերելը։ Ինչպես իրավացիորեն նշել է Ռ. Հարվեգը (25), տեքստի լեզվաբանությունը ջանում է գտնելու տեքստակազմիչ այնպիսի օրինաչափություններ, որոնք բնորոշ են բոլոր տեքստերին (ընդգծումը մերն է)։

Ահա այն ճշմարտացի բնորոշումը, որը որպես աշխատանքային դրույթ է ծառայելու մեր հետազոտության ընթացքում։

3. Որո՞նք են այն հիմնական լեզվաբանական գաղափարները, որոնք ելակետ են հանդիսացել տեքստի լեզվաբանության համար։

Ամենակարևոր և բեղմնավոր լեզվաբանական ելակետը տեքստի լեզվաբանության համար ծառայել է և ծառայում է նախադասության ակտուալ հատույթավորումը՝ տեքստի ներքին կապերի դրսևորումը։ Մտքի

կենտրոնը, նրա դիրքը մնացած անդամների նկատմամբ, խոսքի իրադրությունից բխող շեշտադրումը, այսինքն մտքի կենտրոնի առանձնացումը, բառերի դասավորությունը՝ պայմանավորված խոսքի իրադրությունով և հաղորդման կարևորությունով, հաղորդման մեջ իմաստային այնպիսի կապակցվածության ու պայմանավորվածության բացահայտումը, որը ներկայացնում է թեմա-ռեմա հարաբերությունը և դրանով իսկ մատնանշում տեքստ-ենթատեքստ կապակցությունը, նախադասության մեջ առանձին բառերի, բառաձևերի օգտագործումը և այլն. այս բոլորը, որ արվում էր նախադասության շրջանակներում, ընդգրկելով, վերջապես, նաև հնչերանգի իմաստազատիչ գործառույթը, փոխադրվում է տեքստաբանության մեջ և տեքստի լեզվաբանության խնդիրներն ու գործառության ոլորտը դարձնում բովանդակությամբ հագեցված և գործառույթամբ՝ արդյունավետ։

Քանի որ տեքստի լեզվաբանությունը իր գործունեության համար որպես ամենահարմար օղակ ընտրել էր նախադասությունը(15), բնականաբար այն պետք է առնչվեր բանավոր տեքստում հիմնականում հնչերանգի ամենակարևոր՝ իմաստազատիչ գործառույթին, որն, ինչպես հայտնի է, ընկած է ոչ միայն հաղորդման հաղորդակցող տեսակը որոշելու հիմքում, այլ նաև առանձնացնում և տարբերակում է հաղորդման իրադրությունից բխող մեկ կամ մի քանի անցումներ, դառնում է ակտուալ հատույթավորման հիմք,խոսքը կարող է վերլուծել մինչև նվազագույն միավորը և, ընդհակառակն, դույզ ն տալով խոսքի կազմիչների միջև գոյություն ունեցող կապն ու փոխպայմանավորվածությունը։ Այդ կազմիչները կարող են ներկայանալ ինչպես մեկ անդամի, այնպես էլ ավելի մեծ (ծավալով) միավորների ձևով՝ սկսած շարույթից, վերջացրած ամբողջ նախադասություններով (երկրորդական, գլխավոր և այլն)։

Տեքստի լեզվաբանության մեջ կարևոր օղակներից է շարույթը, որը, փաստորեն, տեքստի քերականական կառուցվածքում խաղում է իմաստակիր նվազագույն այն միավորի դերը, որը տարբեր հնչերանգային դասավորման շնորհիվ տեքստում տարբեր կշիռ և կարևորություն է ստանում։ Շարույթը (որը կարող է կազմված լինել նաև մեկ ա՝ամից) փաստորեն տեքստի մեջ մտնող այն կազմիչն է, որը ենթակա է հնչերանգային հակադրության, իսկ հնչերանգը, ինչպես գիտենք, ընկած է խոսքային իրադրությունում՝ մտքի կենտրոնի առանձնացման հիմքում։

4. Վերը նշեցինք, որ տեքստի լեզվաբանության ոլորտում կարևոր գործոններ են հնչերանգը, բառերի դասավորությունը և զանազան բառ-բառաձևերի օգտագործումը։ Այս երեքը, որպես պարտադիր գործոններ՝ որևէ տեքստի ներքին կապերի բացահայտման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել։

Տեքստի վերլուծման հիմնական ձևը շարահյուսական վերլուծությունն է։ Այս դեպքում անմիջականորեն գործ ունենք նախադասության հետ։ Բայց քանի որ տեքստը պարունակում է ոչ մեկ նախադասություն, այլ մեկից ավելի, որոնք ենթադրում են միմյանց նկատմամբ գոյություն ունեցող դանազան կարգի վերաբերություններ՝ համադաս, ստորադաս, տեքստի նկատմամբ հեղինակի վերաբերմունք՝ երկխոսության ձևով, և կամ իրեն՝ հեղինակի ինքն իր հետ ունեցած վերաբերություն (մենախոսության մետատեքստ) և այլն, ապա ուրեմն առնչվում ենք կազմավորված, ամբողջական, ավարտուն տեքստի հետ։ Վերջին գործոնները հաղորդակցման համար որոշիչ են և պարբերությունների վերլուծման համար ելակետային, քանի որ կապակցված տեքստի կազմության մեջ պարբերությունները հիմնական օղակ են կազմում։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ է կապակցված տեքստը։

Կապակցված տեքստ ասելով ենթադրվում է հաղորդման այն հատվածը, որն իր մեջ պարունակում է տեքստի նախորդ օղակներում եղած հաղորդում (թեմա)։ Տեքստի կապակցվածությունը միշտ ենթադրում է երկխոսություն, այսինքն հաղորդմանը մասնակցող գործող անձանց նվազագույնը։ Ըստ որում անձը, որին հասցեագրվում է հաղորդումը, պետք է բավարար չափով գիտելիքներ ունենա հաղորդման բովանդակության մասին. հակառակ դեպքում տեղի չի ունենա, այն կընդհատվի։ Երբ ասում ենք, որ հաղորդումը պահանջում է նվազագույնս երկխոսություն, նկատի ունենք հաղորդողին և ընդունողին. սակայն նշենք, որ այդ ընդունողը միշտ չէ, որ լինում է այլ անձնավորություն (որի ժամանակ կառուցվում է երկխոսություն)։ Ընդունողը կարող է լինել նաև ինքը՝ հաղորդողը, որի ժամանակ հաղորդումը ստանում է մենախոսության ձև։

Այսպիսով՝ կապակցված հաղորդման ժամանակ գործում են երկու հիմնական հանգամանքներ. ա. երբ տեղի է ունենում անմիջական շփում հաղորդողի և ընդունողի միջև (երկխոսություն), և բ. երբ հաղորդողը և ընդունողը հանդես են գալիս միևնույն անձով (մենախոսություն, մեկուսի խոսք, ինքնամեկնաբանություն, ինքնավերլուծություն և այլն)։

Տեքստի կապակցվածության հիմնական պայմաններից, ինչպես ասվեց, ամենաառաջինը թեմայի ընդհանրությունն է նախ՝ ամբողջ տեքստի և հետո հաղորդողի և ընդունողի համար։

Նոր տարրի մուտքը (ռեմայի կազմավորումը) կատարվում է այնպես, որ այն օրգանապես կապվում է նախորդ հայտնի տարրին և տեքստի բովանդակային ընդհանրությունը չի խաթարվում, այլ հաստատում է։ Նոր տարրի տեքստի մեջ մուտք գործելու եղանակները բազմազան են և արդեն վերաբերում են տեքստի ներքին կապերի շրջանակներին։ Նորը կարող է մուտք գործել տեքստի մեջ ա. թեմայի ընդհանրու-

բյամբ, տեքստում օգտագործվող իմաստային (բովանդակային) և բառային առանձին տարրերի մուտքով։ (Ասենք խոսվում էր ֆուտբոլի մասին, դրան զուգահեռ խոսք է բացվում նաև ձեռքի գնդակի մասին)։

բ. Նոր մուտք գործող տարրը ընդհանուր տեքստին կարող է կապվել տրամաբանական հիմքով (օրինակ՝ Դիսերտացիայի պաշտպանությունից հետո սուրճի սեղանի շուրջը նորից շարունակվում էր դիսերտացիայի հետ առնչվող որոշ հարցերի քննարկումը)։

գ. Հաճախ տեքստի մեջ նորը մուտք է գործում այնպիսի բառերի կամ անվանումների միջոցով, որոնք ի մի են բերում ողջ նախկին հաղորդածի բովանդակությունը (ռեկուրենցիայի սկզբունք)։ Դրանք մեծ մասամբ լինում են դերանունները, որոնք կարող են փոխարինել ամբողջ հաղորդումների (օրինակ՝ Շուտով մենք լսեցինք մի լուր, որը, ճիշտն ասած, բոլորիս ցնցեց)։ Սակայն այդ դերով կարող են հանդես գալ նաև ամբողջ նախադասություններ, որոնք կարող են ներկայացնել խոսքային նման իրադրություններ, մարդկային նման ապրումներ և այլն։ (Օրինակ,— Մենք խոսում էինք այդ հիվանդության մասին և, ես, ափսոսանքով հիշեցի իմ ծանոթ նկարիչներից մեկին, որի մոտ, անկասկած, այդ նույն հիվանդությունն էր)։

դ. Տեքստի կապակցվածությունն ապահովում են նաև այնպիսի երևույթներ, երբ նորը մուտք է գործում կրկնությունների ձևով։ Դրանք կարող են լինել բառացի (կրկնության ռեկուրենցիա), երբ նորը մուտք է գործում տեքստում արդեն եղած բառի կրկնությամբ (օրինակ՝ Ես առաջինը տեսա նրանց՝ մեքենայի մոտ։ Մեքենայի դիրքը ինձ զարմացրեց)։ Կրկնությունը կարող է լինել նաև համանունների ձևով։ (Օրինակ՝ Լույսը մարեց, էլեկտրականությունն էին անջատել)։ Լեզվաբանական գրականության մեջ սրանք կոչվում են ռեկուրենտներ։ Ընդհանուր առմամբ սրանք են այն միջոցները, որոնք ապահովում են տեքստի և նրա մեջ մտնող խոշոր ու մանր լեզվական միավորների կապը, որն իր հերթին ամբողջական տեքստ կառուցելու հիմնական պայմանն է հանդիսանում։

5. Տեքստի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի լեզվաբանների այդ հարցի կապակցությամբ արտահայտած մտքերին։ Այսպես. Ս. Ն. Գինդինը իր «Советская лингвистика текста. Некоторые проблемы и результаты (1948-1975)» հոդվածում (տես գրակ. ցանկը) ներկայացնում է քննվող պրոբլեմի զարգացման պատկերը՝ ինչպես ժամանակագրական, այնպես էլ հարցադրման սկզբունքային առումներով։

Չանդրադառնալով հարցի ժամանակագրական շարադրանքին, քանի որ այն ներկայացված է նշված հոդվածում, մենք շոշափենք մի քանի

սկզբունքային դրույթներ, որոնք անմիջականորեն առնչվում են թեմային։

Հոդվածում հեղինակը առաջ է քաշում միջֆրազային կապակցության (ՄՖԿ) գաղափարը և հստակորեն ներկայացնում է վերջինիս կազմությունը։ ՄՖԿ-ն ընդգրկում է բավական մեծ թվով կազմիչներ։ Դրանցից բառային և բառակապակցական կրկնությունները, անձնական դերանունների դանազան ձևերը, միևնույն շարույթի տրոհումից ստացված մի քանի նախադասություններ (ռեպլիկի ձևով), իմաստային հատվածներ՝ ամբողջի և մասի հարաբերության ձևով։ Մեծ նշանակություն է տրվում առանձին նախադասությունների շրջանակներում հանդես եկող կապակցող ձևերին. շաղկապներին, դերանուններին, պարագայական հարաբերությունների դրսևորման ձևերին, բառերի դասավորությանը, հնչերանգին։

Հարցի հետագա զարգացումը, սակայն, հետազոտողներին բերում է այն եզրակացության, որ ՄՖԿ-ն՝ նախադասության ներսում գործող կապակցությունների միջոցով ներկայացնելը բավարար չէ, մանավանդ որ որոշ լեզվաբաններ «բառային կրկնությունները» որպես նախադասության ներքին կապակցական հարաբերությունների արտահայտիչներ, ոչ միայն անտեսում էին, այլև չէին ընդունում (Բ. Մ. Գասպարով)։ Սակայն հարցի հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տեքստում նախադասությունների կապակցությունը ամենից առաջ իրականանում է մտքի իմաստի զարգացմամբ և փոխանցմամբ, որն իր հերթին ամենից առաջ նկատի ունի բառային և ժամանակային գործոնների ընդհանրությունը։ ՄՖԿ-ն իրականանում է ոչ միայն նախադասությունների կապակցման ձևերի միասնությամբ, այլ նաև մտքի օբյեկտների միասնությամբ, որոնք ներկայացնում են կրկնվող բառերով և բառակապակցություններով, և հանդես են գալիս ողջ տեքստը կապակցող, միահյուսող գործառույթամբ։

Տեքստի լեզվաբանության պրոբլեմների մշակմամբ զբաղվող լեզվաբան Բ. Մ. Գասպարովը իր մի շարք աշխատություններում առաջ է քաշում այն ենթադրությունը, որ բառային կրկնությունները սոսկ արտաքին, պատահական ուղեկիցներ են ՄՖԿ-ներում, որ տեքստում կարևոր են այնպիսի կապակցությունները, որ, այսպես կոչված, «աղատ, անկախ» այդինքն՝ քննարկվող նախադասությունները դիրքային կախվածության մեջ են գտնվում այնպիսի կատեգորիաներից, որոնք առկա են նաև մյուս նախադասություններում։

Սակայն այս դրույթը պաշտպանող հեղինակները կամա թե ակամա նորից առնչվում են բառային կրկնություն ներկայացնող լեզվական միավորին, քանի որ դա է մեծ մասամբ հանդես գալիս խոսքի, տեքստի օբյեկտին փոխարինող գործառույթամբ։

Այսպիսով՝ տեքստի կապակցության իրականացման, այսինքն մտքի փոխանցման գործառույթամբ հիմնականում հանդես են գալիս «բառա-

յին կրկնություններըե: Այս ափիթով վերը նշված (18) հոդվածի հեղինակ Ս. Ի. Գինդենը գրում է, որ ՄՖԿ ընդհանրացած կաղապարի կառուցումը բացահայտում է վերջինիս յուրահատկությունը, որտեղ բառային կրկնություններին տրվում է ՄՖԿ-ն իրականացնողի միակ և օրինաչափ դերը:

Հետևաբար բառային կրկնությունները դառնում են միտք փոխանցող միջոց, որն իր հերթին տրամաբանորեն հանգում է իմաստ փոխանցող միջոցին: Այսպիսով մենք գտանք այն հիմնական օղակը, որը կազմակերպում է կապակցված տեքստը:

Կրկնության ձևերին են պատկանում, այսպես կոչված, գոյականացումը (կամ անձնականացումը-номинализация) և բայականացումը (вербализация): (Օրինակ՝ Ամբոխը անասելի աղմկում էր: Աղմուկը խլացնում էր ամեն ինչ):

Տեքստի կապակցվածությունը կարող է իրականանալ նաև անվանումների ձևափոխումների միջոցով: (Օրինակ՝ Շուտով երևաց էյֆելյան աշտարակի սրածայր գագաթը և քիչ հետո մեր առջև հառնեց Փարիզի այդ այցեքարտը...): Կապակցության նշված ձևերը, որոնք իրականացնում են տեքստի հիմնականում արտաքին կապերը, մեկ անվանումով կոչվում են էքսպլիցիտ ռեկուրենցիայի (эксплицитная рекуренция) ձևեր: Այս դեպքում տեքստի կապակցվածությունը ապահովվում է դրսից դանազան կցվող միջոցների՝ ռեկուրենտների շնորհիվ: Սակայն պետք է նշել, որ կապակցման այս ձևը կարող է գործել նաև տեքստի հնարքին կապերը ապահովելու նպատակով:

Էքսպլիցիտ ռեկուրենցիայի ձևերից է սուբստիտուտների միջոցով կատարվող կապակցությունը: Վերջիններս ներկայանում են որպես բառեր, բառակապակցություններ, որոնք կարող են փոխարինել ամբողջ մտքերի, նախադասությունների և այլն (прономинация): Դրանցից հիշենք հետևյալ բառակապակցությունները. այդ հարցը, վերոհիշյալը, այդ թեմատիկան, նման հարցադրումը, վերջինս և նման բազմաթիվ բառեր ու բառակապակցություններ:

Սուբստիտուտների միջոցով, սովորաբար, հեղինակները ձգտում են տեքստը դարձնել ավելի հակիրճ ու դիպուկ:

Ռեկուրենցիայի մյուս ձևը իմպլիցիտն է, երբ տեքստում կապակցվածությունը ապահովվում է ներո անդամի միջոցով, այսինքն կապակցվող օղակը իր դերը կատարում է հենց նրանով, որ ինքն իր մեջ մնում է նախորդ օղակում և տեքստի նոր հատվածում չի հիշատակվում, սակայն անպայմանորեն առկա է. (օրինակ՝ Հեղափոխության առաջին ամիսներին մենք մեկնեցինք Հյուսիսային Կովկաս, մյուսները՝ մի մասը՝ Միջին Ասիա, մի մասը՝ Կենտրոնական Ռուսաստան): Այսպիսի դեպքերում հնչերանգը՝ բանավոր տեքստում և առոգանության նշանները՝

գրավոր տեքստում փոխարինում են բացակայող անդամին և իրականացնում տեքստի հատվածների միջև գոյություն ունեցող կապը։ Տեքստի կապակցվածության ձևերին վերաբերող վերոհիշյալ տերմինները օգտագործվում են ժամանակակից շատ լեզվաբանների կողմից[23]։

Խոսելով տեքստի կապակցվածության մասին, չի կարելի չխոսել այդ կապակցվածությունը խախտող, խզող երևույթների մասին։ Հայտնի է, որ հաճախ կապակցված տեքստի մեջ մտնում է որևէ խոսք՝ ռեպլիկի, ուրիշի խոսքի, մեկուսի կամ բարձրաձայն, լրացուցիչ բացատրության նպատակով ասված խոսքի ձևով և այլն, որը կարող է պատկանել ինչպես հեղինակին, այնպես էլ տեքստում առկա այլ անձի։ Նման դեպքերում խզվում է տեքստի կապակցվածության ընդհանուր գիծը, որը երբեմն հասցնում է բոլորովին նոր կապակցվածության ստեղծմանը։ Այսպես օրինակ, երբեմն ընդհանուր տեքստի մեջ սեպաձև մտնում է հաղորդողի հիշողությունների հետ կապված որևէ թեմա, որը հաղորդումը հեռացնում, շեղում է հիմնական թեմայից (նաև ռեմայից)։ Նման խոսքային իրադրություններում տեքստային կապը վերականգնվում է նախկին թեմայի հետ կապվող որևէ կաղմիչի կրկնությամբ կամ նմանակի միջոցներով, երբեմն նաև հիշողության կարգով թեման կրկնելով։ Այս բոլորը միասին վերցրած իրականացնում են տեքստում եղած արտաքին և ներքին կապերը և ապահովում վերջինիս տրամաբանական ամբողջությունը։

6. Խոսելով տեքստի կապակցվածության մասին, հենց սկզբից պետք է նշել, որ այդ կապակցվածության ստեղծման պայմաններն ու սկզբունքները բոլոր տեսակի հաղորդումների համար հիմնականում համընկնում են, այսինքն՝ իմաստային ընդհանուր նյորիդ, հնչերանգային վերաբերություն և պարադայական ժամանակային հատկանշական որոշակի հարաբերություններ, որոնք, նույնիսկ որոշ խզումների դեպքում, կարող են վերականգնել բովանդակային հետևողական ամբողջությունը։

Իմաստային կապակցվածության նվազագույն օղակը մենք դիտում ենք նախադասության մեջ, որն ունի առնվազն գործող մեկ առարկա, և վերջինիս նկատմամբ գործողության մեկ վերաբերություն (դրանց միջև եղած հատկանշական, պարագայական հարաբերությունների արտահայտումը պարտադիր չէ)։

Սակայն քանի որ տեքստի կազմավորման համար սոսկ առարկայի և գործողության հարաբերությունը բավարար չէ, և անհրաժեշտ է նաև նախատեքստային կապակցությունների առկայություն, որը կնախապատրաստի և կծառայի հիմնական իմաստի բացահայտմանը, մենք որպես հետազոտության առարկա ընտրում ենք տեքստային ներքին կապակցությունը ապահովող ամենափոքր և կարևոր օղակը՝ պարբերու-

թյունը (абзац), *որն իր մեջ պարունակում է մեկից ավելի նախադասություններ և բավարարում է տեքստի ամբողջությունը ապահովող պահանջներին*[*]։

Ռուս լեզվաբանության մեջ «абзац» *հասկացության ստատուսի կապակցությամբ տարակարծություններ կան։ Ս. Ի. Գինդինը իր վերը նշված հոդվածում*([18]) *անդրադառնում է «վերֆրազային միասնություն» և «պարբերություն»* (абзац) *լեզվական հասկացությունների քննությանը հետևյալ ձևով։*

Հայտնի, է որ տեքստը, որպես խոսքի խոշոր միավոր, իր մեջ պարունակում է ավելի փոքր միավորներ, որոնք առանձնացվում են իր՝ հեղինակի կողմից որպես գլուխներ, բաժիններ, իմաստային նոր միավորներ։ Դրանք, այսպես կոչված, «վերֆրազային միասնությունները» (сверхфразовое единство) *և «պարբերությունները»* (абзац) *են. Ս. Ի. Գինդինը սրանք համարում է նախադասության և տեքստի միջև ընկած միջանկյալ միավորներ և իրավացիորեն նշում է, որ դրանց, և հատկապես վերֆրազային միասնության բնույթը, ստատուսը և կառուցվածքային բնութագրումը դեռևս բավարար չափով բացահայտված չեն (18, 51)։ Սրանով էլ հեղինակը բացատրում է այդ հասկացությունները բնութագրող անվանումներում տեղ գտած բազմազանությունը. ինչպես՝ բարդ շարահյուսական ամբողջություն, կոմպոնենտ, գերֆրազա, իմաստային հատված և այլն։ Հեղինակի մտքերի հետագա շարադրանքից մենք կոահում ենք, որ այս է պատճառը, որ «պարբերություն» և «վերֆրազային միասնություն» հասկացությունները շատ հաճախ հեղինակի կողմից օգտագործվում են որպես լեզվական միևնույն միավորը բնութագրող հասկացություններ, ուրիշ խոսքով՝ նույնանում են։*

Բնականաբար այդ միջանկյալ օղակը՝ վերֆրազային միասնությունը պետք է սահմանազատվի մի կողմից «ներքևից»՝ առանձին նախադասություններից, մյուս կողմից «վերևից»՝ հարևան վերֆրազային միասնություններից։

Նախադասություններից կազմավորվող սահմանազատումը առանձին դժվարություն է ներկայացնում հատկապես բարդ համադասության դեպքում, երբ հնչերանգը կամ կետադրությունը միշտ չէ, որ առանձնացնում է նախադասությունները (հաճախ, օրինակ՝ միջակետը դրվում է բոլորովին ինքնուրույն նախադասությունների միջև՝ վերջիններիս միջև սերտ կապը, մյուսների համեմատ, ցույց տալու նպատակով)։ Այսպիսով բարդ համադասությունը ինքնուրույն նախադասությունների

---

[*] *Հայերենում «պարբերություն» տերմինը համապատասխանում է ռուսերենի «абзац» հասկացությանը։ Տե՛ս «Հայ-ռուսերեն բառարան», Ա. Ս. Ղարիբյան, Ե. Գ. Տեր-Միքայելյան, Մ. Ա. Գևորգյան, Երևան, 1960 թ., էջ 350, ձախից 6։*

կոմպլեքսից տարբերելը բավականաչափ դժվարություն է ներկայացնում։ Ինչ վերաբերում է վերֆրազային միասնությունը իր նման այլ վերֆրազային միասնություններից սահմանազատելուն (սահմանազատում «վերևից»), ապա նման դեպքում հեղինակը մեջբերելով այլ հեղինակների հետազոտությունների արդյունքները (18-71-64) նշում է առավել ընդունելի այն կարծիքը, երբ նկատի է առնվում վերֆրազային միասնություն կազմող նախադասությունների իմաստային ընդհանրությունը, այսպես կոչված, յուրատեսակ «միկրոթեմայի» առկայությունը տվյալ վերֆրազային միասնություններում ի հակադրություն այն կարծիքների, որոնք գտնում են, որ վերֆրազային միասնության համար առավել կարևոր մոմենտ է վերջինիս կոնտեքստից դուրս ինքնուրույն իմաստ ունենալը և ավարտվածությունը (18, 55)։

Այսպիսով իրավացիորեն ընդգծվում է վերֆրազային միասնության «միկրոթեմա» ունենալու և հարևան վերֆրազային միասնություններից տարբերվելու (և ոչ նմանվելու կամ ընդհանրություն ունենալու) հանգամանքը։

Այս կարծիքի կողմնակիցները որպես հիմք ընդունում են ըմբռնման պրոցեսում մարդու՝ տեքստը հատուցթավորելու (սեգմենտացիայի ենթարկելու) յուրահատուկ կարողությունը (18, 64), որի վրա էլ հենվում է տեքստը ակտուալ հատուցթավորման ենթարկելու սկզբունքը։

Ճիշտ է, որ նման հարցադրումը ավելի հոգեբանական քան լեզվաբանական հիմք ունի։ Բայց և այնպես այն բավականաչափ ճշգրտորեն է սահմանում վերֆրազային միասնության բացահայտման սկզբունքը, որը հիմնականում հանգում է բառային և իմաստային (սեմանտիկական) կրկնությունների միջոցով կատարվող միասնական մտքի առանձնացմանը։ Այլ խոսքով, վերֆրազային միասնության սահմանը հավանորեն համընկնում է միջֆրազային կապակցությունների որոշակի թուլացման հետ, երբ որոշ կետերում կատարվում է մտքի ընդհանրության խզում կամ թուլացում և դրա հետևանքով տեղի է ունենում մտքի ինքնուրույն հատվածի առանձնացում։ Այսպիսով վերֆրազային միասնության սկիզբը համընկնում է այն նախադասությանը, որը բառային կամ իմաստային կրկնություններով թվով քիչ նախադասությունների հետ ընդհանրություններ ունի։ Սակայն չմոռանանք նշելու, որ վերֆրազային միասնության առանձնացման հարցի նկատմամբ եղած նման մոտեցումը ամբողջովին չի ապահովագրում այն լեզվական այլ միավորների հետ շփոթելուց, քանի որ վերֆրազային միասնությունը կարող է ունենալ մեծ կամ ավելի սահմանափակ ծավալ։ Մի քանի նախադասություններից կազմված վերֆրազային միասնությունը կրկնվող բառային և իմաստային միավորների առկայությամբ կարող է միավորվել այլ վերֆրա-

ղային միասնությունների հետ և կազմել մեծ ծավալի տեքստ։ Այնպես որ, ինչպես վկայում են փորձառական մի շարք ուսումնասիրություններ (18, 64), տեքստում վերֆրազային միասնությունների իրեն նման այլ միասնություններից կամ պարբերություններից սահմանազատման և բնութագրման հարցը չի կարելի միանշանակ և ավարտված համարել։

7. Տեքստի ուսումնասիրության շատ հետաքրքիր աշխատություն է նվիրել Ի. Ռ. Գալպերինը (16), որին մենք հարկ ենք համարում անդրադառնալ։ Օգտագործելով բազմազան աղբյուրներ և ցուցադրող հարուստ նյութ, հեղինակը ներկայացնում է տեքստը որպես լեզվական մակարդակ ներկայացնող միավոր, որն ունի կուռ կազմություն, որոշակի բաղադրիչներ, որոնք իրենք ներկայանալով որպես մակարդակներ, կազմում են բովանդակությունը։

Իրավացիորեն զարմանք հայտնելով, որ շատ հեղինակներ տեքստի հարցերը քննելիս որպես քննության օբյեկտ ելնում են նախադասություններից, Ի. Ռ. Գալպերինը ներկայացնում է տեքստին տված իր սահմանումը, որը, բազմակողմանիորեն ընդգրկելով լեզվաբանական այդ հասկացությունը, իր տեսակի մեջ կարող է ծառայել որպես աշխատանքային եզակետ։ «Տեքստը,— գրում է հեղինակը,— դա խոսքաստեղծ պրոցեսի արդյունք է, որը օժտված է ավարտվածությամբ, իրականանում է համապատասխանորեն մշակված գրավոր փաստաթղթի ձևով։ Դա մի ստեղծագործություն է, կազմված անվանումից (վերնագիր) և մի շարք հատուկ միավորներից (վերֆրազային միասնություններ), որոնք միավորվելով բառային, քերականական, տրամաբանական ոճային տարբեր տեսակի կապերով, օժտված են որոշակի նպատակաուղղվածությամբ և պրագմատիկ դիրքավորմամբ» (16, 18)։

Ջարգացնելով հեղինակի միտքը, նշենք, որ բանավոր խոսքը անընդհատ շարժում է, հոսք և այս հանգամանքը վերջինիս դարձնում է ոչ կայուն։ Այստեղից հետևում է, որ ամեն մի գրանցված խոսք չէ, որ կարող է տեքստ լինել։ Տեքստը, որպես լեզվական մակարդակ, որպես խոսքաստեղծ երևույթ, ունի իրեն բնորոշ չափանիշներ։ Այսպես ասած «ճշմարիտ տեքստ» ասելով պետք է հասկանալ այն տեքստը, որտեղ ա. բովանդակությունը համապատասխանում է վերջինիս անվանմանը (վերնագիր); բ. ունի ավարտվածություն և լրիվ ընդգրկում է իր անվանումը; գ. ենթարկված է համապատասխան ոճական գրական մշակման; դ. ունի վերֆրազային միասնություններ, որոնք միավորված են զանազան, հիմնականում տրամաբանական, կապերով; ե. ունի նպատակաուղղվածություն և պրագմատիկ դիրքավորում։ Այսինքն՝ ընդգրկում է արտաքին և ներքին այն կապերը, որոնք անհրաժեշտ են ամբողջական տեքստի համար։ Տեքստում տրված հաղորդումները տարբեր են լինում։

Ամենից առաջ կարող է լինել սոսկ հաղորդում, որը ծանուցում է արդեն եղած ինչ-որ բանի մասին։ Դա կարող է իրականանալ և նախադասությունների և դրանցից ավելի մեծ միավորների՝ վերֆրազային միասնությունների (ՎՖՄ) կամ պարբերությունների միջոցով։

Հաղորդումը կարող է լինել ավելի խորը և լայն պլանով, երբ երևույթների, առարկաների, դրանց կապերի ու փոխհարաբերությունների մասին տրվում են նոր, ավելի խոր տեղեկություններ, այսպես ասած, դիտական հաղորդման ձևով։ Սա հաղորդում է ավելի լայն առումով, որն ընկած է արդեն հաղորդակցման, որպես լեզվական երևույթի, հիմքում։ Այսպիսով հաղորդումները կարելի է դասակարգել հետևյալ ձևով։ Առաջին. բովանդակային-փաստական, որը դրսևորելով խոսքով, ընդգրկում է հիմնականում տեքստի արտաքին կապերի ոլորտը, որոնք նախապատրաստում են տեքստային ավելի խոր, սերտ, իրարից բխող հանգամանքների բացահայտումը և ներքին կապերի իրագործումը։ Երկրորդ. բովանդակային—դիրքորոշային, երբ հաղորդման համար կարևոր գործոն է դառնում հեղինակի վերաբերմունքը հաղորդվածի (փաստի, կատարվածի, կատարվողի, կատարվելիքի) նկատմամբ։ Հաղորդման այս ձևում հեղինակի և տեքստի մեջ ընդգրկված դանազան դիպքերի, դեմքերի, ժամանակային ու տարածական իրադրությունների միջև ստեղծվում է ակտիվ փոխկապակցություն և փոխպայմանավորվածություն, որը դրսևորվում է հեղինակի կոնկրետ դիրքորոշմամբ։ Երրորդ. բովանդակային—ենթատեքստային հաղորդում, որը բխում է առաջին տեսակի հաղորդման մեջ գործող երևույթների, առարկաների միջև գոյություն ունեցող, առաջին հայացքից աչքի չզարնող (թաքնված) կապերից ու փոխհարաբերություններից։ Այն խոսքային դրսևորում չունի, ընկած է հաղորդման խորքային շերտերում և ընկալվում է շնորհիվ ընթերցողի օբյեկտիվ իրականությունը մի քանի կտրվածքներով միաժամանակ ընկալելու զարմանալի ընդունակությամբ։

Այս օղակում էլ հենց իրականանում է թեմա-ռեմա հարաբերությունը։ Խոսքային դրսևորում ունեցող հաղորդումը հանդես է գալիս որպես թեմա (տրվածը), իսկ ենթատեքստային հաղորդումը որպես ռեմա (նորը)։ Այս հարաբերության ընթացքում մեծ դեր է բաժին ընկնում կանխադիրքորոշմանը (пресуппозиция), որը շատ դեպքերում համընկնում է ենթատեքստին (*Звягинцев В. А.* Предложение и его отношение к языку и речи. М. 1976 г. 250)։

Ի. Ռ. Գալպերինը իրավացիորեն գտնում է, որ ենթատեքստը դա «վերֆրազային միասնության (երբեմն էլ նախադասության) այնպիսի մի կազմություն է, որը օգնում է նոր, օրգանապես կանխորոշման հետ չհապվող մտքի ծագմանը։ Ենթատեքստը փաստորեն հաղորդման երկրորդ

պլանն է։ Ավելացնենք, որ ենթատեքստի գործառության համար ամենից շատ նյութ է տալիս գեղարվեստական տեքստը։

8. Տեքստի հատույթավորման ընթացքում կարևոր դեր են խաղում մի շարք գործոններ, որոնցից են տեքստի մասերի ծավալը, բովանդակային միասնականությունը և տեքստի հեղինակի պրագմատիկ դիրքորոշումը։

Կարևոր գործոն է նաև հաղորդման խորքային հատվածների, այսինքն վերֆրազային միասնության, որպես տեքստի միավորի և տեքստի ավելի խոշոր հատվածների (դա կարող է լինել նաև պարբերությունը) բացահայտումը։

Այս բոլոր հատվածների համար կարևոր հանգամանք է ժամանակային գործոնի հաշվառումը, որովհետև յուրաքանչյուր ամբողջի հատույթավորումը անպայմանորեն կապվում է ժամանակի որոշակի հատվածում։ Քանի որ տեքստերը տարբեր են լինում՝ գեղարվեստական, մամուլին վերաբերող, վարչական, դիվանագիտական, գործնական, փիլիսոփայական, գիտական և այլն, ապա դրանց հատույթավորումը համապատասխանորեն ունի դրսևորման յուրահատկություններ։

Կանգ չառնելով մնացած ձևերի վրա, նշենք, որ գիտական տեքստի հատույթավորման ընթացքում առանձնակի նշանակություն է ստանում հաղորդման տրամաբանական կողմը. որպեսզի ապահովվի տեքստի գիտական հետևողական հաջորդականությունը, արվում են զանազան կարգի ծանոթագրություններ։ Ճիշտ և լիարժեք ներկայացվելու համար հաղորդման բովանդակային-փաստական, բովանդակային-դիրքորոշող և բովանդակային-ենթատեքստային ձևերը, անհրաժեշտ է կատարել տեքստի հատույթավորում մինչև նրա ամենափոքր միավորը։ Հատույթավորման միավորները կարելի է ներկայացնել գլուխների, ենթագլուխների, պարագրաֆների, պարբերությունների կամ վերֆրազային միասնությունների ձևով։ Նախադասությունը, որպես այդպիսին, տեքստ չի կազմում, սակայն մտնում է վերջինիս կազմի մեջ։

Մենք ընդունում ենք «վերֆրազային միասնություն» հասկացությունը որպես տեքստի նվազագույն միավոր, որը ավելի քան հաճախ համընկնում է «պարբերություն» (абзац) հասկացությանը և ձևով, և բովանդակությամբ։ Դրա համար ունենք բավարար հիմք, քանի որ այդ հասկացությունների բնութագրման հարցում լեզվաբանության մեջ տարակարծություն կա։ Տեքստաբանության հարցերի գիտաց Ի. Ռ. Գալպերինի վերը նշված աշխատությունում հանդիպում ենք այդ երկու հասկացությունները որպես մեկը ընկալելու բազմաթիվ փաստերի։ Ամբողջ ուսումնասիրության ընթացքում ոչ մեկ անգամ հեղինակը նույնացման կամ հավասարության նշան է դնում «վերֆրազային միասնություն» և «պարբերություն» հասկացությունների միջև։ Ավելին, երբ «վերֆրա-

դային միասնություն» հասկացությանը Ի. Ռ. Գալպերինը անդրադառնում է մանրամասնորեն, ներկայացնելով վերջինիս շուրջը ստեղծված դանադան կարծիքներ (16,67-73), ապա պարբերության (абзац) մասին խոսելիս վերջինս կամ նույնանում է վերֆրազային միասնությանը կամ ընդգրկում է անորոշ։ Այսպես, խոսելով տեքստի հատույթավորման մասին, նա գրում է. «Նպատակահարմար կլիներ նշել վերֆրազային միասնության որպես տեքստի միավորի խորքային ծավալման մասին, միաժամանակ, հավանաբար, նշելով նաև տեքստի մեկ այլ առավել մեծ հատվածի խորքային ծավալումը» (16, 51)։ Քիչ ներքևում նա ավելացնում է. «Վերֆրազային միասնության կամ պարբերության ծավալման ժամանակ (ընդգծումը մերն է) ուշադրության փոխանցումը մեկ օբյեկտից մյուսին նույնքան կարևոր է, որքան ֆիզիկական վարժություններում մեկ տեսակից մյուսին անցնելը»։ Այսպիսով, Ի. Ռ. Գալպերինը իրավացիորեն հստակ սահմանազատում չի տեսնում և չի դնում վերֆրազային միասնության և պարբերության միջև։

Խոսելով վերֆրազային միասնության հարցի նկատմամբ ներկայումս գոյություն ունեցող մոտեցումների մասին սեմանտիկական, պրագմատիստական, սինտակտիկական և գործառական (16,70-71), հեղինակը նշում է, որ սինտակտիկական (շարակարգային) պլանում առանձնանում են երկու միտումներ. ա. ինքնուրույն նախադասությունները ավելի բարդ ու խոշոր միասնությունների մեջ կենտրոնացնելու միջոցների ուսումնասիրությունը և այդ միասնությունների առանձնացումն ու վերլուծումը և բ. լեզվական այն միջոցների անմիջական վերլուծումը, որոնց միջոցով իրականանում է կապակցված տեքստում նախադասությունների կցումը։ Այդ երկու հասկացությունների գործառական համընկնումը և մեկը մյուսին փոխանցվելը Ի. Ռ. Գալպերինին իրավունք է տալիս անելու հետևյալ դիտողությունը։

«Վերֆրազային միասնությունը հանդիսանալով տեքստի հիմնական բաշխացուցիչը, միշտ չէ, որ հնչուտությամբ առանձնանում է։ Որոշ դեպքերում այն համընկնում է պարբերությանը (ընդգծումը մերն է) (հատկապես գիտական ոճի արձակում, գործնական փաստաթղթերը և այլն), այլ դեպքերում որևէ պարբերություն հնչուտությամբ կարող է վերածվել մի քանի վերֆրազային միասնությունների (հատկապես գեղարվեստական ոճի արձակում և չափածոյում)։ Դա օրինաչափ է։ Վերֆրազային միասնությունների և պարբերության սահմանները հաճախ խաչաձևվում են պայմանավորված հաղորդման բովանդակությամբ և պրագմատիկ դիրքորոշմամբ։ Համենայն դեպս ՎՖՄ հարկ է ճանաչել որպես տեքստի կազմիչ (конституэнт), իսկ նախադասությունը որպես ՎՖՄ-ի կազմիչ։ Այսպես. ինչպես նախադասությունը օժտված է մատնանշելու իր կազ-

միչների, բառերի իմաստների փոխազդեցությունն ու փոխկապակցվածությունը, այնպես էլ ՎՖՄ օժտված է մատնանշելու իր կազմիչների նախադասությունների իմաստների փոխազդեցությունն ու փոխկապակցությունը» (16, 72)։

Տարբեր առիթներով խոսելով ներտեքստային կապերի մասին (կոգեզիա) հեղինակը ուղղակիորեն նույնացնում է վերֆրազային միասնությունը պարբերության հետ։ Այս առիթով տեղին է հիշել Բ. Ն. Գոլովինի այն դիտողությունը, թե վերֆրազային միասնություն և պարբերություն հասկացությունների շուրջը ստեղծված տարակարծությունները հիշեցնում են այն լաբիրինթոսը, որտեղ «մտնելուց հետո հայտնվում ես բազմաթիվ փակուղիներում և, բավականաչափ թափառելուց հետո, վերջապես, ելքը գտնում ես այնտեղ, որտեղից մտել էիր»(19)։

Այսպիսով, հիմնականում պարզելով վերֆրազային միասնության և պարբերության ստատուսը լեզվական այլ կարգերի շարքում, մենք «պարբերություն» լեզվական իրողությունը դիտում ենք որպես տեքստի իրականացման հիմնական օղակ։ Այս դեպքում չպետք է մոռանալ, որ տեքստը դիտվում է ոչ թե որպես նախադասությունների կոզևրենտ բազմություն, այլ պարբերությունների միջոցով իրականացող կապակցված ու իմաստավորված շղթա, որն իր գործառությամբ իրականացնում է հաղորդակցումը։ Ուրիշ խոսքով, տեքստը ոչ թե նախադասությունների հաջորդականություն է, այլ նախադասությունների օգտագործման կամ իրականացման հաջորդականություն։

Այսպիսով՝ մենք նորից անդրադառնում ենք վերևում արծարծված այն մտքին, որ պարբերությունը դիտվում է որպես տեքստ ներկայացնող հիմնական օղակ։

9. Լեզվաբանության զարգացման ներկա փուլում տեքստ կազմող լեզվական խոշոր միավորների՝ պարբերությունների ուսումնասիրությունը դառնում է անհրաժեշտություն։ Նախադասության դերը այս դեպքում չի թերագնահատվում, այն դիտվում է որպես պարբերության մեջ մտնող ամբողջական միավոր։

Բանավոր կամ գրավոր ասված յուրաքանչյուր տեքստ իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների և կապերի, այսինքն իրական կյանքի արտացոլում։ Սա լեզվի մարքսիստական ըմբռնումն է։ Այդ կապերն ու փոխհարաբերությունները լեզվական ձևակերպում են ստանում նախադասությունների՝ միմյանց նկատմամբ ունեցած կապերի ու փոխհարաբերությունների միջոցով։ Վերջիններս դրսևորվում են իմաստային (բովանդակային), ձևական (կառուցվածքային), գործառական, վերաբերական (հնչերանգային) մոդուլների միջոցով։

Կառուցվածքի և գործառության փոխպայմանավորվածությամբ ապահովվում է դիալեկտիկական կապը նախորդ, հայտնի հաղորդման (բնաբանին վերաբերող) և նոր տրվող հաղորդման (ռեմային վերաբերող) միջև։ Այդ կապը, որը կազմում է պարբերության ատաղձը կամ հենքը, պետք է ապահովի մի այնպիսի հաղորդում, որն իրենից ներկայացնում է թեմայի (արդեն հայտնի հաղորդման կամ նախահաղորդման) և ռեմայի (նոր հաղորդման) իմաստների օրգանական կապակցվածություն։ Պարզ է, որ այս դեպքում լեզվական միավորի անմիջական կազմիչների գործառությամբ հանդես են գալիս նախադասությունները, ըստ որում հանդես են գալիս որպես պարտադիր կազմիչներ։

Թեմային և ռեմային վերաբերող հաղորդումների փոխպայմանավորվածությունը տեքստում կառուցվում է նախադասությունների միջև գոյություն ունեցող կապի հիմքի վրա. վերջինս իրականացվում է լեզվական այն տարրերի շնորհիվ, որոնք միջնորդ օղակ են հին և նոր հաղորդումների միջև։ Դրանց շնորհիվ ապահովվում է ամբողջ տեքստի անխզելիությունը, արտաքին և ներքին կապերի ամբողջությունը։

«Ժամանակակից հայերենի քերականություն»(1) աշխատության «Շարադասությունների կապակցություն» բաժնում պրոֆ. Ս. Աբրահամյանը հանգամանորեն անդրադառնում է նախադասությունների իմաստային-քերականական կապին և այդ կապի արտահայտման միջոցներին։

Իմաստային-քերականական կապը արտահայտվում է ժամանակային հաջորդականության հարաբերությամբ, պատճառահետևանքային մասնավորմամբ և ընդհանրացմամբ, ներհակական, զիջական, ժամանակի, տեղի և այլ լրացական մեկնական հարաբերություններով։ Սրանցից յուրաքանչյուրը կազմվում է իրեն հատուկ միջոցներով։ Կապակցությունների այս ամբողջ կառուցվածքը մտնում է տեքստային ներքին կապերի համակարգի մեջ և կազմում է տեքստի տրամաբանական հիմքը։ Դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը սխալ կլիներ. բոլորն էլ կարևոր են և ունեն իրենց ինքնուրույն գործառությունը։ Դրանց դերը խիստ կարևոր է պարբերությունների կազմավորման պրոցեսում։

Դիմենք հեղինակին. «Նախադասությունները կապակցվում են բազմազան միջոցներով։ Դրանք բնույթով երբեմն իրարից տարբեր են, բայց քանի որ իրենց տարբեր յուրահատկություններով հանդերձ տվյալ դեպքում ծառայում են, նպաստում նախադասությունների կապակցմանը, ուստի և կարելի է համարել նախադասությունների կապակցման միջոցներ։ Այսպիսի դեր կատարում են շատ շաղկապներ, շաղկապական բառեր ու բառակապակցություններ, դերանուններին հարող շատ բառեր, ածականներ, մակբայներ, եղանակավորող բառեր, տարբեր նախադա-

սուբյուններում մեկ ընդհանուր անդամը, շարադասությունը և այլն» (1)։ Վերոհիշյալները իրենց տարբեր առումներով հարաբերություններով և այլն «ցույց են տալիս նախորդ նախադասությունները, իրենց բովանդակությունն ըստ էության ստանում են նրանցից և դրանով պայմանավորում նախադասությունների կապը» (1, 413)։ Այնուհետև հեղինակը նշում է, որ նախադասությունների կապակցման միջոցների գնահատման տեսակետից կարևոր է նկատի ունենալ, որ այդ միջոցների մի մասը ծառայում է նախադասության բաղադրիչ մասերի կապակցմանը, իսկ մի ավելի փոքր մասը՝ նախադասությունների կապակցմանը (1, 414)։

Մեր կարծիքով այդ միջոցներին պետք է ավելացնել նաև մեկը՝ ոչ պակաս կարևորը, որը մեծ դեր է կատարում հատկապես բանավոր խոսքում։ Դա հնչերանգն է իր իմաստազատիչ, հաղորդակցող գործառույթով, որը, համապատասխան խոսքային կոնկրետ իրադրության, կարող է լիովին փոխարինել նշված միջոցներից շատերը և իրականացնել թեմա-ռեմային հարաբերությունը։ Հնչերանգը կապի այն համընդհանուր ձևն է, որը գործում է արտաքին և ներքին կապերի իրականացման ոլորտում նաև պարբերությունում։ Բանավոր խոսքում պարբերությունը ուղեկցվում է հնչերանգային ձևավորմամբ, ավելի կոնկրետ՝ դադարով, այսինքն՝ բանավոր խոսքում կազմավորվում են այսպես կոչված «հնչյունաբանական պարբերություններ» (фонетический абзац) (Բ. Ս. Կանդինսկու օգտագործած տերմինն է)։ Դրանց հնչյունական պատկերը դառնում է արտասանական մեկ լարումով ստացվող կորագիծ, զգալի դադարներով մի հատված, որի հետևանքով էլ նախադասության ծավալման սահմանները բավականաչափ մեծանում են։

10. Պարբերության մասին խոսելիս ընդգծեցինք նախադասության, որպես պարբերության կազմիչի, պարտադիր լինելը։ Նախադասությունն այս դեպքում դիտվում է որպես պարբերության մեջ մտնող ինքնուրույն լեզվական միավոր (սակայն ոչ տեքստի միավոր և ոչ էլ տեքստային ավարտուն միավոր)։

Պետք է նկատի ունենալ, պարբերության մեջ այս դեպքում կարող են մտնել շարահյուսական տարբեր կառուցվածք ունեցող նախադասություններ, որոնք կարող են պատկանել հաղորդակցող տարբեր տեսակների։

II ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՎԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԵՏ

1. Նախորոք անենք հաղորդման ձևերին, որոնց մասին վերը հիշեցինք, քանի որ հաղորդման նշված երեք ձևերը (բովանդակային, դեր-

քորոշային և ենթատեքստային), իրականում ընդգծում են իրենց մեջ այն հսկայական ինֆորմացիան, որ պարունակում է մարդկային հասարակության մեջ կատարվող հաղորդակցումը՝ բանավոր կամ գրավոր ձևով։

Որոնք են դրանց կոնկրետ դրսևորումները։

Առաջին՝ օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները, դրանց կապերն ու փոխհարաբերությունները արձանագրող հաղորդման նմուշներ կարող են ծառայել նկարագրական, որոշ առումով գեղարվեստական, փաստագրական, հուշագրական, պատմական-ժամանակագրական բնույթի հաղորդումները, որոնք կրում են չեզոք, սոսկ արձանագրող, դատողական պասսիվ բնույթ։

Երկրորդ կարգի հաղորդումները ընդգրկելով առաջինի սահմանները դրան զուգահեռ ունեն ակտիվ բնույթ, քանի որ հեղինակի վերաբերմունքային դիրքորոշման հետևանքով մատնանշում են այն նորը, որ տրվում է հաղորդման մեջ և լինելով իրենց բնույթով հասցեագրված որոշակի ունկնդրի, պարունակում են նաև ընդհատման մոմենտը։ Այս տեսակը ընդորում է գեղարվեստական խոսքին, քաղաքական, քննադատական, գիտական գրականությանը, հրապարակախոսական ու բանավիճային խոսքին։

Երրորդ տեսակը անվանենք ենթատեքստային, որի դերը շատ կարևոր է, քանի որ այն կարող է խոսքով արտահայտված չլինել, սակայն պարունակել այն հիմնականը, որը կազմում է հաղորդման կորիզը։ Հաղորդման այս ձևը արտաքնապես կարող է նման լինել նախորդ երկուսին, սակայն այն նորը, որը պետք է հաղորդվի, գտնվում է տեքստի խորքում, քողարկված է ղանազան, առաջին հայացքից ոչ էական թվացող փաստերով, սակայն դրանց բացահայտումն ու ընդգծումն էլ հանդիսանում է տվյալ հաղորդման վերջնական նպատակը։

Ուրեմն պետք է տարբերել սոսկ հաղորդումը (փաստերի ու երևույթների հաստատում կամ ժխտում՝ տեղյակ պահելու միտումով) հաղորդակցումից, որի ժամանակ նախ անսպասմանորեն արդեն եղած տեղեկությունների և փաստերի կողքին տրվում է բոլորովին նոր, երբեմն ենթադրվող, երբեմն անսպասելի մի նոր փաստ կամ տեղեկություն, և երկրորդ՝ կարևոր նշանակություն է ստանում հաղորդման նկատմամբ հաղորդակցի կամ ունկնդրի ցուցաբերած վերաբերմունքը կամ գնահատումը։ Սա կարևոր մոմենտ է հաղորդակցման համար։ Այլ խոսքով, հաղորդակցման համար անհրաժեշտ է հաղորդման ակտիվ ընկալում։

Որքան նորի անսպասելիության հավանականությունը մեծ է, այնքան հաղորդակցման կարևորության աստիճանը բարձրանում է։ Ելնելով հաղորդման յուրահատկություններից, ընդհանուր առմամբ նշենք

տեքստերը մեկը մյուսից տարբերակող մի քանի գործոններ, որոնք անմիջականորեն արտացոլվում են պարբերությունների կառուցվածքի մեջ։

Հարկ է նշել, որ տեքստում հաղորդման վերը հիշված տեսակները մեծ մասամբ հանդես են գալիս միաժամանակ, դրանցից որևէ մեկի գերակշռությամբ՝ համապատասխան տեքստի բնույթին։ Տեքստերն իրարից տարբերվում են ոչ միայն հաղորդման բովանդակությամբ, այլ նաև իրենց գործառական ոճերով, արտաքին ձևավորմամբ, վերնագրի հիմնական բովանդակությունն արտացոլելու աստիճանով և, որը ամենակարևորն է, լեզվական այն նշանակով կամ կոդով, որը լինելով համաժողովրդական լեզվի տարբերակ, բնորոշ է հատկապես տվյալ տեքստային բովանդակությանը (այստեղից էլ քիմիայի լեզու, մեխանիկայի լեզու, գեղարվեստական գրականության լեզու, բանասիրական լեզու և այլն)։

Անդրադառնալով գիտական տեքստին նշենք վերջինիս բովանդակային և կառուցվածքային մի քանի առանձնահատկություններ։ Ամենից առաջ գիտական տեքստում հաղորդումը հիմնականում ունի փաստերը արձանագրելու, շարադրելու և դրանց նկատմամբ հեղինակի դիրքորոշումը, վերաբերմունքը. ներկայացնելու գործառույթն, չնայած չի բացառվում նաև ենթատեքստի առկայությունը, քանի որ հաճախ հեղինակը վիճարկման կարգով համաձայնում կամ չի համաձայնում իր առաջ քաշած հարցերի նկատմամբ եղած քննադատական դիտողություններին։ Հայտնի է, որ տեքստի, այսպես ասած, հատվածումը հիմնականում կատարվում է երկու առումով. նախ՝ երբ ընթերցողին հատվածաբար՝ պարբերությունների ձևով ներկայացվում է հաղորդվող տեքստը և երկրորդ՝ երբ հեղինակը ինքն է հատվածում տեքստը այնպես, որպեսզի իրեն համար պարզ լինի գործողությունների ու երևույթների ժամանակային տարածական, պատկերային, տրամաբանական կապերն ու փոխհարաբերությունները։

Գիտական տեքստին բնորոշ է հատվածման այն ձևը, որը ուշադրությունը կենտրոնանում է հատկապես տեքստի բովանդակության կապերի ու հետևությունների վրա։

Հայտնի է, որ տեքստերը միմյանցից տարբերվում են մի շարք առանձնահատկություններով, որոնց թվում հիշեցինք տեքստի արտաքին ձևավորումը։ Գիտական տեքստի համար բնորոշ է լրացուցիչ տեղեկությունների, ճշտումների, հաստատումների կամ հերքումների համար մեջբերումների օգտագործումը, որոնք մեծ մասամբ արվում են տողատակի կամ ծանոթագրությունների ձևով (երբեմն այս ձևը օգտագործվում է նաև գեղարվեստական գրականության որոշ ժանրերում, հուշագրություններում, պատմական քրոնիկներում, նամականիներում և

այլն)։ Մեջբերումներն ու տողատակերը օգնում են գիտական տեքստի ժամանակագրական ու փաստագրական ամբողջությունը պահպանելու։

Գիտական տեքստի համար բնորոշ է ընթերցողի ուշադրությունը նախկինում ասվածի վրա կենտրոնացնելը, հետհայեցումը (ретроспекция)։ Սա տեքստում տրամաբանական կապ ստեղծելու միջոցներից մեկն է։ Գիտական տեքստերը եզրափակող վերջաբաններն ու եզրակացությունները հետհայեցման լավագույն օրինակներ են։

Տեքստում քննարկվող հարցերի և գործողությունների միջև տրամաբանական կապ հաստատելու միջոցներից է նաև տեքստում քննարկվելիք հիմնական հարցերի վերաբերյալ նախօրոք, սկզբից տրվող համառոտ հաղորդում՝ նախհայեցում (проспекция)։ Գիտական տեքստում դրանց լավագույն օրինակը ներածականն է, առաջաբանը, ընդհանուր հիմունքները, ընդհանուր դիտողությունները, ընդհանուր ակնարկը և այլ բաժիններ։ Այս ձևը խորթ չէ նաև գեղարվեստական որոշ տեքստերի։

Գիտական տեքստերի համար խիստ կարևոր է ճիշտ լեզվական նշանակ (код) և խոսքի արտահայտման ձև (որոշ բառերի կրկնություն և այլն) ընտրելը։ Լեզվական նշանակը պետք է համապատասխանի տեքստի բովանդակությանը (բժշկական, աստղագիտական, մաթեմատիկական, բանասիրական և այլն), իսկ արտահայտության ձևը պետք է լինի խիստ տրամաբանական, հետևողական, պատճառաբանված և անկողմնակալ, ինչ-որ տեղ չոր։ Ավելորդ զգացմունքայնությունը և սուբյեկտիվ տրամադրվածությունը գիտական տեքստը կարող են արժեքազրկել։

Գիտական տեքստի համար չափազանց կարևոր հանգամանք է տեքստում առաջ քաշված հարցերի բազմակողմանի քննարկման (նախորդ մեջբերումներն ու տողատակերը, զանազան կարծիքների շարադրանքը, փորձերի համեմատական վերլուծությունը և այլն) արդյունքների ի մի բերելը։ Սա մեծ մասամբ արվում է վերջաբանի, ամփոփման կամ եզրակացությունների միջոցով։

Գիտական տեքստի համար կարևոր պայմաններից մեկը վերնագրի ճիշտ ընտրությունն է։ Սրբեմն վերնագիրը արտահայտում է այն հիմնական հարցը, որը գիտական տեքստի միջուկն է կազմում (օրինակ՝ «Հավանականության տեսություն», «Մարդու անատոմիա» և այլն)։ Սրբեմն վերնագիրը կարող է ուղղակիորեն չհամապատասխանել տեքստի բովանդակությանը։ Այս դեպքում ի հայտ է գալիս ենթատեքստի դերը, որն ամփոփվում է հենց վերնագրում («Գրական ուղիներում», «Գիտության խաչմերուկներում» և այլն)։

Հատկապես գիտական տեքստի համար անհրաժեշտություն է որո-

շակի սկիզբ ու վերջ ունենալը։ Ավարտվածությունը, այսինքն, երբ հեղինակը իր առջև դրված հարցի լուծումը հասցնում է իր ավարտին, տեքստը դրականորեն բնորոշող կարևոր հատկանիշներից է։

Եվ վերջապես, կարևոր հանգամանք է նաև տեքստի հասցեագրումը։ Գիտական տեքստը պետք է ունենա իր ընթերցողը։ Դրա համար գիտական տեքստը պետք է բավարարի վերը հիշված բոլոր պայմաններին, և այդ դեպքում միայն այն կստանա ճիշտ նպատակաուղղվածություն և գործառություն։

2. Պարբերությունների (կամ վերֆրազային միասնությունների[1]) առանձնահատկությունները բացահայտելու և վերլուծելու առաջին կարևոր քայլը պարբերության մեջ լեզվական միավորների և դրանց սահմանների որոշումն է։ Այդ միավորներից, որպես պարբերության պարտադիր կազմիչ, առաջին հերթին հանդես է գալիս նախադասությունը՝ իր զանազան դրսևորումներով, կապակցություններով ու միավորումներով՝ պարզ, բարդ, վերջինիս բաղմազան տեսակներով և հարաբերություններով (համադասական, ստորադասական և այլն)։ Քանի որ հարցը հանգում է նախադասությանը և նրա դրսևորումներին, հետևաբար վերլուծումը պետք է բխի նախադասության իմաստային-շարահյուսական մեթոդից և կրի իմաստաբանական բնույթ։

«Տրամաբանական է, երբ տեքստում փնտրում են ոչ թե պարբերաբար վերարտադրվող միավորներ, այլ փորձ է արվում որոշելու նախադասությունների խմբերի պարբերաբար վերարտադրվող բնութագրումներ, հետևաբար պետք է խոսել տեքստում գոյություն ունեցող նախադասությունների միավորների մասին, որոնք միմյանց հետ կապակցվում են այս կամ այն միջոցով։ Այդ միավորները, որոնք հանդես են գալիս պարբերությունների ձևով (շատերը դրանք անվանում են նաև վերֆրազային միասնություններ) տեքստի այն օղակն է, որից պետք է սկսել ամբողջ տեքստի ուսումնասիրությունն ու վերլուծությունը։ Մեր կարծիքով արվյալ կոնտեքստի սահմաններում չկա մի բան, որ չլինի կոնտեքստը կազմող պարբերություններում»[20]։

Այսպիսով՝ պարբերությունը, իրականում, միմյանց հետ զանազան շարահյուսական-իմաստաբանական կապակցության մեջ գտնվող նախադասությունների խմբավորում է, որը բխելով ընդհանուր տեքստի բովանդակությունից կոնկրետ կոնտեքստային իրադրություններում կարող է դառնալ նոր որակ, նոր կապեր ու հարաբերություններ դրսևորող մի նոր հանգույց։ Կապը ընդհանուր տեքստի և պարբերության միջև ապահովվում է զանազան միջոցներով, որոնցից ամենից գործնականը կրկնություններն են (ռեկուրենցիա, ռեկուրենտներ), որոնք կարող են

լինել բառաձևերի, բառակապակցությունների, առանձին նախադասությունների ձևով։ Դրանք եղել են տեքստում, դրանց շուրջը ծավալվել են գործողություններ ու երևույթներ, ինչ-ինչ պատճառներով հեղինակը շեղվել է տեքստից մեկ այլ հաղորդում տալու համար և հիմա տեքստի ընդհանուր գիծը վերականգնելու նպատակով դիմում է կրկնությունների մեթոդին, ընթերցողին վերադարձնում նախկին կոնտեքստին և շարունակում է զարգացնել իր հետապնդած հիմնական միտքը։

Պարբերությունների մեջ կան նախադասություններ, որոնք իրենց իմաստաբանական-շարահյուսական գործառութիւմբ դերակշիռ դեր են կատարում և իրենց վրա են կրում պարբերության հաղորդման ամբողջ ծանրությունը։ Դրանք, փաստորեն, պարբերության այն օղակներն են, որոնք ինքնուրույն են, և մեր կարծիքով դրանց կարելի է համարել պարբերության առանցքը, որի շուրջը բաշխվում են պարբերության մնացած նախադասությունները։ Քերականորեն այդ առանցքը ներկայացնող նախադասությունն ունի հիմնական գործող անձ՝ անվանված ենթակա, հիմնական գործողություն ներկայացնող ստորոգյալ։ Այդ նախադասությունը ինքնուրույն է և պարբերության մնացած նախադասություններից համեմատաբար անկախ։ Վերջիններս, որոնք լրացուցիչ պարզաբանում են առանցքային նախադասությունը, իրենց կազմում ենթակայի փոխարեն կարող են օգտագործել դանազան դերանուններ, մակբայներ, առանձին բառեր ու բառակապակցություններ, շաղկապներ, որոնցով և հաճախ սկսվում են այդ նախադասությունները։

Բնական է, որ պարբերությունը որպես խոսքի մի հատված, սեփական չ ունենա հաղորդակցման իր տեսակը, այսինքն՝ պետք է պատկանի հաղորդակցման որևէ տեսակի։ Պարբերության հաղորդակցման տեսակը ըստ մեզ, պետք է որոշվի առանցքային նախադասության տեսակով. այն կարող է լինել նկարագրական, դատողական, պատմողական և այլն, իսկ նրան հարող նախադասությունները կարող են պատկանել հաղորդակցման այլ տեսակների, որը սակայն, այնքան էլ ցանկալի չէ, քանի որ, մեր կարծիքով, այդ հանգամանքը խոչում կամ բեկում է մտցնում պարբերության ողջ հատուցվածքում և խոսքը հեռացնում է առանցքային նախադասության միջոցով տրվող հիմնական հաղորդումից։ Այդ պատճառով պարբերության մասին խոսելիս մենք պետք է նկատի ունենանք ոչ միայն խոսքի շարահյուսական-իմաստաբանական, այլ նաև ձևական-հաղանակային, ոճական միատարրությունը, որը կօգնի այն դարձնելու ավելի կուռ ու նպատակասլաց։

Շատ ավելի տեսակետից պարբերությունները, ընդհանուր առմամբ, որևէ կանոնի չեն ենթարկվում, չնայած տեքստերի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ կան հեղինակներ, որոնք գերադասում են

կարճ, հակիրճ պարբերություններ (9, 2), կան հեղինակներ նաև, որոնք շարադրում են ծավալուն պարբերություններով (6, 5)։ Հարցի այդ կողմերի ոճաբանական նշանակություն ունի և պարբերության գնահատման գործոն չէ։

Պարբերությունը, սովորաբար, առանձնացվում է իրեն՝ հեղինակի կողմից և գրավոր տեքստում ունի կարմիր տողից սկսվելու հարմարություն։ Ինչ վերաբերում է բանավոր տեքստին, ապա հնչերանգային ձևավորումը այս դեպքում պարբերության առանձնացման հիմնական պայմանն է։ Պարբերությունների առկայությունը տեքստը դարձնում է ավելի կուռ։ Այն ավելորդ երկարաբանություններից խուսափելու և նոր թեմայի անցնելու հիմնական միջոց է։ Սակայն հաճախ նոր պարբերությունը նաև կարող է ներկայացնել ոչ միայն նոր թեմա, այլ նաև նախորդ թեմայի կապակցությամբ լրացուցիչ, բացահայտող դրույթներ։

Ըստ Ս. Ի. Գինդինի (18, 49) պարբերության սկիզբ պետք է համարել նոր, նախկինում չհիշատակած անուն կամ առարկա, հետո արդեն պետք է հիշատակվեն ծանոթ, նախկինում գործող անումներ, առարկաներ։ Սա, սակայն, լինելով պարբերություն կազմելու կարևոր գործոն, միակը համարվել չի կարող։ Ավելացնենք նաև, որ հաճախ պարբերությունը կազմվում է ոչ միայն նոր գործող անձի, առարկայի կամ գործողության մուտքով, այլ նախկին գործող անձի, առարկայի կամ գործողության խոսքային իրադրությունում ստանձնած նոր դերով կամ գործողությամբ, նոր կապերի ու հարաբերությունների դրսևորմամբ։

Ի մի բերենք այն հիմնական գործոնները, որոնք օգնում են գիտական բանասիրական տեքստում պարբերության առանձնացմանն ու վերլուծությանը։

ա. Գիտական տեքստի պարբերության բնութագրման համար կարևոր գործոն է հաղորդումը հաղորդակցումից տարբերակելու հանգամանքը։ Քանի որ այս դեպքում հիմնականում գործ ունենք դիրքորոշային ակտիվ հաղորդման հետ, ապա հեղինակի խոսքը դառնում է հաղորդակցում ոչ միայն փաստերի շարադրմամբ, այլ նաև դրանց նկատմամբ հեղինակի և ունկնդրի ակտիվ վերաբերմունքով։ Սա արդեն վկայում է ենթատեքստի առկայությունը։

բ. Ուշադրության առարկա են դառնում պարբերության ներքին բովանդակային-տրամաբանական կապերն ու փոխհարաբերությունները, դրանցից բխող հետևությունների ժամանակային ու տարածական փոխկապակցությունները։

գ. Առանձին նշանակություն է ստանում պարբերության ձևավորման հարցը, որը ոչ միայն ոճական նշանակություն ունի, այլ նաև իմաստա-

բովանդակային, քանի որ հաճախ առաջ է քաշվում մեջբերումների և ծանոթագրությունների անհրաժեշտությունը։

դ. Պարբերության ձևավորման մեջ կարևոր գործառություն ունեն հնչերանգը, երբ խոսքը վերաբերում է բանավոր տեքստին, և առոգանության նշանները, երբ խոսքը վերաբերում է գրավոր տեքստին։ Հնչերանգը այն գործոնն է, որը բնութագրում է պարբերության հաղորդակցային տեսակը։

ե. Պարբերության համար բնորոշ է դառնում ընթերցողի ուշադրության սևեռումը նախկինում ասվածի վրա, որը գիտական պարբերությունում ունի իրեն հատուկ ձևավորումը՝ տեքստը եզրափակող վերջաբանի, ամփոփման կամ եզրակացությունների ձևով։ (Գիտական տեքստի վերլուծման ժամանակ այս երևույթին տալիս ենք հետհայեցական (рейтроспективный) անվանումը)։

զ. Պարբերության ձևով են դրսևորվում գիտական տեքստը բնութագրող սկզբից տրվող համառոտ ամփոփումները՝ (նախհայեցական- проспективный) ներածության, երկու խոսքի ձևով։

է. Գիտական պարբերության համար բնորոշ հատկանիշ է համապատասխան լեզվական նշանակի ընտրությունը և խոսքի արտահայտման ձևը։ Դրանք տարբեր են նախհայեցական և հետհայեցական պարբերությունների համար։

ը. Գիտական պարբերության կարևոր դրսևորումներից է բաղմակողմանի քննարկված հարցերի ի մի բերելը՝ ամփոփումը (резюме կամ аннотация)։

բ. Գիտական պարբերության բովանդակությունն են կազմում միմյանց հետ զանազան շարահյուսական-իմաստային ներքին կապերի մեջ գտնվող նախադասություններ և նախադասությունների խմբավորումներ, որոնց մեջ իր ինքնուրույն տեղն ունի պարբերության առանցքը։ Այն քերականորեն ունի հիմնական գործող անձ՝ անվանվող ենթակա, հիմնական գործողություն ներկայացնող ստորոգյալ։ Մնացած նախադասությունները շատ հաճախ ենթակայի փոխարեն օգտագործելով դերանուններ, մակբայներ, շաղկապներ, լրացնում են այն։

ժ. Գիտական պարբերության հաղորդակցային տեսակը հիմնականում դատողական-պատմողականն է, որի կրողը հիմնականում առանցքային նախադասությունն է։

ժա. Այս կապակցությամբ նշենք, որ առանցքային նախադասության և մնացած նախադասությունների միջև պետք է գոյություն ունենա ժամանակային, տարածական և եղանակային (ձևի իմաստով) միատարրություն։ Սա ապահովում է գիտական պարբերության տրամաբանական հետևողականությունը։

ժբ. Կարևոր հանգամանք է գիտական պարբերության հասցեագրումը համապատասխան ընթերցողին, որը նախապես ծանոթ է քննարկվող նյութին, պատահական ընթերցող չէ, և քիչ թե շատ պատկերացում ունի տեքստում քննարկվող ձևական ու բովանդակային կողմին:

ժգ. Գիտական պարբերության համար կարևոր հանգամանք է վերջինիս համեմատաբար ավարտված լինելը, սկիզբ և վերջ ունենալը:

Ահա համառոտակի այն հիմնական գործոնները, որոնց առկայությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է գիտական պարբերության լիարժեք և ավարտուն լինելու համար:

3. Ինչպես վերևում ասվեց, պարբերության առանձնահատկությունների բացահայտման և վերլուծման ընթացքում կարևոր օղակ է լեզվական միավորների քերականական, իմաստային և ձևային առանձնահատկությունների բացահայտումը:

Որպես հետազոտության նյութ ընտրելով մի քանի գիտական բանասիրական տեքստեր (8), աշխատել ենք հնարավորին չափ բազմազան պարբերություններ ընտրել, որոնք իրենց քերականական, իմաստային և ձևային կառուցվածքով առավել հարուստ նյութ կմատակարարեն վերն արծարծված հարցերի լուսաբանմանը:

Ուշադրության արժանի են պրոֆ. Հ. Թամրազյանի «Դրական ուղեներում» հոդվածների ժողովածուից քաղած մի քանի պարբերություններ: Դրանք հիմնականում ծավալուն են և դրսևորում են այն ներքին կապը, որն անհրաժեշտ է տվյալ գիտական տեքստի ամբողջության համար: Յուրաքանչյուր պարբերություն փաստորեն ներկայացնում է կա՛մ նոր թեմայի* արծարծում, կա՛մ հին թեմայի հետ կապված հարցերի պարզաբանում, լրացում: Շատ են դեպքերը, երբ մեկ պարբերությունում առաջ են բաշխում զուգահեռ մի քանի նոր թեմաներ, որոնք սակայն բխում են նախորդ պարբերություններում արծարծված մեկ ընդհանուր հարցից: Սա հենց տեքստի ներքին կապերի դրսևորման հիմնական ձևերից է:

Հեղինակի պարբերությունները աչքի են ընկնում հստակ ձևակերպումներով: Սա ավելի շատ հեղինակային խառնվածքի և ոճի հարց է, սակայն մտքերի ձևակերպման և ձևավորման տեսակետից, որոնք դրսևորվում են պարբերություններում, քիչ կարևոր դեր չի խաղում: Այս է պատճառը, որ հեղինակի մոտ բավականաչափ շատ են ինչպես հաղորդակցման տարբեր տեսակների միաժամանակ հանդես գալը, որը հաճախ սրում է հին և նոր թեմայի հարաբերությունը, այնպես էլ պարբերությունների կառուցման նկարագրական, փաստական ձևի հետ միաժամանակ դիրքորոշային վերաբերմունք պարունակող պարբերությունները: Այսպիսի դեպքերում ենթատեքստ պարունակող պարբերու-

* Այսուհետև ոճական կանվանենք «նոր թեմա»:

թյունների նշանակությունը նվազում է։ Պարբերությունների նման կառուցվածքը հատուկ է հեղինակի անառարկելի և վստահ ոճին և գիտական տեքստի համար բնութագրող նշանակություն ունի։

Դատողական, չեղոք հաղորդման մեջ երբեմն մուտք է գործում հաղորդակցման հարցական ձևը։ Դա հաղորդմանը տալիս է վիճաբանական, սակայն առաջադրված հարցերը ավելի հիմնավորված և հաստատուն ներկայացնելու առավելություն։ Հարցումով սկսվող կամ հարցում պարունակող պարբերություններում հիմնականում հին թեմայի հաստատման կամ հերքման փաստերը հիմնավորելու նպատակով կատարվում է նոր թեմայի առաջադրում ու զարգացում։ Դիտենք վերը հիշված աշխատությունից չորս պարբերություններ և տեսնենք, թե դրանցում ինչպես է իրականանում օբյեկտիվ իրականության իրերի ու երևույթների միջև եղած կապն ու փոխհարաբերությունը, տեքստում գործող ներքին ու արտաքին կապերի հին ու նոր թեմաների հարաբերությունը։

«Եղիշե Չարենցի» մասին ժամանակին թեև շատ հոդվածներ են գրվել, բայց այսօր դրանցից ոչ բոլորը կարող են քննություն բռնել, քանի որ միայն նրանց մեջ է հեղինակը դիտված որպես գեղարվեստագետ և գաղափարի մարդ։ Այսօր էլ շատ են գրվում հոդվածներ ու գրքեր, բայց դարձյալ ոչ բոլոր դեպքերում է, որ բացահայտվում է բանաստեղծի բուն ստեղծագործությունը։*

Այս անգամ խոսքը վերաբերում է Չարենցի նշանավոր պոեմի՝ «Խմբապետ Շավարշի» մեկնաբանությանը։ Հենվելով սովորության ուժ ստացած տեսակետներին, ավելի ճիշտ՝ խուսափելով XX դարի հայ կյանքի մի շարք երևույթների մեկնաբանությունից, գրեթե բոլոր քննադատները (այդ թվում նաև տողերիս հեղինակը մի հոդվածում) խոսում են միայն այդ պոեմի մի շարք հատկանիշների մասին, բայց չկողնելով կանգնել։ Նրանք «Խմբապետ Շավարշը» համարում են սոսկ երգիծական-սատիրական մի երկ (սա հին թեման է.— Ա. Ա.), որ ծաղրված են խմբապետները, ուր մերկացված է դաշնակցական Հայաստանը։ Անպայման, «Խմբապետ Շավարշը» մերկացնում է 1918-1920 թվականների Հայաստանի իրական կյանքը։ Բայց խնդիրն այն է, թե (նոր թեման— Ա. Ա.) ինչ մեթոդով է ասում պատմական ճշմարտությունը, ո՞ր ծայրից է սկսում իր երկը, ո՞րն է այդ երկի բուն պաթոսը։ Միայն այս հարցերին պատասխանելու դեպքում հնարավոր կլինի մոտենալ XX դարի հայ պոեզիայի նշանավոր կոթողի բովանդակությանը և գաղափարներին։

Ամենից առաջ՝ արդյո՞ք երգիծական սատիրական երկ է «Խմբապետ

---

* *Բոլոր ընդգծումները մերն են այս և մնացած տեքստերում։*

Շավարշը»: *Ո՞վ է նրանք այս հարցին դրական են պատասխանում:* Իրականում «Խմբապետ Շավարշը» բավական հեռու է սատիրական-երգիծական ոճից, բանի որ բոլորովին ուրիշ մեթոդով ու միջոցներով է հեղինակը հասել պատմական էպոխայի երևույթների գեղարվեստական: *Սատիրական-երգիծական ոճը ենթադրում է երգիծական հնարանքների օգնությամբ հասնել հերոսի բացասական գույների անընդհատ խտացմանն ու թանձրացմանը: Օրինակներ կարելի է բերել հենց Զարենցի «Երկիր Նաիրի» վեպից, «Կապկազ թամաշից» և այլն: Բոլորովին ուրիշ է «Խմբապետ Շավարշի» ոճը: Քանի որ (եղրակացությունը—Ա. Ա.)* ենթադրատը չի գտնում ոճն ու մեթոդը, ապա մատուցման եղանակն ու եզրահանգումը նույնացնում է իրար, բնականաբար չի էլ կարողանում բացել երկի բուն էությունը:

Իրականում *(նոր թեման եղրակացության ձևով—Ա. Ա.)*. «Խմբապետ Շավարշը» խորապես դրամատիկ մի երկ է, *ուր հեղինակը ճշմարտությունն է ասում հոգեկան դրամայի միջոցով» (Հր. Թամրազյան, «Գրական ուղիներ», էջ 205-206):*

Այստեղ մենք ունենք ծավալով երեք մեծ և մեկ փոքր պարբերություններ: Քննվող հարցը մեկն է՝ նշիշե Զարենցի և նրա «Խմբապետ Շավարշը» պոեմի գնահատումը: Հեղինակը առաջին երկու պարբերությունները կազմել է հաղորդակցման ձևով, որը ունի ակտիվ, դիրքորոշային հաղորդման բովանդակություն: Երրորդ պարբերությունը նույնպես դիրքորոշային է և միաժամանակ ունի եղրահանգման ձև: Հեղինակը շեշտում է պարբերությունների միջև գոյություն ունեցող ժամանակային և տարածական ներքին կապերը, որոնք շոշափում են հիմնական թեման, վեր հանում վերջինիս տրամաբանական դարգացումը և տրամաբանորեն բխելով տեքստի արտաքին կապերից՝ մտնում նրա մեջ: Բացատրման, հակադրման և ընդհանրացման մեթոդով հեղինակը առանձնացնում և շեշտում է հիմնական թեման և ընթերցողի ուշադրությունը սևեռում դրա վրա (դա բանաստեղծի բուն ստեղծագործության բացահայտումն է):

Երկրորդ պարբերությունը, որը ծավալով ավելի ընդարձակ է, ունի թեման բնութագրող նկարագրական-դատողական մի հատված, որը ատաղձ է միայն նոր թեմայի բացահայտման համար և ծառայում է տեքստային ներքին կապերի բացահայտմանը (Նոր թեման «Խմբապետ Շավարշին» ճիշտ գնահատական տալն է. սատիրա է դա, թե՞ դրամա): Դրա համար հեղինակը շեղվելով հաղորդման հիմնական՝ պատմողական-դատողական ձևից, դիմում է հարցմանը, որը ոչ միայն դրսևորում է հեղինակի դիրքորոշումը, այլ նաև ծառայում է թեմային վերաբերող որոշ նրանգների բացահայտմանը: (Օրինակ՝ թեմային է վերաբերում

այն հարցը, թե բանաստեղծի շոշափած պատմական ժամանակաշրջանի մասին ի՞նչ մեթոդով է ասվում, ինչպիսի՞ ենթատեքստ նկատի ունի բանաստեղծը, ո՞րն է նրա բուն պաթոսը)։ Հարցման հնչերանգն այս դեպքում ընդգծում է այն կապը, որ կա թեմայի և նրանից բխող նոր թեմայի միջև։ Հարցման հնչերանգը լարում և սպասողական ենթատեքստ է ենթադրում, որի լուծումը ինքնըստինքյան սպասվում է հաջորդ պարբերություններում։ Պարբերությունների ներքին կապի դրսևորման շատ հաջող օրինակ է սա։ Գիտական տեքստին հատուկ հռետորական ոճի օգտագործումը օգնում է հեղինակին միանգամից կապակցելու իր զարգացրած թեման նոր թեմայի հետ։

Երրորդ պարբերությունը սկսվում է այսպիսի հարցով. Ամենից առաջ՝ արդյո՞ք երդիծական-սատիրական երկ է «Խմբապետ Շավարշը»։ Հարցման ձևը դիրքորոշային ենթատեքստային է, արդեն ենթադրում է իր պատասխանը, որին հեղինակը հասնում է ոչ միանգամից։ Պարբերությունում կատարվում են շեղումներ թեմայից, մեջբերումներ այլ թեմաներից («Քաոս», «Երկիր Նաիրի», «Կապկող թամաշա»)։

Գիտական դրույթի հաստատման համար այլ թեմաների մեջբերումը բնորոշ է նման տեքստերին և ունի ոչ միայն ոճական նշանակություն։ Շեղումը, փաստորեն, կատարվում է իր թեման ավելի հիմնավոր պատճառաբանված դարձնելու և տեքստային ներքին կապը ավելի հիմնավոր ներկայացնելու նպատակով։ Սրանք հետհայեցումներ են, որոնց դիմում է հեղինակը. սրանց հակադրելով հիմնական թեման, հեղինակը հաստատման մեթոդով պաշտպանում է իր դիրքորոշումը։

Վերջին՝ չորրորդ պարբերությունը ունի հռետորական կատեգորիկ ոճ և վերջաբանի ձևով, փաստորեն, հայտարարում է հեղինակի դիրքորոշման մասին։ Սա այն ենթատեքստն է, որ թաքնված էր ամբողջ տեքստի խորքում բոլոր նրանք պարբերությունների մեջ, և որի բացահայտմանն էր ձգտում հեղինակը։

Երրորդ պարբերությունն ամփոփում է իր մեջ առացքային նախադասությունը (իրականում «Խմբապետ Շավարշը» բավական բեռու է սատիրական-երգիծական ոճից, բանի որ բոլորովին ուրիշ մեթոդով ու միջոցներով է հեղինակը հասել պատմական էպոխայի երևույթների գնահատությանը)։ *Այս առանձին նախադասությունում առկա է հեղինակի դիրքորոշային ենթատեքստը, որը վերջաբանի ձևով դրսևորվում է վերջին ամփոփող պարբերությունում որպես վերջնական եզրակացություն։ Ամբողջ տեքստը՝ իր չորս պարբերություններով հասցեագրված է տեղյակ ընթերցողին և այդ նկատառումով էլ ընտրված է խոսքային այնպիսի նշանակ, որը հասկանալի է տվյալ ընթերցողին։ Օգտագործված բառերը բնորոշում են հաղորդման բովանդակությունը. հոդվածներ, գե-*

ղարվեստագետ, բանաստեղծ, «Խմբապետ Շավարշի» մեկնաբանություն, երգիծական-սատիրական երկ, XX դարի հայ պոեզիայի նշանավոր կոթող, երգիծական ճնարաւորներ, ոճ և մեթոդ, դրամատիկ երկ և այլն։

Քննարկված չորս պարբերությունները միասին ընկալվում են որպես ավարտուն, սկիզբ և վերջ ունեցող տեքստային ներքին և արտաքին կապեր դրսևորող հաղորդում, որը ստանում է հաղորդակցման որակ։

Անդրադառնալով նշված պարբերությունների քերականական, իմաստային և ձևական կառուցվածքին, հարկ է նշել, որ այդ պարբերությունները քերականական, իմաստային և ձևային հատկանիշներ ունեցող ինքնուրույն նախադասությունների միասնություններ են։ Դրանք օժտված են բոլոր այն քերականական, իմաստային, ձևային առանձնահատկություններով, որոնցով օժտված են կազմիչներ հանդիսացող առանձին նախադասությունները։ Առաջին երեք պարբերությունները հիմնականում կազմված են բարդ համադասական նախադասություններից (կան նաև մի քանի բարդ ստորադասական բնույթի նախադասություններ), որտեղ առատ օգտագործված են բացատրող, պատճառ-հետևանք արտահայտող, բացահայտող, պատճառաբանող շաղկապներ, կապեր ու կապական բառեր։ Կապերն ու կապական բառերը օգնում են պարբերության մեջ մտնող տարբեր նախադասությունների միջև տրամաբանական հետևողական ներքին կապակցություն ստեղծելուն։ Այսպես օրինակ, առաջին պարբերությանը հետևում է երկրորդը հետևյալ սկիզբով. «Այս անգամ խոսքը վերաբերում է» և այլն։ Երրորդ պարբերությունը սկսվում է «Ամենից առաջ...» կապական բառով, որն արդեն ենթադրում է մտքի հետագա զարգացում, ծավալում և նոր փաստերի շարադրանք։ Հաղորդման ձևը հիմնականում պատմողական-դատողականն է, որը բնորոշ է գիտական-բանասիրական տեքստին։ Սակայն ինքնահարցման ձևով հեղինակը խախտում է շարադրանքի ավանդական ձևը և դիմելով նաև ընթերցողին, պատմողական-դատողական նախադասությունների մեջ մտցնում է հարցման ձևեր։ Այսպիսով՝ նախկին թեման՝ Եղիշե Չարենցի ստեղծագործության գնահատությունը, ստանում է նոր զարգացում, բացահայտվում են թեմայի դանադան կողմերի երանգները։ Թեման կոնկրետանալով, խորանում է և նախադասությունների քերականական ու իմաստային արտահայտչական տարբեր միջոցների օգտագործումով ստանում է նոր որակ, փոխարկվում է նոր թեմայի, որի հաստատումն էլ հենց սկզբից հանդիսանում էր հեղինակի հիմնական նպատակը։

Կապերի, շաղկապների, կապական բառերի զգալի դերը պարբերությունների կազմավորման գործում գիտական-բանասիրական տեքստում գործառական կարևոր նշանակություն ունի։ Դրանց գործառական նշա-

նակութիւնը պարբերութիւնում առաջ քաշված թեմայի օղակ առ օղակ բացահայտման մեջ է, մինչև նոր թեմայի լրիվ բացահայտումն ու հաստատումը: Մեր օրինակում առաջին երեք պարբերութիւններում թեմայի աստիճանական զարգացումը, դանդաղ շեղումներով հանդերձ, հանգեցրեց վերջին պարբերութիւնը՝ հիմնական նոր թեմային, որն իր քերականական ձևավորմամբ արդեն ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է մի մտքի, որն ամփոփող, եզրահանգիչ նշանակութիւն ունի: «Իրականում «Խմբապետ Շավարշը» խորապես դրամատիկ մի երկ է, ուր հեղինակը ճշմարտութիւն է ասում հոգևոր դրամայի միջոցով»: «Իրականում» կապը եզանակային այն բառերից է, որը ենթադրում է, երկար, աստիճանական զարգացումից հետո վերջնական ճշմարիտ եզրակացութեան հանգած մտքի շարադրանք:

Ընդ որում այն բանին, որ որոշ պարբերութիւններում (երկրորդ և երրորդ) առկա են հարցական բնույթի նախադասութիւններ, մինչ ամբողջ հաղորդումը տեքստային առումով (բոլոր չորս պարբերութիւնները միասին դիտված) համարում ենք հաստատական պատմողական կամ դատողական բնույթի, քանի որ առանցքային նախադասութիւնը, որն ամփոփվում է երրորդ պարբերութիւնում, ունի հաստատական դատողական բնույթ. «Իրականում «Խմբապետ Շավարշը» բավական ճեռու է սատիրական-երգիծական ոճից, քանի որ բոլորովին ուրիշ մեթոդով ու միջոցներով է հեղինակը հասել պատմական էպոխայի երևույթների գնահատութեանը»:

Այսպիսով՝ ունենալով հաղորդակցային հնչերանգային հիմնական տեսակ, գիտական պարբերութիւնը միաժամանակ կարող է օգտվել հնչերանգային այլ տեսակներից, առաջ քաշած իր դրույթներին լրացուցիչ հիմնավորում և արտահայտչականութիւն տալու նպատակով:

Ամփոփելով առաջին երեք պարբերութիւններում արծարծված թեման և հակիրճ, մեկ նախադասութիւնով ներկայացնելով նոր թեման (չորրորդ պարբերութիւն), հեղինակը շարունակում է տեքստի ծավալումը և հաջորդ՝ հինգերորդ պարբերութիւնում, որը կազմված է հարցման ձևով, փաստորեն զարգացնում է տրվող նորի ներքին, պատճառական կապերը, որպեսզի անցում կատարի դեպի հաջորդ առաջ քաշվող միտքը, որն իր հերթին դառնում է մեկ այլ նոր թեմա: Ահա այդ պարբերութիւնը:

«Մի՞թե իրոք դժվար է ասել, թե այս պոեմը ստեղծված է ոչ թե երգիծական խառացման, այլ հոգեբանական վերլուծութեան միջոցով: Առերևույթ թվում է հասարակ մի բան, բայց ըստ էութեան այս դեպքում ենթադատը ստիպված կլինի հաղթահարել ոչ քիչ դժվարութիւններ, մոտենալ հայ կյանքի մի շատ ծանր ու տանջալի պրոբլեմների ճնշութեանը:

Նա հարկադրված կլինի պատասխանել մի հարցի. ինչպես է Զարենցը պատկերացնում հայ ժողովրդի ողբերգական պատմական-քաղաքական պատճառները, XX դարի սկզբի ճակատագրական իրադարձությունները»:

Պարբերության միջուկը հենց առաջին նախադասությունն է, որն ունի հարցման հնչերանգ, որը սակայն հաստատող դատողական հաղորդում է: Սա կարիք ունի բաղմակողմանի պատճառաբանման և հաստատման, որի համար հեղինակը դիմում է մեկ այլ մեթոդի նորից հարցման (սակայն հաստատման բովանդակությամբ), որն իր հերթին հաջորդ պարբերության համար կդառնա նոր թեմա:

Այսպիսով, օղակ առ օղակ, հնչերանգային վանական ձևավորումներով կազմակերպվելով, գիտական հաղորդման պարբերությունները ներկայացնում են միայն ընդհանուր տեքստի աստիճանները, որոնք մեկը մյուսին լրացնելով և բացահայտելով, անընդհատ հնից անցնելով նորին, վերջապես հասնում են այն եզրահանգմանը, որ հեղինակի վերջնական նպատակն է: Այսպես է իրականանում տեքստային ներքին և արտաքին կապերի բացահայտումը, որոնց հիմնական կրողները պարբերություններն են:

Դիտենք մեկ այլ տեքստ (6), որտեղ արծարծվում են փիլիսոփայության և լեզվի փոխհարաբերության հարցերը:

«*Մեր գիտակցության մեջ աշխարհի պատկերը, որը հանդես է գալիս իբրև տրամաբանական-լեզվական չտարորոշված կառույց (կոնստրակտ), հենվում է մտքի և լեզվի օբյեկտիվ միասնության վրա: Սակայն կան բոլոր հիմքերը այդ միասնական պատկերը երկատելու և դրանք տրամաբանական ու լեզվական մոդելների տեքստով որպես երկու հարաբերականորեն ինքնուրույն կազմություններ դիտելու համար: Դա մեզ հնարավորություն կտա բացահայտելու իմացության պրոցեսում մտքի և լեզվի իրական փոխհարաբերությունը, մասնավորապես՝* լեզվի իմացական դերը, աշխարհի լեզվական պատկերի նշանակությունը:

Եթե աշխարհի պատկերը մեր գիտակցության մեջ դիտենք որպես երկու հարաբերականորեն ինքնուրույն մոդելներ և դրանք դուգադրենք, ապա ամենից առաջ կնկատենք, որ այդ մոդելները, աշխարհի այդ երկու՝ տրամաբանական և լեզվական պատկերները՝ հիմնականում (այս ընդգծումը հեղինակինն է) համընկնում են: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ մեր բառերի, նախադասությունների, լեզվական նշանակումների հիմնական բովանդակությունը կազմում է դրանց հասկացական միջուկը, բառասառարկայական իմաստը, կամ, ամենաընդհանուր ձևով արտահայտվելու դեպքում, տրամաբանական բնույթի ինֆորմացիան: Միաժամանակ չպետք է անտեսել, որ այդ համընկնման սահմաններից դուրս են մնում աշխարհի լեզվական պատկերի ինչ-որ մասեր,

և հենց դրանց իմացական արժեքն է տվյալ դեպքում ներկայացնում որոշակի գիտական հետաքրքրություն:

Այդ խնդրի լուծման համար նախ ամենաընդհանուր գծերով կանգ առնենք այն բաղադրիչների վրա, որոնցից մարդկանց գիտակցության մեջ կազմվում է աշխարհի լեզվական պատկերը:

Ըստ երևույթին, աշխարհի բառային (վերբալ) իմաստավորման համար հատկապես կարևոր նշանակություն ունի այն ինֆորմացիան, որը մենք ստանում ենք բառերի և նրանց կապակցությունների միջոցով:

Բառերի այդ ինֆորմացիոն բովանդակությունը ամենից առաջ պետք է երկփեղկել առարկայական նշանակության, որը հարես է գալիս որպես բառերի հասկացական (կոնցեպտուալ) միջուկ, և լեզվական նշանակության, որի բնույթը կախված է տվյալ կոնկրետ լեզվի առանձնահատկություններից:

Լեզվական միավորներն օժտված են և այլ տեսակի նշանակությամբ, սակայն նախքան դրանց անդրադառնալը կանգ առնենք բառի ինֆորմացիոն նշանակության մեջ տրամաբանական և բուն լեզվական բաղադրիչների վրա» (6, 3—4):

Մեջ բերված տեքստում հաղորդման միջուկը կենտրոնացված է «մտքի և լեզվի օբյեկտիվ միասնության վրա», երբ աշխարհի այդ երկու՝ տրամաբանական և լեզվական պատկերները հիմնականում համընկնում են»:

Տեքստի մնացած օղակներում պարբերություն առ պարբերություն, դանազան առումներով բացահայտվում և հաստատվում է հեղինակի կողմից առաջ քաշած այս հիմնական միջուկային դրույթը: Նշենք, որ գիտական պարբերությունների ձևավորման համար ընդունված ձևեր են ընդգծումները, մեջբերումները, համարակալումները թվերով կամ տառերով և այլն: Հաճախ համարակալումը ոչ միայն հեղինակային ոճ է, այլ նաև միջոց լայնածավալ վերլուծություն պահանջող հարցերը ավելի սեղմ և կոնկրետ ներկայացնելու:

Դիտենք այդպիսի մի նմուշ:

«Հայ քերականության պատմությունն սկիզբ է առնում Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության V դ. թարգմանությամբ, որը մինչև XVII դ. սկզբները մնում է որպես քերականության հիմնական ձեռնարկ՝ ուղեկցվելով անհրաժեշտ մեկնություններով ու լրացումներով: Այս շրջանի հայ քերականական միտքը, կաշկանդված լինելով թարգմանության տրադիցիայով, չի կարողանում բացահայտել հայերենի հոլովման սիստեմի առանձնահատկությունները: Հոմանատիպ քերականության կողմից հին հայերենի հոլովման սիստեմի ուսումնա-

սիրության բնագավառում կատարված աշխատանքը հանգում է հետևյալին.

1) Քերականները կարողանում են բացահայտել հին հայերենի հոլովների քանակը՝ առանձնացնելով ուղղական, սեռական, տրական, հայցական, գործիական («առաքական»), կոչական («հուշական») և ավելի ուշ շրջանում բացառական («պատճառական») հոլովները։ Այս բնագավառում հունաբան դպրոցի քերականների դերը գնահատելիս հարկավոր է նկատի առնել, որ նախ՝ կոչականը առանձնացված էր հունականի օրինակով, երկրորդ՝ գործիականը հունարենում չկար և մտցվել էր Թարգմանչի կողմից, երրորդ՝ ներգոյականի՝ իբրև ինքնուրույն հոլովի գոյության հարցը մինչև այժմ էլ վեճերի տեղիք է տալիս գրաբարի քերականների շրջանում, ուստի և նրա մասին չխոսելը հումատիպ քերականության համար Թերություն չպետք է համարել։

2) Քերականները ձայնորդների հատուկ բնույթի կապակցությամբ խոսում են նաև հոլովման մասին և փաստորեն հանգում ձայնավորահիմք և ձայնորդահիմք հոլովումների տարբերության գաղափարին։ Սակայն այս շրջանի քերականները այնուամենայնիվ չեն տալիս հոլովումների ձևաբանական դասակարգում, լավագույն դեպքում նրանք խմբավորում են կատարում ըստ սեռի (Մագիստրոս) կամ ըստ բառիմաստային խմբերի (ուշ շրջանի քերականական կատեխեզիսների քերականները)։

3) Քերականները խոսում են գրաբարի հոգնակի թվի կազմության հիմնական միջոցների մասին։

4) Քերականներն ուշադրություն են դարձնում նախդիրների՝ գրաբարի հոլովման մեջ կատարած կարևոր դերի վրա և նույնիսկ տարբերում նախդրավոր և աննախդիր հոլովումներ (Դր. Մագիստրոս, Դավիթ Ջեյթունցի, ուշ շրջանի անանուն քերականները)։

5) Քերականները և ուղղագրական աշխատությունների հեղինակները արդեն սկսում են ուշադրություն դարձնել հոլովման ժամանակ կատարվող հնչյունափոխություններին վրա» (12, 11—12)։

Այս ընդհանուր մեջբերումը նախահայեցական պարբերության լավագույն օրինակն է։ Հեղինակը համարակալելով պարբերությունները կոնկրետ ներկայացնում է քննարկվելիք հարցերը. ըստ որում այդ արվում է դիրքորոշային ակտիվ հաղորդակցման ձևով։ Խոսքի նման ձևավորումը բնորոշ է գիտական այն տեքստին, որը խիստ լայնածավալ նյութ է ընդգրկում, սակայն, պետք է մատուցվի հնարավորին չափ հակիրճ և մատչելի։ Այս դեպքում մենք ունենք ողջ նյութի շարադրանք առանձին պարբերությունների ձևով, որոնք նույնիսկ հետագա բացա-

հայտման կարիքը չեն զգում։ Դրանք ամբողջական, սկիզբ և ավարտ ունեցող ամփոփ պարբերություններ են։

Պարբերությունների ներքին կապը իրականացնող միաժամանակ ինքնուրույն գործառույթ ունեցող ձևերից են դեռահասները։ Դրանցից հատկապես լայն տարածում ունեն ցուցական դերանունները։ Դրանք մատնանշում են նախկին թեման, միաժամանակ օրգանապես այն կապում են նոր թեմայի հետ։

Դիտենք մի տեքստ, որտեղ վերնագիրը ներկայացնում է որպես նոր թեմա՝ հակիրճ պարբերության ձևով, իսկ հետո եկող պարբերությունները, դերանունով կապվելով միջուկին, ներկայացնում են թեմայի վերլուծությունը։

«Խառը ձայնավորա–ձայնորդանաձգ հիմքեր

Այս տիպը մեր կողմից բավական մանրամասն քննության ենթարկվեց հերթագայության ուսումնասիրության կապակցությամբ։ Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ այն ներկայացնում է հնդեվրոպական հոլովման արխայիկ տիպի մնացորդ։ Միայն որոշ դեպքերում այս տիպի մեջ մտնող բառերի հոլովական զարգացումը կապված է նախահայերենում տեղ գտած երևույթների հետ։

Այս տիպի առանձնահատկությունն այն է, որ հոլովման ժամանակ զուգորդվում են տվյալ բառի տարբեր հիմքերը՝ ձայնավորահանգ և ձայնորդահանգ հոլովումների առանձնահատկություններով. ընդ որում հրնարավոր է նաև ա) ձայնորդների հերթագայություն և բ) արմատի կազմիչների լրացուցիչ հերթագայություն։

Այս բառերի գերակշռող մեծամասնությունը հնդեվրոպական ծագում ունի։ (12, 260).

Ինչպես տեսնում ենք, ցուցական դերանունը շարունակ անդրադառնալով միջուկ-թեմային (այս դեպքում՝ վերնագրին) իրականացնում է թեմային կապը, դրանով էլ իրականացնելով տեքստային ներքին կապը, և շարադրանքը դարձնում տրամաբանորեն հետևողական։

Դիտական տեքստում տրամաբանական կապն ու միջուկ-թեմայի հետևողական զարգացումը ապահովելու մեծ բաժինը ընկնում է կապերով և կապական բառերով կազմված պարբերություններին։ Դրանցից են՝ պարզորեն, վերջապես, առնասարակ, ըստ ամենայնի, ամենից առաջ, հետևաբար, ամբողջությամբ վերցրած, և, բայց, բայց և այնպես, և վերջապես, համենայն դեպս, բացի այդ, վերոհիշյալ, և սակայն, այնուամենայնիվ, ենց, բայց ենց, բայց այնուամենայնիվ, ենց..., և այլն, և այլն։

Բերենք մի օրինակ, երբ կազմվում են պարբերություններ շաղկապի, կապերի և դերանվան միաժամանակյա օգտագործմամբ։

«Բայց, այնուամենայնիվ, ճենց այս երկու նոր պոեմներն էլ մի նոր սկիզբ են նախանշում մեր նորագույն պոեզիայի պատմության մեջ...

Բայց ճենց այս առիթով էլ մենք պետք է սրենք հետևյալ հարցը» (8, 196)։

Գիտական պարբերությունների համար բնորոշ է նաև հարաբերական (հարցական) դերանունների օգտագործումը (որ, որոնք, երբ, ինչպես, ինչպիսին, ճանի–ճանի, որքան, այսքան, այնքան, որքան և այլն, և և այլն)։ Դրանք կարող են գործածվել և արձանագրող փաստական, և դիրքորոշային հաղորդումներում։

Օրինակ. «Ինչո՞ւ ենք մենք շատ պարզ հարցը ընդգծում» (8, 60) «Բայց չէ՞ որ դա սուտ է...» (8, 110)։ «Որո՞նք են մեր վեպերի ընդհանուր հաջողությունները» (8, 111) և այլն։

Բանասիրական քննադատական գիտական տեքստի համար լեզվական նման նշանակի գործառությունը բնութագրող է, քանի որ դիրքորոշային հաղորդման ընթացքում հարցադրումն ու հարցի լուծումը կատարվում է միևնույն անձի՝ հեղինակի կողմից։ Առանց այս մեթոդի գիտական վիճարկելի խնդիրների լուծումը կդառնար չոր և դժվար ըմբռնելի, երբեմն էլ՝ անհնար։ Նման հարցադրման ժամանակ դերանունները (հատկապես ցուցական, որոշյալ, հարաբերական, հարցական) այն ընդհանրացնող նշանակներն են, որոնք միանգամից իրականացնում են քննարկվող հարցի տրամաբանական նեթքին կապերը և դրանցից բխող նոր փոխհարաբերություններ։

Վերևում մենք խոսեցինք գիտական պարբերության կազմակերպման ձևերից մեկի՝ համարակալման մասին։ Համարակալումը կարող է լինել թվային կամ տառային։ Նշենք, որ այդ ձևը ավելի հարմար է գիտական այն տեքստերին, որտեղ քննարկվում են կոնկրետ դասակարգման ենթակա փաստերը (օրինակ, լեզվաբանական, հոգեբանական)։ Իսկ, ասենք, փիլիսոփայությանը կամ գրականագիտությանը վերաբերող հարցերի քննարկումը հիմնականում ներկայացվում է ընդարձակ և չհամարակալված պարբերություններով, քանի որ այս դեպքում քննարկման ոճը ավելի ազատ է և համակարգերով չսահմանափակվող։

Դիտենք լեզվաբանական մի քանի տեքստեր։

«§187. Ածականները խմբավորելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք- ա) ի՞նչ հատկանիշ են արտահայտում նրանք. բ) ինչպե՞ս են արտահայտում տվյալ հատկանիշը։

...§ 188. Որակական և հարաբերական ածականների միջև եղած տարբերությունները հետևյալն են՝

1. Որակական ածականները արտահայտում են տարբեր դասերի առարկաների ընդհանուր որակական հատկանիշ, իսկ հարաբերականները՝ տվյալ դասի առարկաները ավելի ընդհանուր դասի առարկաներից տարբերող հատկանիշ։

... 2. Որակականները առարկաների հատկանիշը դրսևորում են անմիջականորեն, հարաբերականները՝ միջնորդավորված...

3. Որակական ածականները կարող են ստանալ տարբեր աստիճաններ ցույց տվող ձևեր, իսկ հարաբերականները զուրկ են դրանցից (Նկատի չունենք առանձին բացառություններ)։

...4. Որակական ածականները կազմությամբ կարող են լինել և պարզ, և ածանցավոր, և բարդ, իսկ հարաբերականները պարզ լինել չեն կարող, դա պայմանավորվում է հարաբերական ածականների՝ առարկայի հատկանիշը միջնորդավորված ձևով արտահայտելու հանգամանքով։

... 5. Որակական ածականները բոլոր տեսակի կապակցություններում դրսևորում են նույն իմաստը, իսկ հարաբերականները՝ բացի իմաստային ընդհանրություն դրսևորելուց, տարբեր կապակցություններում կարող են արտահայտել նաև տարբեր իմաստներ...» և այլն (3, 145-146)։

Եվ այսպես, տասը կետերում ամփոփվում են միևնույն թեման (որակական և հարաբերական ածականներ) բնութագրող հատկանիշներ։ Ինչպես տեսնում ենք, պարբերությունների դրսևորման այս ձևը օգնում է հստակ և կոնկրետ պատկերացնել այն ընդհանրությունները ու տարբերությունները, որոնք բնորոշ են քննարկվող թեմային։ Յուրաքանչյուր պարբերություն կապված լինելով հանդերձ նախորդ և իրեն հաջորդող պարբերությունների հետ քննարկվող թեմայի ընդհանրությամբ, միաժամանակ ներկայացնում է մի ավարտուն դրույթ կամ սահմանում, որը նրան իրավունք է տալիս նաև ինքնուրույն գործածության։ Ընդհանուր սահմանումների միջից որևէ կետի բացառելը չի անդրադառնում քննարկվող թեմայի տրամաբանական շարադրանքի վրա։

Վերևում խոսեցինք գիտական պարբերությունների այնպիսի ձևերի մասին, երբ տեքստին լրացուցիչ բացատրություն կամ պարզաբանում տալու նպատակով հեղինակը դիմում է ծանոթագրություններին։ Ծանոթագրություններ կարող են ունենալ (և չունենալ) ցանկացած տեքստեր, սակայն որպես կանոն գիտական տեքստի համար ծանոթագրությունները օրգանական անհրաժեշտություն են։ Ծանոթագրությունները ունենում են դրսևորման տարբեր ձևեր։ Դրանք կարող են տրվել էջի վերջում կամ տեքստի հետ զուգահեռ։ Ծանոթանանք լեզվաբանական մի տեքստի, որտեղ ծանոթագրությունը տրված է անմիջապես տեքստում՝ շարադրանքին զուգահեռ։

«§ 323 Ժամանակակից հայերենում կան ածանցներ, որոնք հատուկ են միայն բայերին և մեծ դեր ունեն ինչպես բայակազմության, այնպես էլ բայական համակարգի հետ կապված զանազան քերականական կարգերի դրսևորման ասպարեզում։ ...Այս ածանցները կոչվում են բայածանցներ։ ...Բայածանցները հանդես են գալիս բայարմատի և բայական վերջավորությունների միջև։ ...Ծանոթ.—Բայածանց չպետք է համարել ց և ր հիմքակազմիչ մասնիկները, որոնք հանդես են գալիս միայն բայերի անցյալի հիմքում»։ (3, 250—251)

Ինչպես տեսնում ենք, ծանոթագրությունը անմիջականորեն վերաբերում է տեքստի միջուկին և հանդես գալով առանձին պարբերությամբ կարևոր պարզաբանում է մտցնում թեմայի մեջ։

Պարբերությունների ձևով հանդես եկող ծանոթագրությունները երբեմն ծավալով ավելի ընդարձակ են լինում հիմնական տեքստից և կազմում են տեքստի օրգանական հատվածը. հաճախ էլ դառնում են քննարկվող թեմայի միջուկ։ Դիտենք հետևյալ տեքստը.

§ 326. Բաղադրական-քերականական ածանցները ժամանակակից հայերենում չորսն են՝ ան, են, ն, չ։ Սրանք ունեն այն ընդհանրությունը, որ մասնակցում են բայերի բաղադրմանը, և այն բայերը, որոնց կազմության մեջ հանդես են գալիս, առանց այդ ածանցների գոյություն ունենալ չեն կարող (խոսքը բայի ուղիղ ձևի մասին է)։ Սրանց մյուս առանձնահատկությունն այն է որ հանդես են գալիս միայն ներկայի հիմքում, որպես հիմքակազմիչ մասնիկներ, իսկ բայերի անցյալի հիմքում ընկնում են, դրանով ստեղծելով ածանցավոր բայերի յուրահատուկ խոնարհման համակարգ։ Հենց դրանով էլ այս ածանցները կատարում են նաև քերականական դեր։ Այդ դերը ավելի է ընդգծվում նաև նրանով, որ հիշյալ ածանցները բայերին հաղորդում են նաև կերպային որոշ, հաճախ շատ թույլ արտահայտված իմաստ։

Ծանոթ.—Հայ քերականագիտության մեջ ընդունված է այս ածանցները կոչել նաև սոսկածանցներ այն հիմնավորմամբ, որ դրանք որևէ հավելյալ իմաստ բային չեն ավելացնում, աննշանակ են։ Այդ ածանցները աննշանակ չեն, ունեն որոշակի քերականական դեր, հետևաբար նաև քերականական իմաստ, և այդ պատճառով սոսկածանց կոչելը նպատահակահարմար չէ։ Ավելի ճիշտ է և բայածանցների էությունը բացահայտող է Ա. Աբրահամյանի գործածած բաղադրության-քերականական ածանցներ անվանումը» (ընդգծումները մերն են-Ա. Ա.) (3, 251—252)։

Մեր այս ընդարձակ մեջբերումը իր նպատակն ունի ոչ միայն ցույց տալու ծանոթագրությունների կարևոր գործառույթը գիտական տեքստի պարբերությունների կազմակերպման պրոցեսում. այն նաև ցույց

է տալիս, թե որքան հեղինակային անհատական և ոճական բնույթ ունի ընդհանրապես «պարբերություն» լեզվական երևույթը։ Այնտեղ, որտեղ մեկ հեղինակ կարող է դիմել նոր պարբերության (տես մեր ընդգծած հատվածները), մյուսը այդ չի անում և տեքստը ներկայացնում է տեքստային խոշոր միավորներով։ Նույն հեղինակի մոտ քիչ ներքև մենք նորից հանդիպում ենք ծանոթագրության, նորից ընդարձակ ծավալով, որը կազմում է, փաստորեն, տեքստի օրգանական լրացումը։

«§ 327. Ա6—ժամանակակից հայերենում ան բայածանցը հանդես է գալիս ա լծորդության բայերի կազմության մեջ՝ ընկնելով ալ բայական մասնիկի և բայարմատի միջև։

...Ծանոթ.—Ժամանակակից հայերենում կան հնից ավանդված ուշ թվով ան ածանցով բաղադրված ձևեր, որոնց մեջ վերածման-փոխակերպման իմաստը խիստ մթագնել է։ Դրանցից են ...» (3, 252—253)։

Այսպիսով՝ ծանոթագրությունները, համարակալումները կամ տառային նշանակումները գիտական տեքստերում պարբերություններ կազմելու բավականաչափ տարածված և, մեր կարծիքով, տեքստի չուրացման համար արդյունավետ ձևեր են։

Խոսելով գիտական խոսքի լեզվական կառուցվածքի մասին ի դեմս պարբերության հարկ է նշել մեկ առանձնահատկություն, որը բնորոշում և տարբերակում է գիտական խոսքը գեղարվեստականից։ Դա գիտական տեքստին բնորոշ անոտացիայի, առաջաբանի և ներածության միաժամանակ առկայությունն է։

Առաջաբանը այն երկու խոսքն է, որտեղ համառոտակի տրվում է քննվող թեման իր բովանդակությամբ, ընտրած հարցերով, հաճախ տրվում է հեղինակի դիրքորոշային, սկզբունքային վերաբերմունքը հարցի նկատմամբ և նշվում է այն նորը, որը ներմուծվում է գիտության տվյալ ասպարեզը։

Ներածական մասում, որը կարող է կազմված լինել մեկ կամ ավելի հատվածներից, ներկայացվում են արդեն գիտական հարցադրումներ, իրենց փաստական լրացուցիչ նյութով, ճիշտ է, ավելի ընդհանուր հարցադրման ձևով, քան այդ արվում է բուն տեքստի համապատասխան բաժիններում։ Համենայն դեպս, ներածական մասը մտնում է գիտական տեքստի հիմնական թեմայի մեջ և այդ մասի բացակայությունը կարող է տրամաբանական խզում առաջացնել ողջ տեքստում։ Այնինչ առաջաբանը կամ երկու խոսքը միշտ կարելի է տեղաշարժել և տանել ետ, տալով վերջաբանի կամ ամփոփման տեսք։

Ներածական մասում պարբերությունները հաճախ ներկայացվում են համարակալված, դրանք ծավալուն են, լրացուցիչ բացատրություն-

ներով, փաստերով և հաճախ ներկայացնում են ողջ աշխատանքը՝ համակարգի ձևով։

Անոտացիայի, առաջաբանի և ներածականի առկայությամբ գիտական տեքստի հիանալի նմուշ է պրոֆ. Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայրենի տեսության հիմունքները» աշխատությունը(13)։

Անոտացիան մեկ պարբերությամբ նախանշում է աշխատությունում քննարկված ամենաընդհանուր հարցերը։ Բերենք այդ, քանի որ համեմատության համար պետք է մեջբերվեն առաջաբանից և ներածականից հատվածներ։

«Գիրքը նվիրված է ժամանակակից հայերենի կառուցվածքի համակողմանի ուսումնասիրությանը։ Ներածության մեջ տրված սկզբունքների հիման վրա հետևողականորեն քննարկված են արտահայտության ուսումնքի (արտահայտաբանության) քերականության (ձևաբանության ու շարահյուսության) և քերականական միավորների փոխկաղապարման (փոխանցման ու փոխակերպման) բոլոր էական հարցերը» (13,4)։

Անոտացիան փաստորեն հղում է ներածությանը, որտեղ ուրվագծվում է ողջ աշխատության էությունը։

Առաջաբանը, որ կազմած է յոթ ոչ շատ ծավալուն պարբերություններից, քիչ ավելի ընդարձակ ձևով ներկայացնում է քննարկվող նոր թեման, միաժամանակ զուգահեռներ անցկացնում մի շարք հին թեմաների հետ, ցույց տալու համար նոր թեմայի տրամաբանական անհրաժեշտությունը։

Ներածությունում քննարկվող հարցերը ներկայացված են վերնագրերի (2) և համարակալված պարբերությունների ձևով։ Դրանք իրականում այն նոր քննարկվելիք դրույթներն են, որոնք պետք է հանդամանորեն մշակվեն հիմնական տեքստում և այստեղ ներկայացվում են ավտոռեֆերատի ձևով։

Դիտենք մի քանի նմուշներ։

«Հայոց լեզվի ղարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ հիմնական դժերով տրված է լեզվական կաղապարների մեր ըմբռնումը։ Ըստ այդ ըմբռնման՝ լեզվական կաղապարները բառաձևերի որոշակի կարգերի հետևողական շարքեր են, որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի բանակով, դիրքով և պարտադրականությամբ» (ընդգծումը մերն է)։ (13, 4)։

Ինչպես տեսնում ենք այս պարբերությամբ հեղինակը վերականգնում է տրամաբանական կապը քննվող նոր թեմայի և նախկինում քննված թեմայի միջև, քանի որ դրանք սկզբունքորեն իրար շատ մոտ են։

«Հիշյալ աշխատության մեջ մենք սահմանափակվում ենք միայն համադրական բառաձևերի կաղապարներով, ուստի և խոսվում էր միայն

հիմքի և մասնիկների մասին։ Ուսումնասիրության շրջանակների ընդլայնումը և բառաձևերի փոխարեն բառակապակցությունների ընդգրկումը,—...սկզբունքային տարբերություններ չի բերում կաղապարների ուսումունքի մեջ. տարբերությունն այն է, որ առաջին դեպքում մենք գործ ունենք հիմքերի և մասնիկների, երկրորդ՝ բառակապակցության հիմնական (միջուկային) և լրացական անդամների՝ բառերի հետ» (ընդգծումը մերն է)։

Պարբերություններում ընդգծված հատվածները առանձնացնում են հաղորդման միջուկը, որի վերլուծությունը կատարվում է հետագա տեքստում։ Նորից վերականգնելով կապը նախկինում քննարկված թեմայի և ներկա վերլուծման ենթարկվող նյութի միջև, հեղինակը մեկ ընդհանուր դիտողությունից հետո («նկատի ունենալով կաղապարի հասկացության՝ մեզ համար կենտրոնական լինելը, խոսենք նաև կաղապարների տեսակների մասին, որոնք մասամբ քննարկված են մեր հիշյալ աշխատություններում») (13, 4), անցնում է իր առջև դրված պրոբլեմի քննությանը, որը ձևակերպվում է այնպիսի պարբերություններով, որոնք կարելի է ընդունել երբեմն որպես ինքնուրույն, տեքստից դուրս ուղենշող դրույթներ։ Օրինակ, «Յուրաքանչյուր լեզվական երևույթ ճանաչելիս պետք է կառուցել նրա կաղապարը (ընդգծումը մերն է)։ Վերջինս ոչ թե լեզվաբանի քմահաճ կառուցում է, այլ խոսողի մոտ տեղի ունեցող պրոցեսի արտացոլում։ Կաղապարը տալիս է հնարավոր կառուցվածքները, որոնք իրականացվում են խոսքային ակտերի մեջ» (13, 14)։

Յուրաքանչյուր պարբերություն, որը հստակ առանձնացվում է մնացածներից, լինելով ավարտուն և ամբողջական միտք, նաև համարակալված է, որը ավելի կոնկրետ է դարձնում պարբերությունում առաջ քաշված հարցի ընկալումը։

Ինչպես նշեցինք վերևում, գիտական տեքստի համար բնորոշ է հետհայեցական (ретроспекция) և նախհայեցական (проспекция) պարբերությունների (Ներածականի, երկու տողի կամ Նախաբանի) առկայությունը։ Այստեղ նույնպես շատ չծավալվելով հարցի շուրջը, քանի որ դա Ներածական է, հեղինակը դիմում է նախհայեցական մեթոդին և մեկ պարբերությամբ ձևակերպում իր քննելիք նյութը։

«Ինչպես կտեսնենք փոխակերպմանը նվիրված հատվածում, այդ գաղափարը, որի ներմուծման պատիվը վերագրվում է Զ. Հառիսին և Ն. Հոմսկուն, իրականում վաղուց է հայտնի լեզվաբանությանը և հանդես է գալիս լեզվի ոճա-ետերատասեական վարժություններին, այլև տրամաբանական բերականության՝ միևնույն տրամաբանական-հասկացական կարգերը լեզվական տարբեր ձևերով արտահայտվելու հնարավորության սկզբունքի մեջ» (13, 15)։

Ընդգծված հատվածը հաղորդման այն միջուկն է, որը լիովին պարզաբանում է վերևում ընդգծված («փոխակերպմանը») միտքը։

Ուրեմն որքան կարևոր է հստակ և կոնկրետ ձևակերպված պարբերության նշանակությունը գիտական տեքստի համար։ Հիշյալ պարբերությունները դիրքորոշային ենթատեքստային հաղորդումների բնորոշ օրինակներ են. առանձին պարբերությամբ տրվում է հեղինակի դիրքորոշումը քննարկվող հարցի նկատմամբ. միաժամանակ ենթատեքստային ձևով ասվում է, որ որպես նորություն ներկայացված դրույթը, այլ անվանման տակ, վաղուց հայտնի է գիտությանը։

Կարևոր նշանակություն ունի գիտական պարբերության համար նաև հարցադրման ձևը։ Երբ այն կոնկրետ է և սեղմ, դա ավելի է պարտավորեցնում, և պատասխանը սպասվում է հանգամանալից և նույնիսկ կոնկրետ։

Այսպես՝ «Ինչպիսի՞ն պետք է լինի լեզվի ընդհանրական իրնալական կաղապարը» (13, 15). Բնական է, որ նման հարցին պետք է, ավելի շուտ ցանկալի է, պատասխանել կոնկրետ, համարակալված պարբերություններով, որոնց շարադրանքը կհանգեցնի հեղինակի վերջնական մտքին։ Դա էլ կլինի վերևում տրված հարցի պատասխանը։

«Այսպիսով, մեր կառուցելիք կաղապարը կարելի է կոչել ընդհանրական նյութա-համակցային կաղապար...» (13, 15)։

Քննարկվող «Ներածությունը» գիտական տեքստին նախորդող ներածության լավագույն նմուշ կարող է ծառայել, քանի որ, մեր կարծիքով, ունի ավտոռեֆերատի արժեք ողջ տեքստի համար։ Սա նույնպես գիտական տեքստին բնորոշ հատկանիշ է և գործնականում պետք է նկատի առնվի։

Գիտական տեքստերին բնորոշ է եավելվածների առկայությունը, որտեղ պարբերությունները հանդես են գալիս ամփոփող, ի մի բերող, լրացուցիչ կոնկրետ նյութ ներկայացնող գործառույթով։ Հավելվածի պարբերությունները մեծ մասամբ լինում են փոքր ծավալի, ավելի շատ մատնանշող, ծրագրային։ Հավելվածի հիմնական բովանդակությունը կազմում է լրացուցիչ, կոնկրետ նյութը, լինի դա բառացանկ, թե հետազոտվող նյութի տեքստեր։

III. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ–ԲԱՆԱՀԱՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանասիրական գիտական տեքստերի կազմումն ու շարադրանքը ըստ կառուցվածքի իրականում շատ բազմազան է, սակայն կան գործոն-

ներ, որոնց առկայությունը որևէ կոնկրետ գիտական տեքստի կազմման համար անհրաժեշտ է։ Վերևում մենք մասնակիորեն ծանոթացանք այդ գործոններից մի քանիսին (գիտական տեքստերին նախորդող կամ հաջորդող երկու տողը, անոտացիան, առաջաբանը, ներածությունը, վերջաբանը, ամփոփումը և այլն)։ Տեսանք, թե ինչպես են կազմվում պարբերությունները, որոնք հանդես են գալիս որպես տեքստի հաղորդման հիմնական օղակներ, որտեղ իրականացվում են հին և նոր թեմաների տրամաբանական, հետևողական կապը։ Նշեցինք խոսքային այն նշանակները, որոնք ավելի հաճախ են հանդիպում նոր պարբերություններ կազմելիս (կապեր, կապական բառեր և այլն)։

Խոսելով գիտական բանասիրական տեքստերի կառուցվածքային առանձնահատկությունների մասին, հարկ ենք համարում նշելու, որ դրանք այնքան նշանակալից են, որ հիմք են ծառայում տեքստերի համակարգման համար։

Գրականագիտական, վերլուծական տեքստերը, որոնք վերաբերում են հեղինակի կամ որևէ կոնկրետ գործին կամ ստեղծագործության որևէ շրջանին և կամ էլ հեղինակի գեղագիտական հայացքներին, ավելացրած նաև վերջինիս կենսագրական տվյալները՝ ընդհանրապես բնորոշվում են շարադրման առավել ազատ, գեղարվեստական ոճով և դրան էլ համապատասխան՝ տեքստերի ու պարբերությունների ազատ կառուցվածքով։ Նման տեքստերում պարբերությունները կարող են կառուցվել ցանկացած բառով և ձևով, իհարկե պահպանելով ներքին տրամաբանական կապը նախկինի թեմայի հետ (կրկնություններ խղումներ և այլն)։ Այստեղ ավելի քիչ տեղ է հատկացվում պարբերությունների կազմման տառային կամ թվային համարակալմանը։ Նման տեքստերին բնորոշ է դիրքորոշային, ենթատեքստային պարբերությունների առկայությունը։ Մի քիչ այլ է լեզվաբանական գիտական տեքստերի կառուցվածքը։

Դիտենք գրականագիտական մի քանի տեքստեր։ Շարադրանքի և պարբերությունների կառուցման հետաքրքիր և քիչ հանդիպող նմուշ կարող է ծառայել Լ. Հախվերդյանի «Հովհաննես Թումանյան» գրքույկը(9)։

Պարբերությունները կառուցվում են երկու անձի անունից՝ հեղինակի (բանասեր) և Թումանյանի՝ ուղղակի խոսքի ձևով։ Շարադրանքը ընդմիջվում է բանաստեղծական պարբերություններով։ Հեղինակային պարբերությունները այն օղակներն են, որոնք հաջորդաբար և հետևողականորեն առաջադրում և զարգացնում են նոր թեմաներ, ամբողջացնելով ողջ շարադրանքը։ Սակայն միաժամանակ պետք է նշել, որ հեղինակի բոլոր պարբերությունները և փաստորեն նոր թեմաներ են, որոնք ներկայացնում են երբեմն նաև հարցադրման ձևով և՛ անմիջապես իրենց

զարգացումն ու պարզաբանումն են ստանում արդեն Թումանյանի խոսքում։

«Բանասեր (Իսահակյանի հուշերից-Ա. Ա.) ...երբ պարիսպներից դուրս էինք գալիս արդեն, Օհանեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց.

Թումանյան— Ինչքան մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա։ Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա։

Բանասեր—Թումանյանը մտածում էր դրամա գրել Անիի կյանքից, նյութը Հովնան Բագրատունի թագավորն էր... Բայց այդ մտահղացումն էլ մնաց անկատար ուրիշ շատերի հետ միասին։

Բայց և ինչպիսի՛ մտահղացումներ ի կատար ածվեցին։ Դրանք, գլխավորապես վերաբերում են 1902 թվականին՝ բանաստեղծի կյանքի գուցե և ամենաերջանիկ տարում, թեև նա անառողջ է եղել և բուժվելիս՝ Աբասթումանում։ Ահա ինչու բանաստեղծը հետագայում այնպիսի կարոտով է հիշել ամառանոցային այդ գողտրիկ քաղաքը, որ մտավ հայ գրականության տարեգրության մեջ։

Թումանյան—Սիրելի Մարիա Մարկովնա. որքա՜ն կուզեի այժմ Աբասթուման լինել։ ...Որքա՜ն հիշողություններ ու անմոռանալի վայրկյաններ... Այդտեղ եմ մշակել «Անուշը», այդտեղ եմ գրել «Փարվանան» և այլ բաներ—հա՛, «Թմկաբերդի առումը» (9, 20—22)։

Հաջորդ հեղինակային պարբերությունը առաջադրում է նոր թեմա, որը, սակայն, փաստորեն բխում է նախորդից՝ շոշափած նյութի և ժամանակագրական առումով։

«Բանասեր — Թումանյանն առաջին անգամ Երևանը տեսել է 1901 թվականի մայիսին։ Արարատյան դաշտավայրի մասին պոետն իր նամակներում խոսել է հիացմունքով։

Թումանյան — Առհասարակ սիրուն է այս երկիրը... Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովս անց են կենում մեր պատմության փառավոր շրջանները...

...Ինձ ցույց տվին Երևանի նշանավոր հիշատակարանները։...

Բանասեր — Այս այցելության ժամանակ է, որ Թումանյանն Օշականում այցելել է Մեսրոպ Մաշտոցի շիրիմին և գրել այս բանաստեղծությունը։

Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում
Ծանր վեհությամբ իջած երկնքից,

Այստեղ սրբազան մի շունչ է բուրում,
Մեզ վեր է տանում աշխարհի կյանքից։

Վերևում, պարբերությունները դասդասելիս (արձանագրող, դիրքորոշային և ենթատեքստային), մենք նշեցինք պարբերություններ կառուցելու հեղինակային առանձնահատկությունների մասին։ Այս առանձնահատկություններից հատկապես պետք է նշել բազմակողմանի հաղորդում պարունակելու փաստը, երբ պարբերությունը բացահայտում է վերը նշված երեք կողմերը՝ միաժամանակ։ Մեր քննած նյութը (լ. Հախվերդյան Հովհ. Թում.») նման հարուստ և բազմակողմանի բովանդակություն պարունակող պարբերությունների լավ նմուշ է։

Այսպես.

«Բանասեր — ...Ինչո՞ւ 1902 թվականից, փառահեղորեն արգասավոր «Աբասթումանի աշունից» հետո մի քանի տարի նա գրեթե ոչինչ չըգրեց։

Ի՞նչ պատահեց։

Պատահեց այն, որ այդ տարիներին ուժգին ցնցումներ եղան նախ հայ ազգային, ապա և միջազգային կյանքում» (9, 24)։

Երեք ոչ մեծ պարբերություններով, ինչպես տեսնում ենք, հեղինակը միանգամից պարզում է ողջ իրադրությունը արձանագրելով եղածը, տալով իր դիրքորոշումը («արգասավոր» Աբասթումանի աշուն) և ներկայացնելով մի ենթատեքստ, որը կարելի էր և չպարզաբանել, չնայած հեղինակը հետագա պարբերություններում հանգամանորեն պատասխանում է իր իսկ առաջադրած հարցին։

Շարադրանքի այս ձևը, երբ հեղինակի և շարադրանքի գործող անձի միջև տարվում է չմիջնորդված հաղորդակցում և ընթերցողը դառնում է երրորդ ունկնդրող անձը, խիստ հրապուրիչ է ինչպես իր թարմությամբ, այնպես էլ պարբերությունների բովանդակության հագեցվածությամբ։ Ժամանակի կապը նման շարադրանքում իրականանում է շատ ինքնատիպ ձևով և այնքան կենդանի, որ ընթերցողը կարծես ինքը դառնա դեպքերի վկան։

Դիտենք հետևյալ հատվածը։

«Բանասեր — Կամեցել է արտասահման գնալ. 1908 թվին գրել է Խահակյանին.

Թումանյան—...շատ կուզենայի մի անգամ ընկնել էդ աշխարհքը... լավ կլիներ, բայց չի լինում։

Բանասեր — Բայց ի՞նչ արտասահման, երբ մտերիմ ընկերոջը՝ Կոմիտասին տված խոստումն էլ չի կատարել, այլապես մեծ երգահանն

այսպիսի նամակ չէր գրի նրան. «Ափսոս, որ Տփխիս եղած ժամանակս քեզ տեսնել չկարողացա...

Բանասեր — ...Հետագայում էլ անկատար մնաց Թումանյանի և Սպենդիարյանի իղձը՝ ...միասին աշխատեն «Թմկաբերդի» լիբրետոյի վրա։

Բայց ի՞նչ հնարավոր աշխատել, երբ բանաստեղծը չկարողացավ նույնիսկ Ալեքսանդրապոլ մեկնել՝ Արմեն Տիգրանյանի պատրաստ օպերայի առաջին ներկայացմանը ներկա լինելու։

Թումանյան — ...շատ ու շատ ափսոս, որ միանգամայն անկարող եմ կատարել ձեր խնդիրն ու իմ ցանկությունը։

Բանասեր — Դժվար է նույնիսկ թվել, թե որքան բազմապիսի խընդիրներ էին դրաղեցնում այս տարիների Թումանյանին...

...գլխավորած գործերից մեկն էլ՝ Սայաթ-Նովայի ժառանգությունը մոռացության փոշուց հանելը և համաժողովրդական սեփականություն դարձնելը։

Թումանյան—...Էս տեսակ մի պայծառ գերեզման է Սայաթ-Նովայի գերեզմանը...

...Սիրով մնաց Սայաթ-Նովան.

Բանասեր — Սայաթ-Նովայի շիրիմը բացվեց 1914 թվականի մայիսի 15-ին։ Հաշված օրեր էին մնացել մինչև առաջին համաշխարհային պատերազմը» (9, 46—52)։

Պարբերությունների միջոցով դրսևորվող ձևի և բովանդակության միասնությունը և դարդացվող թեմայի տրամաբանական կապն ու փոխպայմանավորվածությունը ժամանակագրական առումով գիտական նման տեքստերի կառուցման առաջնակարդ պայմաններից են։

Դրականագիտական տեքստերի համար կարևոր գործոն է համապատասխան ճնշերանգի ընտրությունը։ Այստեղ մենք նկատի ունենք հընչերանգը ոչ որպես ֆիզիկական երևույթ՝ իր պարտադիր կազմիչներով, այլ հնչերանգի հոգեբանական, տրամադրության ուղղվածություն տվող ասպեկտը։

Վերը քննվող գործը շարադրված է մտերմիկ, սեղանի շուրջը տարվող դրույցի հնչերանգով, որին օգնում է այն ձևը, որ ընտրել է հեղինակը գրքույկը կազմելիս. դա փաստորեն երկխոսություն է հեղինակի՝ բանասերի և Թումանյանի միջև, կոնկրետ, փաստերով հագեցված ավարտուն պարբերություններով, որոնք օգնում են թեման լրիվ բացահայտելուն և մատչելի մատուցելուն։

Այլ բան է լեզվաբանական գիտական տեքստը։ Սրանում հիմնականում իշխում է խիստ, մի քիչ չոր, համակարգման ենթակա փաստե-

րը կոնկրետ ու հստակ շարադրելու ոճը։ Պարբերությունները մեծ մասամբ դառնում են նոր թեմաների զարգացման ինքնուրույն օղակներ, որոնք լինելով ընդհանուր շղթայի հատվածներ, վերջ ի վերջո ծառայում են հեղինակի կողմից զարգացվող մտքի և պրոբլեմների նպատակին։ Այստեղ շարադրման ոճը և հնչերանգային ուղղվածությունը ավելի խիստ է, կանոնավոր, առանց մտերմիկ երանգների։ Նման տեքստերում առատորեն հանդիպում ենք պարբերություններ կառուցելու և համարակալման ձևին, և պարագրաֆային համակարգմանը, և ընդհանրացնող ու ամփոփող սահմանումների ու կանոնների և այլն։

Դիտենք նման մի քանի տեքստեր։

«Անորոշ դիմավոր նախադասություն

§ 670. Անորոշ դիմավոր նախադասության դիմային իմաստը անորոշ է. ոչ միայն չի արտահայտվում, թե ով է գործողություն կատարողը, այլև հայտնի չէ՝ գործողություն կատարողը մե՞կն է, թե՞ մի հանիսր։ Օրինակ՝ Նրան կանչեցին հիմնարկից»։ Եվ այլն։

Բայի դիմային անորոշության հնարավորությունն այնքան լայն է, որ երբորդ դեմքով երբեմն նկատի է առնվում նույնիսկ խոսողը»։ Եվ այլն։

§ 671. Անորոշ դիմավոր նախադասությունները կամ նրանց գլխավոր անդամը արտահայտվում են բայի հետևյալ խոնարհված ձևերով.

1. ——————

2. ——————

3. ——————

4. ——————» (2—319, 320)։

Դիտենք մեկ այլ հատված։

«§ 672. Ընդհանրական միակազմ նախադասությունը մոտով վերաբերում է ոչ միայն ապրող դեմքին, այլև բոլորին, ունի ընդհանրական իմաստ։ Օրինակ՝

§ 673. Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները կամ նրանց գլխավոր անդամներն արտահայտվում են՝

ա) ————

բ) ————

գ) ————

դ) ————

ե) ————

զ) ————» (2, 320—321)։

Ինչպես տեսնում ենք, շարադրանքը խիստ կոնկրետ է, և պարբերությունները կանոնավորապես արտահայտում են կա՛մ հին թեմայի զարգացում, կա՛մ առաջադրում են նոր թեմա։

Պարբերությունների կառուցման համար լայնորեն օգտագործվում

է պարագրաֆային, համարակալման (նաև տառային) ձևը, տրվում են կոնկրետ սահմանումներ, որոնք ընդգծմամբ առանձնացվում են։

Դիտենք մեկ այլ տեքստ, որտեղ արծարծվում են լեզվաբանական ավելի ընդհանուր հարցեր (5)։

Ասենք, որ հեղինակը գերադասում է ծավալուն պարբերություններ, և դրանով էլ, մեր կարծիքով, պայմանավորվում է այն, որ տառային և թվային դասդասումների կողքին նախապատվությունը տրվում է կապերով և կապային բառերով առանձնացվող պարբերություններին, որոնք տվյալ դեպքում փոխարինում են համարակալմանը։

Այսպես.

«Այժմ տեսնենք, թե ինչպիսի վերաբերական իմաստներ կարող ենք գտնել վերը բերված նախադասության մեջ։ Ամենից առաջ այդ նախադասության մեջ արտահայտել ենք մեր վերաբերմունքը հաղորդված իրության նկատմամբ,...

Այնուհետև, արտահայտել ենք գործողության ժամանակը, վիճակը և սեռը...

Ապա՝ արտահայտել ենք քանակական հարաբերություն՝...

Ստորոգյալի միջոցով արտահայտել ենք նաև դեմքի հարաբերություն,...

Արտահայտել ենք վերաբերություն (հատկացման) հարաբերություն՝...

Արտահայտել ենք երկու առարկաների հարաբերություն...

Վերջապես արտահայտել ենք անուղղակի խնդրի իմաստ,...» (5, 321—322)։

Ինչպես տեսնում ենք, պարբերություններ կառուցելու համար հեղինակը օգտվել է կապերից և կապական բառերից, կրկնության մեթոդից, երբ բառակապակցությունը հետևողականորեն կրկնվում է տարբեր պարբերություններում (այս դեպքում «արտահայտել ենք») և դրանով ապահովում տրամաբանական ներքին կապը առաջադրված թեմայում։

Պարբերության կառուցման ձևը այնքան կարևոր հատկանիշ է լեզվում, որ հաճախ դառնում է հեղինակի լեզվի ոճական կարևոր ու բնորոշող առանձնահատկություն։ Դա, օրինակի համար, կարող ենք ասել, քննվող տվյալ գործի վերաբերյալ (5)։

Հեղինակի ընդարձակ պարբերությունները չեն խանգարում վերլուծվող երևույթի հստակ, ճշգրիտ և կոնկրետ համակարգելուն։ Այսպես, խոսքը գնում է քերականական կարգերի մասին։

«Քննենք այս երկու երևույթներն առանձին-առանձին. նախ- առաջինի մասին։

Հասարակական կյանքի դարգացումը... և այլն» (5, 371—372)։

Հարցի պարզաբանումը կատարվում է մեկ պարբերության մեջ, որը ծավալուն է (մոտ երկու էջ), սակայն հստակ է և կոնկրետ։

Այնուհետև հեղինակն անցնում է հաջորդ կետին։

«Անցնենք երկրորդ երևույթի քննությանը։

Եթե հասարակական գիտակցության զարգացմանը զուգընթաց... և այլն» (5, 372—373)։

Եվ նորից մեկ ընդարձակ պարբերություն (երկու էջից ավելի)։

Հարցի ամփոփումը, որը տրվում է երեք կետերով՝ 1, 2, 3, առանձնացվում է «այսպիսով» կապական բառով կազմված պարբերությամբ։

Այսպիսով, տեսնում ենք, որ գիտական տեքստում պարբերություններ կառուցելու եղանակն ու ոճը բոլորովին էլ պատահական և քմահաճ գործողություն չէ, այլ լեզվական երևույթ է, որը պայմանավորված է ընտրած նյութով և նրա իմացությամբ, վերլուծվող հարցի բարդության աստիճանով, նրանով, թե պրոբլեմը տեսական թե ավելի կոնկրետ, գործնական բնույթ ունի և, վերջապես, արտահայտում է հեղինակի գիտական դրելաոճն ու լեզուն։

Չնայած ժանրի ընդհանրությանը (բանասիրական) գրականագիտական և լեզվաբանական գիտական տեքստերը ըստ պարբերությունների կառուցվածքի ունեն որոշ առանձնահատկություններ։

Այսպես, գրականագիտական տեքստերին բնորոշ է շարադրման ավելի ազատ, երբեմն գեղարվեստական, մտերմիկ ոճը։ Պարբերությունները, բացի կառուցվածքային էական հատկանիշներից (թեմայի զարդացում, ինքնուրույն ավարտուն ձև և այլն), միաժամանակ ավելի մոտ են գեղարվեստական տեքստին. կարող են ունենալ հաղորդակցման, բացականչության, հարցման ձև, կարող են կազմված լինել մեկ բառից («Ահա» և այլն), կարող են ունենալ երկխոսության տեսք, հեղինակի խոսքի ձև և այլն։ Այս տեքստերին ավելի քիչ է հատուկ համարակալման եղանակով կառուցվող համակարգումը, կարող են լինել մեջբերումներ և հղումներ։

Լեզվաբանական տեքստում պարբերությունները կազմվում են ավելի կանոնավոր, խիստ ոճով, ընդունված է դասակարգման կամ համակարգման տառային կամ թվային համարակալումը։ Պարբերությունը կարող է ունենալ կանոնի կամ սահմանի ձև։

Լեզվաբանական տեքստին բնորոշ է կոնկրետ նյութից մեջբերումներ, ծանոթագրություններ, աղբյուրներ և այլն, որոնք դրսևորվում են ինքնուրույն պարբերություններով։ Լեզվաբանական տեքստը շարադրվում է խիստ, երբեմն չոր, գործնական ոճով և այլն։

Մենք խոսեցինք գրականագիտական և լեզվաբանական գիտական տեքստերի՝ ընդհանրապես և դրանց պարբերությունների կառուցման մասին, մասնավորապես և հնարավորին չափ ցույց տվեցինք դրանց առանձնահատկությունները։

Բանասիրական գիտական տեքստերի մեջ իրենց կառուցվածքային յուրահատկություններով առանձնացվում են բանասիրական–բանահյուսական (երբեմն նաև ազգագրական) տեքստերը։

Վերլուծվող նյութի բերումով վերջիններս պարունակում են մեծ ծավալի կոնկրետ մեջբերվող նյութ՝ առասպելներ, երգեր, նոտագրություններ, առած-ասացվածքներ, հանելուկներ, ծեսեր, հավատալիքներ և այլն, որոնք ենթակա են խմբավորման, դասդասման, համարակալման, և դրանից էլ բխում է դրանց շարադրանքի ձևն ու կառուցվածքը։ Նման տեքստերում առատորեն օգտագործվում են ծանոթագրությունները։ Բանահյուսական տեքստերում շատ հաճախ լինում են բանասացների կենսագրական տեղեկություններ, բանահյուսական նյութի զանազան տարբերակներ, դժվար հասկանալի բարբառային բառերի բառացանկ, ժողովածու նյութերի ծանոթագրությունների աղյուսակներ, երգերի տեքստեր և նոտագրություններ, ժողովրդական ծեսերին ու ավանդույթներին վերաբերող զանազան նյութեր և այլն։

Այսպիսով, բանահյուսությանը վերաբերող գիտական տեքստերը ունեն կառուցվածքային առանձնահատկություններ, որոնցով և տարբերվում են բանասիրական գիտական այլ տեքստերից։

Առաջին առանձնահատկությունն այն է, որ այս տեքստերում ուսումնասիրվող նյութը մեջբերվում է շատ ավելի մեծ ծավալով, երբեմն ամբողջաբար։

Այնուհետև նյութը ուսումնասիրվում է ըստ տարածքի և ընդգրկում է բոլոր ասպարեզները՝ մտավոր կյանք, մշակույթ, բարքեր, ավանդույթներ և այլն։ Ըստ որում բանահյուսական տեքստերում մեջբերված նյութը բարբառային է, ըստ տարածքի։

Բանահյուսական գիտական տեքստերը տարբերվում են բանասիրական, լեզվաբանական գիտական տեքստերից նաև նրանով, որ բանահյուսական տեքստերում ենթատեքստ չկա. պարբերությունները ուղղակիորեն ավարտուն ձևով ներկայացնում են, պարզաբանում ուսումնասիրվող նյութը։

Այսպիսով, հեղինակային խոսքը նման տեքստերում հաճախ սահմանափակվում է առաջաբանով և որոշ ծանոթագրություններով, որոնք, փաստորեն, հանդես են գալիս որպես ուղեցույցներ, բանալիներ հաճախ խրթին բարբառով ներկայացվող տեքստերի համար։

Պարզ է, որ այսպիսի տեքստերում պարբերությունները ավելի ինքնուրույն և ավարտուն բնույթ են կրում, ծավալուն չեն, քանի որ հանդես են գալիս որպես քննարկվող նյութի հարուստ բովանդակության տարբեր կողմերն ու օղակները պարզաբանված ու կոնկրետ ներկայացնելու գործառույթյամբ։

Դիտենք նման մի տեքստ։

«Դեպքերի զարգացումը հնքիաքների մեջ ընթանում է պարզից դեպի բարդ և հաճախ ավարտվում է կարճատոտ ագորիզմային բարոյախրատական բնույթի ձևակերպումներով»։

«Դեղարքունիքի բանահյուսական արձակում իրենց ուրույն տեղն ունեն նաև կենցաղային զրույցներն ու մանրապատում զվարճալիքները»։

Պատմաազգագրական այս խմբերի համար ճանաչված զվարճախոս է բայաղետցի Դաղդոյան Արամը...»։

«Զրույցները ևս ունեն իրենց տիպաբանական զուգահեռները հարևան ժողովուրդների մոտ»...։

...«Առած-ասացվածքների քանակային պատկերը (տես աղ. №1) ապացույցն է այն բանի, որ ժանրը կենսունակ և մասսայական է նաև աղզագրական այս հատվածներում»։ Եվ այլն։ (7, 15—16)։

Ինչպես տեսնում ենք, պարբերություններն ունեն ոչ այնքան թեման զարգացնող բնույթ, այլ թեման ներկայացնող, պարզաբանող կոնկրետ բովանդակություն։ Նման շարադրանքը, ինչպես ասվեց, հատուկ է գիտական տեքստին նախորդող հատվածին՝ առաջաբանին։

Ի մի բերելով գրականագիտական, լեզվաբանական և բանասիրական-բանահյուսական տեքստերի համեմատական վերլուծության արդյունքները, գալիս ենք մի քանի կոնկրետ հետևությունների, որոնք միավորվելով հանդերձ, տարբերակում և բնութագրում են վերը նշված տեքստերից յուրաքանչյուրը։ Որպես ընդհանուր հատկանիշ գրականագիտական, լեզվաբանական, բանասիրական-բանահյուսական տեքստերի համար նշվում է այն հանգամանքը, որ դրանք բոլորը պատկանում են բանասիրական ժանրին։ Վերջինիս թույլ է տալիս (չնայած միշտ չէ, որ հիրառվում է) շարադրանքի քիչ թե շատ ազատ, երբեմն գեղարվեստական ոճ։

Որպես ընդհանուր հատկանիշ է դիտվում այն, որ վերոհիշյալ տեքստերի համար ներտեքստային կապակցության հիմնական օղակի գործառույթյամբ հանդես է գալիս պարբերությունը։ Վերջինիս իր իմաստային (բովանդակային) ձևական (կառուցվածքային) գործոններով իրականացնում է տեքստի իմաստային, կառուցվածքային և գործառական ամբողջությունը։

Որպես ընդհանուր հատկանիշ դիտվում է այն, որ բանասիրական դիտական տեքստերին հատուկ է առաջաբանի, ներածականի, երկու խոսքի, ամփոփման կամ անոտացիայի առկայությունը, որոնք կարող են տեքստին ինչպես նախորդել, այնպես էլ հաջորդել։

Գիտական բանասիրական տեքստի համար, մանավանդ երբ վերջինս ծավալուն է, խիստ կարևոր նախատեքստի (լինի դա առաջաբան թե ներածություն) առկայությունը, որը փաստորեն բացահայտում է հեղինակի մտքերի և փաստարկների ուղղվածությունը։

Նախատեքստում կարող են տրվել տեքստի բաժիններում արծարծված հիմնական հարցերը հեղինակի դիրքորոշային վերաբերմունքը, և ընթերցողը հիմնական տեքստի վերլուծումն սկսելիս արդեն նախնական գիտելիքներ ունի նրա մասին և հեշտությամբ կարողանում է կողմնորոշվել հեղինակի առաջադրած հարցերում։*

Անցնելով յուրաքանչյուրի բնութագրմանը նշենք հետևյալը.

1. Գրականագիտական տեքստերի համար կարևոր նշանակություն է ստանում ժամանակագրական գործոնը։ Պարբերությունների միջոցով դրսևորվող ձևի և բովանդակության միասնությունը և զարգացվող թեմայի տրամաբանական կապն ու փոխպայմանավորվածությունը՝ ժամանակագրական առումով, գիտական նման տեքստերի կառուցման առաջնակարգ պայմաններից է։

2. Գրականագիտական տեքստերի համար կարևոր գործոն է համապատասխան հնչերանգի ընտրությունը, վերջինիս հոգեբանական, տրամադրության ուղղվածության առումով։

3. Գրականագիտական տեքստերում ավելի մեծ տեղ են գրավում քննվող նյութի հեղինակային մեջբերումները, որոնք երբեմն կարող են ծավալուն լինել։

Պարբերությունները կազմվում են ազատ, ներտեքստային տրամաբանական կապը ապահովելու համար հաճախ օգտագործվում են կրկնությունները, հղումները։

---

* Ավելորդ չենք համարում մեջբերել նախատեքստի մի նմուշ։

«Գրքում քննարկվում են ժամանակակից գիտությունների զարգացման շնորհիվ լեզվի փիլիսոփայության առջև ծառացած մի քանի արմատական հարցեր, որոնց թվում՝ լեզվի դերը աշխարհի գիտական պատկերի ստեղծման մեջ, մտածողության վրա լեզվի ազդեցության մեջ քննարկվում է նաև լեզվաբանական հարաբերության տեսությունը։

Գրքի կարևորությունը ակնառու է դառնում այն հանգամանքի շնորհիվ, որ նրանում լեզվի փիլիսոփայության պրոբլեմները լուսաբանելիս քննադատաբար վերլուծվում են արդի բուրժուական փիլիսոփաների կոնցեպցիաները վերոհիշյալ հարցերի առթիվ։

Գիրքը օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են դիալեկտիկական մատերիալիզմի խմացաբանության, արդի լեզվաբանության փիլիսոփայական հարցերով, բուրժուական փիլիսոփայության քննադատական վերլուծությամբ» (19)։

4. Գրականագիտական տեքստերի համար ավելի բնորոշ է բովանդակային, դիրքորոշային և ենթատեքստային պարբերությունների առկայությունը։ Իր դիրքորոշային հարցադրմամբ հեղինակը կարող է վիճաբանության մեջ մտնել ընդդիմախոսի հետ և նրա ներկայացրած պարբերությունները նման դեպքերում դառնում են հեղինակի սկզբունքների շարադրանք, որոնք կարող են դրսևորվել նաև համակարգման ձևով (համադրականությամբ և այլն)։

Ենթատեքստային մոդուլը գրականագիտական տեքստերում երբեմն իրականանում է ընթերցողի միջոցով, երբ հեղինակի կողմից առաջադրված երկիմաստ հարցադրումը թողնվում է ընթերցողի դատին և, հետևաբար, ընթերցողն էլ պետք է դրան պատասխանի։ Այստեղից էլ բխում է այն, որ գրականագիտական տեքստերին ավելի է հատուկ վիճարկելու, քննարկվող նյութը ենթատեքստային ձևով ներկայացնելու հանգամանքը։ Նման դեպքերում պարբերությունները կարող են հանդես գալ որպես հիմնական հաղորդում կրողներ, նոր, վիճարկելի նյութի սկզբունքներ։

5. Գրականագիտական տեքստերում պարբերությունները երբեմն կառուցվում են հարցի երկխոսության, հարց ու պատասխանի, մեկուսի խոսքի ձևով և այլն։

6. Գրականագիտական տեքստն իր իմաստային (բովանդակային), կառուցվածքային (քերականական) և ձևական նշանակային (հնչերանգային) դրսևորման կաղապարներով ավելի մոտ է կանգնած գեղարվեստական տեքստին։ Սակայն վերջինս տարբերվում է բոլոր մնացած տեքստերից նրանով, որ բոլորովին ազատ է շարադրման ձևի մեջ և հեշտությամբ մեկ ձևից կարող է փոխանցվել մեկ այլ ձևի, պատմողականից հարցման հրամանի, չափածո կամ հռետորական խոսքի և այլն։ Սա առանձին հետազոտության առարկա է։

Անցնելով լեզվաբանական գիտական տեքստերին, նշենք.

1. Լեզվաբանական գիտական տեքստերին բնորոշ է շարադրանքի խիստ, մի քիչ չոր, դուսպ, փաստերը ու հակիրճ ներայացնելու ոճը։

2. Լեզվաբանական տեքստերում հաճախ են կիրառվում ծանոթագրությունները, որոնք դառնում են շարադրված փաստերը լրացնող օղակներ։

3. Այդ տեքստերում մեծ տեղ է գրավում փաստերի համակարգումն ու դասդասումը, որը կատարվում է տառային կամ թվային համարակալման ձևով։

4. Այս տեքստերում պարբերությունները մեծ մասամբ ներկայացնում են նոր փաստ կամ երևույթ, որը կամ զարգացնում է նախորդ թեման կամ վերջինս լրացնում է նոր փաստով։

5. Լեզվաբանական գիտական տեքստի համար առավել բնորոշ է տեքստի արձանագրող և դիրքորոշային կաղապարը, երբ արձանագրվում են եղած փաստերը և դրանց հիմքի վրա ներկայացվում նոր փաստեր, միաժամանակ ներկայացնելով դրանց նկատմամբ հեղինակային դիրքորոշումը։ Ենթատեքստի առկայությունը այս տեքստերի համար չի բացառվում, սակայն լայն կիրառություն չունի, քանի որ հետազոտողը գործ ունի կոնկրետ նյութի շարադրման հետ, որը երբեմն հասնում է մաթեմատիկական ճշգրտության։

6. Լեզվաբանական գիտական տեքստերում պայքնգ-ություններն ավելի հաճախ են ներկայանում որպես նոր թեմայի, նոր փաստերի շարադրման սկիզբ։

7. Ժամանակային գործոնը (континуум) լեզվաբանական գիտական տեքստերում որոշիչ նշանակություն չունի, եթե միայն հատուկ չի նշվում տվյալ գործի հրատարակման կամ քննվող հարցի ծագման ու առաջադրման կոնկրետ ժամանակը։

Բանասիրական-բանահյուսական տեքստերը բոլորովին ուրույն կառուցվածք ունեն։

1. Դրանք պարունակում են մեծ ծավալով արձանագրող, փաստագրական հաղորդում, որը ներկայացվում է որպես վերլուծվող տեքստ։

2. Հեղինակի դիրքորոշային վերաբերմունքը տրվում է անհամեմատ փոքր ծավալով և կրում է հիմնականում ծանոթագրական, ներածական բնույթ։

3. Տեքստ կազմող պարբերությունները հիմնականում ունեն նոր հաղորդումներ ներկայացնող, փաստերը ծանոթագրող գործառություն։

4. Տեքստի ենթատեքստային մեկնաբանությունը լայն կիրառում չունի, որովհետև արձանագրվող բանահյուսական, ազգագրական փաստերը թելադրում են ուղղակի գնահատում։ Եթե «Կամ...կամ-ի» հարց է ծագում, այս դեպքում դիրքորոշային մոտեցումը օգնում է որևէ մեկի նախապատվությանը, առանց ենթատեքստի։

5. Բանահյուսական-բանասիրական տեքստերում լայնորեն կիրառվում է հետազոտման վիճակագրական մեթոդը։

6. Այս տեքստերում լայն կիրառություն է գտնում նաև փաստերի ժամանակագրական դասակարգումն ու դրանց համեմատական ուսումնասիրությունը՝ համապատասխան աշխարհագրական, տարածքային գործոնի։

7. Բանասիրական-բանահյուսական տեքստերի կառուցվածքը բազմազան է. այն ունի ժանրային լայն ընդգրկում (արձակ, չափածո, հեքիաթ, առեղծված, առասպել, երգ, պար, նոտագրություն և այլն)։

8. Այս տեքստերում ծանոթագրությունների գործառույթն ունի կարևոր նշանակություն։ Դրանք մեծ մասամբ ներկայացնում են ինքնուրույն պարբերությունների տեսքով և պարունակում են գիտական կարևոր հաղորդումներ։

IV. ԳՐԱԿԱՆԱԴԻՏԱԿԱՆ, ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ–ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ–ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՀԱՏՈՒԿԱՑՈՒՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դժվար է պատկերացնել որևէ (ծավալուն երբեմն նաև ոչ ծավալուն), տեքստ, լինի դա գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական թե մեկ այլ, որը չունենա առանձին գլուխներ, մասեր, հատվածներ և որը սկզբից մինչև վերջ շարադրված լինի միևնույն ոճով։ Անպայման կլինեն շարադրանքի նախապես ընտրված ձևից և կառուցվածքից քիչ թե շատ շեղումներ։ Պարզ է, որ որոշող գործոնը հեղինակի պրագմատիկական, գործնական նպատակաուղղվածությունն է։

Այս առումով տեքստի հատույթավորման ժամանակ նկատի է առնվում երկու հանգամանք. առաջին՝ նրա ծավալային-պրագմատիկ, գործնական կողմը, մյուսը՝ նրա կոնտեքստային-տարբերակային, կառուցվածքային կողմը։ Երկուսն էլ, ինչպես տեսնում ենք, չնայած իրենց հիմքում ունեն տեքստի նյութից և բովանդակությունից բխող հանգամանքներ, այնուամենայնիվ մեծ չափով պայմանավորված են հեղինակի սուբյեկտիվ ծրագրերից և նպատակաուղղվածությունից։ Այսինքն, տեքստի բովանդակային-փաստական, բովանդակային-դիրքորոշող և ենթատեքստային բնույթը ստանում է իր հեղինակային ձևավորումը տեքստի հատույթավորման գործնական և կոնտեքստային տարբերակների միջոցով. (բացի զանազան գլուխներից, բաժիններից և այլն տեքստը կարող է ունենալ նաև ներածական մաս, առաջաբան, նախաբան, վերջաբան և այլն)։ Այս դեպքում տեքստի ժանրը մեծ դեր է խաղում տեքստի բովանդակային ուղղվածության և կառուցվածքային դրսևորման համար։

Գեղարվեստական տեքստը, օրինակ, կարող է կազմված լինել նամուրհակներից կամ գրքերից, որոնք դրսևորվում են որպես ամբողջի մասեր։ Այնուհետև, հատույթավորելը շարունակելով նվազող հաջորդականությամբ, ստանում ենք մաս, գլուխ, ենթագլուխ, պարբերություն, (վերֆրազային միավորում), նախադասություն։ Սա հենց տեքստի այն ծավալային-պրագմատիկ, գործնական հատվածումն է, որի մասին վերևում նշեցինք։ Դա փաստորեն տեքստի հատույթավորում է վերջինիս

արտահայտության, դրսևորման պլանում, որը վերաբերում է նրա կառուցվածքային ձևավորմանը։

Ինչ վերաբերում է տեքստի հատույթավորմանը՝ նրա բովանդակության ներքին, իմաստային կապերի դրսևորմանը՝ (բովանդակության պլան), ապա հատույթավորման երկրորդ փուլը, որը կատարվում է հենց տեքստի ներսում և ոչ նրա կողքին կամ նրան զուգահեռ, կոնտեքստային տարբերակային դրսևորումն է։ Սա իրականանում է հեղինակային խոսքի, մտորումների, նկարագրությունների, ուրիշի խոսքի, մեջբերումների, մեկուսի խոսքի և այլ ձևերով։ Նման տեքստերում (խոսքը վերաբերում է գեղարվեստական տեքստին) շարադրանքի ոճի փոփոխությունները, մեկից մյուսին անցնելը սովորական է և նույնիսկ ցանկալի, քանի որ միապաղաղ ոճը կարող է գեղարվեստական տեսքը դարձնել ձանձրալի և դժվար ընկալելի։ Կոնտեքստային տարբերակային շեղումները գեղարվեստական տեքստը դարձնում են ոճային տեսակետից ավելի բեթև և մատչելի։ (Իհարկե չպետք է մոռանալ տեքստային նյութի յուրահատկությունները, հեղինակի հետապնդած նպատակները՝ տեքստ մատուցելու գործում և այլն)։

Տեքստի հատույթավորումն արտահայտության պլանում, որը մեծ մասամբ հեղինակի կողմից նախօրոք ծրագրված է, առնչվում է ժամանակային գործոնի հետ (դադարների), որը կարևոր է ոչ միայն արդեն շարադրվածը յուրացնելու, ընկալելու տեսակետից, այլև նախապատրաստվելու հաջորդ միտքը կամ թեման ճիշտ գնահատելու և տեքստային ներքին կապը ապահովելու համար։* Որևէ մտքի ղարգացումն ու ծավալումը պարբերությունում ինքնըստինքյան կապվում է ժամանակային գործոնի հետ, քանի որ դադարը, որը փաստորեն ժամանակի որոշակի հատվածում ծավալվող տեքստի որևէ օղակում կատարվող ժամանակավոր խզումը կամ ընդհատումն է (ժամանակային առումով), օգնում է ընթերցողին կենտրոնացնելու իր ուշադրությունը ժամանակի տվյալ հատվածում կատարվող գործողությունների ու երևույթների վրա։

Այս առումով «ժամանակային կոնտինուամի (ընթացող ժամանակը— Ա. Ա.) մեջ կատարվող ընդհատումները այնքան անհրաժեշտ են մտավոր գործունեության համար, որքան ֆիզիկական վարժությունները։ ...ուշադրության փոխանցումը մեկ օբյեկտից մյուսին՝ ՎՖՄ կամ պարբերության ծավալման ընթացքում նույնքան անհրաժեշտություն է որքան ֆիզիկական վարժությունների՝ մեկը մյուսով փոխարինելը» (16—51)։

---

* Տեքստային ներքին կապ ասելով մենք չպետք է հասկանանք տեքստի սոսկ տրամաբանական շարադրանքն ու կապակցվածությունը։ Դա մի բարդ կոմպլեքս է, որն իր մեջ ներառում է քերականական, իմաստային, կառուցվածքային մի շարք գործոններ, որոնք ապահովում են տեքստի ամբողջականությունը։

Դադարները գեղարվեստական տեքստում կարող են իրականանալ և ընկալվել ոչ միայն ուղղակիորեն՝ ֆիզիկական առումով (մի գլխից մյուսին անցնելիս արհեստականորեն խզվում է մտքի ֆիզիկական կապը, որոշ ժամանակ է անցնում), այլ նաև դադարը կարող է տարածվել շոշափվող նյութի վրա ժամանակագրական առումով։ Որևէ նկարագրվող երևույթ կամ դեպք ավելի հստակ ու պատճառաբանված ներկայացնելու համար հրեմն վերադառնում են անցյալին և ներկայացնում վաղուց կատարված իրադարձություններ, որոնք սակայն օրգանապես կապված են տեքստում ներկայացվող դեպքերի հետ։ Այս ալվում է նոր պարբերությունների միջոցով, որոնք երբեմն կարող են հանդես գալ նոր մասերի, հատվածների, երբեմն նույնիսկ գլուխների ձևով։ Սա այն դեպքն է, երբ պարբերությունը ոչ թե համընկնում է ՎՖՄ-ին, այլ վերջինիս ընդգրկում է իր մեջ որպես բաղադրիչ և բովանդակություն կազմող գործոն։ Այստեղ հարկ է նշել, որ գեղարվեստական գրականության մեջ ավելի ցայտուն քան գիտական տեքստերում է, դեպքերի կապն ու փոխպայմանավորվածությունը, անկախ ժամանակային գործոնից, անպայմանորեն արտացոլվում է պարբերությունների մեջ։ Բավարարվենք մեկ նմուշով։

«Տղերքն անտառապահի հրացանն ուզեցին, և անտառապահն ինքը եկավ։ Տղերքից մի երկուսն ասացին «մեղք է», քանց այդտեղ Անտոնյան Ջավենն ասաց. «Իմ երեխեքն ավելի մեղք են»։ Նրա տունը գերեզմանոցի մոտ է, և շունն ամենից շատ նրանց ականջների մեջ էր վայում։ Անտոնյան Ջավենն ասաց. «Իմ երեխեքը մեղք չեն, շունն է մեղք»։ Անտառապահը գնաց մոտավ գերեզմանոց, կանգնեց շան դեմ, հրացանն ուսից իջեցրեց, փողը դրեց շան աչքերի մեջտեղը, իսկ շունը վայում էր—վաուուու՜ւ... Շունը մնաց այդպես գլուխը թաթերին պառկած, թեև հրացանը ճանաչում էր։

Պատերազմից հետո, երբ ես փոքր էի և սարում էի և Վանու համար շներ գողացա, երբ գայլը շատ էր և բոլոր հովիվների համար միայն մի մաշկած Ջամբար կար, երբ Վանուն ամուսնացրին, երբ Ասատուրը բանակից եկել էր, երբ Դանելանց Արտեմ քեռին գեռ շվի էր փչում, երբ թուրքերի քոչը գալիս ու գալիս էր, այդ գարնանն ահա հովիվներին հրացան էին տվել, ամեն մի կրակոցի շները ցրիվ էին գալիս—և այդ գարնանից ահա այդ շունը ճանաչում էր հրացանը, վախենում էր հրացանից, բայց հիմա չփախավ, մնաց այդտեղ գերեզմանի մոտ» (11, 237)։

Մեջբերված հատվածը բովանդակային փաստական, և հատկապես ենթատեքստային բովանդակությամբ հագեցած հաղորդման շատ հաջող նմուշ է։ Երկու պարբերություններում, որոնք իրենց մեջ պարունակում

են փաստորեն մի քանի պարբերությունների նյութ,* հեղինակը ներկայացնում է ոչ միայն մի ամբողջ ժամանակահատված (հետպատերազմյան գյուղի վիճակը), այլ նաև տեքստի միջուկը կազմող հերոսին և նրա հետ կապված հիմնական դեպքերի ու դեպքերի զարգացման տրամաբանական ընթացքն ու վախճանը։

Առաջին պարբերությունում առանձնացվում են երկու ՎՖՄ-ներ՝ առաջին պարբերության սկզբից մինչև «Իմ երեխեքը մեղք չեն, շունն է մեղք» նախադասությունը, իսկ մյուսը՝ այդտեղից մինչև տվյալ պարբերության վերջը։ Ինչպես տեսնում ենք, առաջին ՎՖՄ-ն կազմված է չորս նախադասությունից, իսկ երկրորդը՝ երկու, սակայն բոլորը միասին միավորվում են մեկ պարբերության մեջ, որը փաստորեն մեկ ամբողջական, ավարտուն խոսքային միավոր է։

Մեջբերված հատվածի երկրորդ պարբերությունը կոնտինուումի տարբեր հատվածների միջև գոյություն ունեցող իրադրային, իմաստային և տրամաբանական կապը դրսևորելու լավագույն նմուշ է։ Այդ կապը իրականանում է «երբ» ընդհանրացնող հարաբերական դերանվան միջոցով, որը հանդես է գալիս որպես կոնտինուումի տարբեր հատվածները միացնող օղակ։ Մեջբերված հատվածի երկրորդ պարբերությունը համընկնում է ՎՖՄ-ին։ Ինչ վերաբերում է հատուկթավորմանը, ապա այդտեղ գործում են այլ սկզբունքներ, որոնց մեջ հիմնական ուշադրությունը սևեռվում է տեքստի տրամաբանական հատվածմանը։

Կառուցվածքային տեսակետից գիտական տեքստը նույնպես կարող է կազմված լինել հատորներից, մասերից, գլուխներից, ենթագլուխներից, պարագրաֆներից (վերջիններս բացակայում են գեղարվեստական տեքստում), պարբերություններից, ՎՖՄ-ից, նախադասություններից։ Սակայն գիտական տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները, որոնց հետ ծանոթացանք վերևում (սահմանումներ, համաբակալումներ, ծանոթագրություններ, տողատակ, հապավումների ցուցակ, ամփոփումները, ուսումնասիրվող նյութի առատ մեջբերում և այլն), որոնք տեքստում ունեն իրենց բնորոշ դերծառությունը, գիտական տեքստի հատվածումը տարբերակում են գեղարվեստականից։

Շարադրման տրամաբանական հետևողականությունը ինչպես փաստական, այնպես էլ ժամանակային (կոնտինուումի) առումով պահպանելու համար, գիտական տեքստերում տրվում են տողատակեր, որոնք կապող օղակներ են հիմնական տեքստի և տեքստից արված շեղումների միջև։

---

* Հ. Մաթևոսյանի գրելաոճը աչքի է ընկնում փաստերի գերհագեցած, խտացած հաղորդմամբ, որը և հեղինակի յուրահատկություններից է։

Ծանոթագրությունները և ժամանակագրական հիշեցումները՝ մեջբերումների ձևով, գիտական տեքստում ապահովում են ռետրոսպեկցիայի և պրոսպեկցիայի գործառույթները։ Պարբերությունները, որոնք կարող են հանդես գալ պարագրաֆների, նաև տառային կամ թվային համարակալումների ձևով, տեքստային այն միավորներն են, որոնք ապահովում են գիտական տեքստի պրագմատիկ-գործնական նպատակի իրագործումը, փաստերի ու երևույթների, պատճառական ու տրամաբանական շարադրանքն ու դրանց նկատմամբ ընթերցողի ուշադրության կենտրոնացումը։

Տեքստի (անկախ նրա բնույթից) հատույթավորումը նկատի ունի երկու օբյեկտ՝ ընթերցողին և իրեն՝ հեղինակին։ Ընթերցողի համար կարևոր է տեքստը հատույթավորել այնպիսի հատվածների, որոնք հեշտացնեն և մատչելի դարձնեն հաղորդման էության ընկալումը։ Հեղինակի համար կարևոր է հստակ և պարզորոշ ներկայացնել հատվածների տարածության և ժամանակի մեջ ծավալվող տրամաբանական (և այլ կարգի) կապերն ու հարաբերությունները։ Նշված երկու գործոնները միաձուլվում են պարբերությունների մեջ, որոնք հաճախ կազմված լինելով մեկից ավելի ՎՖՄ-ից, դառնում են տեքստի լեզվական, իմաստային, քերականական և կառուցվածքային առանձնահատկությունները ներկայացնող միավորներ։

Նշվեց, որ պարբերությունը և ՎՖՄ-ն կարող են չհամընկնել։ Այս դեպքում (մեր վերջին տեքստային մեջբերումը) պարբերության, որպես տեքստի միավորի, բաղադրիչներ են ՎՖՄ-ն և նախադասությունը։ Ներկայանալով որպես տեքստի միավոր, պարբերության համար անհրաժեշտ են իմաստային, քերականական, կառուցվածքային կապերի ու փոխհարաբերությունների դրսևորումներ, որոնք իրականանում են ՎՖՄ-ի միջոցով։ Վերջինս իր հերթին, որպես ելակետային նյութ, գործ ունի բառերի, դրանց իմաստային, քերականական ու կառուցվածքային առանձնահատկությունների ու փոխկապակցությունների հետ, որոնք իրականանում են նախադասությունների միջոցով։

Տեքստը, այսպիսով, որպես լեզվական խոշոր միավոր, դառնում է հատույթավորման օբյեկտ։ Դրանից ստացված առանձին լեզվական միավորները, որպես տեքստի կազմիչներ, ենթակա են վերլուծման, հետևաբար օժտված են ինչ-որ չափով ինքնուրույնությամբ և տարբերակիչ հատկանիշներով։ Այդ օղակները իրար նկատմամբ գտնվում են աստիճանական հարաբերության մեջ և ունեն շփման, երբեմն էլ հատման կամ

ձուլման կետեր։ Տեքստի բաղադրիչների ինքնուրույնությունը պայմանական բնույթ ունի, (քանի որ տեքստ կազմող բոլոր օղակները, վերջ ի վերջո, բխում են տեքստից և ծառայում են նրան)։ Այն կարող է պատկանել նրա հնչյունաբանական, բառային, քերականական կամ իմաստային կողմին։

Պարբերությունը (և ՎՖՄ-ն) ինքնուրույնություն ցուցաբերելու տեսակետից ամենից ճկուն օղակն է։ Պարբերության (ՎՖՄ-ի) ինքնուրույնությունն ունի դրսևորման մի քանի ձևեր. գրաֆիկական, քերականական, բառային, իմաստային, կառուցվածքային, ոճական և այլն։

Պարբերությունը կարող է հանդես գալ ուրիշի խոսքով, մեջբերումով, օտար լեզվի որևէ բառով, հեղինակի մտորումներով, որոնք վերաբերվեն անցյալին և այլն։ Գիտական տեքստերում պարբերությունների ինքնուրույնությունը կարելի է դրսևորել սահմանումներով, տառային կամ թվային համարակալումներով, գրաֆիկորեն, քերականորեն (գործողության ժամանակի կատեգորիայի փոփոխությամբ) և այլն։ Սակայն պարբերության ճկունությունը արտահայտվում է նաև նրանով որ բացի ներտեքստային կապերը (когезия) ապահովելու գործառույթից, բացի ինքնուրույն գործածություն (автосемантика) ունենալու և կամ թեմայից շեղվելու ու անցյալ վերադառնալու կամ առաջ վազելու հնարավորությունից (ретроспекция и проспекция), պարբերությունն ունի նաև ընդհանրացնելու, բոլոր օղակները միավորելու (интеграция) և այդպիսով տեքստը ավարտելու (завершенность) գործառույթ։ Դա կարող է դրսևորվել վերջաբանի, ամփոփման ձևով, կարող է լինել ծավալուն կամ ընդհակառակը՝ հակիրճ։ Պարբերության այս գործառույթը խիստ կարևոր է գիտական տեքստերում, որտեղ ընդհանրացումներն ու եզրակացությունները մեծ տեղ են գրավում։

Միավորելով տեքստի առանձին հատվածների՝ գլուխների, մասերի և այլն, դրսևորած միտքն ու բովանդակությունը, կենտրոնացնելով առանձին ՎՖՄ-ներ ըստ իմաստի և բովանդակության, ինտեգրացիայի (ընդհանրացման) պրոցեսը վերացնում է այն ինքնուրույնությունը (թերացող), որ ·ա տեքստի առանձին մասերի միջև և ամփոփման, վերջաբանի կամ սևի այլ ավարտուն հատվածի ձևով ներկայացնում է տեքստում քննված հարցերի հիմնական էությունն ու ստեղծված եզրակացությունները։ Գեղարվեստական տեքստում այս ամբողջացնող հատվածը կարող է և չլինել (երբեմն միայն հանդիպում է էպիլոգի ձևով)։ Նման տեքստում բովանդակային փաստական նյութից բխող եզրակացություններ ունենալու հոգսը ավելի շատ բողնվում է ընթերցողի հայեցողությանը։

Գիտական տեքստում նման ընդհանրացումներն ու ամփոփումները ոչ միայն ցանկալի այլև անհրաժեշտություն են, այնքան, որ հաճախ անոտացիաներն ու ամփոփումները մտնում են ռեֆերատիվ պարբերությունների մեջ և ներկայանում որպես ամբողջ աշխատության ինֆորմանտներ։ Ամփոփումները, վերջաբանները, հետևությունները, եզրակացությունները գիտական տեքստի այն օղակներն են, որոնք ավարտում և ամբողջացնում են տեքստը։ Սրանց մեջ ամենից շատ է դրսևորվում ինտեգրացիայի (միավորման), որպես տեքստ կաղմակերպող պրոցեսի, էությունն ու կարևորությունը։

Ընդհանուր հայտարարի բերելով գլուխների, մասերի, պարբերությունների, ՎՖՄ-ի արտահայտած իմաստները, ինտեգրացիան փաստորեն չեզոքացնում է տեքստի նշված օղակների քվացող ինքնուրույնությունը և ներկայացնում է տեքստն իր ավարտուն, ամբողջական ձևով։

Գիտական տեքստերում, ի տարբերություն գեղարվեստականի, տեքստի ավարտելու պրոցեսը ծավալվում է շատ հստակ։ Փաստերի տարածության և ժամանակի մեջ կատարվող շարադրանքին (կոնտինուումի առումով) հետևում է դրանց ի մի բերելու, ընդհանուր հետևություններ ու եզրակացություններ անելու փուլը (ինտեգրացիայի առումով), որը և ավարտվում է կոնկրետ ամփոփումներով։ Վերջիններս տրվում են առանձին պարբերություններով, որոնք կարող են ունենալ թվային ու տառային համարակալման ձև, կարող են և չունենալ այդ, դա պայմանավորված է հեղինակի գործնական նպատակաուղղվածությամբ։

Տեքստի ավարտի փուլը բնականաբար վերաբերում է տեքստին ամբողջապես վերցրած և ոչ թե նրա առանձին մասերին։ Այստեղ անհրաժեշտ է մի կարևոր վերապահություն անել, որով և կնշվի այն հիմնական տարբերությունները, որ առկա են գեղարվեստական և գիտական— բանասիրական տեքստերի միջև մի կողմից և բանասիրական-լեզվաբանական, լեզվաբանական-փիլիսոփայական, բանասիրական-գրականագիտական և բանասիրական-բանահյուսության տեքստերի միջև՝ մյուս կողմից։

Հայտնի է, որ գեղարվեստական տեքստերում շարադրանքի ավարտը հիմնականում կապվում է ծավալվող հիմնական դեպքերի ու գործող հերոսների վերջնական ճակատագրի հետ։ Այնուհետև հատուկ ձևավորված հատվածները՝ գլուխները, ենթագլուխները և այլն, եթե նույնիսկ թույլ են տալիս շեղումներ գործող հիմնական դեպքերից և դեմքերից, վերջ ի վերջո նորից վերադառնում են և ներկայացնելով դրանց վերջնական վիճակը, դրանով էլ ավարտում են տեքստը։ Այս տեսակետից մենք կարող ենք ասել, որ տեքստի հետ կատարվող պրոցեսներից վերջինը՝ ավարտը գեղարվեստական տեքստի համար կիրառելի է ամբողջ տեքստի նկատ-

մամբ։ Նույնը չի կարելի ասել գիտական-բանասիրական տեքստի մասին։

Գիտական-բանասիրական տեքստերում մասերը կամ գլուխները, որոնք կարող են ունենալ ենթագլուխներ և այլ հատվածներ, ունեն իրենց ինքնուրույն ավարտվածությունը։ Դրանք երբեմն ունենում են նաև տրվյալ մասին կամ գլխին վերաբերող եզրակացություններ ու հետևություններ։ Վերջիններս դրսևորվում են պարբերությունների միջոցով, որոնք կարող են լինել նաև համարակալված։ Այս դիտողությունը ամբողջապես վերաբերում է լեզվաբանական-բանասիրական, լեզվաբանական-փիլիսոփայական տեքստերին և որոշ վերապահումներով՝ գրականագիտական։ Ինչ վերաբերում է բանասիրական-բանահյուսական տեքստերին, ապա դրանցում հիմնական տեղը ծավալի տեսակետից տրվում է մեջբերված նյութին, իսկ հեղինակի դիրքորոշային-բովանդակային շարադրանքը, փաստորեն, հետևությունների և անոտացիաների արժեք է ստանում։ Այնպես որ մեր դեպքում խոսքը հիմնականում լեզվաբանական, գրականագիտական և լեզվական-փիլիսոփայական տեքստերին է վերաբերում։

Այսպիսով, գիտական տեքստի համար ինտեգրացող միակ օղակի գործառությամբ փաստորեն հանդես են գալիս ամփոփումը, անոտացիան, որոնք երբեմն տրվում են նաև տեքստի սկզբից (օր. անոտացիան)։

Բերենք բանասիրական-գիտական տեքստերի հատվածման մի քանի նմուշներ։

«Փիլիսոփայություն և լեզու» աշխատությունը (6) բաժանված է 5 գլուխների, որոնք չնայած արծարծված ընդհանուր թեմային, ունեն այնքան ինքնուրույնություն, որ կարող են դիտվել որպես առանձին տեքստեր։ Գլուխներից երեքը ունեն պարագրաֆներ, մյուս երկուսը՝ ոչ։ Ոչ մի գլխի առանձին եզրակացություններ չեն հետևում։ Դրանց փոխարեն տեքստին նախորդում է երեք պարբերությունից կազմված անոտացիան, որտեղ ներկայացված են տեքստում քննարկված հիմնական հարցերը։

Լեզվաբանական-բանասիրական մեկ այլ տեքստ, ձևավորման տեսակետից լիարժեք է, ունի ասոտացիա, առաջաբան, ներածություն, վերջինիս կազմի մեջ մտնող երկու պարագրաֆներ, չորս բաժիններ, որոնք իրենց հերթին կազմված են ենթաբաժիններից, վերջիններս էլ պարագրաֆներից։ Բաժինները օժտված են այնքան ավարտվածությամբ, որ կարող են դիտվել որպես առանձին ուսումնասիրություններ։ Ամբողջ տեքստի համար ինտեգրացիայի օղակը տեղավորված է ներածության մեջ՝ իր երկու պարագրաֆներով, որտեղ փաստորեն համառոտակի շարադրվում են տեքստում արծարծված հիմնական հարցերը։ Սակայն եթե

որևէ բաժին ներկայացվի որպես ինքնուրույն տեքստային միավոր՝ իրեն բնորոշ հատկություններով, ներածական մասը անպայմանորեն պետք է վերափոխվի ու հարմարեցվի այդ նոր տեքստին։ Սա նշանակում է, որ բաժինների ավարտվածությունը բավականաչափ պայմանական է, քանի որ դրանք որպես տեքստի մասեր մտնում են ընդհանուր ներածականի տակ։

Գրականագիտական տեքստերն այս տեսակետից ավելի մոտ են գեղարվեստական տեքստերին։ Այնտեղ հետևությունները, որոնք կարող են տրվել նաև տեքստի շարադրման ընթացքում, վերջին օղակում ի մի են բերվում և ինտեգրացիայի շնորհիվ տեքստը ավարտվում և ամբողջանում է արդեն տեքստում արծարծված նյութը լուսին բացահայտելու և սպառելու հետ զուգահեռ։

Այսպիսով, ունենալով հանդերձ շատ ընդհանուր կողմեր, գիտական բանասիրական տեքստերը իրենց լեզվական, քերականական, իմաստային ու կառուցվածքային առանձնահատկություններով տարբերվում են միմյանցից, դրանով իսկ ներկայացնելով ուսումնասիրության ու վերլուծման ինքնուրույն օբյեկտներ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., «Ժամանակակից հայերենի քերականություն», Երևան, 1969։
2. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981։
3. Աբրահամյան Ս. Գ., Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Ղևոնյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974։
4. Առաքելյան Վ., Հայերենի պարբերույթը, Երևան, 1968։
5. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967։
6. Բրուտյան Գ. Ա., Փիլիսոփայություն և լեզու, Երևան, 1972։
7. Գրիգորյան Ռ., Հայ ազգագրություն, Բանահյուսություն, Երևան, 1983։
8. Թամրազյան Հր., Գրական ուղիներում, Երևան, 1962 թ., Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, Երևան, 1981։ Պառնասյան Ն. Ա., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979։
9. Հախվերդյան Լ., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969։
10. Հակոբյան Հ. Գ., Պարբերությունը Դ. Դևիրճյանի պատմվածքներում, Լեզվի ու ոճի հարցեր, 1977։
11. Մաթևոսյան Հր., Մեր վազքը, Երևան, 1978։
12. Ջահուկյան Գ. Բ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959։
13. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։
14. Античные теории языка и стиля, М., 1936, Աբեղյան Մ., Հայ հին գրականության պատմություն, հ. Երևան, 1944, Եույնը, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։

15. *Бенвенист Э.* Уровни лингвистического анализа, «Новое в лингвистике», вып. 4, М., 1965.
16. *Галперин И. Р.* Текст как объект лингвистического исследования, М., 1981.
17. *Гаспаров Б. М.* Принципы лингвистического описания уровня предложений, УЗ Тартусского ун-та, 1975, вып. 347; Структура дюрмальной связи предложений в современном русском языке, УЗ Тартусского ун-та, 1975, вып. 347.
18. *Гиндин С. И.* Советская лингвистика текста. Некоторые проблемы и результаты (1948—1975). Изв. АН СССР, серия литературы и языка. 1977, № 4 (библиография). «Лингвистика текста», материалы научной конференции, ч. I, и II, М., 1974; «Текст и аспекты его рассмотрения». Тезисы докладов и сообщений межвузовской научно-методической конференции (25—27 января, 1977 г.), М., 1977 г.
19. *Головин Б. Н.* Лингвистические термины и лингвистические идеи, ВЯ, 1976, № 3, стр. 33.
20. *Зарубина Н. Д.* К вопросу о лингвистических единицах текста. Синтаксис текста, М., 1979, стр. 103.
21. *Мистрик И.* Математико-статистические методы в лингвистике, ВЯ, 1967, № 3.
22. *Рохлин А. С.* Сложные синтаксические единства с местоименно-наречными словами после разделительной паузы. Единицы различных уровней в языке и речи. Краснодар, 1972, с. 11.
23. «Синтаксис текста», М., 1979.
24. *Halliday M. A. K.* The place of „Functional Sentence perspective" Prague, 1974, p. 48 („Text is language in use").
25. *Harweg R.* Text linguistik. In „Perspektiven der Linguistik". Bd. 2- Stuttgart. 1947.
26. *Skalicka V.* The need for a linguistics of „la parole".—„Recueil linguistique de Bratislava", 1, 1948. (A. Prague School reader in linguistics. Bloomington, 1964).

Ռ. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

Խոսքային հաղորդակցության իմաստակիր միավորների կազմությանը հնչյունները մասնակցում են տարբեր միացություններով ու հաջորդականություններով։ Հնչյունակապակցությունները փաստորեն մեկ բառի սահմանում հանդես եկող գծային շարքի հնչյունական կանոնական իրացումներ են։ Բառերի կազմում հնչյունակապակցությունները ունեն որոշակի կազմություններ և կարող են տարբերվել ըստ դիրքի։ Այս առումով էլ սահմանազատում են բառասկզբական, բառամիջյան և բառավերջյան հնչյունակապակցություններ։ Հնչույթների որոշ հաջորդականություններ շատ սովորական են լեզվի համար և խիստ հաճախական, մյուսները հազվադեպ են, իսկ առանձին հնչույթներ լիովին բացառում են միմյանց։ Լեզուները տարբերվում են միմյանցից ոչ միայն հնչույթային համակարգի մեջ մտնող միավորների նյութական կազմով, այլև նրանց կապակցելիության միջոցներով ու եղանակներով։ Այս պատճառով էլ առանձին լեզուներում հնչյունակապակցությունները տարբերվում են իրենց տեսակներով և քանակով։

Ծամանոսակից հայերենի հնչյունակապակցությունների ուսումնասիրության համար որպես ելակետային միավորներ վերցրել ենք բառեր, որոնց երեք դիրքերում գործածվում են մեկից ավելի հնչյունների հաջորդականությունները։ Սովորաբար, երբ խոսում ենք հնչյունակապակցությունների մասին, նկատի ունենք հնչյունական որոշակի հատկանիշներով վանկի կազմում միավորված հնչույթների խմբեր, մինչդեռ հնչյունակապակցությունները բառում նաև վանկերի սահմանաբաժանում հանդես եկող հնչույթների հաջորդականություններն են, որոնք կարող են ֆիզիկական-ձայնաբանական տեսակետից մեկ ամբողջություն չներկայացնել։ Այս առումով, եթե հայերենի հնչյունական շղթայում միմյանց հաջորդում են երկու կամ ավելի ձայնավորներ և հայտնի է, որ նրանք չեն կարող հանդես գալ մեկ վանկի սահմաններում, ապա այդ կազմությունները կարելի է դիտել միայն հնչույթակապակցությունների, իսկ եթե գրային ձևը նկատի ունենանք միայն տառակապակցությունների մեջ։

Հայերենի տառակապակցությունների ամբողջական քննությունը այն հիմքն է, որի վրա պետք է կառուցվի հայերենի հնչյունակապակցությունների համակողմանի ուսումնասիրությունը։ Իր հերթին տառակապակցությունների բնորոշ տեսակների բացահայտումն ու դասակարգումը պետք է դիտել որպես հայերենի հնչյունային միավորների արտահայտման գրային եղանակի՝ գրաբանության բաժիններից մեկը։ Նշենք, որ գրաբանությունը հայոց լեզվի կառուցվածքում առաջին անգամ քննել է ակադ. Գ. Բ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատությունում, ընդ որում մանրամասնորեն տրվում են գրանշանների արտահայտաբանական համակարգը, հնչյունների ու գրույթների փոխհարաբերությունը և այլն։

Մեր ուսումնասիրության մեջ տառակապակցություն հասկացությունը, բնականաբար նաև տերմինը, տարբերվում են մինչև այժմ ընդունված ըմբռնումից։ Սովորաբար տառակապակցություն ասելով նկատի ունեն գրային մի քանի նշանների օգտագործումը մեկ հնչույթ արտահայտելու համար, ինչպես ասենք անգլերենի շ-ն [sh] կամ հայերենի ու-ն, որը գրաբարում երկու առանձին տառերի ո-ի և ւ-ի կապակցություն էր, իսկ համաժամանակյա կտրվածքում, երբ ւ-ը որևէ առանձին հնչույթի չի համապատասխանում, պետք է դիտել մեկ տառ մեկ հնչույթի համար։ Տառակապակցությունների ու հնչյունակապակցությունների տարբերակման մեջ էական դեր են խաղում բառում հնչյունափոխական երևույթները, ինչպես նաև գրության մեջ ը գաղտնավանկ ձայնավորի բացակայությունը։

Տառակապակցությունների քարտագրման համար որպես հիմնական աղբյուր ծառայել է է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», մասնակի դեպքերում օգտագործել ենք նաև Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը», ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», «Հայոց լեզվի հանգաբառարանը»։

Տառակապակցությունների հնարավոր տիպերը ներկայացվում են մեկական բառ-օրինակներով։ Սա բնականաբար չի տալիս առանձնացված տեսակների հաճախականության բուն արժեքները ինչպես բառարանում, այնպես էլ խոսքային գործունեության մեջ։

Քարտագրվել են ինչպես ձայնավորական նշանների հնարավոր բոլոր զուգորդությունները երեք դիրքերում՝ բառասկիզբ, բառամեջ և բառավերջ, այնպես էլ բաղաձայն տառերի հնարավոր բոլոր հաջորդականությունները երկու ձայնավորների շրջապատում։ Ընդ որում, եթե քար-

տագրվել են և դիտարկվել բառասկզբական և բառավերջյան բոլոր կապակցությունները, ապա բառամիջում բաղաձայնական հաջորդականությունները պարզելու համար սահմանափակվել ենք մինչև վեց վանկ պարունակող բառերով։

Նման մոտեցումը փաստորեն հնարավորություն է տալիս ընդգրկելու հայերենի բառային մակարդակում հանդիպող հնարավոր բոլոր տառակապակցությունները, քանի որ վեցից ավելի վանկեր պարունակող բառերում կրկնվում են մինչ այդ հանդիպած տառակապակցությունների տեսակները։ Որպեսզի պարզ լինի, թե ինչպես է կատարվել բառամիջյան տառակապակցությունների (բաղաձայնական) քարտագրումը ասենք հետևյալը։ Նախապես բառարանում դիտարկվել են այն բոլոր տառակապակցությունները, որոնք հանդես են գալիս երկրորդ վանկում։ Ավելի ճիշտ՝ առաջին ձայնավոր նշանակող տառից հետո մինչև հաջորդ ձայնավոր նշանակող տառի միջև եղած բաղաձայնական հաջորդականությունը, ընդ որում հաշվի են առնվում նաև այդ հատվածը սահմանափակող ձայնավորների տեսակները։ Այս աշխատանքն ավարտելուց հետո դիտարկվել են բառերի երկրորդ ձայնավորից հետո մինչև երրորդ ձայնավորը ընկած հատվածները, որոնք նույնպես քարտագրվել են և համեմատվել նախորդների հետ։

Այստեղ արդեն, եթե հանդիպել են նույնություններ, ապա վերջիններս որպես առանձին տիպեր բացառվել են և ավելացվել են մինչև այդ չհանդիպած նոր տեսակները։ Նման գործողությունները բառարանի վրա կատարվել են մինչև վեցերորդ ձայնավորական նշանը պարունակող բառերի նկատմամբ։ Ամեն մի հաջորդական անցում նշանակում է մեկ անգամ ևս ծայրից ծայր նայել ողջ բառարանը։

Տառակապակցությունը ներկայացվում է գրական կանոնական օրինակով։ Նման բառաձև չգտնելու դեպքում ներկայացվող օրինակը աստղանիշով առանձնացվում է, իսկ աղյուսակներում առնվում փակագծերի մեջ։ Այս ձևով դանազանվում են նաև բառարանում չհանդիպող, բայց կենդանի խոսքում հնարավոր (հանդիպում են այլ կարգի գրավոր տեքստերում) տառակապակցությունները։ Ասենք՝ չ ժխտական ածանցը կարող է գործածվել հայերենի այբուբենի գրեթե բոլոր տառերով սկսվող բառաձևերի հետ՝ ինչպես ժ և ծ տառերից առաջ՝ չժպտալ, չծամել բառերում, մինչդեռ բառարանում չ տառով սկսվող բառերի մեջ նման տառակապակցություններով սկսվող օրինակներ չկան։

Տառակապակցությունները առանձնացնելիս մենք ամենից առաջ նպատակ ենք ունեցել գտնելու դրանց հնարավոր տիպերը, մի կողմ թողնելով սրանց գործառական ծանրաբեռնվածության հարցերը։

Հայերենում համեմատաբար փոքր տոկոս են կազմում ձայնավորական հաջորդականությունները բաղաձայնական հաջորդականությունների համեմատությամբ։ Երկու և ավելի ձայնավորներ հնչական մակարդակում հանդես չեն գալիս մեկ վանկի սահմաններում, այսինքն հայերենում չկան երկբարբառներ։ Ձայնավորի երկարացումը (տևողության մեծացումը) հայերենի հնչույթային համակարգի համար տարբերակիչ հատկանիշ չէ, այլ խոսքով նույն բառաձևում չկա երկար և կարճ ձայնավորների իմաստային հակադրություն։ Երկարացումը որպես իմաստային հակադրության եղր հանդես է գալիս նախադասության հաղորդակցման տիպերի սահմանազատման, ինչպես և ղգացական շեշտերի ընդգծման համար։

Բառասկզբում ձայնավորական հաջորդականությունները սակավաթիվ են։ Բառապաշարում սրանք հիմնականում ձայնարկություններ նշանակող բառերն են և համեմատաբար ուշ շրջանում արմատացած փոխառություններ։ Նախ տառակապակցություններ մասին։ Ձայնավոր+ձայնավոր հաջորդականություն ունեցող կապակցություններում առաջին վանդակը զբաղեցնող տառերից ամենից ավելի գործուն են օ և է ձայնավորները, որոնք հանդես են գալիս 4 կարգի միացություններում։ Նշենք, որ այս դիրքում ոչ մի ձայնավոր նշան չի ծածկում ողջ ձայնավորական համակարգը, այսինքն միացությունների թիվը չի հասնում առավելագույնին՝ 6-ի։ Բառասկզբի դիրքում ա ձայնավոր նշանին կարող են հաջորդել ե, ո, ու տառերը՝ աերոակումբ, աերոդինամիկա, աորիստ, աորտա, աուլ, աուգմենտ, աուտոդաֆե բառերում, ինչպես նաև է-ն ակ՝ ատոմային էլեկտրակայան նշանակող կապակցության հապավումային ձևում։

Բառասկզբում օ նշանը կարող է կրկնվել, ինչպես նաև ունենալ ա, ի, է տառերով հաջորդականություններ։ Բառարանում օ կրկնակ գրություն ունեն օօ և օօֆ ձայնարկությունները։ Օա հաջորդումը առկա է օազիս բառում, իսկ օի՝ օիճ, օիդիում բառերում։

Բառասկզբի ո նշանին հաջորդում է ե միայն արևմտահայերեն ոեվէ բառում։ Այստեղ մենք բառասկզբում փաստորեն ձայնավորական հաջորդականություն չունենք հնչական մակարդակում, քանի որ այս բառը շատ հաճախ հնչվում է [վօէվէ] ձևով։

Հայերենի համար բնորոշը բառասկզբում է ձայնավոր նշանով սկսվող կապակցություններն են։ Ձայնավոր է-ին հաջորդում են ա, ի, ու տառերը՝ էաբաճ, էակ [էա], էի, էիր [էի], էություճ [էու] կազմություն-

ներում և միայն մի կազմության մեջ գործածվում են էո հաջորդականությունը՝ էոլյան տավիղ բառակապակցությունում։

Բառասկզբում ի ձայնավորին հաջորդում են ո և է տառերը գերազանցապես փոխառյալ բառերում։ Այսպիսիք հանդիպում են իոն, իոնացում [իո] և իեռոգլիֆ բառերում։ Սրանցից վերջինը՝ իե-ն փաստորեն բառասկզբական հաջորդականություն չէ, քանի որ գրական լեզվի համար կանոնականը հիեռոգլիֆ բառն է՝ բառամիջյան դիրք։

Համեմատաբար սակավաթիվ են բառասկզբում ու + ձայնավոր պարունակող ձևերը։ Սրանք հիմնականում բացականչություններ արտահայտող բառեր են։ Մի դեպքում բառարանում տրված է ո՜ւա բառաձևը, որպես ինքնաթիռի հանած հռնդյունի նմանաձայնություն, մի այլ դեպքում հանդիպում ենք ուո՜ւ բառաձևին, որպես զոհունակության, զարմանքի, հիացմունքի արտահայտություն նշանակող բացականչություն։ Բառարանում տեղ է գտել նաև ուատտ տարբերակային ձևը, որի փոխարեն գրական հայերենի համար կանոնական է համարվում վատտ-ը՝ նույն նշանակությամբ։

Հայերենին հատուկ չեն բառասկզբում ը և հաջորդող ձայնավորով կազմություններ։ Թեև բառարանում կա ըե՜ի տարբերակային ձևը, սակայն գրական հայերենի համար կանոնական են դիտվում է՜ի, ը՜ի բացականչությունները՝ նույն նշանակությամբ։

Եթե հաշվի առնենք բառարանում գեթ մեկ անգամ գործածվող բոլոր տարբերակային ձևերը, ապա բառասկզբնական ձայնավորական հաջորդականությունների աղյուսակը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

I դիրք	ա	օ	ու	է	ի	ը
II դիրք	ե ո ու (է)	(է) ա օ ի	ա ու	ա ի ո ու	ո (է)	(է)

Աղյուսակում շեղ փակագծերի մեջ նշվում են տարբերակային ձևերը։

Եթե բացառենք եզակի կազմությունները, գրական լեզվի համար ոչ-կանոնական տարբերակային ձևերը և բացականչությունների մոտավոր հնչումը արտահայտող գրային ձևերը, ապա բառասկզբական ձայնավորական հաջորդականությունների պարզեցված աղյուսակը հետևյալ տեսքը կունենա.

I դերք	ա	օ	է	ի
II դերք	է օ ու	ա ի	ա ի ու	օ

Բառասկզբնական ձայնավորական հաջորդականությունների իրացումը հնչական մակարդակում, այսինքն ձայնավորական հնչյունակապակցությունների գործառույթումը խոսքում անհամեմատ քիչ միացություններ են ենթադրում, քանի որ երկու և ավելի ձայնավորներ իրենց լիահունչ տարբերակներով չեն կարող հանդես գալ մեկ վանկում և նույնիսկ տարբեր վանկերի բաժանվելու դեպքում էլ կից ձայնավորների արանքում հաճախ հանդես է գալիս յ հորանջը։ Բառասկզբում ձայնավորական հաջորդականություններ ունեցող բառերի արտաբերությունը միասնական չէ և շատ հաճախ միևնույն բառը տալիս է արտասանական տարբերակներ, ընդ որում դժվար է սրանցից որևէ մեկին գերապատվություն տալ։ Համեմատաբար կայուն և տարբերակային ձևեր չընդունող միացություններ են ստացվում, երբ բառասկզբական ձայնավորական կապակցությունը սկսվում է ա հնչյունով։ Այսպես գրական հայերենում տարբերակային ձևեր չեն տալիս և ձայնավորների արանքում բաղաձայնական հենարան չունեն օ և ու ձայնավորներով հաջորդող առիւտ, առտա, առւլ, առւտռդաֆե, առւտ բառերը։ Վերջին բառը ժարգոնային հընչմամբ արտասանվում է [ավուտ]։ Տարբերակային ձևեր են ստացվում, երբ ա ձայնավորին հաջորդում է է ձայնավորը։ Այսպես աեռո բաղադրիչով կազմված բառերում արտաբերական մակարդակում ունենք ինչպես [աէրո] և [այէրո], այնպես էլ [այրո] հնչումը (համմտ. աեռոակումբ, աեռոդինամիկա, աեռոդրոց, աեռոզոլ, աեռոմեխանիկա, աեռոնկարահանում, աեռոստատիկա և այլն)։ Հ. Բարսեղյանի վերը նշված բառարանում կանոնական են համարվում միայն [աէրո] հնչմամբ ձևերը։

Հնչման տարբերակային ձևեր են կազմվում օ–ի հաջորդականությամբ գործառվող բառերում։ Այսպես երկակի հնչում ունեն օիե [օյե] և [օյէ] և օիդիում [օիդյում] և [օյիդյում] բառերը։ Վերջինս ունի նույնիսկ գրության կրկնակի ձև [օիդիում] և [օյիդիում] (տես՝ Հ. Բարսեղյանի բառարանը)։

Օազիս բառը, ինչպես և օօ՛ ու օօ՛ֆ ձայնարկությունները պահպանում են հնչման և գրության միասնականությունն։

Այստեղ մենք չենք անդրադառնում եաեաուդ (հակինք) և եաեուդ (հրեա) ձևերին, քանի որ մի կողմից սրանք գրական հայերենի բառեր

չեն և մյուս կողմից չենք կարող դիտել խոսքային մակարդակում որպես բառասկզբական ձայնավորական հաջորդականություններ։

Ժամանակակից հայերենի համար տարածված բառաձևեր են կազմում է ձայնավորով և մեկ այլ ձայնավորով սկսվող կապակցությունները։ Ձայնավորական հաջորդականությունների հնչումը այս դիրքում նույնպես միասնական չէ։ Գրական հայերենի համար կանոնական պետք է համարել էա հաջորդականությամբ սկսվող բառերում արտաբերական կրկնակ ձևերի կիրառությունը հետևյալ բառերում՝ էակ [էակ] և [էյակ], էաբան [էաբան] և [էյաբան], էապես [էապես] և [էյապես] և այլն։ Հստակ չէ նաև արտաբերությունը էական բայի էի, էիր, էիճ, էիմ, էին ձևերում։ Նույնն է վիճակը նաև էություն բառի դեպքում, թեև Բարսեղյանի բառարանում կանոնական է համարվում միայն [էյությյուն] հնչաձևը։

Հայերենը հին շրջանում ի ձայնավորին հաջորդող մեկ այլ ձայնավորով սկսվող բառեր չի ունեցել։ Եթե մի կողմ թողնենք իերոգլիֆ ոչ կանոնական ձևը, ապա ուշ շրջանի փոխառությունները կազմված են գերազանցապես իոն բաղադրիչով՝ իոնաճալ, իոնաոլորտ, կամ իոնոլորտ, իոնիտ, իոնացում և այլն։ Այս կազմությունների հնչումը նույնպես կարելի է համարել ոչ միասնական։ Թեև Բարսեղյանի բառարանում այս բառերի հնչման միակ կանոնական ձև է դիտվում [իյոնը]-ը, սակայն գրական հայերենի համար ընդունելի պետք է համարել նաև կից ձայնավորների հատությունների սահուն անցումները, միասնական արտաբերությունը։ Այս դեպքում ևս մենք այն չենք համարում մեկ վանկ, այլ ձայնավորները բաժանվում են տարբեր վանկերի վրա, իսկ արտաբերությամբ հնարավոր է մեկ շնչով մեկից ավելի վանկեր միավորել։ Այս և համանման դեպքերում նկատելի է գրավոր ձևերի ետադարձ ազդեցությունը բանավոր խոսքի վրա, քանի որ բառապաշար այս ձևերը մոտք են գործել գերազանցապես գրային ճանապարհով։ Իմաստային առումով էլ բառային հակադրություններ չեն առաջանում։ Մյուս կողմից նման բառերի օգտագործումը առավել հատուկ է տարբեր մասնագիտական կողմնորոշում ունեցող անձանց, որոնցից շատերը հասկացությունների հետ միաժամանակ փոխանցում են փոխատու լեզվում առկա այդ և նման բառերի հնչումը։

Ինչպես բառասկիզբը, այնպես էլ բառավերջը նպաստավոր դիրք չէ ձայնավորական կուտակումների համար։ Այս դիրքում ևս համեմատաբար փոքր թիվ են կազմում ձայնավորական հաջորդականությունները և հայտնի է, որ գրաբարում ե և ո ձայնավորները նույնպես հանդես չեն գալիս բառավերջում, իսկ ա-ն և ո-ն ունեն սակավաթիվ կիրառություններ՝ ա) բայերի հրամայականի որոշ ձևերում գրեա (գրիր), հասո

(հասցրու), մի քանի դերանուններում՝ սա, դա, նա, fn, բ) օտար հատուկ անուններում՝ Շաղիտա, Կատինա և այլն, գ) աճա, ապա բառերում։ Սովորաբար այդ ձայնավորներից հետո, որպես կանոն, բառավերջում հանդես է գալիս յ ձայնորդը, օրինակ՝ ընծայ, ծառայ, երեկոյ, և այլն[1]։

Ժամանակակից գրական հայերենում ևս հազվադեպ են բաց վանկով ամփոփվող այն բառերը, որոնց վերջին ձայնավորին նախորդում է մեկ այլ ձայնավոր։ Նկատելի է, որ բառավերջյան ձայնավորական կապակցություններ ունեցող բառերի մեծ մասը պատկանում է ուշ շրջանի փոխառությունների թվին։

Բառավերջում ա հաջորդականություն կա միայն երկու բառում՝ կակաո և մակաո։ Կակաո բառը համեմատաբար լայն տարածում ունեցող բառերի մեջ է մտնում, ու թեև գրական հայերենի համար հնչումը համապատասխանում է գրությանը, սակայն առանձին բարբառախոսների մոտ այն հնչում է որպես [կակավո], երբեմն նույնիսկ [կակայո]։ Մակաո բառը, որի համար բառարանը տալիս է երկու նշանակություն՝ 1. երկարապոչ թութակների տեսակ և 2. մոլի թղթախաղի տեսակ, կենդանի խոսքում հազվադեպ է հանդիպում։ Միայն մեկ բնաձայնական բառում՝ միաու, ունենք ձայնավորական իաու շարքը։ Այս բառի հնչումը կարող է լինել ինչպես [միյաու], այնպես էլ [մյաու]։

Ձայնավորական ոա հաջորդականություն կա միայն բոա բառում, որի հնչումը համապատասխանում է գրությանը։ Մենք կարող ենք որպես բառավերջյան ձայնավորական հաջորդականության տեսակ առանձնացնել ոե կապակցությունը, եթե նկատի ունենանք «Հայոց լեզվի հանգրբառարանում» վկայված ալոե բառը, սակայն հայերենի գրեթե բոլոր բառարաններում այն ներկայացված է նալվե բառով։ Միակ օրինակը թերևս ուշ շրջանում փոխառյալ կաոռե [կանօէ] բառն է։

Հայերենում լայն տարածում են ստացել բառավերջյան եա տառակապակցությամբ կազմված բառերը, ինչպես իդեա, նրեա, աճսամբլեա, էպոպեա և այլն։ Հնչական մակարդակում սրանց արտաբերության մեջ կան որոշակի տարբերություններ։ Առավել գործածականը թերևս (էյա) արտաբերությունն է, սակայն կան նաև գրավոր ձևին համապատասխանող պարբերություններ, ինչպես և ե>յ հնչյունափոխությամբ բառեր՝ [իդյա], [հրյա]։

Բառավերջյան իա, իո ձայնավորական հաջորդականություններ ունեցող բառերը հայերենի ընդհանուր բառացանկում համեմատաբար ընդգրկուն քանակ են կազմում։ Սրանց մեջ մտնում են բազմաթիվ փո-

1 Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 4։

խառյալ հատուկ և հասարակ անուններ՝ Մարիա, Լիա, Ասիա, Ավստրալիա, Իտալիա, գվարդիա, էներգիա, էլեգիա, շիա, ռադիո, մեդիո, տրիո, ադաջիո և այլն։ Այս տառակապակցությունների արտասանությունը նույնպես միասնական չէ և գրական հայերենի համար օրինաչափ պետք է համարել մի շարք բառերի արտասանական տարբերակների գոյությունը։ Այստեղ մենք չենք քննում այն հարցը, թե այս կամ այն բառի հնչակազմը ինչպես է առաջացել։ Արդյոք բառը առաջին անգամ գրական լեզվին է անցել գրային թե բանավոր ճանապարհով։ Մարիա, Լիա անձնանունների որպես կոչական արտասանության ժամանակ շեշտը ընկնում է ի ձայնավորի վրա և ավելի հստակ է այդ բառերի գրային արտասանությունը։ Ընդհանրապես ձայնավորական իա և իո հաջորդականությամբ վերջացող բառերի մեծ մասին հատուկ են ի>յ հնչյունափոխությունները՝ [Իտալյա], [գվարդյա], [էներգյա], [էլեգյա] [տրիյո], [մեդյո], [ադաջյո], [ռադյո], երբեմն յ ձայնորդը հայտնվում է կից ձայնավորների արանքում [Մարիյա], [Լիյա], [շիյա], [տրիյո] և այլն։ Եռակի ձայնավորական հաջորդականություն ունի ալելուիա բառի բառավերջը, սակայն հնչական մակարդակում ձայնավորական կապակցությունը վերանում է՝ [ալէլույյա]։ Փաստորեն այստեղ չկա նույնիսկ կրկնակ ձայնավորական հաջորդականություն։ Ձայնավորական հաջորդականություն չկա նաև կոնֆեռանսիե [կօնֆէրանսյէ] բառում (Բարսեղյանի բառարան), Աղայանի բառարանը տալիս է կոնֆեռանսյե գրությունը։

Բառավերջյան ձայնավորական այն հաջողությունները, որոնք սկսվում են ու ձայնավորով գրեթե չեն ենթարկվում հնչյունափոխության և գրական հայերենում ունեն գրային և արտասանական իրացումների նույնություն։ Ընդհանրապես ո և ու ձայնավորներին խորթ է քմայնացումը գրական հայերենում և շրթնայնացման հետևանքով գրական հայերենում նկատելի է վ–ական անցումնային բաղաձայնի առկայություն կամ փոխարինում։ Այսպես ամպլուա և բուրժուա բառերից վերջինը խոսակցական լեզվում ունի երբեմն [բուրժվա] արտասանական տարբերակը։ Բարսեղյանի բառարանը տալիս է մի բառ, որտեղ ու–ին հաջորդում է և տառը՝ ասեկուե (խոսակց.) նմուշով, որը սակայն գրական հայերենի գործածական բառերի թվին չի պատկանում։

Ինչպես երևում է բերված օրինակներից բառավերջյան ձայնավորական հաջորդականությունները հայերենի համար պակաս բնորոշ են, իսկ հնչական մակարդակում նրանք փաստորեն չունեն սերտ միասնություն, քանի որ հնչաբառում բաժանվում են տարբեր վանկերի և եթե միավորվում են մեկ հնչյունակապակցության մեջ, ապա միայն բաղաձայնական հենարանի միջոցով։

Հայերենի բառավերջյան ձայնավորական հաջորդականությունները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

I դիրք	ա	օ	է	ու	ի
II դիրք	օ ու	ա է	ա	ա է	ա օ (է)

Եթե բացառենք գրական հայերենում հազակի կիրառությամբ գործածվող միաու, կաճառ բառերը և նրա համար անհարիր ալոե, ասեկուե բառերը, ապա կարելի է ասել, որ հայերենում ձայնավորական հաջորդականություններ ունեցող բառերը ամփոփվում են միայն ա և օ հընչյուններով։

Բառավերջյան ձայնավորական հաջորդականությունների կազմությանը չի մասնակցում ը ձայնավորը։

Բառասկզբյան և բառավերջյան ձայնավորական հաջորդականությունները սովորաբար կազմվում են միայն երկու միավորներից և հազվադեպ են երեք ձայնավորով կազմություններ։

Ձայնավորական հաջորդականությունները առավել բնորոշ են բառամիջի դիրքին՝ գլխավորապես բարդ և ածանցավոր բառերին։ Պատմականորեն այս բառերի գերակշիռ մասը պատկանում է ուշ շրջանում կատարված փոխառությունների թվին։ Ձայնավորական հաջորդականությունների տեսակներն ու քանակը բառամիջում անհամեմատ գերազանցում են բառասկզբյան և բառավերջյան կապակցություններին։ Բառամիջում ձայնավորական հաջորդականություններ են կազմում հայերենի ձայնավորական ենթահամակարգի բոլոր միավորները, բացառությամբ ը ձայնավորի, որը թեև մասնակցում է ձայնավորական հաջորդականությունների կազմությանը, սակայն նրանով շարքը չի սկսում։

Ինչպես բառասկզբում և բառավերջում, այնպես էլ բառամիջում ձայնավորական հաջորդականությունները գրության և արտասանության միասնություն չունեն և բազմաթիվ դեպքերում հավասարապես գրական հայերենի համար կիրառվում են առանձին տարբերակային ձևեր։

Ստորև տրվում են հայերենի բառամիջյան ձայնավորական հաջորդականությունների տեսակները՝ ըստ շարքում առաջին տեղը զբաղեցնող ձայնավոր նշանի.

Ա. ձայնավորով սկսվող հաջորդականություններ

աու–ֆաուևա, հաուբից, ևոկաուտ, ռաուեդ, սկաուտ, գլաուկոմա՝ *արտասանությունը համապատասխանում է գրությանը։*

աե—մաեստրո, ջերմաէլեկտրական, ամենաերկար՝ արտասանությամբ այս հաջորդականության մեջ ևս կան զանազանություններ։ Թեև գրական հայերենի համար կանոնական է համարվում գրության մեջ բառամիջյան դիրքում ե նշանի համար է հնչումը, սակայն այն ոչ բոլոր դեպքերում է պահպանվում։ Այսպես ամենաերկար, ամենաերջանիկ, ամենաեռանդուն բառերի համար թերևս գրական պետք է համարել յ միջնորդավորված բաղաձայնով արտասանությունը [ամէնայէրկար], [ամէնայէրջանիկ], [ամէնայէռանդուն]։ Մաեստրո բառը ևս ունի բացի գրությանը համապատասխանող ձևից արտասանական [մայէստրո] տարբերակը։

աի—ևաիվ, պրոզաիկ, կոկաին, աբխաիկ բառերում գրությանը համապատասխանող հնչաբառերի կողքին լայնորեն տարածված են և ընդմիջարկված յ-ով տարբերակները՝ [նայիվ, պրօզայիկ, կօկային, արխայիկ]։

աո—բաորաք, կաոլին բառերում պահպանվում է գրային արտասանությունը, աճորակ, աճորոշ ածանցված բառերում որակ և որոշ բառերի բառասկզբային վօ հնչումը փոխվել է օ-ի, մինչդեռ կարգաորակ, ամենավաորոշակի, ամենաորակյալ, աճոտ բառերում գրական պետք է համարել վօ-ով արտասանությունը՝ [կարգավօրակ], [ամէնավօրոշակի], [ամէնավօրակյալ], [անվօտ], այսինքն գրության և արտասանության համապատասխանության միտումը իր լիակատար դրսևորությունը չի ստացել։

աա—ամենաարագ, սաամերեն, դօսաաֆական, էլեկտրաարդուկ՝ կենդանի խոսքում երբեմն ա-երը միաձուլվում են, տալիս մի երկար ա՝ հատկապես արագ խոսքում։ Հիմնականում բառերում պահպանվում է գրությանը համապատասխանող արտասանությունը։

ար—ջերմարձրունիչ, ամենարձրուն բառերում ձայնավորական հաջորդականության մեջ որոշակի հնչյունափոխական երևույթներ չեն նկատվում և պահպանվում է գրության ու արտասանության միասնությունը։

Ո ձայնավորով սկսվող հաջորդականություններ

ոա—աերոակումբ, ավտոաղետ, կոալիցիա, ֆոտոալբոմ՝ ձայնավորական այս հաջորդականությունն ունեցող բառերում պահպանվում է գրության և հնչման համապատասխանությունը։ Հայերենում օ և ա ձայնավորները ուժեղ են և սովորաբար հնչյունափոխության չեն ենթարկվում։

ոի—ադեոիդ, աստեոիդ, ևեռիկա, սինուսոիդ։ Այս բառերում, թեև հիմնականում պահպանվում է գրության և արտասանության նույնությունը, սակայն ի ձայնավորի արտաբերության սկզբում կարող է ան-

ցումային գոտում առաջանալ յ-ակերպ հնչյուն։ Հայերենին ընդհանրապես խորթ չէ ի>յ հերթագայությունը։

ոո—զոոտեխնիկ, կոոպերատիվ, կոորդինացիա, ագրոօդերևույթաբանական *բառերում կրկնակ օ հնչումը առավել հստակորեն պահպանվում է այն բարդությունների, որոնց բաղադրիչների մասին խոսողը ունի հստակ պատկերացում։ Ասենք ագրո և օդերևույթաբանական բաղադրիչների միջև կարող է անցնել հնչման ընդհատումով վանկային սահման, բացի այդ՝ բարդության երկրորդ բաղադրիչը կարող է ունենալ երկրորդական շեշտ։ Մինչդեռ զոոտեխնիկ, կոոպերացիա կոոպերատիվ բառերում հանդես է գալիս երկար օ, երբեմն նույնիսկ պարզապես սովորական օ և այսպիսի հնչումը գրական կանոնի խախտում չէ։*

ոե—պոեմ, պոետ, ավոտերթևեկություն, ֆիդրոէնեռգիա, ֆոտոէլեմենտ։ *Ձայնավորական այս հաջորդականությունն ունեցող բառերը ունեն արտասանական տարբերակներ [պօէտ] և [պօյէտ], [պօէմ] և [պօյէմ], որոնք հավասարապես կարող են դիտվել որպես գրական հայերենի կանոնական հնչաձևեր։ Այն բարդ բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը սկսվում է գրային է նշանով, արանց միջև յ ձայնորդը չի գործառվում [հիդրօէնէրգյա]։*

ոու—ջոուլ, կլոուճադա, աճոուս, սոուս *բառերում պահպանվում են գրության համապատասխանող արտասանություններ, քանի որ օ ձայնավորի ելքի դիրքը համընկնում է ու ձայնավորի արտաբերության սկզբնական դիրքին։*

ոը—ռադիոընդունիչ, ֆոտոընդունիչ *տիպի բառերում ձայնավորական հնչյունափոխություն չի նկատվում արտասանության լիակատար ոճում։*

է ձայնավորով կազմություններ

եա—այժմեական, աբամեական, աբեալ, իդեալ, թեաբար *բառերում հանդես եկող ձայնավորական հաջորդականությունը միշտ չէ, որ պահպանում է գրության և հնչման համապատասխանությունը։ Անցման գոտում հաճախ առաջանում է յ ձայնորդի բնորոշ պատկերը, որը տարբեր իրացումներ է ունենում առանձին բառերում։ Այսպես ունենք է>յ լիակատար փոխարինում իդեալ [իդյալ] բառում, գրական տարբերակային ձևեր աբամեական [աբամէական] և [աբամէյական] բառում և որոշակի տեքստերում պետք է խուսափենք բաղաձայնական կազմությունից իմաստի թելադրանքով՝ թեաբար [թէաբար], թեյաբար [թէյաբար] չհասկանալու համար։*

եո—ամեոբա, անակրեոնյան, թեորեմ, լեգեոն, խորեոգրաֆ, ֆեոդալ *բառերում չկա ձայնավորական հաջորդականության արտասանության մի-*

ասնական դրսևորում։ Թեև տիրապետող միտումը գրության և արտասանության համապատասխանությունն է, սակայն ամեորա բառի գրական հնչածևը [ամյօբա]-ն է, իսկ ասենք թեորեմ և ֆեոդալ բառերը կարող են ունենալ նաև յ-ով կազմված հնչաբառեր՝ [թյօրէմ], [ֆյօդալ]։

եի—կոֆեին, ակրեոլին, դեիզմ, նուկլեին, էի, էիր։ *Ձայնավորական այս հաջորդականությունը գրեթե բոլոր դեպքերում իրացվում է [էյի] արտասանությամբ, ընդ որում յ-անման անցումը կարող է հասնել մինչև հնչույթի աստիճանի, երբեմն լինել սոսկ անցումային գոտի։ Առանձին դեպքերում արտասանությունը համապատասխանում է գրությանը, սակայն ձայնավորական անցման ժամանակ յ ձայնորդի առաջացման պոտենցիալ հնարավորությունները միշտ առկա են։*

եե—հրեերեն, այգեէտ։ *Կրկնակ է-ն արտաբերության ժամանակ երբեմն տալիս է հնչյունի երկարացում, երբեմն իրանում է երկու մղման միջոցով։*

եու—բազեություն, լինոլեում, հրեուհի։ *Ձայնավորական անցման գոտում կարող է առաջանալ յ-ակերպ թույլ հնչյուն։ Լինոլեում բառում տեղի է ունեցել է>յ հնչյունափոխություն՝ [լինօլյում]։*

եը—բաերընկալ։ *Այս բառում գրությունը և արտասանությունը համընկնում են։ Բառարանում սրա կողքին գործածական է դիտվում նաև* բաիրընկալ *ձևը։*

Ի ձայնավորով սկսվող հաջորդականություններ

իա—ծիածան, անդրիագործ, արիաբար ձիավոր, իշիաս։ *Ձայնավորական այս հաջորդականությունը գրեթե միշտ ուղեկցվում է յ ձայնակապի առկայությամբ՝ [ծիյածան], [անդրիյագործ], [արիյաբար], [ձիյավոր]։ Իշիաս բառում կատարվել է ի>յ հնչյունափոխություն՝ [իշյաս]։ Այս և նման դեպքերում ենթադրվում է, թե բառի գրությունը նախապես համապատասխանել է հնչմանը, որ ոչ բոլոր դեպքերում է ճիշտ։*

իո—ամբիոն *[ամբյօն]*, իդիոմ *[իդյօմ]*, նացիոնալ *[նացիօնալ]*, օրիորդ *[օրյօրթ]*, պրոֆեսիոնալ *[պրօֆէսյօնալ]* և բազմաթիվ այլ բառերում *տեղի է ունենում ի>յ հնչյունափոխությունը։* Միօրինակ, լիովին, միևկարդ *բառերում կա գրությանը համապատասխան արտասանելու միտում։* Միոտաևի *բառում թեև բառարանը (Բարսեղյանի բառարան) օրինաչափ է համարում [միօտանի] հնչածևը, սակայն շատ լեզվակիրների մոտ նման հնչյունափոխությունը դեռևս չի արմատացել և գործածական է [միվօտանի] հնչումը։*

իի—լիիմաստ, միիշխան *բառերում ձայնավորական կրկնակ ի հաջոր-*

դականությունը պահպանվում է արտասանական մակարդակում շնչային երկու մղման միջոցով, երբեմն միավորվելով մեկ երկար ի–ի մեջ։

իու—արխիվարիուս, նատրիում, ձիուժ, տրիումֆ, լիուբյուն, լիուլի։ *Ձայնավորական այս հաջորդականությունը հնչական մակարդակում միակերպ իրացումներ չունի։ Մի շարք բառերում ի ձայնավորի հատկանիշների կորուստը կարող է հագեցնել յ ձայնորդով փոխարինվելուն՝ [արխիվարյուս], [նատրյում], [տրյումֆ], հայերեն բարդված բառերում ավելի հաճախականը կից ձայնավորների միջև յ կիսաձայնի առկայությունն է՝ [ձիյուժ], [լիյուբյուն]։ Առանձին դեպքերում ձայնավորական հաջորդականության միավորները պահպանում են իրենց հնչումը՝ [լիուլի]։*

իե—արիերգարդ, բարիեր *(Բարսեղյանի բառարան)*, հիերարխիա, հիերոգլիֆ, ձիեղեն, միեղջյուր, միերանգ։ *Ձայնավորական այս շարքը պարունակող բառերում նույնպես չկա հնչման միակերպություն։ Այն դեպքերում, երբ բառում առանձին մասերի հակադրություն չկա կամ չի դիտակցվում օրինաչափ են ի>յ անցումները՝ [արյերգարտ], [բարյեր], [հյերարխյա], [հյերօգլիֆ], մյուս դեպքերում գործում են բառերի արտասանական տարբերակային ձևեր՝ [ձիէղէն], և [ձիյէղէն], [միէղջյուր], և [միյէղջյուր], [միէրանգ] և [միյէրանգ]։*

իը—ձիրնկեց, բարիրնկալ, միրնթաց, միրսամիջոց։ *Այս հաջորդականության արտաբերության և գրության միջև նկատելի տարբերություններ չկան։*

Ու ձայնավորով սկսվող հաջորդականություններ

ուա—ավուար, այդուամենայնիվ, յագուար, դոնժուանություն, գնչուական, մադմուազել, մուար։ *Այս հաջորդականության մեջ ձայնավորները պահպանում են իրենց որակական հատկանիշները և հնչական ակընհայտ փոփոխություններ չեն նկատվում։ Մասնավոր դեպքերում պահպանվում է ու>վ հնչյունափոխությունը՝ [դոնժվանություն]։*

ուի—սյուիտա, լինդուիզմ, ալելուիա։ *Ձայնավորական այս հաջորդականության մեջ հնչյունական փոփոխությունները բառամիջում չեն նկատվում։ Բայց եթե նման հաջորդականություն ստացվում է բառավերջում, ասենք, բառի հոլովման ժամանակ, ապա խիստ օրինաչափ է ու>վ հնչյունափոխությունը՝ կատվի, լվի, ձվի, ճճվի, թեև կան նաև չ հնչյունափոխման դեպքեր՝ ճարկատուի, վարկատուի, բուի [բվի] (նոր միտում)։*

ուե—գնչուերեն, դուետ, պիրուետ, սիլուետ, դաուեսացնել *(Բարսեղյանի բառարան)։ Ձայնավորական այս հաջորդականության գրության և արտասանության մեջ էական տարբերություններ չեն նկատվում։ Երբեմն*

հնչական մակարդակում անցման գոտում նկատվում են քմայնացման թույլ հետքեր։

ուա—սուսմի, դուստալ։ Հազվադեպ հանդիպող ձայնավորական հաջորդականության մեջ հնչյունափոխություններ չեն նկատվում։

ուու— Գրությունը համապատասխանում է հնչմանը։ Այս հաջորդականությունը հանդիպում է ու–ով վերջացող բառերի ներգոյականի կազմության ժամանակ՝ ժողովածուում, հավաքածուում, որտեղ կից ձայնավորների միջև հանդես է գալիս յ ձայնորդը։

Ը ձայնավորով սկսվող բառամիջյան ձայնավորական հաջորդականությունները հայերենում չեն գործածվում։

Բառամիջյան ձայնավորական հաջորդականությունների աղյուսակը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

I դիրք	ա	օ	է	ու	ի
II դիրք	ա	ա	ա	ա	ա
	օ	օ	օ	օ	օ
	ի	ի	ի	ի	ի
	է	է	է	է	է
	ու	ու	ու	ու	ու
	ը	ը	|ը|		ը

Հայերենում ձայնավորական հաջորդականությունները չունեն հընչյունական սերտ կապեր և սովորաբար հանդես չեն գալիս անհնչյունափոխ ձևով մեկ վանկում և հնչաբառերի կազմության ժամանակ հաճախ հանդես են գալիս տարբերակային ձևերով՝ գերազանցապես միջնորդավորված կամ փոխակերպված յ ձայնորդով, երբեմն էլ վ բաղաձայնով։ Սա վերաբերում է ինչպես երկանդամ ձայնավորական հաջորդականություններին, այնպես էլ եռանդամ հաջորդականություններին։

Հայերեն տեքստում եռանդամ ձայնավորական կապակցությունների առաջին դիրքում առավել հաճախական է ի ձայնավորի գործառությունը։ Եռանդամ ձայնավորական հաջորդականություններ պատահում են բառամիջում և բառավերջում, բայց ոչ բառասկզբում։ Ձայնավորական ողջ համակարգը ծածկում են իա+ձայնավոր կապակցությունները։

Եռաշարք ձայնավորական կապակցություններն են.


իաա—ավիաագդանշան, իաօ—ավիաօդակ, իաի—լիաիմաստ, իաէ—միաէջ, իաու—ձիաուժ, իար—ավիաբնկերություն։ Եռաշարք ձայնավորական հաջորդականություն ունեցող առանձին բառերում առաջին ձայ-

նավորը հակում ունի հնչվելու որպես յ՝ [ավյասաղդանշան], [ավյաօղակ], իսկ առանձին դեպքերում յ-ն միջնորդում է՝ [լիյախմաստ], [միյաէջ]։

Տարածված են նաև իո+ձայնավոր կապակցությունները. իոա-ռադիոակտիվ, բիոաշխարհագրություն, բիոալկոհոլ, իոու—ռադիոուկընդիր, իոը—ռադիոընդունիչ: Այս կարգի բառերում սովորաբար պահպանվում է գրության մոտ արտասանությունը, թեև ռադիո բաղադրիչով կազմված բառերում այդ բաղադրիչի համար կանոնականը [ռադյո] հնչաձևն է։

Ոռաշարք ձայնավորական հաջորդականությունների կազմության համար օգտագործվում են մի քանի մասնավոր կիրառություններ՝ աուե—ղաուեսացնել, աուի—ալելուիա՝ [ալէլույա]։

Ոռաշարք ձայնավորական հաջորդականությունները կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով



Ոռաշարք ձայնավորական հաջորդականությունները սովորաբար բաժանվում են երկու կամ երեք վանկերի և անցման հատվածներում հիմնականում ունեն յ-ական հնչում։

Բաղաձայն+ձայնավոր հաջորդականություններ կամ կապակցություններ

Հայերենի բաղաձայնական համակարգի բոլոր միավորներն էլ առավել կամ պակաս ակտիվությամբ հանդես են գալիս բառասկզբում ձայնավորից առաջ և որոշ սահմանափակումներ ունեն միայն նրանց հաջորդող ձայնավորները։

Բաղաձայն+ա ձայնավոր կապակցության մեջ հանդես են գալիս բաղաձայնական համակարգի բոլոր անդամները՝ **բակ, գարի, դար, զանգ, թաև, ժամ, լավ, խակ, ծակ, կավ, հավ, ձավար, ղարիբ, ճաև, մազ, յար, նավ, շալ, չափ, պար, ջաև, ռամիկ, սար, տակ, վազ, ռաբբի, ցավ, փակ, քար, ֆազ:**

Բաղաձայն+o ձայնավոր կապակցության դեպքում ևս ծածկվում է հայերենի ողջ բաղաձայնական համակարգը։ Գրության մեջ հանդես է գալիս ո նշանը։ Ո նշանը բառասկզբում ունի վo հնչումը (բացառությամբ ով [oվ] և ովքեր [oվքէր] բառերի) և միայն ավելի ուշ շրջանում կատարված փոխառություններում գրության մեջ սկսվել են գործածվել վo ձևով գործառվող բառեր՝ վոլտ, վոլֆրամ։

0 ձայնավորին նախորդող բաղաձայնով բառերից են՝ բողկ, գող, դող, զոհ, թոկ, ժողով, լոկ, խոզ, ծով, կով, հով, ձոր, ղողանջ, ճորտ, մոտ, յոթ, ճոր, շոր, չոր, պորտ, ջորի, ռոճիկ, սով, ոտ, *[վօտք]*, տոն, րոպե, ցորեն, փոկ, fոս, ֆոն։

Բաղաձայն+է ձայնավոր կապակցությունը գրեթե լիովին ծածկում է բաղաձայնական համակարգը, եթե հաշվի առնենք է. Աղայանի բառարանում առկա րևանի (արևմտ.) միակ բառը, որտեղ հանդես է գալիս րե կապակցությունը։

Բառասկզբի յէ կապակցությունը գրության մեջ հանդես է գալիս և նշանով։ Այս կապակցության մեջ մտնող բառերից են՝ բերք, գեր, դեղ, զենք, բեր, ժեստ, լեռ, խենթ, ծեր, կես, ճեզ, ձեռք, ղեկ, ճեղք, մեղք, եզ *[յէզ]*, ճետ, շերտ, չեկ, պետ, ջերմ, ռետին, սերմ, վերք, տերև, ցերեկ, փեղկ, fեռի, ֆես։

Բաղաձայն+ու ձայնավոր կապակցության մեջ հանդես են գալիս բառասկզբում հայերենի գրեթե բոլոր բաղաձայնները։ Միակ բացառությունը ր-ն է։ Մինչդեռ ու կապակցությունը հայերենի հաճախակի գործածություն ունեցող բառամիջյան կապակցությունների թվին է պատկանում [բարություն] և հաճախակի հանդես է գալիս նաև բառի թեքված ձևերում՝ բառավերջում [գարու]։ Բառասկզբում ու ձայնավորին նախորդող բաղաձայնով կազմված կապակցություններից են՝ բուրգ, գութ, դուռ, զուր, բուր, ժուժկալ, լուռ, խումբ, ծուխ, կուռ, հում, ձուկ, ղուրան, ճուտ, մուր, յուղ, նուռ, շուն, չուգուն, պուրակ, ջուր, ռուս, սուր, վուշ, տուն, ցուրտ, փուշ, fույր, ֆուտբոլ։

Բաղաձայն+ի ձայնավոր կապակցությունը նույնպես բառասկզբում լայն գործածություն ունի։ Այսպիսի կապակցություն չի կազմվում յ բաղաձայնով, ինչպես և ղ ու ր բաղաձայններով, թեև բառարաններում հանդիպում են մի քանի բարբառային և գրական հայերենի համար խորթ բառաձևեր՝ ղիամաթ, ղինջղինջ, րիդե *(հզվդ.)*։

Ի ձայնավորին նախորդող բաղաձայնով սկսող կապակցությունների օրինակներից են՝ բիբ, գիր, դիրք, զինվոր, թիվ, ժիր, լի, խինդ, ծիտ, կիր, հիմար, ձիգ, ճիշտ, միրգ, նիզակ, շիշ, չիր, պինդ, ջիղ, ռիթմ, սիրտ, վիշտ, տիպ, ցինկ, փիղ, fիթ, ֆիլմ։

Բաղաձայն+ը ձայնավոր կապակցությունը հայերենի բառասկզբական դիրքում նույնպես հաճախակի գործածություն ունի, թեև գրության մեջ այն ոչ միշտ է, որ հանդես է գալիս։ Բառասկզբում այն ընդհանրապես չի գործառվում երկու բաղաձայնից հետո՝ (յ, ր)։ Մնացած կազմությունները հետևյալներն են՝ բզզզ, գլգգլ, դրմփ, զրո, թրոռ, ժխոռ [ժըխոռ], լբխլբխ, խըշտ, ծրլք, կրո, հրմ, ձմեռուկ [ձըմեռուկ], ղրո, ճրոռ, մրոռ, ճկար [ճըկար], շրփ–շրփ, չրլփ, պրժժ, ջճջոց [ջըճջօց], ռճգեղջյուր [ռըճգէղջյուր], սխալ [սըխալ], սրսս, վրզզ, տրզզ, ցր, փրխկ, ֆրշ–ֆրշ, ֆրռ։ Ինչպես տեսնում ենք գրության մեջ այս հաջորդականությունները գործառվում են սովորաբար բնաձայնություններում և ձայնարկություններում։

Բաղաձայն+ձայնավոր կապակցությունը ունի գործառական այլ հնարավորություններ, եթե նրան բառասկզբում նախորդում է մեկ այլ ձայնավոր։ Այս դեպքում արդեն մենք գործ ունենք բառամիջյան կապակցության հետ և նշված կապակցությունը հանդես է գալիս մեկ վանկի սահմաններում։ Նշանակություն ունի նաև թե կապակցությանը ինչ որակի ձայնավոր է նախորդում։ Այդ կապակցությունները ըստ նախորդող ձայնավորի գործածության ներկայացնում ենք աղյուսակների տեսքով.

Այսպիսով ա ձայնավորին հաջորդող բաղաձայն+ձայնավոր կապակցությունը հայերենում հնարավոր կառուցվածքային 180 դեպքի փոխարեն իրականանում է 140 ձևում, երբ կապակցությունը հանդես է գալիս բառասկզբում, որպես ՋԲՋ հաջորդականություն։ Իրականացվող դեպքերի քանակը թերևս կարող է ավելանալ, եթե դիտարկվեն նաև բառերի մեջ այդ կապակցությունների զբաղեցրած այլ դիրքերը, ինչպես նաև կենդանի խոսքում բառերի հնարավոր դրսևորումները՝ նրանց թեքական ձևերը։ Նշենք նաև, որ բերված բառերում բաղաձայնների հնչյունափոխության դեպքեր չեն նկատվում, մինչդեռ բաղաձայն+ձայնավոր կառուցվածքի նույն վանկում հանդես եկող ձայնավորական բաղադրիչը կարող է հնչյունափոխվել հաջորդ ձայնավորի ազդեցությամբ՝ ինչպես, ամիակ [ամյակ], ափիոն [ափյօն]։

Ասենք նաև, որ ներկայացվող աղյուսակներում բարբառային կամ գրական հայերենին խորթ բառերն ու ձևերը տրվում են տարբերակիչ նշանով(.), ինչպես՝ աչուկ., աչոն., աշել., ավըրշտել. և այլն։ Նման բառաձևերը աղյուսակ են մուտք գործում գրական ձևերի չհանդիպելու պայմաններում։ Աղյուսակից ներքև տրվող թվերը արտացոլում են այդ տեսակը կազմող դեպքերի ընդհանուր քանակը։

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները հայերենում ո ձայնավորին բառասկզբում հաջորդում են սահմանափակ թվով բաղաձայն+ձայնավոր կապակցություններ (68)։

Բաղաձայն + ձայնավոր կապակցությունը ա ձայնավորից հետո ԶԲԶ շարքում

	ա	օ	է	ու	ի	ը
բ	աբա	աբոնեմենտ	աբեգա	աբուռ	—	աբըրշում
գ	ագատ	ագորա.	ագենտ	ագուռ	ագիտակտ	ագըմակ
դ	ադաթ	ադոնիս.	ադենոիդ	—	ադիբեյ	ադըրբե-ջանցի
ղ	աղատ	ադոտ	ազեֆակա-նություն	—	ազեղ	—
թ	աթոռ	աթոռ	աթենիզմ	աթուրմա	—	—
ժ	—	—	—	աժուր	աժիոտաժ	—
լ	ալանի	ալոճ	ալեխանդ	ալուցք	ալիք	ալըրտուն
խ	ախտազ	ախտոռ	ախել.	ախուվախ	—	ախըր
ծ	ածանց	ածովի	ածելի	ածուխ	ածիկ	—
կ	ականի	ակոս	—	ակումբ	ակին	ակընկալել
հ	ահա	ահոտ	ահեղ	ահուդող	ահիպարա-նոց	ահընկեց
ձ	—	—	—	—	—	—
ղ	ադանձ	ադոթք	ադեղ	ադուտ	ադիք	—
ճ	աճառ	աճոն	աճել	աճուրդ	աճիր	աճըրդատեղ
մ	ամառ	ամոթ	ամեն	ամուր	ամիակ	—
յ	այահունչ	այո	այնք	—	այլն-օլին	—
ն	անագ	անոթ	անել	անուշ	անիծ	անընկեր
շ	աշակերտ	աշորա	աշել.	աշուղ	աշիրաթ.	—
չ	աչալուրջ	աչոն	աչեղ	աչուկ.	աչիկ	—
պ	ապատ	ապոթեոզ	ապերատոր	ապուր	ապիրատ	ապըսպրել
ջ	աջակից	աջոզ.	աջեր.	աջուձախ	—	—
ռ	առակ	առոդջ	առեղծված	առուլդ	առիթ	առընթեր
ս	աստացող	ասորի	ասեղ	ասուլթ	ասխատեմա	ասըր
վ	ավազ	—	ավել	ավուար.	ավիշ	ավըրշտել.
տ	աստամ	աստոմ	աստել	աստումնա	—	աստըճանակ
ր	արատ	արոտ	արև	արուրը	արի	—
ց	—	—	ացետոն	—	—	—
փ	ափադիծ	—	ափեղը	ափուղի	ափոն	ափըլփորել
ք	աքարազ	—	աքերլին.	—	աքիս	—
ֆ	աֆադիա	աֆորիզմ	աֆեկտ	—	աֆիշա	—
	27	25	27	23	23	15

Բառասկզբում էԲԶ դիրքում գործառվում են համեմատաբար փոքրաթիվ կապակցություններ։ Աղյուսակում տրվում են ինչպես հնչաբաներ, այնպես էլ եզակի կազմություններ ու տարբերակային ձևեր։ Այս բոլոր ձևերի համար կան 67 կարգի կապակցություններ։

Բաղաձայն+ձայնավոր կապակցությունը 0 ձայնավորից հետո 2 բ2 շարքում

	ա	օ	է	ու	ի	ը
բ	օբա.	օբոզ.	օբերատն	—ք	—	—
գ	—	օգոստոս	—	օգուստ	—	—
դ	օդաբեր	—	օդերևույթ	օդուղի	օդիկ.	օդընտել
ղ	—	օզոն	—	—	—	—
թ	օթարան.	օթոց	օթևան	(օթուժ)	—	—
ժ	օժանդակ	—	—	—	օժիտ	—
լ	—	—	օլեին	—	օլիմպիադա	—
խ	օխայ	—	—	—	—	—
ծ	օծանելիք	—	օծել	օծում	օծիչ	—
կ	—	—	—	օկուպանտ	—	—
հ	—	օհո	—	—	—	—
ձ	օձաբեր	օձոտ	օձեղեն	օձուտ	օձիք	—
ղ	օղակ	—	օղեգործ	—	օղի	—
ճ	օճառ	օճորք	—	—	—	—
մ	օմաչափ	—	—	—	—	—
յ	օյախտոս	—	—	—	օյինբազ.	—
ն	օնանական	օնոմաստիկա	օնեգինյան	—	օնիքս	—
շ	օշարակ	օշոշ	—	—	օշինդր	—
չ	—	—	օչերկ.	—	—	—
պ	օպալ	օպոզիցիա	օպերա	—	օպիում	—
ջ	օջա	—	—	—	—	—
ռ	—	—	—	—	—	—
ս	օսական	—	օսերեն	օսուհի	—	—
վ	օվացիա	—	—	—	—	(օվըն)
տ	օտար	օտոմանկա.	—	—	օտկ.	(օտըքոլոն)
ր	օրագիր	օրոր	օրենք	օրուժիչ	օրինակ	—
ց	—	—	—	—	—	—
փ	—	—	—	—	—	—
ք	—	—	—	—	—	—
ֆ	—	օֆորտ	—	—	օֆիցիոզ.	—
	19	13	12	8	13	3

Ի ձայնավորով սկսվող բառերի հետ բաղաձայն+ձայնավոր կապակցությունները ևս զգալիորեն զիջում են Ա ձայնավորին հաջորդող հանման կապակցություններին։ Այստեղ բոլոր դեպքերի ընդհանուր թիվը 65 է։

Ո՛չ ձայնավորով սկսվող բառերում նույնպես լիովին չի գործում հայերենի բաղաձայնական համակարգը, որի գրեթե 1/3-ով կապակցություններ չեն կազմվում (գ, ձ, ճ, յ, չ, ջ, ց, փ, ք,)։ Բոլոր դեպքերի հաշվառմամբ կապակցությունների ընդհանուր թիվը 70 է։

Ը ձայնավորին հայերենում բառասկզբի դիրքում սովորաբար չեն հա-

Բաղաձայն+ձայնավոր կապակցությունը է ձայնավորից հետո 2 բշ շարքում

	ա	օ	է	ու	ի	ը
բ	—	էբոնիտ	էբենացում	էբուլիոսկոպ.	—	—
գ	էգաղարձ	էգոիստ.	էգենեն.	էգուց.	—	—
դ	էդաֆոտիպ.	—	էդելվայս.	—	էդիկտ	—
ղ	էղակ	էզոպյան.	էդերբին.	—	—	—
թ	էթախ	էթօքսիլ.	—	—	էթելեն	—
ժ	էժան	—	—	—	—	—
լ	էլամերեն	էյօքսիբել.	էլեկտրական	էլուվիալ.	էյիքսիբ	—
խ	—	էխոլոտ	—	—	էխինոկոկ	—
ծ	էծապակաս.	—	էծեր	—	—	—
կ	—	էկոլոգիա	—	—	—	—
հ	—	—	էհեյ	—	—	—
ձ	—	—	—	—	—	—
ղ	—	—	—	—	—	—
ճ	—	—	—	—	—	—
մ	էմալ	էմոցիոնալ	—	էմուլսիա	էմիբ	—
յ	(էյական)	—	(էյություն)	—	(էյիբ)	—
ն	էնանտ.	էնոլիթ	էներգիա	—	—	—
շ	էշանալ	էշորեն	էշելոն	էշություն	—	—
չ	—	—	—	—	—	—
պ	—	էպոս	—	—	էպիգրամ	—
ջ	էջատակ	—	էջել	—	—	—
ռ	—	—	—	—	—	—
ս	—	—	էսենցիա	—	—	—
վ	էվակուացիա	էվոյուցիա	էվինկ	—	—	—
տ	էտալ	էտոց	էտել	էտում	էտիմոն	—
ր	էրան.	էրոգիա	էրե.	էրուդիցիա	էրի	(էրժնակ).
ց	—	—	—	—	էցիդիում.	—
փ	—	—	—	(էփուկ)	—	—
ք	—	—	—	—	—	—
ֆ	—	—	էֆեկտ	էֆուդիա	էֆիմերդի	—
	15	14	17	9	11	

չորդում բաղաձայն+ձայնավոր կապակցություններ։ Միակ բացառությունը Բարսեղյանի բառարանում ընը՝ ձայնարկություն էր է. Աղայանի բառարանում կան մի շարք այլ ձևեր ևս՝ ըծրկեճի., ըղեղ., ըղոռմի., ըղունգ., ընել., ընեցց., ըռանաճավ., ըռեխ., ըռանչպար., ըսել, ըսեցց., ըսի–ըսավ։ *Այս ձևերի մեծ մասը խորթ է գրական արևելահայերենին՝* ըղեղ–ուղեղ, ըղոռմի–ողոռմի, ըղունգ–եղունգ, ըռանչպար–ռանչպար, ըռեխ–ռեխ։ *Մի քանի բառաձևեր գործածական են արևմտահայերենում* ընել–անել, ըսել–ասել, *մյուսները ունեն ավելի շատ բարբառային հնչման պատկեր՝* ըսեցց, ընեցց, ըծրկեճի *(խաղողի տեսակ),* ըռանաճավ *(թռչնի տեսակ)։ Այս բառաձևերի ընդհանուր քանակը 12 է։*

Բաղաձայն+ձայնավոր կապակցությունը Ու ձայնավորից հետո 2 բշ շարքում

	ա	օ	է	ու	ի	ը
բ	—	—	—	—	ուբիխերեն	—
գ	—	—	—	—	—	—
դ	—	—	ուդեյբերեն	—	—	—
զ	ուզան	ուզող	ուզել	ուզուս	—	ուզընկան.
թ	ութամյա	ութօրյա	ութերորդ.	ութուց	ութիջյան	—
ժ	ուժայլեն	ուժով	ուժեղ	—	—	—
լ	ուլատեր	ուլոտրիքս.	ուլենի	ուլունք	ուլիկ	ուլըն.
խ	ուխայ	—	—	—	—	—
ծ	ուծանալ	—	—	ուծություն	ուծի.	—
կ	ուկող.	—	—	—	—	—
հ	ուհալ	—	—	—	ուհի.	—
ձ	—	—	—	—	—	—
ղ	ուղաբկել	ուղորդ.	ուղեղ	ուղուկ.	ուղիղ	ուղըղվել
ճ	—	—	—	—	—	—
մ	—	—	ումեվիցե	—	—	—
յ	—	—	—	—	—	—
ն	ունայն	—	ուննենալ	—	ուննիթու	—
շ	ուշաբեր	(ուշի-ուշով)	ուշեղ	ուշունց.	ուշիմ	—
չ	—	—	—	—	—	—
պ	ուպասեկի	—	—	—	—	—
ջ	—	—	—	—	—	—
ռ	ուռա	ուռօրհնեք.	ուռչենի	ուռուցք	ուռի	ուռըն
ս	ուսադիր	(ուսօակըր).	ուսեղ	ուսում	ուսիկ	ուսընդա-նութ
վ	ուվա.					
տ	—	—	ուվերտյուրա	—	—	—
ր	ուտացնել.	ուտոպիա	ուտել	ուտում	ուտիճ	—
ց	ուբալե	ուրոլոգ	ուբեմն	ուրուն	ուրիշ	—
փ	—	—	—	—	—	—
ք	—	—	—	—	—	—
ֆ	—	—	—	—	—	—
	ուֆազ.	—	—	ուֆու.	—	—
	18	10	14	11	12	5

Ձայնավորին հաջորդող բաղաձայն+ձայնավոր կապակցությունների բոլոր դեպքերի ընդհանուր քանակը 423 է։ Այն կազմում է հայերենի համակարգային 1080 հնարավոր կապակցությունների մոտ 40 տոկոսը։ Կապակցություններում ամենից հաճախականը ա ձայնավորով կազմվածներն են։ Ամենը 95 բա կապակցություններ ձայնավորով սկսվող բառերում՝ սկզբնական ձայնավորից հետո։ Հաջորդը ըստ հաճախականության է ձայնավորն է, որով կազմվում են 87 տիպի կապակցություններ։ Մյուս ձայնավորներով կազմվող կապակցություններն ունեն մոտ արժեք-

Բաղաձայն+ձայնավոր կապակցությունները ի ձայնավորից հետո 2 ը 2 շարքում

	ա	օ	է	ու	ի	ը
բ	*ի բաց*	—	*իբեր*	*ի բուռ,*	*իբիս.*	*[ի բընէ].*
դ	*իդական*	—	—	*իդություն*	*իդիք*	—
գ	—	—	*իգեա*	—	*իգիլա*	—
ղ	*ի ղաբմանս.*	*իղոտոպ*	*ի ղեն.*	*իղուբ*	*իղմիբ*	—
ք	—	—	—	—	*ի քիվս*	—
ժ	*իժաքար*	—	—	*իժություն*	—	—
լ	*իլապրծ*	—	*իլենի*	*ի լուբ*	*իլիկ*	
խ	—	—	—	—	—	*[ի խընդիբ].*
ծ	*իծապտուկ*	—	—	—	—	*[ի ծընէ]*
կ	*ի կատար*	—	—	—	—	—
հ	*իհարկե*	—	*ի հեճուկս*	—	—	—
ձ	—	—	—	—	—	—
ղ	—	—	—	—	—	—
ճ	—	—	—	—	—	—
մ	*իմանալ*	*իմովսաննն*	*իմերեթա-կան*	*իմունիտետ*	*ի մի*	—
յ	—	—	—	—	—	—
ն	*իննադ.*	—	*իներտ*	—	*իննի*	*ինը*
շ	*իշարեռ*	*[իշօտնուկ]*	*իշերամ.*	*իշուկ*	*իշիտս*	—
չ	—	—	—	—	—	—
պ	*ի պաշտոնե*	—	*ի պետս*	—	—	—
ջ	*իջանցք*	—	*իջեցում*	*իջուցիկ*	—	—
ռ	*իռացիոնալ*	—	*իռեզուլյար*	—	*իռէտացիա.*	—
ս	—	*իսկորեն.*	*ի սեր*	—	—	*[ի սըրտէ]*
վ	—	—	*ի վերջո*	—	*ի վիճակի*	—
տ	*իտալական*	—	*ի տես*	—	—	—
ր	*իրագետ*	*իրոք*	*իրենք*	—	*իրիկնամուտ*	—
ց	—	—	*իցե.*	—	*իցիվ*	—
վ	—	—	—	—	—	—
ք	—	—	*իքենք.*	—	—	—
ֆ	—	—	—	—	—	—
	16	*5*	*17*	*9*	*13*	*5*

Ներ՝ ի–72, օ–67, ու–60։ Ամենից քիչ կապակցությունները կազմվում են ը ձայնավորի մասնակցությամբ։ Սրանց ընդհանուր թիվը 31 է։

Բաղաձայնական հաջորդականություններ և կամ կապակցություններ

Հայերենի գրավոր տեքստերում ավելի հաճախական են բաղաձայն տառերով հաջորդականությունները։ Սրանց թիվը անհամեմատ մեծ է բանավոր խոսքի համեմատությամբ, քանի որ շատ հաճախ գրավոր տեքստում չի նշվում ը ձայնավորը, մյուս կողմից հայերենի այբուբենի բաղաձայնական ենթահամակարգի անդամների քանակը ձայնավորների համեմատությամբ մեծ է։ Պետք է նշել, որ կապակցություններում հանդես եկող

բաղաձանները չունեն գործառական նույնատիպ հնարավորություններ։ Գծային շարքի մեջ լեզուն մի դեպքում հանդուրժում է որոշ կարգի բաղաձայնական հաջորդականություններ, մյուս դեպքում բացառում նմանօրինակ կապակցություններ։

Բառասկզբում կրկնակ բաղաձայնով և ձայնավորով սկսվող կապակցություններում հազվադեպ են հանդես գալիս Յ և Ր բաղաձայնները։ Այս բաղաձայնները կրկնակ կազմություններում մեջ հանդես են գալիս որպես կապակցության երկրորդ բաղադրիչ։ Բաղաձայնական առանձին հաջորդականություններ գրության մեջ հանդես են գալիս երեք և ավելի բաղաձայններով (տառերով) սկսվող շարքերում միայն։ Բաղաձայնով սկսվող ոչ մի շարք լիովին չի սպառում հայերենի բաղաձայնական համակարգի բոլոր հնարավորությունները։

Բ բաղաձայնով սկսվող կրկնակ բաղաձայնական հաջորդականություն

Հայերենը մեծ մասամբ խուսափում է բաղաձայնական կուտակումներից բառասկզբում և շատ դեպքերում հնչման մեջ կից բաղաձայնների մեջ գործառվում է ը ձայնավորը։ Բ բաղաձայնով սկսվող կրկնակ բաղաձայնների երկրորդ բաղադրիչը, եթե ձայնորդ է, ապա հնարավոր է նաև միասնական արտաբերության դեպքեր, ընդ որում, երբ երկրորդ բաղադրիչը յ ձայնորդն է ապա գործառվում է միայն հնչարտաբերության մի տեսակ, այն է միասնական մեկ վանկանի հնչյունախումբը։ Ստորև տալիս ենք բ-ով սկսվող բաղաձայնական կրկնակի թվով հաջորդականություններ ունեցող բառերի տեսակները, երբ շարքում տեղ են գտել նաև բարբառային և ոչ-գրական ձևեր։ Բրուկ [բըրուկ], բդել [բըդէլ], բզաձև [բըզաձէվ], բթամիտ [բըթամիտ], բժիշկ [բըժիշկ], բլանկ [բլանկ], բլուր [բըլուր], բխել [բըխել], բծաթև [բըծաթէվ], բկախեղդ [բըկախեղդ], բղավել [բըղավէլ], բճաշիվ [բըճաշիվ], բյուջե [բյուջէ], բնակվել [բընակվէլ] և [բնակվէլ], բշալ [բըշալ], բջիջ [բըջիջ], բռալ [բըռալ և բռալ], բվալ [բըվալ], [բվվալ] ձևում կարող է հանդես գալ վանկարար վ-ն, բտել [բըտէլ], բտաբիոն [բրաբյօն], բքաբեր [բըքաբէր]։ Բառասկզբում բ-ից հետո մի քանի բաղաձայններ կարող են գործառվել, երբ նրանց հաջորդում է մեկ այլ բաղաձայն նշան՝ բմբուլ [բըմբուլ], բշտել [բըշտել], բսեղել [բըսեղէլ]։

Գ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկզբում գործառվող բաղաձայնական հաջորդականությունների մեջ ձայնավոր ը-ի հանդես գալը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։ Նախ հայերենում իրար կողքի նույն վանկում չեն կարող

հանդես գալ պայթականները, երկրորդ տեղում գործառվող պայթականը նույնպես կարող է իրացվել միայն նախորդող ձայնավորի դեպքում, կապակցության մեջ ը–ն որոշակիորեն ընդգծվելու հակում ունի այն բոլոր դեպքերում, երբ հնչակապակցության մեջ առկա է հնչյունափոխված ձեվույթ, որտեղ տեղի է ունեցել ձայնավոր-ը հնչյունափոխությունը, երբեմն այն պայմանավորված է բառի մեջ մտնող հնչյունների քանակով, այն է հնչաբառի երկարությամբ։ Այս վերջին դեպքում ինչքան ավելի երկար է բառը, այնքան պակասում է ը ձայնավորի դրսևորման հնարավորությունը, մանավանդ խոսակցական ոճում։ Դ և գրության մեջ նրան հաջորդող մեկ այլ բաղաձայն նշանով սկսվող բառերում իրացվում են բաղաձայնական համակարգի հնարավոր կապակցությունների կեսից ավելին։ Դրանք են՝ գբայիճ [գբբայիճ], գդալ [գբդալ], գզարաճ [գբզարան], գբալ [գբբալ], գժանոց [գբժանոց], գլաճ [գբլան] բայց գլաճագործարաճ [գլանագործարան], գծագիր [գբծագիր], գհուկ [գբհուկ], գծուծ [գբծուծ], գյադա [գյադա], գճալ [գբնալ], գչիր [գբչիր], գռեճիկ [գբռէհիկ] գվվալ [գբվվալ] բայց գվարդիա [գվարդյա], գտածո [գբտածո], գրել [գբրէլ], բայց գրադարաճ [գրադարան], գցել [գբցէլ]։ Բառասկզբի գ–ին կարող են հաջորդել մի քանի այլ բաղաձայններ, հույակ և ավելի բաղաձայնական դրույթների շարքով սկսվող բառերում՝ գգվալ [գբգվալ], գխտալ [գբխտալ], գղգղալ [գբղգբղալ], գմբեթ [գբմբեթ], գչլել [գբչլել]։

Դ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառերում իրացվում է բաղաձայնական համակարգի հնարավորությունների գրեթե կեսը՝ դդում [դբդում], դզել [դբզէլ], դժոխք [դբժոխք], դկուլ կամ դկուտ [դբկուլ, դբկուտ] եղակի կազմություն է, դհոլ [դբհոլ] (ժղ.), դմակ [դբմակ], դյուրին [դբյուրին], դնել [դբնէլ], բայց Դնեպրոպետրովսկ [Դնէպրոպէտրովսկ], դպիր [դբպիր], դռալ [դբռալ] եաև [դռ-ռալ], դրախտ [դբրախտ] բայց դրախտային [դրախտային]։ Կան դ-ի հետ կապակցություն կազմող այլ բաղաձայններ ևս, սակայն մեկ այլ բաղաձայնով ամփոփվելու դեպքում՝ դլղլացնել [դբլդբլացնէլ], դխկալ [դբխկալ], դղյակ [դբղյակ], դշխեմ [դբշխէմ], դստրիկ [դբստրիկ], դվվալ [դբվվալ] և [դվ-վալ], դքսական [դբքսական]։

Ջ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի հնչաշղթայում անհամեմատ ավելի շատ տարբերակային ձևվեր են առաջանում, երբ բաղաձայնական կապակցությունները սկսվում են զ, ս, շ շփական բաղաձայններով։ Բաղաձայնական կապակցություննե-

րից խուսափելու միջոց է այդ կապակցություններից առաջ ը-ի գործածությունը։ Չմտնելով նման արտասանության առաջացման դրդապատճառների որոշման մեջ, նշենք, որ այժմ արևելահայ գրական արտասանության ժամանակ շատ հաճախ նկատելի է նման կազմությունների միասնական, մեկ վանկում առանց նախորդող ը-ի հանդես գալու միտումը։ Այս միտումը չի նկատվում տարիքային բոլոր խմբերի մոտ, ինչպես նաև արևմտահայերեն գրական արտասանության ժամանակ։ Այսպես ունենք զ բաղաձայնով սկսվող կրկնակ բաղաձայնական հաջորդականությունների հետևյալ տեսակը՝ զբաղվել [զբաղվէլ] և [ըզբաղվէլ], զգալ [զգալ] և [ըզգալ], զլել [զլէլ], զկեռ [զլկէռ], զհինով (գվռ.) [զլհինօվ], զմայլել [զմայլէլ] և [ըզմայլէլ, զըմայլէլ], զնար (գվռ.) [զլնար] և [ըզնար], զվարթ [զլվարթ] բայց զվարթանալ [զվարթանալ], զտել [զլտէլ], զրահ [զլրահ] բայց զրահապատել [զրահապատէլ]։ Որոշ հաջորդականություններ հնարավոր են մեկ այլ բաղաձայնով ամփոփվելու դեպքում՝ զզվանք [զլզվանք], զխկել [զլխկէլ], զղջալ [զլղջալ], զսպել [զլսպէլ]։

թ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող բաղաձայնական կապակցություններում պահպանվում են մինչև այժմ քննված պայթական բաղաձայններին բնորոշ առանձնահատկությունները։ թ բաղաձայնին հնչաբառում հաջորդում է ձայնավորական ը հնչարանը, որը հիմնականում գիտակցվող կամ չգիտակցվող ձայնավորական հնչյունափոխության արդյունք է։ Ունենք հետևյալ հաջորդականություններ ներկայացնող տեսակները՝ թզուկ [թը զուկ], թքենի [թըթէնի], թլատել [թըլատէլ], թխել [թըխէլ], թյուր [թյուր], թշիկ [թըշիկ], թչե [թըչէ], թռիչք [թըռիչք], թսան [թըսան], թվել [թըվէլ], թռատել [թըրատէլ], թխել [թըքէլ], թփակալել [թըփակալել]։ Կապակցությունների մի քանի տեսակներ կազմվում են բառասկզբի դիրքում մի քանի բաղաձայնների շարքում՝ թքխլի (գվռ.) [թըքխլի], թրժթրժալ [թըժթըժալ], թղկի [թըղկի], թմբուկ [թըմբուկ], թնդալ [թընդալ], թպռտալ [թըպռտալ]։

ժ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով և նրան հաջորդող մեկ այլ բաղաձայնով սկսող բառատեսակները համեմատաբար սակավաթիվ են։ Ունենք ժժան (գվռ.) [ժըժան], ժլատ [ժըլատ], ժխոր [ժըխոր], ժմեռ (հնց) [ժըմէռ], ժյուր [ժյուր], ժպիտ [ժըպիտ], ժռատ (գվռ.) [ժռատ], ժռել (հնց.) [ժըռէլ], ժռաջան [ժըրաջան]։ Երկու դեպքում ժ-ով սկսում են բառա-

սկզբի բաղաձայնական շարքերը՝ ժնգալ [ժընգալ], ժշխել (գվո.) [ժըշխել]։

Լ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով համեմատաբար շատ կապակցություններ են կազմվում։ Հնչաբառերում լ բաղաձայնին սովորաբար հաջորդում է ը ձայնավորը, այնպես որ բաղաձայնական հնչակապակցություններ գրեթե չեն կազմվում՝ լուկ [լըլուկ], լխիկ (գվո.) [լըխիկ], լծակ [լըծակ], լկել [լըկել], լեմեմել [լըհեմեմել], լղարիկ [լըղարիկ], լճակ [լըճակ], լմել [լըմել], լարդ [լարդ], լպիրշ [լըպիրշ], լռակյաց [լըռակյաց], լսել [լըսել], լվալ [լըվալ], լրաբեր [լըրաբեր], լցանյութ [լըցանյութ], լփել (գվո.) [լըփել], լռել [լըքել], լֆիկ (ժող.) [լըֆիկ]։ Մի քանի բառերում բաղաձայնական կապակցությունների նոր տեսակները հանդես են գալիս բաղաձայն դրույթների շարքում՝ լդրաչափ [լըդրաչափ], լզմզել [լըզմըզել], լնդերք [լընդերք] լտտեճի [լըտտեճի]։

Խ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի բաղաձայնական համակարգի գործուն միավորներից է։ Ունենք հետևյալ կապակցությունները՝ խզալ [խըզալ], խթան [խըթան], խժալ [խըժալ], խլուրդ [խըլուրդ], խխունջ [խըխունջ], խղիկ [խըղիկ], խեազարդ [խըճաղարթ], խմել [խըմել], խյուս [խյուս], խեամք [խընամք], խպիպ [խըպիպ], խռիվ [խըռիվ], խսիր [խըսիր], խվակ [խըվակ], խտանալ [խըտանալ], խրատ [խըրատ], խցան [խըցան], խփել [խըփել]։ Մի քանի բառատեսակներ կազմվում են բաղաձայնների շարքում՝ խծբծանք [խըծբըծանք], խղճալ [խըղճալ], խշշալ [խըշշալ], խըշմար [խըշմար]։

Ծ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով բաղաձայնական կրկնակ հաջորդականությունների կազմությանը մասնակցում է բաղաձայնական ենթահամակարգի գրեթե կեսը՝ ծթացնել [ծըթացնել], ծլել [ծլել], ծխալ [ծըխալ], ծծան [ծըծան], ծեան (գվո.) [ծըհան], ծղոտ [ծըղօտ], ծմակ [ծըմակ], ծյուրել [ծյուրել], ծճել, [ծընել], ծպեղ [ծըպեղ], ծռել [ծըռել], ծվեն [ծըվեն], ծռաբուն [ծըտաբուն], ծրագիր [ծըրագիր] և [ծրագիր], բայց ծրագրավորում [ծրագրավօրում], ծփալ [ծըփալ]։ Մեկ հաջորդականությունը իրացվում է բաղաձայնական շրջապատում՝ ծկլթալ [ծըկըլթալ]։

Կ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար գործուն բաղաձայններից է։ Նրա հետ հաջորդական գրային կապի մեջ են մտնում համակարգի անդամների մեծամասնությունը. ունենք հետևյալ տեսակները՝ կզակ *[կզակ]*, կրել *[կրել]*, կժաբերան *[կժաբերան]*, կլոր *[կլոր]*, կխալ *[կխալ]* եղակի ձև է, կծան *[կծան]*, կկու *[կկու]*, կղեր *[կղեր]*, կճեպ *[կճեպ]*, կմախք *[կմախք]*, կյանք *[կյանք]*, կնիք *[կնիք]*, կշեռք *[կշեռք]*, կպուկ *[կպուկ,]* կռանալ *[կռանալ]*, կվաս *[կվաս]* և *[կվաս]*, կտակ *[կտակ]*, կրել *[կրել]* բայց կրավորական *[կրավորական]*, կցել *[կցել]*, կճել *[կճել]*։ *Մի քանի կրկնակ հաջորդականությունների տեսակներ առանձնացնում ենք բաղաձայն գրույթների շարքում՝* կշկշան *[կշկշան]*, կսմբել *[կսմբել]*, կփկփալ *[կփկփալ]*։

Հ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար քիչ կապակցություններ կազմող բաղաձայններից է։ Նրանով կազմավորվում են մոտ մեկ տասնյակ բառասկզբական կրկնակ բաղաձայնական հաջորդականություններ՝ հզոր *[հզոր]*, հլու *[հլու]*, հղի *[հղի]*, հմուտ *[հմուտ]*, հյուք *[հյուք]*, հնար *[հնար]*, հպարտ *[հպարտ]*, հռետոր *[հռետոր]*, հրաման *[հրաման]* և *[հրաման]*։ *Երկու հաջորդականության տեսակներ կազմվում են բաղաձայնական շրջապատում՝* հծծել *[հծծել]*, հսկա *[հսկա]*։

Ձ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար փոքր հաճախականությամբ հանդես եկող բաղաձայն է։ Այս բաղաձայնը նաև քիչ կապակցություններ է կազմում։ Բառասկզբում ունենք՝ ձգան *[ձգան]* և *[ձքան]*, ձկան *[ձկան]*, ձռում *[ձռում]*, ձղկի *[ձղկի]* կամ *[ձխկի]* եղակի կազմություն), ձմեռ *[ձմեռ]*, ձյութ *[ձյութ]*, ձեռակույտ *[ձեռնակույտ]*, ձվաձեղ *[ձվաձէղ]*, ձրի *[ձրի]*։ *Երկու դեպքում կրկնակ բաղաձայնի նոր տեսակները հանդես են գալիս բաղաձայնական շարքում՝* ձթհան *[ձքհան]*, ձկներ *[ձկներ]*։

Ղ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկզբում համեմատաբար քիչ են հանդիպում այս բաղաձայնով սկսող բաղաձայնական հաջորդականությունները։ Հայերենի քիչ գործածական հնչույթներից մեկն է։ Գրաբարում թերևս բառասկզբի դիրքում հանդես է եկել լ բաղաձայնի դիրքային տարբերակը, այս պատճառով ղ-

ով սկսվող բառերը կա՛մ փոխառություններ են, կա՛մ ուշ շրջանի կազմություններ։ Այսպիսի կազմություն ունեցող բառերի մեծամասնությունը գրաբարյան հայերենում հանդես է գալիս որոշակի բարբառային երանգով՝ ղզարթմա [ղզարթմա], ղռեր [ղռէր], ղյամաք [ղյամաք]։ Բառարանում տեղ են գտել ղ-ով սկսող բաղաձայնական կապակցությունների հետևյալ տեսակները՝ ղզլբաշ [ղզղըլբաշ], ղժժալ [ղժժալ], ղլղլալ [ղըղլալ], ղմշել [ղմշէլ], ղնջալ [ղընջալ] ղպտիերեն [ղպտիէրէն], ղրսմաք [ղրսմաք], ղրճալ [ղրճալ]։

Ձ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Դործուն բաղաձայն է։ Ունենք նրանով սկզբնավորվող բազմաթիվ բաղաձայնական հաջորդականություններ՝ ճզալ [ճզալ], ճթոց [ճթօց], ճժաբեր [ճժաբեր], ճլախոտ [ճլախօտ], ճխալ [ճխալ], ճկուն [ճկուն], ճղել [ճղճղէլ], ճճեկեր [ճրճէկեր], ճմահոդ [ճմահօդ], ճյուղ [ճյուղ], ճչալ [ճչալ], ճպուռ [ճպուռ], ճռալ [ճռալ], ճվալ [ճվալ], ճառանց [ճրառանց], ճրագ [ճրագ]։ Մի շարք բառերում ճ-ով սկսվող բառերում կրկնակ բաղաձայնների իրացումը լինում է բաղաձայնների շրջապատում՝ ճգնել [ճրգնէլ], ճզմել [ճրզմէլ], ճնշում [ճրնշում], ճշտել, [ճրշտէլ], ճստալ [ճրստալ], ճճճալ [ճրգճրգալ]։

Մ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի բաղաձայնական համակարգի միավորների շուրջ կեսը հաջորդում են մ բաղաձայնին։ Ունենք հետևյալ կազմությունները՝ մգանալ [մգանալ], մգիլ [մգիլ], մթերք [մրթէրք], մժեղ [մրժէղ], մլակ [մրլակ], մխել [մրխէլ], մկան [մրկան], մղում [մրղում], մճիր (գվո. [մրճիր], մյուս, [մյուս], մնալ [մրնալ], մշակ [մրշակ], մռայլ [մրռայլ], մսակեր [մրսակէր], մտադիր [մրտադիր], մրճոճ [մրրճոճ]։ Բարբառային մծրել [մրծրրէլ], ձևում կա մեծ հաջորդականություն։

Ն բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բաղաձայնական համակարգի միավորների գրեթե կեսը մասնակցում են ն-ով սկսվող գրային հաջորդականությունների կազմությանը՝ նգածաղիկ [նրգածաղիկ], նզովք [նրզօվք], նժար [նրժար], նկար [նրկար], նճանգ [նրհանգ], նման [նրման], նյարդ [նյարթ], նշել [նրշէլ], նրպաստ [նրպաստ], նռենի [նրռէնի], նսեմ [նրսէմ], նվագ [նրվագ], նրա [նրրա], նոց [նրքօց]։

Շ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկզբում այս բաղաձայնով սկսում են ինչպես գրային հաջորդականություններ, այնպես էլ հնչյունական կապակցություններ։ Այն տեսակետը, թե մի քանի բաղաձայնական կապակցությունից առաջ հնչական մակարդակում առկա է ձայնավորական ը հենարանը չի հաստատվում փորձառական տվյալներով։ Գրական հայերենին տիրապետող բազմաթիվ փորձարկվողներ կապակցությունները հնչում էին առանց բառասկզբական ձայնավորական արտաբերության։ Ունենք հետևյալ հաջորդականությունները՝ շթարկել *[շթարկէլ]*, *[շբթարկէլ]*, շլանալ *[շըլանալ]*, շխկալ *[շըխկալ]*, շկահել *[շըկահէլ]*, շղարշ *[շըղարշ]*, շճեճի *[շըճէճի]*, շմոլ *[շըմօլ]*, շյուղ, շնորհ *[շընորհք]*, շղուկ *[շըղուկ]*, շչակ *[շըչակ]*, շպար շռայլ *[շռայլ]* և *[շըռայլ]*, շվաք *[շըվաք]*, շտապ, շրեշ *[շըրէշ]*, շփել *[շըփէլ]*, շքեղ *[շըքեղ]*։ Շե հաջորդականությունը չի հաջորդում ձայնավոր նշան՝* շխկալ *[շըխկալ]*։ *Բառասկզբական ը հենարանը առավել հատուկ է արևմտահայերեն արտասանությանը՝* շպար *[շըպար]*, շտապ *[շըտապ]*։

Զ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող բաղաձայնական հաջորդականությունները գրեթե միշտ ընդմիջվում են ը ձայնավորով հնչական մակարդակում՝ չբեր *[չըբէր]*, չգոյ *[չըգօյ]*, չդատված *[չըդատվածք]*, չթագործ *[չըթագործ]*, չլուտ *[չըլուտ]*, չխոսկան *[չըխօսկան]*, չկամ *[չըկամ]*, չնաս *[չընհաս]*, չմուշկ *[չըմուշկ]*, չնայած *[չընայած]*, չռել *[չըռէլ]*, չվել *[չըվէլ]*, չտես *[չըտէս]*, չփակ *[չըփակ]*, չբավոր *[չըքավոր]*։ *Մի քանի կրկնակ կազմություններ մտնում են բաղաձայնական շարքի մեջ՝* չղջիկ *[չըխչիկ]*, չսուիկ *[չըսուիկ]*, չրխկոց *[չըրխկօց]*։

Պ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմվում են բառասկզբական հաջորդականություններ, որոնցում իրացվում են համակարգի մեջ մտնող բաղաձայնների շուրջ կեսը՝ պզուկ *[պըզուկ]*, պլաճ *[պըլաճ]* բայց պլանային *[պլանային]*, պծաո *(գվո.)* *[պըծաո]*, պկու *(գվո.)* *[պըկու]*, պղինձ *[պըղինձ]*, պճեղ *[պըճէղ]*, պյուրե *[պյուրէ]*, պճակ *[պըճակ]*, պշել *[պըշէլ]*, պպուկ *(գվո.)* *[պըպուկ]*, պռաո *(գվո.)* *[պըռաո]*, պսակ *[պըսակ]*, պտուկ *[պըտուկ]*, պրակ *[պըրակ]* բայց պրակտիկա *[պրակտիկա]*, պֆենիգ *[պֆէնիգ]*։ *Երկու կարգի հաջորդականություն իրացվում են բաղաձայնների շարքում՝* պժգալ *[պըժգալ]*, պչրել *[պըչրէլ]*։

Ջ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով համեմատաբար փոքր քանակի հաջորդականություններ են սկզբնավորվում։ Ունենք՝ ջլապիդ [ջլապիդ], ջնակ [ջնհակ], ջղագար [ջղագար], ջյուպպա (գվո. եղակի կազմություն) [ջյուպա], ջընարկել [ջընարկէլ], ջվալ [ջվալ], ջրալի [ջրրալի]։ Բաղաձայնական շարքում կան նաև հետևյալ հաջորդականությունները՝ ջգռու (գվո.) [ջգռու], ջխտել (գվո.) [ջխտէլ]։

Ռ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկիզբը ռ բաղաձայնի համար հայերենում թույլ դիրք է։ Հիմնականում այստեղ հանդես են գալիս փոխառյալ բառերը։ Կան մի քանի բառասկզբական հաջորդականություններ՝ ռխել (գվո.) [ռխէլ], ռյումկա [ռյումկա], ռշիկ (գվո.) ռսագետ [ռսագէտ]։ Մ, Ն ռնգայինները նույնպես հաջորդում են ռ թրթռունին բաղաձայնների շարքում։ Այս դեպքում ևս հնչական մակարդակում բառասկզբում չի ստեղծվում բաղաձայնական կապակցություն, քանի որ կից բաղաձայնները ընդմիջվում են ը ձայնավորով՝ ռմբակոծել [ռմբակօծէլ], ռնգային [ռընգային]։

Ս բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկզբում այս բաղաձայնով կազմվում են զգալի թվով հաջորդականություններ։ Մի շարք դեպքերում գրական ընդունելի արտասանություն է համարվում բաղաձայնից առաջ ը արտասանությունը։ Վերջին ժամանակներս ինչպես այլ դեպքերում, այնպես էլ այստեղ նկատելի են առանց բառասկզբական հավելավոր ձայնավորի արտաբերություններ։ Այն բոլոր դեպքերում, երբ բառասկզբական բաղաձայնական կապակցությունը միասնական հնչարտաբերություն չունի և հաջորդող ձայնավորի հետ մեկ վանկ չի կազմում, ապա սրանց միջև հանդես է գալիս ը ձայնավորը։ Ունենք հետևյալ կարգի հաջորդականություններ՝ սգալ [սըգալ], սթափվել [սթափվէլ], նաև [ըսթափվէլ], սլանալ [սըլանալ], սխալ [սըխալ], սկավառակ [սկավառակ], և [ըսկավառակ], սնաթ [սըհաթ] (գվո.), սողոսկել [սըղօսկէլ], սյուն [սյուն], սնանկ [սընանկ], սպա [սըպա] և [ըսպա], սսուկ [սըսուկ], սվաղ [սըվաղ],ստախոս [սըտախոս], բայց ստանալ [սըտանալ], սրել [սըրէլ], սցենար [սցէնար], սփոփել [սփօփէլ] և [ըսփօփէլ], սմանչելի [սքանչելի] և [ըսքանչէլի], սֆաթ (գվո.) [սֆաթ]։ Բառասկզբի բաղաձայնների շարքում իրացվում են այլ կարգի հաջորդականություններ՝ սզենեի [սըզնէնի], սմբակ [սըմբակ], սռնի [սըռնի]։

վ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Բառասկզբում վ *բաղաձայնին հնչական մակարդակում սովորաբար հաջորդում է ձայնավոր հնչյուն։ Ունենք հետևյալ հաջորդականությունները՝* վզակոթ *[վզակոթ]*, վթար *[վթար]*, վժալ *[վժալ]*, վլախեներ *[վլախներ]* և *[վլախներ]*, վկա *[վկա]*, վհատ *[վհատ]*, վճար *[վճար]*, վյախկ *[վյախկ]*, վնաս *[վնաս]*, վշտ *[վշտ]*, վրոշիկ *[վրոշիկ]*, վսեմ *[վսեմ]*, վտակ *[վտակ]*, վրան *[վրան]*։ *Երկուսից ավելի բաղաձայնական շարք ունենք* վ*-ից հետո միայն* վ*-ով սկսվող բառերում։*

տ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Պայթական բաղաձայններին բառասկզբում սովորաբար հաջորդում է որևէ ձայնավոր հնչյուն։ Գրության մեջ տ *բաղաձայնին բառասկզբում հաջորդում են բաղաձայնական համակարգի մի ավելորդներից շատերը։ Ունենք հետևյալ հաջորդականությունները՝* տգեղ *[տգեղ]*, տզալ *[տզալ]*, տրժալ *[տրժալ]*, տլոտ *(գվռ.) [տլօտ]*, տխուր *[տխուր]*, տկար *[տկար]*, տհաս *[տհաս]*, տձև *[տձէվ]*, տղա *[տղա]*, տմարդ *[տմարթ]*, տյար *[տյար]*, տնակ *[տնակ]*, տշել *(գվռ.) [տշէլ]*, տպել *[տպէլ]*, տռուզ *(գվռ.) [տռուզ]*, տվիշ *[տվիշ]*, տտիպ *[տտիպ]*, տրաֆվել *[տրաֆվէլ]*, տփոց *(գվռ.) [տփօց]*։

ց բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնը բառասկզբում համեմատաբար փոքրաթիվ բաղաձայնական հաջորդականություններ է կազմում։ Հնչական մակարդակում ց*-ին հաջորդում է ը ձայնավորը։ Ունենք հետևյալ կազմությունները՝* ցլամարտ *[ցլամարտ]*, ցնագ *(հին գիրք) [ցնահաք]*, ցմահ *[ցմահ]*, ցրնորք *[ցրնորք]*, ցպահանջ *[ցպահանջ]*, ցռուկ *[ցռուկ]*, ցվիր *[ցվիր]*, ցրել *[ցրէլ]*, ցցել *[ցցէլ]*, ցփրո *(գվռ.) [ցփրօ]*, ցմի *(հին.) [ցմի]*։ *Կան մի քանի այլ կազմություններ՝* ցգնել *[ցցքնէլ]*, ցխել *[ցխէլ]*, ցրկյանս *[ցրկյանս]* և *[ցրկյանցս]*։

փ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Պայթական բաղաձայնին հնչական մակարդակում բառասկզբում գրեթե միշտ հաջորդում է որևէ ձայնավոր հնչյուն։ Գրության մեջ ունենք հետևյալ հաջորդականությամբ սկսող բառեր՝ փքել *[փքէլ]*, փլավ *[փլավ]*, փխուր *[փխուր]*, փծուն *(գրք.) [փծուն]*, փղապան *[փղապան]*, փճախոս *(արևմտ.) [փճախոս]*, փյունիկ *[փյունիկ]*, փնովել *[փնօվէլ]*, փշալար *[փշալար]*, փշակ *[փշակ]*, փռել *[փռէլ]* փսուր *[փսուր]*,

փաել [փըռէլ], փցուն [փծուն] և [փըցուն], փխուն [փըքուն], փֆոց [փըֆօց]։ Փր հաջորդականությանը չի միանում ձայնավոր նշան՝ փրփուր [փըրփուր], փրկել [փըրկէլ]։

Ք բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող մի շարք բաղաձայնական կապակցություններ հնչական մակարդակում իրացվում են միջնորդավորված ը ձայնավորի միջոցով։ Ունենք հետևյալ հաջորդականությունները՝ քթամել [քըթամէլ], քլոր [քըլօր], քղանցք [քըղանցք], քմահաճ [քըմահաճ], քնար [քընար], քշել [քըշէլ], քչախոս [քըչախօս] քջուջ [քըջուջ], քոա (գվո.) [քըոա], քսակ [ըքսակ], քվորում [քըվօրում], քեռական [քըրէական] և [քրէական], քցել (խսկց.) [քըցէլ], քծու [քըծու], քյալլագյոզ (ժող.) [քյալագյօզ]։

Ֆ բաղաձայնով սկսվող կրկնակ հաջորդականություններ

Հայերենի ուշ շրջանում ձևավորված այս բաղաձայնով հիմնականում կազմվում են բնաձայնական բառեր և ուշ շրջանի փոխառություններ։ Ունենք մի քանի գործածական կապակցություններ՝ ֆլագման [ֆլագման], ֆյուռեր [ֆյուռէր], ֆլոց [ֆլօց], ֆռալ [ֆռալ], ֆսալ [ֆսալ], ֆտոր [ֆտօր] և [ֆտօր], ֆրազ [ֆրազ]։ Օտարազգի բառերում առավել տարածվածը բառասկզբական բաղաձայնական հաջորդականությունների միասնական հնչումն է։

Բառասկզբական բաղաձայնական կապակցությունների առաջին և երկրորդ տեղերում հանդես եկող տառերը հնարավորություն են տալիս պարզելու հայերենի այբուբենի այդ միավորների գործառական կապերի որոշ առանձնահատկություններ։ Այսպես՝ այբուբենի հենց առաջին բաղաձայնը Բ-ն ունի 24 հնարավոր զուգորդություն, այսինքն բացակայում են բաղաձայնական համակարգի միայն 6 միավորները՝ ց, ձ, պ, ց, փ, ֆ, տառերը։ Բաղաձայն տառերի հաջորդականությունները արտացոլող աղյուսակում պարզորոշ երևում է, որ Բ+բաղաձայն կաղապարը ամենից արդյունավետն է։ Համանման պայմաններում երկրորդ տեղում է Կ բաղաձայնը, որով կազմվում են նմանօրինակ 23 զուգորդություններ։ Մակավաթիվ միացություններ ունեն Տ և Ռ տառերը՝ համապատասխանաբար 9 և 6 զուգորդություն։ Բառասկզբում բաղաձայնական կուտակումները գրության մեջ չեն հանդիպում Ց և Ր տառերով։ Այսինքն այս բաղաձայններին հաջորդող որևէ բաղաձայնով բառեր հայերենը չունի և հնչական մակարդակում։

Բաղաձայնական բառասկզբական կապակցությունների առաջին տեղում հանդես եկող տառերի գործառական արժեքները ըստ նվազող մեծությունների կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

Բ Կ Տ Գ Լ Մ Թ Խ Ճ Դ Շ Ք Փ Մ Ջ Պ Ծ Ձ Վ Ն Ց Ղ Ժ Հ Զ Ջ Ֆ Ռ Ր Ց

Տասնյակներով ներկայացված բաղաձայնական համակարգի միավորների գործառական կապերի արժեքները ունեն հետևյալ տեսքը.

I տասնյակ 24, 23, 22(1), 22, 22, 22, 21, 21, 21, 20
II տասնյակ 19, 18(1), 18, 18, 17(13), 17, 17, 17, 16, 16
III տասնյակ 15, 13, 12, 12, 10, 10, 9, 6, 0, 0։

Փակագծերում տրվում են բառարաններում չգործածված, սակայն տեքստում հնարավոր հաջորդականությունները։ Այսպես՝ երկրորդ տասնյակի հինգերորդ տեղում հանդես եկող Զ բաղաձայնը կարող է տեսականորեն հանդիպել հայերենի բոլոր բաղաձայններից առաջ, եթե նկատի ունենանք Զ ժխտական ածանցով կազմվող բոլոր բառաձևերը, մինչդեռ բառարաններում չեն տրվում չծպտալ, չծամել տիպի կազմություններ։

Բառասկզբական բաղաձայնական հաջորդականությունների երկրորդ տեղում հանդես եկող գրույթների մեջ կան այլ կարգի առանձնահատկություններ։ Եթե Յ և Ր հնչյունները չէին կարող հանդես գալ որպես կապակցության առաջին անդամ, ապա երբ այս նույն բաղաձայնները հանդես են գալիս կապակցության երկրորդ անդամի տեղում, հենց իրենք են դառնում ամենից հաճախականները՝ յուրաքանչյուրը 27-ական դուզորդություն։ Առաջին տեղը զբաղեցնող տասնյակից իրենց ակտիվությունը պահպանում են և երկրորդ տեղի առաջին տասնյակում մնում են միայն Լ և Խ գրույթները, մինչդեռ Բ, Գ, Դ գրույթները, հայտնվում են վերջին տասնյակում։

Երկրորդ տեղում հանդես եկող բաղաձայնների գործառական արժեքները ըստ նվազող մեծությունների կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

Ն Ր Յ Ռ Լ Մ Խ Ղ Վ Տ Մ Շ Պ Զ Կ Ք Թ Ժ Հ Ճ Գ Մ Փ Ջ Ց Ֆ Բ Ջ Դ Ձ

Ըստ տասնյակների սրանք ունեն հետևյալ գործառական կապերը.

I տասնյակ՝ 28, 27, 26(1), 26, 25, 23, 22, 21, 21, 20(1),
II տասնյակ՝ 20, 18(1), 18, 17(1), 17, 16, 14, 13(1), 13(1), 13(1),
III տասնյակ՝ 13, 12(1), 11, 9(1), 8(1) 6(2), 5(1), 5, 4(1)։

ԲԱՌԱՍԿԶԲԱԿԱՆ ԵՌՅԱԿ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐ

Երեք բաղաձայնով սկսող բառերը հիմնականում բաշխվում են տարբեր վանկերի վրա։ Սրանց մեջ հանդես է գալիս վանկակարար Ր ձայնավորը։ Միայն առանձին դեպքերում երեք բաղաձայններն էլ միավորվում են մեկ

վանկի մեջ հաջորդող ձայնավորների շուրջը։ Արտասանական այս տարբերակների մասին կխոսվի առանձին բաղաձայններով սկսվող հաջորդականությունների քննության ընթացքում։

Բ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող կապակցությունների մեջ հանդես են գալիս հայերենի բաղաձայնական համակարգի միավորների կեսից ավելին։ Սրանցով կազմված հաջորդականությունների տեսակների թիվը շատ մեծ չէ։ Միայն մեկ հաջորդականության մեջ արտասանական մակարդակում ունենք միասնական արտաբերություն այդ փոխառյալ բլյումինգ [բլյումինգ], բառն է, մյուս դեպքերում պատկերը հետևյալն է. բրոնջ [բրոնջ], բզզալ [բզզալ], բզռուկ [բզռուկ], բթնակոխ [բթնակոխ], բժժած [բժժած], բլբակ [բլբակ], բլղուր [բլղուր], բրլշակնել [բրլշակնել], բլրալանջ [բլրալանջ], բխկալ [բխկալ], բխմունք [բխմունք], բկլիկ [բկլիկ], բնրել [բնրել], բղղալ [բղղալ], բղջախոճ [բղջախոճ], բնդել [բնդել], բշտել [բշտել], բշշանյութ [բշշանյութ], բռնակոթ [բռնակոթ], բռչակ [բռչակ], բռռալ [բռռալ], բվվալ [բվվալ], բտկան [բտկան], բտվել [բտվել], բրգանձ [բրգանձ], բրդել [բրդել], բռտաբառո [բռրտաբառո], բրճնել [բրճնել]։ Այս բաղաձայնով սկսվող բաղաձայնական եռյակ հաջորդականությունների տեսակների ընդհանուր թիվը 29 է։

Գ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող բաղաձայնական եռյակ հաջորդականություններից միայն գլյուկոզա [գլյուկոզա] բառում է, որ արտասանական մակարդակում պահպանվում է բառասկզբական բաղաձայնական կապակցության միավանկ արտաբերությունը, մյուս բառերում բաղաձայնները բաշխվում են տարբեր վանկերի՝ գբնակ (ժղ.) [գբբնակ] կամ [գբբջակ], գգվալի [գբգվալի], գգվել [գբգվէլ], գժռել [գբժռէլ], գժվել [գբժվէլ], գժտել [գբժտէլ], գլդոն [գբլդոն], գլբա [գբլբա], գլլալ [գբլլալ], գբլխաբառո [գբլխաբառո], գխկալ [գբխկալ], գխտալ [գբխտալ], գծծանալ [գծծանալ], գծվել [գբծվէլ], գղձիկ [գբղձիկ], գբմբեք [գբմբեք], գբմփալ [գբմփալ], գնդակ [գբնդակ], գնձիկ [գբնձիկ], գնչու [գբնչու], գբնվել [գբնվէլ], գչրակ [գբչրակ] գլել [գբլէլ], գռզի [գբռզի], գռբալ [գբռբալ], գռփալ [գբռփալ], գռռալ [գբռռալ] գռփել [գբռփէլ], գվվալ [գբվվալ], գտնել [գբտնէլ], գրբաց [գբրբաց], գրգիռ [գբրգիռ], գրկել [գբրկէլ], գտնել [գբտնէլ], գրբաց [գբրբաց], գրգիռ [գբրգիռ], գրկել [գբրկէլ], գրնակ [գբրճակ], գրչակ [գբրչակ], գրպան [գբրպան], գրվել

[գըրվէլ], գրճագետ *[գըրքագէտ]*, գցվել *[գըցվել]*։ *Այս բաղաձայնով գործառվում են շուրջ 4 տասնյակ հաջորդականություններ։*

Դ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող բոլոր բաղաձայնական կապակցությունները իրացվում են ձայնավորական հենարանով։ Բավականին կենսունակ են դժ [դըժ] ածանցով կազմված ձևերը։ Ունենք հետևյալ հաջորդականությունները՝ դդմակ *[դըմմակ]*, դղչալ *[դըղչալ]*, դզզալ *[դըզզալ]*, դզվել *[դըզվէլ]*, դժբախտ *[դըժբախտ]* դժգոհ *[դըժգոհ]*, դժժալ *[դըժժալ]*, դժխեմ *[դըժխէմ]* և *[դըշխէմ]*, դժկամ *[դըժկամ]*, դժմիտ *[դըժմիտ]*, դժնակ *[դըժնակ]*, դժպատեհ *[դըժպատէհ]*, դժվար *[դըժվար]*, դխկալ *[դըխկալ]*, դղյակ *[դըղ-յակ]* և *[դը-ղյակ]*, դմբալ *[դըմբալ]*, դմփալ *[դըմփալ]*, դնգալ *[դընգալ]*, դրնդել *[դրնդէլ]*, դնչիկ *[դընչիկ]*, դշխեմ *[դըշխէմ]*, դպրոց *[դըպրօց]*, դոլոն *(ժղ.)* *[դըլօն]*, դոկից *[դըկից]*, դումեջ *[դըմէջ]*, դռնաբաց *[դըռնաբաց]*, դռռալ *[դըռռալ]*, դսեավուր *(ժղ.)* *[դըսնավուր]*, դվվալ *[դըվվալ]*, դրդել *[դըրթէլ]*, դրժել *[դըրժէլ]*, դրկից *[դըրկից]*, դրվագ *[դըրվագ]*, դրսևորել *[դըրսէվօրէլ]*, դրտահամ *[դըրտահամ]*, դֆսուհի *[դըքսուհի]*։

Ջ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով բառասկզբում բաղաձայնական եռյակ հաջորդականությունները համեմատաբար քիչ են հանդիպում։ Ստորև ներկայացնում ենք ինչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում գործառվող բառաձևերը՝ զբնել *[զըբնէլ]*, զզվանք *[զըզվանք]* զլվել *[զըլվէլ]*, զխկում *[զըխկում]*, զկծանք *[զըկծանք]*, զկնի *[զըկընի]* և *[զկընի]*, զղջալ *[զըղջալ]*, և *[զըխլալ]*, զմբալ *[զըմբալ]*, զմռուխտ *[զըմրուխտ]*, զընգալ *[զընգալ]*, զնդան *[զընդան]*, զբննել *[զբննէլ]*, և *[զընըննէլ]*, զռլամա *[զըռլամա]*, զռռալ *[զըռռալ]*, զռփի *[զըռփի]*, զսպել *[զըսպէլ]*, զստային *[զըստային]*, զտվածք *[զըտվածք]*, զրզա *[զըրզա]*, զրպարտել *[զըրպարտէլ]*, զրկել *[զըրկել]*, զրվանդ *[զըրվանդ]*։ *Բոլոր ձևերի ընդհանուր քանակը 23 է։*

Թ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար գործուն բաղաձայնական շարքեր են կազմվում այս բաղաձայնով։ Ունենք հետևյալ կազմությունները՝ թթվածին *[թըթվածին]*, թլվատ *[թըլվատ]*, թլփատ *[թըլփատ]*, թլֆել *[թըլֆէլ]*, թխլիկ *[թըխլիկ]*, թրխկոց *[թըրխկօց]*, թխմել *[թըխմէլ]*, թխպակալ *[թըխպակալ]*, թխսել *[թըխսէլ]*, թխվել *[թըխվէլ]*, թղթախաղ *[թըղթախաղ]* և *[թըխտախաղ]*, թղլիկ *[թըղլիկ]*, թղկի *[թըղկի]* և *[թըխկի]*, թմրել *[թըմ-*

րէլ], թմբել [թըմբէլ], թմփալ [թըմփալ], թնգալ [թընգալ], թնդալ [թընդալ], թնթոց [թընթօց], թնչալ [թընչալ], թնջանք [թընջանք], թշնամի [թըշնամի], թշշալ [թըշշալ], թշվառ [թըշվառ], թղպա [թըղպա], թռնոցի [թըռնօցի], թռչել [թըռչէլ], թռռալ [թըռռալ], թսկել [թըսկէլ], թսսալ [թըսսալ] թսաեն [թըսաէնի], թրթիռ [թըրթիռ], թրկապ [թըրկապ], թրմել [թըրմէլ], թրջել [թըրջէլ], թրվել [թըրվէլ], թրփալ [թըրփալ], թրֆաբան [թըրֆաբան], թփչոր [թըփչօր], թփպալ [թըփպալ], թֆենի [թըֆնէլ], թֆվել [թըֆվել]: Բոլոր ձևերի ընդհանուր քանակը 42 է: Ոչ մի հայկական գրային հաջորդականություն հանդես չի գալիս մեկ վանկում: Փակագծերում տրվող կրկնակ ձևերը արտասանական տարբերակներ են:

ժ բաղաձայնով սկսվող հայկական հաջորդականություններ

Հայերենում մի քանի բառեր են, որ սկսում են ժ+կրկնակ բաղաձայն շարքով: Դրանք են՝ ժժխել կամ ժշխել [ժըժխէլ] և [ժըշխէլ], ժժմունք [ժըժմունք], ժլտուկ կամ ժռտուկ [ժըլտուկ], [ժըրտուկ], ժխտական [ժըխտական], ժնգալ [ժընգալ], ժպտագեղ [ժըպտագէղ]: Ընդամենը 6 տեսակ կազմություն:

լ բաղաձայնով սկսվող հայկական հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող հայկական բաղաձայնական հաջորդականությունները կենդանի խոսքում իրացվում են ը ձայնավորի միջնորդությամբ: Գրության մեջ ունենք հետևյալ կարգերի բառաձևեր՝ լդրանոց *[լըդրանոց]*, լկել *[լըկէլ]*, լխկալ *[լըխկալ]*, լխպիկ *(գվո.) [լըխպիկ]*, լխտիկ *(գվո) [լըխտիկ]*, լծկան *[լըծկան]*, լծնափախ *(ժղ) [լըծնափախ]*, լկտի *[լըկտի]*, լղպոր *(ժղ.) [լըղպօր]*, լմկել *(գվո.) [լըմկէլ]*, լմվել *[լըմվէլ]*, լմփոշ *[լըմփօշ]*, լնգալ *(ժղ.) [լընգալ]*, լնդերք *[լընդէրք]*, լպռտալ *[լըռպօտ]*, լռվել *[լըռվէլ]*, լսնիկ *[լըսնիկ]*, լսվել *[լըսվէլ]*, լտտենի *[լըտտէնի]*, լրբենի *[լըրբէնի]* և *[լըրփէնի]*, լրթենի *[լըրթէնի]*, լրջորեն *[լըրջօրէն]*, լռաես *[լըռտէս]*, լցնել *[լըցնէլ]*, լցվածք *[լըցվածք]*, լֆյալ *[լըֆյալ]*: Կազմությունների ընդհանուր թիվը 26 է:*

խ բաղաձայնով սկսվող հայկական հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմվում են համեմատաբար մեծաթիվ հայկական հաջորդականություններով սկսող բառաձևեր՝ խզզոց *[խըզզոց]*, խզվել *[խըզվէլ]*, խժժալ *[խըժժալ]*, խժռել *[խըժռէլ]*, և *[խըժռէլ]*, խլյակ *[խըլյակ]*, խլշել *[խըլշէլ]*, խլվել *[խըլվէլ]*, խխմել *[խըխ-*

մէլ], խխվել [խըխվէլ], խծբ [խըծբըբ], խծպել [խըծպէլ], խըղայթ (հն.) [խըղայթ], խղճալ [խըղճալ], խճճել [խըճըճէլ], և [խըճըճել], խճյա [խըճյա], խրճվածք [խըճվածք], խմբագիր [խըմբագիր], խմվել [խըմվէլ], խմոխոռտ [խըմրախօտ], խնդալ [խընդալ], խնծիղ [խընծիղ], խնկել [խընկէլ], խրճնոր [խրնձօր], խնջույք [խընջույք], խնչել [խընչէլ], խշկել (գվռ.) [խըշկէլ], խշշալ [խըշշալ], խշտալ [խըշտալ], խշրել [խըշրէլ], խշմար (ժղ) [խըշմար], խպլիկ (գվռ.) [խըպլիկ] և [խըպըլիկ], խպճել (արևմտ.) [խըպնէլ], խոթալ [խըթալ], խոկել (ժղ) [խըռկէլ], խոճել [խըռնէլ], խոչակ [խըռչակ], խոպոտ [խըռպօտ], խոռոց [խըռռօց], խովակ [խըռվակ], խոփալ [խըռփալ], խոֆել (ժղ) [խըռֆէլ], խստաբարո [խըստաբարօ], խտվածք [խըտվածք], խտտել [խըտտէլ] և [խըտըտէլ], խտռություն [խըտռություն], խրբոնկ [խըրբոնկ], խրթին [խըրթին], խրխինջ [խըրխինջ], խրծիկ (գվռ.) [խըրծիկ], խրկել (արևմտ) [խըրկէլ], խրձակ [խըրցակ], խրճիթ [խըրճիթ], խրվել [խըրվէլ], խրցնել [խըցնէլ], խցվել [խըցվէլ], խրփկալ (ժղ) [խըփկալ], խփվել [խըփվէլ]։ *Խ-ով սկսող բառաձևերը ներկայանում են 57 կազմությամբ։ Բաղաձայնական շարքի երկրորդ անդամի տեղում հանդես են գալիս համակարգի անդամների կեսից ավելին։*

Մ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Հայերենի բաղաձայնական համակարգի մոտ մեկ երրորդը կարող է հաջորդել այս բաղաձայնին բառասկզբում կազմելով եոյակ հաջորդականություններ՝ ծրոել [ծրթռէլ], ծլթալ [ծրլթալ], ծլլալ [ծրլլալ], ծլկել [ծրլկէլ] ծխնելույզ [ծրխնէլույզ], ծխոր [ծրխօր], ծխվել [ծրխվէլ], ծծկալ [ծրծկալ], ծծմայր [ծրծմայր], ծծվել [ծրծվէլ], ծծքել (գվռ.) [ծրծքէլ], ծկթել [ծրկթէլ], ծկլել [ծրկլէլ] ծղծամ [ծրղծամ], ծղնոտաբույր [ծրղնօտաբույր], ծղրիդ [ծրղրիդ], ծմռուկ [ծրմրուկ], ծնգալ [ծրնգալ], ծնծուղոտ [ծրնծուղօտ], ծնկակալ [ծրնկակալ], ծնյալ [ծրնյալ], ծնվել [ծրնվէլ], ծնրադիր [ծրնրադիր], ծպպացնել [ծրպպացնէլ], ծպտել [ծրպտէլ], ծռլանգ (ժղ) [ծրռլանգ], ծոծուկ (գվռ.) [ծրոծուկ], ծոմիտ [ծրոմիտ], ծռվել [ծրռվէլ], ծվվալ [ծրվվալ] ծռվել [ծրրվէլ], ծռտել [ծրրտէլ], ծփյուն [ծրփյուն]։ *Այստեղ ներկայացվում են 33 կազմություն։*

Կ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Բառասկզբում բաղաձայնական գրույթների առավել հաճախական շարքեր կազմող բաղաձայններից է։ Բաղաձայնական համակարգի մոտ

երկու երրորդը հաջորդում է կ բաղաձայնին՝ կգճաճ (գվռ.) [կրգճան], կզվել [կրզվէլ], կթթալ (գվռ.) [կրթթալ], կթղա (գվռ.) [կրթղա] և [կրթխա], կթյուն [կրթյուն], կթնել (գվռ.) [կրթնէլ], կթվել [կրթվէլ], կըղիկ (գվռ.) [կրղուիկ], կլթիկ (գվռ.) [կրլթիկ], կլլել (արևմտ). [կրլլէլ], կլյոշ [կրլյոշ] և [կրլյօշ], կլպել [կրլպէլ], կխթալ (գվռ.) [կրխթալ], կխճորել (գվռ.) [կրխճօրէլ], կխտար (ժղ) [կրխտար], կծծի [կրծծի], կծկել [կրծկէլ], կծղել [կրծղէլ], կծմախոտ [կրծմախօտ], կծված [կրծված], կկզել [կրկզէլ], կկչել [կրկչէլ], կղբազգի [կրղբազգի], կղզի [կրղզի], կղկաք (հն) [կրղկաք], կղղալ [կրղղալ], կղմինդր [կրղմինդր], կղվել (հզվդ) [կրղվէլ], կճղակ [կրճղակ], կճճագործ [կրճճագործ], կճյա [կրճյա], կճպել [կրճպէլ], և [կրչպէլ], կճվել [կրճվէլ], կճռել [կրճռէլ], կմբել (հզվդ) [կրմբէլ], կմկաճառ (գվռ.) [կրմկահառ], կճգուղ [կրնգուղ], կճդել (ժղ) [կրնդէլ], կճկատեր [կրնկատէր], կճճիկ [կրնճիկ], կճճառուկ [կրնճառուկ], կճյազ [կնյազ] և [կրնյազ], կճչել [կրնչէլ], կճջեռ [կրնջէռ], կճճել [կրնքէլ], կշկոտ (ժղ) [կրշկոտ], կշռել [կրշռէլ], կշտամբել [կրշտամբել], կպչել [կրպչէլ], կոթալ [կրոթալ], կոկել (գվռ.) [կրոկէլ], կոճակ [կրոնակ], կոռալ [կրոռալ], կովել [կրովէլ], կոփահար (արևմտ) [կրոփահար], կսկիծ [կրսկիծ], կսմիթ [կրսմիթ], կվվալ [կրվվալ], կտղուցք [կրտղուցք], կտճել [կրտնէլ], կտրվածք [կրտրվածք], կտտել [կրտտէլ], կտրել [կրտրէլ], կցահար [կրցահար] կրթել [կրրթէլ], կրծել [կրրծէլ], կրկին [կրրկին], կրճատ [կրրճատ], կրմոտ [կրրմոտ], կրպակ [կրրպակ], կրվել [կրրվէլ], կրտել [կրրտէլ], կրfոտ [կրրfom], կցվածք [կրցվածք], կցրել [կրցրէլ], կfվածք [կրքվածք]։ Այս բաղաձայնով սկսում են հայերենի 76 եոյակ բաղաձայնական հաջորդականություններ, ընդ որում սրանցից երկուսը՝ կլյոշ, կնյազ կարող են արտասանվել առանց ձայնավորական հնչարանի։

Հ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Բառասկզբում ճ–ն թույլ բաղաձայն չէ և նրանով սկսվում են բաղաձայնական շարքով սկսող մի շարք բառեր՝ ճծծել [հրծծէլ], ճղրել [հրղրէլ], ճղկել [հրղկէլ], ճղվել [հրղվէլ], ճղփանալ [հրղփանալ], ճմռանալ [հրմռանալ], ճնգամյակ [հրնգամյակ], ճնդիկ [հրնդիկ], ճնկեկ (արևմտ.) [հրնկէկ], ճննաճ [հրննաճ], ճննաfք (գվռ.) [հրննաfք], ճնչակ [հրնչակ], ճպվել [հրպվէլ], ճռչակ [հրռչակ], ճսկա [հրսկա], ճսռակ [հրսռակ], ճտպիտ [հրտպիտ], ճրդեճ [հրրդէճ], ճրթիռ [հրրթիռ], ճրկիզել [հրրկիզէլ], ճրծիգ [հրրծիգ], ճրշնջ [հրրշէջ], ճրվել [հրրվէլ]։ Գրային եոյակ բաղաձայնական շարքով կան 23 կազմություններ։

Ձ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Համեմատաբար սակավաթիվ են ձ բաղաձայնով սկսող բաղաձայնական շարքերով ձևավորվող բառերը՝ ձգվել *[ձըքվէլ]*, ձգտել *[ձըքտէլ]*, *[ձըղկի]*, ձեծաղիկ *[ձընծաղիկ]*, ձեկալ *[ձընկալ]*, ձեհալ *[ձընհալ]*, ձեձեղ *[ձըղկի]*, ձեծաղիկ *[ձընծաղիկ]*, ձեկալ *[ձընկալ]*, ձեհալ *[ձընհալ]*, ձեձեղ *(ժդ.) [ձընձէղ]*, ձվջուր *(գվռ.) [ձըվջուր]*: *Կազմությունների ընդհանուր թիվը 11 է:*

Ղ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող և շարք կազմող բառաձևերը հիմնականում բարբառային կամ ժողովրդախոսակցական ոլորտին պատկանող բառեր են՝ ղժժալ *[ղըժժալ]*, ղլուխ *[ղըլուխ]*, ղմշել *[ղըմշէլ]*, ղնջալ *[ղընջալ]*, ղշլաղ *[ղըշլաղ]* ղպտի *[ղըպտի]*, ղռռալ *[ղըռռալ]*, ղսմաք *[ղըսմաք]*, ղրճալ *[ղըրճալ]*, ղրփել *[ղըրփէլ]*: *Կան 10 կազմություններ:*

Ճ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Բաղաձայնական համակարգի անդամների կեսից ավելին կարող են հաջորդել այս բաղաձայնին բառասկզբում և կազմել բաղաձայնական շարքերով սկսող բառաձևեր՝ ճգնել *[ճըքնէլ]*, ճզմել *[ճըզմէլ]*, ճզռալ *[ճըզռալ]*, ճթթալ *[ճըթթալ]*, ճթռել *[ճըթռէլ]*, ճլթալ *[ճըլթալ]*, ճլխել *(ժդ.) [ճըլխէլ]*, ճխլել *[ճըխլէլ]*, ճխտել *[ճըխտէլ]*, ճկճակ *(գվռ.) [ճըկնակ]*, ճկռել *[ճըկռէլ]*, ճղլակ *[ճըղլակ]*, ճղղալ *[ճըղղալ]*, ճղճիմ *[ճըղճիմ]*, ճղվել *[ճըղվէլ]*, ճղփալ *[ճըղփալ]*, ճմլիչ *[ճըմլիչ]*, ճմկիթ *[ճըմկիթ]*, ճմռել *[ճըմռէլ]*, ճմվել *[ճըմվէլ]*, ճնգալ *[ճընգալ]*, ճնշում *[ճընշում]*, ճշմարիտ *[ճըշմարիտ]*, ճշտապահ *[ճըշտապահ]*, ճչյուն *[ճըչյուն]*, ճպռոտ *[ճըպռոտ]*, ճռգել *[ճըռգէլ]*, ճռթալ *[ճըռթալ]*, ճռնիկ *[ճըռնիկ]*, ճռռալ *[ճըռռալ]*, ճռվողյուն *[ճըռվողյուն]*, ճսմալ *[ճըսմալ]*, ճտհավոր *[ճըտքավոր]*, ճռռել *[ճըրրէլ]*, ճֆֆալ *[ճըքքալ]*: *Այստեղ ներկայացվել են 35 կազմություններ:*

Մ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնը նույնպես համեմատաբար կենսունակ է բառասկզբում բաղաձայնական հաջորդականություններով բառաձևեր կազմելու մեջ՝ մգլել *[մըգլէլ]*, մզդուր *(գվռ.) [մըզդուր]*, մզզալ *[մըզզալ]*, մըզկիր մզմուզ *(գվռ.) [մըզմուզ]*, մզվածք *[մըզվածք]*, մքնադեմ *[մըքնադէմ]*, մծղուկ *[մըծղուկ]*, մլքոճերեն *[մըլքոճէրէն]*, մլլալ *(ժդ.) [մըլլալ]*, մխլու *[մըխլու]*, մխկել *(գվռ.) [մըխկէլ]*, մխվել *[մըխվէլ]*, մծրել *(գվռ.)*

[մբծրէլ], մկդակ *[մբկդակ]*, մկկալ *[մբկբկալ]*, մկնազգի *[մբկնազգի]*, մկրատ *[մբկրատ]*, մղլակ *[մբղլակ]*, մղվել *[մբղվէլ]*, մճճել *(ժդ.)* *[մբճճէլ]*, մնչալ *[մբնչալ]*, մնջախաղ *[մբնջախաղ]*, մշկենի *[մբշկէնի]*, մշրել *[մբշրէլ]*, մռռալ *[մբռռալ]*, մսխալ *[մբսխալ]*, մտճել *[մբտնէլ]*, մտրակ *[մբտրակ]*, մտրով *[մբտքօվ]*, մրգաբեր *[մբրգաբէր]*, մրկել *[մբրկէլ]*, մրճիկ *[մբրճիկ]*, մրմունջ *[մբրմունջ]*, մրջուր *(ժղ)* *[մբրջուր]*, մրսել *[մբրսէլ]*, մրվանոտակ *[մբրվանոտակ]*, մրտճել *[մբրտէնի]*, մրրիկ *[մբրրիկ]*, մրցաբեմ *[մբրցաբէմ]*։ *Կազմություններով ընդհանուր թիվը 40 է։*

Ն բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կան սակավաթիվ բառաձևեր՝ եժդեհ *[նրժդէհ]*, և *[նըժդէ]*, եկեռասական *[նրկնահասակ]*, ենջել *[նընջէլ]*, եղդարեհի *[նըշդարէնի]*, եշխար *[նըշխար]*, եշկաբորբ *[նըշկաբօրբ]*, եշմարել *[նըշմարէլ]*, եշտար *[նըշտար]*, եռճաբար *[նըռնաքար]*, եստել *[նըստէլ]*, եվվալ *[նըվվալ]*, երբիճ *[նըրբին]*։ *Ընդամենը 12 կազմություն։*

Շ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Օտարազգի մի քանի փոխառություններում այս բաղաձայնով սկսող բառասկզբական հաջորդականությունները ունեն միասնական միավանկ արտասանություն՝ շպրից *[շպրից]*, շտեյկբրեխեր *[շտէյկբրեխէր]*, շլյախտա *[շլյախտա]*։ *Այլ դեպքերում պահպանվում են հայերենին բնորոշ ը ձայնավորով կազմությունները՝* շղիկ *[շըղիկ]*, շլմոր *[շըլմօր]*, շխկալ *[շըխկալ]*, շղթա *[շըղթա]*, շմփալ *[շըմփալ]*, շնդեղ *[շընդէղ]*, շնկեր *[շընկէր]*, շնչել *[շընչէլ]*, շնպաճ *[շընպահ]*, շշմած *[շըշմած]*, շշյուն *[շըշյուն]*, շպպալ *[շըպպալ]*, շռռալ *[շըռռալ]*, շտկել *[շըտկէլ]*, շրդան *(գվռ.)* *[շըրդան]*, շրթեզր *[շըրթէղըր]*, շրշալ *[շըրշալ]*, շրջան *[շըրջան]*, շրվան *[շըրվան]*, շփվել *[շըփվէլ]*, շփփալ *[շըփփալ]*, շռռել *[շըռռէլ]*, շվվել *[շըվվէլ]*։ *Կան 26 կազմություններ։*

Չ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հաջորդականությունների թիվը անհամեմատ կմեծանա, եթե մենք հաշվի առնենք չ ժխտական ածանցով կազմությունները, որոնք բառարանում տեղ չեն գտել։ Ստորև ներկայացնում ենք բառարաններում գրանցված ձևերը՝ չբխել *(գվռ.)* *[չբրխէլ]*, չբթալ *[չբթթալ]*, չբյա *[չբթյա]*, չբվոր *[չբթվօր]*, չլբուր *[չլբուր]*, չվարի *(գվռ.)* *[չլվարի]*, չխկալ *[չլխկալ]*, չղջիկ *[չլղջիկ]*, և *[չլխչիկ]*, չմշակեր

[չմշակէր], չմպալ *[չմպալ]*, չմփալ *[չմփալ]*, չմֆել *[չմֆել]*, չնչին *[չընչին]*, չպլախ *(գվռ.)* *[չպլախ]*, չպպալ *[չպպալ]*, չորթել *[չրթել]*, չոչրո *[չրոչրո]*, չռռալ *[չռռալ]*, չռվել *[չրռվէլ]*, չռփել *(գվռ.)* *[չրռփէլ]*, չսթիկ *[չրսթիկ]*, չրթալ *[չրրթալ]*, չփխի *(գվ.)* *[չրփխի]*, չփլախ *(գվռ.)* *[չրփլախ]*, չփփալ *[չրփփալ]*, չմմեղ *[չրքմեղ]*, չճեղալ *[չրքնաղ]*, չմվել *[չրքվէլ]*։ *Կան 28 կազմութիւններ։*

Պ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականութիւններ

Բաղաձայնական համակարգի անդամներից մեկ երրորդի հետ պ բաղաձայնը կազմում է զուգորդութիւններ, եոյակ հաջորդականութիւնների մեջ՝ պզզալ *[պըզզալ]*, պժգալ *[պըժգալ]*, պլզել *(ժղ.)* *[պըլզէլ]*, պլթալ *(ժղ.)* *[պըլթալ]*, պլլել *[պըլլէլ]*, պլկան *(գվռ.)* *[պըլկան]*, պլյուս *[պլյուս]*, պլշացնել *[պըլշացնէլ]*, պլտալ *[պըլտալ]*, պղլորակ *(գվռ.)* *[պըղլօրակ]*, պղծել *[պըղծէլ]*, պղտոր *[պղտօր]*, պճղել *(ժղ.)* *[պըճղէլ]*, պճճաբեռ *[պըճճաբէռ]*, պճռել *(խոնց.)* *[պըճռէլ]*, պճդել *[պընդէլ]*, պճչատ *[պընչատ]*, պշկել *[պըշկէլ]*, պշճել *[պըշնէլ]*, պշվել *[պըշվէլ]* պչրանք *[պըչրանք]*, պպզել *[պըպզէլ]*, պռճոկել *[պըռճոկէլ]*, պտկել *(ժղ.)* *[պըտկէլ]*, պտղաբեր *[պըտղաբէր]*, պտռել *[պըտռէլ]*, պտտանձ *[պըտտանձէվ]*, պտրել *(հնց.)* *[պըտրէլ]*, պրդոճք *[պըրդօնք]*, պրծացնել *[պըրծացնէլ]*, պրկել *[պըրկէլ]*, պրտել *(ժղ.)* *[պըրտէլ]*։ *Ընդամենը 33 կազմութիւն։*

Ջ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականութիւններ

Այս բաղաձայնը համեմատաբար սակավաթիվ հաջորդականութիւններ է կազմում բաղաձայնական համակարգի անդամների հետ՝ բացառութիւամբ ջուր բաղադրիչով կազմված բարդութիւնների՝ ջզրացնել *(գվռ.)* *[ջըգրացնէլ]*, ջլբաց *(գվռ.)* *[ջըլբաց]*, ջլբիկ *(գվռ.)* *[ջըլթիկ]*, ջխտել *(գվռ.)* *[ջըխտէլ]*, ջնդա *(գվռ.)* *[ջընդա]*, ջնջել *[ջընջէլ]*, ջռբել *[ջըռփէլ]*, ջրբաժան *[ջըրբաժան]*, ջրգող *[ջըրգօղ]*, ջրդեղել *[ջըրդէղէլ]*, ջրթափ *[ջըրթափ]*, ջրլից *[ջըրլից]*, ջրխմիկ *[ջըրխըմիկ]*, ջրծաղիկ *[ջըրծաղիկ]*, ջրկիր *[ջըրկիր]*, ջրհան *[ջըրհան]*, ջրմուղ *[ջըրմուղ]*, ջրշեջ *[ջըրշէջ]*, ջրչափ *[ջըրչափ]*, ջրպան *[ջըրպան]*, ջրսուզակ *[ջըրսուզակ]*, ջրվեժ *[ջըրվէժ]*, ջրտար *[ջըրտար]*, ջրցան *[ջըրցան]*, ջրվախ *[ջըրվախ]*, ջրխամ *[ջըրքամ]*։ *Ընդամենը 26 կազմութիւն։*

Ռ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականութիւններ

Բառասկզբում այս բաղաձայնով հաղվադեպ կարելի է հանդիպել բաղաձայնական շարքերով սկսող բառերի։ Ունենք ընդամենը 3 դեպք՝

ումբակոծել [ումբակօծէլ], ոճգակալ [ոնդակալ] և ոճտալ (գվո.) [ոնտալ]։

Ս բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Բաղաձայնական համակարգի միավորների շուրջ կեսը կարող են հաջորդել Ս բաղաձայնին բառասկզբում կազմելով բաղաձայնական հաջորդականություններ՝ սգվոր [սըգվօր], սգնեցի [սըգնէցի], սլվել [սըլվէլ], սխկել [սըխկել], սխտոր [սըխտօր], սխրալի [սըխրալի], սկլիկ [սըկլիկ], սկյուռ [սկյուռ], [ըսկյուռ], սկսել [սկըսէլ], [ըսկըսէլ], սկվել [սըկվէլ], սղլուր (ժղ.) [սըղլուր], սղղալ [սըղղալ], սղնակ [սըղնակ], սղվել [սըղվէլ], սմբակ [սըմբակ], սմպատակ [սըմպատակ], սմմել [սըմքէլ], սնգույր [սընգույր], սնդիկ [սընդիկ], սնկաբան [սընկաբան], սնձան [սընձան], սոճի [սըռնի], սոսուռ (ժղ.) [սըռսուռ], սսկել [սըսկէլ], սվլիկ (գվո.) [սըվլիկ], ստյուարդ [ստյուարդ], ստնավոր (հնց.) [սըտնավօր], ստվար [ստվար], [ըստվար], ստրատեգ [ստրատէգ], [ըստրատէգ], սրբել [սըրփէլ], սրդող [սըրդօղ], սրծել [սըրծէլ], սրճաման [սըրճաման], սրվակ [սըրվակ], սրտաբաց [սըրտաբաց], սրփիչ [սըրփիչ], սփռոտ [սփյուռ], [ըսփյուռ], սփռիչ [սըփռիչ], սքլել [սըքլէլ] (գվո.)։

Մի շարք կազմություններում հնարավոր են արտասանական մակարդակում բաղաձայնական բառասկզբական շարքերի միասնական մեկ վանկային գործածություններ՝ սկյուռ, ստյուարդ, ստվար, ստրատեգ, սփյուռ։

Ս բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններով կան 39 կազմություններ։

Վ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող կազմությունները երկու տասնյակ են՝ վզգալ [վըզգալ], վզկապ [վըզկապ], [վըսկապ], վզնոց [վըզնօց], վզոյատ [վըզոյատ], վզտակ [վըզտակ], վզռուկ [վըզռուկ], վժժալ [վըժժալ], վխտալ [վըխտալ], վճռաբեկ [վըճռաբէկ], վնգալ [վընգալ], վշյա [վըշյա], վշշալ [վըշշալ], վշտանալ [վըշտանալ], վոթալ [վըոթալ], վոչալ (ժղ.) [վըոչալ], վովել (ժղ.) [վըովէլ], վսսալ [վըսսալ], վստահ [վըստահ], վռնին [վըռնին], [վըրնին], վրմաշի (ժղ.) [վըրմաշի]։

Տ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմվում են համեմատաբար գործուն բառաձևվեր՝ **տզզալ** *[տըզզալ]*, **տզրուկ** *[տըզրուկ]*, **տժժալ** *[տըժժալ]*, **տխմար** *[տըխմար]*, **տխպել** *[տըխպէլ]*, **տխրել** *[տըխրէլ]*, **տկզել** *[տըկզէլ]*, **տկլոր** *[տըկլօր]*, **տկճոր** *[տըկճօր]*, **տկռել** *[տըկռէլ]*, **տկտի** *[տըկտի]*, **տղզել** *(գվռ.)* *[տըղզէլ]*, **տղլափ** *(գվռ.)* *[տըղլափ]*, **տրղմուտ** *[տըղմուտ]*, **տղպոտ** *[տըղպօտ]*, **տճկել** *[տըճկէլ]*, **տմբալ** *[տըմբալ]*, **տմկել** *(գվռ.)* *[տըմկէլ]*, **տմպել** *[տըմպէլ]*, **տմրակ** *[տըմրակ]*, **տնգորալ** *(գվռ.)* *[տընգօրալ]*, **տնգոհանչ** *(կտկ.)* *[տընգօհանչ]*, **տնկարան** *[տընկարան]*, **տնպահ** *[տընպահ]*, **տնվոր** *[տընվօր]*, **տնտես** *[տընտէս]*, **տնփեսա** *[տընփէսա]*, **տնքալ** *[տընքալ]*, **տպվել** *[տըպվէլ]*, **տռզել** *[տըռզէլ]*, **տռփալ** *[տըռփալ]*, **տվյալ** *[տըվյալ]*, **տվչություն** *[տըվչություն]*, **տտնավոր** *[տըտնավօր]*, **տտպել** *(հզվդ.)* *[տըտպէլ]*, **տրմուղ** *(գվռ.)* *[տըրմուղ]*, **տրյուֆել** *[տրյուֆէլ]*, **տրվել** *[տըրվէլ]*, **տրտինգ** *[տըրտինգ]*, **տրցակ** *[տըրցակ]*, **տրփալ** *[տըրփալ]*, **տֆնել** *[տըֆնէլ]*։ *Միայն* **տրյուֆել** *բառում ունենք բաղաձայնների հաջորդականության մեկվանկանի արտաբերություն։ Ընդամենը կան 42 կազմություններ։*

Ց բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով բառասկզբում համեմատաբար ոչ մեծ թիվ են կազմում եռյակ հաջորդականություններով սկսվող բառաձևերը՝ **ցգրություն** *[ցըգրություն]*, **ցղկյանս** *[ցըղկյանս]*, **ցմրուր** *[ցըմրուր]*, **ցմփոր** *[ցըմփօր]*, **ցնդած** *[ցընդած]*, **ցնծալ** *[ցընծալ]*, **ցնցել** *[ցընցէլ]*, **ցնքեռ** *(գվռ.)* *[ցընքէռ]*, **ցոդենի** *[ցըոդէնի]*, **ցռվել** *[ցըռվէլ]*, **ցռաարեր** *[ցըռաարէր]*, **ցրցամել** *[ցըրցամէլ]*, **ցցվել** *[ցըցվէլ]*, **ցփնել** *[ցըփնէլ]*, **ցփսի** *[ցըփսի]*։ *Այս բաղաձայնով սկսվող հաջորդականությունների իրացումը կատարվում է Ը ձայնավորի մասնակցությամբ, իսկ Ց ձևույթով սկսվող բառերի արտաբերությունը երբեմն բաժանվում է երկու մասի* **[ցը]** *(կյանքս)* *դադարի միջոցով՝ ընդգծելով նրանց իմաստային սահմանները։ Այստեղ ներկայացված են 15 կազմություններ։*

Փ բաղաձայնով սկսվող եռյակ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կան համեմատաբար ավելի շատ կազմություններ՝ **փքթել** *[փըքթէլ]*, **փքռակ** *[փըքռակ]*, **փքրաղ** *[փըքրաղ]*, **փլշել** *[փըլշէլ]*, **փլվել** *[փըլվէլ]*, **փրխել** *[փըրխէլ]*, **փխկալ** *[փըխկալ]*, **փրխտանալ** *[փըրխտանալ]*, **փխրուն** *[փըխրուն]*, **փծնի** *(գվռ.)* *[փըծնի]*, **խրմփուս** *(գվռ.)* *[փըրմփուս]*, **փնթի** *[փընթի]*, **փնչալ** *[փընչալ]*, **փնջել**

[փընջէլ], փշկել *(ժդ.)* *[փըշկէլ]*, փշյա *[փըշյա]*, փշտոց *[փըշտօց]*, փշրել *[փըշրէլ]*, փշվել *[փըշվէլ]*, փոյուգերեն *[փոյուգէրէն]*, *[փըոյուդէրէն]*, փռնավել *(ժդ.)* *[փըռնավէլ]*, փռոց *[փըռոօց]* փռվել *[փըռվէլ]*, փսլինք *[փըսլինք]*, փսխել *[փըսխէլ]*, փսսոց *[փըսսօց]*, փրստացնել *[փըստացնէլ]*, փտենել *(գվո.)* *[փըտնէլ]*, փտվածք *[փըտվածք]*, փրթել *[փըրթէլ]*, փրկել *[փըրկէլ]*, փրչոտ *[փըրչօտ]*, փրփուր *[փըրփուր]*, փվվել *[փըվվէլ]*, փֆֆալ *[փըֆֆալ]*։ *Միայն փոյուգերեն բառը կարող է ունենալ բառասկզբային բաղաձայնական շարքի միավանկ արտաբերություն։ Կան 35 կազմություններ։*

Ք բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Շուրջ մեկ տասնյակ բաղաձայններ կարող են հաջորդել բառասկզբում Ք բաղաձայնին կազմելով հաջորդականություններ քթել *[քըթէլ]*, քթկալ *[քըթկալ]*, քթվել *[քըթվէլ]*, քլթոց *[քըլթօց]*, քծծել *[քըծծէլ]*, քմշոտ *[քըմշօտ]*, քնքուշ *(գվո.)* *[քընքուշ]*, քնկոտ *[քընկօտ]*, քնձոտ *(գվո.)* *[քընձօտ]*, քննադատ *[քըննադատ]*, քնջուք *[քընջուք]*, քնփուշ *[քընփուշ]* *(հնց)*, քնքուշ *[քընքուշ]*, քշշա *[քըշշա]*, քշվել *[քըշվէլ]*, քշտել *[քըշտէլ]*, քչվոր *[քըչվօր]*, քչփորել *[քըչփորէլ]*, քչչել *[քըչչէլ]*, քռթել *(գվո.)* *[քըռթէլ]*, քռչոտ *[քըռչօտ]*, քսպաբլիթ *[քըսպաբլիթ]*, քսվել *[քըսվէլ]*, քստիկ *[քըստիկ]*, քրդեր *[քըրդէր]*, քրծեն *[քըրծէն]*, քրձեղեն *[քըրձէղէն]*, քրմական *[քըրմական]*, քրչիկ *[քըրչիկ]*, քրջոտ *[քըրջօտ]*, քրտինք *[քըրտինք]*, քրքիջ *[քըրքիջ]*։ *Կազմությունների ընդհանուր թիվը 32 է։*

Ֆ բաղաձայնով սկսվող եոյակ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար քիչ գործածական բաղաձայններից է։ Մի քանի բառերում կան եոյակ շարքով սկսվող բառեր՝ ֆշշալ *[ֆըշշալ]*, ֆշտալ *[ֆըշտալ]*, ֆռռալ *[ֆըռռալ]*, ֆլյուս *[ֆլյուս]*, ֆրթալ *[ֆըրթալ]*, ֆշշալ *[ֆըշշալ]*, ֆսսալ *[ֆըսսալ]*։ *Բացառությամբ ֆլյուս բառի, որտեղ գործառվում է բաղաձայնական եոյակ շարքի միավանկ հնչումը, մնացած բոլոր բառերը բնաձայնական բնույթի են։ Կազմությունների ընդհանուր թիվը 7 է։*

Եթե համեմատելու լինենք բառասկզբական կրկնակ բաղաձայններ պարունակող կապակցությունների առաջին տեղում հանդես եկող բաղաձայն գրույթների առաջին տասնյակը եոյակ շարք կազմող բաղաձայնների առաջին տասնյակի հետ, ապա կստանանք հետևյալ առանձնահատկությունը. մինչև երեք բաղաձայնով սահմանափակվող բաղաձայնական տառակապակցությունների առաջին տասնյակում իրենց գործառական

արժեքները պահպանում են 7 տառ (Բ, Կ, Խ, Մ, Տ, Գ, Ճ), երեք տառ (Բ, Լ, Դ,) անցնում են հաջորդ տասնյակ, որոնց տեղը զբաղեցնում են Ջ, Փ, Ծ տառերը, ընդ որում Ջ-ն կրկնակի ընդլայնել է իր գործառական հնարավորությունները՝ կրկնակ բաղաձայնների երրորդ տասնյակից բարձրանալով առաջին տասնյակ։

Երեք բաղաձայնով սկսվող բառերի առաջին տառերը ըստ գործառական կապերի արժեքների ունեն հետևյալ շարքերը.

I տասնյակ՝ Բ, Կ, Խ, Մ, Տ, Գ, Ջ, Փ, Ճ, Ծ
II տասնյակ Մ, Պ, Լ, Դ, Շ, Ք, Բ, Զ, Հ, Ղ
III տասնյակ՝ Վ, Յ, Ղ, Զ, Ն, Ֆ, Ժ, Ռ, Յ, Ր

Սրանք ունեն հետևյալ քանակային մեծությունները՝

I տասնյակ՝ 26, 25, 24, 23, 23, 21, 21, 21, 20
II տասնյակ՝ 20, 20, 19, 18, 18, 18, 17, 17, 17, 16
III տասնյակ՝ 16, 15, 14, 11, 10, 8, 7, 3, 0, 0

Սովորաբար լեզվում, որքան ավելանում են բաղաձայնական հաջորդականությունները, այնքան ավելի պակասում են բաղաձայնների գործառական կապերն ու սրանց տեսակները։ Սակայն երկու բաղաձայնով սկսող կապակցությունների գործառական տեսակների և երեք բաղաձայնով սկսող շարքի առաջին տեղում հանդես եկող բաղաձայնների գործառական տեսակների ու կապերի հարաբերությունը ցույց է տալիս, որ հայերենում այդ կապերն ավելի շատ արտահայտվում են եռյակ բաղաձայնական շարքում։ Սրանց քանակը երկբաղաձայն կապակցության մեջ, եթե հաշվի չառնենք տարբերակային ձևերը, կազմում են ընդհանուր հաշվով 478 միացություն, մինչդեռ եռյակ բաղաձայնական շարքով սկսվող բառերի մեջ այն հասնում է 489 միացության։ Նկատելի է, որ առանձին տառերի կապակցելիության հնարավորությունների մեջ կատարվել են փոփոխություններ։ Այսպես Ռ-ի դեպքում այն պակասել է 6-ից մինչև 3-ը, ժ-ն 12-ից՝ 7-ի, մինչդեռ Թ-ն 21-ից հասել է 26-ի, Ջ-ն 10-ից՝ 21-ի և այլն։

Երեք բաղաձայնով սկսվող բառերում երկրորդ տեղում գործածվող բաղաձայնների մեջ ամենամեծ ակտիվություն ցուցաբերում են ձայնորդները՝ բացառությամբ Յ-ի, որն ընդհանրապես այս դիրքում հանդես չի գալիս։ Ձայնորդներից Ր-ն գրեթե ծածկում է բաղաձայնական համակարգը։ Միայն մի դեպքում այն չի կարողանում կապակցություն ստեղծել, երբ երրորդ տեղում հայտնվում է նրա մերձավորագույն հակադրական եզրը՝ Ռ-ն։

Եռյակ բաղաձայնասկիզբ շարքի երկրորդ տեղում հանդես եկող բաղաձայնները իրենց գործառական կապերի քանակով ունեն հետևյալ բաշխվածությունը.

I տասնյակ՝	Ր	Լ	Ռ	Ն	Ղ	Մ	Կ	Շ	Պ	Տ
	29	27	25	24	23	20	17	17	17	17
II տասնյակ՝	Փ	Ջ	Ժ	Հ	Մ	Վ	Թ	Ք	Ծ	Ճ
	17	16	16	16	16	16	14	14	13	12
III տասնյակ՝	Ձ	Գ	Ց	Դ	Բ	Ձ	Ձ	Ֆ	Հ	Ց
	10	9	9	6	5	2	2	2	0	0

Եռյակ բաղաձայնով սկսվող բառերի բաղաձայնական շարքի երկրորդ անդամ չեն լինում Յ և Հ բաղաձայնները։

Բառասկզբական եռյակ բաղաձայնական շարքի վերջին անդամի դիրքում առավել հաճախական են ձայնորդները։ Այս դիրքում բաղաձայնական սահմանափակումներ չկան՝ հանդես են գալիս համակարգի բոլոր անդամները։ Գործառական բոլոր կապերի ընդհանուր քանակը 411 է, որը բաշխված է հետևյալ հաջորդականությամբ.

I տասնյակ՝	Ն	Վ	Լ	Ր	Կ	Տ	Մ	Պ	Ց	Խ
	23	23	22	22	20	19	18	17	16	16
II տասնյակ՝	Ճ	Ռ	Թ	Ք	Դ	Ծ	Ջ	Շ	Մ	Փ
	16	16	15	15	14	13	13	12	12	12
III տասնյակ՝	Ղ	Ձ	Գ	Ջ	Բ	Ձ	Ձ	Ֆ	Հ	Ժ
	11	11	10	9	9	6	6	6	5	4

Ինչպես կրկնակ բաղաձայնական շարքի, այնպես էլ բառասկզբի եռյակ բաղաձայնական շարքի աղյուսակները ներկայացնում են գրույթների գործառական կապերի պատկերը։ Հնչական մակարդակում այս շարքերը կարող են իրացվել տարբեր հնարավորություններով։

ԲԱՌԱՍԿԶԲԱԿԱՆ ՉՈՐՍԱՆԴԱՄ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐ

Բառասկզբում չորս բաղաձայն գրույթներից կազմված բառերը հայերենում համեմատաբար լայն ընդգրկում ունեն։ Եթե երեք բաղաձայնով սկսվող բառերի գործառական կապերի թիվը առաջին և երրորդ տառերի դեպքում կազմում էր 489 միացություն, ապա չորսական բաղաձայնական շարքի առաջին և չորրորդ տեղերում գործառվող գրույթների կապական ծանրաբեռնվածությունը ողջ համակարգի համար կազմում է

409 միացութիյուն։ Շարքում առաջին վանդակը զբաղեցնող բաղաձայնների մեջ համեմատաբար գործուն են խուլ, պայթական և ետին շարքի կազմութիյուն ունեցող գրութիյունները։ Այս դիրքում հանդես չեն գալիս բաղաձայնական համակարգի երեք ձայնորդները՝ յ, ր, ռ, գրութիյունները (հնչութիյունները)։

Բ բաղաձայնով սկսվող բառանդամ կազմութիյուններ

Ջորս և ավելի բաղաձայններով սկսվող բառերը հայերենում հիմնականում այն կազմութիյուններն են, որոնցում նկատվում են բառաբարդումներ։ Սրանց մեջ մեծ թիվ են կազմում բնաձայնական բառերը։ Հընչական մակարդակում այս շարքերը պարտադիր կարգով իրացվում են ձայնավոր ը–ի մասնակցութիյամբ, որը գրութիյան մեջ չի ներկայացվում։ Բաղաձայնական կուտակումը հաղթահարվում է մեկ կամ երկու ձայնավորի (ը) միջոցով։

Քառանդամ բաղաձայնական հաջորդականութիյամբ սկսող բառերի մեջ հաղվադեպ են արտասանական տարբերակներ ունեցող կազմութիյունները, որն առավել բնորոշ է կրկնակ և եռյակ բաղաձայնական շարքերով սկսող բառերին։

Բ բաղաձայնով սկսող բառերի չորսանդամ բաղաձայնական կուտակումներ ունեցող բառաձևերը հետևյալն են. բզբզալ [բըզբըզալ], բրզպուն [բըրզպուն], բլբլալ [բըլբըլալ], բլնդել [բըլընդել], բղբղալ [բըղբըղալ], բմբլել [բըմբլել], բնբնալ [բընբընալ], բռբռալ [բըռբըռալ], բռնկել [բըռընկել], [բըռնըկել], բռնչի [բըռընչի], բռնցի [բըռընցի], բռնճամ [բըռընջամ], բսաոեել [բըսաոըել], [բըսաոըրել], բդմաճ (ժդ.) [բըրդման], [բըրթման], բրդյա [բըրթյա], բդվել [բըրթվել], բռնձն [բըռընձէ], բզկտել [բըզկըտել], [բըզկոտել], բժշկել [բըժըշկել]։

Թեև աղյուսակում մանրամասնորեն տրվում են քառատարր բաղաձայնական կուտակումներ ունեցող բառերի առանձին դրութիյունների գործառական կապերի բոլոր հնարավոր դուգորդութիյունների տեսակներն ու թիվը, սակայն այստեղ հարկ ենք համարում տալ Բ–ով սկսող կազմութիյունների որոշ թվային արժեքներ։ Այսպես կազմութիյան երկրորդ անդամի տեղում կարող են հանդես գալ գրեթե բոլոր ձայնորդները (Մ, Ն, Լ, Ր, Ռ) և սուլական բաղաձայնները (Ս, Զ)։ Շարքի երրորդ անդամի տեղում հանդես են գալիս 8 գրութիյներ, հիմնականում պայթականներ՝ (Բ, Զ, Դ, Թ, Ն, Տ, Կ, Շ)։ Շարքը կարող են ամփոփել բաղաձայնական համակարգի անդամների կեսից ավելին՝ 17 գրութիյներ (Բ, Գ, Դ, Զ, Լ, Կ, Ջ, Ղ, Յ, Ն, Շ, Ռ, Վ, Տ, Ր, Ց, Ք)։

Այս կազմութիյան բառաձևերի տեսակների ընդհանուր քանակը 28 է։

Գ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով ևս կազմված բառաձևերում հիմնականում հանդես են գալիս արմատների կրկնությամբ կազմված բառաբարդությունները։ Բառերի այս շարքում մեծ թիվ են կազմում բնաձայնությունների միջոցով գործողություն ցույց տվող կազմությունները։ Սովորաբար բառասկզբական բաղաձայնական կուտակումներ պարունակող բառերը բայ խոսքի մասին են պատկանում, մասամբ ածական և գոյական անուններին։ Գ-ով սկսող հաջորդականությունները ներկայացնում են հետևյալ բառաձևերը՝ գղլտել *[գղղլտէլ]*, գզգզել *[գզղգզէլ]*, գզվռուփ *[գզվզռուփ]*, գժդմել *[գժդզմէլ]*, գժտվել *[գժժտվէլ]*, գլգլալ *[գլւգլալ]*, գծգծել *[գծծգծէլ]*, գծմծել *[գծծմծէլ]*, գղգղալ *[գղղգղալ]*, գմռռալ *[գմմռռալ]*, գճղլիկ *[գճնդլիկ]*, գճղվել *[գճնդվէլ]*, գրճնխոռ *[գրճնխօռ]*, գշլվել *[գշշլվէլ]*, գշլտել *[գշշլտէլ]*, գոգռալ *[գռոգռալ]*, գոգնռռ *[գռոգնօռ]*, գոմխել *[գռոմբխէլ]*, գոմռալ *[գռոմռռալ]*, գոփվել *[գռոփվէլ]*, գվգվալ *[գվւգվալ]*, գտճվել *[գտտնվէլ]*, գրգմել *[գրռգմէլ]*, գրգռել *[գրռգռռէլ]*, գրգվել *[գրռգվէլ]* գրկվել *[գրռկվէլ]*, գրմփալ *[գրռմփալ]*, գրռճակ *[գրռտնակ]*։ Գ-ին անմիջապես հաջորդող բաղաձայնների մեջ նորից գերակշիռ դերը պատկանում է ձայնորդներին հատկապես թրթռուն Ր և Ռ բաղաձայններին։ Կազմությունների ընդհանուր քանակը 28 է։*

Դ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնին հաջորդող մյուս բաղաձայնների մեջ, ինչպես և մինչ այժմ քննված դեպքերում, գերակշիռ դերը պատկանում է ձայնորդներին։ Ասենք, որ բոլոր տեսակների կեսից ավելին կազմվում են Ր, Ն, Մ, ձայնորդների շնորհիվ։ Մնացած դեպքերում գործառվում է բաղաձայնական համակարգի անդամների մեծ մասը։ Ունենք հետևյալ կազմությունները. դդմյա *[դզդմյա]*, դդչուն *[դզդչուն]*, դզդզալ *[դզդզզալ]*, դժդժալ *[դզժդզժալ]*, դժնդակ *[դզժզնդակ]*, դժնյա *[դզժնյա]*, դժպնի *[դզժպնի]*, *[դզժպհի]*, դլղլացնել *[դզլդզլւացնէլ]*, դղդղալ *[դզղդզղալ]*, դղրդալ *[դզղրդզղալ]*, դնգսել *[դզնգսսէլ]*, դնդնալ *[դզնդզնալ]*, դնդղոց *[դզնդզօց]*, դնգչել *[դզնգչէլ]*, դնչկալ *[դզնչկալ]*, դնփսել *[դզնքսսէլ]*, դպցնել *[դզպցնէլ]*, դռռռալ *[դզռռզռռալ]*, դռնքաց *[դզռնքաց]*, դռնչալ *[դզռնչալ]*, դռնփակ *[դզռնփակ]*, դսաբիկ *[դզսստրիկ]*, դվդվալ *[դզվդզվալ]*, դրժվել *[դզրժվէլ]*, դրխկալ *[դզրբխկալ]*, դրմբալ *[դզրբմբալ]*, դրմփալ *[դզրբմփալ]*, դրնգալ *[դզրբնգալ]*, դրսնավուր *[դզրսանվուր]*, դրսսել *[դզրբսսէլ]*։ *Կազմությունների ընդհանուր քանակը 31 է։*

Ջ բաղաձայնով սկսվող բառանդամ կազմություններ

Այս բաղաձայնով սկսվող շարքերով կազմված բառերը թվով շատ չեն։ Սրանցում ևս պահպանվում են մինչև այժմ նկատված բառակազմական օրինաչափություններըե Ունենք հետևյալ բառաձևերը՝ զգլխիչ [ջզըլխիչ] և [զգըլխիչ], զլզել [ջլըզըլէլ], զկռտալ [ջկըռտալ], զզզալ [ջըզզըզալ], զմզմալ [ջըմզըմալ], զմռճենի [ջըմըռճէնի], զմռսել [ջըմըռսէլ], զնգլակ [ջընգըլակ], զոզոալ [ջըոզըռալ], զսպված [ջըսպված], զվռնել [ջըվըռնէլ], զրխկալ [ջըրըխկալ], զրկվել [ջըրկվէլ] զրմփալ [ջըրըմփալ], զրնգալ [ջըրընգալ]։ Կազմությունների ընդհանուր քանակը 15 է։

Թ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմվում են համեմատաբար գործուն հաջորդականություններով ձևավորված բառաձևեր։ Բառաձևերի ընդհանուր քանակի մեջ չենք մտցրել մի շարք կազմություններ, որոնք հարազատ չեն գրական հայերենին, ինչպես և ունեն մի քանի տարբերակային ձևեր ժողովրդախոսակցական լեզվում։ Սովորաբար ընտրվել են այն բառերը, որոնք բառարանում առանձին բառահոդվածներով են ներկայանում և չունեն տես-ով հղումներե Այսպես և սովորաբար հաջորդականությունների տեսակների մեջ չեն ընդգրկվել գավառական հղումով բառերը՝ ինչպես Թրզլի, Թպխլի կամ Թխրլի, Թղրլի, որոնք բոլորն էլ հղվում են գրական լեզվի կարմրան բառին։ Ունենք հետևյալ կազմությունները՝ թթխմոր [Թըթխմօր], թժժալ [Թըժժըժալ], թլթլալ [Թըլթըլալ], թխմվել [Թըխմվէլ], թխսկան [Թըխսկան], թխսմայր [Թըխսմայր], թխսվել [Թըխսվէլ], թմբլիկ [Թըմբլիկ], թմբկահար [Թըմբկահար], [Թըմկահար], թնդյուն [Թընդյուն], թնդվել [Թընդվէլ], թնթղուց [Թընթղուց], [Թընըթղուց], թնթնալ [Թընթընալ], թնձկալ [Թընձկալ], թնջկահան [Թընջկահան], թշրշալ [Թըշրըշալ], թպրտալ [Թըպրտալ], թռչկոտել [Թըռչկոտէլ], թռչնաբան [Թըռչնաբան], թռչտել [Թըռչտէլ], թռչհաղաշտ [Թըռըչհադաշտ], թռսխել [Թըռսխէլ], թռվռալ [Թըռվըռալ], թրթռուց [Թըրթըրուց], թրփալ [Թըրթփալ], թրխկալ [Թըրըխկալ], թրծվել [Թըրծվէլ], թրմփալ [Թըրըմփալ], թփոչու [Թըփըչու], թփռտալ [Թըփըռտալ], թռցնել [Թըռցնէլ], թսթսալ [Թըսթըսալ], թրթռալ [Թըրթըռալ], թրջվել [Թըրջվէլ], [Թըրչվէլ], թրփալ [Թըրփալ]։

Կա թ բաղաձայնով սկսվող քառանդամ հաջորդականություների 36 կազմություն։

ժ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվում են ընդամենը 6 բառանդամ կազմություններ։ Հայնորդական հնչահամակարգի ոչ բոլոր անդամներով կան բառանդամ կազմություններ։ Ահա այդ բառանդամ հաջորդականությունները սկսվող բառաձևերը՝ ժխտվել *[ժըխտվէլ]*, ժնգռած *[ժընգռած]*, ժշխվել *[ժըշխվէլ]*, ժպրենել *[ժըպրհել]*, ժվժվալ *[ժըվժըվալ]*, ժռավել *[ժըռավէլ]*։

լ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Ինչպես այս դեպքում, այնպես էլ նախորդ դեպքերում աշխատել ենք բառաձևերի թվում հաշվել գրական լեզվին առավել մոտ ձևերը, քանի որ երբեմն նույն բովանդակության համար օգտագործվում են մի շարք տարբերակային ձևեր, հիմնականում կապված բարբառային տարբեր հնչաձևերի հետ։ Բացի գրական ձևերից երբեմն միայն հիշատակում են առանձին գավառական կամ ժողովրդախոսակցական ձևեր, որոնց համարժեքը չկա գրական լեզվում։ լ բաղաձայնով սկսող բառանդամ բաղաձայնական հաջորդականություն ունեցող բառաձևերը հետևյալն են. լկկվել *[լըկկվէլ]* և *[լըկկըվէլ]*, լխխալ *[լըխլըխալ]*, լխկվել *[լըխկվէլ]* և *[լըխկըվէլ]*, լկկալ *[լըկլըկալ]*, լկոճալ *[լըկըռհալ]*, լկստել *[լըկըստէլ]*, լղզվել *[լըղղըվէլ]*, լղղել *[լըղլըղէլ]*, լղճել *[լըղըրճէլ]*, լմլմել *[լըմլըմէլ]*, լմննալ *[լըմըննալ]*, լպռտել *[լըպըռտէլ]*, լպստել *[լըպըստէլ]*, լպրծել *[լըպըրծէլ]*, լպրշել *[լըպըրշել]*, լռկվել *[լըռկըվէլ]*, լսլսաֆել *[լըսլըսաքէլ]*, լվլվալ *[լըվլըվալ]*, լրջդեմ *[լըրջդէմ]*, լրջմիտ *[լըրջմիտ]*, լփլփալ *[լըփլըփալ]*, լքլքոց *[լըքլըքօց]*։ *Կազմությունների թիվը 22 է։*

խ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառանդամ բաղաձայնական հաջորդականությունները բառասկզբում նկատելիորեն շատ են։ Բաղաձայնին հաջորդող երկրորդ գրույթը դեպքերի գերակշիռ մասում ձայնորդ է։ Նկատելիորեն մեծ է նաև ծ, շ շչականների գործառությունը։ խ բաղաձայնով սկսող բառանդամ հաջորդականությամբ կազմվող բառաձևերն հետևյալն են՝ խզբզել *[խըզբըզէլ]*, խզխզել *[խըզխըզէլ]*, խզմզել *[խըզմըզէլ]*, խըբխըբալ *[խըբխըբալ]*, խժբժալ *[խըժբըժալ]*, խժլտալ *[խըժլըտալ]*, խժռվել *[խըժռըվէլ]*, խժռտել *[խըժռըտէլ]*, խլխլալ *[խըլխլալ]*, խլնճոտ *[խըլընքօտ]*, խլշկռտել *[խըլըշկօտէլ]*, խլշվել *[խըլշըվէլ]*, խլվլալ *[խըլվլալ]*, խլրդենի *[խըլըրդէնի]*, խլրտալ *[խըլըրտալ]*, խխնջալ *[խըխընջալ]*, խծբծանճ *[խըծբըծանք]*, խծպվել *[խըծպվէլ]*, խղճմիտ *[խըղճմիտ]*, խճճվել *[խըճըճվէլ]*, խմբկոլ *[խըմբկօլ]*, խմբվել *[խըմբվէլ]*, խնդվածք

[խընդվածք], խնդրել *[խընդրէլ]*, խնծղալ *[խընծղալ]*, խրնկվել *[խընկվէլ]*, խնձղալ *[խընձղալ]*, խնչյուն *[խընչյուն]*, խնջլոզ *[խընջլօզ]*, խշխշալ *[խշխշալ]*, խշկվել *[խշկվէլ]*, խշշյուն *[խշշյուն]*, խշտյակ *[խշտյակ]*, խշրվել *[խշրվէլ]*, խշրտալ *[խշրրտալ]* խրոլտալ *[խրոլտալ]*, խոխոռալ *[խրոխրռալ]*, խոկվել *[խրոկվէլ]*, խրոմփալ *[խրոմփալ]*, խոնդուկ *[խրոնդուկ]*, խոնչալ *[խրոնչալ]*, խոնվել *[խրոնվէլ]*, խոշտալ *[խրոշտալ]*, խոտղտալ *[խրտղրտալ]*, խրթնաբան *[խրրթնաբան]*, խրխրել *[խրրխրրէլ]*, խրտնել *[խրրտնէլ]*, խրտվիլակ *[խրրտվիլակ]*, խցկվել *[խրցկվէլ]*, խփշտել *[խրփշրտէլ]*։

Կազմուբյունների ընդհանուր բիվը 52 է։

Ծ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնին ևս անմիջապես հաջորդող բաղաձայնը գերակշիռ դեպքերում ձայնորդ է, սակայն այստեղ հանդես չի գալիս մյուս դեպքերում լայնորեն գործառվող Ր ձայնորդը։ Ունենք հետևյալ կազմուբյունները՝ ծթծթացնել *[ծրթծրթացնէլ]*, ծլծլալ *[ծրլծրլալ]*, ծլմփոց *[ծրլմփօց]*, ծլնգալ *[ծրլրնգալ]*, ծլվլալ *[ծրլվրլալ]*, ծխրտալ *[ծրխրրտալ]*, ծծմբաթթու *[ծրծրմբաթթրթու]*, ծկլթալ *[ծրկրլթալ]*, ծղծղալ *[ծրղծրղալ]*, ծղրտալ *[ծրղրրտալ]*, ծմծմալ *[ծրմծրմալ]*, ծնծղա *[ծրնծղա]*, ծնծնուտ *[ծրնծրնօտ]*, ծնկնահար *[ծրնկնահար]*, ծնծղաբան *[ծրնրնդաբան]*, ծպծպացնել *[ծրպծրպացնէլ]*, ծպտյալ *[ծրպտյալ]*, ծպտվել *[ծրպտվէլ]*, ծոծռացնել *[ծրոծրռացնէլ]*, ծոկտալ *[ծրոկտալ]*, ծոմռել *[ծրոմրռէլ]*, ծոկտալ *[ծրոկտալ]*, ծոմռել *[ծրոմրռէլ]*, ծվծվալ *[ծրվծրվալ]*, ծփծփալ *[ծրփծրփալ]*։ *Կազմուբյունների ընդհանուր քանակը 23 է։*

Կ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնը առավել մեծ քանակի հաջորդականություններ սկզբնավորող հնչյուններին է պատկանում։ Բաղաձայնական համակարգի 17 անդամ կարող են լինել հաջորդականության երկրորդ անդամի տեղում։ Ահա այդ միացուբյունները կգկտել *[կրգկրտէլ]*, կլվել *[կրլրվէլ]*, կլկլալ *[կրլկրլալ]*, կլպվել *[կրլպվէլ]*, կխկխալ *[կրխկրխալ]*, կծկթել *[կրծկրթէլ]*, կծկվել *[կրծկրվէլ]*, կծկտել *[կրծկրտէլ]*, կծպծալ *[կրծպրծալ]*, կծվծալ *[կրծվրծալ]*, կղզյակ *[կրղզյակ]*, կղկղալ *[կրղկրղալ]*, կճկճալ *[կրճկրճալ]*, կմկմալ *[կրմկրմալ]*, կմշտել *[կրմշրտէլ]*, կնգղակ *[կրնգղակ]*, կնգմեճի *[կրնգմեճի]*, կնդվել *[կրնդվէլ]*, կնդրուկ *[կրնդրուկ]*, կնճռալի *[կրնճռալի]*, կնչյուն *[կրնչյուն]*, կնքվել *[կրնքվէլ]*, կշկռել *[կրշկրռէլ]*, կշռվել *[կրշրռվէլ]*, կշկշալ *[կրշկրշալ]*, կպրվել

[կպպերվէլ], կպցնել *[կպպցընէլ]*, կպցվել *[կպպցըվէլ]*, կոթնել *[կըոթնէլ]*, կոկոռալ *[կըոկըռալ]*, կոճռել *[կըոճըռէլ]*, կոնծել *[կըոընծէլ]*, կոնչալ *[կըոընչալ]*, կսկլոր *[կըսկըլօր]*, կսկծալ *[կըսկըծալ]*, կսմքել *[կըսմըքէլ]*, կտկտալ *[կըտկըտալ]*, կտմտալ *[կըտմըտալ]*, կտրվածք *[կըտըրվածք]*, կտրտել *[կըտըրտէլ]*, կտցվել *[կըտցըվէլ]*, կրթվել *[կըրթվէլ]*, կրծկալ *[կըրցկալ]*, կրծպան *[կըրծպան]*, կրծքաբաց *[կըրցքաբաց]*, կրկնակի *[կըրկնակի]*, կրկտել *[կըրկըտէլ]*, կրկռալ *[կըրկըռալ]*, կրնկաձուկ *[կըրնկաձուկ]*, կրճմուճք *[կըրճմունք]*, կրճյուն *[կըրճյուն]*, կրճտալ, *[կըրճտալ]* կրկնել *[կըրկընէլ]*, կռտսեր *[կըռտսէր]*, կռտվել *[կըռտվէլ]*, կցկտուր *[կըցկըտուր]*, կցկցել *[կըցկըցէլ]*, կցմցել *[կըցմըցէլ]*, կցվտել *[կըցվըտէլ]*, կցռդասաց *[կըցըրդասաց]*, կփկփալ *[կըփկըփալ]*։ *Կազմությունների ընդհանուր քանակը 61 է։*

Հ բաղաձայնով սկսվող fառանդամ հաջորդականություններ

Հայերենի քիչ հաճախականություն ունեցող բաղաձայններից է։
Հայերենի քիչ հաճախականություն ունեցող բաղաձայններից է։
Բառասկզբում շուրջ երկու տասնյակ բառաձևեր ունեն քառանդամ կապակցություններ՝ հծծյուն *[հըծծյուն]*, հղկվել *[հըղկվէլ]*, հնգյակ *[հնգյակ]*, հնդկական *[հընդկական]*, հնդյուղ *[հնդյուղ]*, հնհնալ *[հընհընալ]*, հնձվածք *[հընձվածք]*, հնչյուն *[հընչյուն]*, հնչնագիր *[հընչնագիր]*, հոռոռալ *[հըոռըռալ]*, հոնդալ *[հըոընդալ]*, հսկչախումբ *[հըսկչախումբ]*, հսկվել *[հըսկվէլ]*, հտպտանք *[հըտպըտանք]*, հռհռել *[հըրհըրէլ]*, հռձգություն *[հըրձըգություն]*, հռնվագին *[հըրնվագին]*։ *Կազմությունների ընդհանուր քանակը 17 է։*

Ձ բաղաձայնով սկսվող fառանդամ հաջորդականություններ

Եթե մի կողմ թողնենք տարբերակային (ձգմգել, ձգռտալ, ձկնթեփ, ձկնխաշ, ձկնքաղ) ձևերը, ապա այս բաղաձայնով կազմվում են միայն մի քանի քառանդամ բաղաձայնական հաջորդականություններով սկսող բառաձևեր՝ ձգձգել *[ձըգձըգէլ]*, ձկնդեղ *[ձըկընդէղ]*, ձկնկիթ *[ձըկընկիթ]*, ձկնյուղ *[ձըկընյուղ]*, ձնհյուս *[ձընհյուս]*։ *Գոյակցությունների մեծ մասը ծուկ բաղադրիչով կազմված բարդություններ են։ Կազմությունների ընդհանուր քանակը 5 է։*

Ղ բաղաձայնով սկսվող fառանդամ հաջորդականություններ

Գրական հայերենում այս բաղաձայնով սկսվող քառանդամ բաղաձայնական շարքերով բառաձևերը բացառապես գործողություն ցույց տվող բառեր են՝ ղժվժալ *[ղըժվըժալ]*, ղժղժալ *[ղըժղըժալ]*, ղլղլալ *[ղըլ-*

ղբլալ], ղբվլալ *[ղբվբլալ]*, ղղրալ *[ղբղբրալ]*, ղրճալ *[ղբրճալ]*։ *Ընդամենը 6 կազմություն։*

ճ բաղաձայնով սկսվող բառահդամ հաջորդականություններ

Բաղաձայնական համակարգի անդամների գրեթե կեսը կարող են հաջորդել այս բաղաձայնին կազմելով բառասկզբական քառանդամ հաջորդականությունները՝ ճզճզալ *[ճբզճբզալ]*, ճզմզել *[ճբզմբզէլ]*, ճզմվել *[ճբզմբվէլ]*, ճզվզալ *[ճբզվբզալ]*, ճզրտալ *[ճբզբրտալ]*, ճբճբալ *[ճբճբճբալ]*, ճլճլալ *[ճբլճբլալ]*, ճլմբուր *[ճբլբմբուր]*, ճլմփալ *[ճբլբմփալ]*, ճլպտուն *[ճբլպբտուն]*, ճլվլալ *[ճբլվբլալ]*, ճխլվել *[ճբխբլվէլ]*, ճխլտել *[ճբխբլտել]*, ճխճխալ *[ճբխճբխալ]*, ճխտվել *[ճբխտբվէլ]*, ճխրտալ *[ճբխբրտալ]*, ճկճկալ *[ճբկճբկալ]*, ճկռվել *[ճբկբռվէլ]*, ճղճղալ *[ճբղճբղալ]*, ճղճմել *[ճբղճբմէլ]*, ճղվղան *[ճբղվբղան]*, ճղրտալ *[ճբղբրտալ]*, ճղփյուն *[ճբղփյուն]*, ճմլկոտել *[ճբմբլկոտէլ]*, ճմլվածք *[ճբմբլվածք]*, ճմճմալ *[ճբմճբմալ]*, ճմշկել *[ճբմբշկէլ]*, ճմռթել *[ճբմբռթէլ]*, ճճղաբաժին *[ճբնճբղաբաժին]*, ճնշվել *[ճբնշվէլ]*, ճշգրիտ *[ճբշգբրիտ]*, ճշտվել *[ճբշտվէլ]*, ճպճպալ *[ճպճպալ]*, ճռճռալ *[ճբռճբռալ]*, ճորճչալ *[ճբռբնչալ]*, ճվճվալ *[ճբվճբվալ]*, ճտճտալ *[ճբտճբտալ]*, ճտպտալ *[ճբտպբտալ]*, ճրճրալ *[ճբբճբրակ]*, ճֆճֆալ *[ճբֆճբֆալ]*։ *Ընդամենը 40 կազմություն։*

մ բաղաձայնով սկսվող բառահդամ հաջորդականություններ

Շարքի երկրորդ անդամի դերում հաճախակի են հանդես գալիս ր և ր բրթռունները, իսկ յ և ն ձայնորդները հանդես չեն գալիս։ Ունենք հետևյալ կազմությունները՝ մզմզալ *[մբզմբզալ]*, մթնդալ *[մբթբնդալ]*, մրթնծեծ *[մբթբնծէծ]*, մթնկա *[մբթբնկա]*, մթնշաղ *[մբթբնշաղ]*, մլլվել *[մբլբլվէլ]*, մլմլալ *[մբլմբլալ]*, մխմխալ *[մբխմբխալ]*, մխրճել *[մբխբրճէլ]*, մկնդեղ *[մբկբնդէղ]*, մկնկերուք *[մբկբնկէբուք]*, մկրտել *[մբկբրտէլ]*, մղկտալ *[մբղկբտալ]*, մղմղալ *[մբղմբղալ]*, մշմշալ *[մբշմբշալ]*, մշտվել *[մբշտվէլ]*, մշբվել *[մբշբբվէլ]*, մռթվել *[մբռթվէլ]*, մռլտալ *[մբռբլտալ]*, մռմռալ *[մբռմբռալ]*, մռնչալ *[մբռբնչալ]*, մրսխվել *[մբսխվէլ]*, մտմտալ *[մբտմբտալ]*, մտցնել *[մբտցնէլ]*, մտցվել *[մբտցվէլ]*, մրկվել *[մբբկվէլ]*, մրչյուն *[մբբչյուն]*, [մբրչյուն], *մրջնակեր [մբբջնակէբ]*, մոսկան *[մբբոսկան]*, մոյա *[մբբոյա]*, մռրկալի *[մբբբրկալի]*, *[մբրկալի]*։ *Ընդամենը 31 բառաձև։*

Ն բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականությունների թիվը սահմանափակ է։ Շարքի երկրորդ անդամի տեղում հանդես չեն գալիս ձայնորդներ։

Կազմությունների ստորև ներկայացվող քանակը 6-ն է՝ նախախնամ *(գվռ.) [նրխնրխամ]*, նկրտել *[նրկրտէլ]*, նշարիկ *[նրշարիկ]*, նստական *(ժղ.) [նրստական]*, նստվածք *[նրստվածք]*, նվնվալ *[նրվնրվալ]*։

Շ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող բառանդամ հաջորդականությունների մոտ կեսում շարքի երկրորդ տեղում հանդես է գալիս Ր բրթռումը։ Նշած բառաձևերը հիմնականում բայեր ու գոյականներ են՝ շլեհամիս *(գվռ.) [շրլեհնքամիս]*, շղշղալ *[շրղշրղալ]*, շնթռել *[շրնթրռէլ]*, շնչյուն *[շրնչյուն]*, շշկլել *[շրշկրլէլ]*, շշնջալ *[շրշրնջալ]*, շշպռել *[շրշպրռէլ]*, շպրտել *[շրպրրտէլ]*, շռնդալ *[շրռրնդալ]*, շվշվալ *[շրվշրվալ]*, շտկրվել *[շրտկրվէլ]*, շրթնել *[շրրթնէղ]*, շրխկալ *[շրրխկալ]*, շրմփալ *[շրրմփալ]*, շրշյուն *[շրրշյուն]*, շրջբաժին *[շրրջբաժին]*, շրջգործկոմ *[շրրջգործկոմ]*, շրջզինկոմ *[շրրջզինկոմ]*, շրջլիազոր *[շրրջլիազոր]*, շրջկենտրոն *[շրրջկէնտրօն]*, շրջհողբաժին *[շրրջհօղբաժին]*, շրջմոլիկ *[շրրջմօլիկ]*, շրջսովետ *[շրրջսօվէտ]*, շրջվել *[շրրջվէլ]*, *[շրրջրվէլ]*, շրջտեսուչ *[շրրջտէսուչ]*, շրփփալ *[շրրփփալ]*, շփլոց *[շրփրլօց]*, շփշփալ *[շրփշրփալ]*։ *Ընդամենը 30 կազմություն։*

Չ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառանդամ շարքեր ունեցող բառաձևերը հայերենում մեծաթիվ չեն։ Սրանք հիմնականում բնաձայնությունների հիման վրա առաջացած բառեր են ծագած ժողովրդախոսակցական լեզվում և հետագայում գրականացված՝ չմփալ *[չրրմփալ]*, չղլոտ *[չրղրլօտ]*, չկչկալ *[չրկչրկալ]*, չմրշկապար *[չմրշկապար]*, չմշմալ *[չրմշրմալ]*, չոչոալ *[չրոչրոալ]*, չռչռալ *[չրռչրռալ]*, չրխկալ *[չրրխկալ]*, չփչփալ *[չրփչրփալ]*։ *Ընդամենը 9 կազմություն։*

Պ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմվող շարքերում նույնպես գերակշիռ դեր են խաղում ժողովրդախոսակցական լեզվում գործածվող բառաձևերը՝ պզպզած *[պրզպրզօց]*, պլզտացնել *[պրլրզտացնէլ]*, պլլվել *[պրլրլվէլ]*, պլեքացնել *[պրլրնքացնէլ]*, պլպլալ *[պրլպրլալ]*, պլստալ *[պրլրստալ]*,

պղծվել [պըղծվէլ], պղընձաբեր [պըղընձաբէր], պղնջեճի [պըղընջէճի], պղպջալ [պըղպըջալ], պղվոտակ [պըղվըտակ], պելտալ [պըճըլտալ], պեղվել [պըճըղվէլ], պճնվել [պըճնըվէլ], պճպճալ [պըճպըճալ], պրեղվել [պըրնդվէլ], պռնկեպռունկ [պըռընկէպըռունկ], պռստել [պըռըստէլ], պսպղալ [պըսպըղալ], պստլիկ [պըստլիկ], պտպտալ [պըտպըտալ], պտտկել [պըտըտկէլ], պտտվել [պըտըտվէլ], պրծնել [պըրծնէլ], պրկվել [պըրկվէլ], պրպտել [պըրպըտէլ], պրտկերես [պըրտկէրէս], պրտվել [պըրտվէլ]։ Ընդամենը 28 կազմություն։

Ջ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնին հաջորդում են բառանդամ շարքերում և՛ ձայնորդները և ժողովրդախոսակցական լեզվի ջգրվել [ջըգըրվէլ], կազմություն։ Մյուս կազմություններն են՝ ջնջխել [ջընջըջխէլ], ջնջվել [ջընջվէլ], ջրխմիկ [ջըրխըմիկ], ջրխնել [ջըրխնէլ], ջրմխել [ջըրմըխէլ], ջրջնել [ջըրջընէլ], ջրջրել [ջըրջըրէլ], ջրփչել [ջըրփչէլ]։ Ընդամենը 9 կազմություն։

Ռ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններով բառեր

չեն արձանագրված բառարաններում։ Աղայանի բառարանում կա որնտրեալ (գվռ.) [ռընտրնալ], բառաձևը։ Սա ղուտ բարբառային բառ է, այդ պատճառով դուրս ենք թողել հաշվումներից։

Ս բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառաձևերում կան արտասանական տարբերակներ։ Նախկինում գրական համարվող մի շարք ձևեր, որոնք բառասկզբում պարտադիր դիտվում էին, որպես Ը ձայնավորական հենարան ունեցողներ, այժմ ավելի հաճախ արտասանվում են առանց այդ ձայնավորական հենարանի, այսինքն բառասկզբում գոյություն ունեն ոչ միայն տառակապակցություններ, այլև հնչյունակապակցություններ։ Այստեղ ևս կազմությունների մեծ մասը գործողություն ցույց տվող բառեր են։ Ունենք հետևյալ բառաձևերը՝ սլալալ [սըլսըլալ], սլվլալ [սըլվըլալ], սլքտալ [սըլքտալ], սխկվել [սըխկվէլ], սկզբունք [սկըզբունք], սկսնակ [սկըսնակ], սկսվել [սկըսվէլ], սկրթել [սկըրթէլ], սնդկակալ [սընդկակալ], սնդրուկ [սընդրուկ], սնձնի [սընձնի], սննդարար [սընընդարար], սպնգագզգի [սպընգագզգի], սպնդուկ [սպընդուկ], սպրծել [սպըրծէլ], սպրկուկ [սպըրկուկ], սռսռալ [սըռսըռալ], սսկվել [սըսկվէլ] և [սըսկըվէլ], սվսվալ [սըվսըվալ], ստնդիաց [ըստընդյաց],

ստնտու *[բստընտու]*, *[սբստընտու]*, ստրեմբաբոր *[ստրնքաբօրբ]*, սաբրկուճի *[ստբրկուհի]*, սաբջանալ *[ստբրջանալ]*, սրբվել *[սբրփվէլ]*, սբրբնգագործ *[սբրբնդագօրծ]*, սրեմակալ *[սբրբնքակալ]*, սրսկել *[սբրբսկէլ]*, սրսռաձյուն *[սբրսբռաձյուն]*, սրսփալ *[սբրսբփալ]*, սրտեատեռում *[սբրտհատնում]*, սրտեեղ *[սբրտնէղ]*, սփռվել *[սբփբռվէլ]*, սֆլռալ *[սբքբլռալ]*։ *Ընդամենը 34 կազմություն։*

վ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Համեմատաբար սակավաթիվ են այս բաղաձայնով սկսող բառանդամ շարքերով բառերը։ Այստեղ ևս պահպանվում են մինչև այժմ հանդիպած օրինաչափությունները՝ բառերի մեծ մասը գործողություն ցույց տվող բառեր են. վզվզալ *[վբզվբզալ]*, վթվթալ *[վբթվբթալ]*, վժվժալ *[վբժվբժալ]*, վլվլալ *[վբլվբլալ]*, վխվխալ *[վբխվբխալ]*, վճռվել *[վբճբռվէլ]*, վշշյուն *[վբշշյուն]*, վշվշալ *[վբշվբշալ]*, վռթկալ *[վբռթկալ]*, վռնդել *[վբռընդել]*, վռվռալ *[վբռվբռալ]*, վսվսալ *[վբսվբսալ]*, վրնջնախաղ *[վբրջնախաղ]*, վրնջալ *[վբրբնջալ]*։ *Ընդամենը 14 կազմություն։*

տ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող քառանդամ շարքերի երկրորդ բաղաձայնի դերում հանդիպող բառաձևերի 2/3-ում գործառվում է ձայնորդ բաղաձայնը։ Բառաձևերը հետևյալն են՝ տզկվել *[տբզկվէլ]*, տզվզալ *[տբզվբզալ]*, տզտզալ *[տբզտբզալ]*, տզռկաձև *[տբզրբկաձև]*, տժվժալ *[տբժվբժալ]*, տժտժալ *[տբժտբժալ]*, տլվլալ *[տբլվբլալ]*, տրկտրկալ *[տբկտբկալ]*, տղտղել *[տբղտբղէլ]*, տմբլա *(գվռ.)* *[տբմբլա]*, տմկվել *[տբմկբվէլ]*, տմճռաշ *[տբմբճռաշ]*, տմսկել *(գվռ.)* *[տբմբսկէլ]*, տրմտրմալ *[տբմտբմալ]*, տրնկվել *[տբնկվէլ]*, տճռճաշվարկ *[տբճռհաշվարկ]*, տճռղել *[տբճռբղէլ]*, տճռճալ *[տբճռբճալ]*, տռռզել *[տբռռզէլ]*, տռռռիկ *[տբռռբռիկ]*, տվնջական *[տբվբնջական]*, տրնգի *[տբրբնգի]*, տրտմբար *[տբրտբմբար]*։ *Ընդամենը 23 կազմություն։*

ց բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող շարքերը համեմատաբար քիչ քանակի կազմություններ ունեն։ Ց-ին գրական հայերենում հաջորդում են 3 բաղաձայններ ցնդվել *[ցբնդվէլ]*, ցնկնել *[ցբնկնէլ]*, ցնցղել *[ցբնցղել]*, ցրփրնվել *(ժղ.)* *[ցբփբնվէլ]*։ *Ընդամենը 4 կազմություն։ Սակայն կան նաև գավառական մի շարք ձևեր՝* ցնգնել, ցնցլել, ցպրտել, ցվրտել, ցվրվել *և այլն, ուր հանդիպում են շարքերի այլ կազմություններ։*

Փ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Հայերենում համեմատաբար գործուն բաղաձայնական շարքեր սկզբնավորող բաղաձայնն է։ Գրական հայերենի համար բառարաններից առանձնացրել ենք հետևյալ կազմությունները՝ փթթյուն *[փըթթյուն]*, փլցնել *[փըլցընել]*, փլցվել *[փըլցվել]*, փլփլել *[փըլփըլել]*, փխրվել *[փըխրվել]*, փղձկալ *[փըխցկալ]*, փղշտացի *[փըղըշտացի]*, փճջվել *[փըճըջվել]*, փճտրել *[փըճտրել]*, փշրվել *[փըշըրվել]*, փշրտել *[փըշըրտել]*, փշփշոտ *[փըշփըշօտ]*, փշփշոց *[փըշփըշօց]*, փոթկոց *[փըոթկօց]*, փոճչալ *[փըոըճչալ]*, փոշնի *[փըոըշնի]*, փոշտալ *[փըոըշտալ]*, փսփսալ *[փըսփըսալ]*, փրկվել *[փըրկվել]*, փրկչական *[փըրկչական]*, փրցնել *[փըրցնել]*, փրփրել *[փըրփըրել]*։ *Ընդամենը 22 կազմություն։*

Ք բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով ևս կազմվող բաղաձայնական շարքերը պահպանում են մինչև այժմ հանդիպող հաջորդականություններին բնորոշ առանձնահատկությունները։ Կազմությունների կեսից ավելին շարքի երկրորդ անդամի տեղում գործառում են ձայնորդներ։

Այս բաղաձայնով սկսվող քառանդամ շարքեր ունեցող բառերի գրականում գործառվող ձևերը հետևյալներն են՝ քթթվել *[քըթթըվել]*, քթվվել *[քըթվվել]*, քթվտել *[քըթվըտել]*, քթքթալ *[քըթքըթալ]*, քլլալ *[քըլըլալ]*, քծծվել *[քըծըծվել]*, քնձռոտ *[քընձռօտ]*, քննչական *[քընչական]*, *[քընընչական]*, քննվել *[քընընվել]*, քնքշաբար *[քընքշաբար]*, քշտվել *[քըշտվել]*, քչփչալ *[քըչփըչալ]*, քչքչալ *[քըչքըչալ]*, քսմսել *[քըսմըսել]*, քռնչա *[քըրնչա]*, քռնախաշ *[քըրնախաշ]*, քրմագույն *[քըրմագույն]*, քրջալ *[քըրքըջալ]*, քրքրել *[քըրքըրել]*։ *Ընդամենը 19 կազմություն։*

Ֆ բաղաձայնով սկսվող բառանդամ հաջորդականություններ

Հայերենի հազվադեպ գործառվող բաղաձայններից է։ Բառասկզբում կան գրական հայերենի համար ընդունելի այսպիսի 3 կազմություններ՝ ֆշֆշալ *[ֆըշֆըշալ]*, ֆոֆռալ *[ֆըոֆըռալ]*, ֆսֆսալ *[ֆըսֆըսալ]*։

Չորս բաղաձայնով սկսվող բառերի առաջին և չորրորդ տեղերում գործառվող գրույթների կապական ծանրաբեռնվածությունը ողջ համակարգի համար կազմում է 349 միացություն։ Շարքում առաջին վանդակը դրաղեցնող բաղաձայնների մեջ համեմատաբար գործուն են խուլ, պայթական եռին շարքի բաղաձայններն արտացոլող գրույթները։ Այս դիր-

քում բացառվում են յ, ր, ռ, գրույթները, բնականաբար նաև հնչույթները։

Քառանդամ բաղաձայնական շարքերով սկսվող բառերի առաջին և չորրորդ բաղաձայնների զուգադրական կապերի քանակային արժեքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

I տասնյակ	կ	խ	շ	դ	թ	ձ	բ	մ	լ	ծ
	22	21	21	19	19	19	18	18	17	16
II տասնյակ	մ	զ	վ	ֆ	գ	տ	պ	փ	հ	ջ
	15	14	14	14	13	13	12	12	11	9
III տասնյակ	ջ	ղ	ն	ժ	ձ	ց	ճ	ց	ր	ռ
	7	5	5	4	4	4	3	0	0	0

Բառասկզբի չորս բաղաձայնով սահմանափակվող շարքի երկրորդ տեղում հանդես եկող բաղաձայնները ունեն գործառական կապերի 255 զուգորդություն։ Զուգորդությունների համար որպես համեմատության եղր վերցվել է առաջին բաղաձայն անդամը։ Բաղաձայնական համակարգի հինգ միավորներ հանդես չեն գալիս շարքի երկրորդ անդամի տեղում։ Դրանք բ, հ, ջ, յ, հնչույթներն են։ Զուգորդությունների 246 տեսակները ըստ գործառական կապերի բաշխված են հետևյալ կերպ՝ երկրորդ բաղաձայնի դեպքում.

ռ	ր	լ	ն	ղ	ծ	խ	մ	շ	վ
22	22	20	20	15	15	11	11	11	11
ջ	կ	տ	պ	թ	ժ	ծ	փ	ջ	ձ
10	10	10	9	8	7	6	5	4	4
գ	ֆ	դ	ց	զ	բ	հ	ջ	ց	ճ
3	3	2	2	1	0	0	0	0	0

Եթե երկրորդ բաղաձայնի դեպքում անհամեմատ ակտիվ են ձայնորդները, ապա չորրորդ բաղաձայնի տեղում նրանց ակտիվությունը այնքան էլ մեծ չէ։ Ահա թե ինչպես են բաշխված զուգորդության տեսակները ըստ շարքի չորրորդ անդամի.

I տասնյակ	վ	տ	կ	դ	ց	ն	թ	մ	շ	ր
	21	21	14	12	11	11	10	9	9	9
II տասնյակ	խ	ծ	զ	ձ	ռ	բ	լ	ջ	ֆ	գ
	7	7	7	7	7	6	6	6	6	5
III տասնյակ	ջ	հ	մ	փ	ղ	պ	ժ	զ	յ	ճ
	5	5	5	5	4	4	2	2	2	0

Չորս բաղաձայնով սկսվող բառերի մեջ շարքի վերջին անդամի տեղում հանդես են գալիս բաղաձայնական համակարգի գրեթե բոլոր անդամները։ Միակ բացառությունը Ֆ բաղաձայնն է, որով չորս բաղաձայնով սկսվող բաղաձայնական շարքը չի կարող ավարտվել, մինչդեռ նրա մերձավորագույն զույգը Վ ձայնեղը ամենից ակտիվն է։ Ընդհանրապես շարքը ամփոփող բաղաձայնների մեջ առավել գործում են ատամնայինները, որոնցով կազմվում են զուգորդության տեսակների 1/5-ից ավելին։ Պարզ է, որ զուգորդությունների տեսակների ծանրաբեռնվածությունը, ինչպես տեքստում, այնպես էլ բառարանում միանման չէ։ Կան զուգորդություններ, որոնք եզակի կիրառություն ունեն և կան այնպիսիները, որոնց շրջապատում կարող են լինել բաղաձայնական համակարգի մեծաթիվ միավորներ։ Այսպես, եթե բառասկզբի քառանդամ բաղաձայնական շարքում 2/4 զուգորդության կազմում կա ԳԴ տեսակը, որն ունի մեկ կիրառություն, այն է հանդես է գալիս միայն ձգձգել [ձըգձըգէլ], բառում, ապա ԼՂ զուգորդությունը ունի 29 կիրառություն՝ ինչպես ասենք բլբլալ գլգլալ, խլխլալ, խլպտալ, խլվլալ և այլն։ Այնպես որ զուգորդության տեսակների գործառական ծանրաբեռնվածությունը տարբեր է։ Տեքստում ևս տարբեր են սրանց հաճախային արժեքները, թեև սրանց միջև պարզ համամասնություն չկա։ Քառանդամ բաղաձայնական շարքերը ուսումնասիրվել են 615 բառաձևում։ Սրանց միջև զուգորդությունների տեսակների գործածության ընդհանուր քանակը պատկերացում կարող է տալ այդ զուգորդությունների գործառական ծանրաբեռնվածության մասին։ Այսպես շարքի երկրորդ տեղում հանդես եկող բաղաձայնների գործառությունը բառաձևերում ըստ տեսակների հետևյալն է.

I տասնյակ	Ր	Ն	Ռ	Լ	Ղ	Մ	Շ	Տ	Ջ	Ի
	119	69	65	48	30	26	26	24	22	20
II տասնյակ	Մ	Կ	Պ	Ժ	Թ	Փ	Ծ	Վ	Ճ	Ց
	20	20	18	16	15	13	12	11	7	5
III տասնյակ	Ջ	Դ	Ր	Գ	Ձ	Բ	Հ	Ձ	Չ	Ֆ
	4	3	3	3	2	0	0	0	0	0

Ինչպես երևում է ներկայացվող արժեքների շարքի երկրորդ տեղում հանդես եկող չորս բաղաձայններ (Ր, Ն, Ռ, Լ,) գործածվում են բառաձևերի կեսից ավելի կազմություններում։

Չորրորդ տեղում հանդես եկող բաղաձայնների գործառությունը բառաձևերում ըստ տասնյակների հետևյալն է.

I տասնյակ	Վ	Տ	Կ	Ն	Լ	Ռ	Ց	Ղ	Մ	Ջ
	111	67	45	38	33	29	27	22	21	19

II տասնյակ	Փ	Դ	Ջ	Ր	Թ	Ի	Ծ	Ս	Գ	Ք
	19	17	16	16	12	12	10	10	9	9
III տասնյակ	Ժ	Շ	Ջ	Բ	Հ	Ճ	Պ	Ջ	Ց	Ֆ
	8	8	7	6	6	4	4	3	3	0

վ-ի քանակային արժեքի մեջ զերակշիռ դեր ունեն կրավորական բայաձևերը։

Բառասկզբական բաղաձայնական շարքի երկրորդ և չորրորդ բաղաձայնների ղուգորդական կապերի տեսակների ընդհանուր քանակը 323 է։ Այս զուգորդությունների տեսակները ըստ առանձին գրույթների երրորդ տեղում գործառվող բաղաձայնի բաշխված են հետևյալ կերպ.

I տասնյակ	Թ	Ն	Ջ	Կ	Ռ	Մ	Տ	Դ	Փ	Բ
	19	19	18	17	16	16	16	15	15	13
II տասնյակ	Ճ	Վ	Լ	Ծ	Ր	Ք	Ի	Ջ	Պ	Ջ
	13	13	11	11	11	11	10	10	10	9
III տասնյակ	ՋՓ	Ս	Շ	Ւ	Ղ	Հ	Ց	Ֆ	Ժ	Ց
	9	9	8	8	5	4	3	3	1	0

Բացառությամբ յ ձայնորդի բաղաձայնական համակարգի բոլոր միավորները կարող են հանդես գալ շարքի երրորդ անդամի տեղում։

Չորրորդ տեղում գործառվող գրույթները ըստ զուգորդությունների տեսակների բաշխված են հետևյալ կերպ.

I տասնյակ	Վ	Ռ	Լ	Ն	Տ	Ղ	Մ	Թ	Ի	Կ
	26	21	19	19	19	18	15	14	14	14
II տասնյակ	Ց	Ր	Շ	Ս	Ջ	Փ	Ծ	Դ	Ժ	Ջ
	14	14	12	12	11	10	9	7	7	7
III տասնյակ	Բ	Ճ	Պ	Ք	Հ	Ջ	Գ	Ց	Ջ	Ֆ
	6	6	6	6	5	5	4	3	1	0

Այս դիրքում ևս բաղաձայնական համակարգի բոլոր անդամներից բացակայում է միայն Ֆ գրույթը։ Այս դիրքում ամենամեծ ակտիվություն ցուցաբերում է Վ բաղաձայնը, որը բացառությամբ չորս բաղաձայն գրույթների (Հ, Ց, Ջ, Ֆ) իրենից առաջ կարող է ունենալ շարքում որևէ բաղաձայն (ցանկացած)։

Զուգորդությունների գործառական ծանրաբեռնվածության մասին կարող ենք գաղափար կազմել, եթե դիտենք նրանց բաշխումը 715 բառաձևերում։

Շարքի երրորդ անդամի տեղում հանդես եկող բաղաձայնների գործառությունը բառաձևերում ըստ տասնյակների հետևյալն է.

I տասնյակ	Ն	Կ	Տ	Ր	Մ	Վ	Լ	Դ	Ճ	Ջ
	65	52	41	34	32	28	27	26	25	22
II տասնյակ	Թ	Շ	Ծ	Գ	Ռ	Մ	Խ	Պ	Բ	Ձ
	21	21	19	17	17	16	16	16	15	13
III տասնյակ	Ձ	Փ	Ց	Ջ	Ք	Ղ	Հ	Ֆ	Յ	Ց
	13	13	11	10	10	5	4	3	2	0

Շարքի չորրորդ տեղում հանդես եկող բաղաձայնների գործառությունը բառաձևերում ըստ տասնյակների հետևյալն է.

I տասնյակ	Վ	Տ	Կ	Ն	Լ	Մ	Ռ	Ց	Ղ	Ր
	113	73	50	48	39	33	33	25	25	25
II տասնյակ	Դ	Խ	Ջ	Փ	Թ	Ձ	Ս	Շ	Ծ	Բ
	24	21	21	21	20	19	18	17	13	11
III տասնյակ	Գ	Ք	Գ	Ջ	Ճ	Հ	Պ	Յ	Ձ	Ֆ
	11	11	9	9	8	6	6	4	2	0

Այս դիրքում շատ զուգորդություններ են կազմվում Վ և Տ բաղաձայններով, որոնց բաժին է ընկնում շարքերն ամփոփող բաղաձայնների 1/4-ից ավելին։

ԲԱՌԱՍԿԶԲԱԿԱՆ ՀԻՆԳԱՆԴԱՄ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐ

Հայերենում բառասկզբում կան բառեր, որոնցում բաղաձայնական հաջորդականությունները կազմված են 5 և ավելի գրույթներից։ Ինչպես քառանդամ բաղաձայնական հաջորդականությամբ սկսվող բառաձևերում, այստեղ ևս հիմնականում հանդես են գալիս բառական կրկնարմատ ձևավավորությամբ կազմություններ, որոնք ճնշող մեծամասնությամբ գործողություն ցույց տվող բառեր են։ Հնչական մակարդակում այս հաջորդականությունները բաժանվում են 2 կամ 3 վանկերի վրա։ Սրանց կազմությանը մասնակցում է Ը ձայնավորը, սակայն չկան բառաձևեր, որոնցում այս ձայնավորը գործառվի բառի բացարձակ սկզբում։ Բառացանկում ըստ կարելվույն թողել ենք միայն գրական հայերենին հարազատ ձևերը, խուսափելով գրային տարբերակներից։

Բ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսող հինգանդամ բաղաձայնական (գրային) շարք ունեցող բառերը մեր ցուցակում 5-ն՝ բզկտվել [բզկտվէլ], բժշկվել [բժժշկվէլ], բռնկվել [բռռնկվէլ], բռնցքահարել [բռռնցքահարէլ], բրդգգել [բռրդգգէլ]։ Նման բառաձևերի կազմությունը մեծ մասամբ ունի վ կրավորական ածանցը։

Գ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս և մյուս բաղաձայններով սկսվող հինգանդամ բառաձևերի կազմությանը նշանակալից մասնակցություն ունեն բայական ածանցները։ Ընդ որում այստեղ է, որ հիմնականում գործառվում են ժողովրդախոսակցական լեզվին հատուկ բայաձևեր։ Հինգանդամ շարքով սկսվող բառերից են գզգզված [գզգզվածˊ], գզվռտել [գզվռտէլ], գժդմնել [գժդմնէլ], գլգլյուն [գլգլյուն], գծգծվել [գծգծվէլ] գծմծվել [գծմծվէլ], գմփռճիկ [գմփռճիկ], գրգլյակ [գռրգլյակ], գրգմռւճ [գռրգմռնք], գրգռվել [գռրգռվէլ]։ Բառարանից ընտրված կազմությունների թիվը 10-ն է։

Դ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ ունեցող բառաձևերից ընտրել ենք հետևյալները՝ դխդխկալ [դռխդռխկալ], դղրդյուն [դռղռրդյուն], դմբռճիկ (ժղ.) [դռմբռռճիկ], դնճռվել [դռնռռվէլ], դռնչյուն [դռռնչյուն], դրմփյուն [դռրռմփյուն], դրնդյուն [դռրռնդյուն], դռստվել [դռռռստվէլ]։ Ներկայացված են 8 կազմություններ։ Հաճախ բառարանում ներկայացված ձևերը իմաստով այնքան են մոտ միմյանց, որ նրանց իմաստային տարբերություններ գտնելը շատ դժվարին է։ Այս դեպքում էլ մենք հաշվարկում ենք այն բոլոր ձևերը որոնք չունեն տես–ով հղումներ։

Ջ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ ունեցող բառերի քանակը մեծ չէ՝ զխկտվել [զռխկռտվէլ], զղջմտաբար [զռխճմռտաբար], զմռսվել [զռմռսվէլ], զմրխտագործ [զռմռրխտագործ], զնգրտալ [զռնգռրտալ], զրզնդալ [զռրզռնդալ]։ Ներկայացված կազմությունները 6-ն են, թեև Հ. Բարսեղյանի բառարանում երկու բառ այլ գրություն ունեն՝ զղջամտաբար և զմռուխտագործ։

Թ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ ունեցող բառերի քանակը հետևյալն է՝ թխթխկալ *[թըխթըխկալ]*, *նույն նշանակությամբ գործածվում է նաև* թխկթխկալ *[թըխկթըխկալ]*, *բառաձևը,* թխկրտալ *[թըխկըրտալ]*, թնձկտալ *[թընձկըտալ]*, թնչկռել *[թընչկըռէլ]*, թնչկվել *[թընչկըվէլ]* թրթնջուկ *[թըրթընջուկ]*, թրչշել *[թըրթըշշէլ]*: *Ընդամենը 7 կազմություն:*

Ծ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Բառարանում կա մեկ այսպիսի կազմություն՝ ծնգռնել *[ծընգըռնէլ]*,

Լ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություն ունեցող բառերը 5-ն են՝ լխլխկալ *[լըխլըխկալ]*, լկտվել *[լըկըտվէլ]*, լղղջուր *[լըղըղջուր]* *(չկա Բառեղչյանի բառարանում)*, լղճվել *[լըղըճվէլ]* *(ժղ.)* *հղումով*, լպտվել *[լըպըտվէլ]*:

Խ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով համեմատաբար շատ են կազմվում բառասկզբական բաղաձայնական հաջորդականություններ ունեցող բառաձևեր: Հինգանդամ շարքեր ունեցողները հետևյալներն են՝ խզրզվել *[խըզրըզվէլ]*, խթխթվել *[խըթխըթվէլ]*, խլշտրիկ *[խըլըշտրիկ]*, խլպտալ *[խըլպըտալ]*, խծրծվել *[խըծրըծվէլ]*, խնդրվել *[խընդրվէլ]*, խշխշյուն *[խըշխըշյուն]*, խշրտյուն *[խըշրըտյուն]*, խշրտվել *[խըշրըտվէլ]*, խրխրնդուկ *[խըրխրընդուկ]*, խրտմտալ *[խըրտմըտալ]*, խրխնջալ *[խըրխընջալ]*: *Ընդամենը 12 կազմություն:*

Ծ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Կազմությունների քիվը 5-ն է՝ ծծմբյա *[ծըծմբյա]*, ծմրկտալ *[ծըմրկտալ]*, ծննդկան *[ծընընդկան]*, ծննդյան *[ծընընդյան]*, ծոմովել *[ծըոմըվէլ]*

Կ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմված բաղաձայնական շարքերով սկսվող հաջորդականությունները հայերենում բավականին գործուն են: Մի կողմ թողնելով բոլոր տարբերակային ձևերը ուսումնասիրության համար առանձնացրել ենք բաղաձայնական հինգանդամ շարքով սկսող հետևյալ բառաձևերը՝ կլպլտալ *[կըլպըլտալ]*, կսմբվել *[կըսմբվէլ]*, կմշտուկ

[կմրշտրուկ], կեղրկայիւ *[կընդրկայիւ]*, կենովել *[կընճրովէլ]*, կընտրենաց *[կընտրնտօց]*, կրեցյուն *[կրրճրցյուն]*, կցկցվել *[կրցկրցվէլ]*, կցմցվել *[կրցմրցվէլ]*։ *Ընդամենը 9 կազմություն։*

Հ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հաջորդականությունները 3-ն են՝ հորընդյուն *[հրորնդյուն]*, հրհրվել *[հրրհրվէլ]*, հրմշտել *[հրրմշտէլ]*։

Ջ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Կան նման կազմության երկու բառ՝ ձգձգվել *[ձրգձրգվէլ]* և ձգմրգվել *[ձրգմրգվէլ]*։

Ղ բաղաձայնով սկսող հինգանդամ հաջորդականություններ

Աղայանի բառարանում կան երկու բառ այսպիսի կազմության՝ ղնջղնել *[ղրնջրղնէլ]* և ղնջրտալ *[ղրնջրրտալ]*, *որոնք թերևս ավելի շուտ բարբառային կազմություններ են, քան գրական հայերենի բառեր։*

Ճ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հաջորդականություններ ունեցող բառերը ավելի գործածական են գրական հայերենում։ Նման կազմություններից են՝ ճլպլտալ *[ճրլպլրտաւ]* ճլվստալ *[ճրլվրստաւ]*, ճխլտվել *[ճրխրլտվէլ]*, ճղճղվել *[ճրղճրղվէլ]*, ճմշկվել *[ճրմշրկվէլ]*, ճմռթվել *[ճրմրռթվէլ]*, ճճճղկերեն *[ճրճճրղկէրէն]*, ճշգրտել *[ճրշգրրտէլ]*, ճռճչյուն *[ճրռրճչյուն]*։ *Ընդամենը 9 կազմություն։*

Մ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Գրական հայերենում կան այս բաղաձայնով սկսվող 5 կազմություններ՝ մխրճվել *[մրխրրճվէլ]*, մշտնջենական *[մրշտրնջենական]*, մկրտվել *[մրկրրտվէլ]*, մրմնջալ *[մրրմրնջալ]*, մրրկվել *[մրրրրկվէլ]*։

Ն բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Կա այսպիսի մեկ կազմություն՝ նկրտվել *[նրկրրտվէլ]*։

Շ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Համեմատաբար գործուն են այս բաղաձայնով սկսվող հինգանդամ բաղաձայնական շարքեր ունեցող բառաձևերը՝ շընթրոկել *[շրնթրրոկէլ]*,

ՀՀկլվել [հշհկլվէլ], ՀՀնջյուն [հշհնջյուն], ՀՀպովել [հշհպովէլ], ՀՀրտովել [հշհրտովէլ], ՀՀոնդյուն [հշհոնդյուն], ՀՀռնչյուն [հշհռնչյուն], ՀՀոկոտել [հշհոկոտէլ]։ Ընդամենը 8 կազմություն։

Զ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Կան ժողովրդախոսակցական լեզվում գործածվող 2 կազմություններ՝ ՀՀարթմա [հշհրթմա] *և* ՀՀնՀՀոտել [հշհնհշհոտէլ]։

Պ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հինգանդամ շարքեր ունեցող բառաձևերն են՝ պՀՀնդրեկ [պհշհնդրէկ], պՀՀնձվել [պհշհնձվէլ], պՀՀղջյուն [պհշհղջյուն], պՀՀոստվել [պհշհոստվէլ], պՀՀրտվյա [պհշհրտվյա]։ Ընդամենը 6 կազմություն։

Ջ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով կազմությունները հետևյալն են՝ ջՀՀմխվել [ջհշհմխվէլ], ջՀՀնվել [ջհշհնվէլ], ջՀՀրկել [ջհշհրկէլ], ջՀՀրհանել [ջհշհրհանէլ], ջՀՀռնտեսություն [ջհշհռնտէսություն]։ Ընդամենը 5 բառաձև։

Ս բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Բառասկզբում բաղաձայնական շարքեր կազմող գործուն հնչյուններից մեկն է։ Ունենք հետևյալ բառերը՝ սՀՀլվյուն [սհշհլվյուն], սՀՀկալ [սհշհկալ], սկզբնաբան [սկզբնաբան], [ըսկզբնաբան], սկրվել [սկրվէլ], սՀՀկրտալ [սհշհկրտալ], սՀՀնդվել [սհշհնդվէլ], սրճբրաշ [սրճբրաշ], սրսկվել [սրրսկվէլ], սրտմտել [սրտմտէլ], սփրթնել [սփրթրթնէլ]։ Ընդամենը 10 կազմություն։

Վ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Գրական հայերենում գործածական են այսպիսի 4 կազմություններ՝ վզվզյուն [վզվզյուն], վՀՀգստալ [վհշհգստալ], վրՀՀվել [վրհշհվէլ], վրՀՀյուն [վրհշհյուն]։

Տ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող հաջորդականություններով բառերի մեծ մասը ժողովրդախոսակցական լեզվի բառեր են։ Ունենք հետևյալ կազ-

մությունները՝ տղտղկել [տղտղղկէլ], տմսկվել [տմմբսկվէլ], տեկլտալ [տրնկբլտալ], տեկոտալ [տնկոտալ], տեռղվել [տրնտրղվէլ], տբվրնջյան [տբվրնջյան], տրպտկել [տրբպբտկէլ]։ Ընդամենը 7 կազմություն։

Յ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնով սկսվող բառերը հետևյալներն են՝ ցնկնվել [ցբնկրնվէլ], ցնցղկել [ցբնցբղկէլ], ցնցղնել [ցբնցբղնէլ], ցնցղվել [ցբնցբղվէլ], ցոպբտկի [ցբոպբտկի], ցրցղնել [ցբրցբղնէլ], ցրցնբել [ցբրցբնքէլ]։ Ընդամենը 7 կազմություն։

Փ բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Հայերենի համեմատաբար գործուն հնչյուններից է, որոնց հաջորդում են բաղաձայնական հաջորդականություններով շարքեր։ Ունենք հետևյալ կազմությունները՝ փլմվվել [փբլմբվվէլ], փլփլել [փբլփբլվէլ], փնտրվել [փբնտրբվէլ], փշփշյուն [փբշփբշյուն], փռնգալուն [փբռբնգբալյուն], փռնչյուն [փբռբնչյուն], փռնչտալ [փբռբնչտալ], փսլեֆոտ [փբսլբեֆբօտ], փրփնջան (բրբ.) [փբրփբնջան]։ Կազմություններում մեջ երբեմն տեղ են գտել նաև զուտ բարբառային բառաձևեր, որոնց բովանդակությունը գրականում չի ներկայացվում առանձին բառով։ Ներկայացված կազմությունների ընդհանուր թիվը 9-ն է։

Ք բաղաձայնով սկսվող հինգանդամ հաջորդականություններ

Այս բաղաձայնը լինում է բաղաձայնական շարքեր ունեցող բառերի սկզբում։ Հինգանդամ բաղաձայնական հաջորդականություններով սկսվող բառերը հետևյալներն են՝ քլմսաել [քբլմբստէլ], քլնգվել [քբլբնգվէլ], քշփշյուն [քբշփբշյուն], քսմսվել [քբսմբսվէլ], քստրմնալից [քբստբմնալից], քռանֆաբջիջ [քբռբտրնքաբջիջ], քրթջյուն [քբրթբջյուն], քրթրվել [քբրթբրվէլ]։ Ընդամենը 8 կազմություն։

Ռ. Լ. ՈՒՌՈՒՏՅԱՆ, Պ. Կ. ՂԱԶԱՆՉՅԱՆ, Ե. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Գ. Օ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԵՔՍՏԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ինֆորմացիայի տեսության մեջ կապակցված տեքստը դիտվում է ինֆորմացիայի էրգոդիկ աղբյուր։ Իսկ վերջինիս հատուկ են վիճակագրական որոշակի օրինաչափություններ, որոնք ենթարկվում են բաշխվածության օրենքի և հաղորդագրության երկարության ավելացման միջոցով կարելի է հասնել կայուն ու ճշգրիտ գնահատականների։ Այդ նշանակում է, որ որևէ լեզվով գրված ամեն մի տեքստի համար կարող ենք ստանալ բնութագրիչների համախումբ, որի օգնությամբ մի տեքստը տարբերվում է մեկ այլ տեքստից։

Դժվար է պնդել, թե ամեն մի տեքստ պատկանում է ինֆորմացիայի իդեալական էրգոդիկ աղբյուրների թվին, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է գրական հուշարձաններին։ Ցանկացած տեքստում առկա են լեզվական ընդհանուր ու հեղինակային անհատականությունը, դարաշրջանային համաժամանակությունն ու տարժամանակությունը, հնարանությունն ու նորարանությունը, և եթե այս ամենին ավելացնենք այն, որ գրական հուշարձանները մեզ հասել են ոչ թե բնագրային տեսքով, այլ տարբեր ժամանակներում և տարբեր կրթօջախներում արված կրկնօրինակների, այսպես կոչված ցուցակների (կամ ընդօրինակությունների) տեսքով, որոնք իրենց վրա կրելով դարաշրջանային, տեղային աղդեցությունները, պարունակում են օրինաչափ ու պատահական, սուբյեկտիվ ու օբյեկտիվ բնույթի աղավաղումներ։ Վերջիններս կարող են հասնել այն աստիճանի, որ կասկածի տակ առնվի տվյալ ընդօրինակությունը տվյալ հեղինակին պատկանելու հարցը։ Այդ աղավաղումների պատճառով առանձնապես դժվարանում է տեքստային բնութագրիչների որոշումը և դրանց գնահատումը։

Ընդհանրապես, տեքստաչափական աշխատանքներին հատուկ են տեքստային լայն զանգվածների ներառմամբ գործողությունների միօրինակություն, երբ անհրաժեշտ է հաշվի առնել հարյուրավոր փաստեր, որը հաճախ գերազանցում է մարդու հնարավորությունները։ Մյուս կողմից, ժամանակակից հաշվողական տեխնիկան թույլ է տալիս ընդգրկել ավելի

լայն տեքստային զանգվածներ, քննության առնել ամեն մի փաստ, առաջ քաշել խնդիրներ, որոց վճռումը ավանդական եղանակով գործնականում հնարավոր չէ։

Այս առումով ներկա հոդվածում դրվում է երկու խնդիր կապված Մ. Խորենացու «Հայոց պատմության» ստեղծագործության քննության հետ և նշվում այդ խնդիրների լուծման եղանակները ժամանակակից էլեկտրոնային հաշվողական մեքենաների օգնությամբ։

Ժամանակակից բանասիրության մեջ գրական ստեղծագործությունների որոշակիացման խնդիրը քննվում է երեք ուղղություններով՝ փաստաբանավերագրական գաղափարաթեմատիկ և լեզվաոճական։ Այս կապակցությամբ Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Ոճական վերլուծության մարքսիստական մեթոդաբանությունը, մեր կարծիքով, պետք է բխի գրական ստեղծագործության իմացությունից՝ ինչպես գաղափարական, թեմատիկ, կոմպոզիցիոն և լեզվական (ընդգծումը մերն է) դիալեկտիկորեն կապված տարրերի կառուցվածքային միասնությունից» (Վ. Վ. Վինոգրադով, էջ 197)։

Հայտնի է, որ ինչպես տեքստի, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող ամեն մի նախադասության տարրերը, ոչ թե մեկուսացված, տարանջատ այլ համակարգայնության հարաբերություններով կապված լեզվական միավորներ են, որոնք հանդես են գալիս որոշակի օրենքների ու կանոնների համապատասխան։ «Ամեն մի գործողություն,— գրում է Ջ. Շմիդտը,— լինի դա լեզվական, թե ոչ լեզվական, նկատի ունի որոշակի նորմա և տեխնիկա, որոնք առանց էական շեղումների ընդունվում ու գործածվում են հասարակության բոլոր անդամների կողմից» (Շմիդտ, էջ 100)։

Լայն ըմբռնմամբ նորմայի ու տեխնիկայի համախումբը կարելի է անվանել քերականություն, որը, փաստորեն, տրված էլեկտրային միավորների հետ նախօրոք սահմանված գործողությունների հաջորդակարգ է։ Եթե ոչ լեզվական իրողություններում օբյեկտների միջև գոյություն ունեցող հարաբերությունները կարելի է նկարագրել այսպես կոչված սոցիալական քերականության օգնությամբ, ապա լեզվական իրողություններում լեզվական միավորների միջև հարաբերությունները նկարագրվում են լեզվի քերականության՝ շարահյուսության և ձևաբանության օգնությամբ։

Այսպիսով, տեքստի բառակազմի ընտրությունը և նրանում բառերի հաջորդման կարգը հիմնականում որոշվում է լեզվական նորմայով։ Սակայն լեզվական նորման քարացած հրահանգների հավաքածու չէ։ Լեզվական նորմայի կիրառության վրա էապես ազդում է հեղինակային անհատականությունը, որով և բնորոշվում է ոճը։ Հետևաբար, տեքստի հե-

ղինակային ոճի որոշումը հանգում է լեզվական նորմայի կիրառման առանձնահատկությունների բացահայտմանը։

Տեքստի վիճակագրությունը ցույց է տալիս, որ հեղինակային ոճի որոշման հարցում տեքստի առանձին միավորների արձանագրումը խիստ կարևոր է, սակայն հուսալի արդյունքներ չի ապահովում։ Արդյունքներն ավելի հավաստի ու ծանրակշիռ են դառնում, երբ իբրև հետազոտության օբյեկտ ընտրվում են ոչ միայն տեքստի առանձին միավորները, այլև նրանց տարբեր զուգորդումները։ Հարկ է նշել, որ քննության համար տեքստից կարող են ընտրվել ինչպես բառային միավորները, այնպես էլ դրանք բնութագրող քերականական կարգերը։

Սահմանում։ Տեքստում լեզվական A միավորի (կամ նրա բնութագրող քերականական կարգի) հանդես գալը անվանենք լեզվական միավորի (կամ քերականական կարգի) հանդիպում և նշանակենք A(n)-ով, որտեղ n-ը A միավորի հանդես գալու թիվն է։

Լեզվական A և B միավորների (կամ նրանց քերականական կարգերի) հարադիր ձևով տեքստում հանդես գալը անվանենք A և B միավորների զույգ հանդիպում և նշանակենք A n B, որտեղ n-ը այդպիսի հարադրության հանդիպումների թիվն է, երբ A-ն գրավում է ձախադաս դիրք։

Տեքստում լեզվական միավորների հանդիպման քննությունը հանգեցնում է միաչափ աղյուսակի, որտեղ տրված են լեզվական միավորները և հանդիպման n-հաճախությունները. այդ միավորների զույգ հանդիպումների քննությունը՝ երկչափ աղյուսակի՝ քառակուսի մատրիցի, որի տողերն ու սյուները փոխհամապատասխանության մեջ են դրվում A և B լեզվական միավորների հետ, իսկ մատրիցի յուրաքանչյուր տարր ներկայացնում է զույգ հանդիպման թիվը կամ հաճախությունը։

Տեքստի կարևոր բնութագրիչներից է բառաձևերը բնորոշող քերականական կարգերի կամ նրանց համախմբերի փոխդասավորությունը։ Այն որոշելու համար տեքստի յուրաքանչյուր բառը փոխարինվում է նրան համադրվող քերականական կարգերի համախմբով, գոյական՝ անուն, հոլով, թիվ, հոլովում, բայ՝ եղանակ, ժամանակ, թիվ, դեմք և այլն։

Մ. Խորենացու «Հայոց պատմության» քննության համար ընտրել ենք քերականական կարգերի 360 համախումբ։

Գոյական գն<անուն, հոլով, թիվ, հոլովում>,
անուն <հատուկ (հտ), հասարակ հս>,
հոլով <ուղղական (ուղղ), սեռական (սռ), արական (ար), հայցական (հյ), բացառական (բց), գործիական (գծ)>,
թիվ <եզակի (եթ), հոգնակի (հթ)>,
հոլովում<ա, ե, ի, ո, ու, ի-ա (իա), ո-ա, (ոա)>,

ածական *ած* <*ածականի տեսակ, հոլով*>,
ածականի տեսակ <*դրական (դր), համեմատական (հմ), գերադրական (գր), հարաբերական (հր)*>,
թվական *թն* <*թվականի տեսակ, հոլով, թիվ*>,
թվականի տեսակ <*քանակական (քն), դասական(դս), անձնական (ած)*>,
դերանուն *դն* <*դերանվան տեսակ, հոլով*>,
դերանվան տեսակ <*անձնական (ան), փոխադարձ (փձ), ցուցական (ցց), ստացական (սց), հարցական (հց) հարաբերական (հր), անորոշ (աշ), որոշյալ(ոշ)*>,
բայ *բյ* <*եղանակ, ժամանակ, թիվ, դեմք*>,
եղանակ <*սահմանական (սհ), ստորադասական (սդ), հրամայական (հր), սահմանական եղանակի ժամանակ ներկա (նկ), անցյալ կատարյալ (ակ)*>,
ստորադասական եղանակի ժամանակ <*առաջին ապառնի (առ), երկրորդ, ապառնի (եր)*>,
հրամայական եղանակի ժամանակ <*բուն (բն), հորդորական (հն), արգելական (ար)*>,
դեմք <*առաջին (ադ), երկրորդ (բդ), երրորդ (դդ),*
դերբայ *դբ* <*տեսակ, հոլով*>,
դերբայի տեսակ <*անորոշ (աշ), անցյալ (ացյ), ապառնի (ապ) ենթադրական (են)*>,
շաղկապ *շղ* <*համադասական (հդ), ստորադասական (սդ)*>,
մակբայ *մբ* <*տեղի (տղ,) ժամանակի (ժմ,) ձևի (ձվ), չափի (չփ), աստիճանի (աս)*>,
ժխտական մասնիկ *մս*,
նախդիր *նդ* <*հոլով*>,
նախադրություն *նխ* <*հոլով*>,
կետադրություն <*միջակետ (մտ), ստորակետ (ստ), բութ (բթ), վերջակետ (վջ)*>։

Քերականական կարգերի ընտրված համակարգում գոյականին համադրվում է 168 համախումբ (1-168), ածականին՝ 24 (168-12), թվականին՝ 36 (298-228), դերանվանը՝ 48 (229-276), բային՝ 36 (277-312), դերբային՝ 24 (213-236), շաղկապին՝ 2 (237-238), մակբային՝ 5 (338-343), ժխտական մասնիկին՝ 1 (348), նախդիրներին՝ 6 (345-350), նախադասություններին՝ 6 (351-356) և կետադրական նշաններին՝ 4 (357-360)։

Հարկ է նշել, որ ընտրված քերականական կարգերի համախմբերի թիվը գերազանցում է մինչև այժմ կատարված փորձերում ընդգրկված

համախմբերի թվից։ Մասնագիտական գրականության մեջ հայտնի է 120-150-ական կարգերի համախմբերի ընտրման դեպք։ Մեր փորձի համար, ինչպես նշվեց, ընտրել ենք քերականական կարգերի թվով 360 համախումբ։ Դա ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր։

Դրականն այն է, որ տեքստի ամեն մի բառ նկարագրվում է ավելի մանրամասն, որը թույլ է տալիս հաշվի առնելու հնարավորին չափ ավելի շատ փաստեր։ Այսպես, առանձին ուշադրության է արժանացել կետադրության հարցը, որը այլ փորձերում բաց է թողնվել (Բորոդկին)։ Մեր կարծիքով, տեքստում առկա կետադրությունը կարևոր ինֆորմացիա է կրում նրա կառուցվածքի վերաբերյալ։ Տեքստի կետադրությունը կարելի է օգտագործել նախադասությունների դասակարգման, նրանց սկզբնական և վերջնական հատվածների քննության, բառային կապակցությունների վերլուծության ժամանակ և այլն։ Իհարկե, այն տեքստերում, որտեղ կետադրությունը բացակայում է, քերականական կարգերի ցանկից կարելի է հանել նաև կետադրությանը համադրվող համախմբերը։

Քերականական կարգերի համախմբերի մեծ ցանկի ընտրության բացասական կողմն այն է, որ ստեղծվում են լրացուցիչ դժվարություններ զույգ հանդիպումների մատրիցի կազմման ու հետագա մշակման հարցում։


Որո՞նք են այդ դժվարությունների հաղթահարման միջոցները։ Իհարկե, քերականական կարգերի 360 համախմբերի օգնությամբ տեքստի ձևաբանական վերլուծությունը և քերականական կարգերի զույգ հանդիպումների մատրիցի կառուցումը և մշակումը ավանդական եղանակներով չափազանց դժվար է, գուցե և անհնար։ Սակայն քերականական կարգերի այդպիսի քանակությունը ընտրվել է նկատի ունենալով աշխատանքների ավտոմատացումը EC-1045 հզոր հաշվողական մեքենայի օգնությամբ։ Մյուս կողմից ծրագրային ապահովման համակարգը նախագծվել է այնպես, որ անհրաժեշտության դեպքում կարելի է նվազեցնել ելակետային կարգերի թիվը։ Այսպես, եթե գոյականական կարգերի քննության ժամանակ հաշվի չառնվի հոլովումը, ապա 7 անդամ կպակասի գոյականին համադրվող քերականական կարգերի համախմբերի թիվը, և այն 168-ից կդառնա 24։ Նման փորձեր կարելի է կատարել նաև մյուս խոսքի մասերի հետ։ Պարզագույն դեպքում կարելի է փորձը դնել միայն խոսքամասային մակարդակով։

Այսպիսով, քերականական կարգերի զույգ հանդիպումների մատրիցի կազմման առաջին փուլը տեքստի ձևաբանական նկարագրությունն է, որը տեքստաբանության հիմնական, աշխատատար փուլերից է։ Այդ նկատառումով տեքստի վերլուծության ժամանակ առաջին հերթին դրվում է ձևաբանական վերլուծության ավտոմատացման խնդիրը։ Ժամանակա-

կից լեզուների համար արդեն գոյություն ունեն ձևաբանական վերլուծության ավտոմատ համակարգեր։

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում մշակված է ժամանակակից հայերենի ձևաբանական վերլուծության ալգորիթմ (Ռ. Ուռուտյան)։ Ինչ վերաբերում է հին հայերենին, ապա համապատասխան ալգորիթմներ դեռ մշակված չեն։ Այստեղ, եթե դիմենք ձևաբանական վերլուծության ավանդական եղանակներին, այսինքն՝ կատարենք ձեռքով, ապա խիստ նվազում է ընտրանքը, որը բացասաբար կանդրադառնա արդյունքների հավաստիության և ճշգրտության վրա։

Այդ պատճառով մենք ընտրել ենք տեքստի ձևաբանական նկարագրության ավտոմատացման եղանակ, որն այսօր էլ լայն կիրառում ունի տեքստերի ավտոմատ մշակման գործում (Լենդերս)։ Դա ձևաբանական վերլուծության բառարանային եղանակն է։



Եթե կազմենք տեքստի բառաձևերի բառարան, որտեղ ամեն մի բառաձև համադրվում է քերականական կարգերի համախմբով, ապա այն կարող ենք օգտագործել ձևաբանական նպատակով։ Դրա համար անհրաժեշտ է տեքստից ընտրած յուրաքանչյուր բառի համար բառարանում գտնել համապատասխան գլխաբառը և ստանալ նրան համադրվող քերականական կարգերի համախումբը։


Տեքստի ձևաբանական վերլուծության առաջարկվող եղանակը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Որպես օրինակ բերենք Մ. Խորենացու «Հայոց պատմություն» ստեղծագործությունից (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981) 96 էջի առաջին պարբերության ձևաբանական նկարագրությունը

Տեխստ Եւ ձեռնարկէ այնուհետեւ ի գործն ի ձեռն պատգամաւորութեան, գալ նոցա ի տեսութիւն միաբանութեան ի տեղի միջոց սահմանաց երկոցունց թագավորութեանցն. իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթե ոչ և դէմք երկոցունց հանդէպ լինիցին։ Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իրին կատարումն՝ ոչ ինչ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէ, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութեան սրտի։ Եւ յայտնեալ այսպիսւոյ չարութեան՝ ոչ ինչ էր այնուհետեւ բան և խորամանկութիւն, որ զայսպիսի առագաստէր զչարութիւն. այլ յայտնի այնուհետեւ գրգռէր խաղմն։

Հատվածի ձևաբանական նկարագրություն. /շղ, հդ/ բյ, սհ, նկ, եթ,դդ /մկ, ժմ/ նդ, հյ/ գն, ես, հյ, եբ, ռ/ նդ, հյ /գն, հս, հյ, եթ, ի/ գն, հս, սռ, եթ, ա /ստ/ դբ, աշ, ուղ, /ղն, ձն, տր/ նդ, հյ /գն, հս, հյ, եթ, ա/ գն, հս, սռ, եթ, ա /նդ հյ/ գն, ես, հյ, եբ, ռ/գն, հս, սռ, եթ, ո/գն, հս, սռ, հթ, ա/ թն, ած, սռ, հթ /գն, հս, սռ, հթ,ա/ մտ /նխ, հյ/ գն, հս, ուղ, եթ,ի /ղն, աշ, ուղ /շղ, հդ/ գն, հս, ուղ, եթ, ո /ան, դբ, ուղ/ դբ, աց, ուղ /ստ/ դն, հբ, ուղ /նխ, սռ/ գն, հս, սռ, եթ, ո /շղ, հդ/ գն, հս, սռ, եթ, ա /դբ, աշ, ուղ,/ մս /բյ, սհ, նկ, եթ, գդ/ գն, հս, ուղ, եթ, ա /ստ/ շղ, հդ /մս/ գն, հս, ուղ, հթ,ի /թն, ած, սռ, եթ/ մկ, տղ /բյ, սդ, առ, հթ, գդ/ վջ /շղ հդ /դբ, աշ, գծ/ գն, հտ, սռ, եթ, ա /նդ, հյ/ գն, հս, սռ, եթ, ռ/ գն, հս, սռ, եթ, ա /գն, հս, հյ, եթ, ա/ բթ /մս/ դն, հբ, հյ /նդ, բց/ դն, հբ, բց /բյ, սհ, աա, եթ, գդ/ գն,հտ, ուղ, եթ, ա /բթ/ բյ, սհ, նկ, եթ, գդ /ստ/ շղ, հդ /նդ, հյ/ գն, հս, հյ, եթ, իա /գն, հս, սռ, եթ,ո/ բյ, սհ, նկ, եթ, գդ /շղ, սդ/ դն, հբ, ուղ /նդ, տր/ դն, ձն, տր /գն, հս, տր, եթ, ա/ գն, հս, տր,եթ, ի/ վջ /շղ, հդ/ դբ, աց, ուղ /ղն, ցց, սռ/ գն, հս, սռ, եթ, ա /բթ/ մս /ղն, հբ, ուղ/ բյ, սհ, աա, եթ, գդ /մկ, ժմ/ գն, հս, ուղ, եթ, ի /շղ, հդ/ գն, հս, ուղ, եթ, ա /ստ/ դն, հբ, ուղ /դն, ցց, հյ/ բյ, սհ, աա, եթ, գդ /նդ, հյ/ գն, հս, հյ, եթ, իա /մտ/ շղ, հդ /ան, դբ, ուղ/ մկ, ժմ /բյ, սհ, աա, եթ, գդ/ գն, հս, ուղ, եթ, ի /վջ/

Եթե տեքստի ձևաբանական նկարագրությունը պատրաստ է, արդեն կարելի է անցնել քերականական կարգերի զույգ հանդիպումների մատրիցների կազմմանը։ Մեր կողմից բերած պարբերության մեջ ներառված է 100 բառ, հաշված նաև կետադրական նշանները։




Սովորաբար փորձարկվում են 1000-1500 լիիմաստ բառերով հատվածներ։ 100 բառը նկարագրվում են քերականական կարգերի 46 համախմբով (քերականական կարգերի համախմբերի ցանկը տրված է հավելվածում)։ Հատվածի բառերի և քերականական համախմբերի հարաբերությունը 2:1 է։ Սակայն բառերի հետագա ավելացումը չի բերի քերականական կարգերի համեմատական աճի, քանի որ համախմբերի թիվը 360 է։ 1500 բառի դեպքում այդ հարաբերությունը կլինի մոտավորապես 5:1։

Բերված 100 բառն արդեն ցույց է տալիս քերականական կարգերի և նրանց զուգորդումների որոշ բաշխվածություն։ Այն ավելի ակնառու դարձնելու համար զույգ հանդիպումների մատրիցի հիման վրա կառուցվում է զույգ հանդիպումների գրաֆ։ Դա մի ուղղորդված հարթ գրաֆ է, որի գագաթները փոխհամապատասխանության մեջ են դրվում քերականական կարգերի համախմբերի, իսկ աղեղները, որոնք ուղղորդված են ըստ տեքստի ձախից աջ, ցույց են տալիս զույգ հանդիպումների թիվը։

Փորձնական եղանակով հաստատված է, որ նույն ոճի տեքստերին համապատասխանող գրաֆների զուգաձևության (изоморфность) աստիճանը բարձր է։ Զուգաձևության արդեն 25—30 տոկոսի դեպքում կարելի է խոսել երկու տեքստերի միևնույն ոճի մասին։

Տեքստում քերականական կարգերի զույգ հանդիպման բաշխվածության խնդրի մաթեմատիկական ապահովման համակարգի սկզբունքային սխեման բերվում է ստորև (նկ. 1)։



Համակարգը բաղկացած է երկու ենթահամակարգերից՝ 1) զույգ հանդիպումների մատրիցի կազմման և 2) զույգ հանդիպումների մատրիցների համեմատության։

Առաջին ենթահամակարգի ելակետային տվյալները տեքստն է, աշխատանքի արդյունքը՝ քերականական կապերի զույգ հանդիպումների մատրիցը։ Աշխատանքի սկզբունքը հետևյալն է. նախ բառաձևերի բառարանի օգնությամբ ստացվում է տեքստի ձևաբանական նկարագրությունը, որը, այնուհետև վերածվում է քերականական կարգերի համախմբերի կոդերի հաջորդականության։ Այսպես, եթե վերևում բերած պարբերության ձևաբանական նկարագրության մեջ (շղ, հդ) քերականական կարգը փոխարինենք համապատասխան կոդով՝ 337 (տես ծանոթությունը), բյ, սև, նկ, եր, գդ, կարգը՝ 297-ով և այլն, ապա կստանանք կոդերի հետևյալ հաջորդականությունը 337, 279, 340, 354, 130, 354, 129, 99, 359, 313, 231, 54 ...

Վերցնենք հաջորդականության առաջին զույգը՝ 337,279։ Այն ցույց է տալիս, որ 337 և 279 կոդեր ունեցող քերականական կարգերով բնորոշվող բառերը տեքստում հարադիր են, որտեղ 337 կոդով բնորոշվող բառը զբաղեցնում է ձախադաս դիրք։ Ըստ զույգ հանդիպումների մատրիցի սահմանման 337, 269, կոդերի զույգին համապատասխանության մեջ է դրվում qij=337, 279 տարրը, որովհետև, ինչպես ընդունել ենք, տեքստում մատրիցի տողերին համապատասխանող կարգերին հաջորդում են սյուներին համապատասխանող կարգերը։ Հետևաբար, եթե վերևում ստացված հաջորդականության անդամները զույգ առ զույգ խմբավորենք այնպես, որ միևնույն կոդը առաջին խմբում ունենա ձախադաս դիրք (i-ի) տեղում, ապա կստանանք զույգ հանդիպումների մատրիցի տարրերը։

(337, 279), (279, 340), (340, 354), (354, 130), (130, 354), (354, 129), (129, 99), (99, 359), (395, 313), (313, 231), (231, 354)...


Ակնհայտ է, որ նման խմբավորման դեպքերում կլինեն խմբեր, որոնց բովանդակությունը կհամընկնեն։ Դա ստացվում է այն դեպքում, երբ երկու հանդիպումներում համապատասխանաբար ձախադաս և աջադաս բառերի քերականական կարգերը համընկնում են։ Մեր կողմից բերված օրինակներում (նդ, հյ) և (գն, հս, հյ, եթ, ի) կարգերը հանդիպում են երկու անգամ։ Եվ քանի որ զույգ հանդիպումների մատրիցի տարրերը ցույց են տալիս տողերին ու սյուներին համապատասխանող կոդերի (քերականական կարգերի) հանդիպումների թիվը, ապա հաջորդ փուլում ստացված հաջորդակցությունից պետք է հեռացնել կրկնվող խմբերը, նախապես գրանցելով նրանց հանդիպման թիվը.

(337, 279), (279, 340), (340, 354), (354, 130), (130, 354), (354, 129), (129, 99), (99, 359), (359, 313), (313, 321), (231, 354) ...

Այժմ ստացված հաջորդականության հիման վրա զույգ հանդիպումների մատրիցի կազմումը առանձին դժվարություն չի ներկայացնում։

Ջույգ հանդիպումների մատրիցի կազման հարցում կարևոր խնդիր է տեքստի ձևային նկարագրության ստացումը։ Ինչպես նշվեց վերևում, այստեղ այդ խնդիրը վճռվում է տեքստի լեզվի բառաձևերի բառարանի օգնությամբ։ Դա մի ցուցակ է, որի մուտքը բառաձևեր են, իսկ ելքը՝ դրանք բնորոշող քերականական կարգերի համախմբեր։ Առանձին խնդիր է այդ ցուցակի կազմումը։ Այն կարելի է վճռել երկու եղանակով.

ա) նախապես կազմվում է լեզվի ամբողջ բառապաշարի բառաձևերի բառարանը բ) կազմվում է հաշվողական մեքենայի մեջ գրանցված տեքստի բառաձևերի բառարանը։ Մենք ընտրել ենք վերջինը։



Հարկ է նշել, որ եթե բառաձևերի բառարանը դիտենք իբրև առանձին հանգույց, որը կարելի օգտագործել տարբեր խնդիրների վճռման համար (տես ներքևում), ապա, հատուկ մաթեմատիկական ապահովման դեպքում, երկրորդ եղանակով կարող ենք հասնել ամբողջ բառապաշարի բառաձևերի բառարանի կազմմանը։ Դրա համար անհրաժեշտ է նորանոր տեքստերի մշակման ժամանակ զուգահեռաբար լրացնել բառաձևերի բառարանը, մինչև ստացվի այնպիսի վիճակ, երբ այն այլևս լրացման կարիք չունենա։

Համակարգի մաթեմատիկական ապահովման առումով կարևոր հարց

է քերականական կարգերի ընդհանուր ցանկից տվյալ փորձի համար անհրաժեշտ համախմբերի ընտրությունը։

Քերականական կարգերի համախմբերի ընդհանուր թիվը 360 է։ Սակայն քերականական կարգերի այդպիսի մեծ քանակ բոլորովին էլ պետք չէ ամեն մի փորձի համար, և փորձի կառավարումն ավելի ճկուն դարձնելու նպատակով մենք պետք է հնարավորություն ունենանք ընտրելու այն քերականական կարգերը, որոնք անհրաժեշտ են տվյալ տեքստի նկարագրության համար։ Այլ կերպ ասած՝ համակարգը մեզ պետք է հնարավորություն տա թվարկել այն քերականական կարգերը, որոնց օգնությամբ կազմելու է տեքստի ձևաբանական նկարագրությունը։ Այդ խնդիրը լուծվում է հատուկ երկխոսական ծրագրի օգնությամբ։

Եթե երկխոսության ընթացքում համակարգին որևէ լրացուցիչ ինֆորմացիա չի հաղորդվում, ապա տեքստի ձևաբանական վերլուծությունը կատարվում է այսպես կոչված խոսքիմասային մակարդակով՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, դերբայ, շաղկապ, մակբայ, նախդիր, նախադրություն, ժխտական մասնիկ, միջակետ, ստորակետ, բութ, վերջակետ։

Հետևաբար, զույգ հանդիպումների մատրիցի նվազագույն չափը 16×16 է, այն դեպքում, երբ առավելագույնը՝ 360×360 է։

Այսպիսով, համակարգը մեզ թույլ է տալիս, ըստ անհրաժեշտության, տեքստի ձևաբանական վերլուծության խորության (մանրամասնության) աստիճանն ավելացնել ավելի քան 500 անգամ (եթե 16×16 մատրիցի դեպքում առավելագույնը կունենանք 256 հանդիպում ապա 360×360 մատրիցի դեպքում՝ 129600 հանդիպում)։

Երկրորդ ենթահամակարգը նախատեսված է երկու մատրիցների զուգաձևության աստիճանի որոշման համար։ Ստացված մատրիցները վերածելով երկուորդական մատրիցների՝ դիտելով յուրաքանչյուր հանդիպումը իրեն կապ տողերին և սյուներին համապատասխանող տարրերի միջև, զուգահեռաբար կարող ենք հաշվել այդ կապերի որոշ բնութագրիչներ՝ մեկ, երկու և ավելի կապերով հեռացված տարրերի մատրիցներ։

Անդրադառնանք երկրորդ խնդրին։

Ամեն մի տեքստի առանձնահատուկ է տեքստաշափական այնպիսի մի բնութագրիչ, ինչպիսին բառարանի ծավալն է։

Եթե համեմատենք լեզվի բառարանային միավորները տեքստային միավորների հետ, ապա նրանք տեքստում հանդես են գալիս անփոփոխ կամ փոփոխված՝ հարուցուցային (հոլովում, խոնարհում) շարքի որևէ անդամի տեսքով։

Հայտնի է, որ ամեն մի հարուցույց ունի իր էլակետային, կամ ինչպես ասվում է չնշույթավորված, միավորը, որին հակադրվում են շարքի մյուս՝

նշույթավորված միավորները։ Տեքստի բառերի՝ որպես նշույթավորված միավորների, ելակետային ձևերի ամբողջությունը կազմում է տեքստի բառարանը։

Վերջինի ընտրությունը որոշվում է հեղինակի անհատականությամբ. մի հեղինակ հակում ունի լավագույն կերպով կիրառել լեզվի բառափոփոխման (հոլովման, խոնարհման) համակարգը և փոքր քանակի բառերով կերտել տեքստ, իսկ մեկ այլ հեղինակ նույն երկարության տեքստ կերտում է համեմատաբար մեծ բառարանի օգնությամբ։

Տեքստաչափության մեջ ընդունված է, այսպես կոչված, զանազանության գործակիցը, որը ցույց է տալիս, թե հեղինակն ինչ չափով է օգտվում լեզվի բառափոփոխման համակարգից։ Դա տեքստի բառերի քանակի և նրա բառարանի ծավալի հարաբերությունն է։

Զանազանության գործակիցը ստատիկ պարամետր է, որը միայն ցույց է տալիս տեքստը որքան անգամ է մեծ բառարանից։

Տեքստաչափության մեջ կիրառվում է մեկ այլ բնութագրիչ ևս, որը ցույց է տալիս նոր բառերի կախումը բառակիրառությունների թվից։ Ակնհայտ է, որ այն գծային չէ։

Փորձնական եղանակով որոշված է, որ տեքստում նոր բառերի և բառակիրառությունների թիվը կապված են հետևյալ առնչությամբ՝

$$V = RN^a$$

որտեղ

V-ն նոր բառերի թիվն է։


N-ը բառակիրառությունների թիվն է.


R-ը և a-ն տվյալ տեքստի համար բնորոշ հաստատուններ են

$$(o < a < 1)։$$

Պարզ է, որ

R-ի և a-ի տարբեր արժեքների դեպքում կստանանք տարբեր կորերի բազմություն։





Կորերի տեսքից պարզ երևում է, որ տեքստի սկզբնական մասում նոր բառերի թիվն արագ աճում է, իսկ այնուհետև հասնում մի սահմանի, որից աճը դադարում է։

Այդ դեպքում, երբ ընտրանքը մեծ է, հարմար է օգտվել լոգարիթմական կոորդինատային համակարգից։ Լոգարիթմելով վերևում տրված առնչությունը կստանանք.

$$\lg V=\lg R+a\lg N$$

լոգարիթմական կոորդինատային համակարգում սա ուղիղ գծի հավասարում է։


Այսպիսով, Մ. Խորենացու «Հայոց պատմություն» ստեղծագործության տեքստի համար զանազանության գործակցի և բառակիրառությունններից կախված բառարանի աճի որոշման համար անհրաժեշտ է տեքստի ամեն մի բառը ձևափոխել չհնչյունափոխված տեսքի։ Դրա համար իբրև հիմք կարող է ծառայել բառաձևերի բառարանը, որ կազմել ենք նախորդ խնդրի վճռման համար։ Այդ բառարանի յուրաքանչյուր գլխաբառը լրացվում է նշույթավորված ձևով։


Ստորև բերում ենք բառաձևերի բառարանից մի հատված, որտեղ գլխաբառերը լրացված են նշույթավորված ձևերով։

Բառաձևերի բառարան	
Նշույթավորված ձևը	Նշույթավորված ձևը
այնուհետև	այնուհետև
գալ	գալ
գորշն	գորշ
ձևոն	ձեռն
ձեռնարկէ	ձեռնարկել
նոցա	նա
պատգամաւորութեան	պատգամաւորութիւն

Ունենալով այսպիսի բառարան՝ ալգորիթմական եղանակով կարող ենք կազմել տեքստի նշույթավորված ձևերի բառարանը։ Որպեսզի ստանանք $V=RN^a$ բանաձևերի R և a հաստատունները, անհրաժեշտ է տեքստի ամեն մի հազարական հատվածի համար հաշվել նոր գոյացող նշույթավորված ձևերի թիվը։

$V=RN^a$ կախման R և a հաստատունների որոշման ալգորիթմը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տե՛ս ալգորիթմը՝ էջ 149)։ 3-րդ նկարում տրվում է տեքստում քերականական կարգերի զույգ հանդիպումների մատրիցի կազմման ու վերլուծության, բառերի զանազանության գործակիցների հաշվման համակարգի սկզբունքային սխեման։


Սկիզբ
Հազար բառից բաղ-
կացած հերթական հատվածի
ընտրություն
Հատվածի չնշություն-
վորված միավորների հաշվում
Տեքստի
վե՞րջն է
ոչ
այո
V = f(N) կորի կառուցում
R և N հաստատունների
որոշում
Ավարտ


Տեքստ
Տեքստի
ձևաբանական
վերլուծու-
թյուն
Քերակա-
նական կար-
գերի ընտրու-
թյուն
Բառարան
Բառաձև
Քերականական
կարգերի համա-
խումբ
Չնշություն-
վաձ ձև
Չնշություն-
վաձ միավորի առացում
Ձև-ի հանդիպումնե-
րի մատրիցների
կառուցում
Մատրիցների
զուգաձևու-
թյան որոշում
Զանազանության
գործակիցների
հաշվում
a և R
ցնու թվերի
հաշվում

Ցանցություն. *Տեքստում բերված հատվածի քերականական կարգերի զույգ հանդիպումների մատրիցի կազմման համար քերականական կարգերի ընդհանուր ցուցակից ընտրված համախմբերը համապատասխան կոդերով.*

գն, հտ, ուղ, եթ, ա—1
գն, հտ, սո, ա—15
գն, հս, ուղ, եթ, ա—85
գն, հս, ուղ, եթ, ի—87
գն, հս, ուղ, եթ, ո—88
գն, հս, ուղ, հթ, ի—94
գն, հս, սո, սո, եթ, ա—99
գն, հս, սո, եթ, ո—102
գն, հս, սո, եթ, իա—104
գն, հս, սո, հթ, ա—106
գն, հս, սո, հթ, ո—109
գն, հս, տր, եթ, ա—113
գն, հս, տր, եթ, ի—115
գն, հս, հյ, եթ, ա—127
գն, հս, հյ, եթ, ի—129
գն, հս, հյ, եթ, ո—130
դն, հր, հյ—262
դն, հբ, բց—263
դն, աշ, ուղ—265
բյ, սհ, նկ, եթ, գդ—279
բյ, սհ, աա, եթ, գդ—295
բյ, սդ, առ, հթ, գդ—300
դբ, աշ, ուղ—313
դբ, աշ գծ—318
դբ, ացֆ, ուղ—319
ղղ, հդ—337
ղղ, սդ—338
մկ, տղ—339
մկ, ժմ—340
մս—344
նխ, սո—346
նխ, հյ—348
գն, հս, հյ, եթ, իս—132
ան, գր, ուղ—169
քն, աձ, սռ, եթ—219
քն, աձ, սո, հթ—220
դն, ձն, տր—231
դն, ցց, սո—242
դն, ցց, հյ—244
դն, հր, ուղ—259
նդ, տր—353
նդ, հյ—354
նդ, բց—355
մտ—357
ստ—359
վջ—360

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Бородкин Я. Н., Милов Л. В., О некоторых аспектах автоматизации текстологического исследования, в кн.: «Математические методы в историко-экономических и историко-культурных исследованиях». Наука, М., 1977, стр. 235—280.

Виноградов В. В., Проблемы авторства и теория стилей, М., 1961.

Мелихов А. Н. Ориентированные графы и конечные автоматы, М., Наука, 1971.

Шмидт З. М. «Текст» и «История» как базовые категории в сб.: «Новое в зарубежной лингвистике, вып. VIII», М., 1978, стр. 89—110.

Ոտոտյան Ռ. Լ., ժամանակակից հայերենի անվանական բառափոխման ձևային նըկարագրություն, «Լեզվի և ոճի հարցեր, 6-րդ պրակ» Երևան, 1982։

Ոտոտյան Ռ. Լ., ժամանակակից հայերենի բայական ձևակազմություն, «Բառ, նախադասություն, տեքստ» Երևան, 1987։

Maschinell Auswertung sprach-historischer Quellen. Ein Ber Zur computerunterstützten Analys der Flextonsmorphologie des Frühneuhochat (Lenciers W.,Wegera K —P., Berg E., et al—Tübingen: Nimeger, 1982—XI, 236 s.

Ա. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենի ուսումնասիրությունը հասել է ակնառու նվաճումների։ Տարիների ընթացքում հայերենի կառուցվածքի վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ։ Այնուհանդերձ դեռ կան որոշ հարցեր, որոնք համակողմանիորեն չեն լուսաբանվել և, ավելին, գիտական շրջաններում առաջ են բերում տարակարծություններ։ Դրանցից է միավորյալ նախադասության ըմբռնումը։ Միավորյալ նախադասությունը բարդ համադասական կապակցության մի տարատեսակն է, նրա ինքնատիպ դրսևորումներից մեկը և ուրույն տեղ է գրավում շարահյուսական համակարգում։ Չնայած դրան՝ այս կառույցի վերաբերյալ առ այսօր չի գրվել մի ամփոփ աշխատություն, և նրա մասին տարբեր ուսումնասիրություններում ասվածը առանձին դիտողություններից ու սահմանումներից այն կողմ չի անցել։ Միավորյալ նախադասության դնահատման հարցում եղած տարակարծությունների պատճառները երկու կարգի են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ։ Ընդամին, օբյեկտիվ պատճառ է միավորյալ նախադասության հարաբերակցությունը մի կողմից՝ բազմակի անդամներով (հնթականերով, լրացումներով) պարզ նախադասությանը, մյուս կողմից՝ բարդ նախադասության մյուս տեսակներին։

Միավորյալ նախադասության վերաբերյալ կարծիքների տարբերության սուբյեկտիվ պատճառներից նշելի են հատկապես երկուսը։ Նախ՝ լեզվաբանները, առաջնորդվելով տեսական տարբեր սկզբունքներով, շարահյուսական այդ կառույցին մոտեցել են տարբեր հայեցակետերից։ Երկրորդ՝ միավորյալ նախադասությունը հայերենում (և ոչ միայն հայերենում) առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել։ Բացի այդ, շատերն այդ հարցին անդրադառնալիս հիմնվել են արմատավորված այս կամ այն տեսակետի, այլ ոչ թե լեզվական փաստերի համակողմանի ուսումնասիրության վրա։ Եվ այդ ամենի արդյունքն այն է եղել, որ ոմանք միավորյալ են դիտել բազմակի թե՛ գլխավոր և թե՛ երկրորդա-

կան անդամներով կազմված նախադասությունները, ուրիշները՝ միայն բազմակի գլխավոր անդամներով նախադասությունները և այլն։ Կամ՝ լեզվաբանների մի մասը միավորյալ նախադասությունը պարզ է համարել, մյուս մասը՝ բարդ համադասական, ուրիշները՝ միջակա օղակ պարզ և բարդ նախադասությունների միջև և այլն։

Նշեցինք, որ միավորյալ նախադասության մասին ասվածը դասագրքային սահմանումներից ու գիտական աշխատություններում համառոտ մեկնաբանություններից այն կողմ չի անցել և, բնականաբար, հետու է այդ կաղապարի ամբողջական ու սպառիչ բնութագրումը լինելուց։ Դասական և ժամանակակից լեզվաբաններն ու մեթոդիստները պարզապես իրենց առջև խնդիր չեն դրել համակողմանիորեն հետազոտել այս կառույցը։ Ուստի հրապարակի վրա եղած գրականության մեջ, նախ, հստակ չեն այս նախադասության սահմանները, և, երկրորդ, խոսվում է միայն երկկազմ միավորյալ նախադասության՝ մեկ կամ մեկից ավելի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով կազմված լինելու մասին։ Եվ, իրոք, լեզվական հարուստ փաստերի հիման վրա չեն լուսաբանվել միավորյալ նախադասության կառուցվածքային ու իմաստային առանձնահատկությունները։ Շարահյուսական հարաբերությունների քննությունը չի մասնավորվել միավորյալ նախադասության վրա։ Վերջինիս մի տարատեսակը՝ միակազմ միավորյալ նախադասությունը, համարյա ամբողջությամբ դուրս է մնացել քննությունից։ Չի բացահայտվել նաև միավորյալ նախադասության որոշ դրսևորումների ոճական նշանակությունը։ Այլ կերպ ասած՝ միավորյալ նախադասությունը դեռ բազմակողմանիորեն լուսաբանված չէ։ Մինչդեռ այս կաղապարի ուսումնասիրությունն ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն։ Դա անհրաժեշտ է թե՛ հարցի մասնավոր քննության և թե՛ ժամանակակից հայերենի (և ոչ միայն հայերենի) քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը ամբողջացնելու առումով, որով և պայմանավորված է սույն աշխատության արժեքականությունը։ Մենք ձեռնամուխ ենք եղել միավորյալ նախադասության ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով հստակություն մտցնել նրա կառուցվածքի ըմբռնման հարցում, քննել նրա, որպես բարդ համադասական նախադասության մի տարատեսակի, քերականական-կառուցվածքային, իմաստային-նրբերանգային ու գործառական-ոճական առանձնահատկությունները։

Ուսումնասիրությունը բաղկացած է հինգ գլխից։ «Միավորյալ նախադասությունը քերականագիտական մտքի գնահատմամբ» խորագիրը կրող առաջին գլխում պատմական ակնարկով ուրվագծել ենք միավորյալ նախադասության ըմբռնումը քերականագիտության պատմության մեջ՝ անդրադառնալով հայ, ռուս, նաև եվրոպական քերականագիտության մեջ

միավորյալ նախադասության մասին եղած տեսակետներին։ Ակնհայտ է, որ հայ և ռուս քերականագիտության մեջ միավորյալ նախադասության մասին արտահայտված կարծիքների միջև կան զգալի ընդհանրություններ և որոշ տարբերություններ։ Ընդհանրությունները հիմնականում պայմանավորված են մի կողմից՝ լեզվական միևնույն իրականության մասին հայ և ռուս քերականների ըմբռնման ընդհանրությամբ, մյուս կողմից՝ տվյալ հարցում հայ լեզվաբանական մտքի վրա ռուս քերականագիտության ունեցած ազդեցությամբ։ Ակներև է, որ միավորյալ նախադասության կաղապարը թեև տարածված է եղել գրաբարում, միջին հայերենում, բարբառներում, մեր գրական լեզվի երկու տարբերակներում, այնուհանդերձ նրա ճանաչման և ուսումնասիրության հիմքերը դրվել են միայն XIX դարի կեսերին՝ աշխարհաբարի նշանավոր քերական Ստ. Պալասանյանի կողմից։

Երկրորդ գլխում աշխատել ենք հիմնավորել բազմակի ստորոգյալներով և բազմակի գերադաս անդամներով միավորյալ նախադասության՝ բարդ համադասական կապակցություն լինելը, ճշգրտել նրա տեղը շարահյուսական համակարգում՝ ընդհանուր գծերով ներկայացնելով նրա կառուցվածքային յուրահատկությունները։ Միավորյալ նախադասությունը մենք համարում ենք բարդ համադասական նախադասություն նրանում համադասական հարաբերությամբ կապված մեկից ավելի ստորոգումներ լինելու պատճառով։ Ավելի կոնկրետ՝ այն բարդ համադասական կապակցության մի տարատեսակն է։ Ակնհայտ է, որ համադասական նախադասության բաղադրիչներն ունենում են կա՛մ ընդհանուր ենթակա, կա՛մ էլ տարբեր ենթականեր։ Ըստ այդ հատկանշի բարդ համադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) ընդհանուր ենթակայով (ենթականերով) բարդ համադասական կամ միավորյալ նախադասություններ և բ) տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասություններ[1]։ Այս դասակարգումը մի կողմից՝ պարզում է բարդ համադասական նախադասության ընդգրկման սահմանները, մյուս կողմից՝ ճշգրտում է համադասական կապակցության մեջ միավորյալ նախադասության տեղը՝ դառնալով այս կառույցի յուրատիպ կանոնարկումը։ Նշենք, որ բարդ համադասական նախադասության նշված տարատեսակների տարբերությունը չի սահմանափակվում որպես ենթակայի յուրահատկություն, այլ միաժամանակ դառնում է ստորոգումների, հետևաբար նաև նախադասության կառուցվածքի տարբերակման հիմունք։ Հետևապես բազմակի ստորոգյալներով և բազմակի գերադաս անդամնե-

---

1 Այս դասակարգման մասին տե՛ս ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությանը նվիրված մեր հոդվածում (ԼՀԳ, Երևան, 1982, № 9, էջ 24—25)։

րով նախադասությունները կազմում են բարդ համադասական կապակցության մի տարատեսակը՝ ընդհանուր ենթակայով բարդ համադասական կամ միավորյալ նախադասությունը։ Մենք այստեղ պահպանում ենք ավանդական տերմինը՝ միավորյալ նախադասություն անվանումը հետևյալ պատճառով։ Լեզվաբանության մեջ (և առհասարակ) տերմինի փոփոխությունը չի խրախուսվում, իսկ եթե գիտության մեջ այն երկար կենսագրություն ունի, մեր կարծիքով, առավել ևս անհրաժեշտ է նրա պահպանումը։ Միավորյալ նախադասության ճանաչումն ու անվանումը ունեն շուրջ մեկուկես դարի պատմություն, ուստի ավանդական տերմինի պահպանումն ավելի նախընտրելի ենք համարում։

Աշխատության երրորդ և չորրորդ գլուխներում քննել ենք միավորյալ նախադասության կառուցվածքային երկու (երկկազմ և միակազմ) դրսևորումները։ Ընդ որում, երկկազմ միավորյալ նախադասությունը հատկանշվում է ենթակայի (ենթակաների) ու ստորոգյալների փաստացի դրսևորմամբ և դրանց քերականական արտահայտության առանձնահատկություններով։ Երկկազմ միավորյալ նախադասության յուրատիպ արտահայտություններից մեկը ստորոգյալի կրկնությամբ կառույցն է, որը ժամանակակից հայերենում ոճական մեծ նշանակություն ունի։

Միակազմ միավորյալ նախադասությունը մեզանում համարյա չի քննվել, չհաշված մեկ-երկու աշխատության մեջ խիստ հապանցիկ անդրադարձումները։ Մենք ներկայացրել ենք միակազմ միավորյալ նախադասությունը, նրա կառուցվածքային տարատեսակներն ու դրանց ոճական նշանակությունը։ Այս կաղապարը, որի գնահատման հարցում կարևոր է բայմակի հատկանիշների՝ տրամաբանորեն ընկալվող միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվելու ըմբռնումը, ինչպես նաև միավորյալ նախադասության որոշ այլ դրսևորումներ (ենթակայի կրկնությամբ միավորյալ նախադասություն և այլն) քննել ենք՝ հաշվի առնելով ոչ այնքան մակերեսային, որքան խորքային կառուցվածքը։

Համադասական հարաբերությունն ու նրա մասնավոր դրսևորումները (միաչորական, ներհակական, տրոհական և այլն) քննվել են հիմնականում տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ։ Դրանք այլ յուրահատկություններով են արտահայտվում միավորյալ նախադասության մեջ։ Ուստի վերջին գլխում քննել ենք միավորյալ նախադասության մեջ գործածվող շարահյուսական հարաբերությունները, դրանց դրսևորման առանձնահատկությունները, միևնույն միավորյալ կառուցում տարբեր հարաբերությունների համատեղումը և այլն։ Միավորյալ նախադասության մեջ արտահայտվող հարաբերությունները մեկնել ենք՝ նկատի ունենալով նրա բաղադրիչների բովանդակությունը,

կապակցման եղանակը, շարադասութիւնը, ստորոգեալների կամ գերադաս անդամների արտահայտութիւնը և այլն։

Մենք բավական լայնացրել ենք միավորյալ նախադասության ընդգրկման սահմանները՝ հայագիտության մեջ որպես այդպիսին համարված կառույցների կողքին միավորյալ դիտելով նաև այնպիսի կաղապարային դրսևորումներ, որոնք մինչև հիմա կա՛մ այլ գնահատում են ստացել և կա՛մ էլ առհասարակ հատուկ քննության չեն ենթարկվել։

Ուսումնասիրությունը կատարել ենք գործառական տարբեր ոճերի (առօրյա-խոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական ու պաշտոնական) խոսքերից ընտրված փաստական հարուստ նյութի հիման վրա։ Միավորյալ նախադասությունը բոլոր ոճերում և ամենից առաջ գեղարվեստական խոսքում տարածված կառույց է։ Առանձնապես շեշտում ենք գեղարվեստական ոճում նրա շատ գործածվելը՝ հաշվի առնելով այն, որ գեղարվեստական խոսքը գրական լեզվի գարկերակն է, որ այն, մյուս ոճերի համեմատությամբ, առավել լայն չափով է ընդգրկում գրական լեզուն, նրա իրողությունները։ Ուշագրավ է, որ միավորյալ նախադասությունը շատ տարածված է մեր դասական ու ժամանակակից նշանավոր արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործություններում։ Միավորյալ նախադասությունը քննել ենք արդի հայերենի իրողությունների հիման վրա՝ մեր տեսական դրույթները հաստատելու համար նյութ քաղելով հայ դասական ու ժամանակակից գրական ստեղծագործություններից, հրապարակախոսական ու գիտական գրականությունից, հաճախ դիմելով նաև ժողովրդախոսակցական լեզվին, որպեսզի վերլուծությունը լինի առավել համակողմանի ու ամբողջական, ընդգրկի ժամանակակից հայերենի բոլոր ոճերում միավորյալ նախադասության կաղապարային դրսևորումները։ Առաջնորդվելով համաժամանակյա կտրվածքով՝ վերլուծությունը կատարել ենք համաժամանակյա կտրվածքով, իսկ անհրաժեշտության դեպքում դիմել ենք նաև աշխարհաբարի վաղ շրջանի լեզվական փաստերին։

Միավորյալ նախադասությունը կառուցվածքային ու իմաստային վերլուծությունների առատ նյութ է ընձեռում։ Մեր աշխատության մեջ նոր մեկնակետերից են քննվում ու լուսաբանվում շարահյուսության որոշ հարցեր։

Այսպիսով՝ սույն ուսումնասիրության մեջ միավորյալ նախադասությունը դառնում է առանձին քննության առարկա, և դրա կառուցվածքի հետ կապված շատ հարցեր, բնականաբար, առաջադրվում ու մեկնվում են առաջին անգամ։ Մենք օգտագործել ենք այն ամբողջ դրականը, ինչ ձեռք է բերվել հայ քերականագիտության մեջ շարահյուսական այս

կառույցի ու դրա հետ առնչվող հարցերի ուսումնասիրության բնագավառում։

Այս աշխատությունը ժամանակակից հայերենի միավորյալ նախադասության առաջին ամբողջական քննությունն է, ուստի բնավ էլ այն կարծիքին չենք, թե նրանում ամեն ինչ իր վերջնական լուծումն է գտել։ Անշուշտ, կլինեն առարկություններ առանձին հարցերի քննության վերաբերյալ։ Մենք սիրով կընդունենք բոլոր օգտակար դիտողությունները հետագայում հաշվի առնելու նպատակով։

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

XIX դարը ինչպես մյուս գիտությունների, այնպես էլ լեզվաբանության համար նշանավորվում է որպես բեկման ժամանակաշրջան։ Դարի հայ լեզվաբանական մտքի նվաճումներից մեկը միավորյալ նախադասության ըմբռնումն է։ Այս կառույցը, ինչպես ասվեց վերը, թեև առկա է եղել մեր լեզվի պատմության նաև նախորդ փուլերում, այնուհանդերձ հրապարակի վրա եղած գրականության մեջ չի արձանագրվել։

Միավորյալ նախադասության ըմբռնումը հայ քերականագիտության մեջ մշակվել է ոչ միանգամից։ Բազմակի ենթականերով կամ ստորոգյալներով նախադասությունները, որոնք ավելի ուշ, XIX դարի 2-րդ կեսին, շրջանառության մեջ են մտնում միավորյալ նախադասություն անվանումով, որպես նախադասության առանձին տեսակ քննվել են Հովհ. Եղիազարյանի քերականության մեջ՝ բարդ նախադասություն անվանումով։ Ակնհայտ է, որ մեզանում Հովհ. Եղիազարյանը առաջիններից է ընդունել բարդ նախադասության գոյությունը՝ այդպիսին դիտելով բազմակի գլխավոր անդամներով բաղադրված նախադասությունները։ Հետևաբար բարդ նախադասության ըմբռնումը Եղիազարյանի մոտ նեղ է. նրանում բացառվում են համադասական կապակցության մյուս դրսևորումներն ու ամբողջ բարդ ստորադասական կապակցությունը։ Քերականի՝ բարդ նախադասության մեկնաբանությանը բավականին նման է արդի դպրոցական դասագրքերից մեկում եղած միավորյալ նախադասության սահմանումը։ Եղիազարյանը բարդ է անվանում այն նախադասությունը, «որ կազմի ՚ի բաճի մի բայից կամ ՚ի բաճի մի ենթակայից. զո. իսկ արին Վարդան համայն զօրոքն իւրօվք՝ խաղայր դնայր յառաջ. Պետրոս և Յոհաննէս ելանէին ՚ի տաճարէն ևն» (45, էջ 86) (ընդգծումը մերն է՝ Ա. Կ.)։ Համմտ. «Բազմակի ենթականերով կամ բազմակի ստորոգյալներով միավորված նախադասությունները կոչվում են միավորյալ նախադասություններ» (99, էջ 104)։

Քննության առարկա շարահյուսական կառույցի բուն ուսումնասիրությունն սկսվում է արևելահայ աշխարհաբարի առաջին նշանավոր

քերական Ստ. Պալասանյանի դասագրքերով, որոնցում հեղինակը ներկայացնում է արևելահայ աշխարհաբարի քերականական կառուցվածքը, ուրիշ շատ հարցերի հետ քննում է նաև միավորյալ նախադասությունը՝ առաջինը գործածելով այս անվանումը։ Պալասանյանը, բաղադրյալ (իմա՝ բարդ) դիտելով «այն նախադասությունը, որ կազմուած է երկու կամ աւելի պարզ նախադասութիւններից...» (78, էջ 23), նրա մի տարատեսակն է համարում միավորյալ նախադասությունը՝ գրելով. «Այն նախադասութիւնը՝ որ մի քանի նախադասութիւնների միաւորութիւնից է կազմվում, կոչվում է միաւորեալ։—Լուսին և աստեղ լուսատու են գիշերոյ և ցուր ծովու դառն և աղի է նախադասութիւնները միաւորեալ են» (78, էջ 24)։ Այնուհետև կարդում ենք. «Միաւորեալ նախադասութեան մէջ կարող են լինել մի քանի եզբակաց կամ մի քանի ստորոգեալ, մի քանի մէտեսակ յատկացուցիչ[1] կամ մի քանի պարագայական բառեր» (79, էջ 33)։ Նշանակում է՝ Պալասանյանը միավորյալ է համարում բազմակի և՛ գլխավոր և՛ երկրորդական անդամներով միավորված նախադասությունները։

Այսպիսով, Ստ. Պալասանյանը դասագրքերի համեմատ սահմանումներում քննության է առնում միավորյալ նախադասությունը՝ անդրադառնալով նաև նրա բաղադրիչների կապակցմանն ու տրոհմանը (տե՛ս 79, էջ 34)։ Սակայն միաժամանակ ակնհայտ է, որ միավորյալ նախադասության մասին քերականի արտահայտած մտքերի մեջ առկա է որոշ հակասություն[2]։ Նախ՝ միավորյալ նախադասության վերը նշված սահմանումը հստակ չէ. այն չի արտացոլում այդ կառույցի յուրահատկությունները և գրեթե չի տարբերվում բարդ նախադասության արդի սահմանումից ընդհանրապես և հենց իր՝ Պալասանյանի սահմանումից մասնավորապես։

Երկրորդ՝ եթե «Գործնական քերականության» մեջ հստակ երևում է Պալասանյանի կողմից միավորյալ նախադասությունը բաղադրյալ (բարդ) նախադասությունների շարքը դասվելը, ապա «Քերականութիւն մայրենի լեզուի» դասագրքում բացակայում է այդ հստակությունը, թեև այստեղ էլ սահմանումը նույնն է։ Ավելին. այս գրքի երրորդ մասում՝

---

1 Հատկացուցիչ անվան տակ քերականը նկատի ունի արդի ըմբռնմամբ հատկացուցիչն ու որոշիչը։

2 Հավանաբար այդ հակասությունն է հիմք ծառայել Ստ. Պալասանյանի կողմից միավորյալ նախադասության կառուցվածքի ըմբռնման մասին տարակարծիք տեսակետների դրսևորման համար։ Այսպես՝ դոցենտ Հ. Մխիթարյանը գտնում է, որ Պալասանյանը միավորյալ նախադասությունը բարդ է համարել, իսկ դոցենտ Ահ. Գրիգորյանը հավաստում է քերականի՝ այդ նախադասության պարզ դիտելը։ Համմտ. 76, էջ 96. 44 էջ 100։ Ընդունելին Հ. Մխիթարյանի տեսակետն է։

«Բաղդասութիւն» (կապակցութիւն) գլխում հեղինակը քննում է նախադասութեան անդամների և նախադասութիւնների կապակցման եղանակները՝ դրանք բաժանելով երկու մասի՝ «կապակցութիւն մասանց բանի» և «կապակցութիւն նախադասութիւնների», գտնելով, որ «առաջին միջոցը տեղի ունի գլխատրապէս պարզ նախադասութիւնների մէջ, երկրորդը— բաղադրեալ նախադասութիւնների մէջ» (79, էջ 189)։ Եվ նա միավորյալ նախադասության մեջ գործածվող կապակցությունը ներկայացնում է առաջին մասում՝ պարզ նախադասության կապակցության բաժնում։

Նման քերականությունները, ինչ խոսք, չեն սովերում Պալասանյանի աշխատությունների ակնառու արժանիքները։ Դրանք արժանի են ուշադրության ոչ միայն որպես դասագրքեր, այլև որպես արևելահայ աշխարհաբարին նվիրված դասական ուսումնասիրություններ, որոնց շատ դրույթներ այսօր էլ ընկած են դպրոցական ու գիտական քերականության հիմքում։

XIX դարի 2-րդ կեսի քերականներից շատերը, որոնք հետևել են Մ. Պալասանյանի ստեղծած նոր ուղղությանը, միավորյալ նախադասության ըմբռնման հարցում համարյա նույնությամբ որդեգրել են իրենց մեծ նախորդի մշակած տեսությունը։ Այդ տեսակետից հիշատակության արժանի է հատկապես Ն. Տեր-Ղևոնդյանի անունը։ Ահա Ղևոնդյանի՝ միավորյալ նախադասությանը տված սահմանումը. «Այն նախադասութիւնը, որի մէջ անդամներից մինը կամ միւսը կրկնուած մի քանի անգամ, կոչւում է միաւորեալ նախադասութիւն, որովհետև նա կազմուած է մի քանի պարզ նախադասութիւնների միախառնութիւնից» (103, էջ 43)[3]։ Քերականը միավորյալ նախադասությունը համարում է բարդ նախադասության մի տարատեսակը, երբ գրում է. «Բաղադրեալ և միաւորեալ նախադասութիւնները բարդ նախադասութեան տեսակներն են» (103, էջ 48)։

Ակնհայտ է, որ XIX դարի վերջերին աշխարհաբարյան աշխատություններին զուգընթաց դեռևս հրապարակվում էին գրաբարյան դասագրքեր, որոնք ընդգրկում էին նաև շարահյուսության հարցեր։ Հետաքրքրական է դրանցում միավորյալ նախադասության հաշվառման հանգամանքը։ Այսպես, օրինակ, Հ. Ղուկասյանցի դասագրքում թեև միավորյալ նախադասություն հասկացության մասին խոսք չկա, բայց հեղինակը անդրադարձել է մեկից ավելի ենթակաների կամ ստորոգյալների հարցին և, հետևելով Հովհ. Եղիազարյանին, այդպիսի նախադասությունները դիտել է բաղադրյալ՝ ելակետ ունենալով այն, որ դրանք կարող են

3 Ն. Տեր-Ղևոնդյանի դասագիրքն առաջին անգամ լույս է տեսել 1883 թ., բայց մեր ձեռքի տակ ունեցել ենք 1906-ի հրատարակությունը։

բաժանվել համապատասխան ինքնուրույն պարզ նախադասություններին (տե՛ս 69, էջ 84), մի մեկնաբանություն, որն այսօր էլ դեռ տարածում ունի։

Ստ. Պալասանյանի քերականության սկզբունքները որոշակիորեն անդրել են նաև Ն. Մելիք-Թանգյանի (74, էջ 10), Ա. Արաբաջյանի (35, էջ 50—51), Գր. Վանցյանի (101, էջ 7—8) հեղինակած դասագրքերին, միայն այն տարբերությամբ, որ Մելիք-Թանգյանն ու Գր. Վանցյանը բազմակի լրացումները դուրս են թողնում միավորյալ նախադասությունից և վերջինս սահմանափակում են միայն բազմակի գլխավոր անդամներով։

Մեր դարասկզբին միավորյալ նախադասության տեսության մեջ բեկում է մտնում մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի դարագլուխ կազմող «Աշխարհաբարի շարահյուսության» (1912 թ.) երևան գալով։ Աբեղյանն առաջինն է տարբերակում մտցնում բազմակի ենթականերով և բազմակի ստորոգյալներով կառույցների միջև՝ առաջինը դիտելով որպես միևնույն ստորոգյալին լրացնող բազմակի ենթականերով պարզ նախադասություն[4], իսկ երկրորդը՝ որպես բարդ համադասական նախադասություն։ Նման մոտեցումը, անշուշտ, պայմանավորված է Աբեղյանի՝ նախադասության ըմբռնմամբ։ Անվանի հայագետը, առաջնորդվելով այն սկզբունքով, որ «խոսքը (նախադասությունը— Ա. Կ.) իմացվում է բայից, ուստի քանի բայ կա մի ասացվածքի մեջ, այնքան էլ խոսք կա» (3, էջ 362), իսկ նախադասության մյուս անդամները (ներառյալ ենթակաները),դրվելով բայի վրա, «լրացնում, պարզաբանում են նրա ակնարկած նշանակությունները» (2, էջ 7), բազմակի ստորոգյալներով նախադասությունը դիտում է որպես մեկից ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված միավոր՝ միավորյալ նախադասություն, իսկ բազմակի ենթականերով նախադասությունը՝ պարզ նախադասություն։ Խոսելով շարահարական բարդ համադասական նախադասության մասին՝ Աբեղյանը գրում է. «Շարահարությամբ կապակցության մի տեսակն է միավորյալ խոսք ասվածը, որ մեջ մի քանի համադաս խոսքեր միանում են մի ընդհանուր ենթակայով։ Օրինակ՝ Մառախուղն իջավ, լիզեց կատուները, քավեց պատերին, հոսանուտ ծալքերով պարուրեց ամեն ինչ և խառնվեց միապաղաղ գորշ գետնի հետ» (3, էջ 653)։ Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը՝ ա) միավորյալ է դիտում միայն բազմակի ստորոգյալներով բաղադրված նախադասությունը, բ) միավորյալ նախադասությունը համարում է բարդ համադասական նախադասության մի տարատեսակը։

---

4 Մ. Աբեղյանը ենթական ևս համարում էր բայի (ստորոգյալի) լրացում։

Հայ լեզվաբանության զարգացման սովետական շրջանում միավորյալ նախադասությունը հիշատակվում է որպես ուրույն կառույց։ Քանի որ այս շրջանում շարահյուսության մասին առաջին լուրջ աշխատանքը պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» (1936 թ.) դպրոցական դասագիրքն է, ուստի միավորյալ նախադասությունը հենց առաջինը ներկայացվում է այս դասագրքում։ Գ. Սևակը ևս միավորյալ նախադասությունը դիտում է որպես բարդ համադասական նախադասության տարատեսակներից մեկը։ Ընդ որում, նա միավորյալ է համարում և՛ բաղմակի ենթականերով, և՛ բաղմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները։ Բաղմակի ենթականերով և բաղմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները միավորյալ են համարում և բարդ համադասական նախադասության մի տարատեսակ են դիտում նաև պրոֆ. պրոֆ. Ս. Ղազարյանը (տե՛ս 66, էջ 473—474), Ն. Պառնասյանը (տե՛ս 84, էջ 39), ակադ. ակադ. Գ. Բ. Ջահուկյանն (տե՛ս 94, էջ 495) ու էդ. Աղայանը (տե՛ս 24, էջ 433)։ Միավորյալ նախադասությունը նույն ձևով է ներկայացված նաև «Լեզվաբանական բառարանում» (տե՛ս 87, էջ 215)։ Հարկ է նշել, որ մեծ դասական քերականները միավորյալ նախադասության ըմբռնման հարցում հիմնականում հետևում էին Ստ. Պալասանյանին, ապա սովետական շրջանում ուղենիշ են դառնում պրոֆ. Գ. Սևակի դասագրքի մեկնաբանությունն ու սահմանումը։ Դրանք համարյա նույնությամբ արտահայտվում են նաև տասնյակ տարբեր դրծող դպրոցական ծրագրում ու մեթոդական մի շարք աշխատություններում, ինչպես նաև սփյուռքահայ դպրոցների համար գրված դասագրքերում, որոնց քննությանը չենք անդրադառնում՝ խուսափելով կրկնություններից (տե՛ս 51, էջ 16. 21, էջ 133—136. 75, էջ 130. 71, էջ 201. 72, էջ 240—241. 14, էջ 385)։

Մեթոդական որոշ աշխատություններում միաժամանակ փորձեր են արվում միավորյալ նախադասությունը մեկնել նորովի։ Այսպես՝ ակադ. Աբ. Ղարիբյանն իր մեթոդական ձեռնարկում միավորյալ նախադասությունը համարում է բարդ նախադասության մի տարատեսակը, երբ գրում է. «Բարդ նախադասությունները լինում են՝ բարդ միավորյալ, բարդ համադասական և բարդ ստորադասական» (67, էջ 403)։ Ընդամենն, նա միավորյալ է դիտում բաղմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով, մեկ ենթակայով ու բաղմակի ստորոգյալներով, բաղմակի ենթականերով ու բաղմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները։ Գիտնականը բարդ նախադասության նույն դասակարգումը կատարում է նաև ավելի ուշ գրած իր մի աշխատության մեջ, ուր նա մասնավորապես անդրադառնում է իր կազմում ստորադաս նախադասություններ ունեցող

միավորյալ նախադասությանը՝ այն անվանելով բազմաբարդ միավորյալ նախադասություն (տե՛ս 68, էջ 268—272)։

Միավորյալ նախադասությանը տարբեր առիթներով անդրադարձել է նաև պրոֆ. Ս. Գյուլբուդաղյանը։ Նա իր մի հոդվածում առաջ է քաշում այն դրույթը, թե «որոշ ծավալուն դերբայական դարձվածներ ստացվում են ոչ թե բարդ ստորադասական նախադասության պարզեցումից, ինչպես ընդունված է ասել, այլ միավորյալ նախադասություններից» (40, էջ 43), իսկ տարիներ հետո, կրկին անդրադառնալով միավորյալ նախադասությանը, գտնում է, որ պետք է բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով միավորված նախադասությունը դիտել պարզ նախադասություն և դպրոցում «անցնել պարզ նախադասության բաժնում, բազմակի լրացումների հետ, թվել նրանց շարքում, իսկ բազմակի ստորոգյալներով նախադասությունները, անկախ ենթակաների քանակից, անցնել իբրև բարդ համադասական նախադասություն, չառանձնացնելով իբրև առանձին տեսակ» (42, էջ 126, տե՛ս նաև 43, էջ 277)։ Գյուլբուդաղյանն իր մի այլ աշխատության մեջ համառոտ խոսում է որոշ միակազմ միավորյալ նախադասությունների մասին (տե՛ս 41, էջ 79, 94)։

Հայոց լեզվի մեթոդիկայի պատմության մեջ բազմակի գլխավոր անդամներով կազմված միավորյալ նախադասությանը տրվել են նաև այլ մեկնաբանություններ։ Այսպես՝ դոցենտ Ջ. Ալեքսանյանն այն դիտում է, այսպես կոչված, բազմաբարդ նախադասության տարատեսակներից մեկը (տե՛ս 20, էջ 32), իսկ դոցենտ Ահ. Գրիգորյանը՝ պարզ նախադասություն (տե՛ս 44, էջ 100)։

1950-ական թվականների կեսերից սկսած միավորյալ նախադասությունը սկսում է նորովի մեկնաբանվել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքին վերաբերող աշխատություններում։ Շարահյուսական այս կառույցին տարբեր առիթներով անդրադառնում է պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանը։ Նա միավորյալ նախադասության մասին առաջին անգամ խոսում է դերանվանը նվիրված իր ուշագրավ աշխատության մեջ՝ դերանունների ոճական կիրառությունների քննության կապակցությամբ (տե՛ս 8, էջ 268)։ Գիտնականը մեկ այլ առիթով միավորյալ նախադասությունը դասում է բարդ համադասական նախադասությունների շարքը՝ այդպիսին դիտելով բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունը (տե՛ս 12, էջ 347)։ Իր մի այլ աշխատության մեջ նա հիմնավորում է բազմակի ենթականերով նախադասության պարզ, իսկ բազմակի ստորոգյալներով նախադասության բարդ (ավելի կոնկրետ՝ միավորյալ) լինելը՝ նման տարբերակման հիմունք ընդունելով առաջին դեպքում մեկ, իսկ երկրորդ դեպքում մեկից ավելի ստորոգումների առկայությունը, ինչպես նաև այն, որ «բազմակի ստորոգյալների գծային հատկությունը

մից ստացված միավորներն ունեն նախադասության հատկանիշ, ի տարբերություն բազմակի ենթակաների հատույթավորման, որի դեպքում չենք ստանում նախադասության հատկանիշ ունեցող միավոր» (17, էջ 564)։ Պրոֆ. Ս. Աբրահամյանը նաև ընդունում է միակազմ միավորյալ նախադասության գոյությունը հայերենում (տե՛ս 17, էջ 471)։

Միավորյալ նախադասությանը անհամեմատ շատ է անդրադարձել պրոֆ. Վ. Առաքելյանն իր աշխատություններում։ Նա նույնպես բազմակի ենթականերով նախադասությունը դիտում է պարզ նախադասություն, իսկ բազմակի ստորոգյալներով նախադասությունը՝ բարդ համադասական նախադասության մի տարատեսակը կազմող միավորյալ նախադասություն (տե՛ս 27, էջ 395. 15, էջ 238)։ Վ. Առաքելյանը քննում է նաև շարահյուսական այլ կառուցների (տարբեր ենթականերով բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ) կազմում միավորյալ նախադասության հանդես գալը (տե՛ս 28, էջ 315—317, 322), իսկ Նարեկացու լեզվին ու ոճին նվիրված աշխատության մեջ՝ մեծ բանաստեղծի գործածած միավորյալ նախադասությունների կառուցվածքային մի քանի առանձնահատկություններ, որն ինքնին որոշ լույս է սփռում գրաբարյան միավորյալ նախադասության վրա (տե՛ս 32, էջ 22, 108, 131, 132, 147, 150)։

Դոցենտ Պ. Պողոսյանը միավորյալ նախադասությանը խիստ թռուցիկ անդրադառնում է բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի ոճական կիրառությունների քննության կապակցությամբ (տե՛ս 89, էջ 150), իսկ ավելի հանգամանորեն՝ իր ձեռնարկում՝ այն դիտելով որպես միջակա օղակ պարզ և բարդ նախադասությունների միջև (տե՛ս 90, էջ 184—185)։ Նա միավորյալ նախադասությունները բաժանում է երեք խմբի՝ ա) բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով, բ) բազմակի ստորոգյալներով ու մեկ ենթակայով, գ) բազմակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով միավորված նախադասություններ և միաժամանակ հակված է բազմակի ստորոգյալներով նախադասությունները դասել բարդ նախադասությունների շարքը (տե՛ս 90, էջ 247)։

«Ժամանակակից հայոց լեզվի» ակադեմիական հրատարակության 3-րդ հատորում բազմակի ստորոգյալների քննության կապակցությամբ բան. գիտ. թեկնածու Հմ. Օհանյանը գրում է. «Բազմակի են լինում նաև ստորոգյալները, որոնք կազմում են միավորյալ նախադասություն» (17, էջ 278)։ Իսկ տողատակին կարդում ենք. «Բազմակի ստորոգյալներով (այսինքն՝ միավորյալ— Ա. Կ.) նախադասությունը բարդ է» (Ն. տ., էջ 278)։

Բան. գիտ. թեկնածու Էմ. Բաղդասարյանը մի հոդվածում քննում է

Երկկազմ միավորյալ նախադասության կետադրության մի քանի դրսևորումներ (տե՛ս 36, էջ 9—13)։

Դոցենտ Գ. Գարեգինյանը բազմակի ստորոգյալներով նախադասությունները ներկայացնում է բարդ նախադասության բաժնում՝ հաշվի առնելով այդ կառույցների մի մասի անցողիկ լինելը պարզ և բարդ նախադասությունների միջև, մյուս մասի հարելը բարդ նախադասությանը (տե՛ս 39, էջ 12)։

Միավորյալ նախադասության կառուցվածքային, իմաստային ու ոճական առանձնահատկությունները, շարահյուսական տարբեր հարաբերությունների գործառությունն այս կառույցում և այլ հարցեր քննվել են մեր հրապարակած հոդվածներում (տե՛ս 52, էջ 117—119. 53, էջ 47—52. 54, էջ 40—50. 55, էջ 72—79. 56, էջ 44—51. 57, էջ 24—36. 58, էջ 19—20. 59, էջ 13—19. 60, էջ 33—47. 61, էջ 27—30. 62, էջ 81—91)։

Ամփոփելով հայ քերականագիտության պատմության մեջ երկկազմ միավորյալ նախադասության մասին արտահայտված կարծիքները՝ կարելի է առանձնացնել հետևյալ տեսակետները.

ա) Մի քանի բայով (իմա՝ բայ-ստորոգյալով) կամ մի քանի ենթակայով կազմված նախադասությունը կազմությամբ բարդ է (Հովհ. Եղիազարյան)։

բ) Բազմակի թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական անդամներով կազմված նախադասությունները կոչվում են միավորյալ նախադասություններ և դասվում են բաղադրյալ (բարդ) նախադասությունների շարքը (Ստ. Պալասանյան, Հ. Ղուկասյանց)։

գ) Բազմակի ենթականերով, բազմակի ստորոգյալներով միավորված ձևերը կազմում են միավորյալ նախադասություն (Մելիք-Թանգյան, Գր. Վանցյան)։

դ) Բազմակի ենթականերով, բազմակի ստորոգյալներով միավորյալ նախադասությունը բարդ համադասական նախադասության մի տարատեսակն է (Տեր-Ղևոնդյան, Գ. Սևակ, Էդ. Աղայան, Գ. Ջահուկյան, Ն. Պառնասյան, Հ. Մխիթարյան, Ալ. Մանուկյան և այլք)։

ե) Բազմակի ենթականերով (ու մեկ ստորոգյալով) նախադասությունը պարզ է, իսկ բազմակի ստորոգյալներով նախադասությունը՝ բարդ համադասական, տվյալ դեպքում՝ միավորյալ (Մ. Աբեղյան, Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Հմ. Օհանյան, Գ. Գարեգինյան, Ա. Կարապետյան)։

զ) Բազմակի ստորոգյալներով նախադասությունը պետք է դիտել բարդ համադասական նախադասություն, առանց միավորյալ անվանումը տալու (Ս. Գյուլբուդաղյան)։

է) Բաղմակի ենթականերով կամ բազմակի ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասությունը բարդ նախադասության մի առանձին տեսակ է՝ հավասարազոր բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններին (Ա. Ղարիբյան)։

ը) Բազմակի գլխավոր անդամներով միավորյալ նախադասությունը միջակա օղակ է պարզ և բարդ նախադասությունների միջև (Պ. Պողոսյան)։

թ) Բազմակի ենթականերով, բազմակի ստորոգյալներով միավորյալ նախադասությունը կազմությամբ պարզ է (Ա. Գրիգորյան)։

Միավորյալ նախադասությունը քննվել է նաև ռուս քերականագիտության մեջ, ուր շարահյուսական այս կառույցը հիմնականում ներկայացվել է որպես բազմակի անդամներով նախադասություն, որի կառուցվածքի որոշման հարցը նույնպես հարուցել է վեճեր ու տարակարծություններ։ Ի դեպ, այստեղ «նախադասության բազմակի երկրորդական անդամների մասին տեսությունը վեճի տեղիք չի տալիս» (138, էջ 236)։ Տարակարծությունները հիմնականում վերաբերում են բազմակի գլխավոր անդամներով կազմված նախադասություններին, որոնց մասին արտահայտվել են համարյա այն կարծիքները, որոնք դրսևորվել են հայ քերականագիտության մեջ։

Քննության առարկա հարցի մասին ռուս քերականներից առաջինը խոսել է Ն. Ի. Գրեչը։ Նա համադաս կամ բազմակի անդամներով կազմված նախադասությունը դիտում է որպես մեկից ավելի նախադասությունների միավորման արդյունք և այն անվանում է միավորյալ նախադասություն (слитное предложение[5])՝ ռուս շարահյուսագիտության պատմության մեջ առաջինը գործառության մեջ դնելով այս տերմինը։ Գրեչը նաև հավասարության նշան է դնում բազմակի գլխավոր և երկրորդական անդամների միջև, երբ գրում է. «Երկու կամ ավելի նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերը (ինչպիսիք են ենթական, ստորոգյալը, հանգույցը, որոշիչը, խնդիրը) կարող են դասավորվել իրար, այսինքն՝ միավորվել մի ամբողջության մեջ՝ ցույց տալով տարբեր հասկացությունների միատեսակ կամ հավասար հարաբերություններ» (137, էջ 369)։

Ակադ. Ա. Խ. Վոստոկովը բազմակի գլխավոր անդամներով կառուցվածքները դասում է բարդ նախադասությունների շարքը՝ առանց գործածելու միավորյալ նախադասություն տերմինը (տե՛ս 131, էջ 105)։ Իսկ ակադ. Ֆ. Ի. Բուսլաևը, հետևելով Գրեչին, բազմակի անդամներով նա-

5 Слитное предложение բառացի նշանակում է «միաձույլ նախադասություն», բայց քանի որ հայերենում այդ կառույցը ավանդաբար անվանվում է միավորյալ, ուստի մենք այստեղ և այսուհետև միաձույլ-ի փոխարեն գործածում ենք միավորյալ-ը։

խոսքում է որպես երկու կամ ավելի նախադասությունների միավորման արդյունք՝ դրանք անվանելով միավորյալ նախադասություն և դասելով բարդ նախադասությունների շարքը (տե՛ս 120, էջ 43)։

Բազմակի անդամներով կազմված նախադասությունների մասին բոլորովին այլ կարծիք է արտահայտում պրոֆ. Ա. Ա. Պոտեբնյան։ Նա մերժում է միավորյալ նախադասության, որպես բարդ նախադասության առանձին տարատեսակի, գոյությունը հաստատող Ն. Դրնչի, Ֆ. Բուսլաևի և այլոց հիմնավորումները՝ դրանք դիտելով որպես տրամաբանության և քերականության երկու կարգերի՝ դատողության ու նախադասության շփոթման արդյունք (տե՛ս 157, էջ 117—118)։

Ակադ. Դ. Ն. Օվսյանիկո-Կուլիկովսկին ընդունում է նախադասության բազմակի անդամների գոյությունը՝ դրանք անվանելով «նախադասության միատեսակ մասեր» կամ «նախադասության ներսի համազոր մասեր» (152, էջ 271, 273), բայց հրաժարվում է միավորյալ նախադասություն տերմինից։

Քննության առարկա հարցին անհամեմատ ավելի հանգամանորեն է անդրադառնում պրոֆ. Ա. Մ. Պեշկովսկին իր «Руский синтаксис в научном освещении» աշխատության մեջ։ Այստեղ նա մի կողմից նշում է, որ ավանդական «միավորյալ» տերմինը, եթե հրաժարվենք նրա պատմական ըմբռնումից, հաջող կերպով արտահայտում է այդ նախադասությունների էությունը» (155, էջ 406), մյուս կողմից էլ շեշտում է, որ «պատմական հայեցակետից այդ տերմինը ենթարկվում է արդարացի առարկության (այդ նախադասությունները նույնպես հին են, ինչպես ոչ միավորյալները), և «միավորման» այդ ընթացքը հնարավոր չէ ապացուցել» (Ն. տ.)։ Պեշկովսկու կարծիքով՝ միավորյալ նախադասությունը միջակա դիրք է զբաղեցնում պարզ և բարդ նախադասությունների միջև և ավելի շատ հակվում է դեպի բարդը։

Նկատենք, որ միավորյալ նախադասության գոյությունն ընդունող լեզվաբանները այն դիտում են որպես մի քանի բաղադրիչ նախադասությունների միավորման արդյունք։ Այս տեսակետից բոլորովին այլ կարծիք է արտահայտում ակադ. Ա. Ա. Շախմատովը։ Նա թեև գործածում է «միավորյալ ենթական» և «միավորյալ ստորոգյալ» տերմինները, բայց և այնպես հրաժարվում է այդ նախադասությունները դիտել որպես մի քանի նախադասությունների միավորում՝ գրելով. «Հազիվ թե հիմք ունենք մտածելու, թե մի քանի ստորոգյալների առկայությունը համապատասխանում է մի քանի նախադասությունների առկայությանը և որ, օրինակ, Կեսարը եկավ, տեսավ, հաղթեց նախադասության մեջ ունենք երեք նախադասությունների միավորում. Կեսարը եկավ, Կեսարը տեսավ

և Կեսարը ճաղթեց» (176, էջ 235)։ Շախմատովը, այնուամենայնիվ, որոշակիորեն տարբերակում է բազմակի ստորոգյալները մյուս բազմակի անդամներից և միավորյալ նախադասություն տերմինը ավելի շատ գործածում է բազմակի ստորոգյալներով կառույցի համար՝ այն դասելով պարզ նախադասությունների շարքը։ Անվանի լեզվաբանը հետագայում էլ անդրադառնում է բազմակի ստորոգյալներով նախադասությունների հարցին։ Որոշ ուսումնասիրողներ Շախմատովի արխիվում հայտնաբերել են նյութեր, որոնցում հեղինակը բազմակի ստորոգյալներով նախադասություններն արդեն դասում է բարդ նախադասությունների շարքը։ Այս հարցին առաջինը անդրադարձել է է. Ի. Կարատաևան (տե՛ս 144, էջ 68—69), իսկ ավելի ուշ՝ պրոֆ. Վ. Ա. Բելոշապկովան։ Բելոշապկովան վկայում է, որ ակադ. Շախմատովն իր ձեռագիր նյութերում մեկ ենթակայով ու բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները բաժանում է երկու խմբի՝ ընդհանուր լրացում (լրացումներ) ունեցող ստորոգյալներով նախադասությունները (օր.՝ Նրանք ինձ լողացրին, հագցրին և կերակրեցին) համարելով միավորյալ ստորոգյալներով պարզ նախադասություններ, իսկ տարբեր լրացումներ ունեցող ստորոգյալներով նախադասությունները (օր.՝ Ես հանգիստ էի, և՛ նայում շուրջս, և՛ ուշադիր լսում)՝ մեկից ավելի նախադասությունների զուգակցում, այսինքն՝ բարդ նախադասություն (տե՛ս 121, էջ 168)։

Ակադ. Վ. Վինոգրադովը մասնավորապես անդրադառնում է բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունների խնդրին՝ այդպիսիք դիտելով բարդացված պարզ նախադասություններ (տե՛ս 125, էջ 97—98)։

Նախադասության բազմակի անդամների քննությանը տարբեր առիթներով անդրադառնում է նաև պրոֆ. Դ. է. Ռոզենտալը։ Պրոֆ. է. Մ. Գալկինա-Ֆեոդորուկի խմբագրությամբ լույս տեսած «Современный русский синтаксис» աշխատության մեջ, իր հեղինակած բաժնում (տե՛ս 168, էջ 235—256), և բուհական մեկ այլ ձեռնարկում (տե՛ս 123, էջ 388—397) Դ. Ռոզենտալը բոլոր կարգի բազմակի անդամներով կազմված նախադասությունները դիտում է պարզ նախադասություններ, իսկ մի այլ առիթով բազմակի ստորոգյալներով կազմված միակազմ նախադասությունները դասում է բարդ համադասական նախադասությունների շարքը (տե՛ս 160, էջ 119)։

Բազմակի անդամներով կազմված նախադասությունները տարբեր ժամանակներում լույս տեսած մի շարք աշխատություններում գնահատվում են որպես պարզ նախադասություններ (տե՛ս 132, էջ 131—152. 158, էջ 62—70. 174, էջ 479—485. 167, էջ 458. 128, էջ 92)։

Նախադասության բազմակի անդամների ընդարձակ քննությունը կատարում են նաև պրոֆ. պրոֆ. Ա. Գ. Ռուդնևը, է. Ս. Սկոբլիկովան և Ֆ. Կ. Գուժվանն։ Նրանք մերժում են բազմակի անդամներով կազմված նախադասություններին միավորյալ անվանում տալն ու բարդ նախադասությունների շարքը դասելը և, էական տարբերություն չտեսնելով բազմակի գլխավոր ու բազմակի երկրորդական անդամներով միավորված նախադասությունների միջև, դրանք բոլորը համարում են բարդացված պարզ նախադասություններ (տե՛ս 161, էջ 153—174. 162, էջ 222—242. 166, էջ 194—205. 138, էջ 235—240)։

1950—60-ական թվականներից սկսած ռուս շարահյուսագիտության մեջ կատարվում են բազմակի անդամներով կազմված նախադասությունների նորովի մեկնաբանություններ։ Շատ ուսումնասիրողներ տարբերակում են մտցնում բազմակի ստորոգյալներով և բազմակի մյուս անդամներով կազմված նախադասությունների միջև՝ առաջիններ համարելով բարդ նախադասությունների շարքը դասվող միավորյալ (слитное), իսկ երկրորդները՝ բազմակի անդամներով պարզ նախադասություններ։ Այսպես՝ Ն. Ս. Պոսպելովը իր մի հոդվածում բազմակի բայական ստորոգյալներով կազմված նախադասությունները անվանում է միավորյալ և դասում բարդ նախադասությունների շարքը (տե՛ս 156, էջ 248—249)։ Ն. Ս. Վասիլևան բարդ նախադասության մի տարատեսակն է դիտում բազմակի ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասությունը (տե՛ս 124, էջ 47—48)։ Պրոֆ. Ա. Մ. Մուխինը իր «Структура предложения и их модели» աշխատության մեջ բավական լուրջ փաստարկումներով հիմնավորում է բազմակի ստորոգյալներով նախադասությունների բարդ համադասական լինելը (տե՛ս՝ 150, էջ 143—150. 184—214, 216—217)։ Այս նույն տեսակետն արտահայտվել է նաև ժամանակակից ռուսաց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ (տե՛ս 136, էջ 657—667)։

Բազմակի ստորոգյալներով նախադասությունները բարդ է համարում նաև պրոֆ. Վ. Ա. Բելոշապկովան՝ հիմք ընդունելով դրանցում մեկից ավելի ստորոգումների առկայությունը։ Նա գրում է. «Այդ (բազմակի ստորոգյալներով— Ա. Կ.) նախադասություններն էապես տարբերվում են մնացած բոլոր բազմակի անդամներով նախադասություններից, քանի որ նրանց մեջ համադասական կապով կապված են նախադասության այն անդամները, որոնք ստորոգելիության կրողներն են։ Այդպիսի նախադասություններում կան մի քանի ստորոգելիական կենտրոններ (предикативных центров), եղանակային ու ժամանակային նշանակությունները ինքնավար են, դրանք կարող են համընկնել կամ չհամընկնել» (121, էջ 167)։ Այս ճշմարիտ տեսակետը բխում է նախադասության մեջ

ստորոգյալի խաղացած դերի կարևորության ըմբռնումից։ Հետագա շարադրանքում կարդում ենք. «Ստորոգյալի՝ նախադասության հիերարխիայի գագաթի ընդունումից օրինաչափորեն բխում է բազմակի ստորոգյալներով նախադասության ըմբռնումը... որպես բազմաստորոգելիական (полипредиактивного) կառուցվածք, իսկ դա նշանակում է որպես բարդ նախադասություն» (Ն. տ., էջ 170)։

Բազմակի գլխավոր անդամներով կազմված նախադասությունների քննությանը անդրադառնում է նաև պրոֆ. Ն. Ս. Վալգինան։ Նա նշում է, որ «նախադասության գլխավոր անդամների բազմակիությունը կարելի է ընդունել միայն այն դեպքերում, երբ կապակցված բառաձևերը չեն խախտում պարզ նախադասության հիմքերը» (122, էջ 225)։ Եվ նա բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով կազմված նախադասությունը համարում է պարզ նախադասություն՝ հաշվի առնելով այն, որ բազմակի ենթակաները կատարում են «մեկ շարահյուսական դեր» (Ն. տ.) և կարող են ամփոփվել ընդհանրացնող բառի մեջ. ինչպես՝ Ադամուկ, հայհոյանք, բառաչում,— այդ բոլորը լցվում են մի անկազմակերպ խոսքի մեջ (Գոգոլ) (122, էջ 170)։ Նման կառույցում պրոֆ. Վալգինան տեսնում է մեկ ստորոգում (Ն. տ., էջ 229)։ Նա ընդհանուր լրացում չունեցող բազմակի անվանական գերադաս անդամներով միակազմ նախադասությունը (ինչպես՝ Քրքիջ և աղմուկ) բարդ է համարում՝ նրանում տեսնելով մեկից ավելի ստորոգումների առկայությունը (122, էջ 225), իսկ բայական ստորոգյալներով ու մեկ ենթակայով, տարբեր կարգի ստորոգյալներով (բայական ստորոգյալ + անվանական ստորոգյալ) կազմված նախադասությունները դիտում է որպես միջակա օղակ պարզ և բարդ նախադասությունների միջև (տե՛ս 122, էջ 228—230)։

Նախադասության բազմակի անդամները ներկայացվել են նաև «Русский язык. Энциклопедия» աշխատության մեջ (նախադասության բազմակի անդամներ բառահոդվածի հեղինակ է. Մ. Լապուտկին), ուր մասնավորապես նշվում է բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունների ըմբռնման հարցում տարակարծությունների գոյությունը (տե՛ս 164, էջ 173)։

Ուշադրավ է նաև այն, որ մեկ ենթակայով ու բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները վերջերս լույս տեսած «Русская грамматика» աշխատության մեջ քննվում են բարդ նախադասության բաժնում։ Այստեղ նշվում է, որ այդպիսի «նախադասությունների պարզ կամ բարդ լինելը որոշող հատկանիշը պայմանավորված է ընդհանուր ենթակայի նկատմամբ ստորոգյալների ոչ միանման հարաբերությամբ» (163, էջ 461)։ Այդ նախադասությունները մասնավորապես բարդ են դիտվում, երբ «ենթական այս կամ այն պատճառով ճեղքում է ստորոգ-

յալների շղթան և տեղադրվում նրանց միջև..., երբ նախադասությունների հնչերանգային բարդացման բնութագիրը չի համընկնում բայ-ստորոգյալների կերպային ու ժամանակային նշանակություններին։ Հմմտ. Անձրևը գալիս էր, դադարում էր և նորից սկսվում (Պուշկ.)։ Գալիս էր անձրև, դադարում էր և նորից սկսվում» (Ն. ս., էջ 461)։ Ահավասիկ բաղմակի ստորոգյալներով նախադասության բարդ համարվելու վերաբերյալ մեկ այլ դիտողություն. «Նախադասությունների բարդ լինելը վկայող հատկանիշ է նաև ստորոգյալների ոչ միատեսակ քերականական արտահայտությունը. «Նա իմ ընկերն է և ամեն րոպե ինձ կօգնի» (Ն. ս., էջ 461)։

Ինչպես տեսնում ենք, բաղմակի անդամներով կազմված նախադասությունների հարցը ռուս շարահյուսագիտության մեջ նույնպես ստացել է տարբեր մեկնաբանություններ։ Այդ տեսակետները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) Բոլոր բաղմակի անդամներով կազմված նախադասությունները կոչվում են միավորյալ և, որպես մեկից ավելի բաղադրիչ նախադասությունների միավորում, դասվում են բարդ նախադասությունների շարքը (Ն. Գրեչ, Ֆ. Բուսլաև)։

բ) Բազմակի անդամներով կառույցը բարդ նախադասություն է առանց միավորյալ անվանումը կրելու (Ա. Վոստոկով)։

գ) Բազմակի անդամներով նախադասությունը պարզ կամ բարդացված պարզ նախադասություն է (Ա. Պոտեբնյա, Վ. Վինոգրադով, Ա. Գվոզդև, Տ. Պոչեպնա, Ի. Ռասպոպով, Ա. Ռուդնև, է. Սկորլիկովա)։

դ) Բազմակի անդամներով կազմված միավորյալ նախադասությունը միջակա դիրք է գրավում պարզ և բարդ նախադասությունների միջև (Ա. Պեշկովսկի)։

ե) Ընդհանուր լրացում ունեցող բազմակի ստորոգյալներով նախադասությունը պարզ է, իսկ տարբեր լրացումներ ունեցող ստորոգյալներով նախադասությունը՝ բարդ (Ա. Շախմատով)։

զ) Բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով նախադասությունը պարզ է, ընդհանուր լրացում չունեցող բազմակի անվանական գերադաս անդամներով միակազմ նախադասությունը բարդ է, իսկ բազմակի բայական ստորոգյալներով միավորյալ նախադասությունը միջակա դիրք է գրավում պարզ և բարդ նախադասությունների միջև (Ն. Վալգինա)։

է) Բազմակի ստորոգյալներով միակազմ նախադասությունը բարդ համադասական կապակցություն է, իսկ բազմակի մյուս անդամներով նախադասությունները պարզ են (Դ. Ռոզենտալ)։

ը) Բազմակի ստորոգյալներով նախադասությունները բարդ համադասական նախադասություններ են (Վ. Բելոշապկովա)։

բ) Բազմակի բայական ստորոգյալներով նախադասությունները բարդ համադասական նախադասության մեջ մտնող միավորյալ (слитное) նախադասություններ են (Ն. Պոսպելով, Ն. Վասիևա, Ա. Մուխին)։

Ինչպես տեսնում ենք, ռուս քերականագիտության մեջ, մասնավորապես վերջին երկու տասնամյակում, գերակշռում է բազմակի ստորոգյալներով նախադասությունը բարդ համադասական կապակցություն դիտելու տեսակետը։

Ավելացնենք նաև, որ եվրոպական շատ լեզուներում ևս «գերակշռում է մեկ ենթակային կից մի քանի ստորոգյալներով նախադասությունների մեկնաբանումը որպես բարդ նախադասություններ» (121, էջ 168)։ Ընդսմին, այդ լեզուներում էլ նշված նախադասությունները կրում են միավորյալ անվանումը։ Բազմակի ստորոգյալներով նախադասությունները այդպես են ներկայացվում մասնավորապես գերմաներենում (տե՛ս 142, էջ 286), չեխերենում (տե՛ս 121, էջ 169) և այլ լեզուներում։ Չեխերենում առավելապես իշխում է Ֆ. Տրավնիչկիի տեսակետը, «ըստ որի բազմակի են լինում նախադասության բոլոր անդամները, բացի բայական ստորոգյալից։ Այդ դրույթի համաձայն մի քանի բայական ստորոգյալներով նախադասությունները դիտվում են որպես բարդ, իսկ մի քանի անվանական ստորոգյալներով նախադասությունները՝ որպես բազմակի անդամներով պարզ նախադասություններ» (121, էջ 169)։ Պրոֆ. Վ. Բելոշապկովան այդ մասին գրում է. «Դժվար է ամբողջովին համաձայնել հարցի այդպիսի հասկացությանը։ Հազիվ թե անվանական և բայական ստորոգյալների ամբողջական հակադրումն օրինաչափ լինի։ Անվանական ստորոգյալն իր կազմում ներառում է հանգույց՝ բայ-ստորոգյալի նման արտահայտելով ժամանակի, եղանակավորության ստորոգելիական կարգերը...» (Ն. տ., էջ 169)։ Մենք ամբողջովին բաժանում ենք այս տեսակետը։ Թե՛ բայական և թե՛ անվանական բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները քերականական-կառուցվածքային նույն տիպն են ներկայացնում։

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արդ՝ ո՞ր նախադասություններն են միավորյալ, և դրանք ո՞ր նախադասությունների շարքը պետք է դասել՝ պա՞րզ, թե՞ բարդ։

Միավորյալ նախադասությունը բարդ համադասական նախադասություն է։ Ակնբախ է, որ բարդ նախադասությունը, որպես կանոն, ունենում է մեկից ավելի ստորոգումներ, որոնք համադասական կապակցության մեջ կապվում են համադասական, իսկ ստորադասական կապակցության մեջ՝ ստորադասական հարաբերությամբ։ Հետևաբար միավորյալ պետք է դիտել բազմակի անդամներով կազմված այն նախադասությունները, որոնք բավարարում են համադասական հարաբերությամբ կապված բազմակի ստորոգումներ ունենալու պահանջը։ Բազմակի լրացումներով նախադասությունները ունեն մեկ ստորոգում, ուստի կազմությամբ պարզ են։ Հետևաբար այդ նախադասությունների միավորյալ (և ընդհանրապես բարդ) լինելու մասին անցյալի քերականների տեսակետը անհրաժեշտ հիմնավորում չունի։

Իսկ ինչպիսի՞ն են բազմակի գլխավոր անդամներով կազմված նախադասությունները։ Սրանք ունեն կառուցվածքային տարբեր յուրահատկություններ։ Նախ՝ բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով նախադասության մասին։ Ինչպես տեսանք, շատ լեզվաբաններ դա ևս համարում են միավորյալ՝ նրանում տեսնելով մեկից ավելի ստորոգումներ, յուրաքանչյուր ենթակայի հետ ենթադրելով նաև ստորոգյալը, իսկ ոմանք էլ այն դիտում են պարզ նախադասություն։ Այս կառույցը մենք ևս համարում ենք բազմակի ենթականերով պարզ նախադասություն, քանի որ նրանում առկա է միայն մեկ ստորոգյալ, հետևաբար և մեկ ստորոգում։ Բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով նախադասությունը պարզ ենք դիտում նաև հետևյալ փաստարկումների հիման վրա։

1. Այս նախադասությունն իր բովանդակությամբ ու քերականական արտահայտությամբ հավասարազոր է բազմակի լրացումներով պարզ նախադասությանը։ Այսպես՝ հմմտ. 1. «Ամեն առավոտ արծաթյա փո-

ղերի ճնշյունը, որսորդական բարակների մռնչյունը... խռովում էին սրամուտ անասունների վաղորդյան հանգիստը» (ՐՍ, 438)։ 2. «Լսում էին խոսակցությունները, կանչը, ձիերի վրնջոցը, մանուկների լացի ձայներ, մեկի ոիլ ծիծաղը» (ԱԲՆ, 549)։ Եթե ընդունենք, որ առաջինը բարդ նախադասություն է, ունի մեկից ավելի ստորոդումներ և կազմում է «Ամեն առավոտ արծաթյա փողերի հնչյունը խռովում էր սորամուտ անասունների վաղորդյան հանգիստը» և «Ամեն առավոտ որսորդական բարակների մռնչյունը խռովում էր սորամուտ անասունների վաղորդյան հանգիստը» նախադասությունների թվաբանական գումարը, ապա նույնը պետք է ասել նաև երկրորդի մասին, նրանում ևս պետք է տեսնել ստորոգյալների, հետևաբար նաև ստորոգումների բազմակիություն, այսինքն՝ դա նույնպես պետք է համարել բարդ նախադասություն՝ կազմված «Լսում էին խոսակցությունները», «Լսում էին կանչը» և այլն բաղադրիչ նախադասություններից, մի մեկնաբանություն, որը ճիշտ չէ։

2. Բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով նախադասությունը բարդ դիտվելու դեպքում ըստ երևույթին հաշվի է առնվում ստորոգյալի՝ հոգնակի թվով գործածվելը՝ նրանում ընդունելով ստորոգումների հոգնակիություն։ Նման տրամաբանությամբ առաջնորդվելիս բարդ պետք է դիտել նաև հոգնակի գոյականով կամ դերանվամբ արտահայտված ենթակայով ու մեկ ստորոգյալով կազմված և ընդհանրապես հոգնակի ստորոգյալով բոլոր այն նախադասությունները, որոնց բազմակի ենթակաները փոխակերպվում են մեկ դերանվամբ։ Օրինակներ՝ «Առավոտյան աշակերտներ շտապում են դպրոց»։ «Ամենը սիրում էին նրան» (Մուր., 2, 44)։ «Նաբեկացին ու Սայաթ-Նովան միջնադարյան հայ գրականության ամենախոշոր դեմքերն են» → «Նրանք միջնադարյան հայ գրականության ամենախոշոր դեմքերն են»։ Տրամաբանորեն հասկացվում է, որ, օրինակ, առաջին նախադասության մեջ աշակերտներից յուրաքանչյուրը կատարում է շտապելու գործողությունը, բայց դա չի նշանակում, թե այդ նախադասությունն ունի մեկից ավելի ստորոգումներ և բարդ է։ Նույնը պետք է ասել նաև մյուս նախադասությունների մասին։ Ուրեմն դրանց պարզ լինելը ակնբախ է, քանի որ լեզվի մեջ կարևորը քերականական արտահայտությունն է։ Պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանն իրավացիորեն գրում է. «Նախադասության կառուցվածքը որոշվում է ոչ թե նրանից բխող կամ ենթադրվող բովանդակությամբ, այլ առկա կառուցվածքով» (17, 563)։ Բերված նախադասություններում քերականորեն առկա է մեկ ստորոգում։ Նախադասության ստորոգումները մեկից ավելի են, երբ առարկային կամ առարկաներին վերագրվում են մեկից ավելի տարբեր հատկանիշներ, իսկ դա գոյություն ունի միայն մեկից ավելի ստորոգյալների առկայության դեպքում։ Անշուշտ, յուրաքանչյուր հատկանիշ կարող

է արտահայտվել և առարկային վերագրվել առանձին բառական միավորով։ Հետևաբար ստորոգյալի՝ հոգնակի թվով արտահայտված լինելը չի կարող հիմք դառնալ տվյալ նախադասությունը բարդ համարելու համար։

3. Հաճախ բազմակի ենթակաները ցույց են տալիս միևնույն առարկան՝ ստանալով եզակի ստորոգյալ. ինչպես՝ «Սեդա՛, իմ դուստրը և քո Սահականույշը միայնակ է» (ՄԳՄ, 79)։ Համատեքստից հասկանալի է, որ այստեղ գործող անձը մեկն է, որ Սևադայի համար դուստր է, իսկ Սեդայի համար՝ սոսկ Սահականույշ, մտերիմ ընկերուհի։ Հետևաբար ճիշտ չի լինի մտածել, թե այդ կառույցում ստորոգյալի արտահայտած հատկանիշը «առանձին-առանձին վերագրվում է ենթականերին»։

4. Բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով նախադասության պարզ լինելն է հաստատում նաև հատուկբավորումը (տե՛ս 17, էջ 564)։ Ընդամին, բազմակի ստորոգյալների գծային հատուկբավորումից ստացված հոդավորվող միավորներն արդեն բաղադրիչ նախադասություններ են, իսկ բազմակի ենթակաների հատուկբավորման դեպքում ստացվում է նախադասության հատկանիշ ունեցող միայն մեկ միավոր։ Այսպես՝ «Նրանք մեկնեցին Մոսկվա և մեկ ամիս հետո վերադարձան»։ «Արամը և նրա հարազատները մեկնեցին Մոսկվա»։ Առաջին նախադասությունը հատուկբավորվում է երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը բաղադրիչ նախադասություն է՝ 1) Նրանք մեկնեցին Մոսկվա, 2) Մեկ ամիս հետո վերադարձան, հետևաբար այն բարդ համադասական նախադասություն է։ Մինչդեռ երկրորդ նախադասությունը հատուկբավորվում է բազմակի ենթակաների սահմանից, և ստացվում են նախադասության հատկանիշ չունեցող մեկ բառ (Արամը) ու մեկ նախադասություն։

Այսպիսով, բազմակի ենթականերով ու մեկ ստորոգյալով կազմված նախադասությունը պարզ է, համարժեք է բազմակի լրացումներով նախադասությանը և պետք է ներկայացնել պարզ նախադասության համակարգում։

Այժմ մեկ ենթակայով ու բազմակի ստորոգյալներով և բազմակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով միավորված նախադասությունների մասին։ Այս նախադասություններում առկա են մեկից ավելի ստորոգային հատկանիշներ, միայն թե մեկ ենթակայով կառույցում այդ հատկանիշները հավասարապես վերագրվում են միևնույն ենթակային, իսկ բազմակի ենթականերով կառույցում՝ բոլոր ենթականերին։ Օրինակ՝ «Պապս գլուխը կախել էր և ձախ ձեռքով բռնել ծնոտը» (ԱԲ, 1, 219)։ «Վարդանն ու Գևորգը գնացին պիոներական ճամբար, այնտեղ անցկացրին հետաքրքրական օրեր և օգոստոսի վերջին վերադարձան»։ Ինչպես տեսնում ենք, միակի ենթակայով ու բազմակի ստորոգյալներով և բազ-

մակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով կազմված նախադասությունները իրար նման են երկու էական հատկանշով՝ ա) ենթակայի կամ ենթակաների՝ բոլոր բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր լինելով և բ) ստորոգյալների, հետևաբար նաև ստորոգումների բազմակիությամբ: Մեկից ավելի ստորոգումներ ունենալու պատճառով այդ նախադասությունները բարդ են: Այնուհետև. քանի որ նրանց ստորոգյալին հատկանիշները, լայն առումով՝ բաղադրիչ նախադասությունները կապվում են համադասական հարաբերությամբ, ուստի դրանք բարդ համադասական նախադասություններ են: Իսկ պարզելու համար, թե բազմակի ստորոգյալներով նախադասությունները ի՞նչ տեղ են գրավում բարդ համադասական կապակցության մեջ, ի՞նչ էական հատկանիշներով են տարբերվում այդ կապակցության մյուս դրսևորումներից, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ բարդ համադասական նախադասության դասակարգմանը:

Հայտնի է, որ գոյություն ունեն համադասական նախադասության տարբեր դասակարգումներ: Ռուս, հայ և այլ լեզուների քերականագիտության պատմության մեջ բարդ համադասական նախադասությունները սովորաբար դասակարգվում են ըստ բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող շարահյուսական հարաբերության, և ըստ այդմ էլ տարբերակվում են միավորական, ներհակական, տրոհական և այլ հարաբերություններով բարդ համադասական նախադասություններ: Նախադասության, որպես կաղապարի, դասակարգումը պետք է կատարել կառուցվածքային առավել էական հատկանշի հաշվառումով, որով նախադասության բոլոր դրսևորումները կարող են խմբավորվել: Ընդ որում, տվյալ հատկանիշն ունեցողները կմիավորվեն որպես նույն կարգի իրականություններ, իսկ այդ հատկանիշը բացառողներն էլ, որպես այդպիսիք, կհակադրվեն մի այլ խումբ՝ հակադրվելով առաջիններին:

Տվյալ դեպքում մենք բարդ համադասական նախադասության դասակարգման հիմունք ենք ընդունում ենթակայի (ենթակաների) ընդհանուր կամ տարբեր լինելը հետևյալ պատճառներով: Նախ՝ ենթական նախադասության գլխավոր անդամներից մեկն է՝ գործողության (լայն առումով՝ հատկանշի) «տերը»: Հետևաբար նրա ընդհանուր կամ տարբեր լինելը բարդ համադասական նախադասության տարբերակման հիմունք դիտելը շատ կարևոր է: Երկրորդ՝ ենթակայի ընդհանուր կամ տարբեր լինելը պայմանավորում է նաև ստորոգման յուրահատկությունը: Այսպես, հմմտ. 1. «Մխիթարը զինագործների հետ վրուցում էր մտերմաբար, իսկ Արթինի հետ իշխանավարի էր...» (ՍԽՄՄ, 3, 193): 2. «Ես սիրալիր հարգանքով ողջունեցի երկուսին, իսկ հայրս բացատրեց նրանց յուր տարօրինակ հայտարարության պատճառը» (Մուր., 2, 90): Այս-

երկու նախադասություններն էլ հանդիպադրական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ են։ Կառուցվածքային միակ հատկանիշը, որով դրանք իրարից տարբերվում են, այն է, որ առաջինում ենթական ընդհանուր է երկու բաղադրիչ նախադասությունների համար. զրուցելու և իշխանավարի լինելու հատկանիշները հավասարապես ստորոգվում են այդ ենթակային, իսկ երկրորդում յուրաքանչյուր բաղադրիչ նախադասություն ունի իր ենթական։ Ընդ որում, առաջին բաղադրիչի ոչջունելու գործողությունը, որպես հատկանիշ, ստորոգվում է նույն բաղադրիչի Ես ենթակային, իսկ երկրորդ բաղադրիչի բացատրելու գործողությունը՝ հայրս ենթակային։ Հետևաբար՝ այն, թե բաղադրիչ նախադասությունների ստորոգային (կամ ստորոգվող) հատկանիշները վերագրվում են նո՞ւյն առարկային (ենթակային), թե՞ տարբեր առարկաների (ենթակաների), ունի էական նշանակություն։ Մյուս կողմից՝ քանի որ ստորոգումը նախադասության ամենահիմնական հատկանիշն է, ուստի նրա յուրահատկությունը հավասարապես դառնում է նաև նախադասության կառուցվածքային առանձնահատկություն։ Այսպիսով, բարդ համադասական նախադասության մեջ ենթակայի ընդհանուր կամ տարբեր լինելը չի մնում որպես սոսկ ենթակայի յուրահատկություն, այլ տարածվում է նաև ստորոգման վրա՝ դառնալով նախադասության կառուցվածքային ընդհանուր հատկանիշ։ Ըստ այդ հատկանշի էլ բոլոր կարգի բարդ համադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) ընդհանուր ենթակայով նախադասություններ և բ) տարբեր ենթականերով նախադասություններ:

Առաջին դեպքում ենթական կամ ենթակաները (եթե դրանք բազմակի են) սովորաբար արտահայտվում են առաջին (սակավադեպ էլ հաջորդ) բաղադրիչում, բայց հավասարապես վերաբերում են բոլոր բաղադրիչներին։ Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության բաղադրիչների ստորոգային հատկանիշները հավասարապես վերագրվում են ընդհանուր ենթակային կամ ենթականերին, իսկ համապատասխան շարահյուսական հարաբերությունները գործածվում են միայն ստորոգվող հատկանիշների միջև։ Դրանք բազմակի ստորոգյալներով կազմված նախադասություններն են, որոնք հայ քերականագիտության պատմության մեջ հայտնի են միավորյալ նախադասություն, իսկ ռուսերենում՝ слитное предложение[1] անվանումով. օրինակ «Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի չորս կողմը, տեսրում մի բան նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին» (Ա.Բ, 1, 183)։

---

[1] Ռուս քերականագիտական տերմինաբանության մեջ այս նախադասությունը հայտնի է նաև предложение с однородными сказуемыми անվանումով։

Տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության բաղադրիչներից յուրաքանչյուրն ունի իր ենթական։ Շարահյուսական հարաբերությունն էլ արտահայտվում են բաղադրիչ նախադասությունների ինչպես ստորոգյալների, այնպես էլ ենթակաների միջև. ինչպես՝ «Ես մեջքս պատին քսելով փորձում եմ հեռանալ, սակայն նրանք քայլ առ քայլ ծաղրելով գալիս են հետևիցս» (ՍՋՄԿՊ, 83)։ «Գաբրիելը լողանում էր, իսկ կինն սպասում էր վրանի առաջ» (ՖՎՄԼՔՕ, 354)։ Այս նախադասություններից առաջինում հակասման, իսկ երկրորդում հանդիպադրական հարաբերությունները գործածվում են բաղադրիչ նախադասությունների թե՛ ստորոգյալների և թե՛ ենթակաների միջև։

Բարդ համադասական նախադասության այս դասակարգումն արդարացվում է նրանով, որ համադասական կապակցության երկու ենթատեսակներն ունեն կառուցվածքային, իմաստային ու ոճական տարբեր առանձնահատկություններ։ Ահավասիկ այդ տարբերակիչ առանձնահատկություններից մի քանիսը։ Նախ, ինչպես նշեցինք, այդ երկու կառույցները իրարից տարբերվում են ենթակայի (ենթակաների) ընդհանուր կամ տարբեր լինելով և, երկրորդ, դրանով պայմանավորված՝ նաև ստորոգումների յուրահատկությամբ։

Երրորդ՝ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ շարահյուսական հարաբերությունները գործածվում են նաև ենթակաների միջև, մինչդեռ միավորյալ նախադասության մեջ դա բացառվում է. ենթական այստեղ, ընդհանուր լինելով, երկրորդ բաղադրիչում միավորման, հակադրության, տրոհականության և այլն եզր չունի։

Չորրորդ՝ ներհակական հարաբերությունը ոչ միատեսակ է արտահայտվում համադասական նախադասության երկու դրսևորումներում։ Այսպես՝ եթե տարբեր ենթականերով կառուցում համատեղ հակադրությունը լինում է լրիվ և մասնակի, ապա ընդհանուր ենթակայով կառուցվածքում այն միայն մասնակի է, քանի որ ենթական դուրս է մնում հակադրության ծրրից։ Համմտ. 1. «Մեծ Տիկինը չնայեց նրան, այլ գլուխը կախած, մտասույզ և լուրջ շարժվեց դեպի կանանց կողմը» (ԴԹվ, 2, 505)։ «Ոչ թե մենք ենք աշխատանքը շուտ սկսել, այլ պարզապես դու ես ուշացել»։

Հինգերորդ՝ ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասությունը ավելի սեղմ ոճի կառույց է և այլն։

Ինչպես տեսնում ենք, բարդ համադասական նախադասության այս դասակարգումը մի կողմից՝ ճշգրտում է համադասական նախադասության սահմանները, մյուս կողմից՝ ինքնին լուծում է բազմակի ստորոգյալներով նախադասության խնդիրը, պարզում նրա կառուցվածքային

պատկանելությունը՝ համադասական նախադասություն լինելը և ավելի կոնկրետ՝ նրա տեղը բարդ համադասական կապակցության մեջ։

Այսպիսով, բազմակի ստորոգյալներով նախադասությունները կազմում են բարդ համադասական կապակցության մի տարատեսակը, որը կարելի է անվանել ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասություն, բայց մենք մեր շարադրանքում պահպանում ենք միավորյալ նախադասություն ավանդական տերմինը ներածության մեջ նշված պատճառով։

Արդ՝ անցնենք ընդհանուր ենթակայով բարդ համադասական կամ միավորյալ նախադասության կառուցվածքային յուրահատկությունների քննությանը։ Ինչպես տեսնում ենք, միավորյալ նախադասության մեջ էական նշանակություն է ստանում շարահյուսական այնպիսի մի իրականություն, որպիսին նախադասության ընդհանուր կամ դետերմինացվող անդամն է[2]։ Ակնհայտ է, որ նրբ ընդհանուր անդամի գործառությամբ հանդես են գալիս ենթական ու ստորոգյալները, ձևավորվում է միավորյալ նախադասությունը։ Ընդամին, ենթական ընդհանուր է, նրբ հավասարական-վերագրման հարաբերությամբ կապվում է նույն կառույցի բոլոր ստորոգյալների հետ, իսկ ստորոգյալները ընդհանուր են, նրբ նրանք նույն հարաբերությամբ կապվում են բազմակի ենթականերից յուրաքանչյուրին։ Հետևաբար բազմակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով կազմված նախադասության մեջ ընդհանուր են և՛ ենթակաները, և՛ ստորոգյալները։ Բերենք օրինակներ՝ «Ես շինեցի ուռի ճյուղից իմ սրինգը գեղչկական ու երգեցի սրտիս երգը՝ նրա երգին պատասխան» (ԱՒ, 77)։ «Ամառ երեկոները սպիտակ շորերով աղջիկներ ու տիկներ գալիս են ու քարափի վրա նստում» (ԱԲ, 1, 242)։

Դետերմինացիայի կամ նախադասության անդամների ընդհանրականության դերը մեծ է նաև միակազմ միավորյալ նախադասության մեջ։ Ընդամին, տարբեր կառուցվածքի միակազմ միավորյալ նախադասություններում այն գործառական տարբեր դեր ու նշանակություն ունի։ Այսպես՝ քննենք հետևյալ նախադասությունները. «Հեռախոսով զանգահարեցին և հայտնեցին լուրը»։ «Մարդուն ընկերով են ճանաչում ու գնահատում»։ «Պայքարել և նվաճել ազատություն»։ Առաջին նախադասության ձևավորման (կամ բաղադրիչների միավորման) հիմքը համապատասխան գործողություններ դիմային անորոշության է և չարտահայտված միևնույն անձին (անձանց) տվյալ հատկանիշների վերագրումը. զանգահարողն ու լուրը հայտնողը նույն անձն է, որը տվյալ

---

2 Այս անդամների քննությունը տե՛ս 177, էջ 148, 159, 169. 84, էջ 38—41. 17, էջ 447—449. 11, էջ 53—55. 88, էջ 27—37։

դեպքում քերականորեն չի արտահայտվում, բայց տրամաբանորեն ըմբռնվում է որպես այդպիսին, որպես ընդհանուր ենթակա։ Երկրորդ օրինակում բայական գերադաս անդամների, որպես բաղադրիչ նախադասությունների, միավորման հիմք են հանդիսանում՝ ա) նրանց գործողությունների վերաբերության ընդհանրականությունը, բ) այդ հատկանիշների տրամաբանորեն միևնույն հավաքական սուբյեկտին վերագրումը և գ) միջոցի խնդրի (ընկերով) ընդհանուր լինելը բոլոր բաղադրիչների համար։ Իսկ վերջին նախադասության բաղադրիչների միավորման հիմքը միևնույն նպատակին ուղղված երկու փոխպայմանավորված գործողությունների միաժամանակյա առկայությունն է և, որ առավել կարևոր է, հնչերանգային ստորոգմամբ այդ հատկանիշները արտալեզվական միևնույն առարկային (առարկաներին) վերագրելը. պայքարելու և աղատություն նվաճելու կոչը ուղղվում է միևնույն անձին (անձանց), որից (որոնցից) և սպասվում է դրանց կատարումը։ Հետևաբար բերված նախադասությունների մեջ ևս առկա է ընդհանուր ենթակա, միայն թե տրամաբանորեն։ Այսպիսով, բոլոր բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր հանդիսացող ենթական երկկազմ միավորյալ նախադասության մեջ քերականորեն արտահայտվում է (կամ կարող է վերականգնվել), իսկ միակազմում միայն տրամաբանորեն է ընկալվում։

Միավորյալ նախադասության մեջ ընդհանրականությունը դրսևորվում է նաև բայական բաղադրյալ ստորոգյալի միջոցով։ Հաճախ այս նախադասության առաջին բաղադրիչում եղանակիչ բայ+անորոշ դերբայ կաղապարն արտահայտվում է ամբողջությամբ, իսկ հաջորդ բաղադրիչում (կամ բաղադրիչներում) գործածվում է միայն անորոշ դերբայը. ինչպես՝ «Ուզում եմ լինել քեզ հետ, Այնտեղ՝ քո անհայտ երկրում, Կիզվել քո սիրով հավետ, Այրվել միշտ քո սուրբ հրում...» (ՎՏ, 2, 12)։ Այստեղ ուզում եմ եղանակիչը երկրորդ և երրորդ բաղադրիչներում դնդչվել է, բայց քանի որ շարունակում է «ուղեկցել» նաև այդ բաղադրիչների անորոշ դերբայներին, ուստի ընդհանուր է բոլոր բաղադրիչ նախադասությունների համար։ Սակավադեպ էլ ընդհանուր է լինում բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչը, երբ անորոշ դերբայն արտահայտվում է միայն երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում. ինչպես՝ «Սմբատը չի կարող և չի կամենում ենթարկվել պարզ խաբեության» (ԱՇՔ, 328—399)։

Միավորյալ նախադասության մեջ ընդհանուր կարող են լինել նաև խնդիրներն ու պարագաները, որոնք առանձնապես ավելի են շեշտվում նախադաս շարադասության դեպքում. ինչպես՝ «Երգով է նա միշտ վրոում ու հերկում, Մանում ու ներկում, Երեխա գրկում» (ՊՍ, 4, 39)։ «Վար-

դանը տանեն է դասերին նախապատրաստվում և միաժամանակ բանաստեղծություններ գրում»։

Այսպիսով, միավորյալ նախադասության մեջ ընդհանուր են լինում քերականական (երկկազմ կառույցում) և տրամաբանական (միակազմ կառույցում) ենթական (ենթակաները), ստորոգյալները, մասամբ նաև խնդիր ու պարագա լրացումները։ Դրանց ընդհանուր լինելու հիման վրա էլ կատարվում է բաղադրիչ նախադասությունների միավորումը[3]։

Ըստ գլխավոր անդամների արտահայտության միավորյալ նախադասությունները նույնպես լինում են երկու տեսակ՝ երկկազմ և միակազմ։ Երկկազմ է այն միավորյալ նախադասությունը, որի կազմում առարկան (առարկանները) և նրան (նրանց) վերագրվող հատկանիշներն ունեն իրենց քերականորեն տարբերակված արտահայտությունը՝ հանձինս ենթակայի (ենթակաների) և ստորոգյալների։ Օրինակ՝ «Անդոն վերցրեց գրքերը և գլուխը բարձր բռնած անցավ նստարանների արանքով» (ԱՌ, 1, 238)։ «Մանուկն ու Արգարը վեր թռան տեղներից և գնացին» (ԴՎ, 409)։ Ինչպես տեսնում ենք, երկկազմ միավորյալ նախադասությունները ենթակաների թվային արտահայտությամբ բաժանվում են երկու խմբի՝ ա) մեկ ենթակայով ու բազմակի ստորոգյալներով և բ) բազմակի ենթականերով ու բազմակի ստորոգյալներով նախադասություններ։ Առաջին դեպքում ստորոգային տարբեր հատկանիշները վերագրվում են միևնույն առարկային, իսկ երկրորդ դեպքում՝ միևնույն առարկաներին։ Սրանք կառուցվածքային էական տարբերություններ չունեն և միավորվում են ենթական կամ ենթակաները բոլոր բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր լինելու և այդ բաղադրիչների՝ համասեռ իրակություններ արտահայտելու իմաստային հիմքի վրա։

Միակազմ է կոչվում այն միավորյալ նախադասությունը, որի մեջ առարկան (առարկանները) և նրան (նրանց) վերագրվող հատկանիշները չունեն իրենց բառաքերականական տարբերակված արտահայտությունը։ Նման միավորյալ նախադասությունն ունի միաբևեռ կառուցվածք. նրանում բացակայում է ենթակայի եղրը։ Օրինակ՝ «Հեռանա աչքից, օտարանա սրտից» (Ա, 238)։ «Չլռել, միայն մեղմացնել կրակը» (ՀՔՄՏՋ, 1, 148)։

Միավորյալ նախադասությունները միատարր չեն նաև բաղադրիչ նախադասությունների քանակի տեսակետից։ Նախ՝ երկու խոսք մի-

---

3 *Տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ ևս լինում են ընդհանուր անդամներ։ Այդ գործառությամբ ավելի շատ հանդես են գալիս երկրորդական անդամները, եղանակավորող բառերը, սակավադեպ էլ ստորոգյալը և այլն, որոնք նույն ձևով նպաստում են համադասական նախադասության բաղադրիչների կապակցմանը։*

վոր յալ նախադասության բաղադրիչ հասկացության մասին։ Եթե տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասություններն ունեն ենթակա+ստորոգյալ կառուցվածքը[4], իսկ ամբողջ համադասական կապակցությունը՝ (ենթակա+ստորոգյալ)+(ենթակա+ստորոգյալ) կաղապարը, ապա միավորյալ նախադասության առաջին բաղադրիչը բաղադրվում է ենթակայից ու ստորոգյալից, իսկ մյուսը (կամ մյուսները)՝ միայն ստորոգյալից (կամ ստորոգյալներից)։ Հետևաբար երկկազմ միավորյալ նախադասությունն ունի [ենթակա(ներ)]+(ստորոգյալ)+(ստորոգյալ) կաղապարը, իսկ միակազմ միավորյալ նախադասությունը՝ գերադաս անդամ+գերադաս անդամ կառուցվածքը։ Ինչպես տեսնում ենք, ստորոգյալները և գերադաս անդամները միավորյալ նախադասության մեջ խիստ էական նշանակություն ունեն, բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասությունների դեր են կատարում, ընդ որում՝ որքան ստորոգյալ կամ գերադաս անդամ կա տվյալ նախադասության մեջ, այնքան բաղադրիչ նախադասություններից է կազմված ամբողջ բարդությունը։ Մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը իրավացիորեն գրում է. «Խոսքն (նախադասությունը— Ա. Կ.) իմացվում է բայից, ուստի քանի բայ կա մի ասացվածքի մեջ, այնքան էլ խոսք կա» (3, էջ 362)։

Միավորյալ նախադասությունը լինում է՝ ա) համատոտ, երբ կազմված է միայն գլխավոր անդամներից. ինչպես՝ «Ոմանք թե՛ խաղում էին և թե՛ առևտուր անում» (Ա.Շ.Ք, 169), և բ) ընդարձակ, երբ գլխավոր անդամներից բացի կան նաև լրացումներ. ինչպես՝ «Ինքը բարձրացնում էր Սոնայինն ձիու վրա, հետո ձին նստում և դնում արտերը խուրձի» (ԱՒ, 1, 77)։ Կարող է նաև միավորյալ կառույցի մի բաղադրիչը լինել համատոտ, իսկ մյուսը՝ ընդարձակ. ինչպես՝ «Կարդաց նամակը և տխրեց» (ՆԴ, 137)։

Միավորյալ նախադասություններն ըստ բաղադրիչ նախադասությունների քանակի լինում են երկու տեսակ՝ երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ։ Երկբաղադրիչ միավորյալ նախադասությունը, որ կազմվում է երկու բաղադրիչներից, այս կառույցի պարզագույն տիպն է. ինչպես՝ «Իսկ օրենքը մարդկանց աչքում սրբություն էր և անմահ ճշմարտություն» (ԱՒ, 3, 110)։

Բազմաբաղադրիչ է կոչվում երկուսից ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված միավորյալ նախադասությունը։ Տվյալ դեպքում բաղադրիչ նախադասությունների թիվը տեսականորեն անսահմանափակ է, իսկ գործնականում շատ լինել չի կարող, այլապես միտքը դառնում է տարտամ և լսողական տեսակետից էլ բարեհնչյուն չէ։ Բազմաբա-

4 Հաշվի առնելով լրացումների պարտադիր չլինելը՝ դրանք չենք հիշատակում։

դադրիչ միավորյալ նախադասության պարզագույն տիպը եռաբաղադրիչ կառուցվածքն է. ինչպես՝ «Պառավը նորից նստեց դռան շեմքին, գոգնոցը բաց արեց և սկսեց համրել դրամները» (ՆԴ, 84)։ Նման միավորյալ նախադասության ամենածավալուն դրսևորումը շուրջ 20 բաղադրիչից կազմված կառուցվածքն է։ Ընդ որում, ծավալման հնարավորության տեսակետից արձակ խոսքը զիջում է չափածոյին։ Օրինակ՝ «Ընկնում է ցած (1) ու կատաղում (2), Քարն անտակ կաթսայի մեջ Ինքը իրեն աղում (3), մաղում (4), Իրեն տանջում (5) ու չարչարում (6), Մտնում է ձոր (7), փրփրակալում (8), Խփում քարին (9), ետ է գալիս (10), Գժված գլուխն է ափին տալիս (11), Ուշքի գալով ոստնում է նա (12), Նորից ընկնում քարի վրա (13), Քարը կրծում (14), Բաշը ցնցում (15), Ավազ ու խիճ խառնում իրար (16) Ու թռչում է քարերն ի վար» (17) (ՀՍՔՆ, 162—163)։

Երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունները տարբերվում են նաև այլ հատկանիշներով։ Նախ՝ դրանք տարբերվում են բազմաբաղադրիչ կառույցում տարաբնույթ հարաբերությունների հավասարաչափ դրսևորման հնարավորությամբ, իսկ երկբաղադրիչ կառույցում՝ դրա բացառմամբ։ Համմտ. 1. «Հետադիմական ուժերը պղծում են մի հինավուրց ժողովրդի սրբությունները (1), ավերում նրա կերտած հոյակապ հուշարձանները» (ՍՀ, 18.09.1978, 4)։ 2. «Նա զսպեց իրեն (1), նստեց պարապելու (2), բայց չկարողացավ (3)» (ԱՇՔ, 98)։

Երկրորդ՝ երկբաղադրիչ կառույցի բաղադրիչները կապակցվում են կա՛մ շաղկապով, կա՛մ շարահարությամբ, իսկ բազմաբաղադրիչում կարող են միաժամանակ տեղ գտնել կապակցման երկու միջոցները (տե՛ս վերևի օրինակները)։

Երրորդ՝ միավորական հարաբերությամբ երկբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ առկա է լինում կա՛մ համաժամանակություն, կա՛մ տարժամանակություն, իսկ բազմաբաղադրիչ կառույցում՝ կարող են զուգակցել համաժամանակությունն ու տարժամանակությունը։ Նույն ձևով երկբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ գործառվում է ներհակական հարաբերության դրսևորումներից միայն մեկը, իսկ բազմաբաղադրիչում կարող են միաժամանակ արտահայտվել ներհակության տարբեր դրսևորումներ։ Համմտ. «Սոնան դուռը փակելուց հետո շտապով մոտեցավ մորը և տոպրակը շալակից վար բերեց» (ՆԴ, 89) (տարժամանակություն)։ «Լսեց լինի, լսեց, հետո մի «վայ» արավ, երկու ձեռքով պինդ խփեց գլխին և մնաց այդպես քարացած» (Ն. տ., 290) (համաժամանակություն և տարժամանակություն)։ «Եվ Պետոն ավելի էր մտածում «փորձանքի» համար, բայց ավելի շուտ վախենում էր բժշկից...» (ԱԲ, 1, 51) (հակասում)։ «Նա փորձեց ընդունվել համալսարան, բայց չկարո-

դացավ, իսկ հաջորդ տարին աշխատանքի անցավ գործարանում» (Համասում և հանդիպադրություն)։

Միավորյալ նախադասություններն ըստ բաղադրիչների քանակի սահմանափակության կամ ավելացման հնարավորության լինում են բաց և փակ կառուցվածքի։ Բաց կառուցվածք ունի նոր բաղադրիչի ավելացման հնարավորություն ունեցող միավորյալ նախադասությունը։ Այդպիսիք են հիմնականում միավորական, մասամբ էլ տրոհական հարաբերությամբ միավորյալ կառույցները. ինչպես՝ «Այդ նկատելով՝ Դավիթ իշխանը ձին խթանեց ինքնաբեր և առաջ անցավ» (ՍՋՀԲ, 44)։ «Կովը ծնելուց տան տերը մի բան պիտի տար Պետոն՝ մի հին աղխալուղ, մի աման կաթնով կամ խոստանում էր կալին մի կոտ ցորեն» (ԱԲ, 1, 50)։ Այս երկբաղադրիչ նախադասությունները կարելի է ծավալել՝ շարունակելով նկարագրությունը։ Համմտ. «Այդ նկատելով՝ Դավիթ իշխանը ձին խթանեց ինքնաբեր և առաջ անցավ, մտավ բերդն ու մոտեցավ հավաքված բազմությանը» և այլն։

Փակ կառուցվածք ունի այն միավորյալ նախադասությունը, որին այլ բաղադրիչ ավելացնել հնարավոր չէ։ Դա հիմնականում բնորոշ է ներհակական հարաբերությամբ կառուցվածքին, որի պարտադրյալ տիպը երկբաղադրիչ նախադասությունն է. ինչպես՝ «Հաջորդ գիշերն էլ լայ եղավ Սանդուխտը, բայց գլուխը խոնարհեց Օհանի տղի հետ մի բարձի վրա» (ԱԲ, 1, 44)։ Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունն ունենում է փակ կառուցվածք, երբ նրանում զուգորդում են միավորական ու ներհակական հարաբերությունները, և ամբողջ նախադասության մեջ իշխում է ներհակությունը, որպես բարդության հակադիր եզրերի միջև գործառվող հարաբերություն. ինչպես՝ «Միքայելը մոտեցավ, դրկեց, բայց չհամբուրեց», (ԱՇՔ, 134)։ Այստեղ բայց–ով արտահայտված հակասման ներհակությունը սահմանափակում է նախադասության կառուցվածքը։

Միավորյալ նախադասության բաղադրիչների միջև տրվող արտասանական դադարի տևողությունը տարբեր է՝ պայմանավորված դրանց շարահյուսական հարաբերությամբ և ներքին-մտային կապով։ Առավել կարճատև դադարը լինում է միավորական, մի փոքր ավելի՝ տրոհական և ավելի երկարը՝ ներհակական հարաբերության դեպքում։ Ընդսմին, ներհակական միավորյալ նախադասության բաղադրիչների միջև տրվող արտասանական դադարի տևականությունը մեծապես պայմանավորված է ներհակական շաղկապների բարձր արտասանությամբ. խոսողը (գրողը) ներհակությունը ընդգծելու նպատակ է հետապնդում։ Օրինակներ՝ «Սահակ Պարթևը գործով եկած էր Աշտիշատի վանքը և այստեղ պատահմամբ տեսավ Սամվելին» (ՐՍ, 78)։ «Պատմությունն անելիս պապս միշտ կա՛մ

ջահել օրերին էր երանի տալիս, կա՛մ էլ առանձին շեշտով խոսքը վերջացնում» (Ա.Բ, 1, 209)։ «Ով մինչև հիմա ուրիշ տեղ չի ասել, բայց մտքից էլ չի հանել» (Ն. տ., 118)։ Նշենք, որ միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների միջև արտասանական դադարը առավել տևական է լինում, երբ թվարկմանը զուգակցում են պատճառահետևանքային, մեկնական, մասի ու ամբողջի և այլ ածանցյալ հարաբերություններ. ինչպես՝ «Նա մի տեսակ Մարութխանյան էր և իր եղբայրների ու քույրերի վերաբերմամբ. վրկում ու կողոպտում էր նրանց հոր մահից հետո» (ԱՇՔ, 330)։

Տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության համեմատությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների անկախությունն ավելի նվազ է, որովհետև ենթակայի ընդհանուր լինելը ավելի սերտ է դարձնում բաղադրիչ նախադասությունների կապը։ Իհարկե, տարբեր միավորյալ նախադասությունների մեջ բաղադրիչների սերտությունն ու անկախությունը տարբեր են՝ պայմանավորված դրանց իմաստային կապով, կապակցման եղանակով, ժամանակային հարաբերությամբ, խոսողի (հեղինակի) վերաբերմունքով և այլ հանգամանքներով։ Բաղադրիչ նախադասությունների սերտության աստիճանն ամենից առաջ կախված է դրանց իմաստային կապից. որքան ուժեղ է այդ կապը, այնքան բաղադրիչները ավելի սերտ են։ Սակայն երբեմն, հատկապես չափածո խոսքում, միավորյալ նախադասության բաղադրիչները, հակառակ իրենց իմաստային սերտությանը, արտասանվում են տևական դադարով՝ պայմանավորված չափածոյի տաղաչափական յուրահատկություններով, մասնավորապես բանաստողերի միջև տրվող արտասանական դադարներով. ինչպես՝

«Մեր փլատակված-փլուզվածի տեղ
Նա նորը կերտեց, նորը կառուցեց.
Նավարեկվածի ու սուզվածի տեղ
Անտակ հատակից նորը հարուցեց.
Արգելված երգի զվարթ գույնի տեղ
Խորունկի վրա տրտումը հինեց.
Անմիտ միտումով քանդված բույնի տեղ
Հոգեբանական մեր տունը շինեց...» (ՊՍ, 4, 262)։

Միավորյալ նախադասության բաղադրիչների սերտության աստիճանը կախված նաև նրանց կապակցման եղանակից, գործածվող ժամանակային հարաբերությունից և այլն։ Այսպես՝ շաղկապավոր միավորյալ նախադասության բաղադրիչները ավելի սերտ են, և դադարն էլ համեմատաբար կարճատև է։ Այնուհետև. տարժամանակության դեպ-

քում բաղադրիչ նախադասությունները երբեմն ավելի թույլ են կապվում և տրոհվում են միջակետով, մինչդեռ կատարման ժամանակապահերով մոտ բայ-ստորոգյալների միջև դադարը հիմնականում կարճատև է լինում, և տրոհումն արտահայտվում է ստորակետով։ Օրինակ՝ «Առավոտ շատ վաղ էր վեր կենում (1), մաքրում էր իր անշուք խուցը (2), մի պահ կարդում (3). ապա գնում տաճար ժամհարից առաջ (4), ջահերն ու մոմերը վառում (5) և կանգնում աղոթքի» (6) (Ա՛ի, 3, 417)։ Այստեղ 1—2—3-րդ և 4—5—6-րդ բաղադրիչները իրենց թույլ դադարներով կազմում են արտասանական երկու խումբ, որոնց միջև տրվող դադարը տեսական է, և ամբողջ նախադասությունը հատուցվածորվում է երկու մասի։

Միավորիչ շաղկապներով կապակցվելիս միավորյալ նախադասության բաղադրիչների սերտությունը ոչ միշտ է պահպանվում։ Երբեմն խոսողը (գրողը) նման կառուցվածքը ներկայացնում է բաղադրիչների թույլ սերտությամբ, որը արտահայտվում է արտասանական տևական դադարով, գրավոր խոսքում՝ նաև կետադրությամբ (միջակետով). ինչպես՝ «Նա ուրախ տրամադրության մեջ էր. և այդ հանգամանքը համարում էր մոտալուտ հաջողությունների նշան» (ՄԴՄ, 162)։ «Երկար, անսպատակ թափառելուց հետո ջարդված հասա տուն. և հագուստներս չհանած ընկա անկողնուս վրա» (Ա՛ի, 3, 35)։ Այստեղ և–ից առաջ արտասանական տևական դադարը և միջակետի գործածությունը մասամբ արհեստական են, բխում են ոչ թե լեզվանյութի օբյեկտիվ գնահատումից, այլ հեղինակի նախասիրությունից։ Ինչպես տեսնում ենք, միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության բաղադրիչների սերտության ըմբռնումը կապվում է նաև խոսողի (գրողի) նախասիրության հետ (Համմտ. 17, էջ 562)։ Այսպես՝ «Վարդանը վրդովվեց։ Սակայն չկամեցավ իր միտքը բռնադատել իր առջև նստած մի գիտունի և պատմիչ փիլիսոփայի» (ԴՂվ, 2, 444)։ Այս ինքնուրույն նախադասությունները մեկ ուրիշը կարող էր գործածել որպես միավորյալ նախադասության բաղադրիչներ։ Համմտ. «Վարդանը վրդովվեց, սակայն չկամեցավ իր միտքը բռնադատել...»։

Միավորյալ նախադասության բաղադրիչները կապակցվում են երկու եղանակով՝ բառական և շարահարական։ Ընդ որում, կապակցման բառական եղանակը իրացվում է համադասական շաղկապներով՝ և, ու, նաև, բայց, սակայն, այլ, կամ, կամ թե, և կամ թե, բայց և այնպես, թե չէ, եթե ոչ, և ոչ թե, այլ ոչ թե, ոչ թե... այլ, մինչդեռ, բայց և, սակայն և, և՛... և՛, թե՛...թե՛, կա՛մ...կա՛մ և այլն, որոնք դրսևորում են միակարգ ու միագործառական միավորների հարաբերություններ։ Այդ շաղկապների գործածությունը մեծապես պայմանավորված է միավորյալ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությամբ. միավորիչ շաղ-

կապները հանդես են գալիս միավորական, ներհակականները՝ ներհակական, տրոհականները՝ տրոհական հարաբերությամբ միավորյալ նախադասությունների մեջ։ Իսկ տարբեր հարաբերություններ համատեղող միավորյալ նախադասության մեջ գործածվում են տարբեր իմաստակիր շաղկապներ։ Օրինակներ՝ «Մարտը ամաչեց եղբոր արածից, սակայն շտապեց զսպել իր դժկամությունը» (ԱՇՔ, 83)։ «Կա՛մ հիմար է, կա՛մ խորամանկ ու նենգ» (ՀՔ, 1, 384)։ «Պապս ո՛չ նստում էր դարպասի քարին և ո՛չ էլ պառկում բակի թախտի վրա» (ԱՔ, 1, 208)։ «Մեկ էլ գվերը անկվում էր կտուրի վրա կամ կռանում էր և երդիկից կանչում» (Ն. տ., 210)։

Շարահարական միավորյալ նախադասության բաղադրիչների շարահյուսական կապն արտահայտվում է առանց բառական միջոցի, և նրանց կապակցման հարցում էական դեր են կատարում իմաստը, հնչերանգը, շարադասությունը և այլն։ Շարահարական կապակցումը միավորյալ նախադասության մեջ նույնպես լինում է երկու տեսակ՝ լրիվ և մասնակի։ Այն լրիվ է, երբ բոլոր բաղադրիչները կապվում են շարահարությամբ։ Նման միավորյալ նախադասությունը լինում է թե՛ երկբաղադրիչ և թե՛ բազմարաղադրիչ. ինչպես՝ «Հիվանդին դեռևս են տալիս, ոտնահարում, փափուկ մսից քաշում, թևերից բռնում, ձգում, հրում մի պատից մյուսը, աքացի տալիս, երակներից բռնում, քաշում, մատները կոտրատում...» (ԱՔ, 1, 109)։

Միավորյալ նախադասությունը մասնակի շարահարական է, երբ նրանում գործածվում են կապակցման բառական ու շարահարական հղանակները միաժամանակ։ Նման նախադասությունը, բնականաբար, լինում է բազմաբաղադրիչ։ Ընդամին, շաղկապով կապակցվում են մեծ մասամբ նախավերջին և վերջին, սակավադեպ էլ առաջադաս բաղադրիչները. ինչպես՝ «Հիվանդին պառկեցնում են անկողնում, մի քիչ դադար առնում և հետո նորից սկսում» (ԱՔ, 1, 108)։ «Ուժ արեց և ոտները քաշ տալով մոտեցավ նրան, խոր գլուխ տվեց» (Ն. տ., 35)։

Ակնբախ է, որ շարահյուսական կառույցները հաճախ ազերսվում են իրար հետ, միայն թե տարբեր կառույցների ընդհանրությունը տարբեր բնույթի ու տարբեր աստիճանի է լինում։ Միավորյալ նախադասությունը ազերսվում է մասնավորապես մի կողմից՝ տարբեր ենթականերով բարդ համադասական, մյուս կողմից՝ բարդ ստորադասական նախադասության հետ։ Միավորյալ և տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությունների հարաբերակցության մասին արդեն խոսեցինք։ Միավորյալ ու բարդ ստորադասական նախադասությունների աղերսներից աշխի են հատկապես երկուսը։ Նախ՝ բարդ ստորադասական նախադասությունը ևս հաճախ ունենում է ընդհանուր ենթակա։ Այս դեպքում գե-

բադաս և ստորադաս նախադասությունների գործողությունները կատարողը նույն առարկան է, որը կարող է լինել նաև բազմակի. ինչպես՝ «Նա զգաց, որ ծարավից պապակում էր» (ՀԹԹ, 1, 331)։ «Գոռը և Հայկը գնացին քաղաքի հրապարակը, որպեսզի մասնակցեն տոնական շքերթին»։

Այնուհետև. ընդհանուր ենթակայով շարահարական կառուցվածքի որոշ նախադասությունների ըմբռնման հարցում նկատելի է երկվություն։ Դրանց կառուցվածքը պետք է որոշել հնչերանգի հաշվառումով։ Այսպես՝ «Խերն արել ես, կամրջովն էլ անցկացրու» (Ա, 180)։ «Հավը տանը կենա, կուտն ուտի» (Ն. տ.) նախադասությունները կարելի է համարել և՛ համադասական, և՛ ստորադասական։ Հետևաբար դրանց առաջին բաղադրիչների բովանդակությունները կարող են ըմբռնվել թե՛ որպես առկա իրողություն և թե՛ որպես պայման ու նպատակ։ Առաջին դեպքում այդ նախադասությունները կլինեն միավորյալ, իսկ երկրորդ դեպքում՝ բարդ ստորադասական։ Համմտ. «Խերն արել ես և կամրջովն էլ անցկացրու»։ Երբ Խերն արել ես, կամրջովն էլ անցկացրու» և այլն։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում միավորյալ և այլ կառույցների հարաբերակցության հետ կապված նաև մեկ այլ հարց՝ շարահյուսական համանիշության մասնավոր մի դրսևորումը հանդիսացող դերբայական դարձվածով (այսուհետև՝ ԴԴ) կառույցի և միավորյալ նախադասության միջև գործառվող համանիշությունը, այսինքն՝ ԴԴ–ով կառույց–միավորյալ նախադասություն համանիշային շարքը, որը ցարդ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից, մինչդեռ լեզվական փաստերը հավաստում են դրա գոյությունն արդի հայերենում։ Այս հարցին անդրադառնում ենք ավելի հանգամանորեն՝ հաշվի առնելով դրա քննության կարևորությունը ինչպես բուն միավորյալ նախադասության, այնպես էլ շարահյուսական համանիշության ուսումնասիրության առումով։

Շարահյուսագիտության մեջ ընդունված է ԴԴ–ը և ստորադաս նախադասությունը դիտել որպես համանիշ ձևեր, երբ ԴԴ–ի գործառույթը համապատասխանում է ստորադաս նախադասության բնույթին, և այս հիմքի վրա ԴԴ–ով նախադասությունն ու համապատասխան բարդ ստորադասական կապակցությունը համարվում են համանիշ կառույցներ։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԴԴ–ով նախադասությունները երբեմն էլ աղերսվում են ոչ այնքան ստորադասական կապակցությանը, որքան միավորյալ նախադասությանը՝ վերջինիս հետ կազմելով յուրատիպ համանիշային շարք[5], որը հանդես է բերում քերականական–

---

5 *ԴԴ–ով նման նախադասությունները փոխակերպվելիս ավելի շատ հակվում են դեպի միավորյալ կառույցը։*

կառուցվածքային և իմաստային-ոճական միանգամայն այլ յուրահատկություններ:

ԴԻ-ով կառույց-միավորյալ նախադասություն համանիշային շարքի երկու անդամները կամ եզրերը արտահայտում են առարկայական ու հատկանշային միևնույն հարաբերությունները. տարբերությունը քերականական-կառուցվածքային է, հետևաբար նաև՝ ոճական-գործառական: Այսպես՝ քննենք հետևյալ օրինակը. «Ոունգերից և բերանից ծխի քուլաներ բաց թողնելով՝ գլխով է անում» (ԱՒ, 1, 194)— «Ոունգերից և բերանից ծխի քուլաներ է բաց թողնում ու գլխով է անում»: Այս նախադասություններն ունեն առարկայական նույն բովանդակությունը. միևնույն առարկան (ձին) երկու տարբեր գործողություն է կատարում, այսինքն՝ սուբյեկտին վերագրվում են երկու հատկանիշներ, միայն այն տարբերությամբ, որ երկրորդ օրինակում երկու հատկանիշներն էլ առարկային քերականորեն են վերագրվում և այդ առումով էլ հավասարանշանակ են ու գործառական տեսակետից նույնը՝ ստորոգյալին: Մինչդեռ այլ է թե՛ միմյանց և թե՛ սուբյեկտի հետ այդ նույն հատկանիշների փոխհարաբերությունը առաջին օրինակում: Այստեղ առաջին հատկանիշը (բաց թողնել) առարկային վերագրվում է տրամաբանորեն, իսկ երկրորդը՝ քերականորեն, ուստի դրանք հավասարարժեք չեն. երկրորդ հատկանիշը, արտահայտվելով ստորոգյալով, կազմում է ամբողջ նախադասության առանցքը, իսկ առաջինը դենոտանտային տեսակետից ունի ածանցյալ դեր ու նշանակություն (չնայած ժամանակային տեսակետից նախորդում է հիմնական գործողությանը):

Բերված համանիշային շարքի անդամ-նախադասությունների տարբերությունը նաև ոճական-վերաբերմունքային է, քանի որ «նրանցով արտահայտվում է խոսողի տարբեր վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ, տարբեր նպատակադրվածություն» (85, էջ 35): Երկրորդ օրինակում նկարագրված գործողություններին հավասար նշանակություն է տրվում, իսկ առաջինում խոսողի (հեղինակի) վերաբերմունքն այլ է. այստեղ, ինչպես նշեցինք, գործողություններից մեկը հիմնական է համարվում՝ արտահայտվելով ստորոգյալով, իսկ մյուսը՝ երկրորդական՝ արտահայտվելով դերբայով: Հետևաբար այդ համանիշ կառույցները իրարից տարբերվում են նաև իմացական-իրադրական հատկանիշով: Եվ, վերջապես, այստեղից հետևում է քննության առարկա համանիշային շարքի երկու անդամների նաև մյուս տարբերությունը, այն է՝ «հիմնականում նույնը լինելով իրենց բառական կազմով՝ նրանք... չեն համընկնում քերականական իմաստների ծավալով» (85, էջ 37) ու թվով: Անտարակույս, առաջին նախադասության մեջ կա քերականական մեկ, իսկ երկրորդում՝ երկու ստորոգում: Ստորոգման թվային տարբերությունն էլ

պայմանավորում է այդ նախադասությունների կառուցվածքային տարբերությունը՝ առաջինի պարզ, իսկ երկրորդի բարդ լինելը։ Հետևաբար հիշյալ նախադասությունները համանիշ ձևեր են, որոնք հեշտությամբ փոխակերպվում են մեկը մյուսով, իսկ փոխակերպումը շարահյուսական համանիշության հիմնական առանձնահատկություններից մեկն է։ Ակադ. Գ. Ջահուկյանը գրում է. «Փոխակերպվելու դեպքում պահպանվում են կառուցվածքի միավորները (բառերը) և բաղադրիչների սերման ծառը, կատարվում է քերականական ձևերի փոփոխություն և միավորների տեղափոխություն» (94, էջ 503)։ Իսկ նա ահա թե ինչպես է բնութագրում փոխակերպումն առհասարակ. «Փոխակերպումն ընդհանրապես ոչ այլ ինչ է, եթե ոչ սուբյեկտիվ ընկալման, հաղորդման բնույթի և վերաբերմունքի տարբերության դրսևորում՝ կառուցվածքային տարբերությունների ձևով. կառուցվածքային այդ տարբերությունները դրսևորվում են (փոխակերպման լայն ըմբռնման դեպքում) քերականական բնույթի միավորների հավելման ու փոխարկման, նախադասության անդամների տեղափոխության և դեղչման ձևով» (94, էջ 529)։ Մեր քննած համանիշային շարքի երկու անդամներն ունեն նույն սերման ծառը և բառային կազմը։ Միայն առաջին անդամի մեջ, որպես քերականական միավոր, ավելացվել է ու շաղկապը, որը կարող էինք նաև չհավելել՝ բաղադրիչ նախադասությունների կապակցումը իրացնելով շարահարությամբ։ Շարքի անդամները տարբերվում են միայն քերականական (այս հիմքի վրա նաև կառուցվածքային) ձևավորմամբ՝ հանձին դերբայ (բաց թողնելով)—ստորոգյալ (բաց է թողնում) տարբերության։

Այսպիսով՝ ԴԴ–ով կառույց–միավորյալ նախադասություն համանիշային շարքի անդամները խորքային կառուցվածքում նույնն են, իսկ մակերեսային կառուցվածքում՝ տարբեր։

Արդ՝ այս համանիշային շարքում ո՞րն է միջուկային կաղապարը, և ո՞րը՝ փոխակերպը։ Ընդունված է նախադասություն–ԴԴ շարքում ելակետային համարել նախադասությունը (հմմտ. 94, էջ 535)։ Ուստի մեր քննած շարքում էլ միջուկային է միավորյալ նախադասությունը, որից սերվում է նրա փոխակերպը՝ ԴԴ–ով կառույցը, որը մտքի ավելի բարձր վերացության արդյունք է։ Ավելացնենք նաև, որ միավորյալ նախադասության վերածումը ԴԴ–ով կառույցի կամ հակառակը նախադասության կաղապարի արտաքին փոխակերպման մի դրսևորումն է արդի հայերենում։ Սա նաև գործառական փոխակերպում է։

ԴԴ–ով կառույց–միավորյալ նախադասություն համանիշային շարքը միատարր չէ՝ պայմանավորված շարքի առաջին անդամի կառուցվածքային անմիատարրությամբ։ Քանի որ ԴԴ–ով կառույցը լինում է քի՛

պարզ և թե՛ բարդ, տվյալ դեպքում՝ միավորյալ[6], ուստի քննության առարկա համանիշային շարքն ունի երկու դրսևորում՝ ա) ԴԲ–ով պարզ նախադասություն—միավորյալ կառույց, բ) ԴԲ–ով երկրաղադրիչ միավորյալ նախադասություն—բազմաբաղադրիչ միավորյալ նախադասություն, որոնցից յուրաքանչյուրում համանիշությունը հանդես է բերում դրսևորման տարբեր յուրահատկություններ։ Երկու դեպքում էլ էական նշանակություն ունեն ԴԲ-ի շարադասությունը և համանիշային շարքի անդամները բաղադրող շարահյուսական միավորների՝ ԴԲ-ի ու պարզ նախադասության հիմնական մասի, ԴԲ-ի ու միավորյալ նախադասության մեջ դրա լրացյալ հանդիսացող դերադաս անդամի միջև գործածվող իմաստներն ու նրբիմաստները։

Այժմ անցնենք այս համանիշային շարքի հիշյալ մասնավոր դրսևորումների քննությանը։

Ա. «ԴԲ–ով պարզ նախադասություն—միավորյալ կառույց» համանիշային շարքը։ Շարահյուսական համանիշության այս շարքի գործառումը շատ ավելի հաճախադեպ է։ ԴԲ–ով կառույցի հետ համանիշային շարք կազմող միավորյալ նախադասությունը, որպես կանոն, լինում է երկրաղադրիչ, և համանիշությունը գործառվում է ԴԲ-ի ու միավորյալ նախադասության տվյալ բաղադրիչի (մասնավորապես վերջինիս բայ-ստորոգյալի) միջև։ ԴԲ-ը նախադասության հիմնական մասի նկատմամբ լինում է նախադաս, միջադաս ու ետադաս[7], և ամեն մի շարադասության դեպքում ԴԲ-ով պարզ նախադասության ու միավորյալ կառույցի համանիշությունը ստանում է տարբեր յուրահատկություններ։

Համանիշային այս շարքում պարզ նախադասության նախադաս ԴԲ-ը մեծ մասամբ ունենում է անորոշ դերբայի գործիականով, սակավադեպ էլ հարակատար դերբայով արտահայտված դերադաս անդամ, որը համանիշ է միավորյալի առաջին ստորոգյալին։ Օրինակներ՝ Եվ ամեն ճարգ ու մեծաբանք տալով նրան՝ պատվեց «արքայական բանաստեղծների նախագահ» կոչումով» (ԱԻ, 3, 79)— «Եվ ամեն ճարգ ու մեծաբանք տվեց նրան, պատվեց «արքայական բանաստեղծների նախագահ» կոչումով։ «Ու ճանկարծ մի սարսափելի ձիչ արձակելով՝ ներս ընկավ լեղաճաք» (ՆԴ, 135)— «Ու ճանկարծ մի սարսափելի ձիչ արձակեց և ներս ընկավ լեզաճաք»։ Ինչպես տեսնում ենք, այս զուգահեռ օրինակներում ընդհանուր է նաև ԴԲ-ի ու նրա լրացյալ ստորոգյալի և միավորյալ նախադասության բաղադրիչների միջև գործառվող ժամանակային հարաբերությունը. շար-

6 Իրենց կազմում ԴԲ ունեցող տարբեր ենթականներով բարդ համադասական և բարդ ստորադասական կապակցությունները միավորյալ կառույցի հետ համանիշություն չեն կազմում։

7 Իսկ իր լրացյալի նկատմամբ ԴԲ-ը լինում է միայն նախադաս և ետադաս։

քի առաջին անդամը բաղադրող ԴԴ-ի և ստորոգյալի գործողությունների տարժամանակությունը (ԴԴ-ի գործողությունը նախորդում է ստորոգյալի գործողությանը) պահպանվում է նաև մյուս անդամի՝ միավորյալ կառույցի բաղադրիչների միջև։

Նկատելի է, որ երբ ԴԴ-ի գերադաս անդամն արտահայտվում է հարակատար դերբայով, այդ բառակապակցությունն ու նրա լրացյալ ստորոգյալը և հետևաբար նաև համանիշ միավորյալ նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապվում են համաժամանակությամբ՝ պայմանավորված այդ դերբայի ու դրանով կազմված եղանակային ձևի ցույց տված գործողության ժամանակային մշտատևության իմաստով. ինչպես՝ «Դավիթն էլ ահա սարի գագաթին կանգնած՝ գոռում է վիշապի նման (ՀԲ, 236)→ «Դավիթն էլ ահա սարի գագաթին կանգնած է և գոռում է վիշապի նման»։

Հաճախ էլ այս համանիշային շարքի երկու անդամների անմիջական կազմիչների[8] միջև գործառվող ժամանակային հարաբերությանը դուգակցում են պայմանի, հիմունքի և այլ ածանցյալ հարաբերություններ. ինչպես՝ «Լսելով նրա հուզիչ երգը՝ կամաց-կամաց մոտեցան մեզ»→ «Լսեցին նրա հուզիչ երգը և կամաց-կամաց մոտեցան մեզ»։

Քննված պարզ նախադասությունների մեծ մասում ենթական ղեկչված է, որը, անշուշտ, նպաստում է դրանք միավորյալի փոխակերպվելիս նախադասության անդամների շարադասությունը անփոփոխ մնալուն։ Այլ է վիճակը, երբ ԴԴ-ին հաջորդում է ենթական՝ խորացնելով այդ բառակապակցության ու նախադասության հիմնական մասի երկատումը. ինչպես՝ «Այդ նկատելով՝ Թորգոմը գոռում էր...» (ՍՋՀԲ, 362)։ «Դիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ...» (ՀԲ, 271)։ Այս նախադասությունները միավորյալի վերածվելու դեպքում դերբայը դառնում է ստորոգյալ, իսկ ենթական, որպես ընդհանուր անդամ, տեղափոխվում է առաջին բաղադրիչ, որը բնավ էլ չի խաթարում համանիշությունը, քանի որ, ինչպես վերը տեսանք Գ. Ջահուկյանից կատարված մեջբերման մեջ, փոխակերպման ժամանակ շատ հաճախ «կատարվում է քերականական ձևերի փոփոխություն և միավորների տեղափոխություն». Համմտ. «Թորգոմն այդ նկատել էր և գոռում էր»։ «Նա Դիքորին նկատեց և իսկույն կանգ առավ»։ Սրանք, անշուշտ, բերված կառույցների համանիշային կանոնակարգված ձևերն են։ Իսկ եթե ենթակաների շարադասությունը չփոխենք, կստանանք մի փոքր այլ կառուցվածք։ Համմտ. «Այդ նկատել էր, Թորգոմը գոռում էր»։ «Դիքորին նկատեց, նա իսկույն կանգ

---

8 Այստեղ անմիջական կազմիչ տերմինով պայմանականորեն նշում ենք նաև պարզ նախադասության հիմնական մասը (ստորոգյալը, մյուս լրացումները...) և ԴԴ-ը։

առավ»։ Այստեղ ենթակաների ըմբռնման հարցում նույնիսկ առկա է նաև երկդիմություն, և այս նախադասությունները ըմբռնվում են նաև իբրև տարբեր ենթականերով համադասական կապակցություններ, որպես թե՝ նկատել է մեկը, դառում է մեկ ուրիշը (Թորգոմը) և այլն։ Եվ իմաստի պահպանման համար անհրաժեշտ է դառնում հիշյալ ԴԴ-ով պարզ նախադասությունների փոխակերպման ժամանակ ենթակայի շարադասության փոփոխությունը։

Ակնհայտ է, որ ԴԴ-ով պարզ նախադասություն—միավորյալ կառույց համանիշային շարքի առաջին անդամում կամ եղրում ԴԴ-ը սակավադեպ էլ լինում է միջադաս, ընդ որում՝ միջադաս նախադասության հիմնական մասի նկատմամբ. ինչպես՝ «Այժմ, Շապուհի ձեռքում մի աճառգ գործիք դարձած, գալիս է ծածկելու հայրենի երկիրը հրով ու սրով» (ՐՍ, 54)։ Ահավասիկ սրա համանիշը. «Շապուհի ձեռքում մի անարգ գործիք է դարձել և այժմ գալիս է ծածկելու հայրենի երկիրը հրով ու սրով»։ Առաջին նախադասության մեջ ընդգծված ԴԴ-ը վիճակի (լայն առումով՝ ձևի) պարագա է, բայց ստորոգյալի հետ մասնակի չափով կապված է նաև պատճառահետևանքային հարաբերությամբ։ Այսինքն՝ այստեղ ԴԴ-ի և ստորոգյալի միջև իշխողը ձևային (կամ վիճակաձևային) հարաբերությունն է, իսկ պատճառահետևանքային հարաբերությունը ածանցյալ է։ Մինչդեռ նրա միավորյալ տարբերակում ձևային հարաբերությունը փոխարկվել է թվարկման, իսկ պատճառահետևանքային հարաբերությունն ավելի մեծ կշիռ է ձեռք բերել։

Ինչպես նշեցինք, միավորյալ կառույցի հետ համանիշային շարք կազմող պարզ նախադասության մեջ ԴԴ-ը լինում է նաև ետադաս։ Այս դեպքում ԴԴ-ի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտվում է անորոշ դերբայի գործիական հոլովով և իր լրացումներով ստորոգյալի հետ կապվում է ժամանակային հարաբերությամբ, որին հաճախ դուրս է գալիս պատճառահետևանքային, նպատակային և այլ իմաստային-քերականական հարաբերություններ, որոնք պահպանվում են նաև միավորյալ տարբերակում. ինչպես՝ «Եվ նա լուին հեզությամբ թեքեց իր գլուխը՝ թույլ տալով Միխայելին իրեն համբուրել» (ԱՇՔ, 384)→«Եվ նա լուին հեզությամբ թեքեց իր գլուխը և թույլ տվեց Միխայելին իրեն համբուրել»։ «Շներն իզուր են կաղկանձում՝ թաքնվելով դեզերի մեջ» (ԱՐ, 1, 175)→«Շներն իզուր են կաղկանձում և թաքնվում դեզերի մեջ»։

Բ. «ԴԴ-ով երկբաղադրիչ միավորյալ նախադասություն—բազմաբաղադրիչ միավորյալ նախադասություն» համանիշային շարք։ Այս շարքում, որ նույնպես շատ տարածված է, համանիշությունը փաստորեն գործառվում է առաջին անդամի ԴԴ-ի ու երկրորդ անդամի համապատասխան բաղադրիչ նախադասության միջև։ Եվ ԴԴ-ը ստորոգյալի փո-

խակերպվելու դեպքում երկբաղադրիչ միավորյալ նախադասությունը վերածվում է բազմաբաղադրիչի. ինչպես՝ «Վերջապես մտնելով նախասրահ՝ ծանրորեն նստեց առաջին պատահած աթոռին ու լռեց» (ՄՓՀՔ, 129)→«Վերջապես մտավ նախասրահ, ծանրորեն նստեց առաջին պատահած աթոռին ու լռեց»: Այստեղ ԴԴ-ի համանիշ բաղադրիչ նախադասությունը շարքի երկրորդ եղրում քերականական ու իմաստային կապով հարաբերվում է այն բաղադրիչին, որի կազմի մեջ է առաջին եզրում բառակապակցության ձևով: Այնուհետև. բերված ԴԴ-ով բաղադրիչ նախադասությունն ունի նաև ստորադասական կապակցությամբ համանիշ, այսինքն՝ շարքը հռանդամ է: Համմտ. «Վերջապես երբ մտավ նախասրահ, ծանրորեն նստեց առաջին պատահած աթոռին ու լռեց»:

Երբ ԴԴ-ը շարադասվում է երկբաղադրիչ միավորյալ նախադասության մեջտեղը, էական նշանակություն է ստանում այն, թե նա ո՞ր բաղադրիչի մեջ է մտնում: Սա կարևոր է թե՛ ԴԴ-ի ու այդ բաղադրիչ նախադասության հիմնական մասի իմաստային կապի և թե՛ համանիշ ձևում այդ բաղադրիչի ու «նոր բաղադրիչի» քերականական ու իմաստային կապի բացահայտման տեսակետից: Այսպես, օրինակ, ԴԴ-ը երկբաղադրիչ միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչում լինելու դեպքում իշխում է գործողությունների քվարկման իմաստը, և այս հիմքի վրա էլ՝ ժամանակային հարաբերությունը, որը նմանապես պահպանվում է նաև նրա համանիշ ձևում. ինչպես՝ «Երբեմն դրանով պատեր էին հյուսում և, դրսից ու ներսից ծեփելով, բնակվում էին մեջը» (ՍՋՀՔ, 307)→«Երբեմն դրանով պատեր էին հյուսում և դրսից ու ներսից ծեփում էին ու բնակվում մեջը»:

Հաճախ ԴԴ-ով միավորյալ նախադասությունը ևս լինում է բազմաբաղադրիչ: Ջի բացառվում նաև միևնույն նախադասության մի քանի բաղադրիչների՝ ԴԴ-ով լրացում ստանալը: Այս դեպքում համանիշային շարքը հատկանշվում է հետևյալ յուրահատկությամբ. ԴԴ-ներին համանիշ բաղադրիչ նախադասությունները երկրորդ եղրում համապատասխան քերականական իմաստներով հարաբերվում են այն բաղադրիչներին, որոնց ստորոգյալները առաջին եղրում ԴԴ-ների լրացյալն են հանդիսանում. ինչպես՝ «Հավերը շարժվեցին թառի վրա..., թափահարեցին թևերը և սկսեցին կտուցներով քորել թևերի և կրծքի տակ, հետո վզները երկարացրին դեպի ներքև, նայեցին դես ու դեն, ցնցելով մսեղ, կարմիր կատարները, և հանկարծ ահագին կռկռոցով ցած թռան, օդի մեջ ցանելով իրենց թափվող փետուրները» (ՆԴ, 81)→«Հավերը շարժվեցին թառի վրա..., թափահարեցին թևերը և սկսեցին կտուցներով քորել թևերի և կրծքի տակ, հետո վզները երկարացրին դեպի ներքև, նայեցին դես ու

դեն, ցնցեցին մսեղ, կարմիր կատարեները և հանկարծ ահագին կովոտցով ցած թռան ու օդի մեջ ցանեցին իրենց թափվող փետուրները»:

Սակավագիպ նոտադաս ԴԴ-ը միաժամանակ լրացնում է միավորյալ նախադասության բոլոր բաղադրիչներին (ավելի ճիշտ՝ դրանց բայ-ստորոգյալներին)՝ դառնալով ընդհանուր անդամ կառույցի բոլոր բաղադրիչների համար: Այս դեպքում ԴԴ-ը մեծ մասամբ լինում է հետևանքի պարագա, իսկ հետևանքային հարաբերությունը, թեպետ ոչ նույն սաստկությամբ, պահպանվում է նաև կառույցի համանիշ ձևում. ինչպես՝ «Եվ նրանք իրար հրեք անգամ գրկեցին ու հրեք անգամ համբուրեցին՝ դառնալով հավատարիմ ընկերներ» (Ա հ, 3, 174)→«Եվ նրանք իրար հրեք անգամ գրկեցին և հրեք անգամ համբուրեցին ու դարձան հավատարիմ ընկերներ»: Ինչպես տեսնում ենք, ԴԴ-ով արտահայտված հետևանքի պարագան փոխակերպվում է անվանական ստորոգյալի:

ԴԴ-ը ավելի հաճախ հանդես է գալիս համանիշային շարքի առաջին անդամի վերջին բաղադրիչ նախադասության կազմում՝ հատադաս շարադասությամբ: Բայական այդ բառակապակցությունը այստեղ ևս իր լրացյալի հետ կապվում է ստորադասական ամենատարբեր հարաբերություններով, որոնք ածանցյալ ձևով պահպանվում են նաև համանիշ միավորյալի վերջին ու նախավերջին բաղադրիչների միջև: Ընդ որում, առավել հաճախադեպը պատճառահետևանքային հարաբերության դրսևորումն է. ինչպես՝ «Ցնորագնդ շնորհներով ծագից արշալույսը և ծավալվից դրախտի վրա՝ թաթախելով ամեն չնչին գոյնեն իսկ շողերի և գույների աննման կախարդանքի մեջ» (Ա հ, 3, 188)→«Ցնորագնդ շնորհներով ծագից արշալույսը և ծավալվից դրախտի վրա ու թաթախեց ամեն չնչին գոյնեն իսկ շողերի և գույների աննման կախարդանքի մեջ»:

Այս համանիշ շարքում դրսևորվում է նաև նպատակային հարաբերությունը, որը ԴԴ-ի գերադաս անդամի՝ անորոշ դերբայի տրականով արտահայտվելու դեպքում ընդգծված է լինում, իսկ գործիականով արտահայտվելու դեպքում թուլանում է՝ մոտենալով հետևանքային հարաբերությանը: Համմտ. «Ներք հնձյալ անջատվեցին դիմից անցնող ջոկատից և մտան ձորը՝ նշան աներով» (ԴԴվ, 2, 446)→«Ներք հնձյալ անջատվեցին դիմից անցնող ջոկատից և մտան ձորը ու նշան արեցին»:

Երբեմն էլ ԴԴ-ն իր լրացյալի հետ կապվում է պիշման հարաբերությամբ: Այս դեպքում նրա գերադաս անդամը, որպես կանոն, լինում է ժխտական բայաձև, որը համանիշ կառույցում փոխակերպվում է ժխտական ստորոգյալի, իսկ ստացված նոր բաղադրիչ նախադասությունն իրեն նախորդող բաղադրիչի հետ կապակցվում է հակասման շաղկապով. ինչպես՝ «Քյաղիմ-բեգը հաճախ մոտենում էր և համբուրում երգչուհու «էֆերային ձեռնիկը»՝ տակավին չնամարձակվելով ավելի վեր բարձ-

rաճալ» (ԱՇՔ, 84)→«Քյաղիմ-բեգը հաճախ մոտենում էր և համբուրում երգչուհու «եվրոպական ձեռնիկը», սակայն տակավին չէր ճամարձակվում ավելի վեր բարձրանալ»: Այս շարքի երկրորդ եղրում սակայն-ի փոխարեն և (ու) միավորիչը գործածվելու դեպքում ըիչման իմաստը բուլանում է: Համմտ. «Դավիթը շիշը տեղը դրեց, պահարանի դուռը շրխկոցով փակեց և գնաց նորից պառկեց թախտի վրա, չմոռանալով ճայճոյանքի մի ճոր փունջ ճրամցնել կնոջը» (ՆԴ, 57)→«Դավիթը շիշը տեղը դրեց, պահարանի դուռը շրխկոցով փակեց և գնաց նորից պառկեց թախտի վրա ու չմոռացավ ճայճոյանքի մի ճոր փունջ ճրամցնել կնոջը»:

Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ քննության առարկա համանիշային շարքի առաջին անդամի կազմում, ԴԲ-ի ու նրա լրացյալի կամ լրացյալների (երբ ԴԲ-ը հավասարապես լրացնում է երկու բաղադրիչ նախադասությունների ստորոգյալներին) միջև, գործառվող իմաստային ու քերականական կապը ոչ միշտ է նույնությամբ պահպանվում նրա համանիշ կառուցվածքում. օրինակ՝ «Դուք ներբողում եք բռունցքն իշխողի, որբի և այրիի դատն եք պաշտպանում՝ ծեծելով ձեր fար կուրծքը արյունոտ ձեռքերով» (ԱԻ, 3, 157)→«Դուք ներբողում եք բռունցքն իշխողի, որբի և այրիի դատն եք պաշտպանում, ծեծում եք ձեր fար կուրծքը արյունոտ ձեռքերով»: Այստեղ ընդգծված ԴԲ-ը նախադասության ամբողջ նախորդ մասի (երկու բաղադրիչ նախադասությունների) հետ կապված է հետևանքային հարաբերությամբ, որը շարքի երկրորդ եղրում փոխակերպվել է պարզ թվարկման:

Սակավադեպ էլ համանիշային շարքի առաջին եղրում, նախադասության հիմնական մասի ու ԴԲ-ի միջև, գործառվող քերականական կապի ըմբռնման հարցում նկատվում է երկվություն, և այդ եղրը ունենում է համանիշային երկու կամ ավելի տարբերակ, այսինքն՝ շարքը լինում է բազմանդամ: Այսպես, օրինակ, «Նա լռեց, հառաչեց, ճակատը տրորելով» (ԱՇՔ, 186) նախադասության մեջ ընդգծված ԴԲ-ը կարող է ըմբռնվել որպես՝ ա) ենթադրվող ստորոգյալ (...ճակատը տրորեց), բ) ձևի պարագա (...ճակատը տրորելով հառաչեց): Ուստի այդ կառույցը ստանում է հետևյալ համանիշ ձևերը. «Նա լռեց, հառաչեց, ճակատը տրորեց»: «Նա լռեց, ճակատը տրորելով հառաչեց»:

Եվ, վերջապես, մի յուրահատկության մասին ևս: Երբեմն միավորյալ նախադասության տվյալ բաղադրիչի կազմում լինում են երկու կամ ավելի ԴԲ-ներ, որոնց շարադասությունը լինում է՝ ա) միատարր և բ) անմիատարր: Շարադասության այս տարբերությունն էլ պայմանավորում է ԴԲ-ների ու միավորյալ նախադասության հիմնական մասի իմաստային ու քերականական կապը և համանիշային շարքի մյուս անդամի կառուցվածքային յուրահատկությունը:

Նախ՝ միատարր շարադասությամբ բաղմակի ԴԴ-ներով նախադասության մասին։ Ավելի հաճախ համատեղ ԴԴ-ները միավորյալ կառույցում արտահայտվում են ետադաս շարադասությամբ։ Այս դեպքում ԴԴ-ների գերադաս անդամներն ունենում են բաղադրյալ կազմություն։ Այնուհետև. այդ բառակապակցությունների՝ անորոշ դերբայի դործիականով արտահայտված գերադաս անդամը, գործածվելով միայն 1-ին ԴԴ-ի մեջ, ընդհանուր է լինում երկու ԴԴ-ների համար։ Դերբայի այս ընդհանուր լինելը պահպանվում է նաև համանիշ կառույցում, ուր նա արդեն հանդես է գալիս որպես բաղմակի բայական բաղադրյալ ստորոգյալների ընդհանուր եղանակիչ, որը, իբրև կառուցվածքային յուրահատկություն, բնորոշ է միայն միավորյալ նախադասությանը։ Օրինակ՝ «Նա շորորում էր բազմաթիվ սենյակներում, հրամաններ տալիս աղախիններին, կատակներ անում՝ ջանալով բոլորին հաճելի լինել և զարմացնել իր սրամտություններով» (ՍԽՄՍ, 3, 145)→«Նա շորորում էր բազմաթիվ սենյակներում, հրամաններ տալիս աղախիններին, կատակներ անում, ջանում էր բոլորին հաճելի լինել և զարմացնել իր սրամտություններով»։ Ինչպես տեսնում ենք, շարքի առաջին եղրում, երրորդ բաղադրիչ նախադասության ստորոգյալի (կատակներ (էր) անում) ու ԴԴ-ների միջև առկա նպատակի հարաբերությունը, որ լրացական հարաբերություն է, համանիշ ձևում փոխակերպվել է պարզ թվարկման՝ շեշտելով թվարկվող միավորների համատեղությունն ու համազորությունը։

Երբեմն էլ միավորյալ նախադասության միևնույն բաղադրիչի կազմում ԴԴ-ները հանդիպում են անմիատարր շարադասությամբ. մեկը լինում է նախադաս, մյուսը՝ ետադաս։ Ի տարբերություն միատարր շարադասության, այս դեպքում ԴԴ-ները մեծ մասամբ լինում են անհամասեռ՝ պայմանավորված միևնույն ստորոգյալի հետ լրացական տարբեր հարաբերություններով կապվելու հանգամանքով։ Այս պարագայում բնորոշը, անշուշտ, ԴԴ-ների՝ միևնույն բաղադրիչ նախադասության մեջ հանդես գալն է։ Սակայն երբեմն դրանք հանդես են բերում շարադասական այլ յուրահատկություն. միավորյալ նախադասության առաջին ստորոգյալին լրացնող ԴԴ-ներից մեկը գործածվում է լրացյալից առաջ, իսկ մյուսը՝ երկրորդ բաղադրիչում, վերջինիս ստորոգյալից հետո՝ քերականական արտահայտության պլանում հեռանալով իր բուն լրացյալից։ Օրինակ՝ «Սմբատին տեսնելով, նա ոտքի կանգնեց ու բարևեց, երեսը հաճելով իր հասակի բարձրությունը ու մեջքի կորությունը» (ԱՇՔ, 63)։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, 2-րդ ԴԴ-ը ևս կապվում է առաջին բաղադրիչի ստորոգյալի հետ, և այդ կապը ոչ այնքան քերականական է, որքան տրամաբանական։ Իրոք, Սմբատն իր հասակի բարձրությունը և

մեջքի կորությունը կարող է ցուցադրել ոչ թե բարևելով, այլ միայն ոտքի կանգնելով։

Բերված նախադասության մեջ ԴՈ-ները անհամասեռ են միևնույն ոտքի կանգնեց ստորոգյալին տարբեր հարաբերությամբ լրացնելու համար. առաջին ԴՈ-ը գործողության կատարման հիմունքն է արտահայտում և հիմունքի պարագա է[9], իսկ հաջորդը լրացյալի հետ կապվում է հետևանքային հարաբերությամբ և հետևանքի պարագա է։ Ահավասիկ այդ նախադասության համանիշ ձևը. «Նա Սմբատին տեսավ, ոտքի կանգնեց ու բարևեց և նրան հանձեց իր հասակի բարձրությունն ու մեջքի կորությունը»։ Այստեղ հիշյալ հարաբերությունները նույնությամբ պահպանվում են։

Այսպիսով՝ ԴՈ-ով կառույց—միավորյալ նախադասություն համանիշային շարքն ունի կառուցվածքային, իմաստային ու ոճական մի շարք առանձնահատկություններ։

Միավորյալ նախադասությունը ոչ միշտ է հանդես գալիս ինքնուրույն։ Այն իր դրսևորումներով (միակազմ, երկկազմ) արտահայտվում է նաև շարահյուսական այլ կառույցների կազմում։ Ավելի հաճախ դառնում է տարբեր ենթականերով բարդ համադասական կապակցության բաղադրիչ։ Այս դեպքում ամբողջ նախադասությունը բաղադրվում է երկու կամ ավելի անմիջական կազմիչներից՝ միավորյալ նախադասությունից և մեկ այլ (պարզ կամ բարդ) նախադասությունից, որոնք կապվում են ամենատարբեր հարաբերություններով. ինչպես՝ «Հիվանդը աղմկում էր, օրհասական ջանքեր էր անում, բայց հինգ-վեց ժժդահա տղամարդ վրան նստած չէին թողնում» (ՀՔ, 300)։ «Նա (երկիրն) է որոշում ազգերի ճակատագիրը. առանց նրա բնավորությունը նասկանալու ոչ կարող ես անցյալդ ըմբռնել, ոչ ներկադ նասկանալ, ոչ ապագադ տեսրհնել» (Ն. տ., 403), Իսկ երբեմն էլ, հատկապես չափածո խոսքում, համադասական կապակցության մեջ միավորյալ նախադասության բաղադրիչները շարադասվում են միջարկված ձևով՝ ընդհատվելով այլ բաղադրիչով կամ բաղադրիչներով. ինչպես՝ «Ապրում ենք, վկա են լեռները, խաբվում ենք, վկա են լեռները» (ՀՍՔ, 148)։

Բազմաբաղադրիչ բարդ համադասական կապակցությունը հաճախ բաղադրվում է մեկից ավելի միավորյալ նախադասություններից կամ միավորյալ նախադասություններից և մեկ կամ մեկից ավելի պարզ նախադասություններից։ Այս դեպքում չի բացառվում նաև բարդության ստորին օղակներում ստորադասական հարաբերության դրսևորումը. ինչ-

---

9 *Այստեղ մասամբ առկա է նաև ժամանակային հարաբերություն (համմտ. «Սմբատին տեսնելուն պես նա...» կամ՝ «երբ Սմբատին տեսավ, նա...»)։*

պես՝ «Հիմա սարերը ճնած դարեր են, Պատմություններ են անհերթելի, Բոլոր բարերը շիրմաքարեր են Եվ բեկորներ են նիհ փառերի» (ՀՍՔ, 19)։ «Ասում է ու կացինը պարսում, շարսում դեպի բաղերը, որ մինը սպանի. բաղերը ճղճղալով ցրվում են, փախչում, որը եղեգնուտն է մրտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում» (ՀՔ, 394)։

Բարդ համադասական նախադասության անմիջական կազմիչներից մեկը կարող է լինել միավորյալ, իսկ մյուսը՝ ստորադասական նախադասություն. ինչպես՝ «Նա գնում, պառկում է նանգած մի խարույկի մոտ, *բայց հեռվից եկող աղջկական ճիչերը թույլ չեն տալիս, որ աչք փակի» (ՍԱՃՀ, 84)։*

Սանոթություն։ *Համախմբ միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկն ունենում է ստորադաս նախադասություն։ Չի բացառվում նաև նրա բոլոր բաղադրիչների՝ ստորադաս նախադասություն ստանալը։ Երկու դեպքում էլ ամբողջ նախադասությունը պետք է դիտել համադասական (տվյալ դեպքում՝ միավորյալ)՝ հաշվի առնելով նրա անմիջական կազմիչների միջև գործածվող հարաբերությունը (համմտ. 17, էջ 373)։ Օրինակ՝* «Բոլորը նրան թշնամացել են և դիմամբ բաղցած են քողնում, որ սովից մեռնի» (ԱՇՔ, 202)։ «Նախորդ վարժությունից արտագրել սեռական հոլովով գործածված գոյականները, *որոնք ցույց են տալիս պատկանելություն, և կազմել նախադասություններ, որոնցում այդ հոլովաձևերը գործածված լինեն հատկացուցչի պաշտոնով» (ԺՀԼ, 3, 464)։*

Միավորյալ նախադասությունը արտահայտում է նաև բարդ ստորադասական նախադասության կազմում՝ դառնալով գլխավոր կամ երկրորդական նախադասություն (երկու դեպքում էլ բաղադրյալ կազմությամբ)։ Ընդամին, գլխավոր նախադասություն է դառնում, երբ նրա բոլոր բաղադրիչներն ունենում են ընդհանուր ստորադաս նախադասություն. ինչպես՝ «Ում կամենում էր, տուն էր բերում, պատվում, նամփա դնում» *(ՀՔ, 287)։*

Միավորյալ նախադասությունը ստորադասական կապակցության մեջ ավելի հաճախ հանդես է գալիս երկրորդական նախադասության գործառույթով՝ կազմելով համաստորադասություն. ինչպես՝ «Ջմռանամ, ոչ Սաթակա վարժապետին սիրում էին մեր գյուղում և մինչև օրս էլ նիշում են» *(ՀՔ, 398)։ Երբեմն էլ այն արտահայտվում է բարդության ստորին օղակում. լրացնում է երկրորդական նախադասությանը՝ կազմելով ենթաստորադասություն ու համաստորադասություն. օրինակ՝* «Վախենում էի միջամտել, որովհետև դիժ կհկելն այդպիսի դեպքում այն

աստիճան զայրացած էր լինում, որ ոչ միայն չէր լսի ինձ, այլև կարող էր վիրավորանք հասցնել միջամտությանս համար» (ՆԴ, 183)։

Սակավադեպ բարդ ստորադասական կապակցության մեջ միավորյալ է լինում թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասությունը. ինչպես՝ «Երբ պահակները հեռանում էին միջանցիկից կամ նստած տեղերում մրափում, բանտարկյալներս մոտենում էինք դռներին, անցքերից իրար ձայն տալիս և սկսում էինք խոսել» *(ԱԻ, 3, 315)։*

Միավորյալ նախադասությունը նմանապես հանդես է գալիս նաև մեջբերվող նախադասության կապակցության մեջ՝ դառնալով թե՛ ուղղակի և թե՛ հեղինակի խոսք. օրինակ՝ «— Ձվերը ձերը չեն,— կտրուկ Ասում է Անդոն և գլուխը բարձր պահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր թաղը» *(ԱՔ, 1, 237)։* «— Եվ բռնվածին կխոշտանգեն ու կսպանեն շարաչար,— *ավարտեց քանդակագործը» (ՍՉՀՔ, 320)։ Երբեմն էլ միավորյալ է լինում թե՛ հեղինակի խոսքը և թե՛ ուղղակի խոսքը. ինչպես՝* «— Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի...,— ասում է անծանոթն ու չհանում ապշած մարդ ու կնկա աչքերից...» *(ՀՔ, 363)։*

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԵՐԿԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Երկկազմ միավորյալ նախադասությունն ունի երկբևեռ կառուցվածք. նրանում առարկան (առարկաները) և ստորոգվող հատկանիշներն արտահայտվում են բառաքերականական տարբերակվածությամբ. ինչպես՝ «Հնձած արտում կաթավները հավաքում էին ընկած հատիկները, կցահարում թափված հասկերը» (ԱԲ, 1, 77)։ «Առաջներում քաղաքի տափարակը, մեր թաղերը, ամբողջ ձորը խիտ անտառ են եղել, մթին խոռոչներ ու թավուտներ» (Ն. տ., 241)։ Այսպիսով, բազմակի ստորոգյալներով միավորված այն համադասական նախադասությունը, որի մեջ տարբեր հատկանիշներ վերագրվում են միևնույն առարկային կամ առարկաներին, կոչվում է երկկազմ միավորյալ նախադասություն։

Երկկազմ միավորյալ նախադասության երկու եզրերի փաստացի արտահայտությունը պարտադիր չէ։ Հաճախ ոճական նկատառումով զեղչվում է ենթական (ենթակաները) կամ ստորոգյալներից մեկը. ինչպես՝ «Ջգնացի, բայց գիրքն էլ բաց չարի» (ԱԲ, 1, 155)։ «Քո քարավաններն են օրորում անքուն իմ սիրտը բեկված և իմ հին վերքին Բերում են հանգիստ ու հոգուս՝ խնդում» (ՎՏ, 2, 100)։ Սրանք թերի, բայց երկկազմ միավորյալ նախադասություններ են։

Ենթական և ստորոգյալը նախադասության գոյությունը պայմանավորող անդամներն են, որոնք էական դեր են խաղում նաև միավորյալ նախադասության մեջ։ Այստեղ մեր նպատակն է քննել ենթակայի ու ստորոգյալի (ստորոգյալների) մասնավորապես այն յուրահատկությունները, որոնք երևան են գալիս հիմնականում միավորյալ նախադասության մեջ՝ պայմանավորված վերջինիս կառուցվածքային, իմաստային ու ոճական առանձնահատկություններով[1]։ *Հարկ է նշել այդ յուրահատկություններից մի քանիսը։ Նախ՝ ենթական ընդհանուր անդամի գոր-*

---

1 *Ենթակայի ու ստորոգյալի քննությունը տե՛ս 3, էջ 366—371. 27, էջ 29—181. 12, էջ 275—281. 17, էջ 139—176։*

ծառույթով հանդես է գալիս միայն միավորյալ նախադասության մեջ։ Երկրորդ՝ ստորոգյալները երկկազմ, իսկ բայական և անվանական գերադաս անդամները միակազմ միավորյալ նախադասության մեջ (միայնակ կամ լրացումներով) ստանում են բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների գործառույթ։ Երրորդ՝ ստորոգյալների՝ բաղադրիչ նախադասությունների գործառույթ ստանալը մասամբ խախտում է ենթակայի ու ստորոգյալի ընդունված հավասարարժեքությունը. ստորոգյալներն այստեղ ավելի մեծ դեր ու կշիռ են ձեռք բերում։

Մենք ենթական (ենթակաները) և ստորոգյալները ստորև քննում ենք հենց այս (և ոչ միայն այս) առանձնահատկությունների հաշվառումով։

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՆ

Միավորյալ նախադասության ենթական հետաքրքրություն է ներկայացնում ամենից առաջ ընդհանուր անդամ լինելու տեսակետից։ Այս նախադասության թե՛ միակի և թե՛ բազմակի ենթակաները, որպես կանոն, գործածվում են բաղադրիչ նախադասություններից միայն մեկում, բայց հավասարապես վերաբերում են նաև մյուս բաղադրիչին կամ բաղադրիչներին։ Բազմակի ենթակաները լինում են երկանդամ, բազմանդամ ու խմբավորումներով, կապակցվում են համադասական շաղկապներով ու շարահարությամբ և կամ էլ շաղկապով ու շարահարությամբ միաժամանակ։ Այդ ենթակաների կապն ավելի է ուժեղանում, երբ դրանք կապվում են մի կողմից... մյուս կողմից ղուգադրությամբ. ինչպես՝ «Իմ ծառն ու ծիլերն ու ծաղիկները Կյանք էին առնում ու պըտղավորվում ու մեռնում անվերջ (Ս. Կապ.)։ «Մի կողմից վիրավորված պատվի զգացումը և հասարակական ծաղրն ու արհամարհանքը, մյուս կողմից խղճի խայթը նրա հոգին ճնշում էին, սիրտը մորմոքում» (ԱՇՔ, 200)։

Թվարկվող բազմակի ենթակաները հաճախ ամփոփվում են իրենց հաջորդող բոլորը, ամենը, ամենքը, այս ամենը, այս բոլորը դերանուններով ու դերանվանական կապակցություններով, որոնք տվյալ դեպքում ունեն ընդհանրացնող նշանակություն (համմտ. 27, էջ 403)։ Ենթակաների և նշված բառերի ու կապակցությունների հարաբերությունը մասի ու ամբողջի կամ մասնավորի ու ընդհանուրի հարաբերություն է. ինչպես՝ «Ծառաները, սպասավորները, նաժիշտները ու աղախինները,— ամենքը տոնական հագուստներով զարդարված, ձեռքները և մազերը կարմիր

ներկած, վազվզում էին այս ու այն կողմ և օրվա պատշաճին վայել պատրաստություններ էին տեսնում» (ՐՍ, 550)։ Այստեղ ընդգծված միավորները մոտենում են բացահայտիչ-բացահայտյալի կապակցությանը։ Իսկ երբ տրոհումն արտահայտվում է բուքով, ընդհանրացնող բառերն ամբողջությամբ դառնում են բացահայտիչ. ինչպես՝ «Հակոբ Գասպարյանը, Աբդուլլա Մամեդովը, Ալեքսանդր Գավրիլովիչը՝ բոլորը, աշխատել էին ուժերի գերագույն լարումով, առաջադրանքը կատարել էին գերազանց»[2] (ՍՀ, 1.3.1983 թ., 1)։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միավորյալ նախադասության ենթակայի (ենթակաների) շարադասությունը։ Ենթական (ենթակաները) արտահայտվում է թե՛ առաջին և թե՛ երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչ նախադասության մեջ։ Իհարկե, առավել հաճախադեպը առաջադաս բաղադրիչում գործածությունն է. ինչպես՝ «Սմբատը, դառնությամբ գլուխը շարժելով, նայեց նրան և դուրս գնաց» (ԱՇՔ, 261)։ Այստեղ առաջին բաղադրիչն ունի սովորական շարադասություն։ Իսկ երբ խոսողը (գրողը) ցանկանում է առանձնապես շեշտել ստորոգվող հատկանիշը, այդ բաղադրիչն արտահայտվում է շրջուն շարադասությամբ. ինչպես՝ «Անհանգիստ է հոգիս ու տրտում» (ՎՏ, 2, 170)։

Սովորական շարադասությամբ չափածո միավորյալ նախադասության մեջ ենթական երբեմն հանդես է գալիս ստորոգյալների հետ թույլ կապակցվածությամբ և դրանցից առանձնանում է արտասանական տևական դադարով, որը գրավոր խոսքում արտահայտվում է կախման կետերով. ինչպես՝

«Երազանքներս...
Մաքրում են բոլոր — Եվ քարափները
Բարաքոսները — Ոսկեզօծում են» (ՀՍՄՔ, 184)։

Որոշակիորեն տարբերվում է նմանատիպ այն կառույցը, ուր գոյականով արտահայտված ենթակային հաջորդում է դերանուն ենթական։ Այս դեպքում գոյականն արդեն ստանում է անվանողական արժեք ու անվանական անդեմ միակազմ նախադասության գործառություն և արտասանական ավելի տևական դադարով է բաժանվում, իսկ դերանունը դառնում է նախադասության ենթական[3]. ինչպես՝

«Հոգսերս... երանք
Պնդաճակատ են — Արթնանում են միշտ
Ու երես առած, — Ինձանից առաջ

---

2 Օրինակը բերում ենք մասնակի փոփոխությամբ։

3 Գոյականն ու դերանունը կարելի է նաև միասին դիտել բաղադրյալ ենթակա։

Խոսք ու խրատիս Ու միշտ ինձանից
Գլուխ չեն դնում, Առաջ են քնում» (ՀՍՍՌ, 144)։

Չափածո միավորյալ նախադասության զեղչված ենթական երբեմն գործածված է լինում որպես վերնագիր։ Այսպիսին է մարդիկ բառը հետևյալ օրինակում.

Մարդիկ
Գնում են-գալիս,
Առնում են-տալիս,
Անում են, դնում,
Թողնում են, գնում (ՀՍՍՌ, 137)։

Միավորյալ նախադասության ենթական կարող է գործածվել նաև երկրորդ բաղադրիչում, իսկ բազմաբաղադրիչ կառուցվածքում՝ նաև հաջորդ բաղադրիչում։ Բոլոր դեպքերում ենթակայի ետադաս շարադասությունը պայմանավորված է լեզվաոճական նկատառումներով։ Ենթական ետադաս է շարադասվում, երբ կարևորությունը տրվում է ստորոգվող հատկանիշներին. ինչպես՝ «Մի անկյունում ծալապատիկ թախտի վրա նստած երգում ու նվագում էին սազանդարները» (ԱՇՔ, 7)։ Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ ենթական վերջին բաղադրիչում է գործածվում նաև այն դեպքում, երբ նախադաս բաղադրիչներն արտահայտում են օբյեկտիվ իրողություններ, իսկ վերջին բաղադրիչը՝ այդ ամենից բխող հարցում. ինչպես՝ «Մեծ ու փոքր ստերով համեմված իրենց նամակներով, պլպլան, էժանագին ծանրոցներով որմբակոծում են, թունավորում, տրամադրում, ի՞նչ են ուզում եռաճ» (ՎՊՀԲԱ, 125)։

Չափածո միավորյալ նախադասության ենթակայի՝ ետադաս բաղադրիչում գործածվելը երբեմն էլ պայմանավորված է լինում ստորոգյալի կրկնությամբ. ինչպես՝ «Դեռ արցունքներ ունի, դեռ արցունքներ ունի ծիածանի մեջ պահած, Հողըդ-ամեն հողում տարագիրներ ունի» (ՀՍՔԵ, 141)։ Ընդհանրապես չափածո ձևով արտահայտված նախադասության ենթակայի կամ ենթակաների վերջադաս շարադասությունը որոշ հանդիսավորություն է հաղորդում խոսքին. ինչպես՝ «Առատ են արել սերն ու բարիքը, Որ անվիշտ ապրի իրենց բալիկը, Ինձ սիրով սնել Ու կյանք են տվել Իմ հայրենիքը, Անուշ բալիկը» (Մ. Կորյուն)։

Միավորյալ նախադասության ենթակայի յուրահատկություններից մեկն էլ կրկնությունն է բաղադրիչ նախադասություններում։ Ենթական կրկնվում է հիմնականում լեզվաոճական նկատառումներով՝ գործողի դեմքը ընդգծելու, բաղադրիչ նախադասությունների կապը ուժեղացնե-

յու, խոսքին արտահայտչականություն ու հանդիսավորություն հաղորդելու և այլ նպատակներով՝ չփոխելով նախադասության կառուցվածքը (միավորյալ լինելը)։

Ենթական կրկնվում է մեծ մասամբ շարահարական միավորյալ նախադասության մեջ, որովհետև անշաղկապ նախադասության բաղադրիչների կապը համեմատաբար թույլ է լինում, և ենթական իր կրկնությամբ մասամբ լրացնում է այդ թերին՝ ուժեղացնելով բաղադրիչ նախադասությունների մտային ու քերականական կապը։ Բայց, մյուս կողմից, ենթակայի կրկնությունը նախադասությունը ենթարկում է պարբերությային անդամահատման. ինչպես՝ «Սամվելը ամբողջ մարմնով դողաց. նա համարյա չլսեց վերջին խոսքերը» (ՐՍ, 81)։ Այս նախադասությունը շաղկապային կապակցության փոխակերպվելու դեպքում արտասանական դադարը նվազում է, և վերանում է ենթակայի կրկնության անհրաժեշտությունը։ Համմտ. «Սամվելը ամբողջ մարմնով դողաց և համարյա չլսեց վերջին խոսքերը»։

Ենթակայի կրկնությունը պայմանավորված է լինում նաև միավորյալ նախադասության բաղադրիչները կապող շարահյուսական հարաբերությամբ. ինչպես՝ «Վախը մեծ զգացում է. նա երբեմն անդամալույծ է անում մարդուն, բայց հաճախ մղում է հնարագիտության ու խիզախության» (ՍՀՀՐ, 55)։ «Անդոկ իշխանը արցունք չէր սիրում. նա իսկույն մոտեցավ դստեր, շոյեց նրա ուսերը և խնդրեց, որ դադարեցնի լացը» (Ն. տ., 257)։ Ենթակայի կրկնությունը առաջին նախադասության մեջ պայմանավորված է մեկնական (նաև մասի ու ամբողջի), երկրորդում՝ պատճառահետևանքային հարաբերությամբ։ Դրանցում ևս-ի գործածությամբ այդ հարաբերություններն ավելի են ընդգծվում։

Չափածո միավորյալ նախադասության մեջ ենթակայի կրկնության ոճական նշանակությունն ավելի մեծ է։ Այստեղ այն ավելի հաճախ կրկնվում է խոսքին արտահայտչականություն հաղորդելու նպատակով՝ ստեղծելով նույնասկիզբ։ Նման միավորյալ նախադասությունը լինում է նաև անհանգույց. ինչպես՝

«Դու կանգնած ես անխոցելի ու անխոս,
Դու չես գնում—օ՜, իմ սիրտը մի՛ խոցիր...» (ՎՏ, 2, 184)։
«Դու մի բանակ, դու մի զորք,
Դու մի տոհմի շյուղ,
Դու հրթիռի հրացոլք
Ու երդիկի ծուխ» (ՀՍՍՐ, 150)։

Այս վերջին նախադասությունը անհանգույց է։ Հաճախ էլ այդպիսին է լինում ենթակայի հարակրկնությամբ կազմված միավորյալ նախադասության բաղադրիչներից միայն մեկը (կամ մի մասը). ինչպես՝

«Դու՝
Երկու տա՞ռ,
Դու՝
Հասարա՞կ մի դերանուն,
Նվ ընդամենն այդ քո երկո՞ւ հատիկ տառով
Այս բովանդակ աշխարհին ես ինձ տեր անում» (ՊՍ, 1, 271)։

Ինչպես տեսնում ենք, միավորյալ նախադասության ենթական կրկրկրնվում է նույնությամբ կամ բառական այլ արտահայտությամբ։ Իսկ երբեմն էլ միևնույն կառույցում զուգակցում են կրկնության այդ երկու ձևերը։ Ըստ այդմ էլ ենթակայի կրկնությամբ կազմված միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝ ա) նույն բառական արտահայտությամբ կրկնվող ենթակայով նախադասություններ, բ) տարբեր բառական արտահայտությամբ կրկնվող ենթակայով նախադասություններ և գ) ենթակայի կրկնության երկու ձևերը համատեղող նախադասություններ:

1. Հաճախ միավորյալ նախադասության ենթական կրկնվում է նույնությամբ, բառական նույն արտահայտությամբ։ Նման կրկնությունը կատարվում է հիմնականում բաղադրիչ նախադասությունների կապը ուժեղացնելու, գործող առարկան ընդգծելու նպատակով։ Այդ կրկնությունը ավելի բնորոշ է դերանվամբ և գոյականով արտահայտված ենթակային։ Բոլոր դեպքերում կրկնվող ենթական դառնում է բաղադրիչ նախադասությունների տրամաբանական շեշտակիր անդամը. ինչպես՝ «Ես կմնամ այստեղ. ես կղոհևմ ինձ հայրենիքի խաղաղությանը» (ՐՍ, 251)։ «Ձորը խոր է, ձորը տաք է» (ԱՔ, 1, 241)։ Իսկ բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ ենթական ոչ բոլոր բաղադրիչներում է կրկնվում. ինչպես՝ «Գետը գնում է դեպի օվկիան, գետն անմահ է, անքննելի» (ԱՀԱ, 328)։

Կրկնությունը բնորոշ է միավորյալ նախադասության նաև բազմակի ենթականերին, միայն այն յուրահատկությամբ, որ բազմակի ենթակաների մի մասը կարող է նաև չկրկնվել։ Դա ավելի շատ հանդիպում է հրապարակախոսական ու գեղարվեստական ոճերի խոսքում. ինչպես՝ «Կոլտնտեսությունները, սովխոզները և մյուս կազմակերպությունները պարտավոր են վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար կազմակերպել նաև իրենց տերիտորիայում գտնվող անհատական օգտագործման հողամասերի վրա, այդ նպատակով կոլտնտեսությունները և

տվխոզներ վաճառում են կոլտնտեսականներին և բանվոր-ծառայողներին անհրաժեշտ քանակի բուժանյութեր, ժամանակավոր օգտագործման համար տրամադրում են սրսկիչ ու փոշոտիչ ապարատներ» (ԺԺ, 9, 217)։ Այստեղ երեք ենթականերից մեկը (կազմակերպություններ) չի կրկնվել, որովհետև նրանով արտահայտված հոգնակի առարկաները չեն մասնակցում 2-րդ և 3-րդ բաղադրիչ նախադասությունների գործողությունների կատարմանը։

Ցափածո միավորյալ նախադասության դերանուն ենթակայի մեջ-ընդմեջ կրկնությունը հաճախ կատարվում է բաղադրիչ նախադասությունները կապակցելու նպատակով, ինչպես նաև ռիթմի պահանջով. ինչպես՝ «Նա որը էր ծնվել ու սնվել կյանքում, նվ ոնց սկսվեց, այնպես էլ գնաց. Անձնական կյանքում նա միշտ որը մնաց Որը օթևանող հինավուրց վանքում» (ՊՍ, 4, 147)։

Ակնհայտ է, որ ենթական երբեմն կրկնվում է ստորոգյալի լրացման կամ էլ ստորոգյալի ու նրա լրացման հետ։ Այս վերջին դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչները կազմվում են կրկնության սկզբունքով. ինչպես՝ «Դու ինձ չես տեսնում լուսե երազում, Դու ինձ չես լսում ձմռան փոթորկում» (ՎՏ, 1, 56)։ «Ես Եզնից դառնացած ճեռացա, Ես Եզնից ճեռացա ու լացի» (ՎՏ, 1, 30)։

2. Ժամանակակից հայերենում շատ տարածված է միավորյալ նախադասության ենթակայի կրկնությունը նաև բառական այլ արտահայտությամբ։ Թվում է՝ նման կառույցը ոչ թե միավորյալ, այլ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասություն է։ Մենք այն միավորյալ ենք համարում՝ հաշվի առնելով տարբեր բառական արտահայտություն ունեցող ենթակաների՝ միևնույն առարկան ցույց տալը։ Այստեղ քերականականի ու տրամաբանականի հակադրությունը մեծ չէ, ուստի էական նշանակություն ենք տալիս տրամաբանական գործոնին։ Ենթակայի տարբեր բառական կրկնությամբ կառույցի միավորյալ դիտվելու հարցում, իհարկե, կա որոշ պայմանականություն։ Բայց որքան էլ ենթակաները այս դեպքում քերականորեն տարբեր լինեն, միևնույնն է, չենք կարող անտեսել դրանց՝ միևնույն սուբյեկտը ցույց տալը և բոլոր բաղադրիչ նախադասությունների համար ընդհանուր լինելը, մի բան, որ միավորյալ նախադասության բուն հատկանիշն է։ Այլ էներալ ասած՝ մենք այստեղ ավելի շատ հաշվի ենք առնում խորքային կառույցը։

Տարբեր բառական արտահայտությամբ կրկնվող ենթակայով միավորյալ նախադասությունները նույնպես միատարր չեն՝ պայմանավորված միևնույն կառույցում ենթակայի՝ ինչպես նույն, այնպես էլ տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող բառերով կրկնվելու հանգա-

մանքով։ Ուստի դրանք էլ բաժանվում են երկու ենթախմբի՝ ա) միևնույն խոսքիմասային պատկանելություն ունեցող բառերով արտահայտված ենթակայի կրկնությամբ միավորյալ նախադասություններ *և բ)* տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող բառերով արտահայտված ենթակայի կրկնությամբ միավորյալ նախադասություններ։

Միևնույն խոսքի մասին պատկանող բառերով արտահայտված ենթակայի կրկնությունն ավելի բնորոշ է գոյականով և դերանվամբ արտահայտված ենթականերին։ Ընդսմին, գոյական ենթակայի երկրորդ (կամ հաջորդ) կրկնությունը կարող է արտահայտվել նաև փոխանուն բառով։ Օրինակներ՝ «Կինը լուռ էր, սիրտ չուներ խոսելու. խեղճը առավոտից մինչև երեկո ոտքի էր եղել, հարևանի բուրդն էր լվացել գետի մեջ ու սաստիկ հոգնել էր» *(Ա՛ի, 3, 270)։* «Նրանք լավ տղաներ ու աղջիկներ են, ի տարբերություն բիտնիկների՝ ավելի ակտիվ են, ամեներն էլ դեմ են վիետնամական պատերազմին, բողոքում են ամերիկյան քաղաքականության դեմ, ցույցեր են անում, *(ՎՊՀԲԱ, 56)։*

Արդի հայերենում առավել շատ են հանդիպում այն միավորյալ կառույցները, որոնցում ենթական կրկնվում է տարբեր խոսքի մասերի պատկանող բառերով։ Այս դեպքում հիմնականում զուգակցում են միևնույն ենթակայի՝ գոյականական և դերանվանական արտահայտությունները։ Ընդ որում, ենթական, որպես կանոն, գոյականով արտահայտվում է առաջին բաղադրիչ նախադասության մեջ։ Նման միավորյալ նախադասության բաղադրիչների ինքնուրույնությունը մեծ է, այնպես որ դրանք կարող են գործածվել նաև որպես ինքնուրույն նախադասություններ. ինչպես՝ «Մարզպետունի իշխանը հանգիստ շունչ քաշեց. նա կարծես թեթևացավ յուր սիրտը ճնշող ամենավերջին ծանրությունից էլ» *(ՄԳՄ, 104)։ Այստեղ բաղադրիչների ինքնուրույնությունը հիմնականում պայմանավորված է գոյական ենթակայի ու նրա կրկնության՝ բաղադրիչ նախադասությունների սկզբում ունեցած գործածությամբ, որի հետևանքով բաղադրիչների միջև տրվող արտասանական դադարը մեծ է, և հնչիրանքը հատուցվածորվում է։ Նշենք, որ դերանուն ենթական կարող է գործածվել նաև նույն բաղադրիչի վերջում. ինչպես՝* «Աննան աչքերը կենտրոնացրեց մի կետի. մտածում էր նա» *(Ա՛ի, 3, 406)։*

Ենթակայի կրկնությամբ պայմանավորված՝ միավորյալ նախադասության բաղադրիչների անկախությունն անհամեմատ ավելի է մեծանում, երբ բուն ենթական և նրա կրկնված ձևը արտահայտվում են կողքկողքի, այսինքն՝ երբ գոյական ենթական գործածվում է առաջին բաղադրիչի վերջում, իսկ դերանուն ենթական՝ երկրորդ բաղադրիչի սկզբում. ինչպես՝ «Ջէր խոսում և Մարզպետունին. նա էլ խորասուզվել էր մտածմունքների մեջ» *(ՄԳՄ, 154)։* «Անմասն չէին անգամ հեռու մենաստան-

նրի կոռնավորները. նրանք էլ տարուբերում էին գլուխները և շշնջում...» (ՍՁՀՔ, 185)։ Այս նախադասությունների բաղադրիչների քերականական կապն այնքան թույլ է, որ դրանք կարելի է գործածել որպես ինքնուրույն նախադասություններ։ Համմտ. «Չէր խոսում և Մարզպետունին։ Նա էլ խոբասուզվել էր մտածմունքների մեջ» և այլն։

Դերանվամբ կրկնված ենթական արտահայտվում է նաև երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչ նախադասության վերջում։ Այս դեպքում բաղադրիչների կապը ավելի սերտ է լինում, և տրոհումն էլ արտահայտվում է ստորակետով. ինչպես՝ «Նեղանում է արքան, զայրանում է նա» (ԱՒ, 3, 131)։

Նշված բոլոր դեպքերում գոյականով արտահայտված ենթական միավորյալ նախադասության երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում կրկնվում է նա դերանվամբ։ Գոյական ենթական կրկնվում է նաև իճը դերանվամբ։ Սա գործածվում է ըլխավորապես հանդիպադրական, սակավադեպ էլ միավորական հարաբերությամբ կառուցում։ Այս դեպքում բաղադրիչ նախադասությունների անկախությունը (և արտասանական դադարը) նվազ է լինում, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով։ Ավելացնենք նաև, որ գոյական ենթական կարող է և զեղչվել։ Օրինակ՝ «Նախագահը դաշտում յուրաքանչյուրին ամրացրեց իր կոնկրետ գործին, իսկ իճը գնաց շրջկենտրոն»։ «Ո՛չ հավաքվածներին էր ներս թողնում, ո՛չ էլ իճճե էր դուրս գալիս» (ՀՔ, 1, 428)։

3. Սակավադեպ էլ բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ զուգակցում են ենթակայի՝ նույն և տարբեր բառական արտահայտությամբ կրկնություններ։ Այս դեպքում ենթական հիմնականում արտահայտվում է դերանվամբ։ Ընդ որում, առաջին և երկրորդ բաղադրիչներում այն կրկնվում է նույնությամբ, իսկ հաջորդ բաղադրիչներում՝ բառական այլ արտահայտությամբ։ Բայց միևնույն ենթակայի բառաքերականական այդ տարբեր արտահայտությունները նույն առարկան (անձն) են ցույց տալիս. ինչպես՝ «Դու ոսկի գրիչ ունես, դու այնպես իմաստուն ես, Իճիդ քեզ հրաժեշտ ես ասում, իճիդ քեզ կրկին ընդունում ես» (ԵՋԺ, 226)։ Այստեղ ընդգծված ձևերը միևնույն երկրորդ դեմքն են ցույց տալիս։

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԴՅԱԼՆԵՐԸ

Ընդունելով ենթակայի ու ստորոգյալի հավասարարժեքության մասին իշխող տեսակետը՝ միաժամանակ չենք կարող չնշել նաև միավորյալ նախադասության մեջ ստորոգյալների խաղացած էական դերը։ Ինչպես նշել ենք, այստեղ դրանք (միայնակ կամ լրացումներով) ստանում են բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների գործառու-

թյուն։ Այնուհետև. այս նախադասության կառուցվածքային ու իմաստային-ոճական շատ առանձնահատկություններ պայմանավորված են ստորոգյալների արտահայտությամբ, բառական նշանակությամբ և այլ յուրահատկություններով։

Երկկազմ միավորյալ նախադասություններն իրենց ստորոգյալների արտահայտությամբ միատարր չեն և բաժանվում են երեք խմբի՝

ա) բայական ստորոգյալներով միավորյալ նախադասություններ.

բ) անվանական ստորոգյալներով միավորյալ նախադասություններ.

գ)-բայական և անվանական ստորոգյալներով միավորյալ նախադասություններ։

Ա. ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐՈՎ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենում ավելի հաճախադեպ են բայական ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասությունները, որպիսիք անվանում ենք բայական միավորյալ նախադասություններ: *Ընդամին, բայական միավորյալ են թե՛ պարզ և թե՛ բայական բաղադրյալ ստորոգյալներով բաղադրված նախադասությունները. ինչպես՝ «Նորից բարևեց իր երկրի կարգով Ու բարի մաղթեց ջահել դոնաղին» (ՀՔ, 159). «Մարանը խբճիթի կիսախավարի մեջ աշխատեց լավ դիտել որդու դեմքը, բայց ոչինչ չկարողացավ տեսնել, բացի այդ դեմքի խավար ուրվագծից» (ՆԴ, 84)։ Երբեմն էլ միավորյալ նախադասությունը կազմվում է բայական տարբեր ստորոգյալների (պարզ և բայական բաղադրյալ) զուգակցումով. ինչպես՝ «Ուստան մի քիչ չեմ ու չում արավ, վերջը խոստացավ երկու տարում արհեստին վարժեցնել» (ԱՔ, 1, 22)։ Հետևաբար բայական միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք ենթախմբի՝ ա) պարզ ստորոգյալներով միավորյալ նախադասություն, բ) բայական բաղադրյալ ստորոգյալներով միավորյալ նախադասություն և գ) «պարզ ստորոգյալ+բայական բաղադրյալ ստորոգյալ» կազմափարով միավորյալ նախադասություն։*

ա. Պարզ ստորոգյալներով միավորյալ նախադասություն

Ավելի հաճախ միավորյալ նախադասությունը կազմվում է պարզ ստորոգյալներով։ Օրինակներ՝ «Մի հին տրտմություն անսփոփ ու խոր, Որպես վիշտն անել հայրենի հողիս, Երգում է սրտիս դառնագին օրոր Եվ անդուլ ցավով մաշում է հոգիս» (ՎՏ, 2, 39)։ «Այդ ժամանակ արքայական զորքը նորեն կդառնար և կհարձակվեր նրանց վրա» (ՄԴՄ, 160)։ «Դու միայն լավ ճակիր կոլխոզի արտին, գողանալ չտաս» (ՆՋՀ, 227)։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ պարզ նախադասության մեջ որպես ստորոգյալ հանդես եկող զուգադրական հարաբերությունը քայքայվում է, և նրա բաղադրիչները ձեռք են բերում ինքնուրույն բառական արժեք ու այս հիմքի վրա էլ՝ առանձին ստորոգյալների գործառույթ, որով նախադասությունը փոխակերպվում է միավորյալի։ Այսպես, օրինակ, «Հետաքրքրությունից մի օր վեր կացա և գնացի հիվանդանոց՝ Դավիթ Ծոմիչին տեսնելու» (ՆԴ, 176) միավորյալ կառույցը ձևավորվել է «Հետաքրքրությունից մի օր վեր կացա գնացի հիվանդանոց...» պարզ նախադասության զուգադրական բայ-ստորոգյալի բաղադրիչների անդամահատման հետևանքով։

Զուգադրության քայքայմամբ բազմակի ստորոգյալների առաջացումը կատարվում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով։ Օբյեկտիվ պատճառ են դառնում ամենից առաջ խոսքային հանգամանքները և մասնավորապես նախադասության կառուցվածքը։ Այսպես՝ երբ զուգադրության բաղադրիչների միջև գործածվում են այլ անդամներ, մասնատումը դառնում է օրինաչափ. ինչպես՝ «Մեղ տարան քաղաքից դուրս, փակեցին փայտե տնակների մեջ» (ՎՊՀԲԱ, 232)։ Երբեմն էլ զուգադրության քայքայումը պայմանավորված է լինում հարադրության յուրաքանչյուր բաղադրիչից հետո օժանդակ բայի գործածությամբ. ինչպես՝ «Միշտ ղորեղը ճնշում է, ոչնչացնում է անզորին» (ՐՍ, 509)։

Զուգադրության քայքայմամբ բազմակի ստորոգյալների երևան գալը պայմանավորված է լինում նաև սուբյեկտիվ հանգամանքներով և ամենից առաջ հեղինակային նախասիրությամբ։ Պրոֆ. Վ. Առաքելյանը գրում է. «Երբ գրողը կամ խոսողը ցանկանում է այս կարգի (զուգադրական— Ա. Կ.) բայերի ամբողջական իմաստները առանձնացնել, այդ դեպքում հիշյալ բայերը ստորակետով բաժանում է, որով դրանք առանձին-առանձին շեշտվում են, իմաստավորվում. օրինակ՝ Գնանք, դարկենք, Ջարդենք, կրակենք (Թ, 1, 331)։ Այս դեպքում արդեն ունենք միավորված բազմակի պարզ ստորոգյալներ» (27, էջ 115), այսինքն՝ միավորյալ նախադասություն։ Մյուս կողմից՝ երբ զուգադրության բաղադրիչներն իմաստով շատ մերձ են լինում, դրանց տրոհումն արհեստական է դառնում. ինչպես՝ «Տիկինը գնաց, նստեց յուր տեղը» (ՐՍ, 116)։

Ընդհանրապես առօրյա ոճին բնորոշ խոսքում նկատելի է երկու հակադիր միտում. մի կողմից՝ զուգադրության քայքայմամբ բազմակի ստորոգյալներով միավորյալ նախադասության ձևավորումը, մյուս կողմից՝ առանձին պարզ ստորոգյալների միավորմամբ զուգադրության, հետևաբար և պարզ նախադասության ստեղծումը։ Համմտ. «Սրանք գալիս, գլուխ են տալիս թագավորին» (ՍԽԱ, 114)։ «Գնաց Օհանը երեխի տուի Մի զույգ ոտնաման բերավ երկաթի...» (ՀԹ, 219)։

Միավորյալ նախադասության մեջ պարզ ստորոգյալների գործառույթով հանդես են գալիս նաև դարձվածքներն ու դարձվածքային արտահայտությունները՝ կազմելով դարձվածք-միավորյալ նախադասություն. ինչպես՝ «Ինչ ես կորցրել, ընչի՞ ման գալի» (ՀՔ, 160)։ Դարձվածք-միավորյալ նախադասությունը երբեմն կազմվում է միայն դոմինանտ անդամներից. ինչպես՝ «Բաժանի՛ր և տիրի՛ր»։

Միավորյալ նախադասության պարզ ստորոգյալներն արտահայտվում են նույն կամ տարբեր եղանակաժամանակային ձևերով։ Ըստ այդմ էլ նման միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի՝ ա) միևնույն եղանակի բայաձևերով արտահայտված ստորոգյալներով նախադասություններ և բ) տարբեր եղանակների բայաձևերով արտահայտված ստորոգյալներով նախադասություններ։

1. Միևնույն եղանակի բայաձևերով արտահայտված պարզ ստորոգյալներով միավորյալ նախադասություններ

Ավելի հաճախ միավորյալ նախադասության պարզ ստորոգյալներն արտահայտվում են միևնույն եղանակի բայաձևերով։ Ընդ որում, ժամանակային տեսակետից դրանց արտահայտությունը կարող է համընկնել կամ չհամընկնել։ Դրան համապատասխան էլ նման միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի.

ա) Միևնույն եղանակի նույն ժամանակաձևով արտահայտված ստորոգյալներով միավորյալ նախադասություններ։ *Այս դեպքում միավորյալ նախադասության ստորոգյալներն ունենում են եղանակաժամանակային համապատասխանություն։ Դրանք կարող են տարբերվել միայն սեռով և բովանդակության նկատմամբ ունեցած հարաբերությամբ (հաստատական ու ժխտական)։ Օրինակներ՝ «Քարափոր տներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը» (ԱԲ, 1, 222)։ «Ես քիչ եմ եղել այդ հասարակության մեջ, բայց շատ եմ զզացել» (ԱՇՔ, 273)։ «Հուշերս հավաքեմ մեկ-մեկ ևմ մոքով մանկանամ նորից» (ՀՍՔԵ, 59)։ «Կանցնի, Մարգո՛, այս երեկոն և կանհետանա հավերժի մեջ» (ՎՏ, 1, 369)։ Միավորյալ նախադասության ստորոգյալները հարկադրական եղանակով արտահայտվելու դեպքում պիտի (պետք է) եղանակիչը մեծ մասամբ գործածվում է միայն առաջին բաղադրիչում, իսկ երբ անհրաժեշտ է լինում շեշտել գործողությունների հարկադրականությունը, անհրաժեշտությունը, այն կրկնվում է բոլոր բաղադրիչներում՝ լիցքավորելով խոսքը և այն հարստացնելով անհրաժեշտականության տարբեր նրբերանգներով. ինչպես՝ «Պիտի վեր կենամ ես այս առավոտ Ու գնամ այնտեղ ու գնամ մեր տուն» (ՎԴԱՄ, 62)։ «Քո խատուտիկ աչիկներով*

Պիտի ճայես *մի օր հեռուն, Դրոշ պիտի պահես մի օր Քո ամրացած ձեռնիկներով,— Ու չմարող իմ երգերով Պիտի գնաս դեպի գրոհ...» (ԵՋՐԵ, 131)։*

Հարկադրական եղանակիչի կրկնությունը պայմանավորված է լինում նաև ենթակայի կրկնությամբ. ինչպես՝ «— Դու դեռ պետք է գնաս Բյուզանդիա, Մուշե՛ղ, դու պետք է տանես իմ խնդրակցության նամակը կայսրին...» (ՐՍ, 387)։

Միավորյալ նախադասության պարզ ստորոգյալները սակավադեպ էլ արտահայտվում են միևնույն երկրորդական վերլուծական ժամանակաձևով. ինչպես՝ «...մենք արդեն լվացած, մաքրած էինք լինում մեր ոչխարները» (ՄԱՀՀՏ, 572)։ «Մի ուրիշը նրա տեղում՝ վաղուց արդեն նուզված և հյուծված կլիներ» (ՐՍ, 421)։

բ) Միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալներով միավորյալ նախադասություններ: *Միավորյալ նախադասության ստորոգյալներն արտահայտվում են նաև բայական միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով, որպիսի դեպքում վերանում է գործողությունների միալարությունը, խոսքը օժտվում է ներքին դինամիկայով, շարժունությամբ։ Ինչ խոսք, միևնույն կառույցում ոչ բոլոր ժամանակաձևերն են զուգակցում։ Օրինակներ՝ «Մարդը մի շաբաթ առաջ նրա անունը լսելիս դեմքը քթվեցնում էր, հիմա ճոգին չի տալիս չտեսած» (ԱՇՔ, 7)։ «Բա մեռած հո չեմ, ապրում եմ, էլի...» (ՀՔ, 2, 1)։ «Նրանք նոր են վերադարձել Ֆրանսիայից, իսկ գնացել էին 1963-ին» (ՎՊՀԲԱ, 123)։ «Արշակը ոչ միայն պիտի մեռներ, այլև պիտի առնամարճի ձեզ ավելի...» (ՍՋՀԲ, 300)։*

Երբեմն ստորոգյալներից մեկն արտահայտվում է տվյալ բայեղանակի դլխավոր, իսկ մյուսը՝ նրա երկրորդական վերլուծական ժամանակաձևով. ինչպես՝ «Դրա հեղինակը, ըստ երևույթին, ամբողջապես ոգևորված է եղել իմ ուսմունքով և ամեն ինչ կառուցել է իմ սկզբունքով» (ԷՋԳՀ, 593)։ «Մի օր հերը աշխատելիս է լինում, ծառավում է» (ՀՔ, 3, 197)։

2. Տարբեր եղանակների բայաձևերով արտահայտված պարզ ստորոգյալներով միավորյալ նախադասություններ

Միավորյալ նախադասությունը կազմվում է նաև տարբեր եղանակների բայաձևերով արտահայտված պարզ ստորոգյալներով։ Այս դեպքում միևնույն կառույցում զուգակցում են տարբեր եղանակ-ժամանակային ձևեր։ Բայ-ստորոգյալների ժամանակային բազմազանությունն ավելի է մեծանում, երբ բազմաբաղադրիչ կառույցում զուգակցում են

տարբեր եղանակների ժամանակաձևերն ու միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերը։ Այս պարագայում ավելի է հաղթահարվում նկարագրության միօրինակությունը։ Միավորյալ նախադասության մեջ մասնավորապես զուգակցում են՝ ա) սահմանական եղանակի ներկան, ապառնին և հարկադրական ապառնին՝ «Շատ բան եմ ուղղում, շատ բան էլ դեռ ուղղեմ պիտի, Բայց ձեռ չեմ տալիս ու ձեռ չեմ տալու ... լոկ քո ժպիտին» (ՊՍ, 1, 288), սահմանական ներկան, վաղակատարն ու ենթադրական ապառնին՝ «Կարապները լճերի մեջ, ջրերի վրա Դեռ ննել են, դեռ նիրհում են. կարթևանաև հիմա» (ՆՉ, 1, 78), բ) սահմանական ներկան ու հրամայականը՝ «...օ՜, խնայի՛ր, խայթում ես դու» (ՎՏ, 2, 37), գ) սահմանական եղանակի անցյալի անկատարն ու հարկադրական ապառնին՝ «Մեզանից երկու հազար տարի առաջ մարդիկ ընտանիքի պատիվն անարգող հրեշներից այդ ձևով էին իրենց վրեժը լուծում և երկու հազար տարուց հետո դարձյալ նույն ձևով պիտի լուծեն» (ՄԳՄ, 151), դ) սահմանական անցյալի անկատարն ու ըղձական անցյալը՝ «Բայց ինչպե՞ս ստուգեի, ոչ մի տեղ չէի հանդիպում նրան. գնայի՞ նրանց տուն, նամա՞կ գրեի» (ՆԴ, 209)։

Միավորյալ նախադասության ստորոգյալները արտահայտվում են նաև տարբեր եղանակների երկրորդական վերլուծական ժամանակներով. ինչպես՝ «Երանի կարոյի հետ փախած լիևեիր, հիմա մի օրինավոր մարդ դառնած կլինեիր» (ՐԿ, 238)։

բ. Բայական բաղադրյալ ստորոգյալներով միավորյալ նախադասություն

Միավորյալ նախադասությունը հաճախ կազմվում է բայական բաղադրյալ ստորոգյալներով[4]։ Նման կառույցը պետք է ամենից առաջ տարբերակել անորոշ դերբայներով արտահայտված բազմակի ուղիղ խնդիրներով պարզ նախադասությունից։ Այսպես՝ Համմ. 1. «Թուրուններն անգամ չէին համարձակվում չափել ծովի անհուն տարածությունը և մերձենալ նրա անհյուրընկալ ափերին» (ՐՍ, 214)։ 2. «Իշխանը ներս մտնելուն պես հրամայեց շեփոր հնչեցնել և ամրոցի բնակիչներին արթնացնել» (ՄԳՄ, 298)։ Այս նախադասություններից առաջինը միավորյալ է, իսկ երկրորդը՝ պարզ։ Առաջին նախադասության եղանակիչի և անորոշ դերբայների գործողություններն վերաբերում են միևնույն թուրուններ հենթակային։ Մինչդեռ երկրորդ օրինակում հրամայեց-ը պարզ ստորոգյալ է, իսկ հնչեցնել-ը և զարթնեցնել-ը՝ նրա ուղիղ խնդիրները, քանի

---

4 Ակադ. Գ. Ջահուկյանը եղանակիչ բայի և անորոշ դերբայի կապակցությունը անվանում է բարդ ստորոգյալ։ Տե՛ս 94, էջ 412։

որ ներամայեց բայածևի գործողությունը վերաբերում է իշխանը ենթակային, իսկ դերբայների գործողությունները՝ այլ անձանց. այդ գործողությունների կատարումը, բնականաբար, սպասվում է այլոց կողմից։ Հետևաբար դիմավոր բայածևը (կամ բայածևերը) և անորոշ դերբայները միավորյալ նախադասություն են կազմում, երբ դրանց գործողությունները վերաբերում են ընդհանուր ենթակային կամ ենթականերին (հմմտ. 27, էջ 144)։

Բայական բաղադրյալ ստորոգյալներով միավորյալ նախադասությունները նույնպես միատարր չեն և բաժանվում են երկու ենթախմբի.

ա) Տարբեր եղանակիշներ ունեցող ստորոգյալներով նախադասություններ։ Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչներից յուրաքանչյուրի ստորոգյալն ունի իր առանձին եղանակիշը. ինչպես՝ «Ջուզեցի խանգարել նրան և, փոքր ինչ կռանալով դեպի նա, սկսեցի նայել դեմքին» (ՆՌ, 276)։

բ) Ընդհանուր եղանակիշ ունեցող ստորոգյալներով միավորյալ նախադասություններ։ Միավորյալ նախադասությունը ավելի հաճախ ունենում է ընդհանուր եղանակիշ, որը, որպես կանոն, արտահայտվում է միայն առաջին բաղադրիչ նախադասության մեջ, բայց հավասարապես վերաբերում է նաև մյուս բաղադրիչին կամ բաղադրիչներին՝ «ուղեկցելով» վերջիններիս անորոշ դերբայներին. ինչպես՝ «Որպես մի ցնդած պահ՝ ես այսօր կուզեմ երգել, էմալե՛, պրոֆիլը Ձեր—ել երգով լինել Ձեզ հետ» (ՆՉ, 1, 170)։

Բայական բաղադրյալ ստորոգյալներով միավորյալ նախադասության մեջ էական դեր է խաղում բայասեռի քերականական կարգը։ Ակնհայտ է, որ հաճախ եղանակիշն ու անորոշ դերբայները լինում են նույն սեռի. ինչպես՝ «Փորձիր հասկացնել, ցույց տալ իսկական հանցավորներին» (ԴՂվ, 2, 478)։

Նման կառույցում դերբայների սեռը տարածվում է ամբողջ ստորոգյալների վրա։ Այսպես՝ «Միքայելն սկսեց հուզվել և կատաղել թշնամիների դեմ» (ԱՇՔ, 72) նախադասության մեջ ընդամենը սկսեց եղանակիչը ներգործական սեռի բայ է, այնուհանդերձ երկու ստորոգյալներն էլ ունեն չեզոք սեռ՝ պայմանավորված հուզվել և կատաղել դերբայների սեռով։

Բայ-ստորոգյալների սեռի դրսևորման հարցում դերբայական ձևերի դերի կարևորությունն ավելի հստակ երևում է կրավորական կառուցվածքի միավորյալ նախադասության մեջ։ Եղանակիչը կրավորական չի լինում, բայց իրը անորոշ դերբայները լինում են կրավորական սեռի, ստորոգյալներն ինքնին դառնում են կրավորական, իսկ ամբողջ նախադասությունը՝ կրավորական կառուցվածքի. ինչպես՝ «Այստեղ մարդկա-

յին մտքի ու ձեռքի աշխատանքը նոր միայն սկսել էր գնահատվել որպես շուկայի ապրանք ու ճարտանաճարվել» (Շիրվ., 6, 7)։

գ. «Պարզ ստորոգյալ+բայական բաղադրյալ ստորոգյալ» կառույցի միավորյալ նախադասություն

Պարզ և բայական բաղադրյալ ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասության մեջ պարզ ստորոգյալն արտահայտվում է բայական գրեթե բոլոր եղանակաժամանակային ձևերով, իսկ եղանակիչ բայերը դրսևորում են ամենատարբեր իմաստներ։ Այս կառույցում որոշ նշանակություն է ստանում նաև ստորոգյալների շարադասությունը։ Ավելի հաճախադեպը պարզ ստորոգյալի՝ առաջին բաղադրիչում հանդես գալն է. ինչպես՝ «Հրացանի որոտից անտառը որոտաց և սկսեց ճոճոալ» (ՀՔ, 298)։

Նախադաս է լինում նաև բայական բաղադրյալ ստորոգյալը՝ նախադասության մտքի ծանրաբեռնվածությունը տեղափոխելով առաջին բաղադրիչը. ինչպես՝ «Արծվին չուզեց աղմուկ հանել, կանգնեց» (ԴՒվ, 2, 394)։ Այս դեպքում պարզ ստորոգյալը կարող է լինել նաև բաղադրյալի դերբայական բաղադրիչի դիմավոր ձևը. ինչպես՝ «Ո՞վ կարող է ինձ ճերել և ինչո՞ւ պիտի ճերե» (ՄԳՄ, 281)։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ պարզ և բայական բաղադրյալ ստորոգյալները թվով հավասար են լինում կամ անհավասար։ Իսկ դրանց շարադասությունը լինում է՝ ա) սովորական հաջորդական, երբ սկզբում գործածվում են պարզ ստորոգյալները, իսկ հետո՝ բաղադրյալները կամ հակառակն, և բ) միջարկված, երբ տարբեր կառույցի ստորոգյալները գործածվում են մեջընդմեջ։ Օրինակներ՝ ա) «Նա ձեռքը մացրեց երիտասարդ ուղեկցի թևի տակ, սկսեց ժպտալ և ինչ-որ շշնջալ» (ԱՇՔ, 348)։ բ) «Գնեցկադեմ բժիշկը ժպտում է գոհունակությամբ և ասես ինչ-որ բան է ուզում ասել, բայց չի ասում» (ՀՋ, 4.1.1978 թ., 4)։

Բ. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐՈՎ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միավորյալ նախադասությունը կազմվում է նաև անվանական բաղադրյալ ստորոգյալներով։ Նման կառուցվածքը անվանում ենք անվանական միավորյալ նախադասություն։ Ինչպես միշտ, այս դեպքում էլ ստորոգվող հատկանիշներն արտահայտվում են անուն խոսքի մասերին պատկանող կամ իբրև այդպիսին հանդես եկող բառերով, իսկ դրանք առարկային (առարկաներին) ստորոգվում են բայական հանգույցների

միջոցով. ինչպես՝ «Բանաստեղծ Դանիել Վարուժանն էլ իր ազգի սիրտն էր ու լեզուն» (ՀՔ, 1, 489)։

Ենթական (ենթակաները) և անվանական ստորոգյալները կապվում են յուրատիպ նույնաբանական հարաբերությամբ։ Ակադ. Գ. Ջահուկյանը, խոսելով անվանական ստորոգյալի մասին, գրում է. «Անվանական նախադասությունը առարկայական (գոյաբանական) առումով յուրատեսակ նույնաբանություն է, որտեղ հավասարության մեջ է դրվում առարկան ինքն իր հետ» (94, էջ 407)։ Անվանական պարզ երկկազմ նախադասության այս սահմանումը տարածելի է նաև անվանական միավորյալ նախադասության վրա, միայն թե վերջինս այնպիսի նույնաբանություն է, որով հավասարության մեջ են դրվում առարկան (առարկանները) և իր (իրենց) ստորոգային հատկանիշները։ Այսպես, օրինակ, «Մեր աշխարհն է ամենքիս կյանքը և ապավենը» (ՍՁՀՐ, 286) նախադասությունը սուբյեկտիվ-իմացական երկու ակտ դրսևորում է («Մեր աշխարհն է ամենքիս կյանքը» և «Մեր աշխարհն է ամենքիս ապավենը»), որը միաժամանակ դառնում է միևնույն սուբյեկտի երկու վիճակների արտահայտությունը։ Բերված նախադասության մեջ առկա է երեք եր. առաջինը սուբյեկտն է (աշխարհը), իսկ մյուս երկուսը՝ ստորոգելիական վերապիրները կամ ստորոգելիները (կյանքն ու ապավենը)։ Ընդ որում, առաջին և երկրորդ ու երրորդ եղրերի հարաբերությունն արտահայտվում է հանգույցի միջոցով։ Այդ նախադասությունը կարելի է արտահայտել $A_1+a+A_2+A_3$ բանաձևով, ուր A_1-ը ենթական է, a-ն՝ հանգույցը, A_2-ը՝ առաջին ստորոգելին, իսկ A_3-ը՝ երկրորդ ստորոգելին։ Ինչպես տեսնում ենք, այստեղ հանգույցը ընդհանուր է երկու ստորոգյալների, հետևաբար և երկու բաղադրիչ նախադասությունների համար։

Հանգույցը կարող է նաև ընդհանուր չլինել, չնայած հաջորդ բաղադրիչներում նրա բացակայությանը։ Դա առկա է լինում ստորոգյալի մասնակի զեղչումով միավորյալ նախադասության մեջ. ինչպես՝ «Երկուսն էլ դեղնած էին, արյունաքամ, հիվանդոտ» (ԱՇՔ, 316)։ Այս նախադասությունը կարելի է արտահայտել հետևյալ կաղապարային բանաձևով. $A_1+A_2+a+A_3+(a)+A_4+(a)$, ուր A_1-ը ենթական է, A_2-ը, A_3-ը և A_4-ը՝ ստորոգելիները (դեղնած, արյունաքամ, հիվանդոտ), a-ն՝ առաջին հանգույցը (էին), (a)-երը՝ զեղչված հանգույցները։

Երբ անվանական ստորոգյալներն ունենում են համասեռ լրացումներ, հանգույցը մեծ մասամբ արտահայտվում է վերջին բաղադրիչում. ինչպես՝ «(Ծաղիկը) էնքան քնքուշ, էնքան նախշուն, էնքան սիրուն է լինում» (ՀՔ, 376)։ Չի բացառվում նաև հանգույցի կրկնությունը յուրաքանչյուր ստորոգելիի հետ, որով ստորոգվող հատկանիշները առանձին-

առանձին ընդգծվում են. ինչպես՝ «Նա բանաստեղծ էր ու երգաստեղծ էր» (ՊՍ, 4, 40)։

Միավորյալ նախադասության մեջ հանգույցի գործառույթով հանդես են գալիս հիմնականում եմ, լինել բայերը, սակավ կիրառությամբ չեզոք սեռի որոշ բայեր՝ դառնալ, ճերկայանալ, կանգնել, ընկնել, մնալ, թվալ, ծնանալ, երևալ և այլն, կրավորական սեռի մտածական, ասացական, իմացական, նաև գործողության իմաստ ունեցող մի շարք բայեր՝ ասվել, ընտրվել, կարգվել, ընդունվել, համարվել, ճարգվել, նոչակվել, նրատարակվել, կանչվել, հիշվել, դրվել, գտնվել, կոչվել և այլն։

Ինչ վերաբերում է միավորյալ նախադասության ստորոգելիներին, վերջիններս արտահայտվում են ամենատարբեր բառերով։ Այնուհետև. միևնույն կառույցում ստորոգելիներն արտահայտվում են նույն կամ տարբեր խոսքի մասերի պատկանող բառերով։ Ըստ այդմ էլ անվանական միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի՝ ա) միևնույն խոսքիմասային պատկանելություն ունեցող ստորոգելիներով նախադասություններ և բ) տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող ստորոգելիներով նախադասություններ։

Ա. Ավելի հաճախ միավորյալ նախադասության ստորոգելիներն արտահայտվում են միևնույն խոսքիմասային պատկանելություն ունեցող բառերով՝

ա) գոյականներով՝ «Մի՛թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի» (ՎՏ, 1, 235)։

բ) դերանուններով՝ «Տունը ի՛մն էր և ի՛մն էլ կլինի» (ՆԴ, 174)։

գ) ածականներով՝ «Կառամատույցը դատարկ էր, լուռ, կիսախավար» (ԼՔ, 1, 350)։

դ) թվականներով՝ «Այդ թաղամասում նրա կառուցած շենքերը առաջինն են և հինգերորդը»։

ե) անկախ դերբայներով՝ «Ամոթը կովելը չէ, այլ ձեղ հետ նաեելը, ձեղ հետ խոսելը և մինչև անգամ ձեր երեսը տեսնելը» (Շիրվ., 8, 104)։ «...ես վախեցողը և փախչողը չեմ» (ԱՒ, 3, 303)։

զ) մակբայներով՝ «Նրա պատմելը արագ էր և ի միջի այլոց» և այլն։

Բ. Անվանական միավորյալ նախադասությունները հաճախ էլ բաղադրվում են տարբեր խոսքի մասերի պատկանող բառերով արտահայտված ստորոգելիներով։ Այսպիսիք առաջին խմբի միավորյալ նախադասություններից տարբերվում են՝ ա) միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող ամենաբազմապիսի ու տարաբնույթ հատկանիշներն արտահայտելու հնարավորությամբ և բ) հանգույցների արտահայտությամբ. այս դեպքում հանգույցները համարյա միշտ արտահայտվում են եմ-ով։ Իր այս առանձնահատկությամբ միավորյալ նախադասությունը

տարբերվում է նաև նույն կարգի տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությունից, ուր ավելի հաճախադեպը տարբեր հանգույցների զուգակցումն է։

Նման կառույցում տարբեր արտահայտություն ունեցող ստորոգյալների ընդհանրությունը ստորոգային ամենատարբեր հատկանիշների վերագրումն է միևնույն առարկային կամ առարկաներին։

Միևնույն միավորյալ նախադասության մեջ ստորոգելիներ են դառնում՝

ա) գոյականն ու ածականը՝ «Աղջիկ էր նա սովորական, Անգամ ամենից գեղեցիկը չէր...» (ՎԴԱՄ, 105)։

բ) գոյականն ու դերանունը՝ «Հայրենիքը մեր նախնիքն են, մեր ծնողներն են, մենք ենք» (Ա.Ի, 359)։

գ) հարակատար դերբայը (այս դերբայի՝ ձևարանական արժեք չունեցող ձևերը) և ածականը՝ «Մտրկությունը համատարած էր և ամենազոր...» (Ա.Ի, 3, 117)։

դ) գոյականն ու ենթակայական դերբայը՝ «Նորածիններին մկրտող քահանա էր, պատկվողների գլխին՝ խաչ բռնող...» (ՀՔ, 1, 469)։

ե) գոյականն ու անորոշ դերբայը կամ դերբայական կապակցությունը՝ «Միրանի տափի առավելությունը քամիներից պաշտպանված լինելն է և ջրի մոտիկությունը» (Ա.Բ, 1, 63)։

զ) մակբայն ու ածականը՝ «Դա արդեն չափից դուրս էր և անդիմանալի» (ՍԱՃՀ, 39)։

է) մակբայը, ածականն ու հարակատար դերբայը՝ «Այդ երգը վաղուց է, բախծոտ է և մեզ շատ նուազած է»։

ը) ածականն ու բ/ձ-ականը՝ «Այդ կինը իր սեռի մեջ միակն էր և առաջինը» (Մուր., 2, 7)։

թ) ածականն ու ենթակայական դերբայը՝ «Աչքերը պղտոր էին ու թափառող» (ՎԱ, 113)։

ժ) գոյականն ու կապական կապակցությունը՝ «Հրայրն ու ծիրայրը երկվորյակներ էին, բայց իրար նման չէին» (ՀՔ, 1, 433) և այլն։

Գ. ԲԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐՈՎ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ

Երկկազմ միավորյալ նախադասությունը կազմվում է նաև բայական ու անվանական ստորոգյալներով։ Այսպիսի նախադասությունն ունի «[ենթակա(ներ)]+բայական ստորոգյալ+անվանական ստորոգյալ» կառուցվածքը։ Ընդամին, երկբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ

ստորոգյալի երկու դրսևորումներն ունենում են հավասար ընդգրկում, իսկ բազմաբաղադրիչ նախադասության մեջ դրանք թվով թե՛ հավասար են լինում և թե՛ անհավասար։ Օրինակ՝ «Ամենքը լուռ էին և խորին երկյուղածությամբ սպասում էին թագավորի ձայնին» (ՐՍ, 340)։ «Հայրս բարի է, շատ է սիրում ինձ և միշտ կատարում է խնդիրքս» (ՆԴ, 103)։

Ստորոգյալների շարադասության հարցում երկբաղադրիչ միավորյալ նախադասությունը էական յուրահատկություններ չի դրսևորում. բայական ստորոգյալը առաջին բաղադրիչ նախադասության մեջ արտահայտվելու դեպքում անվանականը լինում է հաջորդ բաղադրիչում և ընդհակառակն։ Իսկ բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ գործառվում է թե՛ աստիճանական և թե՛ խառը շարադասությունը. ինչպես՝ «Ճանապարհը ամայի էր, խարխուռ և անհարթ, մերթ իջնում էր ցած, մերթ բարձրանում բլուրները...» (ՍՋՀԲ, 79)։ «Այսօր գթանք իրարու, խեղճ լինենք ու չամաչենք, Բախտ չտեսչանք ու հետու Տարիները չհիշենք» (ՎՏ, 1, 113)։

Բայական և անվանական ստորոգյալներով միավորյալ նախադասությունները միատարր չեն՝ պայմանավորված բայական ստորոգյալների անմիատարրությամբ։ Դրանք բաժանվում են երեք հնթախմբի.

ա) «պարզ ստորոգյալ+անվանական ստորոգյալ» կազապարով միավորյալ նախադասություններ՝ «Մանուկը մեծացավ, դարձավ մի շնորհալի երիտասարդ (ԱՒ, 3, 332)։

բ) «բայական բաղադրյալ ստորոգյալ+անվանական ստորոգյալ» կառույցի միավորյալ նախադասություններ՝ «Նա այնքան լավ չէր, բայց ոչ մի կերպ չէր ուզում ցույց տալ» (ՄՓՀԲ, 122)։

գ) «պարզ ստորոգյալ+բայական բաղադրյալ ստորոգյալ+անվանական բաղադրյալ ստորոգյալ» կազապարով միավորյալ նախադասություններ։ Սա առավել ընդհանուր կառուցվածք է, ուր զուգակցում են ստորոգյալի բոլոր դրսևորումները ամենատարբեր շարադասությամբ. ինչպես՝ «Նա նոգնած էր, ուժասպառ, հազիվ կարողանում էր կանգնել ոտքի վրա» (ԱՇՔ, 364)։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՋԵՂՋՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժամանակակից հայերենում ստորոգյալի զեղչումը գործուն երևույթ է, որը պայմանավորված է լեզվի ներքին խնայողության պահանջով, ոճի հեղինակության հատկությամբ։ Պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանը տեղին է նկատել, որ «լեզուն միշտ ձգտում է սեղմության, և այդ տենդենցի շնորհիվ նախադասության մեջ չի գործածվում այն, ինչ որ առանց գործած-

վելու հասկանալի է, ինչի գործածվելու անհրաժեշտությունը չկա։ Ստորոգյալի զեղչումը ևս, ինչպես ամեն մի զեղչում, այդ տենդենցի արտահայտությունն է» (17, էջ 456)։ Միշտ էլ ստորոգյալի զեղչման հիմքը համատեքստում հասկանալի լինելն է, իսկ նպատակը՝ կրկնությունից, հետևաբար նաև ոճի միօրինակությունից խուսափելը։

Ստորոգյալի զեղչումը առանձնապես շատ է հանդիպում բարդ համադասական կապակցության մեջ։ Ընդամին, այն տարբեր յուրահատկությամբ է արտահայտվում միավորյալ և տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությունների մեջ։

Զեղչված ստորոգյալով միավորյալ նախադասությունը թերի նախադասության տարատեսակներից մեկն է։ Ինչպես միշտ, այս կառուցվածքում ևս զեղչումը հիմնականում կատարվում է երկրորդ բաղադրիչում, թեպետ չի բացառվում զեղչումը նաև առաջին բաղադրիչում։ Ակնհայտ է, որ երկկազմ միավորյալ նախադասության մեջ զեղչվում է ստորոգյալը, իսկ միակազմ միավորյալ նախադասության մեջ՝ բայական գերադաս անդամը[5]։

Միավորյալ նախադասության մեջ ստորոգյալի և բայական գերադաս անդամի զեղչումը պայմանավորված է լինում նախադասության կառուցվածքով, բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող շարահյուսական հարաբերությամբ, խոսքային միջավայրով, հաղորդման նպատակով ու եղանակով և այլ հանգամանքներով, որոնց համապատասխան էլ այդ անդամների զեղչումն ունենում է տարբեր դրսևորումներ։

Միավորյալ նախադասության մեջ նույնպես ստորոգյալը զեղչվում է երկու ձևով՝ ամբողջովին և մասամբ։ Ընդ որում, բայական և անվանական ստորոգյալները դրսևորում են զեղչվելու տարբեր յուրահատկություններ։ Այսպես՝ բայական ստորոգյալը զեղչվում է թե՛ ամբողջովին և թե՛ մասամբ, իսկ անվանական ստորոգյալը՝ միայն մասամբ. զեղչվում է հանգույցը։

Այնուհետև, միևնույն միավորյալ նախադասության մեջ կարող են տեղ գտնել ստորոգյալի զեղչման այդ ձևերից մեկը կամ երկուսը միաժամանակ՝ պայմանավորված բաղադրիչ նախադասությունների քանակով. ստորոգյալի զեղչման ձևերից միայն մեկի դրսևորումը բնորոշ է թե՛ երկբաղադրիչ և թե՛ բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությա-

---

5 Այստեղ ներկայացնում ենք նաև միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամի զեղչումը՝ հաշվի առնելով նրա նմանությունը երկկազմ միավորյալ կառույցի ստորոգյալի զեղչմանը։

նը, իսկ ամբողջովին ու մասամբ զեղչումների միաժամանակյա դրսևորումը՝ միայն բազմաբաղադրիչ կառույցին։ Ըստ ստորոգյալի զեղչման ձևերի՝ միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք խմբի.

ա) ստորոգյալի ամբողջովին զեղչումով նախադասություններ.

բ) ստորոգյալի մասամբ զեղչումով նախադասություններ.

գ) ստորոգյալի զեղչման երկու ձևերը համատեղող նախադասություններ։

Արդ՝ քննենք ստորոգյալի զեղչման այս ձևերն առանձին-առանձին։

1. Ստորոգյալի ամբողջովին զեղչումով միավորյալ նախադասություններն ավելի հաճախադեպ են։ Միավորյալ նախադասության մեջ ամբողջովին զեղչվում է.

ա) Ամենից առաջ պարզ ստորոգյալը։ Երբ միավորյալ նախադասության երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչի ստորոգյալն արտահայտվում է նույն բայով, ինչ որ առաջին բաղադրիչի ստորոգյալն է, կրկնությունից խուսափելու համար այն երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում զեղչվում է։ Նման զեղչումն արտահայտվում է ավելի հաճախ հանդիպադրական, համեմատաբար սակավ միավորական և ավելի քիչ հակասման, ժխտման ու տրոհական միավորյալ նախադասություններում։ Նվ պայմանավորված միավորյալ նախադասության բաղադրիչների հարաբերությամբ՝ պարզ ստորոգյալը դրսևորում է զեղչման տարբեր յուրահատկություններ։ Ակնհայտ է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ստորոգյալի զեղչման հիմքը տարբեր է լինում։ Այսպես՝ հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասության մեջ ստորոգյալի զեղչումը ստորոգական հակադրության բացառման արդյունք է. այս դեպքում հակադրվում են մեծ մասամբ ստորոգյալների (իսկ միակազմ կառուցվածքում՝ բայական դերադաս անդամների) լրացումները։ Օրինակներ՝ «Նախ այնտեղ շինեց արքայական հոյակապ ապարանք, իսկ միջնաբերդում՝ գեղեցիկ դղյակ...» (ՄԳՄ, 437—438)։ «Ինչո՞ւ չես վիզդ ծուռ պահում, բերանդ՝ փակ» (ՍԽՄՄ, 3, 180)։ «Աստված մեկին տալիս է մի մատնոց խելք, մի կարաս բախտ, մեկին՝ մի կարաս խելք, մի մատնոց բախտ» (Ա, 309)։

Հաճախ այս կարգի բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության առաջին ստորոգյալը լինում է տարբեր, իսկ մյուս բաղադրիչների ստորոգյալները՝ նույնը։ Այս դեպքում բնականաբար զեղչվում է միայն վերջին ստորոգյալը. ինչպես՝ «Մի երեկո խեղճ կնիկը վառել էր օջախը վրան դրել էր ջրով լի մի կավե աման, մեջն էլ՝ մի քանի հատ կարմիր տակ» (ԱՒ, 3, 270)։

Ակնբախ է, որ ստորոգյալի համաբանությամբ զեղչվում է նաև հանդիպադրական հարաբերությամբ միակազմ միավորյալ նախադա-

սության բայական գերադաս անդամը. ինչպես՝ «Կաթը չափում են լիտրով, խնձորը՝ կիլոգրամով» (ՆՊՔՀԺՀ, 156)։ «Հացը տաշտիցդ վեր կալ, ընկերը՝ գեղիցդ» (Ա, 223)։ Երբեմն ընդհանուր բայական գերադաս անդամը դեղչվում է ընդհանրապես, բայց մտքից հասկացվում է։ Այսպես, օրինակ, «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին» հանրահայտ ասացվածքի երկու բաղադրիչներում էլ դեղչված է ասա գերադաս անդամը։ Սակավադեպ էլ միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամները դեղչվում են բոլոր բաղադրիչներում նույնը չլինելու դեպքում. ինչպես՝ «Հազար խոսքին մեկ խոսք, հազար ճնճղուն մեկ քար» (Ա, 7)։ Այստեղ դեղչված են ասա և գցիր գերադաս անդամները։

Երբ դեղչված ստորոգյալը առաջին բաղադրիչ նախադասության ստորոգյալի ժխտական ձևն է, նրա փոխարեն գործածվում է ոչ, սակավադեպ էլ՝ երբեմ բառը. ինչպես՝ «Նա երեկ գնացել է դպրոց, իսկ այսօր՝ ոչ»։

Հաճախ միևնույն պարբերության բաղադրող հանդիպադրական միավորյալ նախադասությունների բաղադրիչները ունենում են նույն բայ-ստորոգյալը։ Այս դեպքում դրանցից յուրաքանչյուրի առաջին բաղադրիչում ստորոգյալը արտահայտվում է, իսկ հաջորդ բաղադրիչում՝ դեղչվում (առանձին կամ լրացումներով հանդերձ). ինչպես՝ «— Ջէ, աղա, (շները) գիլի վրա ուրիշ տեսակ են հաշում, մարդի վրա՝ ուրիշ։ Ամբի վրա ուրիշ տեսակ են հաշում, կենդու մարդի վրա՝ ուրիշ...» (ՀՔ, 311)։ Այս պարբերության մեջ դեղչված է հաշում են պարդ ստորոգյալը ձևի պարագայի գործառույթ ունեցող բառակապակցության (ուրիշ տեսակ) մի բաղադրիչի (տեսակ) հետ։ Իհարկե, հաճախ, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, գործողությունը շեշտելու նպատակով ստորոգյալը կամ բայական գերադաս անդամը չի դեղչվում, կրկնվում է. ինչպես՝ «...Հունվարի ասածից նրաժարվում է փետրվարին, մի տարի հառաջ գրած բանից նրաժարվում է ներկայումս» (ՄՆՆՏ, 47)։ «Առաջ կըլնիս ձեռնարաց, վերջը կըլնիս գլխարաց» (Ա, 50)։ Դեղչված ժխտական ստորոգյալի փոխարեն ոչ-ի գործածությունը ավելի հաճախադեպ է, նույնիսկ, կարելի է ասել, պարտադիր է սրտհական հարաբերությամբ միավորյալ նախադասության մեջ. ինչպես՝ «Արդյոք զարկե՞ն, քե ոչ» (ԽԴՒԿ, 142) (=չզարկեն)։

Հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասության մեջ ստորոգյալի դեղչումը, ինչպես նաև դեղչված ժխտական ստորոգյալի փոխարինումը երբեմ, ոչ, բնավ և այլ բառերով հիմնականում նման են հանդիպադրական կառուցվածքում նույն իրակությունների. ինչպես՝ «— Աշոտը նրա աչքերն է կուրացրել, բայց իմ՝ սիրտը» (ՄԳՄ, 146)։

«Վարդանը և Արամը երեկ ինձ այցելել են, բայց այսօր՝ ոչ» (=չեն այցելել)։

Պարզ ստորոգյալը յուրատիպ է զեղչվում միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասության մեջ։ Հետաքրքրական է, որ այստեղ, նախ, ստորոգյալը զեղչվում է մեծ մասամբ տարժամանակության արտահայտման դեպքում, և, երկրորդ, այդ զեղչումը մասամբ նման է հանդիպադրական միավորյալ նախադասության ստորոգյալի զեղչմանը։ Այնքանով, որքանով միավորյալ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների գործողությունները կատարվում են տարբեր ժամանակներում, ժամանակային այդ տարբերությունը մասամբ դառնում է նաև հակադրություն բաղադրիչ նախադասությունների միջև, որը և, մեր կարծիքով, ստորոգյալի զեղչմանը նպաստող ամենահիմնական պայմաններից մեկն է։ Ահավասիկ այդպիսի օրինակներ. «Աստծո նիզակի ծայրով խոտը մոտեցրեց խոյին և միսը՝ վագրին...» (Ա՚, 3, 265)։ «Կամսարականը քմծիծաղ նայեց նախ հյուրին, ապա ներողամիտ ժպիտով՝ երիտասարդ իշխանին» (ՍԶՀԲ, 31)։ «Մարդը, որը ներկայացել է Թղթակցին, 1969-ին Երևանից արտագաղթել էր Բելգրադ, ապա՝ ԱՄՆ» (ՎՊՀԲԱ, 110)։ Այս նախադասություններում բայական անդամի լրացումների միջև հակադրության մասնակի առկայությունը ավելի ակնբախ երևում է հանդիպադրական հարաբերությամբ տարբերակում։ Հմմտ. «Աստծո նիզակի ծայրով խոտը մոտեցրեց խոյին, իսկ միսը՝ վագրին...» և այլն։ Բերված օրինակներում առկա է նաև մեկ այլ հակադրություն՝ պայմանավորված միևնույն գործողության՝ տարբեր առարկաների հարաբերմամբ։

Միավորական հարաբերությամբ բաղմաբաղադրիչ միավորյալ նախադասության առաջին բաղադրիչի ստորոգյալը նույնպես կարող է լինել տարբեր։ Ավելին, զեղչում ունեցող առաջադաս բաղադրիչները կարող են լինել մեկից ավելին. ինչպես՝ «Պատանի Հուսիկը կանգնած էր պատի մոտ և յուր փայլուն աչքերով երբեմն նայում էր յուր տիրոջ վրա և երբեմն՝ ծերունի Արբակի վրա» (ՐՍ, 161—162)։ «Ես ունեցա ընկերներ, բայց ոչ մեկին չկարողացա մաքուր սիրել և մաքուր սիրվել. մի քանիսի հետ կապված էի տնտեսական ակնկալությամբ, մի երկուսին՝ ուրիշ հույսերով..., մի քանիսին էլ՝ գաղափարներով ու բնավորություններով...» (ԱԻՀ, 82)։

Այս կառուցվածքին ձևով նման է այն բաղմաբաղադրիչ միավորյալ նախադասությունը, որի առաջին և հաջորդ բաղադրիչների միջև, բացի թվարկումից, առկա են նաև մեկնական, մասի և ամբողջի և այլ ածանցյալ հարաբերություններ. ինչպես՝ «Նա որբ էր. ոչ հայր ուներ, ոչ մայր» (ՍԽԱ, 77)։ «Մի անանուն ծերունի կար, ո՛չ տուն ուներ, ո՛չ

հաց» (Ահ, 3, 212)։ Այս նախադասությունների վերջին բաղադրիչներում դնդված է ուներ ստորոգյալը։

Այս կարգի միավորյալ նախադասությունը կարող է գործածվել իբրև համադասական պարբերության առաջին մաս կամ եզր. ինչպես՝ «Ամեն օր, խանութը փակվելուց հետո, գրպանները լցրած տուն էր գնում. երբեմն տանում էր բրինձ, երբեմն՝ շամիչ, շատ անգամ՝ կաղին և ընկույզ, ուրիշ անգամ՝ զանազան բաներ, երբեմն էլ՝ շայ ու շաքար,— մեկ խոսքով նրա այրի մոր համար ապրուստի հորդահոս աղբյուր էր բացվել» (ՌՊե, 498)։

Միավորական հարաբերությամբ բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ ստորոգյալի զեղչումը հաճախ ավելի է ընդգծում թվարկումը՝ դրանով իսկ մեղմելով թվարկման միալարությունը և լիցքավորելով խոսքը. օրինակ՝ «Անահիտը ժպտալով նայեց մեզ, առաջ՝ Երվանդին. ապա՝ ինձ, հետո՝ նորից Երվանդին և գլխով թեթև նշան արեց նրան» (Ահ, 3, 350)։

Երբ այսպիսի միավորյալ նախադասությունն արտահայտվում է չափածո ձևով, հանգավորման նպատակով ու ռիթմի պահանջով, ինչպես նաև բաղադրիչ նախադասություն-տողերի կապը ուժեղացնելու համար պարզ ստորոգյալները երբեմն զեղչվում են միջարկված ձևով. ինչպես՝

«Նստել է ձորում՝ երկինքը դեմքին,
Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հաճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի» (ՀՍՔե, 15)։

բ) Սակավադեպ բայական բաղադրյալ ստորոգյալը։ Այս զեղչումը ավելի բնորոշ է ներհակական հարաբերությամբ այն միավորյալ նախադասությանը, որի մեջ հակադրության երկրորդ եզրի ստորոգյալը նախորդի ժխտական ձևն է, որպիսի դեպքում զեղչված ստորոգյալի փոխարեն մեծ մասամբ գործածվում է երբեմ բառը, և դրվում է բութ. ինչպես՝ «Բարին ամեն ինչ կարող էր սպասել, բայց այդ բանին՝ երբեմ» (ԱՔ, 1, 26)։

2. Գործառական ամենատարբեր ոճերում հաճախ են հանդիպում ստորոգյալի նաև մասնակի կամ մասամբ զեղչումով միավորյալ նախադասությունները։ Նման զեղչումը բնորոշ է թե՛ բայական և թե՛ անվանական ստորոգյալին՝ տարբեր յուրահատկություններով հանդերձ։ Միավորյալ նախադասության մեջ մասամբ զեղչվում է.

ա) Ավելի հաճախ պարզ ստորոգյալը: Ինչպես միշտ, այս դեպքում էլ պարզ ստորոգյալի մասամբ զեղչումն արտահայտվում է օժանդակ բայի զեղչումով: Նկատելի է, որ նման զեղչումը չի պայմանավորվում բաղադրիչ նախադասությունների շարահյուսական հարաբերությամբ, ի տարբերություն պարզ ստորոգյալի ամբողջովին զեղչման: Այս դեպքում օժանդակ բայը գործածվում է մեծ մասամբ առաջին բաղադրիչում, իսկ մյուս բաղադրիչում կամ բաղադրիչներում զեղչվում է, և դերբայը կամ դերբայները ստանում են ստորոգյալի գործառույթ: (Իհարկե, զեղչված օժանդակ բայը միշտ մտովի ուղեկցում է դերբային): Այս դեպքում շեշտվում է ոչ այնքան գործողությունների, որքան տվյալ գործողությունների կատարման փաստը: Օրինակ՝ «Իմ թախիծն էլ այն ամպի պես ցնորում է քնքշաբար, Բոցավառվում հիշելով քեզ ես արտասվում քեզ համար» (ՎՏ, 2, 95): «Այս անգամ Անանիան ձյութ է հալում, հովացնում ու թափում ձիու մեջքին» (ՍԽԱ, 38):

Հաճախ էլ օժանդակ բայը զեղչվում է բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության առաջադաս բաղադրիչներում և արտահայտվում միայն վերջին բաղադրիչում՝ նշելով նախադասության ավարտը: Նման զեղչումը ավելի բնորոշ է չափածո խոսքին և ունի ոճական նշանակություն. այն նպաստում է ռիթմի ձևավորմանը և հուզական հագեցվածությանը. ինչպես՝

«Դու նրանց համար այրվելով ապրում,
Մաշված մատներով նրանց պապերի
Օջախը ծխում,
Տունն էիր պահում նրանց հայրենի» (ՀՍՔ, 159):
...Ամպը լացել, հեռացել
Ու թաց հողն էր երազում» (ՎԴԱՄ, 171):

Երբեմն էլ օժանդակ բայը գործածվում է միավորյալ նախադասության առաջին և վերջին բաղադրիչներում, որոնց արտաբերման տոնը նույնն է լինում, իսկ միջադաս բաղադրիչում կամ բաղադրիչներում զեղչվում է. ինչպես՝ «Այժմ նայում էր մայրական գգվանքով, մխիթարում և երբեմն շքեղ մազերը շոյելով համբուրում էր նրան» (ԱՇՔ, 375):

բ) Բայական բաղադրյալ ստորոգյալը: Հայերենի զարգացման արդի փուլում նկատելի է բայական բաղադրյալ ստորոգյալի մասնակի զեղչման կայունանալու միտում: Սակայն այդ զեղչման ոչ ամեն մի դրսևորումն է ստեղծում թերի կառուցվածք: Միավորյալ նախադասության մեջ մասնավորապես նկատելի է բայական բաղադրյալ ստորոգյալի մասնակի զեղչման երկու արտահայտություն:

Նախ, ինչպես նշեցինք, միավորյալ նախադասության բաղադրիչները հաճախ ունենում են ընդհանուր եղանակիչ, որպիսի կառուցվածքը թերի չէ։ Օրինակ՝ «Ամբողջ մարդկությունը ցանկանում է իր տաղնապները թողնել հին տարվա հետ և վերաճորոգել իր հույսերը նոր տարվա գալստյամբ» (ԼՁ, 1.1.1979, 4)։ «Մենք փորձեցինք նրան համոզել կամ կոտրել համառությունը»։ Թերևս բացառություն է կազմում նման կառուցվածքի հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը, որի մեջ եղանակիչի զեղչումը, հակադրությանը բնորոշ հնչերանգով պայմանավորված, ավելի շատ է զգացվում. երկրորդ բաղադրիչում, անորոշ դերբայից առաջ, հնչերանգը կտրուկ իջնում է՝ նշելով եղանակիչի զեղչումը, որը գրավոր խոսքում արտահայտվում է բութով։ Համմտ. «Նրանք վճարում էին արքունի գանձարանին մի որոշյալ հարկ, պարտավորված էին որոշ թվով զորք պահել, պատերազմի ժամանակ օգնել թագավորին, իսկ խաղաղության ժամանակ՝ պահպանել տերության սահմանները» (ՐՍ, 173)։ Այս նախադասությունը, ի տարբերություն վերևի օրինակների, արդեն թերի է, որովհետև նրա վերջին բաղադրիչի արտաբերման ժամանակ ակնհայտորեն զգացվում է եղանակիչի (պարտավորված էին) զեղչումը։

Երկրորդ՝ երբ հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների միջև գործառվում է սահմանափակման հարաբերություն, առաջին բաղադրիչի բայական բաղադրյալ ստորոգյալը սովորաբար լինում է հաստատական, իսկ երկրորդ բաղադրիչինը՝ ժխտական։ Այս դեպքում ավելի հաճախ երկու ստորոգյալներն էլ ունենում են նույն բայով արտահայտված անորոշ դերբայ բաղադրիչը, որը երկրորդ բաղադրիչում զեղչվում է, բայց մտովի հասկացվում է։ Սակայն այս դեպքում անորոշ դերբայի զեղչումը «մնում է աննկատ», և նույն բաղադրիչում եղանակիչ բայը դառնում է պարզ ստորոգյալ. ինչպես՝ «Նորից փորձեց դուրսը վեր հանել, դարձյալ չկարողացավ» (Ա.Բ, 1, 302) (=չկարողացավ վեր հանել)։ «Մանուկն ուզում է Ոտքի փուշն հանել, Սակայն ոչ մի կերպ չի կարողանում...» (ՎԴԱՄ, 30) (=չի կարողանում հանել)։ Ինչպես երևում է, այս նախադասություններում անորոշ դերբայ-բաղադրիչի զեղչումն այնքան բնական է (առանց կտրական հնչերանգ ստեղծելու), որ այս կառուցվածքները պետք է դիտել իբրև լրիվ (ոչ թերի) նախադասություններ։

Նույն ձևով երբ հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչ նախադասությունների բայական բաղադրյալ ստորոգյալներն ունենում են նույն բայով արտահայտված եղանակիչ, իսկ անորոշ դերբայները՝ տարբեր բառական արտահայտություն, երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում անորոշ դերբայն արտահայտվում է, իսկ

եղանակիչը զեղչվում է՝ փոխարկվելով երբեմ, բնավ, հազիվ թե բառերով ու կապակցություններով: Այս դեպքում երկրորդ ստորոգյալը սովորաբար ունենում է ժխտական բնույթ: Օրինակ՝ «Մենք մեր սեփական ուժերով, իրավ է, պաշտպանվել կարող ենք, բայց մեր երկիրը թշնամուց խոպառ մաքրել՝ հազիվ թե» (ՐՍ, 385) [=(հազիվ թե) կարողանանք մաքրել]: *Այսպես զեղչվում է նաև միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամի մի բաղադրիչը՝ դիմավոր ձևը, որը տվյալ դեպքում ունի եղանակիչի արժեք. ինչպես՝ «— Նրան կարելի էր խնդրել, բայց երբեք՝ հրամայել» (ՄԳՄ, 195)* [=(երբեք (չէր կարելի) հրամայել)]: *Այս և նախորդ նախադասություններն արդեն թերի են: Ի դեպ, երբ նման միավորյալ նախադասության առաջին ստորոգյալը լինում է անվանական, հաջորդ ստորոգյալի եղանակիչ բայի զեղչմամբ կառուցվածքը լինում է արհեստական: Համմտ. «Ճշմարիտ է, ինքը նույնպես դժգոհ էր, բայց նզովել՝ երբեք...» (ՍՁՀՔ, 281)* [=(երբեք) չէր նզովում]: *Ստորոգյալի այսպիսի զեղչումը խորթ է արդի լեզվամտածողությանը:*

Միավորյալ նախադասության կազմում բայական բաղադրյալ ստորոգյալի մասնակի զեղչում պետք է դիտել նաև այն, երբ երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչի անորոշ դերբայը լինում է անվանական բաղադրիչով բայական հարադրություն, և դրա անվանական բաղադրիչն արտահայտվում է, իսկ բայականը՝ զեղչվում. ինչպես՝ «— ...Հայրդ... կարող է քո կարիքներին կարեկից լինել և քո ցավերին՝ ցավակից» (ՐՍ, 506) [(=կարող է ցավակից լինել)]:

գ) Առավել հաճախակի անվանական բաղադրյալ ստորոգյալը: Այս դեպքում, որպես կանոն, հիմնականում զեղչվում է հանգույցը: Տարբեր անվանական միավորյալ նախադասություններ դրսևորում են հանգույցի զեղչման տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված վերադրի խոսքիմաստային և հանգույցի բառական արտահայտությամբ, նախադասության արտահայտության ձևով (արձակ, չափածո) և այլ իրակությունների:

Գոյական և ածական վերադիրներով ստորոգյալների հանգույցի զեղչումն ավելի հաճախադեպ է: Ընդ որում, երկու դեպքում էլ հանգույցը սովորաբար գործածվում է առաջին բաղադրիչ նախադասության մեջ, իսկ մյուսում կամ մյուսներում զեղչվում է. ինչպես՝ «Սա մասնավոր դեպք չէ, այլ հասարակական երևույթ (ԱՇՔ, 218): *«Դավիթն անվախ էր, արագաշարժ և սրամիտ» (ՍԳ, 1976, № 8, 41): Ինչպես երևում է այս օրինակներից, զեղչված հանգույցով և թվարկման հարաբերությամբ միավորյալ նախադասության արտասանությունը գրեթե չի տարբերվում նույն նախադասության չզեղչված ստորոգյալով տարբերակի արտա-*

անությունից և գրավոր խոսքում չի արտահայտվում կետադրությամբ (բութով)։ Մինչդեռ հանդիպադրական հարաբերության դեպքում զեղչված հանգույցով բաղադրիչ նախադասությունն ունենում է կորական հնչերանգ, որն արտահայտում է հանգույցի զեղչված, հետևաբար նաև նախադասության թերի լինելը։ Այս դեպքում էլ հանգույցի զեղչումը գրավոր խոսքում արտահայտվում է բութով. ինչպես՝ «Դա Վահան Մամիկոնյանի երկրորդ կինն էր, իսկ Սամվելի՝ խորթ մայրը» (ՐՍ, 89)։ «...Աշխարհում մեզ դու պարզերես դարձրեցիր, իսկ ինքդ քեզ՝ Կրկին հաղթող մենամարտիկ...» (ՊՍ, 4, 168)։

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում երկրորդ բաղադրիչի հնչերանգի կորական լինելը և բութի գործածությունը պայմանավորված են բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող ներհակական հարաբերությամբ։ Անգամ այն դեպքում, երբ միավորյալ նախադասության բաղադրիչները կապված են միավորական հարաբերությամբ, իսկ արտաբերվական պլանում նրանց միջև մասամբ առկա է հակադրություն, նախադասությունը դարձյալ արտասանվում է հանգույցի զեղչումն ակնարկող հնչերանգով. ինչպես՝ «Մինչև գրեթե հիսուն տարեկան հասակը ծխական դպրոցում ուսուցիչ էր նա հայոց լեզվի և դասամիջոցներին՝ աշակերտների վրա հսկիչ...» (ԱԻ, 3, 381)։

Ծանոթություն։ Այս նախադասության բաղադրիչների միջև հակադրության առկայությունն է հավաստում նրա՝ հանդիպադրական տարբերակի հեշտությամբ փոխարկվելու հնարավորությունը։ Համմտ. «Մինչև գրեթե հիսուն տարեկան հասակը ծխական դպրոցում ուսուցիչ էր նա հայոց լեզվի, իսկ դասամիջոցներին՝ աշակերտների վրա հսկիչ»։

Սակավադեպ էլ, հատկապես չափածո խոսքում, հանգույցը զեղչվում է նախադաս բաղադրիչում կամ բաղադրիչներում և արտահայտվում է միայն վերջին բաղադրիչում՝ ամբողջացնելով թվարկումը. ինչպես՝

«Մի օր զարթնած անտառ,
Մի օր հնձած հովիտ,
Մի օր կորդ ես եղել» (ՀՍՍԲ, 8)։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ հանգույցը երբեմն արտահայտվում է առաջին և վերջին բաղադրիչ նախադասություններում, իսկ միջադաս նախադասության մեջ զեղչվում է. ինչպես՝ «Մեկի խիղճն ես եղել Ու հավատը բարու, Մեկի համար մտքի Ավուր հաց ես եղել» (ՀՍՍԲ, 231)։

Բազմաբաղադրիչ անվանական միավորյալ նախադասության մեջ հանգույցը երբեմն արտահայտվում է առաջին երկու-երեք բաղադրիչնե-

րում, իսկ մյուսներում զեղչվում է։ Նման զեղչումը ավելի շատ տարածված է չափածո խոսքում։ Բանաստեղծը դրան դիմում է ոճական նկատառումով. խոսքին հուզականություն հաղորդելու, ստորոգվող հատկանիշները ընդգծելու և, հնարավորին չափ, ստորոգելիական ավելի շատ հատկանիշներ (հետևաբար և բաղադրիչ նախադասություններ) թվարկելու համար։ (Մինչդեռ նման դեպքում հանգույցի կրկնությունը ամեն մի վերադրի հետ՝ սահմանափակում է թվարկվող բաղադրիչ նախադասությունները)։ Ահավասիկ մեկ օրինակ.

«Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թիկունքն ես մեր (1),
Մեր երգերի ծովասարը (2)
Ու բյուրակյան ակունքն ես մեր (3),
Մեր արնոտված հավքի լեզուն (4),
Մեր կարոտած ֆիդան յարը (5),
Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը (6),
Մեր երգերի խազը-նոտան-ձայնատառը (7),
Ձայնասփյուռը կենդանի (8)
Ու ձայների թանգարանը (9),—
Մեր հայկական երգարանը... (10) (ՊՍ, 4, 239)։

Այս միավորյալ նախադասության տասը բաղադրիչ նախադասություններից ընդամենը երկուսում է հանգույցը արտահայտված (թիկունքն ես, ակունքն ես), իսկ մյուսներում զեղչված է։ Եվ այդ զեղչումը այնքան բնական է ու պատճառաբանված, որ բաղադրիչ նախադասություններում հանգույցի (ես) «վերականգնումը» հանճարեղ բանաստեղծի անմահ պոեմի այս հատվածը զրկում է իր շքեղ փայլից։

Երբեմն միավորյալ նախադասության մի բաղադրիչում զեղչված հանգույցը մյուս բաղադրիչում արտահայտված հանգույցը չէ։ Ավելի հաճախ դրանք լինում են նույն հանգույցի հատատատական և ժխտական ձևերը։ Դա առավել բնորոշ է ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությանը. ինչպես՝ «Դիսերտացիոն աշխատանքները չպետք է լինեն ինքնանպատակ, այլ գիտական հետազոտությունների տրամաբանական ամփոփում (ԺԺ, 9, 431) (=այլ պետք է լինեն... ամփոփում)։

Նշենք նաև, որ գոյական և ածական ստորոգելիներով միավորյալ նախադասության մեջ հանգույցը երբեմն էլ բոլոր բաղադրիչ նախադասություններում արտահայտվում է՝ ստորոգելիներն առանձին-առանձին ընդգծելու, շեշտելու համար. ինչպես՝ «...բայց բանտում օրերը **տարիներ են, դարեր են, երբեմն հավերժություն են»** *(Ահ, 3, 319)։*

Հանգույցը զեղչվում է նաև տարբեր խոսքի մասերով արտահայտված տոպոգելիներով բաղադրված միավորյալ նախադասության մեջ. ինչպես՝ «Մանկությունից եղել ես մտածող ու աչքաբաց» (ԱՇՔ, 4, 150)։ «Ընտրածիններին մկրտող հավոր էր, պսակվողների գլխին՝ խաչ բռնող, դարիբությունն գնացողին՝ բարի ճանապարհ, վերադարձողին առաջինը բարի գալուստ մաղթող էր» (ՀՔ, 1, 469—470)։

Ավելացնենք նաև, որ հանգույցի զեղչումը հաճախ էլ պայմանավորված է լինում անվանական տոպոգյալի ժխտական բնույթով։ Այս դեպքում հանգույցը կարող է զեղչվել և երբեմ-ով փոխարինվել նաև առանց առաջին տոպոգյալի ժխտականը լինելու։ Դա հանդիպում է հատկապես «պարզ տոպոգյալ+անվանական տոպոգյալ» կառուցվածքի միավորյալ նախադասության մեջ. ինչպես՝ «Նա հուսալքված, մոլորված է, բայց դավաճան՝ երբեմ» (ՍեՄՍ, 3, 388) (=դավաճան չէ)։

Իսկ երբ միավորյալ նախադասությունը բաղադրված է լինում նույն անվանական տոպոգյալի հաստատական ու ժխտական ձևերով, և ժխտական տոպոգյալն էլ լինում է նախադաս, զեղչումը հիմնականում բացառվում է. ինչպես՝ «Մենք պատասխանատու չենք մեր մեջ արթնացած ղգացումի, տենչի համար, բայց պատասխանատու ենք այն կատարածելու, իրականացնելու մեջ» (ԱՒ, 3, 399)։

Զեղչված անվանական տոպոգյալներով միավորյալ նախադասության մասին մեր խոսքը ամբողջացնելու նպատակով համառոտակի անդրադառնանք անհանգույց միավորյալ նախադասություններին։ Դրանք այնպիսի կառույցներ են, որոնք ընդհանրապես հանգույց չունեն, թեև մտովի կարող ենք վերականգնել։ Ընդհանրապես անհանգույց նախադասությունները (պարզ, բարդ համադասական և այլն) արդի հայերենում, մասնավորապես գեղարվեստական գրականության մեջ, շատ տարածված են։ Լնդլաբանական գրականության մեջ նրանց գոյությունը արձանագրվել է, միայն թե տրվել են տարբեր մեկնություններ։ Տարակարծությունները առկա են ինչպես ռուս, այնպես էլ հայ քերականագիտության մեջ։ Ռուս շարահյուսագիտներից Գալկինա-Ֆեդորուկը այդպիսի տոպոգյալները դիտում է իբրև սրո հանգույցով անվանական բաղադրյալ տոպոգյալներ։ Նա գրում է. «Առանց հանգույցի, լոկ մի վերադրով տոպոգյալը նույնպես անվանական բաղադրյալ տոպոգյալ է, սակայն սրո հանգույցով, որի բացակայությունը ծառայում է իբրև ներկա ժամանակի հատկանշի արտահայտություն։ Այդպիսի տոպոգյալը ավելի նպատակահարմար է բաղադրյալ համարել նրա համար, որ այն հարաբերակցվում է հանգուցատիպ տոպոգյալներին...» (168, էջ 155)։ «Русский язык» ձեռնարկի հեղինակները՝ Ա. Զեմսկին, Ս. Կրուչկովը և Մ. Սվետլաևը, հետևելով Գալկինա-Ֆեդորուկին, հանգույցի բացակայու-

թյունը համարում են ներկա ժամանակի դրսևորման ցուցիչ՝ դրո ցուցիչ, իսկ համապատասխան անհանգույց ստորոգյալները՝ անվանական բաղադրյալ ստորոգյալներ (տե՛ս 141, էջ 22—24)։ Նրանք այդպիսի ստորոգյալների ամենաբնորոշ առանձնահատկությունն են դիտում արտասանական դադարը։

Քննության առարկա ստորոգյալները այլ ձևով են գնահատվում ռուսաց լեզվի ակադեմիական քերականության մեջ։ Այստեղ դրանք դիտվում են իբրև պարզ անվանական ստորոգյալներ (տե՛ս 135, էջ 414—420)։

Հայ շարահյուսագիտության մեջ նույնպես անդրադարձվել է անհանգույց անվանական ստորոգյալների քննությանը։ Այստեղ դրեթե նույն կարծիքներն են արտահայտվել, որպիսիք առկա են ռուսաց լեզվի քերականագիտության մեջ։ Մեզանում այս հարցին առաջինը հանգամանորեն անդրադարձել է պրոֆ. Վ. Առաքելյանը։ Նա, քննելով այդպիսի ստորոգյալների առաջացման պատճառներն ու գործածության պայմանները, դրանք դիտում է պարզ անվանական ստորոգյալներ (տե՛ս 27, էջ 150—151)։ Իսկ դոցենտ Ա. Քյուրքչյանը այդպիսի ստորոգյալները անվանում է անհանդույց կամ դրո հանգույցով անվանական բաղադրյալ ստորոգյալներ (տե՛ս 104, էջ 10) և դրանք տարբերակում է անվանական ստորոգելիով ու բայական հանգույցով կազմված ստորոգյալներից, որպիսիք էլ կազմում են բայանվանական բաղադրյալ ստորոգյալներ (նշ. տ., էջ 11—31, նաև՝ 105, էջ 181, 189)։

Ինչպես տեսնում ենք, անհանգույց անվանական ստորոգյալների գնահատման հարցում կան տարակարծություններ։ Այդ կարծիքները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝

ա) անհանգույց անվանական ստորոգյալները պարզ անվանական ստորոգյալներ են.

բ) անհանգույց անվանական ստորոգյալները անվանական բաղադրյալ ստորոգյալներ են։

Մեր կարծիքով՝ առավել ընդունելին վերջին տեսակետն է, և դա հետևյալ պատճառով։ Նախ՝ նման անուն բառերը ստորոգյալի գործառույթ են ձեռք բերում, որովհետև միշտ մտովի ըմբռնվում է դրանց բայական հանգույցի գոյությունը, ճիշտ այնպես, ինչպես միակազմ անվանական «նախադասություններում են թաքնվում է գործողության կամ եղելության իմաստ, թեև նրանցում բայական բաղադրիչ չկա» (12, էջ 259)։ Ինչպես միակազմ անվանական նախադասության մեջ ստորոգումը իրացվում է հնչերանգով, և ամեն մի բառ կամ բառերի կապակցություն նախադասություն է դիտվում իր հնչերանգային ստորոգման շնորհիվ, նույն ձևով էլ երկկազմ նախադասության մեջ անհանգույց անվանական ստո-

րոգևլինները ստորոգյալ են ըմբռնվում իրենց դիմային նշանակությամբ (մասնավորապես պետք է շեշտել դրանց ընդհանրական ներկայի իմաստը)։

Երկրորդ՝ տվյալ դեպքում հանգույցի զեղչումը չի բացառում ստորոգումը. դրանցով հաստատվում կամ ժխտվում է հատկանշի առկայությունը, և միաժամանակ դրսևորվում է խոսողի վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ։

Այնուհետև. քանի որ այդպիսի վերադիրների չարտահայտված հանգույցը մտովի ըմբռնվում է և կարելի է վերականգնել, նշանակում է այդ ստորոգյալները նույնպես պետք է դիտել իբրև անվանական բաղադրյալ ստորոգյալներ, միայն այն տարբերությամբ, որ դրանց հանգույցը պարզապես զեղչված է։ Հետևաբար այդպիսի նախադասություններն էլ զեղչված հանգույցով անվանական նախադասություններ են։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ հաճախ, հատկապես չափածո խոսքում, անհանգույց է լինում նաև միավորյալ նախադասությունը։ Սա հանդիպում է մասնավորապես այն դեպքում, երբ խոսողը (կամ հեղինակը) ներկայացնում է միևնույն առարկայի կամ առարկաների կյանքի, անփոփոխ վիճակները իրեն ստորոգվող հատկանիշներ։ Այդ դեպքում հատկանիշների վերագրումը առարկային (կամ առարկաներին) նման պլան է մղվում։ Օրինակ՝

> *«Գարնան ամպրոպը՝*
> *Շանթի շեկ մոլուցք*
> *Եվ արցունք բարի» (ՎԴԱՄ, 134)։*

Սա արտաքուստ նման է միակազմ միավորյալ նախադասությանը, սակայն երկկազմ կառուցվածքի է, քանի որ նրանում սոսկ երկու անգամ զեղչված է նույն է հանգույցը, որը հեշտությամբ կարող ենք վերականգնել, և դրանից իմաստն ու կառուցվածքը չեն տուժի, միայն խախտվում է չափածո խոսքի ռիթմը, և այդ խոսքը հակվում է դեպի արձակ արտահայտությունը։ Համմտ. «Գարնան ամպրոպը շանթի շեկ մոլուցք է և արցունք (է) բարի»։

Անհանգույց ստորոգյալներով միավորյալ նախադասությունների առկայությունը պայմանավորված է լինում համատեքստային մի շարք հանգամանքներով։ Ամենից առաջ դա հանդիպում է այն դեպքում, երբ տվյալ միավորյալ նախադասությունը համատեքստում ունի իրեն նախորդող մի այլ միավորյալ նախադասություն, որի ենթական նույնն է, իսկ ստորոգյալներն ունեն հանգույց։ Այս երկրորդ միավորյալ նախադասության մեջ հանգույցի (հանգույցների) զեղչումը կրկնությունից խուսափելու հետևանք է. ինչպես՝

«Եվ այդ ղրույցը գանգատ է ու բեն...
Եվ այդ ղրույցը՝
Գեղարդյա վանքի կամարների տակ
Դարեր տվայտող նույն տատապանքը,
Հրե արցունքով լացող նույն մոմը,
Բեկված խաչքարի նույն տխրությունը
Եվ Արտամետի
Հին խնծորենու ծաղկաթերթերի
Նույն սուգն սպիտակ... (ՎԴԱՄ, 129)։

Անհանգույց միավորյալ նախադասությունը կարող է լինել նաև տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության երկրորդ (կամ հաջորդ) եղրը։ Այս դեպքում միավորյալ նախադասություն-բաղադրիչի հանգույցի զեղչումը պայմանավորված է լինում համադասական նախադասության առաջին բաղադրիչում դրա առկայությամբ. ինչպես՝ «Երկինքը փակ է հավետ, երկիրը՝ դառն ու դաժան...» (ՎՏ, 2, 10)։ «Բայց բոլոր խոսքերը իզուր են արդեն, Թալիսմաններդ մեռած և անուժ...» (ՎՏ, 1, 80)։ Սակավադեպ անհանգույց միավորյալ նախադասությունը տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության վերջին եղր է դառնում առանց համադասական կապակցության առաջին մասում նույն հանգույցի արտահայտության. ինչպես՝ «Անցնում է անօթևան երկրում այն միշտ հյուրասեր, Անցնում է դյուլ ու ավան, Բոլորը— լուռ ու ավեր» (ՎՏ, 2, 64)։

Երբեմն էլ անհանգույց միավորյալ նախադասությունը ինքնուրույն է լինում։ Այս դեպքում նրա գոյությունը պայմանավորվում է խոսքի ընդհանուր շղթայով, մասնավորապես նրան նախորդող նախադասությամբ կամ նախադասություններով, որոնց հանգույցը մտովի տարածվում է նաև միավորյալ կառույցի վրա. ինչպես՝

. «Հետո դարձա՝ կրկին։ Այնքան մութ էին
Խոսքերդ այն գիշեր։ Մութ ու առօրյա» (ԵՉ, 1, 277)։

«Նա մերթ Սխտոր քարումն էր, մերթ Անդոկի լանջերին, մերթ ճանճիկի անդամ և մերթ Բրիմոյի ցից ժայռերի վրա։ Միշտ գեներ ձեռքին և Մարքայիս մեջքին կապած» (ԽՈՒՆԿ, 299)։

Իսկ երբ միավորյալ նախադասությունն ունենում է «անհանգույց անվանական ստորոգյալ+բայական ստորոգյալ» կառուցվածքը, հանգույցի զեղչումը պայմանավորված է լինում հաջորդ բաղադրիչում բայական ստորոգյալի դիմային ցուցիչի առկայությամբ. ինչպես՝ «Արաղը ծով, Արաղը ելման, Դուրս է եկել իր ափերից» (ՀՔ, 142)։

3. Սակավադեպ էլ միևնույն բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ միաժամանակ առկա են լինում ստորոգյալների ամբողջովին և մասամբ զեղչումները. ինչպես՝ «Երազի պես սարից գալիս, Երազի պես անցնում ձորով,— Ձորին շողք ու շուք է տալիս, Ջրաղացին՝ երգ ու կորով» (ՀՍՔՆ, 166)։ Այս նախադասության առաջին երկու բաղադրիչներում զեղչված է հանդույցը (է), իսկ վերջին բաղադրիչում՝ տալիս է պարզ ստորոգյալը։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ[8]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նախադասության անդամների կրկնությունը ժամանակակից հայերենում շատ տարածված է։ Այն հիմնականում կատարվում է ոճական նկատառումով և գործածվում է առօրյա-խոսակցական, գեղարվեստական ու հրապարակախոսական ոճերում։ Կրկնվում են նախադասության գրեթե բոլոր անդամները, միայն թե ամեն մի անդամի կրկնությունն յուրովի է ազդում նախադասության կառուցվածքի վրա։ Այդ տեսակետից էլ ստորոգյալի կրկնությունը (իհարկե, ոչ բոլոր դեպքերում) էապես **տարբերվում է նախադասության մյուս անդամների կրկնությունից։ Եթե** մյուս անդամների կրկնությունը հիմնականում ոճական նշանակություն ունի, ապա ստորոգյալի կրկնությունը ավելի հաճախ փոխում է նախադասության կառուցվածքը՝ պարզ նախադասությունը փոխակերպելով բարդ համադասական (ավելի կոնկրետ՝ միավորյալ) նախադասության։

Ստորոգյալի կրկնությունը քննվել է տարբեր տեսանկյուններից։ Ժամանակակից ռուս շարահյուսագետները քննում են հիմնականում պարզ ստորոգյալի կրկնությունը՝ այն համաբերելով այդ ստորոգյալի բարդացված ձևերից մեկը (տե՛ս 135, էջ 403—404. 172, էջ 503. 123, էջ 319. 132, էջ 62. 169, էջ 36—37. 121, էջ 170—171)։ Սովետահայ լեզվաբանության մեջ ստորոգյալի կրկնությանը առաջինը անդրադարձել է պրոֆ. Վ. Առաքելյանը՝ քննության առնելով պարզ ստորոգյալի կրկնության ձևերը և դրանց ոճաիմաստային նշանակությունները (տե՛ս 27, էջ 107—111)։ Պրոֆ. Ն. Պառնասյանը ստորոգյալի կրկնությունը դիտում է որպես շարահարական բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցմանը նպաստող բառական միջոց (տե՛ս 84, էջ

---

8 Այս կառույցի ու նրա ոճական նշանակության համակողմանի քննությունը տե՛ս 59, էջ 13—19. էջ 31—46։

43—44)։ Պրոֆ. Ա. Աբրահամյանը, անդրադառնալով արդի հայերենի կերպավորության վերլուծական դրսևորումների բնութագրմանը, կերպավորության դրսևորումներից մեկն էլ համարում է պարզ ստորոգյալի կրկնությունը (տե՛ս 6, էջ 10—16)։

Ինչպես նկատելի է, թե՛ ռուս և թե՛ հայ շարահյուսագիտության մեջ քննվել է հիմնականում պարզ ստորոգյալի կրկնությունը և այն էլ ոչ համակողմանիորեն։ Ակնբախ է, որ կրկնվում է ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ստորոգյալը՝ պայմանավորելով նախադասության կառուցվածքային, մասամբ նաև իմաստային ու ոճական մի շարք առանձնահատկություններ։

Արդ՝ ստորոգյալի կրկնությամբ կազմված նախադասությունը պա՞րզ է, թե՞ բարդ։

Ստորոգյալի կրկնված ձևերը տարբեր ենթակաների հետ գործառվելու դեպքում ստանում են ինքնուրույն ստորոգյալների գործառույթ, և այդպիսի նախադասության՝ տարբեր ենթականերով բարդ համադասական կապակցությունն լինելն էլ կասկած չի հարուցում. ինչպես՝ «Քնած է երկիրը, քնած է քամին» (ՀՔ, 2, 14)։ Բայց երբ ստորոգյալի կրկնությունն արտահայտվում է ընդհանուր ենթակայի հետ, նախադասության կառուցվածքի ըմբռնման հարցում առաջանում է երկվություն, որը հաղթահարելու համար ամենից առաջ պետք է պարզել՝ միևնույն ենթակայի հետ ստորոգյալի բոլոր կրկնությունները մեկ բառաքերականական արժեք ունեն, թե՞ դրանք ինքնուրույն ստորոգային միավորներ (ստորոգյալներ) են։ Վերը նշված ռուս մասնագիտական գրականության մեջ ընդհանուր ենթակայի հետ պարզ ստորոգյալի բոլոր կրկնությունները դիտվում են որպես մեկ պարզ ստորոգյալ, իսկ ամբողջ նախադասությունը՝ պարզ նախադասություն։ Այս հարցին ժամանակակից հայ շարահյուսագիտության մեջ գրեթե չի անդրադարձվել։ Բացառություն է կազմում միայն պրոֆ. Վ. Առաքելյանի հետևյալ դիտողությունը. «Եթե ստորոգյալը կրկնվում է նախադասության տարբեր անդամների շրջապատում, ապա այդպիսի կրկնվող ստորոգյալները պետք է դիտել որպես անկախ ստորոգյալներ» (15, էջ 167)։ Դա նշանակում է, որ նախադասության տարբեր անդամների հետ կրկնվող ստորոգյալներն ինքնուրույն ստորոգյալներ են, իսկ այդպիսի նախադասություններն էլ կազմությամբ բարդ են։

Կրկնվող ստորոգյալների ինքնուրույնությունը, բառական տարբեր շրջապատներից բացի, պայմանավորված է լինում նաև մի շարք այլ հանգամանքներով։ Ընդհանրապես միևնույն ենթակայի հետ ստորոգյալի կրկնությունը կարող է նախադասության կառուցվածքը փոխել կամ չփոխել՝ նայած թե միևնույն ստորոգյալի կրկնությունները բառաքերա-

կանական ինքնուրույնություն ունե՞ն, թե՝ ոչ։ Դրանում համոզվելու համար դիտարկենք հետևյալ օրինակները.

1. «կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում Մեկը կարոտի իրիկնամուտին» (ՆՉ, 1, 37)։ «Իսկ ես խոսում եմ, խոսում եմ, խոսում» (ՊՍ, 1, 314)։ «Ոչ ուրիշի թևերով, Այլ սեփական թևերով ես լողայի, լողայի Բաց կապույտի մեջ» (ՀՍՍՌ, 138)։

2. «Երգում էին բլբուլները՝ գորշ զգեստ հագած և լուսեղեն աչուկներով. երգում էին իրենց դյութական ոտքայթները սիրո կրակով կրակված, — ու երգում էին Սաադիի սրտի մեջ» (ԱԻ, 3, 72)։ Ասպետ և սպասավոր խմում էին Արտյուրի արևապաշտության և ազնիվ քաջության համար, խմում էին երկու անդավաճան ընկերների սիրո անվախճանության համար» (նշ. տ., 175)։ «Առաքելը պատմում էր իրենց կյանքը, թափառումները հայրենիքից զրկվելուց հետո, պատմում էր մահերի ու ծնունդների մասին...» (ՀՔ, 1, 405)։

Այս երկու խմբի նախադասություններից առաջինները պարզ են, իսկ երկրորդները՝ բարդ հետևյալ պատճառներով։

Առաջին. բերված երկու շարքի նախադասություններում ստորոգյալները կրկնվում են տարբեր նպատակադրումներով։ Առաջիններում դրանք կրկնվում են սոսկ կերպավորման նպատակով և նախադասությունների կառուցվածքը չեն փոխում, իսկ կերպավորությունը, որ բային բնորոշ միջմակարդակային կարգերից է, ամենից առաջ ընդգծում է գործողությունը, մասամբ նշում նաև տևականությունը, անընդհատականությունը, նաև հուզական լիցք է հաղորդում խոսքին։ Մինչդեռ հաջորդ շարքի նախադասություններում ստորոգյալները կրկնվում են այլ նպատակներով՝ պայմանավորված բառական տարբեր միջավայրերում դրանց գործածությամբ։ Այստեղ կրկնված ստորոգյալների՝ տարբեր լրացումներ ունենալը (1-ին և 3-րդ օրինակներ) կամ նույն կարգի, համասեռ լրացումներն ընդգծելու նպատակով դրանցից յուրաքանչյուրի հետ առանձին գործածվելը (2-րդ օրինակ) ուժեղացնում են նրանց ինքնուրույնությունը իմաստային ու քերականական տեսակետից։

Երկրորդ. կրկնվող հատկանիշը առաջին շարքի նախադասություններում տվյալ առարկային վերագրվում է միևնույն, իսկ հաջորդ նախադասություններում՝ տարբեր հանգամանքներում (տեղ, ժամանակ, նպատակ և այլն)։

Երրորդ. Եթե առաջին խմբի օրինակներում կրկնված ստորոգյալները շարադասվում են իրար մոտ ու արտաբերվում են առանց տևական դադարի, որը նրանց ավելի է զրկում բառաքերականական ինքնուրույնությունից, ապա երկրորդ շարքի նախադասություններում կրկնված ստո-

րոգյալների՝ իրարից հեռու գործածվելը ավելի է մեծացնում նրանց բառական ու շարահյուսական ինքնուրույնությունը։

Չորրորդ. շարադասությամբ պայմանավորված՝ առաջին խմբի ստորոգյալները չեն սահմանազատվում հնչերանգային տևական դադարով. դրանք չունեն բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններին բնորոշ որոշակիորեն ինքնուրույն հնչերանգը և, ընդհակառակն, միավորվում են պարզ նախադասության բաղմակի անդամներին բնորոշ սովորական թվարկման հնչերանգով։ Մինչդեռ երկրորդ շարքի նախադասություններում կրկնված ստորոգյալներն իրենց լրացումներով ստանում են հնչերանգային առանձնացում. արտաբերվում են բարդ համադասական նախադասության բաղադրիչներին բնորոշ իջնող-բարձրացող հընչերանգով։

Այսպիսով՝ երբ ընդհանուր ենթակայի կրկնված ստորոգյալները շարադասվում են իրար մոտ և միասին ցույց տալիս միևնույն գործողությունն իր տևականության մեջ ու ստանում են նույն լրացումը կամ լրացումները[9], այդ դեպքում չեն ունենում բառաքերականական ինքնուրույնություն և, հետևաբար, կազմում են մեկ բարդացված ստորոգյալ, իսկ ամբողջ նախադասությունը՝ պարզ նախադասություն։ Նման կառուցվածքում ստորոգյալի կրկնությունն ունի սոսկ կերպավորման նպատակ։ Իսկ երբ ընդհանուր ենթակայի ստորոգյալի կրկնված ձևերը իրարից հեռու են շարադասվում, գործածվում են տարբեր բառական միջավայրերում, արդեն ձեռք են բերում անկախություն ու ինքնուրույնություն և նմանվում են տարբեր բառերով արտահայտված ստորոգյալներին։ Միևնույն ստորոգյալի այդպիսի կրկնությունները ինքնուրույն ստորոգյալներ են, իսկ նման կրկնությամբ կազմված նախադասությունը բարդ է, տվյալ դեպքում՝ միավորյալ։

Ստորոգյալի կրկնությամբ կազմված միավորյալ նախադասություններն ունեն կառուցվածքային ու իմաստային մի շարք առանձնահատկություններ։ Երկբաղադրիչ կառուցվածքում ստորոգյալը կրկնվում է երկու, իսկ բազմաբաղադրիչում՝ երկուսից ավելի անգամ. ինչպես՝ «Նա սիրում էր ընդարձակություն, սիրում էր ազատություն» (ՐՍ, 485)։ «Հայկը և Դավիթը աշխատում են միասին, աշխատում են ոգևորությամբ, աշխատում են բոլորի հոգատար ուշադրության պայմաններում»։ Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունը հաճախ կազմվում է երկու տարբեր ստորոգյալների կրկնությամբ. ինչպես՝ «Որմիդդուխտը

---

9 Կրկնվելիս ստորոգյալը կարող է նաև լրացում չստանալ. ինչպես՝ «Մնում՝ մնա՜վ աղջիկս» (ՍԳՀՐ, 59)։

կարմրեց, գունաթափվեցավ, դարձյալ կարմրեց, դարձյալ գունաթափվեցավ» (ՐՍ, 130)։

Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությանը նույնպես բնորոշ են բաց և փակ կառուցվածքները։ Բաց կառուցվածք ունեն միավորական հարաբերությամբ նախադասությունները, որոնցում ստորոգյալը կարող է նորից կրկնվել։ Այսպես՝ «Նայեցին իրար, նայեցին նրան» (ԵՂ, 2, 45) երկբաղադրիչ կառուցում ստորոգյալը կարող է նորից կրկնվել՝ երկբաղադրիչ կառուցվածքը փոխարկելով բազմաբաղադրիչի. ինչպես՝ «Նայեցին իրար, նայեցին նրան, հետո նայեցին դիմացի սարերին»։ Փակ կառուցվածք ունեն հիմնականում ներհակական հարաբերությամբ երկբաղադրիչ միավորյալ նախադասությունները, որոնց կազմում ստորոգյալը մեծ մասամբ չի կարող նորից կրկնվել. ինչպես՝ «Նրան մի քանի օր առաջ էին բերել այստեղ, բայց բերել էին արդեն կիսամեռ» (ՍԱՃՀ, 23)։

Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների ինքնուրույնությունն ու կապի սերտությունը տարբեր են լինում՝ պայմանավորված այդ բաղադրիչների միջև գործառվող շարահյուսական հարաբերությամբ, բայական լրացումների բնույթով, ստորոգյալների կրկնության ձևով և այլ հանգամանքներով։ Կրկնված ստորոգյալների (ու նրանց լրացումների), որպես բաղադրիչ նախադասությունների, անկախության աստիճանը մեծապես պայմանավորված է նրանց շարահյուսական հարաբերությամբ։ Ներհակական հարաբերության դեպքում ստորոգյալների ինքնուրույնությունն անհամեմատ մեծ է. ինչպես՝ «Արամն ու Հայկը պատմեցին կատարվածի մասին, սակայն պատմեցին ոչ հանգամանորեն»։

Միավորական հարաբերությամբ կառուցվածքում կրկնվող ստորոգյալները կապի սերտության ու ինքնուրույնության տեսակետից տարբեր յուրահատկություններ են հանդես բերում։ Նախ՝ բայական լրացումները թվով շատ և արտահայտության ծավալով մեծ լինելու դեպքում կրկնվող ստորոգյալները (իրենց լրացումներով) արտաբերվում են տևական դադարով, որը գրավոր խոսքում արտահայտվում է միջակետով. ինչպես՝ «Ես ևավատացել եմ աստծուն և բնությանը. ևավատացել եմ աղնվության հաղթանակին՝ վատի նկատմամբ» (ԷՂԴՀ, 52)։ Իսկ ստորոգյալների անկախությունը նվազ լինելու դեպքում դրանց միջև դադարը կարճատև է լինում, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով. ինչպես՝ «Նա ծածկեց Սամվելից և նրա հորեղբոր՝ Վասակի չարաչար մահը Շապուհից, ծածկեց և Արշակ թագավորի աքսորվելը...» (ՐՍ, 48)։

Այնուհետև, տարժամանակության դեպքում կրկնված ստորոգյալների ինքնուրույնությունն ավելի է մեծանում, իսկ գա առկա է, երբ՝

ա) նախադասության մեջ գործածվում են ժամանակի դրսևորման բառական միջոցներ, բ) ստորոգյալի երկրորդ (և հաջորդ) կրկնության հետ գործածվում են հատկանշի չափը նրա կրկնվելու նշումով արտահայտող չափի մակբայներ (նորից, վերստին, կրկին, դարձյալ), գ) կրկնված ստորոգյալները ընդհատվում են այլ ստորոգյալով ու նշված չափի մակբայներով, դ) նույն գործողությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարաբերում է տարբեր առարկայի կամ կատարվում է տարբեր հանգամանքներում, ե) կրկնված ստորոգյալներն ստանում են տարբեր լրացումներ, կամ այս վերջիններն արտահայտվում են ստորադաս նախադասությամբ։ Օրինակներ ա) «Նայեցին դեպի վերև, ետո լուռ ժպիտով նայեցին միմյանց երեսին» (ՐՍ, 401)։ բ) «Նա երեկոյի սկզբում կատարեց Կոմիտասի «Կռունկը», երեկոյի վերջում նորից կատարեց «Կռունկը»։ գ) «Հափշտակված էր վիլիե դրախտի տեսարաններով. անթարթ նայում էր շուրջը, ետ դառնում և նորից նայում» (ԱԻ, 3, 194)։ դ) «Մի քիչ հետո ուշքի գալով, բաց արեց աչքերը, նայեց առաստաղին, նայեց ճեխիմին, (ԱԱՃՀ, 170)։ ե) Դարձավ իր կովից իշխան Թաթուլը, Դարձավ հաղթական իրեն զորի ետ...» (ՀՔ, 252)։ «Այն ժամանակ նա կարծում էր, թե այդ մարդու սերը կարող էր լինել անշեջ, կարծում էր նաև, որ ան֊ա գտավ վաղուց որոնած մեկին» (ԱՇՔ, 271)։ Ինչպես տեսնում ենք, միավորյալ նախադասության բաղադրիչները տարժամանակությամբ կապվելու դեպքում միևնույն ստորոգյալի կրկնությունները ցույց են տալիս նույն գործողության կատարումն իրար հետևից, որոշ ընդմիջումներով, որ համարժեք է տարբեր գործողություններին։

Ավելացնենք նաև, որ ստորոգյալի նմանակությամբ կրկնվում է նաև բայական դերադաս անդամը՝ կազմելով միակազմ միավորյալ նախադասություն. ինչպես՝ «Ինչո՞ւ մնալ, ո՞ւմ համար մնալ» (ԱԻ, 3, 351)։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության մեջ ստորոգյալը կրկնվում է տարբեր ձևով։ Այսպես, օրինակ, «Մարդկանց հետ իրենց սև բախտն են կիսել, Սև օրն են կիսել ու բախտը սպիտակ» (ՀՍՍՐ, 206), «Արդեն հարյուր հազար համբարձումներ են եկել ու գալիս են» (ՎՊՀԲԱ, 142) նախադասություններից առաջինում կիսել են ստորոգյալը երկրորդ անգամ կրկնվել է նույնությամբ, իսկ հաջորդում արտահայտվել են նույն բայ֊ստորոգյալի տարբեր քերականական ձևերը՝ սահմանական եղանակի վաղակատարը և ներկան, այսինքն՝ այստեղ ստորոգյալը կրկնվել է մասամբ։ Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասու֊

թյունը երբեմն էլ համատեղում է ստորոգյալի կրկնության երկու ձևերը՝ լրիվ և մասնակի կրկնությունները. ինչպես՝ «Դու խոնարհդածում ես բնության մասին, խոնարհդածում ես կյանքի հավերժության շուրջը և ընդմիշտ պետք է խոնարհդածես»:

Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությունները դասակարգելիս պետք է հաշվի առնել ստորոգյալի կրկնության տարբեր ձևերը և դրանց զուգակցումը: Ըստ այդմ էլ նման միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք խմբի.

ա) ստորոգյալի լրիվ կրկնությամբ միավորյալ նախադասություններ.

բ) ստորոգյալի մասնակի կրկնությամբ միավորյալ նախադասություններ.

գ) ստորոգյալի լրիվ և մասնակի կրկնության համատեղմամբ միավորյալ նախադասություններ:

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԻՎ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորոգյալի լրիվ կրկնությամբ միավորյալ նախադասությունն ավելի հաճախադեպ է: Այս կառուցվածքում ստորոգյալը կրկնվում է նույնությամբ, լրիվ չափով: Ընդհանին, ստորոգյալի բոլոր տեսակները հավասարաչափ չեն կրկնվում: Միավորյալ նախադասության մեջ լրիվ կրկնվում է.

1) Ավելի հաճախ պարզ ստորոգյալը: Վերջինս կրկնվում է տարբեր ձևով՝ դրսևորելով միավորյալ նախադասության ոճական, մասամբ նաև կառուցվածքային ու իմաստային տարբեր առանձնահատկություններ: Պարզ ստորոգյալի կրկնության ձևերից մեկը երկանդամ կրկնությունն է՝ երկու տարբեր ստորոգյալների միաժամանակյա կրկնությունը: Այս դեպքում բաղադրիչ նախադասությունները կապակցվում են և, ու միավորիչ շաղկապներով կամ շարահարությամբ, իսկ գործողության կիրպավորությունը, մասնավորապես տևականությունը, ընդգծված է արտահայտվում. ինչպես՝ «Մինչև մութն ընկնելը քուրդ Նադոյի բնակատեղում պատիվներ արին Առաքելին, լռեցին ու խոսեցին, լռեցին ու խոսեցին ու երեկոյան կողմ ձիերը հեծած անհետացան» (ՀՔ, 1, 411): Գործողություններից մեկի տևականությունն ավելի է ընդգծվում, երբ տվյալ ստորոգյալը վերջին կամ նախավերջին բաղադրիչում փոխում է իր շարադասությունը: Այս դեպքում մասամբ փոխվում է նաև բաղադրիչների ներքին-մտային փոխհարաբերությունը. օրինակ՝ «Նստում են իմաստունները ու մտածում, մտածում են ու նստում...» (Սհվ, 6):

Հաճախ պարզ ստորոգյալը կրկնվում է իր լրացումներով՝ ընդգծելով դրանց բառական նշանակությունը: Այդ լրացումները կարող են լի-

նել նաև համանիշ ձևեր. ինչպես՝ «Բայց հասակ է առել, հասունացել ինձ հետ, Հասունացել ինձ հետ՝ լոկ մի քառորդ դարում» (ՊՍ, 1, 35)։ «Երկյուղ չունեմ, աի չունեմ ես» (ԼՔ, 59)։

Կրկնվող պարզ ստորոգյալը լրացում կարող է ունենալ միավորյալ նախադասության կա՛մ միայն մեկ բաղադրիչում՝ սովորաբար երկրորդում (կամ հաջորդում) և կա՛մ էլ բոլոր բաղադրիչներում։ Դրան համապատասխան պարզ ստորոգյալի լրիվ կրկնությամբ միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) միայն մեկ բաղադրիչում լրացում ունեցող միավորյալ նախադասություններ և բ) բոլոր բաղադրիչներում լրացում ունեցող միավորյալ նախադասություններ։ Առաջին դեպքում պարզ ստորոգյալը միավորյալ նախադասության նախադաս բաղադրիչում գործածվում է առանց լրացման, իսկ երկրորդ (երբեմն նաև հաջորդ) բաղադրիչում՝ լրացման հետ։ Այս դեպքում ստորոգյալի երկրորդ կրկնության նպատակը ընդհանուր գործողության մասին հաղորդումը այդ գործողության որևէ հանգամանքին կամ նրա հետ կապված առարկային վերաբերող լրացուցիչ տեղեկությամբ հարստացնելն է։ Նվ տրամաբանական շեշտը ընկնում է հենց այդ լրացման (կամ լրացումների) վրա. ինչպես՝ «Նվ այժմ նա հոր դագաղի առջև լալիս էր և լալիս էր արցունքներ թափելով սոսի մեջ» (ԱՇՔ, 19)։ «...Հայրս գալիս է և գալիս է հայոց սպարապետի պաշտոնով» (ՐՍ, 61)։

Երբեմն առաջին բաղադրիչում էլ ստորոգյալն ունենում է լրացում, բայց դրան կարևորություն չի տրվում, և դարձյալ ընդգծվում է ստորոգյալի երկրորդ կրկնության լրացումը։ Առաջին բաղադրիչի լրացումը ավելի հաճախ լինում է ընդհանուր անդամ և, բնականաբար, չի ընդգծվում. օրինակ՝ «Նա կպատժի կնոջը և կպատժի շառաչար» (ԱՇՔ, 154)։ Այստեղ կնոջը ընդհանուր ուղիղ խնդիրը չունի երկրորդ բաղադրիչ նախադասության շառաչար ձևի պարագայի ոճախմաստային ընդգծվածությունը։ Ավելին, խոսողի (գրողի) նպատակը ոչ այնքան պատժելու փաստի արձանագրումն է, որքան դրա իրականացման ձևի ընդգծված դրսևորումը։

Պարզ ստորոգյալի լրիվ կրկնությամբ կազմված երկրորդ խմբի միավորյալ նախադասությունների մեջ ստորոգյալի ամեն մի կրկնություն հիմնականում արտահայտվում է լրացման (կամ լրացումների) հետ։ Ընդ որում, միևնույն կառուցում ստորոգյալի բոլոր կրկնությունները կարող են ստանալ կա՛մ նույն և կա՛մ տարբեր գործառույթով լրացումներ։ Ըստ այդ լրացումների արտահայտության՝ միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի.

ա) Համասեռ լրացումներով ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասություններ։ Այս դեպքում ստորոգյալի բոլոր կրկնություններն

ունենում են նույն խնդիրը կամ պարագան՝ տարբեր բառական արտահայտությամբ: Կարևոր նշանակություն է ստանում կրկնված ստորոգյալների խնդրառությունը: Նկատելի է, որ այստեղ ստորոգյալը կրկնվում է խնդիրներն ու պարագաները շեշտելու, ընդգծելու նպատակով: Նման միավորյալ նախադասությունը համանիշ է բազմակի խնդիրներով կամ պարագաներով պարզ նախադասությանը: Այսպես՝ համմտ. «Սամվելը ճարգում էր այդ մարդուն, ճարգում էր և նրա անծերանալի արիությունը» (ՐՍ, 58): «Սամվելը ճարգում էր այդ մարդուն, նրա անծերանալի արիությունը»: Սրանք շարահյուսական համանիշ ձևեր են. իմաստով նույնն են, իսկ կառուցվածքով՝ տարբեր: Ակնհայտ է, որ դրանց միջև առկա է նաև ոճական-վերաբերմունքային տարբերություն. առաջին նախադասության մեջ առանձին-առանձին ընդգծված են ուղիղ խնդիրները, իսկ երկրորդ տարբերակում նույն ուղիղ խնդիրները միավորված են թվարկման հնչերանգով՝ առանց հատուկ ընդգծվածության:

Հաճախ համասեռ լրացումներն ստանում են նույնաբնույթ ստորադաս նախադասություններ, որոնք կրկնվող ստորոգյալների բառաքերականական ինքնուրույնությունն ավելի են մեծացնում. ինչպես՝ «Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրտ ուց էր ուտում, մտածում էր էն երկունների վրա, երբ հերն ու մերը կռվում էին իրեն խաղաղ բերելու համար... մերը լաց էր լինում, չէր ուզում...» (ՀՔ, 272): Երբեմն էլ հենց լրացումներն են արտահայտվում նույնաբնույթ երկրորդական նախադասությամբ: Չի բացառվում նաև նրանցից մեկի բառական, իսկ մյուսի՝ ստորադաս նախադասությամբ արտահայտությունը. ինչպես՝ «Այրվում եմ, երբ հեռու եմ լինում նրանից, այրվում եմ նորից, երբ մոտ եմ լինում նրա» (ԱԻ, 3, 20): «Մենք չէինք նկատել, որ անցել ենք Սարիղամիշը, չէինք նկատել սարալանջին փռված հրաշք աճառաները» (ՎՊՀՐԱ, 167):

Լրացումների համասեռությունը հաճախ ավելի մեծանում՝ ընդգրկելով նախադասության նաև այլ անդամներ: Դա արտահայտվում է այն ժամանակ, երբ առաջին բաղադրիչ նախադասության լրացման լրացումները ևս մյուս բաղադրիչում ունենում են իրենց համասեռ ձևերը: Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչների միջև առաջանում է իմաստային ու բառաքերականական զուգահեռություն, որը մեծ մասամբ դրսևորվում է նաև շարադասության մեջ. ինչպես՝ «Իմ աչքերի մեջ այնքա՞ն կրակներ եմ մարել ես ևս ճոգուս մեջ, հուսահատ, այնքան ատոներ եմ մարել» (ՆՉ, 1, 295):

բ) Անհամասեռ լրացումներով ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասություններ: Այսպիսի կառուցվածքներում պարզ ստորոգյալը կրկնվում է տարբեր լրացումների հետ: Անհամասեռությունը գոր-

ծառվում է՝ ա) երբ ստորոգյալը կրկնվում է տարբեր խնդիրների կամ պարագաների հետ, բ) երբ կրկնվող ստորոգյալներից մեկի հետ զուգորդվում է խնդիր, իսկ մյուսի հետ՝ պարագա։ Ակնբախ է, որ լրացման լրացումների անհամասեռությունն այս դեպքում ավելի մեծ է։ Իբրև տրամաբանական շեշտակիր անդամներ հանդես են գալիս կրկնված ստորոգյալների անմիջական լրացումները՝ խնդիրներն ու պարագաները։ Այս դեպքում կրկնված ստորոգյալների բառաքերականական ինքնուրույնությունը անհամեմատ մեծ է. ինչպես՝ «Եւ նայեց Դիլան դային, եկած ճաճապարհին նայեց» (ԱՔ, 1, 77)։ «Սիրտս եչաց հոգեհոգիդ լույսին կարոտ—եչաց ցոտից» (ԵՉ, 1, 26)։ «Բայց հոգնել եմ աղեղն ես հոգնել եմ այնքան» (ՊՍ, 1, 311)։

2) Մասամբ անվաճառական բաղադրյալ ստորոգյալը։ Ընդամին, այս կրկնությունը հիմնականում պայմանավորված է լինում որոշիչ և հատկացուցիչ լրացումների ընդգծված դրսևորմամբ։ Տվյալ դեպքում առավել հաճախադեպը գոյական ստորոգելիիով ստորոգյալի կրկնությունն է համասեռ որոշիչներն ու հատկացուցիչները ընդգծելու նպատակով. ինչպես՝ «Իմ բախտի տերն եմ ես այսօր և առհավետ ես տերն եմ նաև եթերների» (ՊՍ, 1, 65)։ «Փառասեր մարդ էր Բյուզանդ էֆենդին և փառքի մարդ էր» (ՎՓՍՊ, 95)։ Նման կրկնությունը երբեմն էլ կատարվում է անհամասեռ լրացումների դրսևորման նպատակով։ Այս դեպքում անհամասեռություն են կազմում որոշիչն ու հատկացուցիչը. ինչպես՝ «Ես հավատն եմ fո, Քայլող հավատը» (ՊՍ, 1, 505)։

Խնդրառություն ունեցող ածական վերադրով ստորոգյալը կրկնվում է հիմնականում խնդիրներն առանձին-առանձին ներկայացնելու համար. ինչպես՝ «Արտագերսը ծանոթ էր Հռոմին, ծանոթ էր նաև Բյուզանդիային» (ՐՍ, 351)։

3) Սակավադեպ բայական բաղադրյալ ստորոգյալը, որի կրկնությունը հիմնականում նման է պարզ ստորոգյալի կրկնությանը։ Բայական բաղադրյալ ստորոգյալի լրացումները ևս լինում են համասեռ ու անհամասեռ. ինչպես՝ «Վարդանը և Գևորգը փորձում են համոզել ընկերներին, փորձում են համոզել բոլոր ծանոթ մարդկանց»։ «Դու կարող ես օգնել Հայկին և կարող ես օգնել բոլորից շատ»։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՄԱՍՆԱԿԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորոգյալի կրկնության մյուս ձևը մասնակի կրկնությունն է։ Մասնակի ենք անվանում ստորոգյալի այն կրկնությունը, երբ այն կրկնվում է ոչ ամբողջությամբ, մասնակի չափով։ Մասնակիորեն կրկնված ստորոգյալներն ավելի ինքնուրույն են ու անկախ։ Ակնհայտ է, որ պարզ և

բաղադրյալ ստորոգյալների կրկնության նպատակը և ոճական-քերականական նշանակությունը տարբեր են։ Միավորյալ նախադասության մեջ մասնակի կրկնությամբ հանդես են գալիս.

ա. Ավելի շատ պարզ ստորոգյալը։ Այս ստորոգյալի կրկնված ձևերի միջև գործառվում են քերականական տարբերություններ։ Մասնավորապես կրկնվում են միևնույն պարզ ստորոգյալի՝

1) տարբեր եղանակաժամանակային ձևերը։ Ընդամին, կրկնվող ստորոգյալները նույն եղանակի բայաձևեր լինելու դեպքում իրարից տարբերվում են միայն ժամանակային իմաստով. ինչպես՝ «...Այստեղ կատարվել է և մասամբ կատարվում է մի խոր հեղաշրջում» (ՎՏ, 2, 277)։ Իսկ միևնույն ստորոգյալի տարբեր եղանակաձևերը կրկնվելու դեպքում դրանց միջև արդեն գործառվում են թե՛ եղանակային և թե՛ ժամանակային տարբերություններ. ինչպես՝ «— Չի կամենում և ահավասիկ պատժվում է չարաչար ու պիտի պատժվի հավիտյան...» (ՍՉՀՐ, 417)։

2) տարբեր սեռային (մասնավորապես ներգործական ու կրավորական, չեզոք ու ներգործական) ձևերը. ինչպես՝ «Ձորն էին նետում մայրերը մանկանց ու նետվում այնպես...» (ՊՍ, 4, 268)։ «Հասկացի՛ր, հասկացրո՛ւ ուրիշներին» (ՍԽՄՍ, 3, 60)։

3) հաստատական ու ժխտական ձևերը, որոնք կարող են ունենալ նաև տարբեր երանգ. ինչպես՝ «Խոսքերն այդ իմ մեջ և՛ կան, և՛ չկան՝ Ստորևկրյա քո ջրերի պես» (ՊՍ, 1, 507)։ «Նա կորցրե՞ց բոլորին, բայց չկորցրեց յուր սրտի վեհությունը» (ՐՍ, 402)։ Միավորյալ նախադասության առաջին ստորոգյալը ժխտական լինելու դեպքում երկրորդ բաղադրիչում կարող է ժխտվել ուղիղ խնդիրը՝ ստեղծելով լրիվ ու մասնակի ժխտման յուրատիպ դուգակցում. ինչպես՝ «Չես ընդունում դու արդեն կանչ ու հրավեր, Ոչ էլ մեզ ես ընդունում, Տո՛ լաճ տնավեր» (ՀՍՍՔ, 151)։

Նմանապես կրկնվում են նաև միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամի հաստատական ու ժխտական ձևերը. ինչպես՝ «Մի՛ ուեցիր հարյուր դահեկան, ուեցի՛ր երկու բարեկամ» (Ա, 225)։ «Գնա՞լ, թե՞ չգնալ»։

4) սակավադեպ էլ՝ տարբեր երանգային ձևերը։ Դա արտահայտվում է այն ժամանակ, երբ միևնույն ստորոգյալի ամեն մի գործածություն ունի մյուսից տարբեր երանգ։ Նման կառուցվածքը խառը երանգի միավորյալ նախադասություն է. ինչպես՝ «...Ու բերում է հողմը, բերո՛ւմ Հառաչանքներն՝ Ա՛խ, թամար...» (ՀՔ, 25)։

Պարզ ստորոգյալի մասնակի կրկնություն ենք դիտում նաև բայական դուգադրությամբ արտահայտված ստորոգյալի բաղադրիչներից մե-

կի կրկնությունն իբրև ինքնուրույն ստորոգյալ կամ էլ, ընդհակառակն, պարզ բայով արտահայտված ստորոգյալի կրկնությունը զուգադրական հարադրությամբ ստորոգյալի կազմում: Այս դեպքում ստորոգյալների ինքնուրույնությունը մեծ է լինում, և էական նշանակություն է ստանում դրանց շարադասությունը. զուգադրական բայ-ստորոգյալի արտահայտությամբ ու շարադասությամբ է պայմանավորվում մյուս ստորոգյալի արտահայտությունը. օրինակ՝ «Բույնը դիտելուց հետո զնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա...» (Ա հ, 3, 52): «Գնա, որդի՛, գնա բեր» (ԱՇՔ, 148):

բ. Բայական բաղադրյալ ստորոգյալը: Այս կրկնությունը շատ տարածված է և միատարր չէ՝ պայմանավորված նրանով, որ կարող են կրկնվել այդ ստորոգյալի թե՛ եղանակիչը և թե՛ անորոշ դերբայը: Դրանցից յուրաքանչյուրի կրկնության դեպքում նախադասությունն ստանում է կառուցվածքային ու ոճական-իմաստային տարբեր յուրահատկություններ: Բայական բաղադրյալ ստորոգյալի մասնակի կրկնությամբ միավորյալ նախադասություն է կազմվում,

1) Երբ կրկնվում է միայն եղանակիչ բայը: Նման կրկնությունն ունի ավելի շատ կերպավորիչ նշանակություն, բայց քանի որ գործողությունն այդ ստորոգյալի կազմում հիմնականում արտահայտվում է անորոշ դերբայով, ուստի տարբեր անորոշ դերբայ և միևնույն եղանակիչ բայ ունեցող ստորոգյալների անկախությունը համեմատաբար մեծ է: Օրինակ՝ «Ցանկանում էր խոսել, ցանկանում էր բեթևացնել ամրոխված վշտերը» (ՐՍ, 135):

Բազմաբաղադրիչ կառուցվածքում ընդհանուր եղանակիչը երբեմն կրկնվում է առաջին երկու բաղադրիչ նախադասություններում, իսկ հաջորդ բաղադրիչում (կամ բաղադրիչներում) դիղվում է. ինչպես՝ «Ցանկանում էր ևեռս մաճել, ցանկանում էր նայել քնած որդու վրա,— երկար նայել և նիհանալ նրանով» (ՐՍ, 460):

2) Երբ կրկնվում է անորոշ դերբայը՝ արտահայտելով գործողության տևականությունը. ինչպես՝ «Մտածող աչքեր ուներ Բենունին, կարող էր ժամերով խոսել երեք հարյուր վաթսուն մեղեդիներից յուրաքանչյուրի մասին, խոսել խանգությամբ, սիրով, քնքշանքով» (ՎՊՀԲԱ, 224): Անորոշ դերբայի կրկնությունը երբեմն էլ կատարվում է նախորդ և հաջորդ բաղադրիչների կապակցման նպատակով. օրինակ՝ «Ա՜խ, ինչպես կուզենայի վեր կենալ. վեր կենալ և բախել բոլորի դռները և դուրս կանչել բոլորին կյանքի շքեղ խնջույքի համար» (Ա հ, 3, 67): Նմանապես կրկնվում է նաև ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասության գերադաս անդամի անորոշ դերբայ բաղադրիչը. ինչպես՝ «Ո՛չ,

կարելի է շարունակ փնտրել, փնտրել մեղ նման, բայց և չգտնել» (ՊՍ, 4, 314)։

3) Երբ ստորոգյալներից մեկը բայական բաղադրյալ է, իսկ մյուսը՝ պարզ։ Ընդ որում, պարզ ստորոգյալն ու բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչն արտահայտվում են նույն բայով։ Այս դեպքում ստորոգյալները լիովին ինքնուրույն են ու անկախ. ինչպես՝ «Առայժմ Սասանյանները չեն կարող համբերել և չեն համբերում մեր քրիստոնյա Արշակունիներին» (ՐՍ, 266)։

Նման միավորյալ նախադասության բայական բաղադրյալ ստորոգյալը հաճախ լինում է ժխտական բնույթի, որպիսի դեպքում հաջորդող ստորոգյալը լինում է հաստատական, և բաղադրիչ նախադասություններն էլ կապվում են ժխտման հարաբերությամբ. օրինակ՝ «Բայց մարդը չի կարողանում ապրել էն մեծ կյանքով, այլ ապրում է միայն նրա մի մասով—մարդկության կյանքով» (ՀՔ, 430)։ Երբեմն էլ նախադաս է լինում պարզ ստորոգյալը. ինչպես՝ «Ես չեմ ըմբռնում, չեմ կարող ըմբռնել ոչնչությունը» (Ա՛Ի, 3, 154)։

Բաղմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ պարզ ստորոգյալը տարբեր հաղանակաժամանակային ձևերով երկու կամ ավելի անգամ կրկնվելու դեպքում ամբողջ կապակցությունը բաղադրող ստորոգյալների (պարզ, բայական բաղադրյալ) ինքնուրույնությունը խիստ մեծանում է. ինչպես՝ «Ամեն տեսակ դժբախտություն, ամեն տեսակ բախտի հալածանք կտանեի և տանում եմ, բայց հասարակ կնոջ այդ հասարակ բանի համար ուած հանդիմանությունը ոչ մի կերպ չէի տանի և չեմ կարող տանել» (ՆԴ, 288)։

գ. Անվանական բաղադրյալ ստորոգյալը, երբ կրկնվում է նրա բաղադրիչներից մեկը։ Ընդ որում, ստորոգելիի կրկնության դեպքում բաղադրիչ նախադասությունները կապվում են տարժամանակությամբ. ինչպես՝ «Դու մասնակից էիր նրա փառքին, մասնակից եղար և նրա դժբախտությանը» (ՐՍ, 236)։ Իսկ հանգույցը կրկնվելիս ստորոգելիները տարբեր են լինում, և ընդգծվում են միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հատկանիշները. ինչպես՝ «Զնգացել են վեմ ու վանդ եմ արձագանգ են դարձել, եմ դարձել են ճեկեկանք...» (ՎԴԱՄ, 44)։

Երբեմն էլ կրկնված ստորոգելիի բաղմակի որոշիչներից մեկը լինում է նախադաս, իսկ մյուսը՝ ետադաս։ Ընդ որում, նախադաս է լինում այն որոշիչը, որի բառական նշանակությանը խոսողը (գրողը) առավել կարևորություն է տալիս. ինչպես՝ «Այս գեղգեղանքը սիրավառ սրտի, հրեղեն արցունքների և անծայր կարոտի մի ամբողջ հեքիաթ էր, մի դյութական հեքիաթ, նազարաև ծաղիկների բույրերով ներդաշնակված...» (Ա՛Ի, 3, 55)։

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԻՎ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂՄԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Առանձին խումբ են կազմում ստորոգյալի կրկնության երկու ձևերը՝ լրիվ և մասնակի կրկնությունները համատեղող բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունները, որոնց ստորոգյալների բառաքերականական ինքնուրույնությունը մեծ է։ Այս դեպքում ստորոգյալների մի մասը կրկնվում է նույնությամբ, իսկ մյուս մասը՝ քերականական ձևերի փոփոխությամբ. ինչպես՝ «Կապված եմ, այսպե՛ս, կապված եմ ամուր ու չե՛մ բաժանվում ու չե՛մ բաժանվի...» *(ՊՍ, 4, 308)։* «Ազատվի՛ր հորդ անեծքից, որդի՛, ազատվի՛ր և մեզ էլ ազատի՛ր» *(ԱՇՔ, 35)։*

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ[10]

Ոճական նշանակություն ունեցող շարահյուսական կառույցների թվին է պատկանում ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությունը, որն ընդհանրապես ոճական երևույթ է։ Միայն թե այս կարգի տարբեր միավորյալ նախադասությունների ոճական նշանակությունը տարբեր է՝ պայմանավորված ստորոգյալի կրկնության ձևով ու նպատակով, համատեքստով, խոսքային իրադրությամբ և այլ հանգամանքներով։

Այս կառույցի ոճական նշանակությունը պայմանավորված է ամենից առաջ ստորոգյալի կրկնության նպատակով։ Ինչպես արդեն նշել ենք, ստորոգյալը կրկնվում է ամենից առաջ իր այս կամ այն լրացումը (լրացումները) ընդգծելու, ինչպես նաև միավորյալ նախադասության բաղադրիչների կապի ամրապնդմանը նպաստելու համար (հմմտ. 84, էջ 42)։ Բաղադրիչ նախադասությունների կապի ամրապնդմանը նպաստելու նպատակով ստորոգյալի կրկնությունն ավելի հաճախադեպ է բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ, ուր իբրև առաջին ու երկրորդ բաղադրիչ նախադասություններ սովորաբար հանդես են գալիս նույն ստորոգյալի կրկնված ձևերը, իսկ հաջորդ բաղադրիչում կամ բաղադրիչներում ստորոգյալն ունի բառաքերականական այլ արտահայտություն։ Նման կառուցվածքում առաջին ստորոգյալն արտահայտվում է լրացումներով (երբեմն նաև լրացման լրացումներով), իսկ երկրորդը՝ առանց լրացման՝ դառնալով մի տեսակ կապող օղակ իրեն նախորդող

---

10 *Այստեղ ներկայացնում ենք նաև միակազմ միավորյալ նախադասության դերադաս անդամների կրկնության որոշ դրսևորումների ոճական նշանակությունը՝ հաշվի առնելով երկկազմ միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնության հետ դրանց ընդհանրությունը։*

և հաջորդող բաղադրիչների համար. ինչպես՝ «իմ խոսքերը կարկաչում են կապույտում, կարկաչում եմ ու կանչում են կապույտում» (ԵՉ, 1, 100)։ Այստեղ երկրորդ անգամ կրկնված ստորոգյալի, իբրև ստորոգյալին միավորի, ինքնուրույնությունը համեմատաբար նվազ է։ Դա ավելի շատ նախորդ և հաջորդ բաղադրիչների կապակցմանը նպաստող բառական միջոցի դեր են կատարում։

Միավորյալ նախադասության բաղադրիչների կապակցմանը նպաստելու նպատակով ստորոգյալի կրկնությունը մի տեսակ բնական է ու անհրաժեշտ հատկապես առաջին բաղադրիչից հետո դադարը տեսական լինելու և կամ էլ առաջին բաղադրիչը ստորադաս նախադասություն ստանալու դեպքում։ Երկու պարագայում էլ չի բացառվում նաև կերպավորության դրսևորումը. ինչպես՝ «Իսկ արքայազն Տիրիթը նայում էր նրա հետևից. նայում էր և մտածում տարակույսների մեջ» (ՍՉՀԲ, 136)։ «Ես նայում էի դահլիճի մթությանը, որտեղ պատանիներ էին, երեխաներ, նայում էի ու չէի զայրանում» (ՎՊՀԲԱ, 218)։

Միավորյալ նախադասությունը ոճական նշանակություն է ստանում նաև այն ժամանակ, երբ ստորոգյալի կրկնությունը արտահայտում է հավելական իմաստ։ Վերջինս գործածվում է, երբ ստորոգյալի երկրորդ (կամ հաջորդ) կրկնությամբ նախորդ բաղադրիչի բովանդակությանը հավելվում է լրացուցիչ տեղեկություն, արտահայտվում է խոսողի (գրողի) վերաբերմունքը նախորդ բաղադրիչով արտահայտվածի նկատմամբ, և կամ էլ կատարվում է ընդհանրացում. օրինակ՝ «Ջորականը... անխոս առաջնորդում էր նրան դեպի թագավորի վրանը, որը բավականին հեռու էր ռազմի դաշտից, առաջնորդում էր հետաքրքրությունն ու զարմանքը դեմքին» (ՍՉՀԲ, 423)։ «Նա քեզ չի օգնում և չի օգնում սկզբունքով»։

Ակնհայտ է, որ չափածո միավորյալ նախադասության մեջ ստորոգյալի կրկնությունը նպաստում է ռիթմի դրսևորմանը։ Ռիթմը որոշ չափով հատուկ է նաև արձակին։ Թե՛ չափածո և թե՛ արձակ խոսքում ռիթմական միավորների կենտրոնական բառը մեծ մասամբ լինում է բայ-ստորոգյալը, որովհետև ռիթմիկությանը բնորոշ ընթացականությունը արտահայտվում է միայն բայ-ստորոգյալով։ Ստորոգյալի կրկնությամբ կազմված միավորյալ նախադասության մեջ ռիթմական միավորները ավելի հաճախ տարբեր են լինում, սակայն դրանց կենտրոնական բառը, որպես կանոն, միշտ էլ լինում է կրկնված ստորոգյալը։

Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասության ոճական արժեքն առանձնապես մեծանում է շնորհիվ այն բանի, որ նրանով ձևավորվում է շարահյուսական ֆիգուրների շարքը դասվող կրկնության բանադարձման դրսևորումներից մեկը։ Միավորյալ կապակցության բաղադրիչ նախադասություններում կրկնված ստորոգյալները դառնում են

իմաստի և հուզարտահայտչական լարվածության կենտրոնները, նպաստում են խոսքի, մասնավորապես չափածո խոսքի, հնչյունական ներդաշնակությանն ու արտահայտչականությանը, նախադասության կշռույթի ու չափի ուժեղացմանը, մասամբ ստեղծում են նաև առձայնույթ, իսկ արձակ ձևով արտահայտված միավորյալ նախադասությանը հաղորդում են բանաստեղծականություն, նախադասություն են ներմուծում երաժշտականության որոշ տարրեր։

Գեղարվեստական պատկերի ստեղծմանը նպաստելու նպատակով միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնությունը միատարր չէ՝ պայմանավորված առավելապես բանաստողում ստորոգյալի գրաված դիրքով, իսկ արձակ կառույցում՝ շարադասությամբ, նախադասության մեջ ունեցած գործառությամբ, համատեքստի գեղագիտական նպատակադրմամբ և այլ հանգամանքներով։ Ըստ այդմ էլ միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնությունը ստեղծում է հարակրկնություն կամ նույնասկիզբ (անաֆորա), վերջույթ կամ նույնավերջ, հանգույց (սիմպլոկա), կցուրդ, պարույր, օղակ և այլն)։

Կրկնության արվեստի ձևերից մեկը նարակրկնությունն է, որը բառակրկնության ամենապարզ տեսակն է։ Այս դեպքում կրկնվում են բանաստեղծական տան առաջին բառերը։ Միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնությամբ հարակրկնություն է կազմվում այդ ստորոգյալը բանաստեղծական հարևան տողերի սկզբում գործածվելու դեպքում։ Այդպիսի կրկնությամբ խիստ ընդգծվում է ստորոգյալի բառական նշանակությունը, բանաստեղծությունը դառնում է ռիթմիկ ու երաժշտական, ուժեղանում են քնարական խոսքի հուզականությունն ու հռետորական ուժգնությունը։ Օրինակ՝

> *«Մառս են լինում քաջ խմբերով անձնվեր,*
> *Մառս են լինում տանջվողներով կիսամեռ,*
> *Մառս են լինում անընկճելի ու արի*
> *Մինչև ճերմակ գլուխները լեռներին» (ՀՔ, 51)։*

Ստորոգյալի հարակրկնությունը միավորյալ նախադասության մեջ երբեմն ծծառայում է իբրև թեմային տարր, որը... հեղինակն օգտագործում է իր խոսքը ընդարձակելու նոր ուղղությամբ...» (31, էջ 123). ինչպես՝

> *«Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ,*
> *Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի,*
> *Աղմկում է մինչև լույս, գանգատվում է վարանոտ*
> *Ու ժամերն է հաշվում իմ, վայրկյանները մի առ մի» (ԵՉ, 1, 307)։*

Միավորյալ նախադասության ստորոգյալի հարակրկնությունը շարադասական տարբեր փոփոխակներ է կազմում։ Այսպես՝ միավորյալ նախադասություն կազմող բանաստեղծական տան առաջին երկու ստորոգյալները հաճախ ունենում են բառաքերականական այլ արտահայտություն, իսկ հաջորդ տողերի ստորոգյալները կազմում են հարակրկնություն. ինչպես՝

«Թողի երկիրն իմ հայրենի,
Անահ անցա Արաբ ու Հինդ.
Տեսա մարդիկ չորսգլխանի,
Տեսա հաղար աղետ ու խինդ» (ՎՏ, 2, 35)։

Երբեմն ստորոգյալը կրկնվում է կոչականի հետ։ Ընդ որում, կոչականը կարող է կրկնվել նույնությամբ կամ տարբեր բառերով։ Ոճական նկատառումով այն կարող է գործածվել նաև միայն մեկ անգամ՝ վերջին կամ նախավերջին տողում, երբ հանդես է գալիս իբրև թարմատար՝ գունաղարդելով խոսքը. ինչպես՝

«Ե՛ս դառ, ե՛ս իգի՛ր,
Ե՛ս դառ, անիրա՛վ» (ՀԹ, 191)։

«Զգաս ձիով.
Զգաս ջորով,
Կարի՛ճ, ոչ էլ
Գաս հետևակ» (ՎԴ, 2, 160)։

Ստորոգյալը հարակրկնության շարք է կազմում նաև դերանուն-հնչակալի հետ կրկնվելով։ Այս դեպքում հավասարապես ընդգծվում է թե՛ ստորոգվող հատկանիշը և թե՛ հատկանիշն իր վրա կրող առարկան. ինչպես՝

«Դու վառվել ես օրերի մեջ ու հրում,
Դու վառվել ես կարմրավառ այս օրերում,
Դու վառել ես գալիքները և հեռուն» (ԵՋԵԺ, 1, 160)։

Այստեղ ենթական (դու) կրկնվում է ոճական նկատառումով՝ գործողի դիմքը ընդգծելու համար։ Բացի այդ, անձնական դերանվան երկրորդ դիմքը այստեղ փոխարինում է առաջին դիմքին. բանաստեղծը, դիմելով խոսակցին, նկատի ունի իրեն։ Սա անձնական դերանվան երկրորդ դիմքի ոճական կիրառություններից մեկն է (Համմ. 8, էջ 277)։

Հարակրկնության հակառակ բանադարձումը վերջույթն է կամ նույնավերջը, որը դրսևորվում է բանաստեղծության կից տողերի վերջում նույն բառի կամ բառակապակցության կրկնությամբ։ Տվյալ դեպքում միավորյալ նախադասությունն արտահայտվում է վերջույթային կրկնու-

թյամբ, երբ նույն ստորոգյալը կրկնվում է բանաստեղծական տուն-միավորյալ նախադասության կից տողերի վերջում. ինչպես՝

«Արևին նայող շողերն համբուրիր,
Սարերին փարված ամպերն համբուրիր,
Քարերին ծաղկած մամուռն համբուրիր,
Մեծ Ելոմոտի այս դուռն համբուրիր» *(ՀՍՍՔ, 33)*:

Քանի որ վերջույթային կրկնությունը ուժեղացնում է խոսքի հուզականությունն ու երաժշտականությունը, ուստի նման միավորյալ նախադասությունը շատ է գործածվում գուսանական պոեզիայում: Այստեղ, որպես կանոն, բանաստեղծական տան վերջին տողով, որ հաջորդում է կրկնվող ստորոգյալներին, կատարվում է ընդհանրացում. ինչպես՝

«Հույս տալով, մոտ չի գալով կենդանություն մաշեցիր,
Շատախոս բլբուլ արիր, հանդարտ անունս մաշեցիր,
Անիրա՛վ, մինչ սիրովդ սիրտ ու արյունս մաշեցիր,
Ուրեմն, անհանգչելի, անգութ կրակ ես ինձ համար» *(ՇՏ, 28)*:

Հաճախ միավորյալ նախադասության վերջույթներին նախորդում են այլ ստորոգյալներ՝ նախադասությունը դարձնելով ավելի բազմաբաղադրիչ. ինչպես՝

«Աշխարհիս մեջ ես էլ մի օր կանցնեմ անդարձ ու կերթամ,
Ծո չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ— ու կերթամ»
(ԵՋ, 1, 244):

Համասեռ լրացումներն ընդգծելու նպատակով բայական ստորոգյալի վերջույթային կրկնության դեպքում ենթական կարող է ունենալ նաև հետադաս շարադասություն՝ իր լրացման հետ օղակելով նախադասությունը: Այսպես.

«Հետը արև է բերում,
Կանաչ սարեր է բերում,
Կանաչ դարեր է բերում
Ջորզորա գետը» *(ՀՍՔԵ, 57)*:

Միավորյալ նախադասության ենթական շարադասվում է նաև նախավերջին տողում՝ դառնալով կապող օղակ բանաստեղծական տան վերջին և առաջին տողերի միջև. ինչպես՝

«Դեռ արցունքներ ունի՝
Դեռ արցունքներ ունի
Սիամանի մեջ պահած,

Հողրդ ամեն հողում
Տարագիրներ ունի» (ԵՉ, 1, 109)։

Բայական ստորոգյալի նմանակությամբ վերջույթ է կազմվում և նաև բայական անդեմ միակազմ միավորյալ նախադասության գերադաս անդամի կրկնությամբ. օրինակ՝

«Քո՜ւյր, ղողանջի պես ճախրե՜լ ու գնա՜լ,—
Համայված ահեղ— ճախրե՜լ ու գնա՜լ...» (ԵՉ, 1, 109)։

Վերջույթ են կազմում միավորյալ նախադասության նաև անվանական ստորոգյալները։ Ընդ որում, ամեն տողում կարող է լինել նաև մեկ այլ ստորոգյալ՝ նախադաս շարադասությամբ. ինչպես՝

«Մոլորվել եմ, ճամփաններին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ,
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ...» (ԱՒ, 1, 356)։

Միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնության ամենատարածված ձևերից մեկը կցուրդն է։ Վերջինս այն բանադարձումն է, որ կազմվում է բանաստեղծական տողի վերջին բառի՝ հաջորդ տողասկզբում ունեցած կրկնությամբ։ Հետևաբար միավորյալ նախադասության ստորոգյալը կցուրդ է կազմում կից բանատողերից մեկի վերջում և մյուսի սկզբում կրկնվելով։ Նշանակում է՝ ստորոգյալի կցուրդային կրկնության հենարան է դառնում վերջույթը։ Այս կրկնության նպատակը միևնույն գործողությունը ընթերցողի ուշադրության կենտրոնում պահելն է և համանվագայնություն ստեղծելը. ինչպես՝

«Քանի՜ ձնաքից եմ վառվել,
վառվել ու նուր եմ դառել,
Հուր եմ դառել, լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել» (ՀՔ, 67)։

Հաճախ կցուրդը չի սահմանափակվում միայն ստորոգյալով. վերջինիս հետ կրկնվում է նաև նրա լրացումը (կամ լրացումները). ինչպես՝

«Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,
Շրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս» (ՀՔ, 189)։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունը երբեմն էլ ամբողջությամբ կազմվում է միայն ստորոգյալի կցուրդային կրկնությամբ, մի

կրկնություն, որն ստեղծում է ներդաշնակ կշռույթ։ Այդպիսի կրկնության լավագույն օրինակ է Վ. Տերյանի «Տեսա երազ մի վառ» քնարական բանաստեղծությունը.

«Տեսա երազ մի վառ,
Ոսկի մի դուռ տեսա,
Վրան փիրուզ կամար.
Սյուները հուր տեսա.
Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա.
Մի հրեշտակ անգին
Սոսից պայծառ տեսա,
Օրկու բաժակ տեսա...
Երկու նիզակ տեսա,
Երկու անգին գոհար» (ՎՏ, 1, 214)։

Կցուրդ կազմող ստորոգյալները կարող են լինել նաև տարբեր երանգի. ինչպես՝

«...Ու թևին արավ, ու թռա՛վ, ու գրեա՛ց.
Գրեա՛ց ճախրելով էն երազ հովտում,
Սուզվեց, լըքացավ պայծառ կապույտում...» (ՀՔ, 194)։

Կցուրդային կրկնությամբ միավորյալ նախադասությունը երբեմն համատեղում է ղուգահեռությունը (ղուգադատկություն) և խաչաձևումը. ինչպես՝

«...Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարևք» (ՎՏ, 1, 65)։

Այստեղ ստորոգյալի և ուղիղ խնդրի (ինձ տարեք) կրկնությունը ստեղծում է կցուրդային ղուգահեռություն, իսկ տեղի պարագաների (աշխարհից, երկրից) ու նրանց որոշիչների (այս խավար, այս անարգ) շարադասությունը՝ խաչաձևում։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ երկու կամ ավելի ստորոգյալների կրկնությունն ունենում է, այսպես ասած, պարուրաձև շարադասություն և մոտենում է բառախաղին. ինչպես՝

«Քո օրերը բարձրանում են,
Բարձրանում ու շողշողում են,
Շողշողում ու գուրգուրում են
Գուրգուրում են քեզ» (ԴՍ, 1, 82)։

Ստորոգյալի կցուրդային կրկնությամբ միավորյալ նախադասությունը երբեմն հանդես է գալիս որպես այլ կառուցվածքի նախադասության, մասնավորապես բարդ ստորադասական և տարբեր ենթականերով բարդ համադասական կապակցությունների բաղադրիչ։ Ընդսմին, համադասական նախադասության միավորյալ և ոչ միավորյալ կազմիչները հաճախ շարադասվում են մեջընդմեջ՝ երկուսը առանձին-առանձին կազմելով վերջույթ, իսկ միասին, լրացումներով հանդերձ՝ կցուրդ։ Այսպես՝ բննենք հետևյալ համադասական կապակցությունը.

«...Անձրևը տանեմ արտին տամ,
Արտը ինձ ցորեն տա.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացը ինձ ալյուր տա.
Ալյուրը տանեմ տաշտին տամ,
Տաշտը ինձ խմոր տա.
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրը ինձ հաց տա,
Հացը տանեմ բռշին տամ,
Բռշեն ինձ ուլունք տա,
Ուլունքը տանեմ նանիս տամ,
Նանս ինձ ծեծի, ծեծի,
Տանից քշի, դուրս անի» (ՀԲ, 81—82)։

Այստեղ 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ տողերը կազմում են միավորյալ նախադասություն, ընդ որում՝ այդ տողերից ամեն մեկը միավորյալ նախադասության մեկ բաղադրիչ նախադասություն է։ Այդ միավորյալ նախադասության բոլոր բաղադրիչների ստորոգյալները կազմում են վերջույթ, իսկ այդ ստորոգյալների մատուցման և ուղիղ խնդիրները, յուրաքանչյուր հաջորդ տողում արտահայտվելով ենթակայի գործառույթով, կազմում են մասնակի կցուրդ։ Այնուհետև. վերջույթ է կազմում նաև տարբեր ենթականերով բաղադրիչ նախադասությունների ընդհանուր կրկնվող ստորոգյալը (տա)։ Այսպիսով, բերված օրինակում առկա է զուգադրական ստորոգյալի (տանեմ տամ) երկրորդ բաղադրիչի և պարզ կազմությամբ ստորոգյալի մեջընդմեջ շարադասությամբ վերջույթ (տամ...տամ, տա...տա), իսկ միավորյալ նախադասության ստորոգյալի լրացումները և հաջորդ բաղադրիչի (որ դարձյալ համընկնում է տողին) ենթական ստեղծում են մասնակի կցուրդ[11]։

---

11 Միևնույն բառի շարահյուսական տարբեր կիրառություններով հանդես գալը դիմում ենք մասնակի կրկնության։

Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությունը սակավադեպ կազմում է հանգույց: Ինչպես հայտնի է, հանգույցը (սիմպլոկա) այն բանադարձումն է, երբ միևնույն կառույցում համատեղում են հարակրկնությունը և վերջույթը: Միավորյալ նախադասությունը, որպես կանոն, միայն ստորոգյալի կրկնությամբ հանգույց չի կազմում: Նա հանգույց է դառնում մասնավորապես այն դեպքում, երբ ստորոգյալի կրկնությունը կազմում է վերջույթ, իսկ երկրորդական անդամներից մեկի կրկնությունը՝ հարակրկնություն. ինչպես՝

«Հազար ու մի գիրք կարդացի—խելացի գիրք չտեսա,
Հազար կնկա գիրկն ընկա—սիրեկան գիրկ չտեսա» (ԵՉ, 1, 235):

Այս կառույցում ստորոգյալը կարող է դառնալ վերջույթ նաև իր լրացման հետ. ինչպես՝

Սիրտդ, որպես վառ ատրուշան, պաճիր վառ,
Սիրտդ հրկեզ, մթնում դաժան, պաճիր վառ» (ՎՏ, 1, 204):

Պատկերավորման ու արտահայտչականության ինքնատիպ եղանակ է պարույրը: Միավորյալ նախադասության ստորոգյալի պարույրային կրկնությունն ունի այն յուրահատկությունը, որ կրկնվում են նաև ստորոգյալի լրացումները, իսկ հաճախ նաև հնչական: Եվ այսպես պարույրային կրկնությունն ընդգրկում է համապատասխան բանատողերն ամբողջությամբ. ինչպես՝

«Ես ինչո՞վ ես հմայեմ.
Ո՛չ գանձ ունեմ, ո՛չ փայլ,
Ես ոչինչ չեմ խնայել
Քո սիրո, փառքի համար...
Քո սիրուն, փառքին վայել
Չեմ գտել դեռ ոչ մի բառ.
Ես ինչո՞վ ես հմայեմ,
Վարդավառ, դու վարդ, դու վառ...» (ԴՄԵԺ, 1, 35):

Այս բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ պարույրն են կազմում 1-ին և 7-րդ տողերը:

Ստորոգյալի պարույրային կրկնությամբ միավորյալ նախադասությունը հաճախ հանդես է գալիս որպես տարբեր եղանակներով բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչ. օրինակ՝

«...Միայն թե դու շիրմիս ճամփան ճիշեիր
(Ինձ թվում է, որ շիրմում էլ ես կզգամ),
Միայն թե դու իմ կարոտը քաշեիր,
Եվ հուսայիր, որ վերստին ես կգամ,
Միայն թե դու շիրմիս ճամփան ճիշեիր
(Ինձ թվում է, որ շիրմում էլ ես կզգամ)...» (ՎՏ, 2, 155):

Այս օրինակում, ուր միավորյալ նախադասություն են կազմում 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ տող-բաղադրիչ նախադասությունները[12], առկա է երկու պարույր: Մեկը 1-ին և 5-րդ տողերի կրկնությունն է, իսկ մյուսը՝ 2-րդ և 6-րդ տողերի կրկնությունը: Ընդ որում, երկրորդ պարույրը կազմող տողերը բարդ ստորադասական կապակցություն են՝ ներդրյալ նախադասության նշանակությամբ:

Ստորոգյալի պարույրային կրկնությանը որոշակիորեն նման է նրա օղակային կրկնությունը: Օղակը այն կրկնությունն է, երբ «շարահյուսական կամ տաղաչափական որևէ միավոր սկսվում ու փակվում է միևնույն բառով կամ արտահայտությամբ: Պարույրից տարբերվում է, որ պարույրը, բացի շարահյուսական ու տաղաչափական միավորի վերջից, ամենուրեք տեղադրվում է, իսկ օղակը միայն վերջում է կրկնվում» (31, էջ 129): Ինչպես պարույրի դեպքում, այստեղ էլ միավորյալ նախադասության ստորոգյալը կրկնվում է տողի մյուս անդամների հետ: Ամենահաճախադեպը քառատողի շրջանակում գործածվող օղակային կրկնությունն է: Ընդսմին, բանաստեղծական տան 2-րդ և 3-րդ տողերում ամփոփված բաղադրիչ նախադասությունների ստորոգյալները կարող են լինել նույնը կամ տարբեր: Տվյալ դեպքում էականը քառատողը (և ընդհանրապես բանաստեղծական տունը) ստորոգյալի կրկնությամբ (առանձին կամ լրացումներով) օղակելն է. ինչպես՝

«Սա իրիկունն ըլլայի ես
Եվ հրային ճակտին ամեն անցորդի.
Ջքնաղագեղ ու նրվազուն համուրդի
Սա իրիկունն ըլլայի ես» (Մեծ, 112):

Երբեմն միավորյալ նախադասության ստորոգյալը օղակ է կազմում երկտողյա կրկնությամբ՝ ստեղծելով տարածվող երաժշտություն՝ իջնող ու բարձրացող շեշտերով. օրինակ՝

---

12 Այստեղ դու ենթակայի կրկնությունը, որ կատարվում է գործողի դեմքն ընդգծելու համար, չի փոխում նախադասության միավորյալությունը:

«Հեկեկում է անվերջ,
Հեկեկում.
Մենավոր ու վհատ
Իմ հոգուն
Հարազատ—
Անհատնում, անպատում
Կսկիծով
Հեկեկում է տրտում,
Հեկեկում...» (ՎՏ, 1, 125)։

Ստորոգյալի օղակային կրկնությունը այլ յուրահատկությամբ է արտահայտվում տրիոլետ կազմող միավորյալ նախադասության մեջ։ Այստեղ, որպես կանոն, լինում է երկու օղակային կրկնություն. առաջին օղակը կազմում են 1-ին և 4-րդ տողերը, իսկ երկրորդը՝ 1—2-րդ և 7—8-րդ տողերը միասին։ Ընդ որում, ամբողջ բանաստեղծության համար կարևորը վերջին օղակն է։ Ակնբախ է, որ եթե խոսքի նպատակը գործողության ընդգծումն է, բանաստեղծությունն սկսվում է ստորոգյալով, իսկ ենթական զեղչվում է։ Տրիոլետ-միավորյալ նախադասության օղակային նման կրկնության դասական օրինակներ է տվել Վ. Տերյանը։ Ահավասիկ դրանցից մեկը.

«Նետում ես ոսկի նետերդ,
Հուրերդ որպես արև,
Ես դեմդ դողդոջ տերև,
Նետում ես ոսկի նետերդ.
Դու բոց ես, ես խենթ թիթեռ եմ,
Դու վառ ես, դու հրաթև,
Նետում ես ոսկի նետերդ,
Հուրերդ որպես արև» (ՎՏ, 1, 208)։

Ինչպես տեսնում ենք, այս բանաստեղծության մեջ առկա է նաև դու ենթակայի հարակրկնությունը, որը տվյալ դեպքում կատարվում է ես ենթակային (ու նրան ստորոգվող հատկանշին) հակադրվելու համար։ Բերված օրինակում ուշադրության արժանի է նաև մեկ այլ հանգամանք. երրորդ տողում շարակարգված բաղադրիչ նախադասությունը, որ այլ ենթակայով է, «մուտք է գործել» միավորյալ նախադասություն առաջին երկու տողերում ամփոփված բաղադրիչ նախադասությանը՝ օղակի առաջին եզրին հակադրվելու համար։ Սա տրիոլետին բնորոշ (բայց ոչ հիմնական) առանձնահատկություններից է։ Իսկ երբ հեղինակը ցանկանում է ընթերցողի ուշադրությունը ավելի շատ հրավիրել գործողի վրա, են-

թական շարադասվում է նախադաս՝ ստորոգյալի լրացումների հետ։ Ենթակայի նախադաս գործածությունը կարող է պայմանավորված լինել նաև հաջորդ տողում մեկից ավելի ստորոգյալների առկայությամբ։ Այդպիսի օղակային կրկնությունը դրսևորում է մարդկային հույզեր, կարոտի, ափսոսանքի, տխրության զգացումներ. ինչպես՝

«Հովիվներն ազատ հեռու սարերում
Կրակ են անում—ձայնում են իրար,
Ես կալանավոր աշխարհում արար,
Հովիվներն ազատ հեռու սարերում։
Ու երկրից երկիր—գերոտից գերում
Գնում են անդուլ անհայտին ավար,
Հովիվներն ազատ հեռու սարերում
Կրակ են անում—ձայնում են իրար...» (ՎՏ, 2, 44)։

Ստորոգյալի օղակային կրկնությամբ միավորյալ նախադասությունը կարող է սահմանափակվել նաև մեկ տողի շրջանակում։ Այս դեպքում բանաստողը սկսվում և վերջանում է նույն ստորոգյալով. ինչպես՝ «Հեռո՜ւ է տունս, հեռո՜ւ» (ԵՉ, 1, 165)։

Ստորոգյալի օղակային կրկնությամբ միավորյալ նախադասությունը սակավադեպ արտահայտվում է նաև արձակ խոսքում, իբրև պարբերության, հաղվադեպ նաև ամբողջ ստեղծագործության (պատմվածք, նովել և այլն) սկիզբ ու ավարտ։ Կրկնության այս ձևը բնորոշ է Ա. Բակունցի լեզվին ու ոճին (համմտ. 47, էջ 32)։ Այսպես, օրինակ, նրա «Միրհավ» գողտրիկ պատմվածքը սկսվում է «Անշուն էր, պայծառ աշուն» *միավորյալ նախադասությամբ*, որը նույնությամբ կրկնվում է պատմվածքի վերջին հատվածի սկզբում՝ մասամբ օղակելով ամբողջ պատմվածքը։

Ստորոգյալի օղակային կրկնությամբ միավորյալ նախադասությունը երբեմն հանդես է գալիս որպես այլ կառուցվածքի (տարբեր ենթականերով բարդ համադասական, բարդ ստորադասական և այլն) նախադասության բաղադրիչ կամ անմիջական կազմիչ, միայն այն յուրահատկությամբ, որ միավորյալ նախադասության կրկնված ստորոգյալով սկսվում և ավարտվում է բանաստեղծական տունը կամ ամբողջ բանաստեղծությունը։ Տվյալ դեպքում կարևորը միավորյալ նախադասության ստորոգյալի հենց այդ օղակային կրկնությունն է, որը լինում է լրիվ և մասնակի։ Մասնակի կրկնության դեպքում կրկնված ձևերի միջև ավելի հաճախ գործածվում են քերականական տարբերություններ։ Իսկ ակնհայտ է, որ «օղակային բառը չի դադարում օղակ լինելուց, երբ քերականական փոփոխության է ենթարկվում» (31, էջ 131). ինչպես՝

«Չէիր ծանձրանա դու գիտությունից,
Չէիր ծանձրանա սիրուց ու կյանքից,
Թե ունենայիր քշնամիներ մեծ,
Թե նրանց շարքում գեթ մեկը լիներ
Մտքիդ հավասար... այժմ դու ես լոկ
Միակ քշնամիդ ու ծանձրանում ես» (ՆՀԺ, 312)։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ հաճախ դուգակցում են կրկնության տարբեր ձևեր։ Այսպես՝ քննենք հետևյալ բանաստեղծությունը, որն ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասություն է.

«Լցվելու համար դատարկվել է պետք,
Դատարկվել է պետք ավելորդ հնից,
Ավելորդ նորից,
Ավելորդ վատից, ավելորդ լավից,
Որքերում դիզված մանրուքի ցավից.
Լցվելու համար դատարկվել է պետք,
Դատարկվել է պետք լցվելու համար,
Լցվելու սիրո երկյուղած խաղով,
Վայելքի քաղով,
Կյանքի, պայքարի լուսավոր շաղով,—
Դատարկվել է պետք լցվելու համար» («Գարուն», 1974, № 8, էջ 13)։

Այստեղ կան տարբեր կրկնություններ, որոնց ոճական նշանակությունը տարբեր է։ Նախ՝ միևնույն բայական գերադաս անդամի (դատարկվել է պետք) կրկնությունը 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, և 11-րդ տողերում կազմում է կցուրդ, իսկ 2-րդ, 7-րդ և 11-րդ տողերում՝ պարույրին մոտեցող հարակրկնություն։ Երկրորդ՝ լցվելու համար նպատակի պարագայի կրկնությունը 6-րդ ու 7-րդ, 8-րդ և 11-րդ տողերում կազմում է կցուրդ, իսկ 1-ին, 6-րդ և 8-րդ տողերում՝ պարույրին նմանվող հարակրկնություն։

Եվ, վերջապես, քննության առարկա նախադասության մեջ առկա է նաև մեկ այլ արտահայտչամիջոց՝ հակադրությունը։ Սա ևս ունի տարբեր դրսևորումներ։ Ամենից առաջ պետք է նշել շարադասությամբ պայմանավորված խաչաձևումը, որը գործածվում է նախ՝ 6-րդ ու 7-րդ և ապա՝ 1-ին ու 11-րդ տողերի միջև (յուրաքանչյուր տողում՝ բայական գերադաս անդամ + նպատակի պարագա)։ Ամբողջ բանաստեղծության համար առավել կարևորը հենց առաջին և վերջին տողերի միջև խաչա-

ձևվող հակադրությունն է։ Իհարկե, բացի այս հակադրությունից, բանաստեղծության մեջ առկա է նաև հականշային հակադրություն մի կողմից՝ կրկնված բայական գերադաս անդամի ու նրա կրկնվող լրացման (լցվելու համար՝ դատարկվել է պետք), մյուս կողմից՝ բացառականով արտահայտված լրացումների (հնից-նորից, վատից-լավից) միջև։

Այժմ անդրադառնանք ստորոգյալի և բայական գերադաս անդամի կրկնությամբ կազմված միավորյալ նախադասության մեջ գործածվող հակադրության բանադարձմանը։

Միավորյալ կառուցվածքում կրկնվող ստորոգյալների միջոցով արտահայտվող հակադրությունը կամ հակադրությը ընդհանուր ստորոգչային հակադրության դրսևորումներից մեկն է, որը համեմատաբար սակավ է հանդիպում և զգալիորեն տարբերվում է հակադրության բանադարձման մյուս դրսևորումներից։ Այն հիմնականում արտահայտվում է ստորոգյալի մասնակի կրկնությամբ։

Ինչպես միշտ, միավորյալ նախադասության մեջ նույնպես ստորոգչային հակադրությունը հիմնվում է համապատասխան հատկանիշների համեմատության ու հակադրության վրա, միայն այն յուրահատկությամբ, որ եթե մյուս դեպքերում համեմատվող ու հակադրվող հատկանիշները ստորոգվում են տարբեր առարկաների, ապա այս դեպքում համադրությունն ու հակադրությունը գործառվում են միևնույն առարկային (առարկաներին) վերագրվող հատկանիշների միջև։ Եվ այս հակադրությունը երբեմն շատ ավելի ուժեղ է արտահայտվում, քան տարբեր առարկաների ստորոգչային հատկանիշների միջև գործառվող հակադրությունն է լինում։ Որոշ լեզվաբաններ նույնիսկ հակված են միևնույն առարկայի հատկանիշների հակադրությունը դիտել օքսիմորոն։ Այսպես, պրոֆ. Վ. Առաքելյանի՝ Գրիգոր Նարեկացու լեզվի ու ոճի քննությանը նվիրված աշխատության մեջ կարդում ենք. «Նարեկացին փնտրում է խոսքի սուր հակադրություններ, որոնք անսպասելի և նանկարածակի լինեն, *որովհետև զգացումների հակասականությունը հնարավոր է միայն խոսքի այլ տիպի հակադրությամբ արտահայտել, այսինքն՝* հակադրությունը ստեղծվում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների միջև, այլ հակադրություն միևնույն անձի տարբեր վիճակների միջև, և այդ ամբողջը նամարյա միաժամանակ է հանդես գալիս։ Ստեղծվում է մի տեսակ օքսիմորոն, որտեղ հակադիր հատկանիշները հայտնվում են միևնույն անձի կամ երևույթի մեջ» *(32, էջ 234)* (ընդգծումը մերն է՝ Ա. Կ.)։ Իհարկե, միավորյալ նախադասության մեջ և այն էլ հատկապես ստորոգյալի կրկնությամբ կառուցում օքսիմորոնային հակադրությունը պետք է ընդունել միայն զգալի վերապահությամբ ու

պայմանականորեն[13]։ Այստեղ կարևորը ոչ այնքան միևնույն առարկայի ստորոգյալին հատկանիշների հակադրությանը օխսիմորոն անվանում տալն է, որքան այդ հակադրության սաստկության ընդունումը։

Ստորոգյալի կրկնությամբ հակադրություն արտահայտող միավորյալ նախադասությունները, որպես կանոն, հիմնականում լինում են ներհակական հարաբերությամբ։ Անգամ բաղադրիչ նախադասությունները այլ հարաբերությամբ կապված լինելու դեպքում էլ այս կամ այն չափով առկա է լինում ներհակությունը։ Եվ դա բնական է. հակադրությունը միշտ էլ հիմնվում է ներհակության վրա։

Ստորոգային հակադրության բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ հակադրվող եզրերի՝ բաղադրիչ նախադասությունների զուգահեռությունն է. կրկնվող ստորոգյալների ու նրանց լրացումների համաչափ դասավորությամբ ստեղծվում է համաչափ հակադրություն։ Սա, իհարկե, ոչ միշտ է պահպանվում։

Բազմազան են հակադրության ստեղծման ձևերը, որոնցից տվյալ դեպքում միավորյալ նախադասության մեջ գործածվում են քերականական հակադիր ձևերը, հակադարձ համեմատությունը, հականշությունը, ստորոգյալների շարադասությունը, շաղկապական կապակցությունը և այլն։ Այս ամենով պայմանավորված՝ միավորյալ նախադասության ստորոգյալի կրկնությամբ արտահայտվող հակադրության բանաձևումն ունենում է տարբեր դրսևորումներ։ Հակադրության բազմակերպությունը պայմանավորված է լինում նաև ստորոգյալի մասնակի կրկնության յուրահատկություններով, հակադրության սաստկության աստիճանով և, որ առավել կարևոր է, կրկնվող ստորոգյալի արտահայտությամբ (բայական, անվանական)։ Ահա թե ինչու նման հակադրության քննությունը պետք է կատարել նշված բոլոր հանգամանքների հաշվառումով և մասնավորապես պետք է հանդես բերել տարբերակված մոտեցում, այն է՝ բայական ու անվանական ստորոգյալներով կազմված հակադրությունները պետք է քննել առանձին-առանձին՝ դրանց յուրահատկություններն առավել ամբողջականությամբ բացահայտելու համար։

Նախ՝ միավորյալ նախադասության բայական ստորոգյալի կրկնությամբ արտահայտված հակադրության մասին։ Ակնհայտ է, որ բայական ստորոգյալներից հիմնականում պարզ ստորոգյալի կրկնությամբ է միավորյալ նախադասության մեջ ձևավորվում հակադրության բանաձևումը։ Իսկ պարզ ստորոգյալի կրկնությունը հակադրությունը

---

13 *Սովորաբար օխսիմորոն կամ երբաբանություն է դիտվում այն բանաձևումը, «որը կազմվում է տրամագծորեն հակադիր ու անհամատեղելի հատկանիշներով։ Օրինակ՝ այրող սառնություն, խոսուն լռություն, թախծոտ երջանկություն...» (13, էջ 127)։*

միատեսակ չի դրսևորում։ Անմիջականությունը պայմանավորված է ստորոգյալի արտահայտությամբ ու շարադասական առանձնահատկություններով։ Ավելի հաճախ հակադրվում է ստեղծվում զուգադրական բայ-ստորոգյալի կրկնությամբ կազմված այն միավորյալ նախադասությամբ, ուր ստորոգյալի երկրորդ կրկնությունը կատարվում է բաղադրիչների հակառակ շարադասությամբ։ Նման հակադրությունը համեմատաբար թույլ է լինում. ինչպես՝ «Առան–տվեցին, տվեցին–առան Ու վերջում... լավամարդ դառան» (ՊՍ, 4, 75)։

Զուգադրական կազմությամբ ստորոգյալի մասնակի կրկնությամբ միավորյալ նախադասության արտահայտած հակադրությունը համեմատաբար ուժեղ է լինում, երբ այդ ստորոգյալներն ունենում են հականիշ բաղադրիչներ, իսկ մյուս բաղադրիչը ընդհանուր է և կրկնվում է. ինչպես՝ «Նա արագ գնաց–բարձրացավ, եկավ–բարձրացավ»։ Նկատելի է, որ միևնույն համատեքստում կարող են զուգահեռաբար կրկնվել երկու հակադիր ստորոգյալներ՝ զուգահեռ հակադրություններ ստեղծելու համար. ինչպես՝

«Բախտի խորհրդով եկանք–մոտեցանք
Նվ մոտենալով այնքան հեռացանք
Որ ետ կանչելու էլ բան չմնաց։
Բախտի խորհրդով թողինք–հեռացանք,
Նվ հեռանալով այնքան մոտեցանք
Որ բաժանվելու հնար չմնաց» (ՀՍՔ, 114)։

Նշված դեպքերում կրկնված ստորոգյալների միջև գործառվող հակադրությունը սովորական է, առանց ընդգծված արտահայտչականության։ Սակայն շատ հաճախ միավորյալ նախադասության մեջ ստորոգական հակադրությունն ունենում է շեշտված արտահայտչականություն։ Այդպիսի հակադրությունը արդեն լիարժեք անտիթեզ է, քանի որ «անտիթեզը սովորական հակադրությունից տարբերվում է իր արտահայտչականությամբ, խիստ հակադրությամբ և հստակ ռիթմով» (77, էջ 90)։ Հակադրությունը ուժեղ է լինում, երբ միևնույն կառույցում դրսևորվում են նույն ստորոգյալի կամ բայական գերադաս անդամի հաստատական ու ժխտական ձևերը՝ առանձին կամ լրացումներով։ Այս դեպքում բաղադրիչ նախադասությունների միջև մեծ մասամբ ստեղծվում է շարահյուսական զուգահեռություն։ Վերջինս ավելի ակնբախ է լինում, երբ հակադրվում են նաև լրացումները։ Լրացումների միջև գործառվող հակադրությունը կարելի է անվանել լրացական հակադրություն։ Նման նախադասությունը հիմնականում լինում է հանդիպադրական հարաբերությամբ և շարահարական կառուցվածքի. ինչպես՝ «վացացնողիդ

մոտ գնա, ծիծաղեցնողիդ մոտ մի՛ գնա» (Ա, 178)։ Այստեղ զուգակցում են ստորոգային և լրացական հակադրությունները։

Միևնույն բայ-ստորոգյալի հաստատական ու ժխտական ձևերի գործածությամբ հակադրության ստեղծումը երբեմն պայմանավորված է լինում այդ ստորոգյալների լրացումների խոսքային հականշությամբ։ Այս դեպքում նախադասությունը լինում է ժխտման հարաբերությամբ, և կապակցման բառական միջոցի դերով հանդես են գալիս ժխտման շաղկապները. ինչպես՝ «Մի՛ լինիր ուրագի պես՝ Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, Այլ եղիր սղոցի պես՝ Մին դեպի քեզ, մին դեպի մեզ» (ՀՔ, 86)։ Այստեղ ուրագ և սղոց բառերը գործածված են որպես խոսքային հականիշներ։

Երբեմն հակադրությունն ավելի շատ կենտրոնանում է կրկնված ստորոգյալի լրացումների միջև, իսկ ստորոգական հակադրությունը նվազում է կամ էլ ընդհանրապես չեզոքանում է։ Այս դեպքում բաղադրիչ նախադասությունները կապակցվում են մեծ մասամբ ոչ թե... այլ զուգադրական շաղկապով. ինչպես՝ «Ինքը ոչ թե հրամանատար է տրնտեսական գծով, այլ հրամանատար է՝ առանց գծի» (ԲՀՍՋ, 252)։

Հակադրությի կազմող միավորյալ նախադասությունները լինում են նաև տրոհական հարաբերությամբ։ Այս դեպքում հակադրությունը դրսևորվում է տրոհումով։ Ընդամին, մինչդեռ կամ, կամ թե, և կամ, կա՛մ...կա՛մ և այլն շաղկապներով կապակցվելիս միավորյալ նախադասության ստորոգային հակադրությանը հավելվում է բաժանման բուն երանգը, թե-ով կապակցված կառույցում որպես կանոն, տրոհում— հակադրությունը դրսևորվում է հարցումով։ Այսպիսի միավորյալ նախադասությունը լինում է թե՛ երկկազմ և թե՛ միակազմ։ Օրինակ՝ «Նա կա՛մ հարցում է քեզ, կա՛մ չի հարցում» «Գնա՞լ, թե՞ չգնալ» (ԽԴՌԿ, 311)։

Հակադրության ստեղծմանը նպաստում են նաև միավորյալ նախադասության բաղադրիչների կապակցմանը օժանդակող մեկ...մեկ, մերթ...մերթ և երբեմն...երբեմն զուգադիր կապակցությունները։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը կազմվում է պարզ ստորոգյալի մասնակի կրկնությամբ և լինում է հանդիպադրական հարաբերությամբ. ինչպես՝ «Դու մերթ զարկվել ես, մերթ զարկել չարին...» (ՊՍ, 1, 156)։

Պարզ ստորոգյալի կրկնությամբ կազմված միավորյալ նախադասության մեջ ստորոգական հակադրությունը կարող է նաև լրիվ վերանալ, չեզոքանալ, իսկ լրացական հակադրությունը՝ պահպանվել։ Դա հանդիպում է այն ժամանակ, երբ բաղադրիչ նախադասություններն ունենում են կրկնվող ընդհանուր բայ-ստորոգյալ կամ բայական դերադաս անդամ, իսկ սա առկա է, երբ ստորոգյալի կրկնությունը լրիվ է,

և հակադրվում են միայն երկրորդական անդամները։ Նման միավորյալ նախադասության կառուցվածքային ամենաբնորոշ առանձնահատկությունը երկրորդ բաղադրիչում ստորոգյալի կամ բայական գերադաս անդամի զեղչումն է, թեպետ չի բացառվում նաև գործողությունն ընդգծելու նպատակով դրա կրկնությունը. ինչպես՝ «Աղջկա գեղը չտեսանք, հարսի՝ լավը» (Ա, 271)։ «Հունվարի ասածից երաժտվում է փետրվարին, մի տարի ետառաջ գրած բանից երաժտվում է ներկայումս» (ՄՆեՏ, 47)։

Ինչպես նշեցինք, հակադրության բանադարձումն արտահայտվում է նաև անվանական ստորոգյալի կրկնությամբ։ Տվյալ դեպքում անվանական ստորոգյալը հանդես է գալիս մասնակի կրկնությամբ։ Առավել հաճախադեպը նույն ստորոգյալի հաստատական և ժխտական ձևերի գործառությունն է միևնույն կառույցում։ Այստեղ ստորոգային հակադրությունն ուժեղ է լինում, իսկ շարահյուսական զուգահեռությունը մասամբ խախտվում է։ Որպես օրինակ բերենք Խահակյանից վերն արդեն մեկ այլ առիթով մեջբերված հետևյալ նախադասությունը. «Մենք պատասխանատու չենք մեր մեջ արթնացած զգացումի, տենչի համար, բայց պատասխանատու ենք այն կատար ածելու, իրականացնելու մեջ» (Ա՛, 3, 399)։ Այստեղ կարևոր է հաստատական և ժխտական ստորոգյալների շարադասությունը։ Հաստատական ստորոգյալը առաջադաս գործածվելիս երկրորդ բաղադրիչում կրկնությունը վերանում է. ժխտական ստորոգյալը զեղչվում է՝ փոխարինվելով ոչ, երբեմ բառերով։ Համմ. «Մենք պատասխանատու ենք մեր մեջ արթնացած զգացումը, տենչը կատար ածելու, իրականացնելու մեջ (կամ՝ համար), իսկ այդ զգացումի, տենչի համար՝ ոչ (=պատասխանատու չենք)։

Հակադրությունը երբեմն էլ պայմանավորված է լինում ստորոգյալների խոսքային հականշությամբ, որպիսի դեպքում հակադրությունը մոտենում է օքսիմորոնին. ինչպես՝ «Քո խոնարհ ջրկիրն եմ եղել, եղել եմ և տեղդ, (ՀՍՍՔ, 74)։

Միավորյալ նախադասության մեջ ինքնատիպ հակադրություն է ստեղծում ենթակայի ու կրկնվող անվանական ստորոգյալի ստորոգելիի բառական հականշությունը։ Այսպիսի հակադրությունը նույնպես իր սաստկությամբ և արտահայտչականությամբ մոտենում է օքսիմորոնյան բանադարձմանը. ինչպես՝ «Ո՛ղ անկարելին դառնա կարելի Աշխարհում համայն Ամենքի՛ս համար, Դառնա կարելի վշտն ու հենց հիմա, Դառնա կարելի մե՛կ բառով՝ — Բա՛րև» (ՊՍ, 2, 110)։

Անվանական ստորոգյալի կրկնության ժամանակ հակադրության դրսևորման միջոց է դառնում նաև բառախաղը, որով հաղթահարվում

է կրկնության բերած միալարությունը, և խոսքը դառնում է աշխույժ։ Այս դեպքում կրկնվող ստորոգյալների (մասնավորապես ստորոգելիների) միջև գործառվում են ինչպես քերականական, այնպես էլ բառակազմական տարբերություններ. ինչպես՝ «Նախանձոտ չեն, սակայն նախանձախնդիր են» (ՊՍ, 1, 110)։ «Կարծես գերի չէ, այլ գերեվարող» (ԲՀՍՋ, 192)։

Այսպիսով, ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությունը բարդ համադասական կապակցության ինքնատիպ դրսևորումներից մեկն է և ոճական կարևոր նշանակություն ունի։

ՄԻԱԿԱՋՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Լեզվական ոչ սակավ փաստերը հաստատում են նաև միակազմ միավորյալ նախադասության գոյությունը ժամանակակից հայերենում։ Միակազմ միավորյալ նախադասությունը շարահյուսական ինքնատիպ կառույց է, որը հակադրվում է մի կողմից՝ երկկազմ միավորյալ նախադասությանը, մյուս կողմից՝ միակազմ մյուս (պարզ, բարդ համադասական, բայց ոչ միավորյալ և այլն) նախադասություններին՝ դրսևորելով կառուցվածքային ու իմաստային իր ուրույն առանձնահատկությունները։ Այն երկկազմ միավորյալ նախադասությունից տարբերվում է իր միաբևեռ կառուցվածքով։ Եթե երկկազմ միավորյալ նախադասության մեջ առարկան (առարկաները) և նրան (նրանց) վերագրվող հատկանիշները ունեն իրենց քերականորեն տարբերակված արտահայտությունը՝ հանձինս ենթակայի (ենթակաների) ու ստորոգյալների, ապա միակազմ կառուցում բացակայում է ենթակայի եղրը։ Հետևաբար միակազմ միավորյալ նախադասության մեջ առարկան (առարկաները) և նրան (նրանց) վերագրվող հատկանիշները չունեն իրենց բառաքերականական տարբերակված արտահայտությունը. ինչպես՝ «Խեղճի լեզուն կտրում են և աչքը հանում» (ՍԱՃՀ, 54)։ «Չլուծ, միայն մեղմացնել կրակը» (ՀՔՄՏՋ, 1, 148)։ Այս նախադասություններից յուրաքանչյուրում նշվում է մտային սերտ կապի մեջ գտնվող երկու գործողություն, որոնք արտահայտող դիմավոր և անդեմ գերադաս անդամները համարժեք են երկկազմ բարդ նախադասության բայ-ստորոգյալներին։ Այնուհետև. դրանք, որպես համադասական հարաբերությամբ կապված մեկից ավելի ստորոգումներ ունեցող կառույցներ, բարդ համադասական, ավելի կոնկրետ՝ միավորյալ նախադասություններ են, քանի որ դրանցում գործողությունների կատարումը սպասվում է միևնույն անձի կամ անձանց կողմից։ Բերված նախադասություններում ենթական թեև չի վերականգնվում, բայց և այնպես պատկերացվում է, մտովի ըմբռնվում է։ Դա ինչ-որ մեկն է (կամ մեկից ավելի անձինք), որին (կամ որոնց) տվյալ իրադրության

մեջ վերագրվում են հատկանիշները։ Այդ ենթադրյալ ենթական ընդհանուր է բոլոր բաղադրիչների համար, ինչպես երկկազմ միավորյալ նախադասության մեջ քերականական ենթական է լինում։ Այնքանով, որքանով բաղադրիչ նախադասությունների ստորոգյալին հատկանիշները վերաբերում են միևնույն առարկային կամ առարկաներին, այդ նախադասություններն ունեն տրամաբանորեն ըմբռնվող ընդհանուր ենթակա, որը պայմանականորեն կարելի է անվանել տրամաբանական ենթակա։

Այսպիսով, եթե երկկազմ միավորյալ նախադասության բաղադրիչների միավորման հիմքը ստորոգյալին հատկանիշների վերագրումն է ընդհանուր քերականական ենթակային (ենթականերին), ապա միակազմ միավորյալ նախադասության բաղադրիչների միավորման հիմքը այդ հատկանիշների մտովի վերագրումն է տրամաբանորեն ըմբռնելի ընդհանուր ենթակային (ենթականերին)։ Բացի դրանից, այս դեպքում էլ բաղադրիչ նախադասությունների միավորմանը նպաստում են նաև դրանց միջև գործառվող շարահյուսական հարաբերությունները, մյուս ընդհանուր անդամները, կապակցման բառական միջոցները և այլն։

Հետևաբար բազմակի գերադաս անդամներով միավորված այն նախադասական նախադասությունը, որի մեջ տարբեր հատկանիշներ ստորոգվում են էապես չտարանջատված, բայց տրամաբանորեն ըմբռնվող միևնույն առարկային կամ առարկաներին, կոչվում է միակազմ միավորյալ նախադասություն։ *Միակազմ միավորյալ նախադասությանը բնորոշ է ստորոգման ու հնչերանգի յուրատիպ դրսևորումը։* Ընդամին, դիմավոր և անդեմ միակազմ միավորյալ նախադասությունների մեջ ստորոգումների արտահայտությունը տարբեր է։ Դիմավոր կառուցում ստորոգումները նշույթավորվում են՝ հանձին բայական գերադաս անդամների դեմքի քերականական արտահայտության։ Բայց մյուս կողմից՝ քանի որ դեմքը տվյալ դեպքում ունի ձևական նշանակություն և շատ հաճախ էլ մնում է անորոշ, ուստի ստորոգումներն էլ ձևական են. ինչպես՝ «Առաջ կեր, հետո գոհացիր» (Ա, 160)։ Այս նախադասությունը թեև ունի 2-րդ դեմք, բայց և այնպես ընդհանրական դիմավոր միակազմ կառույց է, քանի որ հաստատում է առաջ ուտելու և հետո գոհանալու հելուկթյունների վերաբերելն ընդհանուրին։ Ինչպես տեսնում ենք, դիմավոր միակազմ միավորյալ նախադասության մեջ կարևորը ստորոգումների քերականական արտահայտությունն է։

Անդեմ միակազմ միավորյալ նախադասության մեջ ստորոգումները չունեն քերականական արտահայտություն և դրսևորվում են հնչերանգով։ Ընդհանրապես շարահյուսագիտության մեջ հնչերանգային ստորոգումը դիտվում է անդեմ միակազմ նախադասության բնորոշ

առանձնահատկություններից մեկը (տե՛ս 134, էջ 184. 126, էջ 405. 9, էջ 26—27. 64, էջ 7. 94, էջ 404—406)։ Անդեմ միավորյալ նախադասության մեջ ևս հնչերանգի դերը երկակի է. այն և՛ ձևավորում է մտքի ավարտվածությունը, և՛ իրականացնում է ստորոգումները։ Ուստի այս դեպքում էլ բառական-քերականական միջոցները և հնչերանգը հակադարձ համեմատական են։ Այսպես՝ «Հետևել Դեղջպուհի առաբեներին և խաճգարել նրան» (ԴԴվ, 2, 60)։ «— Անիծյալ Արշակունի... այլասերից ժողովրդյան և դարձրից տիրաննենգ ու տիրասպան։ Մոլի խառնակիչ, մարդասպան և ո՛չ թագավոր...»[1] (ՍՋՀՔ, 68)։ Ընդգծված նախադասությունները, մասնավորապես երկրորդը, հնչերանգային ստորոգումից բացի, ունեն նաև, այսպես կոչված, մտային կամ առամաբանական ստորոգում։ Տվյալ դեպքում մտային ստորոգում ենք դիտում խոսքաշղթայում հատկանիշների՝ մտովի կապվելը միևնույն առարկային կամ առարկաներին։ Այսպես՝ երկրորդ նախադասության մեջ Արշակունին է խառնակիչը, մարդասպանը և ոչ թագավորը (իհարկե, միայն տվյալ գրական հերոսի՝ Կամսարականի բնութագրմամբ)։ Այդ նախադասությունը համանիշ է «(Արշակունին) մոլի խառնակիչ է, մարդասպան է և ոչ թագավոր» երկկազմ կառույցին։

Միակազմ, առավել ևս անդեմ, միավորյալ նախադասության ըմբռնման հարցում էական նշանակություն ունի խոսքը, համատեքստը։ Այսպես՝ «Առավոտը վաղ ամրողջ Բաղդատը թնդում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում. ջուրը ևատծունն է, և էսօրվանից ոչ ոք իրավունք չունի փողով ծախելու։ Պատռել բոլոր ջրկիրների տիկերն ու ջարդել նրանց կժերը։ Աղբատ Հասանի կուժն էլ ջարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ ղրկում» (ՀՔ, 373)։ Ընդգծված նախադասությունների բովանդակությունները (ներառյալ ստորոգվող հատկանիշների վերաբերությունը) հասկացվում են միայն համատեքստից։ Խոսքային պայմաններից է երևում, թե առաջին միավորյալ նախադասության գերազաս անդամների գործողությունները իրո՞ւ պահանջ ո՞ւմ կողմից են առաջադրվում և ո՞ւմ են ուղղվում, որոնցից և սպասվում է դրանց կատարումը։ Հաջորդ նախադասության գործողությունների կատարման հիմունքը դարձյալ հասկացվում է նախորդ նախադասություններից։

Դիմավոր միակազմ միավորյալ նախադասության ստորոգչին

---

[1] Հաշվի առնելով համատեքստում միավորյալ նախադասության ստորոգչին հատկանիշների վերաբերության ավելի հստակ երևալը՝ այստեղ և այսուհետև անհրաժեշտության դեպքում քննվող միավորյալ կառույցը բերում ենք կից նախադասության (նախադասությունների) հետ կապակցված վիճակում։

հատկանիշների վերաբերության՝ լեզվամիջավայրով պայմանավորված լինելն է պատճառը, որ միևնույն նախադասությունը երբեմն մի համատեքստում դիտվում է միակազմ, իսկ մեկ ուրիշում՝ երկկազմ: Այսպես՝ «Ջորեղ զգացմունքներից ալեկոծվող սիրտն էլ ունի իր կապրիզները, ինչպես օվկիանոսն ահեղ փոթորկի ժամանակ... Ուզում ես աղոթել և անիծել, ուզում ես ապրել և մեռնել: Երանի՜, բայց վա՜յ նրան, ում սրտին հատուկ են այդպիսի ալեկոծությունները» (ՆԴ, 237): Ընդգծված նախադասությունը դիմավոր միակազմ է, որովհետև ունի ընդհանրական նշանակություն, մինչդեռ խոսքից դուրս կարող է ըմբռնվել նաև որպես զեղչված ենթակայով երկկազմ միավորյալ նախադասություն: Համմտ. «(Դու) ուզում ես աղոթել և անիծել, ուզում ես ապրել և մեռնել»: Ավելացնենք, որ «նման դեպքերում յուրաքանչյուր նախադասություն պետք է դիտել որպես տարբեր նախադասություն և ոչ թե միևնույն նախադասության տարբեր կիրառություն: Այլ կերպ՝ այդպիսի կապակցությունները հանդես են գալիս որպես շարահյուսական համանուններ» (17, էջ 472):

Պատահում է նաև հակառակը. միևնույն միավորյալ նախադասությունը տվյալ լեզվամիջավայրում երկկազմ է, իսկ խոսքից դուրս ըմբռնվում է որպես միակազմ: Դա լինում է մասնավորապես այն ժամանակ, երբ նախադասությունն ունենում է ընդհանրական նշանակություն, երբ նրա բովանդակությունը կարող է ընդհանրացվել: Ահավասիկ մի հատված Մարուքխանյանի՝ Մ.Քայելին ուղղված խոսքից. «Սիրում եմ այդ տեսակ մարդկանց... դիզում են, դիզում, էլի քաղցած են... Միայն ծուլերը կարող են նրանց ագահ համարել... Ունես, աշխատիր կրկնապատկել, եռապատկել: Քոնը քիչ է, խլիր հարևանիդ, ընկերիդ, եղբորիդ: Ճանկեռդ սրիր ու ընկիր աշխարհի հոգին հանիր, մի՛ ևայիր ու պառավ կնոջ պես սրան ու նրան նախանձիր: Ի՞նչ վաճառականը կարող է մի տերության հավասարվել» (ԱՇՔ, 131): Ընդգծված նախադասությունը տվյալ լեզվամիջավայրում երկկազմ է, քանի որ խիստ որոշակի են և՛ խոսողը (Մարուքխանյան), և՛ խոսակիցը (Մ.Քայել), բայց խոսքից դուրս կարող է դիտվել նաև որպես միակազմ, երբ հաշվի ենք առնում առևտրական աշխարհի մարդկանց ընդհանուր հոգեբանության դրսևորումը:

Այսպիսով, միակազմ միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության գնահատման հարցում շատ կարևոր է համատեքստի հաշվառումը:

Միակազմ միավորյալ նախադասության կառուցվածքային յուրահատկություններից մեկը երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում գերա-

դաս անգամի վեղչումն է, որը կատարվում է երկկազմ միավորյալ նախադասության ստորոգյալի վեղչման համաբանությամբ։ Այս հարցին չենք անդրադառնում, քանի որ վերն արդեն քննել ենք։

ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միակազմ միավորյալ նախադասությունները տարբերակվում են քերականական դեմք ունենալու կամ չունենալու տեսակետից և ըստ այդմ էլ լինում են երկու տեսակ՝ դիմավոր ու անդեմ։ Դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունն ունի քերականական դեմք, թեև այն չի մասնավորվում կոնկրետ առարկայի (առարկաների) վրա. ինչպես՝ «Վեր ես կենում ինքնագլուխ Դլուխդ առնում, թողնում գնում» (ՀՍՔՆ, 88)։

Անդեմ է կոչվում այն միակազմ միավորյալ նախադասությունը, որ չունի քերականական դեմք. ինչպես՝ «Պահակներ դնել, դուռը փակել և փախչել ցանկացողին սատակել անմիջապես» (ՍՋՀՐ, 460)։ «Գումատ և տխուր»։

Միավորյալ նախադասության այս երկու տարատեսակները տարբերվում են նաև այլ հատկանիշներով։ Այսպես՝ ստորոգումները դիմավոր ձևերում դրսևորվում են բառական-ձևաբանական միջոցներով, իսկ անդեմներում՝ հնչերանգով։ Այնուհետև. ստորոգումների դրսևորման այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ դիմավոր միավորյալ նախադասության մեջ եղանակավորությունը լինում է թե՛ քերականական՝ արտահայտելով բայի եղանակային ձևերով, շարադասությամբ, հնչերանգով, և թե՛ բառական՝ դրսևորվելով վերաբերմունքային բառերով և այլն, իսկ անդեմ միավորյալ նախադասության մեջ այն ավելի շատ հնչերանգային է։

Ա. ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դիմավոր միավորյալ նախադասությունը բաղադրվում է դիմավոր բայերով արտահայտված երկու կամ ավելի գերադաս անդամներից։ Այս դեպքում դեմքը առկա է սոսկ ձևական-քերականական առումով և չի մասնավորվում։ Նման միավորյալ նախադասության դիմային իմաստը նույնպես վերաբերության տեսակետից միատեսակ չէ (հմմտ. 12, էջ 322)։ Այսպես՝ հմմտ. 1. «Բարեկամի հետ կեր ու խում արա, առ ու տուր մի՛ անիր» (Ա, 226)։ 2. «Էն մեհնավոր ծառի տակ փոս փորեցին

մի խորին, Առանց ժամ ու պատարագ Մեջը ղրրին Մարոյին, էն սև քարն էլ տաշեցին, Բերին վրրեն քաշեցին» (ՀԲ, 148)։ Առաջին նախադասության դիմային վերաբերությունը ընդհանրական է. նրա գերադաս անդամների արտահայտած գործողություններդ վերաբերում են ընդհանուրին, մարդուն առհասարակ։ Դա մարդկային փոխհարաբերությունների փորձից արված ընդհանրացում է և ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասություն է։

Երկրորդ նախադասության գերադաս անդամների դիմային իմաստը վերաբերության տեսակետից անորոշ է, քանի որ տվյալ դեպքում կարևորությունը տրվում է բուն գործողություններին, այլ ոչ թե դրանք կատարողներին։ Իհարկե, այդ գործողությունների կատարումը տրամաբանորեն կապվում է կոնկրետ սուբյեկտի հետ (պոեմում հասկացվում է դրանց կատարումը Մարոյի հարազատների ու համագյուղացիների կողմից)։ Բայց քանի որ գործողությունների կատարումը չի մասնավորվում կոնկրետ առարկայի (առարկաների) վրա, ուստի այդ նախադասությունն անորոշ դիմավոր միակազմ միավորյալ է։

Այսպիսով, դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունները դիմային վերաբերության տեսակետից բաժանվում են երկու խմբի՝ ա) ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասություններ և բ) անորոշ դիմավոր միակազմ միավորյալ նախադասություններ։ Սրանք չունեն գործածության միևնույն հաճախականությունն ու ընդգրկման ոլորտները. առաջիններն ավելի հաճախադեպ են։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ (կրճատ՝ ԸԴՄՄ) նախադասությունն ունի ընդհանրական նշանակություն. նրանում հատկանիշները ստորոգվում են քերականական երեք դիմքերից յուրաքանչյուրին։ Այս դեպքում դիմքը ձևական նշանակություն ունի, սոսկ արտահայտման միջոց է, և «հաղորդումը վերաբերվում է մարդկանց ընդհանրապես, ընդհանրացվում է իրականության որևէ կողմը՝ որպես խրատ, արգելք և այլն» (94, էջ 396)։ Հետևաբար ԸԴՄՄ նախադասությունների սուբյեկտը մարդն է ընդհանրապես, քանի որ դրանք մարդկության դարավոր կենսափորձից արված եզրակացություններ են։ Նման նախադասությունները հիմնականում ժողովրդական առածներ են ու ասացվածքներ. ինչպես՝ «Հարսնիտունը չգիտե, շերեփն առած կըվազե» (Ա, 101)։ «Առաջ ասեղը քեզ խրե, հետո մախաթը՝ ընկերիդ» (Ն. տ., 159)։ «Շերեփային բանի դեր, հետը գնա» (Ն. տ., 68)։

ԸՊՄՄ նախադասությունները հիմնականում բայական են և ըստ գերադաս անդամների արտահայտության բաժանվում են երկու խմբի՝ ա) բայական միևնույն եղանակաժամանակային ձևով արտահայտված գերադաս անդամներով միավորյալ նախադասություններ և բ) տարբեր եղանակաձևերով արտահայտված գերադաս անդամներով միավորյալ նախադասություններ:

1. Ավելի հաճախ ԸՊՄՄ նախադասության բայական գերադաս անդամները դրսևորվում են միևնույն եղանակաժամանակային ձևով: Դրանք մասնավորապես արտահայտվում են.

ա) Սահմանական եղանակով, հատկապես վերջինիս՝

1) Ներկա ժամանակի եղակի 2-րդ, հոգնակի 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերով. ինչպես՝ «Մի տեսակ ամեն ինչ հիշում ես, ամեն ինչի մասին մտածում...» (ՎՏ, 3, 372): «Ծնվում եմ ակամա, ապրում եմք զրմաացած, մեռնում եմք կարոտով» (ԱՒ, 3, 76): «Ամեն քայլափոխում եք տեսնում, ամեն քարի կտորի վրա եք կարդում թշվառացնող, ավերող վայրենի ուժը» (ԼԱ, 106): «Միշտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում ու նրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբար» (ՊՍ, 1, 318):

2) Վաղակատար ժամանակի եղակի 2-րդ դեմքով: Այսպես՝ «Մեկ էլ գիշերը պարկել ես, ողջ օրը եզի պես քաշել, չաշխատվել ես, վեր ես ընկել, ոտներդ ձգել...» (ՊՊեԾ, 2, 33):

3) Անցյալ կատարյալի եղակի 1-ին ու 3-րդ և հոգնակի 1-ին դեմքերով: Այս դեպքում, որպես կանոն, միավորյալ նախադասության բաղադրիչները կառուցվում են աստիճանական հակադրության սկզբունքով. ինչպես՝ «Գնալ-գնալ ժողովեցի, շերեփ-շերեփ ցրեցի» (Ա, 50):

բ) Ավելի շատ նրամայական եղանակով: Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչների հակադրության դուգահեռությունն ավելի է շեշտվում: Ըղակի հրամայականով արտահայտված գերադաս անդամներով ԸՊՄՄ նախադասությունները «սովորաբար արտահայտում են խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն՝ ուղղված են բոլորին և ոչ միայն հատկապես երկրորդ դեմքին» (12, էջ 329). ինչպես՝ «Գժի հետ վարվիր, խելոքի հետ սազ արի» (Ա, 166): Այստեղ հակադրությունը համասեռ է: Այն լինում է նաև անհամասեռ, երբ բաղադրիչ նախադասությունները կազմվում են տարբեր անդամներից. ինչպես՝ «Գիլի հետ ընկերացիր, դաշանակը ձեռքիդ մի՛ գցիր» (Ա, 7):

ԸՊՄՄ նախադասության բայական գերադաս անդամները երբեմն էլ արտահայտվում են հոգնակի հրամայականով. ինչպես՝ «Օ՜, գրացե՛ք հիմա. Այդ ծառերին՝ խաչված բուրվարներին ամա, Օ՜, փրկեցե՛ք նրանց

հարվածներից քամու, Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ» (ԵՉ, 1, 345)։

գ) ենթադրական եղանակի ապառնի ժամանակով։ Ընդ որում, ապառնու եղակին այս դեպքում ունենում է սահմանական ներկայի նշանակություն։ Այս կառուցվածքում չի բացառվում նաև համասեռ հակադրության դրսևորումը. ինչպես՝ «Ո՛չ կուտեմ, ո՛չ կուտեցնեմ, դարակը դնեմ կեռատեցնեմ» (Ա, 27)։ «Գիշերը մարդ կմորթե, ցերեկը ճամփա կեարդե» (Ա, 30)։

ԸԴՄՄ նախադասության բայական գերադաս անդամներն ենթադրական ապառնու հոգնակի 3-րդ դեմքով արտահայտվելիս գործողությունների ընդհանրականությունն ավելի է մեծանում. ինչպես՝ «Մին կխոսնե, մին էլ կլռնե» (Ա, 36)։

դ) Սակավադեպ ըղձական ապառնու հոգնակի 1-ին և եղակի 2-րդ դեմքերով. ինչպես՝ «Հենթինը ուտենք, խելոքինը պահենք» (Ա, 180)։ Նշենք, որ եթե 2-րդ դեմքով արտահայտվող պարզ նախադասությունները հիմնականում առածներ են ու ասացվածքներ, ապա միավորյալ նախադասություններն արդեն դրսևորում են մարդու առօրյա գործունեությունը. ինչպես՝ «Մեկ էլ, ասենք, մոհուդդ դրիր մի ձի առնես, քո բերքն ու մասիլը բարձես վրեն, տանես քո ձեռքով սաղացնես, օգուտը ուրիշին չուտացնես» (ՊՊ, 2, 331)։

2. Ինչպես նշեցինք, ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամներն արտահայտվում են նաև տարբեր եղանակաժամանակային ձևերով։ Միևնույն կառույցում ավելի հաճախ դուգակցում են սահմանական ներկան և ենթադրականի ապառնին՝ «Տուն չունի, դուռ կփնտրե» (Ա, 113), ենթադրական ապառնին և ըղձական ապառնին՝ «Աչքեն կեհանե, դնե ականջը» (Ա, 84) և այլն։

ԸԴՄՄ նախադասությունը սակավադեպ էլ լինում է անվանական։ Այս դեպքում նրա գերադաս անդամներն արտահայտվում են անվանական ստորոգյալի կաղապարով. ինչպես՝ «Իմ տան ծառան եմ, ուրիշին աղաե եմ» (Ա, 275)։

Միավորյալ նախադասության բայական գերադաս անդամներն արտահայտվում են նաև «պարզ ստորոգյալ+բայական բաղադրյալ ստորոգյալ» կաղապարով. ինչպես՝ «Շատ ապում ես մի րոպե առաջ իմանալ ամեն ինչ, մտքիդ առաջ ես բաշում կարդացած նկարագրություններդ, տեսած պատկերներդ, ուզում ես ամփոփել իրականության մեջ այն...» (ԼԱ, 101)։

Նման միավորյալ նախադասությունը հաճախ էլ արտահայտվում է «անվանական ստորոգյալ+պարզ ստորոգյալ» կառույցով. ինչպես՝ «Ով

թվարա՞ն եղեմ *մի քիչ, Բայց պայմանով այս ամոթիչ. Ո՛չ թե ճշտին սուտ գումարեմ, Այլ բաժանեմ սուտը ճշտին» (ՊՍ, 1, 417—418)։*

ՀԴՄՄ նախադասության գերադաս անդամներն արտահայտվում են նաև բայական բաղադրյալ ստորոգյալի կաղապարով։ Այս դեպքում բաղադրիչ նախադասություններն հիմնականում ունենում են ընդհանուր եղանակիչ, որի գործառույթով ավելի հաճախ հանդես են գալիս պիտի, պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է, մնում է և այլ ձևեր։ Նշենք, որ այս եղանակիչների ու անորոշ դերբայի կապակցության մասին մեր շարահյուսագիտության մեջ չկա միասնական ըմբռնում։ Պրոֆ. պրոֆ. Մ. Աբեղյանը, Գ. Սևակը, Ս. Գյուլբուդաղյանը և Ի. Իշխանյանը դա համարում են ենթակայի ու ստորոգյալի կապակցություն (տե՛ս 3, էջ 372. 39, էջ 40. 40, էջ 114—117. 48, էջ 98)։ Այս հարցին պրոֆ. վ. Առաքելյանն անդրադարձել է մի քանի անգամ՝ հիշյալ ձևերը մեկ համարելով ենթակայի ու ստորոգյալի կապակցություն (տե՛ս 27, էջ 49), մեկ՝ շարահյուսական միասնական միավոր՝ բարդ ստորոգյալ (տե՛ս 27, էջ 50), իսկ ավելի ուշ՝ անդեմ նախադասություններ (տե՛ս 28, էջ 34)։ Ակադ. Գ. Ջահուկյանը դրանք դիտում է վիճակահեղանակային բնույթ ունեցող «եղանակիչ բայ+անորոշ դերբայ» կառույցի միակազմ անենթակա նախադասություն (տե՛ս 94, էջ 395—396), իսկ պրոֆ. Ս. Աբրահամյանն այդ եղանակիչների ու անորոշ դերբայի կապակցությունը դիտում է ընդհանրական դիմավոր միակազմ նախադասության կազմում հանդես եկող բաղադրյալ ստորոգյալ (տե՛ս 17, էջ 486)։

Մեր կարծիքով առավել ընդունելին Ս. Աբրահամյանի տեսակետն է։ Մենք նույնպես նշված եղանակիչների ու անորոշ դերբայի կապակցությունը համարում ենք բաղադրյալ ստորոգյալ հետևյալ պատճառներով։ Նախ՝ կառուցվածքային-քերականական տեսակետից էական տարբերություն չկա պիտի աշխատել, պետք է աշխատել, անհրաժեշտ է աշխատել, հարկավոր է աշխատել և նման ձևերի միջև։ Տարբերությունը երբեմնաոճական է՝ պայմանավորված եղանակիչների բառական նշանակությամբ։ Այդ ձևերն ունեն մեկ էական ընդհանրություն՝ դիմային վերաբերությունն ընդհանուրին, ուստի դրանք ընդհանրական դիմավոր միակազմ պարզ նախադասություններ են։

Երկրորդ՝ թեև պետք է աշխատել, հարկավոր է աշխատել, անհրաժեշտ է աշխատել և այլն ձևերում աշխատել անորոշ դերբայը ենթակա է, իսկ պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է ձևերը՝ եզակի թվով ստորոգյալներ, ապա այդ կապակցություններում նոր անորոշ դերբայ (իմա՝ ենթակա) ավելանալու դեպքում հիշյալ եղանակիչները անպայման պետք է արտահայտվեն հոգնակի թվով՝ համաձայնելով անորոշ դերբայով արտահայտված բազմակի ենթակաների հետ։ Մինչդեռ այս դեպքում

էլ նշված եղանակիչները մնում են եզակի թվով. ինչպես՝ «Պետք է հասնել առաջավորներին, անցնել նրանց և ևս անցնել պատվոգիրը»:

Երրորդ՝ դժվար է համաձայնել այն տեսակետի հետ, թե հիշյալ կապակցություններում անորոշ դերբայի ենթակա լինելը հաստատվում է նրա՝ գոյականով կամ էլ պարզապես որոշյալ առումով փոխակերպմամբ (տե՛ս 40, էջ 119. 48, էջ 98): Նախադասությունը գնահատելիս պետք է հաշվի առնել տվյալ կառուցվածքը, այլ ոչ թե նրա փոխակերպված տարբերակը կամ փոխակերպման հնարավորությունը: Անշուշտ, «Պետք է աշխատել» և «Աշխատելը պետք է», «Անհրաժեշտ է նանդիպել» և «Հանդիպելը անհրաժեշտ է», «Պետք է գնալ» և «Գիրքը պետք է» կապակցությունները տարբեր կառույցի նախադասություններ են. առաջիննները ընդհանրական դիմավոր միակազմ պարզ նախադասություններ են, ուր եղանակիչներն ու անորոշ դերբայը բաղադրյալ ստորոգյալի կազապարով մեկ դերադաս անդամ են, իսկ երկրորդները երկկազմ պարզ նախադասություններ են, որոնցում որոշյալ առումով անորոշ դերբայը և գոյականը ենթակա են, իսկ պետք է, անհրաժեշտ է ձևերը՝ ստորոգյալ:

Այսպիսով, պիտի, պետք է, անհրաժեշտ է, հարկավոր է և նման եղանակիչ բառերի ու անորոշ դերբայի կապակցությունը շարահյուսական մեկ միավոր է՝ բաղադրյալ ստորոգյալ: Եվ քանի որ այդ կապակցությունների բովանդակությունը վերաբերում է ընդհանուրին, ուստի դրանք ընդհանրական դիմավոր միակազմ պարզ նախադասություններ են:

Նշված եղանակիչները բազմակի անորոշ դերբայների հետ կազմում են ԸԴՄՄ նախադասություն: Այս դեպքում եղանակիչը, ընդհանուր լինելով, գործածվում է միայն առաջին բաղադրիչ նախադասության մեջ, բայց հավասարապես վերաբերում է բոլոր բաղադրիչներին: Բերենք օրինակներ՝ «Հարկավոր է նարգել շահի խնդրանքը և դեսպանություն ուղարկել նրա մոտ» (ՍԽՄՄ,3, 19): «Ժամանակն է բոթափել աշխարհի բեռն ու գնալ ջննաթի վայելքների գիրկը» (Ն. տ., 31): «Այնուհետև պետք էր երկար ու բարակ բազար անել, երդվել, ազատախոսել, գովաբանել վաճառքը» (ՐՆԺ, 2, 399): «Հանելի է ժամերով նստել գետափին և նայել սառնորակ ու վճիտ ջրերին, դիտել... ձկների վտառների հոգեզմայլ խաղը...» (ՔՆԺ, 361):

Սակավադեպ միավորյալ նախադասությունը կազմվում է երկու եղանակիչների (ու անորոշ դերբայների) զուգակցումով. ինչպես՝ «Ահա թե ինչու այսքանից հետո հնարավոր չէ զսպել զայրույթը և ամբողջ ձայնով չնայատարարել. պետք է անհապաղ վերջ դնել բռնության սանձարձակ կամպանիային Լիբանանում» (ՍՀ, 18.9.1978 թ., 4):

Հաճախ էլ ՀԴՄՄ նախադասության բաղադրիչներից մեկն ունենում է պետք է+անորոշ դերբայ կաղապարով գերադաս անդամ, իսկ մյուսը լինում է անդեմ, բայց երկու բաղադրիչների իմաստներն էլ մասնավորվում են նույն հարցի շուրջը և վերաբերում են միևնույն ընդհանուրին. ինչպես՝ «Ի՞նչ պետք է անել այժմ նախարարների ապստամբությանը վերջ տալու համար. սահմաններից կանչե՞լ իր զինական ուժերը, թե...» (ՍՀՀԲ, 405):

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մարդ գոյականով արտահայտված ենթակայով միավորյալ նախադասությանը: Նշենք, որ մեր շարահյուսագիտության մեջ մարդ-ով կազմված պարզ նախադասության մասին ևս կան տարակարծություններ (տե՛ս 3, էջ 373. 99, էջ 31. 40, էջ 38. 94, էջ 396. 17, էջ 484), որոնք պայմանավորված են մարդ բառի իմաստային յուրահատկությամբ: Բանն այն է, որ այդ բառը բովանդակում է ընդհանրականության ու կոնկրետության, անորոշության իմաստային տարրեր, որոնցից մեկին նախապատվություն տալու դեպքում հետևությունը տարբեր է լինում: Մեր կարծիքով լեզվական իրականությունը պետք է գնահատել նրա բոլոր իմաստային դրսևորումների հաշվառումով: Տվյալ դեպքում մարդ բառի իմաստների դրսևորման հարցում էական դեր են խաղում համատեքստը, հաղորդման նպատակն ու խոսքաիրադրությունը: Ըստ այդմ էլ այն կարող է նշանակել՝ ա) կոնկրետ մարդ, քաղաքացի, բ) անորոշ, անծանոթ մարդ, գ) մարդ արարած ընդհանրապես: Ընդամին, այս իմաստներով մարդ-ը գործածվում է թե՛ պարզ և թե՛ միավորյալ նախադասության մեջ: Ահավասիկ միավորյալ նախադասության օրինակներ. «Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գրկում է տղային...» (ԱԲ, 1, 201): բ) «Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր Մարդ է գնում ու գալիս» (ՀՔ, 255): գ) «Մարդ հողեղեն է, երկնքեն չէ» (Ա, 103): Այս նախադասություններում մարդ-ը ենթակա է, միայն այն տարբերությամբ, որ վերջին նախադասությունը, այդ բառի իմաստային ընդհանրականությամբ պայմանավորված, խիստ հակվում է դեպի միակազմ կառուցվածքը, իսկ 1-ին ու 2-րդ նախադասությունները լիարժեք երկկազմ կառույցներ են: Հետևաբար երբ մարդ գոյականն իր ընդհանրական նշանակությամբ դառնում է միավորյալ նախադասության ենթակա, վերջինս իր բովանդակությամբ մոտենում է ՀԴՄՄ նախադասությանը: Այս դեպքում մարդ-ը ցույց է տալիս մարդ արարած ընդհանրապես, իսկ ամբողջ նախադասությունը՝ մարդկային, կենսափորձից կատարված ընդհանրացում: Նշենք, որ մարդ բառն իր ընդհանրական նշանակությունը պահպանում է նաև ամեն դերանվամբ որոշիչ ստանալու դեպքում, հոգնակի թվով գործածվելիս և այլն: Օրինակներ՝ «Մարդ շուն ըլնի, տան պուճուր չըլնի» (Ա, 277): «Այստեղ

ամեն մարդ մենակ է ու աղատ և կանգնած ո՛չ իմ և ո՛չ քո դիմաց, այլ իր խղճի» (ԴՒվ, 2, 35)։ «Մարդիկ մի պարտք են զգում դեպի մեռած ընկերները—լալիս են, մի քանի օր տխրում և հետո մոռանում, ուտում, խմում, ապրում» (ԱԻՀ, 227)։

ԱՆՈՐՈՇ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անորոշ դիմավոր միակազմ միավորյալ (կրճատ՝ ԱԴՄՄ) նախադասության գերադաս անդամների դիմային վերաբերությունն անորոշ է։ Այս դեպքում ենթակայի (ենթակաների) բացակայությունը պայմանավորված է լինում տարբեր հանգամանքներով։ ԱԴՄՄ նախադասություն է կազմվում.

ա) Երբ կարևորությունը տրվում է գործողություններին, և գործող առարկան կամ առարկաները մղվում են ետին պլան. ինչպես՝ «Չեն օրն նկան թռչջի արին, Հարկ են ուզում տերությունն» (ՀՔ, 15)։ Պարզ է, որ այստեղ գործողությունները կատարողները գյուղական հարստահարիչներն են, բայց քանի որ գործող անձանց կարևորություն չի տրվում, ուստի նախադասությունը կառուցվել է միակազմ ձևով։

բ) Երբ գործող անձը կամ անձինք անհայտ են խոսողին (գրողին)։ Հաճախ հայտնի չի լինում նաև գործողությունները կատարողների թիվը։ Երբեմն նույնիսկ գործող անձը մեկը լինելու դեպքում էլ բայական գերադաս անդամներն արտահայտվում են հոգնակի թվով, «որ անորոշություն արտահայտելու համար լավագույն քերականական միջոց է» (17, էջ 478)։ Այսպես, օրինակ, Ալ. Շիրվանզադեի «Նամուս» վիպակում Սեյրանը խորհրդածում է. «Սուսանին նրա ձեռքից խլում են և տալիս են Քոչարանց Ռուստամին» (Շիրվ., 1, 75), իսկ այդ գործողությունները կատարողը մեկն է՝ Բարխուդարը (Համմտ. 40, էջ 77)։ Կամ՝ «Քեզ դանգահարել են և կանչել մայրաքաղաք»։

գ) Երբ խոսողը (գրողը) ներկայացնում է ուրիշից լսածը, ցանկանալով՝ 1) հայտնի չդարձնել ենթական (ենթակաները) և 2) կամ էլ հոգնակի կարծիքը ընդհանրացնել. ինչպես՝ «Ձեր մասին բամբասում են, վատ են արտահայտվում»։

Ինչպես տեսնում ենք, ԱԴՄՄ նախադասության բայական գերադաս անդամները հիմնականում արտահայտվում են հոգնակի 3-րդ դեմքով, որ անորոշության դրսևորման ամենաընդունված միջոցն է։ Ավելին, երբեմն նույնիսկ խոսողը (գրողը) իր կատարած գործողությունները ներկայացնում է այդ դեմքով, իսկ «դա լինում է հատկապես հանդիմանական արտահայտություններում, երբ խոսողը իր կարծիքը, դիտողությունը ոչ թե ուղղակիորեն վերագրում է իրեն, այլ արտահայտելով հոգնակի

երրորդ դեմքով՝ դրանով ասվածը հոգեբանորեն դիտում է ոչ որպես սոսկ իր անձնականը, այլ մի տեսակ դարձնում է ուրիշներինը, որով և ասվածին տրվում է օբյեկտիվ բնույթ» (17, էջ 480)։ Այսպես՝ խոսողը կարող է «Քեզ դիտողություն են անում և ուզում են դարձի բերել» նախադասությունն ասել այն դեպքում, երբ դիտողություն կատարողն ու դարձի բերել ցանկացողը հենց ինքն է։

Անորոշ դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունը հատկանշվում է նաև բայական գերադաս անդամների եղանակաժամանակային արտահայտությամբ։ Այդ անդամներն արտահայտվում են.

ա) Սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով. ինչպես՝ «Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը» (ՀՔ, 3, 192)։ Շատ հաճախադեպ է նաև պատմական ներկայի գործածությունն այս իմաստով. ինչպես՝ «Մի օր նրանց հասցնում են սուլթանի քաղաքը, կանգնեցնում սուլթանի առջև» (ՍԽԱ, 90)։

բ) Սահմանական ներկայի եզակի երկրորդ դեմքով. ինչպես՝ «Միամիտ ես սևնում, միտք, մեր էս աշխարհի բանը, ճարում ես, տրամվում...» (ԴԴ) (ԺՀԼ, 3, 481)։

դ) Սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով. ինչպես՝ «Ինձ նա հաշեցին, մի կողմը տարան» (ՀՔ, 204)։

ե) Հարկադրական եղանակի ապառնի ժամանակի հոգնակի երրորդ դեմքով. օրինակ՝ «Պիտի ուզեն հարսնացու, առնեն շոր ու մատանիք, պիտի փոխեն ծածկը տան, պարտքը մարեն, հարկը տան ու կաշառեն ջրպետին» (ՊՍ, 4, 66)։

զ) Ըղձական ապառնիի հոգնակի երրորդ դեմքով. ինչպես՝ «Թող ինձ կարդացնեն, որդուս ուսում տան, մեզ ճամփա ղհանց տան, ճամփից, հավատից չեանեն» (ԽԱ, 35)։

է) Ըղձական ապառնիի եզակի երրորդ դեմքով. ինչպես՝ «Հեռանա աչքից, օտարանա սրտից» (Ա, 238)։

ԱԴՄՄ նախադասությունը երբեմն էլ բաղադրվում է միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով արտահայտված բայական գերադաս անդամներով. ինչպես՝ «Նրան գյուղում շատ էին ճարդում և դեռ ճիշում են»։ Նմանապես զուգակցում են նաև տարբեր եղանակաժամանակային արտահայտությամբ բայական գերադաս անդամներն ու անվանական գերադաս անդամը, պարզ ու բայական բաղադրյալ ստորոգյալների կազապարներով արտահայտված գերադաս անդամները. ինչպես՝ «— Ջինար ես, կեռանալ մի՛... Սակայն ինչպե՞ս չկեռանաս» (ՊՍ, 4, 290)։ «Մի տեղ մի անգամ էսպես է եղել. Տարել են մեկին, ուզել են թաղել» (ՀՔ, 119)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Միակազմ միավորյալ նախադասության մյուս տեսակը՝ անդեմ միակազմ միավորյալ (այսուհետև՝ ԱՄՄ) նախադասությունն ունի կառուցվածքային ու իմաստային այլ յուրահատկություններ։ Հարկ է նշել, որ մեր կողմից միավորյալ դիտված ստորև քննվող կառույցները ցարդ չեն գնահատվել որպես այդպիսին (միավորյալ)։ Մենք դրանք միավորյալ ենք համարում լեզվական փաստերի հիման վրա։ Այսպես՝ համմտ. 1. «Ձգվխատե՛լ»։ 2. «Ձգվխատե՛լ, այլ շղթայված ներկայացնել ատյանն» (ՆՁԱԳ, 68)։ Այս նախադասություններից առաջինը պարզ է, իսկ երկրորդը՝ միավորյալ հետևյալ պատճառներով։ Նախ՝ առաջին նախադասությունն արտահայտում է մեկ գործողություն և ունի հնչերանգային մեկ ստորոգում։ Մինչդեռ երկրորդը նշում է իրար հետ կապված երկու գործողություն, ունի հնչերանգային երկու ստորոգում և, հետևաբար, բարդ նախադասություն է։ Երկրորդ՝ դա միավորյալ նախադասություն է, որովհետև գործողությունների կատարումը տվյալ դեպքում սպասվում է միևնույն անձի կամ անձանց կողմից։ Ինչպես տեսնում ենք, անդեմ միավորյալ նախադասության մեջ է՛լ ավելի է մեծանում տրամաբանական, արտալեզվական գործոնի դերը։ Նման նախադասության ըմբռնման հարցում կարևոր է նրա բաղադրիչների միավորումը, որի հիմքը հատկանիշները միևնույն անձին կամ միևնույն բնագավառի մարդկանց վերաբերելն է, որն էլ տվյալ դեպքում դառնում է տրամաբանական ստորոգումը։ Օրինակ՝ «Բարելավել քաղաքային ուղևորատար տրանսպորտի աշխատանքը և պլանից ավելի փոխադրել 1,2 միլիոն ուղևոր» (ՍՀ, 4, 2. 1979, 4)։ Այս նախադասության բաղադրիչների միավորման հիմքը քաղաքային տրանսպորտի բարելավման ու պլանից ավելի 1,2 մլն ուղևոր փոխադրելու պարտականությունները միևնույն քաղաքային տրանսպորտի սպասարկմանը վերաբերելն է և դրանք, որպես միասնական պահանջ, այդ բնագավառի աշխատողների առջև դրվելը։

ԱՄՄ նախադասության մեջ բառային-ձևաբանական ստորոգման բացառումը որոշակիորեն դժվարացնում է նրա, որպես մտքի միավորի, ըմբռնումն ու ճանաչումը։ Այս դեպքում էլ բառային-ձևաբանական ստորոգմանը փոխարինելու են գալիս հնչերանգային ստորոգումն ու խոսքը (համմտ. 17, էջ 488)։ Այս նախադասության մեջ հնչերանգը ձևավորում է՝ ստորոգումները, նախադասության ավարտվածությունը, ինչպես նաև դրսևորում է խոսողի վերաբերմունքը։

ԱՄՄ նախադասության ըմբռնման հարցում պակաս կարևոր չէ նաև համատեքստը, խոսքային միջավայրը։ Նրա ստորոգչային հատկանիշների վերաբերությունն երբեմն պարզվում է միայն համատեքստում։ Օրինակ՝

«— Բայց չէ՞ որ շենի հույսը քեզ վրա է։

— Դու կաս, ինձանից չահել ես, և պակաս պատմություն չկա քո հետևում։ Կա և Արբակը։ Թողնում եմ երկուսիդ վրա։ Հայտնեցեք բոլոր պնդոցիներին, որ խանը ինձ կանչել է բանակցություններին։ Երբեմ շիջնել պնդոցներից և լինել բշնամարար տրամադիր միջև իմ գալը» (ՍԱՃՀ, 31)։ Առաջին նախադասություններից երևում է ընդգծված միավորյալ նախադասության գործողությունների կատարման սպասելի լինելը խոսակցի ու նրա զինակիցների կողմից։

Ակնհայտ է, որ տարբեր ենթականերով բարդ համադասական կամ ստորադասական կապակցության բաղադրիչ հանդիսացող անդեմ միավորյալ նախադասության գործողությունների դիմային վերաբերությունը հասկացվում է ոչ միավորյալ բաղադրիչից կամ բաղադրիչներից. ինչպես՝ «Մեզ համար քայլել չկար, երամով թռչում էինք, ի՞նչ խոսել, ի՞նչ շշնջալ, որոտում, ճչում էինք» (ՀՍՔԲ, 89)։ «Այսօր նա ինձ բոլորովին այլ կերպ թվաց, քան երեկ էր. երիտասարդի նման ամեն ինչում արագաշարժ և վճռական» (ԷՋԴՀ, 9)։

Հրամայական նրանգի ԱՄՄ նախադասության մեջ գործողությունների վերաբերությունն ավելի ակնբախ է։ Այդ նախադասությունն իր իմաստով մոտենում է երկկազմին։ Ավելին, տվյալ դեպքում սպասելին միտքը երկկազմ կառուցով դրսևորելն է, բայց խոսողը (գրողը) նախընտրում է միակազմ ձևը՝ գործողությունների կատարման ընդհանրական անհրաժեշտությունը շեշտելու համար, որովհետև բովանդակության ընդհանրականությունը միակազմ կառուցվածքին ավելի բնորոշ է։ Օրինակ՝ «Վարդն անշարժացավ։ Իսկ թագավորը ձայնն ավելի բարձրացրեց.

— Քաջությամբ, դավով սպանել տվեց Գնելին՝ նրա կնոջը տիրանալո՞ւ համար։ Կալանե՛ք անմիջապես եղեռնագործին և հատեք գլուխը...» (ՍՋՀԲ, 202)։

Ավելացնենք, որ չափածո միավորյալ նախադասության գործողությունների վերաբերությունը կարող է հասկացվել նաև խոսքից դուրս. ինչպես՝ «Ա՛հ, այս դրսում երկրի անհայտում անհուն, Ընկնել, և՛ կորչել, և՛ ննջել հավետ, Ոչնչանալ և մոռացվել քեզ հետ, Ավերված հրաշ-հայրենական տուն» (ՎՏ, 1, 108)։ Այստեղ գործողությունների՝ առաջին դեմքին վերաբերելն ինքնին հասկանալի է, քանի որ քնարերգության մեջ, որպես կանոն, բանաստեղծն ավելի շատ խոսում է իր հոգի մասին, դրսևորում է իր հույզերն ու ապրումները, որոնք, սակայն,

ընդհանրացվում են՝ դառնալով բոլորի համար համընդհանուր իրողություններ։

Արձակ արտահայտված անդեմ միավորյալ նախադասության գործողությունները ևս կարող են վերաբերել խոսողին, միայն թե դա հասկացվում է համատեքստից։ «Քաոս» վեպի մեջ, օրինակ, Միքայելն այսպես է ներկայացնում իր կյանքը. «Ի՞նչ, տարիներ շարունակ կատարել հասարակ գործակատարի կրավորական պաշտոն, տառապել մի կամակոր և մանրակրկիտ ծերունու սուր հայացքների տակ, հնարել ամեն անգամ պես-պես ստեր ավելորդ ծախսերն արդարացնելու համար և հաճախ անմաքուր ձեռքերով մոտենալ հայրական սնդուկին և կամա-ակամա փափագել հարազատ ծնողի մահն այն հույսով...» (ԱՇՔ, 43)։

Անդեմ միակազմ միավորյալ նախադասություններն ըստ գերադաս անդամների արտահայտության բաժանվում են երկու խմբի՝ բայական և անվանական։

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բայական անդեմ միակազմ միավորյալ (կրճատ՝ ԲԱՄՄ) նախադասության գերադաս անդամներն արտահայտվում են անորոշ դերբայով։ Այս նախադասությունը հատկանշվում է գեղարվեստական, հրապարակախոսական ու պաշտոնական ոճերում ունեցած լայն գործածությամբ՝ շատ հանդիպելով երկխոսություններում, կոչերում, լոզունգներում, ուղերձներում, պաշտոնական գրագրություններում և այլուր։

ԲԱՄՄ նախադասության արտահայտած գործողությունների կատարումը սպասվում է խոսքի պահից հետո, ապառնի ժամանակում։ Բաղադրիչ նախադասությունները կազմվում են կա՛մ միայն գերադաս անդամներից և կա՛մ էլ գերադաս անդամներից ու լրացումներից. ինչպես՝ «Գնալ և բերել»։ «Ո՞ր ճանապարհով մտնել շուկա և ո՞ր ծայրից սկսել... մտնել լեռո՞ն ճանապարհով» (ԱԲ, 1, 311)։

ԲԱՄՄ նախադասությունը հայերենի լեզվամտածողությանը հարազատ կաղապար է, որ առկա է եղել մեր լեզվի զարգացման գրեթե բոլոր փուլերում։ Ուշագրավ է, որ Մ. Մաշտոցի կողմից գրված հայերեն առաջին գրավոր նախադասությունը բայական անդեմ միավորյալ է. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»։

Ըստ բովանդակության նկատմամբ ունեցած հարաբերության ԲԱՄՄ նախադասությունները լինում են հաստատական և ժխտական. ինչպես՝ «Ողջունել սիրով անց ու դարձողին, Օրհնաբերել կյանքը, աշխարհին ժպտալ, Հարազատ լինել ջրին ու հողին Եվ անհուն սիրով սիրել ու գթալ» (ՎՏ, 1, 186)։ «Չգնալ այդ վայրը և չհանդիպել նրան»։

Երբեմն էլ միևնույն կառույցը համատեղում է հաստատումն ու ժխտումը։ Այս դեպքում գերադաս անդամներից մեկը լինում է դրական ձևով, իսկ մյուսը՝ ժխտական։ Հաստատումն ու ժխտումը կարող են արտահայտվել նաև հարցումով։ Օրինակ՝ «Ինչպես գարնան բույրը վառ— Անցնել կյանքից այս թևրի Ու էլ երբեք չդառնալ» (ՆՉ, 1, 322)։ «Ինչո՞ւ փախչել և գեթ մի անգամ չխոսել նրա հետը պարզ» (ԱՇՔ, 334)= «Չփախչել և գեթ մի անգամ խոսել նրա հետը պարզ»։

Հաճախ ԲԱՄՄ նախադասությունը կազմվում է միևնույն գերադաս անդամի կրկնությամբ և այլ գերադաս անդամներով. ինչպես՝ «Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել Աշնանամուտին և խորհել հին հուշեր...» (ՎՏ, 2, 106)։

ԲԱՄՄ նախադասություններն արտահայտում են.

ա) գործողությունների կատարման անհրաժեշտություն, առաջադրանք։ Ընդամին, անհրաժեշտություն արտահայտում են պաշտոնական ու հրապարակախոսական ոճերում, իսկ առաջադրանք՝ գիտական ոճում. ինչպես՝ «Մոտակա երկու-երեք տարվա ընթացքում ապահովել գերադրանային սպասարկումը յուրաքանչյուր բնակավայրում. լայնորեն կիրառել գրքի միջգրադարանային փոխանակումը, բարելավել շրջիկ գրադարանների աշխատանքը» (ԺԺ, 9, 8)։ «Դուրս գրել բայի դիմավոր ձևերը և որոշել դրանց քերականական կարգերը»։

բ) գործողությունների կատարման ցանկություն, ձգտում. ինչպես՝ «Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ, Ամենին մոռանա՜լ, Չսիրել, չըխորհել, չափսոսալ, Հեռանա՜լ...» (ՎՏ, 1, 66)։

գ) գործողությունների կատարման պահանջ, կոչ, առաջարկություն. ինչպես՝ «Ամեն կերպ ամրապնդել ժողովրդական թատրոնները, ստեղծել ժողովրդական երաժշտական, երգչախմբային, երգի-պարի կոլեկտիվներ, հարստացնել նրանց ռեպերտուարը ժամանակակից հայկական և Սովետական Միության մյուս ժողովուրդների ստեղծագործություններով» (ԺԺ, 9, 9)։

դ) գործողությունների կատարման կարգադրություն. ինչպես՝ «Իրար հետևից երեք ձիավոր հասան նրան ու բերին Բայանդուր իշխանի հրամանը. «Դադարեցնել կոտորածը և գերիներին նավաբել Բարայրենի մեջ...» (ՍԽՄՄ, 3, 394)։

ե) խոսողի հաստատ որոշումը գործողությունների կատարման համար. ինչպես՝ «Նրա մեջ զարթնեց կյանքը փրկելու կիրքը։ Երիտասարդ կրծքի մեջ նոր ապրելու և սիրելու անհուն հաճույքը։ Փրկվել, փրկել նրան, բարձրացնել և ապա կրկին ջերմացնել նրա սիրտը...» (ԴԴվ, 2, 264)։

ը) խոսողի ներքին կասկածները, անվճռականությունը գործողությունների կատարման վերաբերյալ։ Օրինակ՝ «Արտակը համրաքայլ մոտեցավ խցի դռանը։ Ի՞նչ անել, մտնե՞լ ներս անպատշաճ և անվայել» (ԴՈՎ, 2, 173)։

է) խոսողի (գրողի) ցանկությունը, իղձը, խոհերն ու ապրումները գործողությունները կատարելու համար. ինչպես՝ «Մուրի հավերժության դառնությունն զգալ,—նվ մանկան մոտ դառը հեկեկալ...» (ՎՏ, 1, 186)։

ը) խոսողի (գրողի) հարցադրումը կամ քեզը, որին հաջորդում է մեկնումը։ Սա հանդիպում է մասնավորապես այն համադասական պարբերությում, որի առաջին մասը ԲԱՄՄ նախադասություն է. ինչպես՝ «Թալանել, ոչնչացնել ուրիշ, ավելի փոքր ազգերին, անսահապես աշխուժանալու և գեթ ժամանակավորապես հաղթական անդորրի հասնելու համար,— այսպես էր գործում Թուրքիան» (ՀԹՍ, 58)։

թ) խոսողի հոգեվիճակը, մտայնությունը. ինչպես՝ «Բայց ի՞նչ սոսկալի դրության. տեսնել սիրելի զավակներին անխղճի կապով կապված մի առելի դարձած կնոջ հետ, չկարողանալով հաղթել առելությունը, չկարողանալով նաև բաժանվել առելիից» (ԱՇՔ, 260) (հմմտ. 40, էջ 41) և այլն։

Ակնբախ է, որ ԲԱՄՄ նախադասությունը երբեմն էլ համատեղում է մի քանի իմաստներ։ Այսպես, օրինակ, Վ. Մամիկոնյանի՝ իր զինվորներին ուղղված խոսքից ընտրված «Մաշել, հոգնեցնել, սպառել թշնամուն ողջ Հայոց աշխարհում» (ԴՈՎ, 2, 450) նախադասությունը դրսևորում է գործողությունների կատարման անհրաժեշտություն ու պահանջ։ Կամ՝ հետևյալ նախադասությունն արտահայտում է ափսոսանք ու երկընտրանք. «Ինչպե՞ս վրդովել նրա հանգստությունը, ինչպե՞ս խանգարել նրա քունը...» (ՐՄ, 243)։

Ժամանակակից հայերենում ԲԱՄՄ նախադասությունը հաճախ դառնում է ընդհանուր ձևով ասված որևէ գործողության կամ եղելության մանրամասնումն ու մեկնաբանումը, «որով խոսողը իր ըմբռնումով ճշտում, բացահայտում և միաժամանակ իր վերաբերմունքն է ցույց տալիս այդ ընդհանուր կերպով ասված գործողության հանդեպ» (28, էջ 41)։ Նման կառուցվածքը բարդ համադասական նախադասություն է, որի առաջին բաղադրիչը լինում է ընդհանուր գործողությունը ցույց տվող երկկազմ կամ միակազմ պարզ նախադասություն։ Համադասական կապակցության անմիջական կազմիչների միջև գործառվող հարաբերությունը մոտենում է բացահայտիչ-բացահայտյալի հարաբերությանը և մասնավորվում է մեկնական, ամբողջի ու մասերի հարաբերությունների ձևով։ Օրինակներ՝ «Մի փրկություն կա միայն, Լոկ մի ճանապարհ. Սիրել-այրվել հավիտյան, Խոցվել անդադար...» (ՎՏ, 2, 32)։ «Եվ այդ

բոլորի փոխարեն նա միայն մի բան է ցանկանում. ազատվել այդ աղ–ճատ աղջկա նամոզմունքից, նամոզել նրան...» (ԱՇՔ, 348)։ Այստեղ ընդգծված միավորյալ նախադասությունների և նախադաս երկկազմ բա–դադրիչների գործողություններն ունեն նույն վերաբերությունը. դրանց կատարումն սպասվում է միևնույն անձի (անձանց) կողմից։

Երբեմն էլ ընդհանուր իրողությունը նշվում է անվանական անդեմ բաղադրիչ նախադասությամբ, որի սկզբում գործածվող ցուցական եղա–նակավորող բառերը խոսակցի (ընթերցողի) ուշադրությունը հրավիրում են հաջորդող միավորյալ նախադասության վրա. ինչպես՝ «Ահավասիկ իմ եղանակը. գրկել նոցա թեկուզ իրենց բարձերից և նանդիմանել խրա–տիվ» (ՍԶՀՔ, 146)։

Այս կառուցքում նախադաս է լինում նաև միավորյալ եզրը. ինչպես՝ «Աբեմատրոնել ամեն վտանգ և ազատել— այս էր հեռավոր հյուսիսից եկած մուժիկի պարզ սկզբունքը» (ԱՇՔ, 351)։ Ընդհանրացումն ավելի է ընդգծվում երբ նախադաս երկկազմ բաղադրիչը լինում է հատատա–հարցական նախադասություն. ինչպես՝ «— Այո՛, կուլ տալ ապտակը և նատարակական ծաղրի առարկան դառնալ, այս է քո լավկան, չէ՞...» (ԱՇՔ, 185)։

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենում անվանական անդեմ միակազմ միա–վորյալ (կրճատ՝ ԱԱՄՄ) նախադասությունը քիչ է հանդիպում, որով–հետև նրա գործածությունը պահանջում է յուրատիպ համատեքստ ու խոսքաբերադրություն, հաղորդման հատուկ նպատակ և այլն։ Այս նա–խադասության ըմբռնման հարցում խիստ կարևոր է նրա ստորոգային հատկանիշների վերաբերության հաշվառումը։ Այստեղ հնչերանգային ստորոգմանը մեծապես զուգակցում է մտային ստորոգումը, որի ըմ–բռնման հարցում մեծ է խոսքաբերադրության դերը։ Այսպես՝ «Մեր գրույցի ժամանակ ներս է մտնում նորեկը։ Գոհունակ և ուրախ»։ Հաս–կանալի է, որ այստեղ խոսքը նորեկի մասին է. նա է գոհունակ և ուրախ։ Հետևաբար ընդգծված նախադասությունը միավորյալ է։ Ինչպես տես–նում ենք, ԱԱՄՄ նախադասության մեջ գործածվում է քերականականի ու տրամաբանականի հակադարձ համեմատականության օրենքը։

Անվանական միավորյալ նախադասության բաղադրիչները կարող են լրացումներ ունենալ կամ չունենալ։ Ընդ որում, երբ գերադաս ան–դամներ են դառնում բայանունները կամ բայական ծագում ունեցող այլ բառեր, ավելի հաճախ գործածվում են խնդիր ու պարագա լրացումներ.

ինչպես՝ «Բախտից փախչող, Բախտից փախչող» (Ա, 297)։ «Ուրիշին քարոզող, իրեն լռլռզող» (Ն. տ., 46)։ Իսկ երբ գերադաս անդամները լինում են բուն անվանական բառեր և ստանում են խնդիրներ ու պարագաներ, զգացվում է հանգույցի զեղչված լինելը. ինչպես՝ «Երեսանց հայելի, տակհանց ածելի» (Ա, 29)։ «Տանը ասլան, չոլումը (դրսում) կատու» (Ն. տ., 58)։ Այս նախադասություններում է հանգույցի զեղչված լինելն են «հուշում» սահմանափակման խնդիրների և տեղի պարագաների հակադրությունը (երեսանց-տակից, տանը-չոլումը)։

Միավորյալ նախադասության անվանական գերադաս անդամներն արտահայտվում են անորոշ առումով և կապվում են միավորական ու ներհակական հարաբերություններով։ Այնուհետև. այս նախադասությունն իր բովանդակությամբ կապվում է ներկա ժամանակի հետ, քանի որ ցույց է տալիս առարկային (առարկաներին) մտային ստորոգմամբ վերագրվող հատկանիշների գոյությունը խոսելու պահին։ Ընդամին, ավելի հաճախադեպ է մշտատև ներկայի իմաստը. ինչպես՝ «Անորդի-անհոգի» (Ա, 260)։ «Աչքից հեռու, սրտից հեռու» (Ն. տ., 238)։

ԱՄՄ նախադասություններն իմաստային տեսակետից միատարր չեն։ Դրանք ամենից առաջ արտահայտում են համապատասխան վիճակների, իրերև ստորոգային հատկանիշների, գոյությունը. ինչպես՝ «Վիրավոր և հուսահատված»։ «Մտածող ու աշքաբաց»։ Բազմաբաղադրիչ անվանական միավորյալ նախադասությունը հաճախ միևնույն առարկան բնութագրում է տարբեր կողմերից. առարկայի էությունը արտահայտում է նրա տարբեր հատկանիշները, ինչպես նաև խոսողի ու առարկայի փոխհարաբերությունը բացահայտելու միջոցով՝ մոտենալով, այսպես կոչված, ճարտասանական անվանական նախադասությանը. ինչպես՝ «Երկիր Հայաստան, Իմ հող, իմ կրակ, Իմ տաք ապառաժ, Իմ այրված արոս, Կարմիր պղնձի շիկացած երակ, Ծարավ իմ կավ, Շոգ իմ բարբարոս...» (ՎԴԱՄ, 168)։ Երբեմն էլ համապատասխան վիճակներն արտահայտվում են ցուցականության ձևով. ինչպես՝ «Ահա տխուր և հոգնաբեկ»։

Անվանական միավորյալ նախադասությունը դրսևորում է նաև ցանկության, մաղթանք, կոչ։ Այս դեպքում էական դեր են խաղում նախադասության հնչերանգը և վերաբերմունքային բառերի գործածությունը. ինչպես՝ «Բարի՜ երթ և ստեղծագործական հաջողություններ բուհական գիտահետազոտական ինստիտուտների մեր առաջնեկին» (ՍՀ, 3. 12. 1978 թ., 4)։ «Մեկիք Իսրայելին հարգանք և պատիվ» (ՍԱՃՀ, 175)։ Այս կառուցվածքը կարող է արտահայտել նաև բարեմաղթության հակադիր իմաստ. ինչպես՝ «Որպիսի՜ ատելություն և նողկանք դեպի այդ աննպատակ, անիմաստ և սպանիչ կենցաղը» (ԱՇՔ, 378)։

ԱԱՄՄ նախադասությունը երբեմն էլ արտահայտում է վտանգ ու զգուշացում. ինչպես՝ «Հարբեցող և խառնակիչ»։

ԱԱՄՄ նախադասությունը երկխոսության մեջ դառնում է միևնույն առարկային ստորոգվող վիճակային հատկանշին վերաբերող հարցի պատասխան. ինչպես՝

— Ինչպիսի՞ն է հիվանդի վիճակը, Արա՛մ։

— Ծանր և անհուսալի։

ԱԱՄՄ նախադասությունները լինում են նաև ժխտական։ Այս դեպքում հիմնականում գործածվում է կրկնակի ժխտումը՝ արտահայտվելով ո՛չ...ո՛չ կրկնադիր շաղկապով, որով ժխտվում է համապատասխան հատկանիշների գոյությունը։ Այսպես՝ «Նա զրկվել է ամեն ինչից։ Այլևս ո՛չ իշխանություն, ո՛չ փառ, ո՛չ հարգալից անուն»։ Այս նախադասությունը միավորյալ է և համանիշ է «(նա) այլևս իշխանություն չունի, փառք չունի, հարգալից անուն չունի» երկկազմ միավորյալ կառույցին։

Հաճախ էլ անվանական միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկը լինում է հաստատական, իսկ մյուսը՝ ժխտական, որպիսի կառույցը կարելի է անվանել մասնակի ժխտումով ԱԱՄՄ նախադասություն. ինչպես՝ «...վիժո՛ւկ և ոչ քո իշխանս» (ՍՉՀՐ, 43)։

ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում միակազմ միավորյալ նախադասության տարատեսակների ոճական արժեքն ու նշանակությունը տարբեր են։ Դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունները, մեծ մասամբ առածներ ու ասացվածքներ լինելով, շատ են հանդիպում ամենատարբեր ոճերի (առօրյա, գեղարվեստական, հրապարակախոսական) խոսքում և աչքի են ընկնում իրենց սեղմությամբ ու դիպուկությամբ, բովանդակության խորությամբ ու արտահայտչականությամբ. ինչպես՝ «Գիտունի հետ քար քաշիր, անգետի հետ փայտ մի՛ ուտիր» (Ա, 11)։ «Առաջ միտք արա, հետո գործ սկսիր» (Ն. ա., 221)։ Նման նախադասությունները խոսքը դարձնում են ավելի արտահայտիչ, ներազդու և անմոռաց, իսկ գեղարվեստական ոճում հաճախ դառնում են նաև հերոսի խոսքի ոճավորման միջոց՝ նպաստելով գրողի լեզվի մերձեցմանը ժողովրդական մտածողությանը։

Անդեմ միավորյալ նախադասությունների ոճական նշանակությունը նույնպես մեծ է։ Դրանց ոճական նշանակությունը հիմնականում պայմանավորված է կառուցվածքային ու երանգային առանձնահատուկ-

թյուններով, արտահայտչամիջոց դառնալու ունակությամբ և այլ յուրահատկություններով։

Նախ՝ անդեմ միավորյալ նախադասության՝ երանգով պայմանավորված ոճական նշանակության մասին։ Ակնհայտ է, որ առավել մեծ է հարցական երանգի ԱՄՄ նախադասության ոճական նշանակությունը։ Այս նախադասության գործածությունն ավելի հաճախադեպ է գեղարվեստական խոսքում, մասնավորապես հերոսների դրամատիկ ապրումների պատկերման ժամանակ։ Նման դեպքում միավորյալ նախադասությունը սկսվում է ի՞նչ անել բաղադրիչով. օրինակ՝ «Ի՞նչ անել. արհամարհե՞լ այդ մարդու հավատը, ոտնատա՞կ անել նրա պատիվը» (Շիրվ., 4, 397)։ Հաճախ էլ ի՞նչ անել-իփոխաբեն որպես ինքնուրույն նախադասություն գործածվում է ի՞նչ պետք է անել-ը։ Այս դեպքում հարցը, երկընտրանքը հիմնականում կենտրոնանում են այդ նախադասության վրա՝ մասամբ տարածվելով նաև միավորյալի վրա. ինչպես՝ «Ի՞նչ պետք է անել։ Թողնե՞լ նրան և այդպես ոտքով շարունակել ճանապարհը» (ՐՍ, 20)։

Հարցական երանգի անդեմ միավորյալ նախադասություններն ըստ հարցի դրսևորման բաժանվում են երկու խմբի.

ա) նախադասություններ, որոնց բոլոր բաղադրիչներն ունեն իրենց առանձին հարցը, ինչպես՝ «Փախչի՞լ, թե՞ մնալ» (ԱՇՔ, 295)։ Հարցումը կարող է ընկնել նաև բայական լրացումների վրա. ինչպես՝ «Դեսո՞վ անցնել, թե կամուրջո՞վ գնալ» (ՐՍ, 12)։ «Ինչպե՞ս իմանալ, որտեղի՞ց պետք» (ՊՍ, 4, 150)։

բ) նախադասություններ, որոնում հարցումն արտահայտվում է առաջին բաղադրիչում ընդհանուր անդամի գործառույթով հանդես եկող բառերով՝ հավասարապես վերաբերելով բոլոր բաղադրիչներին. օրինակ՝ «Ինչպե՞ս գնալ և նրան թողնել անօգնական»։

Հարցական երանգի ԲԱՄՄ նախադասության ոճական արժեքը հաճախ պայմանավորված է լինում նրա բովանդակության ընդհանրականությամբ։ Ահա թե ինչու գրողները իրենց հերոսների հոգեկան ապրումները, տվայտանքները, երկընտրանքը երբեմն արտահայտում են այս կառույցով՝ նպատակ ունենալով շեշտել տվյալ իրադրության մեջ բոլորի միանման մտածելու հավանականությունը (Համմտ. 64, էջ 77)։ Այսպես, օրինակ, «Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ ... դրկվել հարբուտությունից, մնալ հավատարիմ տեսականին և անզեն, թե՞ լինել հարուստ, զորավոր, ինքնիշխան» (ԱՇՔ, 67) նախադասությամբ Շիրվանզադեն արտահայտում է Սմբատի հոգեկան տվայտանքը։

Հարցական երանգի անդեմ միավորյալ նախադասություններից ոճական նշանակություն ունեն առանձնապես հարցաժխտական, հար-

ցահաստատական և ճարտասանահարցական ձևերը։ Առաջին երկուսը բայական գերադաս անդամների արտահայտությամբ հակադրվում են. դրանք հաստատական լինելու դեպքում հարցումն արտահայտում է ժխտում, իսկ ժխտական լինելու դեպքում՝ հաստատում։ Համմտ. «Մի՞թե այդ հարցը պարզաբանելու համար գնալ և խորհրդակցել հետը»։ «Մի՞թե այդ հարցը պարզաբանելու համար չգնալ և չխորհրդակցել հետը»։ Այս նախադասություններից առաջինը համանիշ է «Այդ հարցը պարզաբանելու համար չգնալ և չխորհրդակցել հետը», իսկ երկրորդը՝ «Այդ հարցը պարզաբանելու համար գնալ և խորհրդակցել հետը» պատմողական անդեմ ձևերին։

Ճարտասանահարցական միավորյալ նախադասության ոճական արժեքը պայմանավորված է նրանով, որ այն հարցական է իր արտասանությամբ, իսկ բովանդակությամբ հաստատական է. ինչպես՝ «Ինչո՞ւ այդ միակ տեղումն, այդ միակ հանգամանքում գոնե անկեղծ չլինել, ինչո՞ւ գիտակցաբար կեղծել» (ՎՓ, 3, 39)։

Արտահայտչական ընդգծվածությամբ հատկանշվող հրամայական երանգի ԱԲՄՄ նախադասությունն արտահայտում է գործողությունների կատարման հրաման, կարգադրություն, պահանջ. խնդրանքն ու հորդորը այստեղ համարյա բացառվում են։ Հրամայական միավորյալ նախադասությանը բնորոշ գործողությունների վերաբերության որոշակիությունը, հրամանի անառարկելի ու կտրական լինելը պայմանավորում են նրա լայն գործածությունը պաշտոնական ոճում, երկխոսություններում և այլուր. ինչպես՝ «Կալանքից աղատված պետական հանցագործ Առաքել Հակոբով էլոյանի վրա սահմանել կրկնակի, մշտական հսկողություն... և ամեն շաբաթ Անդրպետքաղվարչությանը տեղեկագիր ներկայացնել Առաքել էլոյանի վարքի մասին» (ՀՔ, 1, 427)։

Կտրական պահանջ արտահայտող նախադասության բայական գերադաս անդամներից մեկը երբեմն փոխարինվում է անառարկելիություն արտահայտող այլ բառով. ինչպես՝ «Ոչնչացնել և վե՛րջ» (ԴԴվ, 2, 479)։

Հրամայական երանգի անդեմ միավորյալ նախադասությունը մեծ մասամբ լինում է համառոտ, որովհետև, ինչպես միշտ, այս դեպքում էլ «բազմաբառությունը սովորաբար թուլացնում է հրամանի ուժը» (64, էջ 80)։ Բայց երբ անհրաժեշտ է լինում շեշտել նաև գործողությունների կամ դրանցից մեկի հետ կապված առարկան, հանգամանքը և այլն, այն ստանում է լրացում (լրացումներ). ինչպես՝ «Շտապել և փրկել Ավանը...» (ՍԳՀՔ, 374)։

Հրամայական անդեմ միավորյալ նախադասության ոճական կիրառություններից մեկը կոչական ստանալն է։ Դա առկա է լինում, երբ խոսողը տալիս է խոսողությանը մասնակցողներից միայն մեկի անունը,

որ պիտի կատարի գործողությունները, այլապես դրանք կարող են վերաբերել բոլոր ներկա գտնվողներին. ինչպես՝ «Վարդա՛ն, կազմել նախագիծը և ներկայացնել քննարկման»։ Այստեղ կոչականը գործածված է ոճական նկատառումով։

Հրամայական երանգի ԲԱՄՄ նախադասությունը հաճախ էլ արտահայտվում է բացականչական հնչերանգով՝ շեշտելով հրամանի ներգործությունը. ինչպես՝ «Պառկե՛լ, քողարկվե՛լ» (ՖՎՄԼՔՕ, 345) «Հասնե՛լ և ձերբակալ անե՛լ» (ՍՋ, 7, 249)։

Հրամայական երանգի ԱԱՄՄ նախադասություն սակավ է հանդիպում։ Այս դեպքում կատարվելիք գործողություններն արտահայտվում են անվանական բառերով՝ պայմանավորված վերջիններիս բառիմաստով ու խոսքաիրադրությամբ։ Այսպես, օրինակ, երբ հրամանատարը կարգադրում է շարք կանգնած զինվորներին «Ձեռքերը գոտկատեղին, քայլով մա՛րշ», ենթադրվում է զինվորների կողմից այդ գործողությունների կատարումը։ Կամ՝ «Գլուխդ բարձր, երկու քայլ առաջ»։ «Ձեռքերը պատրաստ, կրա՛կ»։

Հրամայական ԱԱՄՄ նախադասությունը կարող է արտահայտել նաև կոչ, հորդոր. ինչպես՝ «Համարձա՛կ և վստա՛հ»,— հուսադրում է ուսուցիչը Գևորգին։

Բացականչական երանգի անդեմ միավորյալ նախադասություններն արտահայտում են խոսողի (գրողի) ցանկությունը համապատասխան գործողությունների կատարման վերաբերյալ. ինչպես՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ, Ջսիրե՛լ, չխորհե՛լ, չափսոսալ, Հեռանա՛լ...» (ՎՏ, 1, 66)։ Բազմաբաղադրիչ կառույցում ըղձանքը բաղադրիչ նախադասությունների մի մասում կարող է ավելի ընդգծված արտահայտվել. ինչպես՝ «Սիրել ու կրկին սիրել խնդագին, փայփայել քնքուշ, լինել հարազատ, Հեռանա՛լ, դառնա՛լ կրկին ու կրկին Անհուն աշխարհում բացսիրտ և ազատ» (ՎՏ, 1, 186)։ Ընդգծված բաղադրիչներում իղձն ավելի է շեշտված։

Բացականչական նախադասությանն է մոտենում կոչական հնչերանգով այն ԱԱՄՄ նախադասությունը, որի մեջ խոսողը (գրողը) տվյալ առարկային բնորոշ վիճակները հաստատում է կամ ժխտում՝ նրան դիմելով, և այդ վիճակները դառնում են յուրատիպ խոսակիցներ, անձնավորվում են, որով նկարագրությունը կենդանություն է ստանում. ինչպես՝ «Լուսամփոփի պես աղջիկ աստվածամոր աչքերով, Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի, Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով, Լուսամփոփի պես աղջիկ...» (ՆՋ, 1, 69)։

Ոճական նշանակություն ունեն նաև խառը երանգի անդեմ միավորյալ նախադասությունները, որոնք ավելի հաճախ համատեղում են հրամայական ու հարցական, բացականչական ու հրամայական երանգները.

ինչպես՝ «— Մոռանա՛լ երկիր, գնա՛լ օտար թագավորի աշխա՞րհ» (ՍԶՀԲ, 6, 321)։ «Զմտածե՛լ վաղվա մասին՝ Ամենքի պես, Ամենքի հետ, Կյանքդ մատնե՛լ ինքնահոսի՝ Ամենքի պես, Ամենքի հետ...» (ՊՍ, 1, 419)։

Միակազմ միավորյալ նախադասության ոճական արժեքն առանձնապես ավելի է մեծանում շնորհիվ այն բանի, որ նրանով ձևավորվում է շարահյուսական ֆիգուրների շարքը դասվող կրկնության բանադարձման դրսևորումներից մեկը՝ ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասության համաբանությամբ։ Ընդամին, թե՛ դիմավոր և թե՛ անդեմ միավորյալ նախադասության գերադաս անդամները կրկնվում են բայական համասեռ կամ անհամասեռ լրացումներն ընդգծելու նպատակով. ինչպես՝ «...Ո՛չ, կարելի է շարունակ փնտրել, փնտրել մեզ նման, բայց և չգտնել» (ՊՍ, 4, 314)։ «Բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ» (ՆԴ, 109)։

Չափածո միավորյալ նախադասության գերադաս անդամը երկկազմ միավորյալ նախադասության ստորոգյալի նման երբեմն էլ կրկնվում է՝ ստեղծելով հարակրկնություն, վերջույթ, հակադրույթ և այլն, որոնց չենք անդրադառնում՝ վերն արդեն քննած լինելով։

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բարդ համադասական նախադասության բաղադրիչները կապվում են շարահյուսական տարբեր հարաբերություններով՝ միավորական, ներհակական, տրոհական, հավելական և այլն, որոնք երևան են գալիս որպես ընդհանուր համադասության մասնավոր դրսևորումները՝ գործառվելով լեզվական տարբեր մակարդակներում և ամենից առաջ շարահյուսական մակարդակի ստորոգային ու ոչ-ստորոգային հնթամակարդակներում։ Նախ՝ երկու խոսք այս հնթամակարդակների մասին։ Ամենից առաջ նշենք, որ բացակայում է լեզվական մակարդակների վերաբերյալ միասնական ըմբռնումը։ Այսպես՝ է. Բհենվենիստը ընդունում է հետևյալ մակարդակները՝ ա) մերիզմատիկ կամ տարրույթային, բ) հնչույթային, գ) նշանային, դ) ստորոգային (տե՛ս 117, էջ 434—449)։ Ռուս լեզվաբաններից ոմանք էլ ընդունում են հնչույթային, ձևաբանական, շարահյուսական և բառաիմաստաբանական, ուրիշներն էլ նաև՝ բառակազմական, դարձվածաբանական մակարդակները (տե՛ս 164, էջ 357—358)։

Հայ լեզվաբանության մեջ պրոֆ. Էդ. Աղայանը, ընդունելով է. Բհենվենիստի՝ լեզվական մակարդակների դասակարգումը և մասամբ վերանայելով այն, տարբերակում է՝ ա) տարրույթային, բ) հնչույթային, գ) ձևույթային, դ) բառային, ե) ձևաբանական, զ) շարահյուսական և է) ստորոգային մակարդակները (տե՛ս 25, էջ 34—48)։ Պրոֆ. Ա. Աբրահամյանն էլ ընդունում է՝ ա) բառային, բ) ձևաբանական, գ) շարահյուսական (7, էջ 40), իսկ պրոֆ. Ռ. Իշխանյանը՝ ա) հնչույթային, բ) ձևույթաբառակազմական (կամ ձևույթաբառային), գ) ձևաբանական, դ) շարահյուսական և մասամբ էլ ե) ոճաբանական մակարդակները (տե՛ս 48, էջ 90)։ Լեզվական մակարդակների ըմբռնման անմիօրինակությունն արտահայտվում է նաև «Հայկական սովետական հանրագիտարանում»

տրված մեկնաբանության մեջ (լեզվական մակարդակներ բառահոդվածի հեղինակ՝ Ռ. Իշխանյան) (տե՛ս 63, էջ 516)։

Ինչպես երևում է այս համառոտ ակնարկից, չկա միօրինակություն լեզվական մակարդակների ըմբռնման հարցում։ Մեր նպատակից դուրս համարելով հարցի մանրամասն քննությունը՝ սահմանափակվենք միայն ստորոգային ու շարահյուսական մակարդակների մասին մեկ դիտողություն կատարելով։ Արդ՝ դրանք նույնանո՞ւմ են, թե՞ տարբեր մակարդակներ են։ Ինչպես նշեցինք, ոմանք դրանք նույնացնում են, իսկ ոմանք էլ դիտում են իբրև տարբեր մակարդակներ։ Մեր կարծիքով՝ շարահյուսականն ու ստորոգայինը խիստ տարբերակելը արհեստական բաժանում է։ Չէ՞ որ դրանք երբեմն նույնանում են, կամ, ավելի ճիշտ, շարահյուսական մակարդակը, ունենալով լայն ընդգրկում, ներառում է նաև ստորոգայինը։ Ընդմիմին, շարահյուսականի հիմքում ամենից առաջ ընկած է լինում հենց ստորոգումը, քանի որ շարահյուսությունն ամենից առաջ ուսումնասիրում է նախադասությունը, իսկ վերջինիս ամենահիմնական հատկանիշը ստորոգումն է։ Հետևաբար ստորոգային մակարդակ կոչվածը, իրոք, ներառվում է շարահյուսականի մեջ։

Մյուս կողմից՝ նույնչափ ծայրահեղ մոտեցում է նաև շարահյուսական մակարդակը ստորոգայինի հետ լրիվ նույնացնելը, քանի որ առաջինը շատ ավելի լայն ընդգրկում ունի. այն ստորոգումից, ստորոգյալների միջև գործառվող հարաբերություններից բացի, ամփոփում է նաև նախադասության մյուս անդամների միջև արտահայտվող հարաբերությունները։ Եվ քանի որ այդ հարաբերությունները հավասարարժեք չեն, միևնույն դերն ու նշանակությունը չունեն հաղորդակցման գործընթացում, ուստի դրանք, բնականաբար, պետք է տարբերակել։ Այդ տեսակետից էլ բազմակի ստորոգյալների (երկկազմ կառուցվածք) կամ բազմակի գերադաս անդամների (միակազմ կառուցվածք) միջև գործառվող հարաբերությունները տարբերվում են նախադասության մյուս բազմակի և ոչ բազմակի անդամների միջև արտահայտվող հարաբերություններից։ Այնուհետև. քանի որ ստորոգումը նախադասության (հետևաբար և հաղորդակցման) հիմքն է և իրացվում է ստորոգյալով, ուստի բազմակի ստորոգյալների կամ գերադաս անդամների միջև առկա հարաբերությունները կազմում են առանձին համակարգ (ենթամակարդակ) և տարբերակվում են նախադասության մյուս անդամների (բազմակի և ոչ բազմակի) միջև գործառվող հարաբերություններից, որպիսիք էլ իրենց հերթին կազմում են այլ համակարգ (ենթամակարդակ)։ Այստեղից էլ ծնվում է ընդհանուր շարահյուսական մակարդակը ենթամակարդակների տրոհելու անհրաժեշտությունը։ Ըստ այդմ նրանում տարբերակում ենք երկու ենթամակարդակներ.

ա) ստորոգային, *որ* ներառում է ստորոգյալը, գերադաս անդամն ու դրանց հետ կապված իրակութիւնները, բազմակի ստորոգյալների ու բազմակի գերադաս անդամների միջև գործառվող հարաբերութիւնները.

բ) ոչ ստորոգային, որն ընդգրկում է նախադասութեան մյուս անդամների (բազմակի և ոչ բազմակի) միջև արտահայտվող հարաբերութիւնները։

Այս երկու ենթամակարդակների ամբողջութիւնը կազմում է շարահյուսական մակարդակը։ Այսպիսով, ի տարբերութիւն ներմարմնավորող լեզուների, հայերենում ստորոգայինը և ոչ ստորոգայինը չեն նույնանում[1] (հմմտ. 25, էջ 44—45) և կազմում են ընդհանուր շարահյուսական մակարդակի ենթամակարդակները։

Ոչ ստորոգային և ստորոգային ենթամակարդակներում գործառվում է համադասական հարաբերութիւնն իր տարատեսակներով։ Ընդ որում, առաջին դեպքում այդ հարաբերութիւններն արտահայտվում են պարզ նախադասութեան երկանդամ կամ բազմանդամ բազմակի և ոչ բազմակի այնպիսի անդամների միջև, որոնք արտահայտում են կա՛մ թվարկում, կա՛մ ներհակութիւն և կա՛մ էլ տրոհում՝ կապակցվելով համադասական շաղկապներով ու շարահարութեամբ։ Օրինակներ՝ «Պարիսպների գլխին բուն են դրել ցիները և անգղը» (ԱՒ, 1, 179)։ «Գունավոր աղլուխի մեջ Անա զիզին փաթաթել է լավաշ, խորոված սմինդր, սխտորած լոբի, մի քանի վարունգ և մի քիչ պանիր» (Ն. տ., 225)։ «Սպասիր ինձ տանը, բայց ոչ գրասենյակում» (ԱՇՔ, 68)։ «Ապագա-Բառնայը կամ Սալվինին հանդիսավոր կերպով նայեց առաջ...» (Ն. տ., 79)։ Այս պարզ նախադասութիւններում շարահյուսական հարաբերութիւններն արտահայտվում են ընդգծված բազմակի և ոչ բազմակի անդամների միջև։

Համադասական հարաբերութիւնն ստորոգային ենթամակարդակում արտահայտվում է որպես տարբեր ստորոգյալների (երկկազմ կառուցվածք) կամ բայական ու անվանական գերադաս անդամների (միակազմ կառուցվածք) միջև գործառվող հարաբերութիւն, որի արդյունքը լինում է բարդ համադասական նախադասութիւնն իր երկու ենթատեսակներով։ Ընդամին, ինչպես արդեն նշել ենք, երբ շարահյուսական հարաբերութիւններն արտահայտվում են միևնույն առարկայի (առարկաների) ստորոգային հատկանիշների միջև, կազմվում է ընդհանուր ենթակայով բարդ համադասական կամ միավորյալ նախադասութիւնը, իսկ երբ դրանք արտահայտվում են տարբեր առարկաների ու դրանց ստորոգային հատկանիշների միջև, կազմվում է տարբեր ենթականերով բարդ հա-

---

1 Ի դեպ, մեր գործածած ոչ ստորոգային ենթամակարդակ տերմինը տվյալ դեպքում համարժեք է պրոֆ. Էդ. Աղայանի ընդունած շարահյուսական մակարդակ տերմինին։

մադասական նախադասությունը։ Այսպես՝ 1. «Նույնիսկ ակնածանքով էինք նայում նրան, բայց սիրո զգացմունք չէինք տածում» (ՀՔ, 1, 435)։ «Ես խոսում էի շատ քիչ կամ դրեթե չէի խոսում» (ԷՋՑՀ, 31)։ 2. «Մարոյի կատաղության պատճառը հայտնի էր, բայց նրա վրդովմունքը ինձ ծիծաղելի էր թվում» (ՐԵԺ, 4, 472)։ «Ես այսօր կայցելեմ քեզ, կամ դու կգաս ինձ մոտ»։ Ինչպես տեսնում ենք, համադասական հարաբերությունները միավորյալ նախադասության մեջ կապում են միևնույն առարկայի (առարկաների) ստորոգային հատկանիշները, իսկ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ՝ տարբեր առարկաներն իրենց ստորոգային հատկանիշներով։ Նշանակում է՝ համադասական հարաբերությունն իր դրսևորումներով տարբեր յուրահատկությամբ է արտահայտվում բարդ համադասական կապակցության երկու տարատեսակներում։ Իսկ դա հավաստում է շարահյուսական հարաբերությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը բարդ համադասական նախադասության երկու տարատեսակներում առանձին-առանձին։ Այստեղ մեր նպատակը համադասական նախադասության միայն մի տարատեսակի՝ միավորյալ նախադասության մեջ շարահյուսական հարաբերությունների դրսևորման քննությունն է, որն ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն, մանավանդ որ հայերենի շարահյուսությանը նվիրված աշխատություններում այդ հարաբերությունները հիմնականում քննվում են տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության մեջ։

Միավորյալ նախադասության բաղադրիչները կապվում են հիմնականում չորս կարգի հարաբերությամբ՝ միավորական, ներհակական, տրոհական ու մեկնական, որոնք ևս միատարր չեն և ունեն իրենց մասնավոր դրսևորումները։ Նշենք նաև, որ այդ հարաբերությունները միշտ չեն հանդես գալիս «միայնակ», այլ հաճախ դրսևորվում են այլևայլ ածանցյալ հարաբերությունների հետ զուգորդված ձևով՝ պայմանավորված համապատասխան կաղապարների կառուցվածքային առանձնահատկություններով։ Այնուհետև. երբեմն միևնույն բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ արտահայտվում են համադասական տարբեր հարաբերություններ, որոնք կա՛մ հավասար մակարդակի վրա են գտնվում, կա՛մ էլ դրանցից մեկը իշխող դիրք է գրավում։ Առաջին դեպքում միավորյալ նախադասությունը դիտում ենք որպես տարբեր հարաբերությունների համատեղմամբ կառուցվածք, իսկ երկրորդ դեպքում այն գնահատում ենք իշխող հարաբերությամբ, որպիսի պարագայում մյուս հարաբերությունը կամ հարաբերությունները, որպես ստորին օղակում կամ օղակներում արտահայտվող հարաբերություններ, ունեն երկրորդական նշանակություն։

Միավորյալ նախադասության մեջ գործառվող հարաբերություններից ամենահաճախադեպը միավորական հարաբերությունն է։ Միավորականությունն այս կառույցի բուն էությունն է։ Նման միավորյալ նախադասությանը բնորոշ են կապակցման շաղկապական և շարահարական եղանակները։ Ընդ որում, շաղկապներից տվյալ դեպքում գործածվում են թվարկում և հավելում արտահայտող և, ու, և՛...և՛, թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ, ևս, նաև, այլև, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն...այլև, ոչ միայն...այլ նաև և այլն միավորիչ շաղկապները։ Շարահարական կառուցվածքի նախադասությունները հիմնականում համապատասխանում են նույն նախադասությունների և(ու)-ով կապակցված տարբերակին։

Միավորական հարաբերությունը միավորյալ նախադասության մեջ միատարր չէ։ Ըստ այդմ էլ միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) բուն միավորական հարաբերությամբ կամ թվարկում արտահայտող միավորյալ նախադասություններ և բ) հավելական-միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասություններ, որոնք ունեն կառուցվածքային ու իմաստային տարբեր յուրահատկություններ։

ԲՈՒՆ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բուն միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասությունն արտահայտում է ընդհանուր ենթակային կամ ենթականերին ստորոգվող համասեռ հատկանիշների թվարկում։ Այս կառույցի բաղադրիչները կապվում են իմաստային զանազան կապերով, որոնցից ամենահիմնականը ժամանակային հարաբերությունն է։ Սա ևս արտահայտվում է քերականական ու բառական եղանակներով, որոնցից առավել էականը քերականականն է։ Ժամանակային հարաբերության արտահայտման քերականական միջոցի դերով հանդես են գալիս երկկազմ կառուցվածքում ստորոգյալները, միակազմում՝ գերադաս անդամները։ Իսկ որպես ժամանակային հարաբերության դրսևորման բառական միջոց հանդես են գալիս ժամանակի իմաստ ունեցող բառերը, որոնք տվյալ դեպքում օժանդակ դեր են կատարում՝ ճշտելով, մասնավորելով ստորոգյալների, բայական գերադաս անդամների ժամանակային նույնությունը կամ տարբերությունը (համմտ. 17, էջ 569)։ Այսպես՝ համմտ. «Վարդանը քայլում է և մտածում լսած լուրի մասին»։ «Վարդանը քայլում է և միաժամանակ մտածում լսած լուրի մասին»։ Այս երկու նախադասությունների բաղադ-

րիչներն էլ կապված են համաժամանակությամբ, միայն թե երկրորդում միաժամանակ բառն ավելի է ընդգծում այդ հարաբերությունը։

Բուն միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչները կապվում են հիմնականում երկու տիպի հարաբերությամբ՝ համաժամանակությամբ ու տարժամանակությամբ։ Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ էլ հաճախ բաղադրիչ նախադասությունների մի մասը կապվում է համաժամանակությամբ, իսկ մյուս մասը՝ տարժամանակությամբ։ Նման կառուցվածքը դիտում ենք **համաժամանակություն+տարժամանակություն կառույցի** *միավորյալ նախադասություն։ Այսպիսով, ըստ բաղադրիչ նախադասությունների միջև գործածվող ժամանակային հարաբերության թվարկում արտահայտող միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք ենթախմբի՝ ա) համաժամանակությամբ միավորյալ նախադասություն, բ) տարժամանակությամբ միավորյալ նախադասություն, գ)* **«համաժամանակություն+տարժամանակություն» կառույցի** *միավորյալ նախադասություն։*

Արդ՝ անցնենք միավորյալ նախադասության այս տարատեսակների քննությանը։

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաժամանակություն արտահայտող միավորյալ նախադասության բաղադրիչների գործողությունները կատարվում, եղելությունները տեղի են ունենում միաժամանակ։ Այս դեպքում ստորոդյալները կամ գերադաս անդամներն արտահայտվում են միևնույն ժամանակով, իսկ երբեմն էլ՝ միևնույն եղանակի տարբեր ժամանակներով, «որոնց արտահայտած ժամանակային իմաստների (բուն կամ երկրորդական) միջև կա որոշ ընդհանրություն» (17, էջ 571). ինչպես՝ «Ամբողջ տիեզերքը լռեց, համրացավ» (ՀՔ, 1, 289)։ «Ես ու դու էլ շղթայված ենք իրարու, կարոտավառ երազում ենք միշտ իրար...» (ՎՏ, 1, 17)։

Համաժամանակության արտահայտման հարցում պակաս դեր չունի նաև բառական եղանակը։ Այսպես՝ «Անսպասելի նամակդ ինձ շատ տխրեցրեց և միևնույն ժամանակ շատ բարկացրեց» (ՆԴ, 236) նախադասությունն առանց ընդգծված արտահայտության կդրսևորեր ժամանակային հաջորդականություն։

Բարդ համադասական նախադասության կառուցվածքում տարբերակվող համաժամանակության երկու դրսևորումները (լիակատար և մասնակի) բնորոշ են նաև միավորյալ նախադասությանը։ Համաժամանակությունը լրիվ է, երբ միավորյալ նախադասության գործողությունները կատարվում են միևնույն ժամանակում, երբ գործողություններն իրենց

սկզբի ու ավարտի ժամանակապահերով համընկնում են։ Ահա թե ինչու լիակատար համաժամանակության դեպքում միավորյալ նախադասության ստորոգյալները կամ բայական գերադաս անդամներն արտահայտվում են հիմնականում միևնույն ժամանակաձևով. ինչպես՝ «Կուլտուրան մարդուն փոխրացնում ու մաերացնում է» (ԱԻՀ, 151)։

Մասնակի համաժամանակությամբ միավորյալ նախադասության ստորոգյալների կամ բայական գերադաս անդամների արտահայտած գործողությունները համընկնում են մասնակի չափով։ Սա առկա է լինում, երբ «գործողություններից մեկը արտահայտվում է տևական ժամանակով, իսկ մյուսը համընկնում է նրա մի պահին» (28, էջ 299)։ Այս դեպքում ստորոգյալները և բայական գերադաս անդամներն արտահայտվում են միևնույն ընդհանուր ժամանակի մասնավոր ժամանակաձևերով, իսկ երբեմն էլ միևնույն ժամանակաձևով, երբ էական նշանակություն է ստանում ժամանակային հարաբերության դրսևորման բառական միջոցը. ինչպես՝ «Նա մի քանի րոպե դռան մոտ կանգնած մտածում էր և ծեծեց դուռը»։ «Մի վայրկյան կանգնում էին առաջիս սպիտակ, նորակառույց շենքեր և խնկույն սուզվում էին անցյալի մեջ» (ԱԻ, 3, 94)։

Պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանը, խոսելով բարդ համադասական նախադասության մեջ համաժամանակության դրսևորման հնարավորությունների մասին, գրում է. «Համաժամանակության հարաբերությունը կարող է արտահայտվել երեք ընդհանուր ժամանակներից յուրաքանչյուրում՝ ներկայում, անցյալում, ապառնիում» (17, էջ 573)։ Սա հավասարապես վերաբերում է նաև միավորյալ նախադասությանը, միայն թե այն համադասական նախադասության երկու տարատեսակներում արտահայտվում է տարբեր կաղապարներով։

Քննության առնենք միավորյալ նախադասությամբ արտահայտվող համաժամանակությունը ներկա, անցյալ և ապառնի ժամանակներում։

Ա. Ներկա ժամանակում միավորյալ նախադասության մեջ համաժամանակությունն արտահայտվում է.

1. Պարզ ստորոգյալներով, որոնք դրսևորվում են՝

ա) Ավելի հաճախ միևնույն եղանակաժամանակային ձևով, այն է՝ սահմանական եղանակի ներկա ու հարակատար, սակավադեպ էլ վաղակատար (վերջինս գործածվում է հարակատարի իմաստով՝ իր մեջ ներառելով նաև շարունակական ներկայի իմաստի որոշ տարր) ժամանակաձևերով. ինչպես՝ «Մառ է գալիս քնածի պես, օր-օրի վրա լղարում է, դեղնում, չորանում» (ԱՇՔ, 270)։ «Ամպերը եկել են սարերը պատել, Ջորերը լցվել, իրար փաթաթվել...» (ՀՔ, 171)։

բ) Միևնույն եղանակի տարբեր (ներկա ու հարակատար, ներկա ու վաղակատար) ժամանակաձևերով. ինչպես՝ «Վերջին ժամանակներս նա

աշխատում է շատ բեղմնավոր ձևով և ամբողջապես զբաղված է «Ծաուստի» երկրորդ մասով» (ԷՋԳՀ, 610)։ «Բարձրագահ Աբուլն ու Մրթին սարեր Մեջք մեջքի տրված կանգնել վեհափառ, Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝ Բրոնած պահում են մի ուրիշ աշխարհ» (ՀՔ, 101)։

2. Բայական բաղադրյալ ստորոգյալներով. ինչպես՝ «Ու սիրում եմ առավոտից-իրիկուն ճամփա երթալ-ու հավիտյան երազել» (ԵՋ, 1, 62)։

3. Անվանական բաղադրյալ ստորոգյալներով, որոնց հանգույցներն արտահայտվում են ներկա ժամանակով. ինչպես՝ «Ընթաժշտությունը արքայություն է և բնության ամենագեղեցիկ շունչը» (ԱԻՀ, 89)։

4. Տարբեր ստորոգյալների զուգակցումներով։ Ընդամին, անվանական ստորոգյալի հանգույցը, պարզ ստորոգյալներն ու եղանակիչ բայը արտահայտվում են սահմանական եղանակի ներկա, հարակատար, սակավադեպ էլ վաղակատար (վերջինս իր իմաստով մոտենում է հարակատարին և ստանում է ներկայի նշանակություն) ժամանակներով։ Օրինակներ՝ «Ամեն տողը, շյուղը եղեգան փող է Ով կանաչ բոց է արտաշնչում» (ՀՍՔԵ, 20)։ «Երիտասարդ կտրիճ զինվոր ես դառել հիմա, Իմ Սաքարբվելո, հրեղեն ձի ես նստել հիմա, հրեղեն թուր ես կապել մեջքիդ և կարմիր դրոշակ ես բարձրացրել հիմա» (ԱԻ, 3, 96)։ «Վահրամ Մավյանը հայ գրող է, ապրում է Լիբանանում, սիրում է շրջել-տեսնել աշխարհը, մարդկանց և աշխարհի ճանապարհներին, հասկանալի է, ճանդիպում է նաև աղգակիցներիս» (ՎՊՀԲԱ, 108)։

Նման միավորյալ նախադասությունը լինում է նաև միակազմ. ինչպես՝ «Շենքերին ես նայում, Պալատներին վսեմ Ով ուզում ես անվերջ խոսել...» (ՊՍ, 4, 104)։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միավորյալ նախադասության մեջ ներկային վերաբերող համաժամանակությունն ոչ միշտ է արտահայտվում ինքնակա ձևով։ Շատ հաճախ նրան զուգակցում են պատճառահետևանքային, մեկնական, փոխադարձ պայմանավորվածության, հիմունքի և այլ ածանցյալ հարաբերություններ։ Դրանցից ամենահաճախադեպը պատճառահետևանքային հարաբերությունն է։ Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչներից առաջինը, որպես կանոն, արտահայտում է պատճառը, իսկ երկրորդը (կամ հաջորդը)՝ դրանից բխող հետևանքը։ Պատճառահետևանքային հարաբերությունը պայմանավորված է լինում միավորյալ նախադասության ստորոգյալների բառական իմաստով և բաղադրիչների ներքին-մտային փոխհարաբերությամբ։ Ներկա ժամանակում այդ հարաբերությունն արտահայտվում է, երբ՝

ա) առաջին ստորոգյալը ցույց է տալիս գործողություն, իսկ հաջորդը՝

դրա արդյունք, հետևանք դարձած երևույթ. ինչպես՝ «Ձյունն է վար իջնում Ու ծածկում մայթեր, ծառեր ու թիթեղ» (ՊՍ, 1, 401)։

բ) առաջին ստորոգյալն արտահայտում է տեսողական, լսողական կամ այլ կարգի կարողություն, իսկ երկրորդը՝ դրա դրսևորում հանդիսացող գործողություն, երևույթ. ինչպես՝ «Ջրաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում» (ՀՔ, 347)։

գ) առաջին բաղադրիչն արտահայտում է բնական վիճակ, դրություն, իսկ հաջորդը՝ դրանով պայմանավորված գործողություն, եղելություն. ինչպես՝ «Հողը արգավանդ է, տալիս է հացահատիկ և առատ ընդեղեն» (ԺԺ, 9, 5)։ «Հյուսիսափայլը կրոնական օրագիր չէ և դավաբանության հետ բնավ վերաբերություն չունի» (ՄՆԵՏ, 23)։

դ) առաջին բաղադրիչ նախադասության ցույց տված վիճակը իրավական, սոցիալական այնպիսի դրություն է, որի հետևանքը դառնում է երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողությունը։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը մեծ մասամբ բաղադրվում է բայական և անվանական ստորոգյալներով. ինչպես՝ «Ես երեխա չեմ. լավ եմ հասկանում» (ՊՍ, 1, 297)։ «Անձրևն այն գարնան Թունավոր է ու մահ է խոստանում...» (ԳԷՔՌ, 46)։

ե) «Համադասության առաջին մասում ստորոգյալը արտահայտում է բնական որևէ երևույթի փոփոխություն, իսկ երկրորդ մասում հաղորդվում է այնպիսի գործողություն, դրություն, վիճակ, որոնք պայմանավորվում են վերոհիշյալ փոփոխությամբ կամ հետևանք են դրա» (28, էջ 310). ինչպես՝ «Իսկ քամին գնալով ավելի ու ավելի սաստկանում է, շվացնում խրճիթի հայտնի չէ որ ծակից» (ՆՌ, 94)։

զ) միավորյալ նախադասության առաջին ստորոգյալն արտահայտում է հոգեկան զգացում, վիճակ, որի հետևանքը լինում է համադասության երկրորդ մասով արտահայտված գործողության կատարումը կամ բացառումը. ինչպես՝ «Սարգիս Յուղբաշին արհամարհում է, չի խոսում» (ՍԱՃՀ, 63)։ «Մտածողության թելը խճճվում է և հանկարծ կտրվում» (ՆՌ, 254)։

է) միավորյալ նախադասության բաղադրիչներն արտահայտում են հոգեկան այնպիսի զգացումներ, որոնցից երկրորդը պայմանավորվում է առաջինով. ինչպես՝ «Սիրում եմ այդ անվրդով Սառնությունը Ձեր սրտի, Ով չեմ ուզում իմ վշտով Հուզել վիշտը Ձեր հուրթի» (ՎՏ, 2, 53)։

ը) միավորյալ նախադասության արտահայտած բնության երևույթներից երկրորդը պայմանավորվում է առաջինով. ինչպես՝ «Բարձրագույն ամպերի դեզերը վառվում են աբերի պես և լուսավորվում՝ լուսավորելով երկնակամարը» (ԱՇՔ, 91)։

բ) միավորյալ նախադասության առաջին ստորոգյալն արտահայտում է հրաման, պահանջ, պատվեր, իսկ երկրորդը՝ այնպիսի գործողություն, եղելություն, որ կատարվում է որպես հետևանք նշված հրամանի, պահանջի. ինչպես՝ «Մենք պարտավորված ենք սկսել աշխատանքը և սկսում ենք»։

ժ) միավորյալ նախադասության բաղադրիչները կապակցող և, ու միավորիչ շաղկապներին հաջորդում են հետևյալ շաղկապներն ու շաղկապական կապակցությունները՝ ետևաբար, ետևապես, դրա համար, այդ պատճառով և այլն. օրինակ՝ «Նա աշխատասեր է և դրա համար էլ ամբողջ օրը լինում է հանրային գրադարանում» և այլն։

Նշված բոլոր դեպքերում պատճառն արտահայտվում է միավորյալ նախադասության առաջին, իսկ հետևանքը՝ հաջորդ բաղադրիչով։ Չի բացառվում նաև ոճական նկատառումով հակառակ շարադասությունը, որպիսի պարագայում պատճառահետևանքային հարբերությանը հաճախ զուգորդում է ղիջական երանգը. ինչպես՝ «Իմ ամբողջ կյանքում լեզուդ եմ սերտում ես չեմ սովորել անսխալ խոսել, Անսխալ խոսել քո մասին քեզ հետ. Շփոթվում եմ միշտ անանց հուզմունքից...» (ՊՍ, 1, 503)։

Միավորյալ նախադասության մեջ ներկային վերաբերող համաժամանակությանը հաճախ էլ զուգակցում է փոխադարձ պայմանավորվածության հարաբերությունը, երբ նրա բաղադրիչներն արտահայտում են փոխադարձաբար պայմանավորված համաժամանակյա գործողություններ, եղելություններ. օրինակ՝ «Լեզուն զարգանում է աղատ և չի կամենում հպատակվել լեզվաբանների պեղած հին օրենքներին ու օրինակներին» (ՎՏ, 2, 189)։

Համաժամանակությանը երբեմն էլ զուգակցում է մեկնական, բացատրական հարաբերությունը։ Այսպես՝ «Ձգույշ է միրհավը (1). քույրս աննկիս ձգում է վիզը (2), աջ ու ձախ կռանում (3) և ապա նորից երկարում վիզը (4), չորս կողմը նայում» (5) (ԱՌ, 1, 79) նախադասության առաջին բաղադրիչի անվանական ստորոգյալի հատկանիշը մեկնվում, մասնավորվում է հաջորդ բաղադրիչներով։ Այստեղ մեկնական հարաբերությունը նաև ամբողջի ու մասերի հարաբերություն է. առաջին բաղադրիչը նշում է ամբողջը՝ միրհավի զգուշավոր լինելն ընդհանրապես, իսկ հաջորդ բաղադրիչները մասնավորում են այդ հատկանշի (զգուշավորության) կոնկրետ դրսևորումները (վիզը ձգելը, աջ ու ձախ կռանալը, վիզը երկարելը, չորս կողմ նայելը)։ Նշված հարաբերությունների (մեկնական, ամբողջի ու մասերի) պատճառով ամբողջ նախադասությունը բաժանվում է արտաբերական երկու մասի։ Այնուհետև. բերված նախադասության մեջ ակնբախ է նաև ժամանակային հարաբերության յուրահատկությունը. 2—3—4—5-րդ բաղադրիչները իրար հետ կապված են

տարժամանակությամբ, իսկ միասին 1-ին բաղադրիչի հետ՝ համաժամանակությամբ։ Առաջին բաղադրիչն ունի մշտատև կամ շարունակական ներկայի իմաստ, որի ժամանակային ծիրի մեջ ներառվում են հաջորդ գործողությունների ժամանակապահերը։

Բ. Միավորյալ նախադասությունը համաժամանակությունն ավելի շատ արտահայտում է անցյալ ժամանակում՝ պայմանավորված այդ ժամանակի մասնավոր ժամանակաձևերի առատությամբ։ Ժամանակային այդ հարաբերությունը դրսևորվում է ստորոգյալի զրեթե բոլոր տեսակներով, ինչպես նաև այս վերջինների ամենատարբեր զուգակցումներով։ Անցյալին վերաբերող համաժամանակությունը միավորյալ նախադասության մեջ արտահայտվում է.

1. Մեծ մասամբ պարզ ստորոգյալներով։ Նման միավորյալ նախադասությունները բաժանվում են երեք ենթախմբի՝

ա) Բայական միևնույն եղանակաժամանակային ձևով համաժամանակություն արտահայտող նախադասություններ։ *Այս դեպքում ստորոգյալներն արտահայտվում են անցյալի անկատար, վաղակատար, անցյալ կատարյալ, սավակադեպ էլ անցյալի վաղակատար ու անցյալի հարակատար ժամանակներով. ինչպես՝* «Համբուրում էր *ու արցունքով բջջում իր որդու համար գործած գուլպան» (ՊՍ, 1, 81)*։ «Ես ապրել, սիրել *և շատ* տանջվել եմ» *(ԷՋԳՀ, 51)*։ «Շփոթվեց ինքն իր մտքերից, զգաց *մի տեսակ ամոթ իր մտավոր և բարոյական աշխարհի առջև» (ԱՇՔ, 67)*։ «Դահիճ ու գերի նմայվել էինք, կախարդվել» *(ՀՔ, 1, 286)*։ «Դրսում *կարծես* շփոթված *ու* վախեցած էին» *(Ն. տ., 363)*։

բ) Բայական միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով համաժամանակություն արտահայտող նախադասություններ։ *Այս դեպքում, որպես կանոն, զուգակցում են այն ժամանակաձևերը, որոնց արտահայտած գործողություններն իրենց կատարման ժամանակապահերով հիմնականում համընկնում են։ Այս կառույցում համաժամանակություն արտահայտում են սահմանական եղանակի անցյալ ժամանակի հետևյալ ժամանակաձևերը՝ ա) անցյալի անկատարն ու անցյալի հարակատարը՝* «Նա գտնվում էր *միջնաբերդի ստորոտում, գեղադիր բարձրավանդակի վրա և կառուցված էր ճարտարապետական կատարելությամբ» (ՄԴՄ, 438), բ) պատմական ներկան ու վաղակատարը (հարակատարի նշանակությամբ)՝* «Երեխան կպել է *փեշիցս ու լաց է լինում» (ՀՔ, 320), գ) անցյալի վաղակատարն ու անցյալի անկատարը՝* «Հնձանի առաջ նստել էր Դիլան դային, գլուխը խոնարհել *կրծքին ու միտք էր անում արևի տակ անցած-գնացած օրերի մասին» (ԱՔ, 1, 81), դ) անցյալի հարակատարն ու անցյալի վաղակատարը՝* «Ամենքս էլ *նուզված էինք և վշտից մեր աչքերը նառել էինք վար» (ԽԴՈԿ, 58), ե) անցյալ կատարյալն ու անց-

յալի անկատարը՝ «Մոխրագույն շալը ձգեց ուսերից, զգում էր անսովոր տաքություն» (ԱՇՔ, 162, ղ) անցյալի հարակատարն ու անցյալ կատարյալը՝ «Վարդանը նստած էր ծառի տակ և հանկարծ նիշեց այդտեղ կատարված մի դեպք» և այլն։

գ) Տարբեր եղանակաժամանակային ձևերով արտահայտված ստորոգյալների զուգակցումով համաժամանակություն արտահայտող նախադասություններ։ Այս դեպքում զուգակցում են բայական տարբեր եղանակների այն ժամանակաձևերը (անցյալ կատարյալն ու ըղձական անցյալը, անցյալի անկատարն ու հարկադրական անցյալը և այլն), որոնց ժամանակային իմաստները համընկնում են. ինչպես՝ «Դու չիմացար և որտեղի՞ց իմանայիր» (ՊՍ, 4, 224)։

2. Բաղադրյալ ստորոգյալներով, որոնց եղանակիչ բայերը և հանգույցներն արտահայտվում են անցյալ ժամանակով. ինչպես՝ «Ես չկարողացա ձայն հանել և ոչ էլ շարժվել տեղիցս» (ՆԴ, 273)։ «Ճակատամարտ էր, կռիվ էր կյանքս» (ՀՍՍՌ, 259)։ «Նա լուռ էր և ջանում էր զսպել իրեն» (ԴՎ, 2, 74)։

3. Պարզ և բայական ու անվանական բաղադրյալ ստորոգյալների զուգակցումներով։ Այս դեպքում համաժամանակությունը գործառվում է պարզ ստորոգյալի և եղանակիչի ու հանգույցի միջև։ Օրինակ՝ «Զինվորները տատանվում էին և չէին համարձակվում մոտենալ նրան» (ԴՎ, 2, 66)։ «Մարգարն ուրախ էր, երիտասարդացել էր» (ԱԲ, 1, 151)։

Անցյալ ժամանակին վերաբերող համաժամանակություն արտահայտող միավորյալ նախադասության մեջ ևս ժամանակային հարաբերությանը հաճախ զուգակցում են այլևայլ հարաբերություններ՝ պատճառահետևանքային, մեկնական, ընդհանրացման, նպատակի, ամբողջի ու մասերի և այլն, որոնցից դրսևորման իր հնարավորություններով առավելապես աչքի է ընկնում պատճառահետևանքային հարաբերությունը։ Սա տվյալ դեպքում արտահայտվում է, երբ՝

ա) առաջին ստորոգյալի գործողությունը դառնում է պատճառ հաջորդ ստորոգյալի գործողության, իբրև հետևանքի, համար. օրինակ՝ «Պղնձյա աշտարակի վրա վառվում էր ձիթային ճրագը և յուր գունաթափ լույսով լուսավորում էր այդ երեք բազմահոգ դեմքերը» (ՐՍ, 76)։

բ) միավորյալ նախադասության առաջին բաղադրիչի նկարագրած վիճակը պայմանավորում է հաջորդ բաղադրիչի գործողության կատարումը կամ դրա ժխտումը։ Այս դեպքում ստորոգյալներից մեկը (սովորաբար առաջինը) կարող է լինել նաև անվանական. ինչպես՝ «Մեսրոպը զբաղված էր զանազան կատակներով ծերունի Արբակի հետ, իսկույն լսեց Սահակի առաջարկությունը» (ՐՍ, 112)։ «Շատերը մահացու վիրավոր էին ու հազիվ էին շարժվում» (ՍԽՄՍ, 3, 349)։

գ) միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչի արտահայտած վիճակը պայմանավորված է լինում առաջին բաղադրիչի ցույց տված վիճակով, աշխարհագրական տեղադրությամբ և այլ հանգամանքներով: Այս դեպքում համաժամանակությունը մեծ մասամբ լինում է մասնակի. ինչպես՝ «Հայաստանը գտնվում էր երկու հզոր գիշատիչ թշնամիների միջև ու հաճախ դառնում էր կռվող կողմերի ոտի կոխան» (ՍՋՀԲ, 261):

դ) առաջին բայ-ստորոգյալը ցույց է տալիս լսողական, տեսողական և նմանատիպ այլ կարողություն, իսկ երկրորդը դրսևորում է դրա արդյունք հանդիսացող գործողություն, եղելություն, երևույթ. օրինակ՝ «Վիթխարահասակ դաշտապահը նայում էր այդ փոքրամարմին, մանր աչքերով մարդուն ու վախենում էր» (ՀՔ, 1, 394): «Այդ խոսքերը լսեցին պատգամավորները և գնացին» (ՐՍ, 92):

ե) առաջին բաղադրիչ նախադասությունը դրսևորում է տվյալ եղելությունն իբրև պատճառ, իսկ հաջորդ բաղադրիչը՝ տեսողական, լսողական պրոցեսն իբրև այդ եղելության, ֆիզիկական փոփոխության հետևանք. ինչպես՝ «Նվ կուրացան Ադամի աչքերը, այլևս ոչինչ չտեսան...» (ԱՒ, 3, 206): «Դասախոսությանս ժամանակ չկարողացա դիմանալ և մի քանի անգամ նայեցի նրան» (ՆԴ, 189):

զ) առաջին բաղադրիչ նախադասության բայ-ստորոգյալի գործողության ժխտումը դառնում է պատճառ, իսկ երկրորդ բաղադրիչով նըշված գործողությունը՝ հետևանք: Առաջին ստորոգյալը մեծ մասամբ լինում է բայական բաղադրյալ, իսկ երկրորդը՝ պարզ. ինչպես՝ «Վերջապես նա ևս չկարողացավ զսպել իր ուրախությունը և բացականչեց...» (ՍՋՀԲ, 464):

է) որպես պատճառ հանդես եկող հոգեկան այս կամ այն զգացման հետևանքը դառնում է մեկ այլ զգացում կամ մտավոր, բարոյական և այլ տիպի գործողություն. ինչպես՝ «Թագավորի խոսքերի մեջ Վարդն զգաց դառը հեգնանք և շառագունեց» (ՍՋՀԲ, 203):

ը) միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչի արտահայտած հոգեկան գործողությունը դառնում է առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալի դրսևորած մտավոր գործողության, իբրև պատճառի, հետևանքը. ինչպես՝ «Մտաբերում էր նրա գիշերվա խոսակցությունը և ուրախանում էր նրանով» (ՐՍ, 430):

թ) այն (պատճառահետևանքային հարաբերությունը) առկա է լինում հոգեկան ներհակ վիճակների դրսևորման ձևով. ինչպես՝ «Կարծես զրժգոհում էին սենյակի օդից և կարոտում գարնանամուտի տաք մշուշը» (ԱՔ, 1, 277) և այլն:

Նշենք նաև, որ երբեմն միավորյալ նախադասության բոլոր բաղադրիչներն արտահայտում են հետևանք, իսկ պատճառը դրսևորվում է առաջին բաղադրիչի պատճառի պարագայով. ինչպես՝ «Քաղին վախից ճչաց և վեր թռավ տեղից» (ՆԴ, 222)։ «Նա հազից կապտում էր, խեղդվում» (ԱՇՔ, 335)։

Հաճախ պատճառահետևանքային հարաբերությունը զուգակցում է առաջին բաղադրիչով արտահայտված հիմունքի երանգի հետ. ինչպես՝ «Հասկացավ Ադամ և սրտակամ համաձայնեց» (ԱՒ, 3, 192)։ Այստեղ առաջին ստորոգային հատկանիշը երկրորդ ստորոգյալի գործողության համար և՛ պատճառ է, և՛ հիմունք։

Քննված դեպքերում պատճառն արտահայտվում է առաջին, իսկ հետևանքը՝ երկրորդ բաղադրիչով։ Սակավադեպ էլ հանդիպում է հակառակ շարադասությունը՝ գործողությունների, եղելությունների բնական հաջորդականությունը և դրանց պատճառահետևանքային կապը ներկայացվելով շրջված ձևով։ Այսինքն՝ նախ նշվում է հետևանքը, ապա՝ պատճառը. ինչպես՝ «Գլուխը կախեց. չուզեց տեսնել տխուր պատկերը» (ՍԽՄՍ, 3, 189)։ «Ինքը Մարզպետունին էլ ոչինչ չհայտնեց և զգուշանում էր ավելին խոսելուց» (ՄԳՄ, 328)։

Անցյալ ժամանակին վերաբերող համաժամանակությանը, ինչպես նշեցինք, զուգակցում են նաև այլ հարաբերություններ՝ հիմունքի, մեկնաման, փոխադարձ պայմանավորվածության, ընդհանրացման, նպատակի, ամբողջի ու մասերի և այլն։ Հիմունքի հարաբերությունն արտահայտվում է այն դեպքում, երբ միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչի գործողությունը կատարվում է առաջին բաղադրիչի գործողության, եղելության կամ այլ հատկանշի, որպես իրավական, բարոյական, սովորութային հիմունքի, հիման վրա. ինչպես՝ «Միքայելը վազուց էր ճանաչում այդ երիտասարդին, ատում էր նրան» (ԱՇՔ, 330)։ «Բայց Մխիթարն իր ձեռքով հրովարտակ գրեց ու Զագեձորը և նրան հարակից գյուղերը նվիրեց Ծատուր հարյուրապետին» (ՍԽՄՍ, 3, 410)։

Փոխադարձ պայմանավորվածության հարաբերության դեպքում համաժամանակությունն արտահայտող միավորյալ նախադասության բաղադրիչների գործողությունները փոխադարձաբար պայմանավորված են լինում միմյանցով։ Նման կառույցում որպես բայ-ստորոգյալներ երբեմն հանդես են գալիս հականիշ կամ իմաստային որոշ ներհակություն ունեցող բառեր. ինչպես՝ «Զորավոր ձեռքով արմատախիլ էր անում չարությունը և բարերար ձեռքով սերմանում էր առաքինությունը» (ՐՍ, 222)։ «Օր-օրի վրա նա ծուլանում էր ու դառնում անտարբեր դեպի իր շրջապատը» (ԱՇՔ, 263)։

Շարահարական կառուցվածքի միավորյալ նախադասությունը հաճախ համատեղում է նաև ժամանակային (տվյալ դեպքում՝ համաժամանակության) և մեկնական հարաբերությունները. առաջին բաղադրիչով (բաղադրիչներով) հաղորդվում է իրողության մասին ընդհանրապես, իսկ հաջորդ բաղադրիչը (բաղադրիչները) մեկնաբանում, մասնավորում է նախորդի բովանդակությունը կա՛մ ամբողջապես, կա՛մ որևէ առումով. ինչպես՝ «Մինչև այժմ իմ ամուսնու մեջ ես թագավորն էի որոնում. նրա հաջողություններով ուրախանում, նրա փառքերով պարծենում...» (ՄԳՄ, 206)։

Անցյալ ժամանակին վերաբերող համաժամանակությանը նպատակի ու սահմանափակման հարաբերությունները զուգակցվելու դեպքում էական նշանակություն է ստանում բառական միջոցը. ինչպես՝ «Թշնամին յուր արշավանքը կատարել էր երկու կողմից և այդ նպատակով յուր զորքերը երկու մասի էր բաժանել» (ՐՍ, 282)։ ««Պապեն» լռիկ էր, ավելի ճաճախ երեխաների հետ էր խոսում» (Ա.Բ, 1, 262)։ Բացի համաժամանակությունից, առաջին նախադասության մեջ առկա է նպատակի, իսկ հաջորդի մեջ՝ սահմանափակման հարաբերությունը։

Սակավադեպ էլ միևնույն միավորյալ կառույցում համաժամանակությանը հավելվում են մեկից ավելի հարաբերությունների երանգներ։ Այսպես, օրինակ, հետևյալ նախադասության մեջ տեղ են գտել մեկնական և ամբողջի ու մասերի հարաբերությունները. «Մյուս կողմից, Մուշեղ Բերդակալն ու Գոռ իշխանիկը ծանր հոգսերի մեջ էին. պատրաստություններ էին տեսնում ապագա հարձակմանց դիմադրելու համար. ավելացնում էին ամրոցի պաշտպանության պարագաները և ամբողջ օրերով աշխատեցնում էին զորքը» (ՄԳՄ, 220)։

Հարկ է ավելացնել, որ անցյալին վերաբերող համաժամանակության արտահայտող միավորյալ նախադասության մեջ միավորական հարաբերությունը կարող է ունենալ նաև եզրափակող բնույթ։ Սա առավել բնորոշ է փակ կառուցվածքի նախադասությանը, երբ և(ու) միավորիչ շաղկապի հետ գործածվում են ընդհանրացման նշանակություն ունեցող այսպիսով, այսպես, այսպես ուրեմն բառերն ու կապակցությունները. ինչպես՝ «Նրա սենյակում դրեցին առանձին անկողնակալ՝ հսկիչի համար և այդպիսով պատանուն դարձրին մի տեսակ բանտարկյալ» (ԱՇՔ, 195)։

Գ. Միավորյալ նախադասության մեջ համաժամանակությունը առկա է լինում նաև ապառնի ժամանակում՝ արտահայտվելով այդ ժամանակի իմաստ ունեցող ամենատարբեր ստորոգյալներով։ Այս դեպքում համաժամանակությունը դրսևորվում է.

ա) Պարզ ստորոգյալներով՝ *արտահայտված սահմանական եղանակի ապառնի, ենթադրական ապառնի, հարկադրական ապառնի ժամանակներով և հրամայական եղանակով. ինչպես՝ «Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր Ու չմտածեմ ոչնչի մասին» (ԵՉ, 1, 13)։ «Կրակների ու ջրերի միջից կանցնենք մենք, դուրս կբերենք երկաթե մարդիկ» (ԴԴվ, 2, 442)։ «Հասկացե՛ք այս բանը, ճանաչեցե՛ք ինձ, վերջապես» (ԱՇՔ, 297)։*

բ) Անվանական բաղադրյալ ստորոգյալներով, *որոնց հանգույցները արտահայտվում են ապառնի ժամանակով. ինչպես՝ «Նա զորքի համար կլինի գթառատ հույր և ոգևորության աղբյուր»։*

գ) Պարզ և բաղադրյալ *(բայական, անվանական)* ստորոգյալների զուգակցումներով. *ինչպես՝ «Բայց եկեք նայենք մեր գրքերում ապրող բնակչությանը, փորձենք նամեմատել» (ՎՊՀԲԱ, 17)։*

դ) Միակազմ միավորյալ նախադասության գերադաս անդամներով. *ինչպես՝ «Ո՛չ առ ու փախի, ո՛չ նստե ու լաց» (Ա, 107)։ «Մի՛ ասիր, մի՛ լսիր» (Ն. տ., 122)։ «Պետք է խոռամանկել, խաբել թշնամուն» (ՍԽՄՄ, 3, 317)։*

Ապառնի ժամանակին վերաբերող համաժամանակությանն էլ երբեմն զուգակցում են պայմանի, պատճառահետևանքային և այլ հարաբերություններ. ինչպես՝ «Բայց նայիր քեզ վրա հոր աչքերով և այն ժամանակ շատ վաղ չես համարի» (ՐՍ, 445)։

ՏԱՐԺԱՄԱՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարժամանակային հարաբերությամբ միավորյալ նախադասության արտահայտած գործողությունները, եղելությունները տեղի են ունենում տարբեր ժամանակներում, հաջորդում են իրար։ Միևնույն առարկայի կամ առարկաների գործողությունների և դրանց բնական հաջորդման նկարագրությունը հանդիսացող միավորյալ նախադասությանը բնորոշ է բաղադրիչների շարադասության կայունությունը՝ պայմանավորված գործողությունների, եղելությունների բնական հաջորդականությամբ։ Այսպես, օրինակ, «Նրանք միմյանց չեն հասկանում և չպիտի հասկանան հավիտյան» (ԱՇՔ, 375) նախադասության շարադասության փոփոխությամբ ոչ միայն փոխվում է բաղադրիչ նախադասությունների ներքին-մտային փոխհարաբերությունը, այլև աղճատվում է բովանդակությունը։

Միավորյալ նախադասությամբ նկարագրված գործողությունների ժամանակային հեռավորությունը դրսևորվում է կա՛մ ստորոգյալների արտահայտությամբ և կա՛մ էլ բառական միջոցներով։ Օրինակ՝ «Սարկավագը գլուխ տվեց և հեռացավ» (ՐՍ, 226)։ «Մտավ երկրի ապավենը

գնդի զորանոցներն ու երկու օր շարունակ դուրս չեկավ այնտեղից» (ՍԽՄՄ, 3, 280)։ Առաջին նախադասության մեջ գործողությունների միջև եղած ժամանակային տևողությունը շատ կարճ է, իսկ երկրորդում երկար է՝ պայմանավորված ընդգծված ժամանակի պարագայով։ Իհարկե, գործողությունների ժամանակային հեռավորության չափը քերականական տեսակետից կարևոր չէ։ Տվյալ դեպքում էականը գործողությունների հաջորդումն է։

Միավորյալ նախադասության մեջ ևս տարժամանակությունն արտահայտվում է՝ ա) բնական ժամանակների սովորական հաջորդումով և բ) գործողությունների նախորդմամբ (Համմտ. 17, էջ 579), որոնցից առաջինը միավորյալ նախադասությանն ավելի բնորոշ է։ Տարժամանակությունը գործողությունների նախորդմամբ արտահայտվում է մասնավորապես այն դեպքում, երբ խոսողը (գրողը) ցանկանում է առանձնապես շեշտել երկրորդ գործողությունը՝ այն ներկայացնելով նախադաս. ինչպես՝ «Սահակ վարժապետը, ասում էին, եկել է էջմիածնից, այնտեղ է ուսում առել» (ՀՔ, 1, 270)։

Միավորյալ նախադասության մեջ տարժամանակությունը բնական ժամանակների սովորական հաջորդումով արտահայտվելու դեպքում բաղադրիչների շարադասությամբ դրսևորվում է գործողությունների բնական հաջորդականությունը։ Ըստ այդմ էլ միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) բայական ընդհանուր ժամանակով արտահայտված տարժամանակությամբ միավորյալ նախադասություններ, բ) տարբեր ընդհանուր ժամանակների զուգակցումով արտահայտված տարժամանակությամբ միավորյալ նախադասություններ։

Բայական ընդհանուր ժամանակով արտահայտվող տարժամանակություն

Բայական ընդհանուր ժամանակով արտահայտվող տարժամանակությունը միատարր չէ և լինում է.

Ա. Ներկա ժամանակով արտահայտվող տարժամանակություն. Թվում է՝ ներկայում տարժամանակության արտահայտումը պետք է բացառվի, սակայն լեզվական փաստերը հավաստում են հակառակը։ Մենք համամիտ ենք պրոֆ. Վ. Առաքելյանի այն մտքի հետ, թե «քանի որ ստորոգյալի ժամանակները որոշակի վայրկյաններով չեն չափվում, և բացի այդ, ներկան կարող է և՛ անցյալ արտահայտել, և՛ ապառնի, այն կարող է լինել պարզապես պատմական, նկարագրական ժամանակ, ապա այդ պատճառով գործողությունների հաջորդություն համադասության մեջ դրսևորվում է նաև ստորոգյալների ներկա ժամանակների միջոցով»

(28, էջ 306)։ Ներկա ժամանակին վերաբերող տարժամանակությունը միավորյալ նախադասության մեջ արտահայտվում է.

1. Պարզ ստորոգյալներով, որոնք արտահայտվում են՝ ա) միևնույն ժամանակաձևով (մասնավորապես անկատար ներկայով) և բ) նույն կամ տարբեր եղանակների ժամանակաձևերով։ Օրինակ՝ ա) «Վայրի աղավնիների երամը փոռոցով անդունդից դուրս է թռչում և... նորից իջնում մուրը» (ԱՔ, 1, 224)։ բ) «Ու հիմա մտքիս մեջ ձգվում են իրար Արամն ու Աստղիկը, ձուլվում են ու զատվում, զատված են ու կրկին ձուլվում են իրար» (ՀՔ, 1, 280)։

2. Բայական բաղադրյալ ստորոգյալներով. *ինչպես՝ «Բայց նա ձրգտում է մեզ միջոցում կոտակել, ապա երկու թևով ֆաշել իրեն, գրկել, ճզմել»* (ԴՎ, 2, 592)։

3. Պարզ և բաղադրյալ ստորոգյալների զուգակցումներով։ Ընդորում, պարզ ստորոգյալը և եղանակիչն ու հանգույցը արտահայտվում են ներկա ժամանակով. *ինչպես՝ «Գնում են արտ ու սկսում ճնձել»* (ՄԽԱ, 73)։ *«Հետո՝ փողը ծոցն է տանում Ու վերստին մեկնաբանում, Եվ մի վայրկյան տալով դադար, Նորից դառնում մեճակատար...»* (ՊՍ, 4, 168)։

4. Միակազմ միավորյալ նախադասության՝ ներկայով արտահայտված բայական գերադաս անդամներով. *ինչպես՝ «Ծուը վեր աճում, տակիցը հորթ են ուզում»* (Ա, 90)։

Բ. Անցյալ ժամանակով արտահայտված տարժամանակություն. Նման տարժամանակության դրսևորման ոլորտը բավական լայն է։ Այն արտահայտվում է.

1. Պարզ ստորոգյալներով, որպիսի դեպքում ժամանակային հաջորդականությունը դրսևորվում է.

ա) Միևնույն ժամանակաձևով։ Այս դեպքում գործածվում են սահմանական եղանակի անցյալի վեց ժամանակաձևերը (նաև պատմական ներկան), ըղձական անցյալը, ենթադրական անցյալն ու հարկադրական անցյալը։ Բերենք օրինակներ՝ *«Ալ-Մարգարը հանկարծ վեր էր թռնում տեղից, բահն առնում ու դեպի ջրի հանդը գնում»* (ԱՔ, 1, 169)։ *«Ե՛վ ճաճել են նեղից, և՛ նեղել են, Անթեղել են, հետո ինձ պեղել են»* (ՀՍՍՔ, 136)։ *«Առջավեցին ձախ, ապա շուռ եկան, սլացան դեպի գետն ու դանդաղ ճեռացան...»* (ՍԽՄՍ, 3, 64)։ *«Ու լսեի վերջին անգամ Խորհուրդը նրա Ու մեռնեի ապուպապոտ Այդ քարի վրա»* (ՀՍՔԵ, 99)։ *«Այնտեղ՝ արևոտ այն քարափներին Իմ մանկությունը պիտի ղողանջեր, Թառեր Եփրատի փրփրած թևին Եվ ընկուզենու կարոտով կանչեր»* (ՎԴԱՄ, 51)։

բ) Միևնույն եղանակի տարբեր (անցյալի անկատար ու անցյալ կատարյալ, անցյալի վաղակատար ու անցյալի անկատար, անցյալի վաղակատար ու անցյալ կատարյալ, վաղակատար անցյալի հարակա-

տար ու անցյալի անկատար) ժամանակաձևերով, որոնցից մեկը ցույց է տալիս տևական, իսկ մյուսը՝ ոչ տևական գործողություն։ Օրինակներ՝ «Ասյա Արմենովնան երկար ժամանակ մոմնջում էր հայերեն այդ բառերը. հետո աչքերը փակեց» (ՀՔ, 1, 303)։ «Մովսեսը փակել էր իր դպրոցը և տիվ ու գիշեր Բեկի տանն էր գտնվում» (ՍԽՄՄ, 3, 118)։ «Լուռ գնացել էին դաշտ, լուռ էլ վերադարձան» (ՀՔ, 1, 367)։ «Այս ամառ նրանք կովկասյան հանքային ջրերն էին եղել գնացած և այդ երեկո այնտեղից էին վերադառնում» (ՆԴ, 184)։

դ) Տարբեր եղանակաժամանակային ձևերի զուգակցումով, որպիսի դեպքում գործողությունների կատարման ժամանակապահերի միջև առկա է բնական հաջորդումը. ինչպես՝ «Թոնիր ուներ արդեն, սեփական ձեռքով ցանված թութուն պիտի ուներ և ուներ թութունի մի մեծ տոպրակ...» (ՀՔ, 1, 443)։ «Վանի դեպքերից հետո Ջավդուր փաշեն ճանապարհեց ու պիտի գնար Ալջավազով» (Ն. տ., 454)։

2. Բայական բաղադրյալ ստորոգյալներով։ Ընդ որում, տարժամանակությունը գործառվում է սրանց դերբայական բաղադրիչների միջև. ինչպես՝ «Մարդիկ վախենում էին տնից դուրս գալ և նրա ղինվորներին ճանդիպել» (ՐՍ, 364—365)։

3. Սակավադեպ անվանական բաղադրյալ ստորոգյալներով. ինչպես՝ «Դու մի օր թագավորի բարեկամն էիր և դարձյալ բարեկամ կլինես» (ՄԳՄ, 141)։

4. Պարզ և բաղադրյալ ստորոգյալների զուգակցումներով. ինչպես՝ «Անահիտն ու Աստղիկը բաշվեցին մի անկյուն ու սկսեցին կարդալ» (ԴԴվ, 2, 93)։ «Ավագ Համունին միառժամ լուռ էր. հետո շարունակեց դառնացած» (ՍՀՀՔ, 47)։

5. Միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամներով, որոնք արտահայտվում են նշված պարզ ստորոգյալներին բնորոշ ժամանակաձևերով. ինչպես՝ «Լուսնկան պատռեր, մեջեն ելեր է» (Ա, 64)։

Նշենք, որ անցյալին վերաբերող տարժամանակություն արտահայտող միավորյալ նախադասության մեջ ևս ժամանակային հարաբերությանը հաճախ զուգակցում է պատճառահետևանքային հարաբերությունը. ինչպես՝ «Կինը չկարողացավ դիմանալ ոտի վրա և երեսն ի վայր փռվեց գետնին» (ՆԴ, 193)։ «Կարդաց նամակը և տխրեց» (ԱՇՔ, 137)։

Դ. Ապառնի ժամանակով արտահայտվող տարժամանակություն. Այս դեպքում միավորյալ նախադասությունը ցույց է տալիս խոսքի պահից հետո մինչև ապառնի (առարկաների) հաջորդաբար կատարելիք գործողությունները։ Ապառնի ժամանակին վերաբերող տարժամանակությունն արտահայտվում է.

1. Պարզ ստորոգյալներով, որոնք արտահայտվում են՝ ա) միևնույն ժամանակաձևով (սահմանական, ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների ապառնի ժամանակներով, հրամայական եղանակով) և բ) տարբեր եղանակաձևերի (սահմանական ապառնի ու ենթադրական ապառնի և այլն) զուգակցումով։ Օրինակներ՝ ա) «Պատրաստվի՛ր, սիրելի՛ Մուշեղ, և շուտով ճանապարհ ընկի՛ր» (ՐՍ, 392)։ «Քո պայծառ գահից մեղմորեն իջիր, Մազերդ փոխ հոգնատանջ կրծքիս, Անուշ երազով սիրտս պաճուճիր, Ցնորք հուշերով ամոխիր հոգիս...» (ՎՏ, 1, 52)։ բ) «Ես իսկույն գնալու եմ հանքերը, կնրամայեմ...» (ԱՇՔ, 99)։

2. Բայական բաղադրյալ ստորոգյալներով, որոնց եղանակիչներն ունենում են ապառնիի նշանակություն. ինչպես՝ «Մենք կարող ենք թուրքի առամները փշրել և ախորժակը կարել Սյունիքից» (ՍԽՄՍ, 3, 240)։

3. Պարզ ստորոգյալ+անվանական բաղադրյալ ստորոգյալ կազապարով։ Այս դեպքում հանգույց են դառնում լինել, դառնալ և նման մի քանի վերացական բայերի ըղձական, ենթադրական ու հարկադրական ապառնիի ձևերը, իսկ պարզ ստորոգյալ՝ ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիները, հրամայական եղանակի բայաձևերը. ինչպես՝ «Երկար մազերդ կարծակես ազատ, Հիվանդ գլուխդ կրդնես կրծքիս, Կլինես ճնոուշ, մոտիկ, ճարազատ,— Անուշ խոսքերով կդյութես հոգիս...» (ՎՏ, 1, 48)։ «Դու էլ, դու էլ ճնոուշ եղիր, Մի՛ տրտնջա, լացդ թող, Այս սուրբ ժամին լռիր, լռիր, Սիրիր անխոս ու կարող...» (Ն. տ., 93)։

4. Միակազմ միավորյալ նախադասության բայական գերադաս անդամներով. ինչպես՝ «Բան առա, հետո պարծեցիր» (Ա, 16)։ «Նախատեսված միջոցառումները ճնճարկել... ժողովներում և դրանք մտցնել կոլեկտիվ պայմանագրերի մեջ» (ԺԺ, 9, 380)։

Տարբեր ընդհանուր ժամանակների զուգակցումով արտահայտվող տարժամանակություն

Միավորյալ նախադասության բաղադրիչների միջև գործառվող տարժամանակությունը հաճախ արտահայտվում է տարբեր ընդհանուր ժամանակների զուգակցումով։ Տարժամանակության նման դրսևորումը ավելի բնորոշ է միավորյալ նախադասությանը։ Այս դեպքում գործողությունների կատարման հաջորդականությունն ունենում է հետևյալ հերթականությունը.

Ա. Անցյալ—ներկա—ապառնի. Սա բնական ժամանակների սովորական հաջորդում է, երբ միավորյալ նախադասության բաղադրիչներից առաջինը ցույց է տալիս միևնույն առարկային (առարկաներին) ստորոգվող հատկանիշը անցյալում, երկրորդը՝ ներկայում, իսկ երրոր-

դը՝ ապառնի ժամանակում։ Ընդ որում, անցյալ ժամանակն արտահայտվում է վաղակատար (սակավադեպ անցյալի անկատար), ներկան՝ ներկա և հարակատար, իսկ ապառնին՝ ենթադրական ու հարկադրական ապառնի ժամանակներով. ինչպես՝ «Ես եղել եմ, կամ. կըլինեմ հար ու հավետ...» (ՀԲ, 74)։ «Բանաստեղծությո՛ւն, Դու եղել ես, կաս ու պիտի լինես, ինչ էլ որ լինի...» (ՀՍՍԲ, 159)։ Նման նախադասությունը երբեմն արտահայտվում է բայական ստորոգյալ+անվանական ստորոգյալ կազապարով. ինչպես՝ «Վահրա՛մ, եղել ես, կաս և կլինես մի թանկագին ոսկեթել բեհեզ» (ՎՓՀՀ, 1, 97)։

Բ. Անցյալ—ներկա. ժամանակների այս հերթականությունը միավորյալ նախադասության մեջ հիմնականում արտահայտվում է անցյալի անկատար+ներկա, վաղակատար +ներկա, անցյալ կատարյալ+ներկա կազապարներով. ինչպես՝ «Ես սիրում էի փլավը և մինչև օրս էլ սիրում եմ» (ՀՁ, 20.4.1978 թ., 4), «Վանում ես տեսա Անդրանիկին, ինչում եմ նրա բարի հայացքը, բարի ժպիտը» (ՀՔ, 1, 309), իսկ երբեմն էլ՝ բայական բաղադրյալ ստորոգյալներով. ինչպես՝ «Դու չուզեցիր, չկամեցար իմ խենթ հոգու սիրով շնչել, էլ ինչո՞ւ ես ուզում անհայտ ցավով կրկին հոգիս տանջել» (ՎՏ, 2, 90)։

Ոճական նկատառումով տարժամանակությունն արտահայտվում է նաև ներկա—անցյալ հերթականությամբ, երբ խոսողը (գրողը) առաջնային պլան է մղում ներկա ժամանակի ստորոգյալի դրսևորած հատկանիշը. ինչպես՝ «Անհանգիստ մասնագիտության մարդիկ են ժուռնալիստները և այդ հարգանքին արժանացել են ոչ թե ինչ-որ վերին որոշման պարտադրանքով» (ՎՊՀԲԱ, 6)։

Գ. Անցյալ—ապառնի. Այս դեպքում միավորյալ նախադասությունը բաղադրվում է անցյալ և ապառնի ընդհանուր ժամանակների մասնավոր ժամանակաձևերով արտահայտված պարզ ստորոգյալներով, մասամբ էլ բայական ու անվանական ստորոգյալներով։ Ավելին, գործողությունների հաջորդականությունն արտահայտվում է ինչպես միևնույն եղանակի ժամանակաձևերի սահմաններում, այնպես էլ տարբեր եղանակաձևերի ոլորտում։ Ըստ այդմ էլ անցյալ–ապառնի հաջորդումը արտահայտվում է՝ ա) վաղակատար ու ապառնի, բ) վաղակատար ու հարկադրական ապառնի, գ) վաղակատար ու ենթադրական ապառնի, դ) անցյալ կատարյալ ու ենթադրական ապառնի, ե) անցյալ կատարյալ ու հարկադրական ապառնի, զ) անցյալի վաղակատար ու ենթադրական ապառնի, է) անցյալի անկատար ու ըղձական ապառնի, ը) հարակատար ու ենթադրական ապառնի ժամանակներով, թ) բաղադրյալ ստորոգյալներով։ Օրինակներ՝ ա) «Ջեմ եղել և չեմ լինելու...» (ՍՋՀԲ, 10)։ բ)

«Սա Երևանում նոր զորք է գումարել և շուտով պետք է ժամանի Նախիջևան» (ՍԽՄՄ, 3, 49)։ գ) «Աշխարհի սկզբից մինչև այժմ բոլոր նոր տարիներն այդպես եկել, այդպես էլ կգնաց» (ՆԴ, 263)։ դ. «Եկավ ու հիմա արդեն կմնա» (ՀՔ, 1, 506)։ ե) «Գետն անցանք, առո՞ւմ պիտի խեղդվինք» (Ա, 130)։ զ) «Գայլի պես պպզել էր թախտին ու ասես հիմա կցատկի, կճոշոտի խռովարարներին» (ՍԽՄՄ, 3, 339)։ է) «Իսկ Առաքելը նրանցից չէր վախենում, միայն մարդկանց չճանդիպի մինչև սարերին հասնելը» (ՀՔ, 1, 400)։ ը) «...այդ խորամանկ խաղը սարքողները դարանած են մոտակայքում և ուր որ է կճարձակվեն իրենց վրա» (ՍԽՄՄ, 3, 296)։ թ) «Մենք եղել ենք բարեկամ և կլինենք հավետ» (ՍԶՀՐ, 238)։

Անցյալ-ապառնի հերթականությամբ տարժամանակությունը ոճական նկատառումով երբեմն էլ արտահայտվում է ըրջուն՝ ապառնի-անցյալ ձևով։ Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչները կապվում են նաև պատճառահետևանքային հարաբերությամբ. խոսողը (գրողը), ցանկանալով խոսակցի (ընթերցողի) ուշադրությունը բևեռել ապառնի ժամանակով արտահայտված հետևանքի վրա, նախադաս է դարձնում հետևանքը նշող բաղադրիչ նախադասությունը։ Տարժամանակությունն էլ ավելի հաճախ արտահայտվում է ճրամայական եղանակ+ըղձական ապառնի+անցյալ կատարյալ կաղապարով, ուր հետևանքը նշվում է առաջին երկու բայաձևերով, իսկ պատճառը՝ անցյալ կատարյալով. ինչպես՝ «— Դուրս իմ տնից, սևերե՛ս, ես չըճայես դեպի մեզ, ոտ չըդնես էլ տունըս, Մըրոտեցիր աճուս...» (ՀՔ, 147)։

Դ. Ներկա—ապառնի. Գործողությունների նման հաջորդումն առկա է լինում իրար հաջորդող ժամանակների միջև և արտահայտվում է թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ ստորոգյալներով, ինչպես նաև դրանց զուգակցումներով. օրինակ՝ «Հիմա ինքը համարյա չկա և վաղը բոլորովին չի լինելու» (ՍԱՃՀ, 77)։ «Չէ՞ որ դժբախտ է և մի կերպ պիտի աշխատի խեղդել սրտի կեղծիքները» (ԱՇՔ, 284)։ «Դրանք վայրենի ռազմիկներ են, կկռվեն մինչև սատակեն գլխովին» (ՍԽՄՄ, 3, 71)։

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ+ՏԱՐԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունները հաստատում են բազմաբաղադրիչ միավորյալ կառուցվածքում համաժամանակության ու տարաժամանակության միաժամանակյա դրսևորման հնարավորությունը։ Ընդամին, ժամանակային այդ երկու արտահայտությունները միավորյալ նախադասության մեջ ունենում են տարբեր դրսևորումներ։ Այսպես, օրինակ, «Թրթռում է օդի մեջ Հաբրբանը զընգում» (1), Շաղ է տալիս ջրի հետ (2) Ու փշրվում է

քնքուշ (3)» (ՎԴԱՄ, 178) նախադասության 2-րդ և 3-րդ բաղադրիչները իրար հետ կապված են համաժամանակությամբ, իսկ երկուսով առաջին բաղադրիչի հետ՝ տարժամանակությամբ: Այստեղ համաժամանակության ու տարժամանակության ընդգրկումը հավասարաչափ է: Մինչդեռ, օրինակ, հետևյալ նախադասության մեջ դրանք հավասարաչափ չեն արտահայտվում. «Դռան մոտ, այնտեղ, կեբերի նման, Միխայլոն էր միշտ կանգնած լուրջ ու խիստ (1), Ակիմ նայում էր մեզ (2), սաստում էր անձայն (3) Ու հանկարծ ժպտում լայն բեղի տակից» (4) (ՎՏ, 2, 164): Քանի որ այստեղ առաջին երեք բաղադրիչները իրար հետ կապված են համաժամանակությամբ, իսկ չորրորդի հետ՝ տարժամանակությամբ, ուստի գերիշխողը համաժամանակությունն է:

Միավորյալ նախադասության բաղադրիչները ժամանակային հաբաբերության արտահայտման տեսակետից հաճախ խմբավորվում են: Այսպես՝ առաջին երկու և հաջորդ երկու բաղադրիչ նախադասությունները իրար հետ կապվում են համաժամանակությամբ, իսկ այդ երկու խմբերը միմյանց հետ՝ տարժամանակությամբ. ինչպես՝ «Հրապուրում է ինձ, տոչորում և ապա ծարավ թողնում, հեռանում» (Ահ, 3, 202):

Միավորյալ նախադասության մեջ համաժամանակություն+տարժամանակությունը արտահայտվում է երկու ձևով.

1. Միևնույն ընդհանուր ժամանակով: Այս կառույցում համաժամանակությունն ու տարժամանակությունը արտահայտվում են ամենից առաջ բայական միևնույն ընդհանուր ժամանակի սահմաններում. ընդ որում, ավելի հաճախ՝ անցյալ, քիչ չափով՝ ներկա, իսկ ավելի սակավադեպ՝ ապառնի ժամանակում:

Ներկա ժամանակին վերաբերող համաժամանակություն+տարժամանակությունը արտահայտվում է՝ ա) ներկա ու հարակատար ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալներով և բ) ներկա ժամանակի եղանակիչ ունեցող բայական բաղադրյալ ստորոգյալներով: Օրինակ՝ ա) «Կըլթացնում են, արտորում Արուսյտները արտերում, Թրչում մանուկ հոգուս հետ, ձախրում, ճըխում եթերում» (ՀՔ, 69): բ) «Ես ուզում եմ հիմա իմ հասակով մեկ Ծառանալ որպես կենդանի բողոք, Ճչալ, որոտալ, ճեռքել հիմնովին Այդ անդարձության օրենքն անողոք...» (ՀՍՔ, 172):

Անցյալ ժամանակին վերաբերող համաժամանակության ու տարժամանակության համակցումն արտահայտվում է.

1) Պարզ ստորոգյալներով, որոնք դրսևորվում են՝

ա) Անցյալի միևնույն ժամանակաձևով. ինչպես՝ «Այնտեղ իրար գլխի հավաքված խոսում էինք ու վիճում մինչև ճաշ, ապա դառնում էինք տուն» (Ահ, 3, 343—344): «Աշնան գույներով ներկված թավուտում

ընկել էր պախրան, մեկնել էր գեղեցիկ վիզը և մի աչքով դժգոհ նայում էր երկնքին» (ՍԱՃՀ, 43)։

բ) Սահմանական եղանակի անցյալի տարբեր ժամանակաձևերի զուգակցումով. ինչպես՝ «Պապս տաք մոխիր էր կապել եղան ճակատին, շոյում էր նրա մեջքը և փաղաքշական խոսքեր էր ասում» (ԱԲ, 1, 216)։ «Փառանձեմը լսում էր և գլուխն օրորում, հետո չհամբերեց և ընդհատեց ամուսնու խոսքը...» (ՍՋՀԲ, 483)։

2) Պարզ և բաղադրյալ ստորոգյալներով. ընդ որում, համաժամանակությունն առկա է լինում նույն տիպի, իսկ տարժամանակությունը՝ տարբեր (պարզ ու բաղադրյալ) ստորոգյալների միջև. ինչպես՝ «Թզենու ստվերի շարժվելու հետ փոխում էր տեղը, բարկանում, նուզվում ու նորից սկսում խաղալ» (ՍԽՄՄ, 3, 98)։ «Մեզ հյուրընկալողները հավաքվում էին պրեֆեկտի շուրջը և սկսում խոսել արաբերեն, ծիծաղել» (ՎՊՀԲԱ, 221)։

Ապառնի ժամանակին վերաբերող համաժամանակություն + տարժամանկություններ արտահայտվում է հիմնականում ապառնի ժամանակի միևնույն ժամանակաձևի սահմաններում. ինչպես՝ «...Ամայի դաշտում նստեմ միայնակ,— Մեռնող հուշերս փայփայեմ ու լամ» (ՎՏ, 1, 105)։ Այստեղ 2-րդ և 3-րդ բաղադրիչները իրար հետ կապված են համաժամանակությամբ, իսկ 1-ին բաղադրիչի հետ՝ տարժամանակությամբ։

2. Տարբեր ընդհանուր ժամանակների հերթականությամբ։ Այս դեպքում ժամանակային հարաբերության երկու դրսևորումները միևնույն կառույցում արտահայտվում են տարբեր ընդհանուր ժամանակների բնական հաջորդումով։ Առավել տարածվածը ժամանակների անցյալ—ներկա հերթականությունն է, որն արտահայտվում է ինչպես պարզ կամ բաղադրյալ ստորոգյալներով, այնպես էլ դրանց զուգակցումով. ինչպես՝ «Կիտել հոնքերը ներքև, թերթում է, ֆրֆռում, ջոկում» (ՆՋԺ, 349)։ «Մենք լսել էինք քո ահավոր անունը. տեսությանդ էինք փափագում, այժմ բախտավոր ենք, որ քո ոտքով ես եկել մեր հողը» (ՀԹ, 386)։

Տեսաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ երբեմն համաժամանակությամբ կապված 1-ին և 3-րդ բաղադրիչների միջև ընկած 2-րդ բաղադրիչն իրեն նախորդող և հաջորդող բաղադրիչների հետ կապվում է տարժամանակությամբ՝ նախորդման ձևով. ինչպես՝ «Նա մեջքից կռացած, ինչ-որ բան է գրում մեծ դժվարությամբ, լեզուն է հանել, վիզն է ծռմռում» (ՍՀ, 1978, № 2, էջ 4)։

Թվարկում արտահայտող միավորյալ նախադասության բաղադրիչների կապակցման և դրանց միջև գործառվող ժամանակային հարաբերության դրսևորման գործում զգալի դեր են կատարում նաև բառական միջոցները։ Դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) շաղկապներ ու շաղկապական բառեր և բ) ժամանակի իմաստ արտահայտող բառեր, որոնք ունեն տարբեր դեր ու գործառույթ։ Նախ՝ շաղկապների ու շաղկապական բառերի մասին։

Եվ, ու — *Թվարկում արտահայտող կենսունակ այս շաղկապները միավորյալ նախադասության մեջ ամենից շատ են հանդիպում։ Ընդսմին, դրանք կապակցում են թե՛ համաժամանակություն և թե՛ տարժամանակություն արտահայտող միավորյալ նախադասության բաղադրիչները։ Այստեղ մեր նպատակն է քննել այդ համանիշ շաղկապների միայն կապակցական գործառույթը։*

Երկբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ և-ը և ու-ն հանդես են գալիս երկու բաղադրիչ նախադասությունների միջև՝ սահմանափակելով թվարկումը, իսկ բազմաբաղադրիչ նախադասության մեջ մեծ մասամբ կապակցում են վերջին և նախավերջին բաղադրիչները. ինչպես՝ «Սմբատը տվեց նրան մի բուռ թղթադրամ և պատվիրեց մյուս օրը մշակներին հյուրասիրել» (ԱՇՔ, 285)։ «Այդ միջոցին ներս ընկավ որդին, գրկեց մորն ու հորը, համբուրեց և լացեց» (Ա՛, 3, 333)։

Բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ և-ը հաճախ, առանց շեշտվելու, բոլոր բաղադրիչներն է կապակցում՝ տարբերակվելով և՛...և՛ կրկնադիր շաղկապից. ինչպես՝ «Դրագիրը գնաց և քիչ ժամանակից ետ բերավ պատվիրած նամակը և տվավ Սևադա իշխանին» (ՄԳՄ, 116)։

Պայմանավորված ու-ի՝ ավելի սերտ հարաբերություն արտահայտելու հատկանշով՝ այդ շաղկապը հաճախ կապակցում է միավորյալ նախադասության զույգ-զույգ թվարկվող բաղադրիչները, որոնց ստորոգյալները, որպես կանոն, լինում են իմաստով մոտ բառեր. ինչպես՝ «Սավառնում էր ու ճախրում, ժպտում էր ու ծիծաղում՝ հրաշալի, հրաշագեղ...» (Ա՛, 3, 81)։

Երբեմն բազմաբաղադրիչ կառույցում միաժամանակ գործածվում են և, ու շաղկապները. ինչպես՝ «Եվ ստրուկ ու համր ժողովուրդը հավատում էր այս ամենին ու օրհնում թագավորի կյանքը և հնազանդվում նրա կամքին» (Ա՛, 3, 110)։

Միավորյալ նախադասությունը կապակցվում է նաև և՛...և՛ կրկնա-

դիր շաղկապով, որով շեշտվում են թե՛ ստորոգվող հատկանիշները և թե՛ ժամանակային հարաբերությունը։ Եվ-ը այս դեպքում կրկնվում է առաջին, սակավադեպ էլ երկրորդ բաղադրիչ նախադասությունից սկսած. ինչպես՝ «Պաշարյալները և՛ մեռնում էին, և՛ պատրաստվում էին մեռնելու համար, և՛ միևնույն ժամանակ կռվում էին արտաքին թշնամու դեմ» (ՐՍ, 399)։ «Ես նստում եմ ճամփի վրա ամեն օր Ե՛վ աղոթում, և՛ թախծում եմ քեզ համար» (ՎՏ, 1, 58)։

Չափածո միավորյալ նախադասության մեջ և-ի կրկնությունը ստեղծում է հարակրկնություն՝ նպաստելով ռիթմի ձևավորմանը. ինչպես՝

«Ե՛վ ընկնում էին անգին ընկերներ,
Ե՛վ վերջին անգամ մեզ էին կանչում» (ՆՉԾ, 11)։

Միավորյալ նախադասության մեջ և, ու շաղկապները, բացի թվարկման հարաբերությունից, արտահայտում են նաև ուրիշ իմաստներ՝ հանդես գալով այլ շաղկապների նշանակությամբ։ Դրանք մասնավորապես գործածվում են բայց, սակայն, իսկ, այլ ներհակական, ուստի և հետևանքի շաղկապների իմաստով։ Ընդ որում, ներհակականների նշանակությամբ գործածվելիս միավորյալ նախադասության բաղադրիչների ներքին-մտային կապը լինում են հակասումը, անհամապատասխանությունը, հանդիպադրությունն ու ժխտումը, իսկ մակաբերական իմաստով գործածվելիս միավորյալ նախադասության բաղադրիչները միանում են պատճառահետևանքային կապով, և նրանց քերականական համաղորությունը չի հատկանշվում իմաստային-քերականական համաղորությամբ։ Օրինակներ՝ «Սառած ու ապշահար նայում էի դաժան իրականությանը և բան չէի հասկանում» (ԱԻ, 3, 362)։ «Բայց ոչ միայն նրանք, այլև ձեր ամբողջ հասարակությունը ինձ գաղտնի արհամարհում է և ձեզ անարժան համարում» (ԱՇՔ, 273)։ «Խմբագիրն սկզբում չէր խռնվում և, մի կողմ քաշված, մատների ծայրերով վերուվեր էր քաշում առատամազ a'la Վիլհելմ սանրած բեղի փնջաձև ծայրերը» (ՆԴ, 158)։ «Շաբավից պապակում էի և ագահաբար ծծեցի սառը չուրը» (ն. տ., 196)։ Այս նախադասությունները հնչույթյամբ փոխակերպվում են բայց, սակայն (1-ին օրինակ), իսկ (2-րդ օրինակ), այլ (3-րդ օրինակ), ուստի, ուստի և (4-րդ օրինակ) շաղկապներով տարբերակների։

Թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ — Այս կրկնավոր զուգաշաղկապներից առաջինը միևնույն առարկային (առարկաներին) ստորոգվող հատկանիշների գոյությունը հաստատում է, իսկ մյուսը՝ ժխտում։ Ակնբախ է, որ դրանց բաղադրիչները երբեմն միավորվում են և-ով, ո՛չ...ո՛չ-ը՝ նաև էլ-ով՝ կազմելով թե՛...և թե՛, ո՛չ...և ո՛չ ո չ...և ո՛չ էլ կապակցությունները, որպիսի դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչների կապն ավե-

լի է սերտանում, և թվարկվող շարքի փակումն ավելի է ընդգծվում։ Միավորյալ նախադասությունն արտահայտում է թե՛ համաժամանակություն, թե՛ տարժամանակություն։ Օրինակներ՝ «Վարդանը թե՛ քայլում է, թե մտածում»։ «Դու ո՛չ Սայաթ-Նովա, Ո՛չ էլ Քուչակ էիր, Ո՛չ էլ հռչակ փնտրող Հետին գրչակ էիր» (ՀՍՍՌ, 243)։ «Ո՛չ հագնվել էր և ո՛չ սանրվել էր» (ՐՍ, 25)։ «...Նա ո՛չ առաջինն է, ո՛չ էլ վերջինն է լինելու» (ԱՇՔ, 134)։

Այժմ՝ միավորյալ նախադասության մեջ հանդես եկող ժամանակային իմաստ ունեցող բառերի մասին։ Սրանք երկակի դեր են կատարում. և՛ կապակցում են բարդության բաղադրիչները, և՛ միաժամանակ դրսևորում են ժամանակային հարաբերությունը՝ տարժամանակությունը։ Նման կիրառություն ունեն ապա (և ապա), նախ և առաջ...ապա, նախ...ապա, նախ...հետո և այլն ձևեր, որոնք ակադ. Գ. Ջահուկյանն համարում է շաղկապների առանձին խումբ (տե՛ս 94, էջ 500)։ Օրինակներ՝ «Կառավարիչ իշխանը աչքերը թարթեց, ապա անխոս սևեռեց Թորգոմի երեսը» (ՍՋՀԲ, 86)։ «Ընդհակառակն. գերի տանող խմբերը, նկատելով նոր արշավող արքունական հեծվորներին, նախ կանգ առան, ապա ձիերի գլուխը շրջեցին ետ մի ակնհայտ նպատակով՝ եկողներին դիմադրելու...» (ՍՋՀԲ, 387)։ «Հիվանդը նախ սկսեց տքտնքալ, հետո վերմակը դեն շպրտեց և առողջ ձեռքը զարկեց պատին» (ԱՇՔ, 245)։

Միավորյալ նախադասության մեջ տարժամանակության դրսևորմանը նպաստում են նաև ժամանակի իմաստ ունեցող բառերի ու բառակապակցությունների, որոշ տրոհվող լրացումների գործածությունը՝ բովանդակության պլանում դրսևորելով ստորոգյալների արտահայտած գործողությունների միջև առկա ժամանակային միջարկումը. ինչպես՝ «Այս մի բանի օրը հոգնել էր հոգեպես և ֆիզիկապես և նիմա իրեն անսահման ազատ էր զգում» (ՍԱՃՀ, 59)։ «Այդ սրբազան կտակի համաձայն թաղեցին և միևչև այժմ էլ նրա ավերված տանը մոմեր են վառում» (ն. տ., 100)։ «Վազեց մի քանի քայլ առաջ և, հանդիպելով բոցերի հարվածին, հետ ցատկեց» (ԱՇՔ, 359)։

ՄԻԱՎՈՐԱԿԱՆ—ՀԱՎԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասության մյուս տարատեսակը միավորական-հավելական հարաբերությամբ կառույցն է։ Այս հարաբերությունն ունի երկակի բնույթ։ Դա հավելման իմաստ ունեցող միավորականություն է, որը բնորոշ է ոչ թե բարդ համադասական կապակցությանն ընդհանրապես, այլ նրա միայն մի տարատեսակին՝ միավորյալ նախադասությանը։ Այսպես, օրինակ, «Բայց արի պա-

տանին ոչ միայն չէր տրտնջում, այլև ժպիտը չէր հեռացնում երեսից» (ՄԳՄ, 362) նախադասության բաղադրիչներն ամենից առաջ կապված են միավորական հարաբերությամբ. ամբողջ նախադասությունը թվարկում է միևնույն առարկային ստորոգվող հատկանիշները։ Սակայն թվարկումն այստեղ դրսևորվել է մի փոքր այլ ձևով, այն է՝ երկրորդ բաղադրիչի նշած հատկանիշն արտահայտվում է նույն առարկայի առաջին հատկանշին հավելվելու ձևով։ Այդ տեսակետից էլ բերված նախադասության բաղադրիչների քերականական համազորությունը որոշակիորեն տարբերվում է սովորական թվարկման դեպքում գործածվող համազորություններից։ Այսպիսով, միավորական-հավելական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ցույց է տալիս միևնույն առարկային (առարկաներին) ստորոգվող այնպիսի հատկանիշներ, որոնցից հաջորդը հավելվում է նախորդին։ Նման միավորյալ նախադասությունը պետք է ամենից առաջ տարբերել բուն միավորական հարաբերությամբ միավորյալից։ Դրանց միջև առկա են քերականական-դեներոտատիվ, ոճական-վերաբերմունքային ու փաստական-իրադրական տարբերություններ։ Համմտ. «Դատարանը պարզում է ներկայացած անձանց ինքնությունը, ինչպես նաև ստուգում է պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների լիազորությունները» (ՔԴՕ, 60)։ «Դատարանը պարզում է ներկայացած անձանց ինքնությունն ու ստուգում է պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների լիազորությունները»։ Այս նախադասությունները, նույն բովանդակությունն ունենալով, տարբերվում են իրարից։ Երկրորդում բաղադրիչ նախադասությունները քերականական համազորությամբ են կապված. դրանք թվարկում են միևնույն առարկայի հաջորդաբար կատարած գործողությունները, իսկ առաջին նախադասության բաղադրիչները եթե ոչ քերականորեն, ապա գոնե խոսողի (գրողի) վերաբերմունքի տեսակետից հավասարազոր չեն. երկրորդ բաղադրիչի բովանդակությունը առաջինի համեմատությամբ հավելյալ է, ածանցյալ։

Քննության առարկա միավորյալ նախադասության մեջ հավելական բաղադրիչն ամբողջ նախադասությանը հաղորդում է իմաստային (նաև հուզական) ու ոճական ամենատարբեր երբեմնագներ, ունի լրացուցիչ հաղորդման, իմաստային, վերաբերմունքային հավելման նշանակություն։ Այն շարադասվում է հիմնական բաղադրիչից հետո (բաժանվելով դադարով, տրամաբանական շեշտով ու հնչերանգով), բայց նրա հետ քերականական մեկ ամբողջություն է կազմում։ Հավելումը յուրաքանչյուր դեպքում տարբեր է լինում, ունենում է տարբեր նրբերանգ։ Այսպես՝ «Բայց վահանը ոչ միայն հարգում էր նրան, այլև սաստիկ սիրում էր» (ՐՍ, 295)։ «Ծողովում նա պատմում էր իր տպավորությունները, նաև

հայտնեց հեռավոր ուղևորության գնալու իր որոշումը»։ Առաջին նախադասության մեջ հավելման հիմքում ընկած է միևնույն անձի կատարած գործողությունների համաժամանակությունը, իսկ հաջորդում՝ երկրորդ բաղադրիչի բովանդակության երկրորդական, ոչ էական լինելը առաջինի բովանդակության համեմատությամբ։

Հավելման իմաստի նրբերանգները պայմանավորված են նաև միավորյալ նախադասության մեջ գործածվող հավելական միավորիչ շաղկապների իմաստներով։ Այդ շաղկապներն են՝ այլև, նաև, ևս, էլ, ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, նույնպես էլ, ոչ միայն...այլև, ոչ միայն...այլ նաև, ինչպես...այնպես էլ, ինչպես...նույնպես և, ինչպես... նույնպես էլ *և այլն։ Սրանցից* նաև, այլև *միաբառային,* ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, նմանապես և *բառախմբային շաղկապները սովորաբար հանդես են գալիս միավորյալ նախադասության հավելական բաղադրիչի սկզբում, իսկ էլ-ը՝ նույն բաղադրիչի տրամաբանական շեշտակիր անդամից հետո՝ հավելման նշանակության հետ դրսևորելով տարբեր իմաստներ.* նաև-ը և այլև-ը՝ *«զորացման կամ աճման երկրորդական գաղափար» (3, էջ 655), էլ-ը՝ ներառման իմաստ, մյուսները՝ սաստկացման երանգ։ Օրինակներ՝ «(Միքայելը) Գրիշայի ասածը հաստատեց, նաև զգաց նրա խոսքերի ճշմարտությունը» (ԱՇՔ, 214)։ «Ներունին միայն ժամկոչի դեր չէր կատարում, այլև տիրացուություն էր անում» (ՆԴ, 129)։ «(Գյոթեն) բոլորիս հյուրասիրում էր, կտրատում տապակած թռչունները, ընդ որում՝ մեծ վարպետությամբ, ինչպես նաև չէր մոռանում գինի լցնել» (ԷԶԳՀ, 22)։*

Միավորյալ նախադասության մեջ հավելման իմաստն ընդգծված են արտահայտում նաև հավելական զուգաշաղկապները՝ ոչ միայն...այլև, ոչ միայն...այլ նաև, ինչպես...նույնպես էլ, ինչպես...նույնպես և *և այլն, որոնց բաղադրիչները շարադասվում են ստորոգյալներից, իբրև զուգադրվող եղերից, առաջ։ Այս շաղկապները միավորյալ նախադասությունը օժտում են իմաստային տարբեր նրբերանգներով։ Այսպես՝* ոչ միայն... *այլև շաղկապով կապակցված նախադասության առաջին բաղադրիչը դառնում է հաղորդման հիմնական նպատակը, իսկ երկրորդը՝ սոսկ հավելում, որով բաղադրիչ նախադասությունների քերականական համազորությունը մասամբ «խախտվում է»։ Նույն գործառույթն ունի նաև* ոչ միայն...*այլ նաև շաղկապը, միայն թե այս դեպքում առկա ներառման հարաբերությունն ավելի է ընդգծվում։ Օրինակ՝ «Նա ոչ միայն չի սիրել, այլև անպատվել է այդ մաքուր զգացումը, անասնական ախտը սիրո տեղ շռայլելով» (ԱՇՔ, 201)։ «Վարդանը ոչ միայն լավ չի սովորում, այլ նաև հաճախակի է բացակայում դասերից»։*

Միավորական-հավելական հարաբերությամբ միավորյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ շարահարությամբ կապակցման բացառումն է։

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ներհակական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչներն իմաստով, մասամբ նաև կառուցվածքով հակադրվում են իրար, գտնվում են ներհակական կապի մեջ՝ արտահայտելով միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող ներհակ հատկանիշներ։ Օրինակ՝ «Նա տեսավ հորը, բայց ձայն-ծպտում չհանեց» (ՆՂ, 88)։

Ներհակական միավորյալ նախադասության բաղադրիչները կապակցվում են ներհակական շաղկապներով ու շարահարությամբ։ Ընդմին, շաղկապական կապակցումը, որի դեպքում հակադրությունն ավելի ընդգծված ու որոշակի է արտահայտվում, միավորյալ նախադասության մեջ իրականացվում է բայց, սակայն, իսկ, բայց և այնպես, և սակայն, այլ, միևնույն, այնինչ, ապա (ևապա), այնուամենայնիվ, եթե ոչ, թե չէ, այլ ոչ թե, և ոչ թե, եթե...ապա և այլ շաղկապներով, որոնք արտահայտում են միավորյալ նախադասության բաղադրիչների միջև գործառվող հակադրության ամենատարբեր դրսևորումները, նրբերանգները։

Շարահարական կառուցվածքի ներհակական միավորյալ նախադասությունը շաղկապականի համեմատությամբ ավելի սակավ է հանդիպում։ Այս դեպքում, ինչպես միշտ, շարահյուսական հարաբերությունը հաճախ որոշակի չի արտահայտվում և կարող է ըմբռնվել երկակի ձևով։ Այսպես, օրինակ, «Ամբառը ոչինչ չասաց այլևս, լուռ անցավ իր սենյակը» (ԱՇՔ, 158) միավորյալ նախադասությունը կարելի է ըմբռնել և՛ միավորական, և՛ ներհակական իմաստով՝ նայած խոսքի նպատակադրմանը։ Եթե խոսողը (գրողը) ցանկանում է թվարկել միևնույն անձի գործողությունները, բաղադրիչ նախադասությունների ստորոգյալներն արտաբերվում են հավասար թվարկման հնչերանգով, և նախադասությունը լինում է միավորական հարաբերությամբ՝ համարժեք և-ով կապակցված տարբերակին։ Համմտ. «Ամբառը ոչինչ չասաց այլևս և լուռ անցավ իր սենյակը»։ Մինչդեռ երբ խոսողի (գրողի) նպատակն է հակադրել այդ նախադասության երկու բաղադրիչներով արտահայտվածը, այս դեպքում ստորոգյալների հնչերանգը տարբեր է լինում. առաջին ստորոգյալի վերջին վանկը արտասանվում է տոնի բարձրացումով, իսկ երկրորդ ստորոգյալը՝ միջին տոնով։ Եվ նախադասությունն ըմբռնվում է որպես ներհակական կապակցություն, որը համարժեք է այլ-ով տարբերակին։ Համմտ. «Ամբառը ոչինչ չասաց, այլ լուռ անցավ իր սենյակը»։

Շարահարական միավորյալ նախադասության մեջ շարահյուսական հարաբերությունը հաճախ որոշակի չէ հենց ներհակության շրջանակներում. ինչպես՝ «Օձն իրեն շապիկը կփոխի, բնությունը չի փոխի» (Ա, 55)։ «Գացիր Սասուն քանց գել գազան, ետ ես ձալի քանց շուն վազան...» (ԼԲ, 231)։ Այս նախադասությունները կարելի է դիտել և՛ որպես հանդիպադրական, և՛ որպես հակասման հարաբերություն արտահայտող կապակցություններ։ Համմտ. «Օձն իրեն շապիկը կփոխի, իսկ բնությունը չի փոխի»։ «Օձն իրեն շապիկը կփոխի, բայց բնությունը չի փոխի» և այլն։

Շարահարական կառուցվածքում երբեմն էլ զուգակցում են ներհակական հարաբերության տարբեր նրբերանգներ, որոնցից մեկը, սակայն, գերակշռում է. ինչպես՝ «Քեզ համար քուն ես քնում, ուրիշի համար երազ ես տեսնում» (Ա, 44)։ Այս միակազմ կառույցում զուգակցում են հակասումն ու հանդիպադրությունը, սակայն ակնբախ է հակասման հարաբերության գերակշռությունը։

Այս ամենով հանդերձ՝ շարահարական միավորյալ նախադասությունների մեծ մասի մեջ շարահյուսական հարաբերությունը խիստ որոշակի է։

Ներհակական հարաբերությամբ միավորյալ նախադասություններն ունեն կառուցվածքային ու իմաստային մի շարք առանձնահատկություններ։ Դրանք ըստ հիմնական բաղադրիչների դրսևորման լինում են միակազմ և երկկազմ, իսկ ընդհանրապես ունեն երկանդամ կամ երկիոր կառուցվածք, քանի որ հակադրությունը միշտ էլ պահանջում է երկու բևեռ, երկու եզր։ Այդ եզրերի լեզվական արտահայտությունները դառնում են միավորյալ նախադասության բաղադրիչները, կամ անմիջական կազմիչները[2], իսկ ներհակական հարաբերությունը՝ դրանց միջև գործառվող հիմնական հարաբերությունը։ Իհարկե, ներհակական միավորյալ նախադասությունը միշտ չի կազմված լինում միայն երկու բաղադրիչներից։ Հաճախ հակադրության եզրերից մեկն ունենում է բաղադրյալ կազմություն։ Ավելին. չի բացառվում նաև երկու եզրերի միաժամանակյա բաղադրյալ լինելը։ Երկու դեպքում էլ միավորյալ նախադասության մեջ համատեղում են շարահյուսական տարբեր հարաբերություններ, որոնք, սակայն, չեն գտնվում նույն մակարդակի վրա, չունեն գործառական ու հաղորդակցական միևնույն դերն ու նշանակությունը։ Ներհակական հարաբերությունը, որպես բարդ նախադասության անմիջական

2 Ընդունված է անմիջական կազմիչներ համարել բարդ համադասական նախադասության բաղադրիչներն ընդհանրապես։ Մենք այստեղ անմիջական կազմիչ տերմինը գործածում ենք ավելի նեղ նշանակությամբ՝ այդպիսին դիտելով միավորյալ նախադասության միայն ներհակական հարաբերությամբ կապված բաղադրիչները։

կազմիչների միջև գործառվող հարաբերություն, կազմում է ամենաբարձր աստիճանը, իսկ մյուս հարաբերությունները հանդես են գալիս այդ կազմիչներից մեկի կամ երկուսի ներսում՝ իբրև ստորին օղակում կամ օղակներում գործառվող հարաբերություններ։ Ներհակական հարաբերությամբ միավորյալ նախադասություններն ըստ բաղադրիչների կազմության բաժանվում են երեք խմբի.

ա) պարզ կազմությամբ բաղադրիչներով միավորյալ նախադասություններ.

բ) մեկ բաղադրյալ եղրով միավորյալ նախադասություններ.

գ) երկու բաղադրյալ եղրերով միավորյալ նախադասություններ։

Պարզ կազմությամբ բաղադրիչներով միավորյալ նախադասությունն այս կառուցվածքի ամենահիմնական ու պարզագույն տիպն է. ինչպես՝ «Այդ անիրավ բժիշկները հոգիս հանեցին, բայց օգնել չկարողացան» (ԱՇՔ, 67)։

Երկրորդ խմբի միավորյալ նախադասություններում բաղադրիչներից մեկն ունենում է պարզ, իսկ մյուսը՝ բաղադրյալ կազմություն։ Ընդորում, պարզ կազմությամբ եղրը հակադրվում է բաղադրյալ եղրի բոլոր բաղադրիչ նախադասություններին միասին վերցրած։ Բաղադրյալ եղրում, իբրև ստորին օղակում, գործառվող հարաբերությունները լինում են տարբեր։ Առավել հաճախադեպը միավորական հարաբերությունն է. ինչպես՝ «Նա ձայն չհանեց (1) [I], այլ ձեռքերը դրեց գագաթին (2) և տեղն ու տեղը պպզեց տապ առած հավի պես» (3) [II] (ՆԴ, 53)։ Պարզ կազմությամբ եղրը երբեմն էլ հակադրվում է բաղադրյալի բաղադրիչներից միայն մեկին. ինչպես՝ «Ծոլակն ուրախությունից վրնջաց (1), մի քանի քայլ արեց (2), փորձեց կապը կտրել (3) [I], բայց չկարողացավ» (4) [II] (ԱՐ, 1, 288)։ Այստեղ հակասման ներհակությամբ կապված են ընդգծված կից բաղադրիչ նախադասությունները։

Միավորյալ նախադասության բաղադրյալ եղրը կամ կազմիչը հաճախ ավելի է բարդանում, երբ նրա բաղադրիչներից մեկը ստանում է ստորադաս նախադասություն. ինչպես՝ «Մտածում էի մի տեղ խանութի աշակերտ մտնել (1) [I], բայց հետո ավելի լավ համարեցի արհեստ սովորել (2) և գնացի մտա Միքայելյան արհնատագիտական դպրոցը (Թիֆլիսում) (3), մանավանդ որ այստեղ ուսումը ձրի էր» (4) [II] (ՆԴ, 5)։

Ինչպես նշեցինք, բաղադրյալ կազմություն կարող են ունենալ ներհակական միավորյալ նախադասության նաև երկու եղրերը միաժամանակ։ Այս դեպքում հակադրության եղրերից յուրաքանչյուրի բաղադրիչներն իրար հետ կապվում են երկանդամ կամ բազմանդամ ստորոգյալների խմբավորումների ձևով։ Հակադրության եղրերի, իբրև բարձր

օղակների, և դրանք բաղադրող բաղադրիչների, իբրև ստորին օղակների, միջև, բնականաբար, գործառվում են տարբեր հարաբերություններ. հարաբերության միատարրությունն այստեղ բացառվում է: Իսկ միևնույն նախադասության ստորին օղակներում արտահայտվող հարաբերությունները լինում են նույնը կամ տարբեր: Ըստ այդմ էլ բաղադրյալ եզրերով միավորյալ նախադասությունները բաժանում ենք երկու ենթախմբի՝ ա) միևնույն ենթաբերությամբ կապված բաղադրիչներով միավորյալ նախադասություններ և բ) տարբեր ենթաբերություններով կապված բաղադրիչներով միավորյալ նախադասություններ: Առաջին դեպքում միավորյալ նախադասության ստորին օղակներում ավելի հաճախ գործառվում է միավորական հարաբերությունը: Թվարկում արտահայտող բաղադրիչ նախադասությունների երկու խմբերն իրար հետ կապվում են ներհակական հարաբերությամբ. ինչպես՝ «Բոլորովին հաղնված՝ նա նստած էր անկողնի վրա (1) և գլուխը ձեռքին հենած՝ քիչ էր տվել բարձին (2) [I]. բայց իմ մտնելուն պես նստեց ուղիղ (3) և խոր նայեց աչքերիս (4) [II] (ՆԴ, 267): Այստեղ ներհակության եզրերն ունեն հավասար ծավալ. կազմված են երկուական բաղադրիչ նախադասություններից: Միավորական հարաբերությունը առանում է անհավասարաչափ ընդգրկում, երբ հակադրության եզրերից մեկն ավելի շատ բաղադրիչ նախադասություններից է կազմված լինում. ինչպես՝ «Իսկական կարոտությունը դռնեդուռ չի ընկնում (1), ձայն չի հանում (2), չի գոռում (3) ու լալիս ուրիշների մոտ (4) [I], այլ միայն ղգում է (5), միայն տառապում» (6) [II] (ԱՇՔ, 97):

Տարբեր հարաբերություններով կապված բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասության ստորին օղակներում արտահայտվում են շարահյուսական տարբեր հարաբերություններ, որոնք կարող են ունենալ հավասար կամ անհավասար ընդգրկում՝ պայմանավորված հակադրության եզրերը բաղադրող նախադասությունների քանակով: Առավել հաճախ համատեղում են հակասման ու միավորական, միավորական ու պայմանաններհակական հարաբերությունները: Օրինակ՝ «Տեսնելով այս՝ Օլիմպիա թագուհին դողաց, չգիտես վախի՞ց, թե զարմանքից (1), բայց մնաց կանգնած, չկարողանալով ոչ առաջ գնալ, ոչ հետ (2) [I]. այլ ասես չընկնելու համար բռնեց հատակին հասնող կերպասվարագույրը (3) ու մի վայրկյան մնաց այդպես՝ աչքերը լայնաբաց ու դողդոջ (4), ապա մեկեն պոկվեց տեղից (5), շրջվեց (6) ու հեռացավ պինդ, փութկոտ քայլերով (7) [II] (ՍՁՀԲ, 229): «Ասում էին (1), խոսում (2), կատակներ էին անում նրա վրա (3) [I], բայց տեսնում էին նրան թե չէ (4), թեկուզ հեռվից լռում (5), պապանձվում էին» (6) [II] (ՀՔ, 1, 433):

Միավորյալ նախադասության հակադրության եզրերում գործածվող հարաբերությունների անմիատարրությունն երբեմն էլ պայմանավորված է լինում նրանցից մեկում ստորադասական հարաբերության դրսևորմամբ. ինչպես՝ «Մայրը նախատում էր որդուն (1) ու լալիս (2) [I], բայց մյուս կողմից տեսնում էր (3), որ ուրիշ ճար չկար (4), և վառում էր բուխարին (5) [II] (ՎՏ, 2, 230)։

Սակավադեպ միավորյալ նախադասության եզրերից մեկում (կամ երկուսում) տեղ են գտնում մեկից ավելի հարաբերություններ. ինչպես՝ «Երկար, երկար նայեց Սուվենիրին նա նուրբ ու ջրերին (1), Ուզեց ճմլել այդ թերթը (2), ինչ-որ մի տեղ պահել (3), Կամ պատառոտել նվերը (4) [I],— Սակայն թողեց (5), թաղեց թերթերում այլ (6), Կամքի վերջին ճիգով քրեց խոհերից (7) ևվ սկսեց թերթել զգաստությամբ մոայլ մյուս թերթերը հին» (8) [II] (ՆՁՐ, 170—171)։ Այս պարբերությի-միավորյալ նախադասության առաջին եզրի բաղադրիչներում «ներթափանցված» ձևով զուգակցում են միավորական ու սրոհական հարաբերությունները։

Այսպիսով, թեև քննված միավորյալ նախադասությունների բաղադրյալ կազմությամբ հակադրության եզրերը բարդ համադասական կամ բարդ ստորադասական նախադասություններ են, այնուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրը կազմում է մեկ ամբողջություն և հակադրվում է մյուս եզրին։ Հետևաբար ներհակական միավորյալ նախադասությունն ունի երկանդամ կամ երկկազմիչ կառուցվածք և բացառում է այլ բաղադրիչի կամ բաղադրիչների հավելման հնարավորությունը։ Նոր բաղադրիչի (բաղադրիչների) ավելացումն այս դեպքում հնարավոր է միայն բարդության ստորին օղակում կամ օղակներում։

Ներհակական հարաբերությունը գործածվում է միավորյալ նախադասության բաղադրիչների բոլոր անդամների միջև, բացի ենթակայից։ Ենթակայի հակադրությունն այս կառուցվածքում հիմնականում բացառվում է, որովհետև այն, ընդհանուր անդամ լինելով, հաջորդ բաղադրիչում հակադրության եզր չունի։ Այսպիսով, ենթակաների միջև գործածվող ներհակությունը միավորյալ նախադասությանը բնորոշ չէ։

Միավորյալ նախադասության բաղադրիչների մյուս անդամները հակադրվում են՝ դրսևորելով կառուցվածքային ու իմաստային տարբեր առանձնահատկություններ։ Ներհակական հարաբերությունն ամենից առաջ արտահայտվում է երկկազմ կառուցվածքում ստորոգյալների, իսկ միակազմ կառուցվածքում՝ բայական (սակավադեպ էլ անվանական) գերադաս անդամների միջև։ Այսպիսի հակադրությունը անվանում ենք ստորոգական։ Սա միավորյալ նախադասության կազմում հանդես եկող ամենահիմնական հակադրությունն է։ Միավորյալ նախադասությունը սահմանափակվում է ստորոգական հակադրությամբ, երբ նրա բաղադ-

րիչները համառոտ են, իսկ ավելի հաճախ ստորոգյալները կամ գերադաս անդամները հակադրվում են իրենց լրացումներով. ինչպես՝ «Վարդանն ու Սուրենը չեկան, այլ մեկնեցին»։ «Կայծակը լուսավորեց անտառը, այլ վայրկենական մի շող նետեց նրա վրա»։ Երբեմն էլ հակադրությունը հիմնականում կենտրոնանում է բայական լրացումների միջև, իսկ լրացյալների հակադրությունը մասամբ թուլանում է. ինչպես՝ «Գնել եք վեց ու ծառուղով, վաճառել յոթ ու ծառուղով» (ԱՇՔ, 227)։ Հաճախ էլ, երբ միավորյալ նախադասության բաղադրիչներն ունենում են ընդհանուր բայ-ստորոգյալ կամ բայական գերադաս անդամ, ստորոգական հակադրությունը վերանում է, չեզոքանում, և պահպանվում է միայն լրացական հակադրությունը։ Նման նախադասությանը բնորոշ է երկրորդ բաղադրիչում ստորոգյալի կամ բայական գերադաս անդամի պեղչումը. ինչպես՝ «Նա երեկ գրել է բանաստեղծություն, իսկ այսօր՝ նամակ»։

Միավորյալ նախադասության մեջ ստորոգական հակադրությունն արտահայտվում է տարբեր ձևով՝ պայմանավորված ստորոգյալների արտահայտությամբ։ Ակնհայտ է, որ պարզ և անվանական ստորոգյալները հակադրվում են միատեսակ։ Այսպես՝ համմտ. «Անուշը չզայրացավ ընկերուհու վրա, այլ ներվեց»։ «Դա նրազ չէր, այլ դաժան իրականություն» (ԱՇՔ, 364)։ Ստորոգական հակադրությունն այլ յուրահատկությամբ է դրսևորվում ընդհանուր եղանակիչ ունեցող բայական բաղադրյալ ստորոգյալների միջև։ Այս դեպքում առաջին ստորոգյալի եղանակիչը, ընդհանուր լինելով ամբողջ նախադասության համար, երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչում պեղչվում է՝ չստեղծելով հակադրության եղր, մինչդեռ անորոշ դերբայը երկրորդ բաղադրիչում փոխվում է՝ հակադրվելով առաջին ստորոգյալի անորոշ դերբային։ Հետևաբար ստորոգական հակադրությունը այս դեպքում գործածվում է ստորոգյալների միայն դերբայական բաղադրիչների միջև, ուստի այն պետք է դիտել որպես մասնակի ստորոգական հակադրություն։ Օրինակ՝ «Վերջը որոշեց աղետավոր իրողության կեսը միայն ճայտնել որդուն, իսկ մնացած կեսը պահել ավելի բարեհաջող ժամանակի համար» (ՐՍ, 44)։ «Նա աշխատում էր ետ չմնալ ընկերներից, այլ լինել առաջավորների շարքում»։ Ստորոգական հակադրությունն այսպես է արտահայտվում հանդիպադրական, ժխտման ու հակասման միավորյալ նախադասություններում։

Միավորյալ նախադասության մեջ ներհակական հարաբերությունն արտահայտվում է տարբեր յուրահատկություններով՝ պայմանավորված ներհակության հիմք կազմող գործոններով, որոնք նաև կանխորոշում են հակադրության չափը։ Ներհակական հարաբերությունն ամենից առաջ կապվում է հականշության հետ։ Այսպես՝ այն ավելի հաճախ պայմանավորված է լինում միավորյալ նախադասության ստորոգյալների կամ

բայական գերադաս անդամների և նրանց լրացումների բառական հականշությամբ, որպիսի հակադրությունն անհամեմատ ուժեղ է լինում. ինչպես՝ «Ապրում էին աղհատ, Մեռնում հարուստ...» (ՀՍՍՌ, 213)։ «Ուշ գնար, շուտ կորցիր» (առած)։ Այս օրինակներում առկա է տարբրմատ հականիշ զույգերի երկու շարք՝ ա) ապրում էին–մեռնում (էին), գնար-կորցիր, բ) աղհատ–հարուստ, շուտ–ուշ: Երբեմն առկա է լինում քերականական հակադրությունը՝ իբրև ներհակ ձևեր հանդես գալով միևնույն ստորոգյալի կամ գերադաս անդամի հաստատական ու ժխտական ձևերը (իրենց լրացումներով հանդերձ). ինչպես՝ «Այդ խոսքերը չվիրավորեցին Ռոմիզդուխթին, այլ վիրավորեցին Սամվելի մորը» (ՐՍ, 93)։

Անվանական միավորյալ նախադասության մեջ ավելի հաճախ հակադրվում են խոսքային հականշություն կազմող ստորոգելիները, իսկ հանգույցը կրկնվում է. ինչպես՝ «Քո խոնարհ ջրկիրն եմ եղել, եղել եմ և տերդ» (ՀՍՍՌ, 74)։

Միավորյալ նախադասության ստորոգյալները հականիշ, իսկ նրանց լրացումները հակադիր, բայց ոչ հականիշ բառերով արտահայտվելու դեպքում ներհակությունը թուլանում է. ինչպես՝ «Զարյանը ոչ թե հայ կյանքի պատկերներից բարձրացավ դեպի գրականություն, այլ եվրոպական բանաստեղծությունից իջավ հայ կյանք» (ՎԴԴ, 42)։

Միավորյալ նախադասության մեջ սակավադեպ ղուգակցում են խոսքային հականշությունն ու քերականական հակադրությունը. ինչպես՝ «Ինձ չես սիրում, ուրիշին, Ուրիշին ես սիրում դու...» (ՎՏ, 1, 109)։ Այստեղ ինձ և ուրիշին ուղիղ խնդիրների միջև առկա է խոսքային հականշությունը, իսկ ստորոգյալների միջև՝ քերականական հակադրությունը։

Երբեմն էլ ներհակությունը պայմանավորված է լինում բայական գերադաս անդամների ու նրանց լրացումների խոսքային հականշությամբ. ինչպես՝ «Ինձ համար կանես, ինձ համար կսովորես» (Ա, 94)։

Եվ, վերջապես, հակադրությունն ավելի նվազ է լինում, երբ թե՛ ստորոգյալների կամ բայական գերադաս անդամների և թե՛ դրանց լրացումների միջև գործածվում են քերականական տարբերություններ։ Այս դեպքում միավորյալ նախադասությունն ավելի հաճախ արտահայտում է հաստատում ու ժխտում. ինչպես՝ «Մտածում էր, բայց մտքինը ոչ ոքի չէր ասում» (ԱԲ, 1, 124)։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միավորյալ նախադասության մեջ հակադրությունը միատարր չէ։ Այն արտահայտվում է բաղադրիչ նախադասությունների միևնույն կամ տարբեր անդամների միջև։ Բացի այդ, հակադրության ծավալը երկու եզրերում կարող է լինել նույնը կամ տարբեր։ Ըստ այդմ էլ ներհակությունն իր դրսևորումներով լինում է երկու տեսակ՝ համասեռ և անհամասեռ։ Համասեռ ենք կոչում

այն հակադրությունը, որն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների միևնույն անդամների միջև: *Այսպիսի հակադրությունը, որ հիմնականում բնորոշ է երկբաղադրիչ միավորյալ նախադասությանը, ունի ավելի շատ ստորոգական բնույթ, որովհետև ամենից առաջ հակադրվում են ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները՝ առանձին կամ իրենց լրացումներով. ինչպես՝ «Նա չվախեցավ գետից, բայց վախեցավ փոթորկից» (ՐՍ, 19):*

Միավորյալ նախադասության մեջ համասեռ հակադրությունը մասնակի է, որովհետև ենթական դուրս է հակադրության ոլորտից: Նրիվ հակադրություն դրսևորելու հնարավորության բացառումը այս կառույցի հիմնական յուրահատկություններից մեկն է: Հակադրության բնույթը չեն փոխում միավորյալ նախադասության առաջին բաղադրիչում ընդհանուր անդամի գործառույթով հանդես եկող նաև մյուս անդամները. ինչպես՝ «Մարդիկ այլևս հոգ չէին տանում հանգցնելու, այլ շտապում էին փախչելու» (ՐՍ, 283): Այստեղ հակադրության ծիրից դուրս մարդիկ ենթական և այլևս ժամանակի պարագան ընդհանուր են նախադասության երկու բաղադրիչների համար, ուստի ամբողջ նախադասության մեջ առկա ժխտման հակադրությունը համասեռ է: Բերված նախադասությունն ունի (ենթակա + ժամանակի պարագա) + ստորոգյալ + ևպատակի պարագա — ստորոգյալ + ևպատակի պարագա *կառուցվածքը: Այստեղ այլևս ժամանակի պարագայի գործածությունն ունի ոճական նշանակություն. այն շեշտում է ժխտվող և հաստատվող եղելությունների համաժամանակյա (ու համատեղ) գոյությունը՝ ավելի ուժեղացնելով բաղադրիչ նախադասությունների կապը (հմմտ. 84, էջ 57):*

Միավորյալ նախադասության մեջ համասեռ հակադրությունից տարբերվում է **ետերականական անհամասեռ հակադրությունը**: *Սա այն հակադրությունն է, որն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների կամ էլ տարբեր կառուցվածք ունեցող բաղադրիչ նախադասությունների միջև: Անհամասեռ հակադրությունն արտահայտվում է.*

ա) երբ միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկը համառոտ է, մյուսը՝ ընդարձակ, կամ երբ մեկը պարզ է, մյուսը՝ բարդ: Սա առկա է մասնավորապես այն դեպքում, երբ «տրամաբանական երկու հակադիր երևույթներն արտահայտվում են բառաքերականական անհավասար միջոցներով» (17, էջ 585): Օրինակ՝ «Արամն ու Վարդանը բակում պատմողին այլևս չէին լսում, այլ հեռացել էին»: «Նա կամաց-կամաց վարժվեց մեզ, բայց շատ ավելի կապվեց ինձ հետ, ավելի վստահ եղավ դեպի ինձ» (Ա.Ի, 3, 294):

բ) Երբ գործառվում է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների միջև. ինչպես՝ «Ես մինչև հիմա ուրիշ տեղ չի ասել, բայց մտքից էլ չի հանել» (ԱՔ, 1, 118)։ «Ներս բախտից հաշվապահ Զարգարյանն էլ այնտեղ չէր, գնացել էր բանկից փող բերելու» (ԱՇՔ, 96)։

Ներհակական միավորյալ նախադասությունները միատարր չեն։ Ներհակական հարաբերությունը այս կառուցվածքում ևս ունենում է հետևյալ մասնավոր դրսևորումները՝ ա) ժխտման հարաբերություն, բ) հանդիպադրական հարաբերություն, գ) հակասման հարաբերություն, դ) պայմանաներհակական հարաբերություն։

ԺԽՏՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությամբ արտահայտվում է միևնույն առարկային կամ առարկաներին վերագրվող հատկանիշներից մեկի (կամ մի քանիսի) ժխտումը և մյուսի (կամ մյուսների) հաստատումը։ Օրինակ՝ «Այնուամենայնիվ Թորգոմն այդ օրը իշխանի մոտից տուն չգնաց, այլ շտապեց Հովսեփի և Վարդանի մոտ» (ՍՋՀՐ, 318)։

Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությունները կապակցվում են այլ, այլ ոչ թե, և ոչ թե, ոչ թե, ոչ թե...այլ, ոչ միայն...այլ շաղկապներով և շարահարությամբ։ Միավորյալ նախադասության իմաստային ու կառուցվածքային տարբեր առանձնահատկություններ պայմանավորող այդ շաղկապներից գործառական առավել մեծ ակտիվություն ունի այլ-ը։

Շարահարական կառուցվածքի ժխտման միավորյալ նախադասություններն իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով հիմնականում համապատասխանում են նույն նախադասությունների այլ շաղկապով տարբերակին։ Օրինակ՝ «Ներս բախտից հաշվապահ Զարգարյանն էլ այնտեղ չէր, գնացել էր փող բերելու» (ԱՇՔ, 96)։ «Երեսին մի մարդ անի, բախտին մարդ արա» (Ա, 297)։

Միավորյալ նախադասության մեջ ժխտումը, ինչպես ներհակության մյուս ձևերը լինում է համասեռ ու անհամասեռ։ Համասեռ ենք կոչում այն ժխտումը, որն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների միևնույն անդամների միջև։ Այսպիսի ժխտումը հիմնականում մասնակի է և բնորոշ է երկբաղադրիչ միավորյալ նախադասությանը, ուր հակադրվում են բաղադրիչ նախադասություններն իրենց բո-

---

3 Այս հարցի մանրամասն քննությունը տե՛ս 57, էջ 24—36։

լոր նույն անդամներով, ամբողջությամբ (բացառությամբ ընդհանուր անդամների)։ Այս կառուցում համասեռ ժխտումն արտահայտվում է հետևյալ կաղապարներով, որոնցով, իհարկե, չի սահմանափակվում[4].

ա) ՈՒԽ+Ստ կամ ԲԳԱ ←→ ՈՒԽ+Ստ կամ ԲԳԱ. ինչպես՝ «Առևտրականին չհարգես, ուսուցչին հարգիր»։

բ) (ԵՆԲ.)+Ստ←→Ստ. ինչպես՝ «Դա ծառ չէ, այլ թուփ է»։

գ) ԶՊ+(ՈՒԽ)+ԲԳԱ←→ ԶՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Ոչ թե պետք է մարդկանց շողոքորթությամբ խաբել, այլ պետք է ազնվորեն համոզել»։

դ) Ստ կամ ԲԳԱ+Ո+ՈՒԽ ←→ Ստ կամ ԲԳԱ+Ո+ՈՒԽ. օրինակ՝ «Մի ունեցիր հարյուր դահեկան, ունեցիր երկու բարեկամ» (Ա, 225)։

ե) (ՈՒԽ)+ՏՊ+ԲԳԱ ←→ ՏՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Ձուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն» (առած) և այլն։

Միավորյալ նախադասության մեջ ժխտումը կարող է գործածվել բաղադրիչ նախադասությունների նաև ոչ բոլոր անդամների միջև։ Օրինակ՝ «Ես երեկ քեզ դպրոցում չհանդիպեցի, այլ այսօր եմ ուզում շտապ հանդիպել»։ Այստեղ ժխտման ոլորտից դուրս են տեղի (դպրոցում) և ձևի (շտապ) պարագաները։ Բերենք մեկ այլ օրինակ. «Անշուշտ, սա ոչ թե սահմանափակության արգասիք է, այլ միտում» (ՎԴՊ, 189)։ Այս նախադասությունն ունի (ԵՆԲ.)+Հ+Ստ←→Ստ կառուցվածքը։

Ժխտման հարաբերությունն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների նաև տարբեր անդամների և կամ էլ տարբեր կառուցվածքի բաղադրիչ նախադասությունների միջև։ Այսպիսի ժխտումն անվանում ենք աճեմամասեռ ժխտում։ Վերջինս արտահայտվում է ամենից առաջ այն դեպքում, երբ միավորյալ նախադասության բաղադրիչներն ունենում են կառուցվածքային տարբեր յուրահատկություններ։ Օրինակ՝ «Արամն ու Սուրենը պատմողին այլևս չէին լսում, այլ հեռացել էին»։ «Նա աշխատում էր չկորցնել գիշերային խավարը, այլ մթնով դուրս գալ յուր իշխանության սահմանից, որը արևելյան կողմից շատ հեռու չէր» (ՐՍ, 325)։

Անհամասեռ է նաև միավորյալ նախադասության բաղադրիչների

---

4 Այստեղ և այսուհետև կաղապարի ամեն մի անդամ ներկայացվում է տվյալ օրինակում իր շարադասության համապատասխան։ Տեղի խնայողության պահանջով կաղապարի անդամները ներկայացվում են համառոտագրություններով. ԵՆԲ–ենթակա, Ստ–ստորոգյալ, ԲԳԱ–բայական գերադաս անդամ, ԱԳԱ–անվանական գերադաս անդամ, Ո–որոշիչ, Հ–հատկացուցիչ, Բ–բացահայտիչ, ՈՒԽ–ուղիղ խնդիր, ՄԽ–միջոցի խնդիր, ԱՆ–անցատման խնդիր, ՀԽ–հանգման խնդիր, ՍԽ–սահմանափակման խնդիր, ՀամԽ–համեմատության խնդիր, ՎԽ–վերաբերության խնդիր, ՆԽ–ներգործման խնդիր, ՄատԽ–մատուցման խնդիր, ԶՊ–ձևի պարագա, ՏՊ–տեղի պարագա, ԺՊ–ժամանակի պարագա, ՉՊ–չափի պարագա, ՆՊ–նպատակի պարագա, ՄՊ–միասնության պարագա, ՊՊ–պատճառի պարագա և այլն։ Ընդհանուր անդամներն առնվում են փակագծերի մեջ։

տարբեր անդամների միջև գործառվող ժխտումը։ Նման ժխտում են արտահայտում հետևյալ կառուցվածքները.

ա) (Ո+ենթ.)+Ո+Հխ+Ստ⟷ՈՒխ+Ստ. ինչպես՝ «Ուրեմն, զայրացած երիտասարդ մարդիկ ոչ թե հասարակական անարդարությունների վրա էին զայրացած, այլ բաժին էին ուզում» (ՎՊՀԲԱ, 54)։

բ) Ստ+(ենթ.)⟷Ստ+ՉՊ+ՉՊ. ինչպես՝ «Չմեռան նրանք, այլ սպանվեցին՝ լեգեոն առ լեգեոն, փաղանգ առ փաղանգ» (ՊՍ, 4, 469)։

գ) (ենթ.)+Ստ+Հխ⟷ՉՊ+ՉՊ+ՉՊ+Ստ+Ո+ՏՊ. ինչպես՝ «Մեծ Տիկինը չնայեց նրան, այլ գլուխը կախած, մտասույզ ու լուրջ շարժվեց դեպի կանանց գունդը» (ԴԴ, 2, 505)։

դ) (Ո+Ո+ենթ.)+ԺՊ+Ստ⟷Հ+Ո+Ստ. ինչպես՝ «Սովից հյուծված, մարդկային կերպարանքները կորցրած այդ ամբոխն այլևս զորք չէր, այլ ուրվականների մի անկանոն խուժան» (ՍԽՄՍ, 3, 393)։

ե) (ՊՊ+ենթ.)+ՉՊ+Ստ+ՈՒխ⟷Ստ+ՉՊ. ինչպես՝ «Այս մտքերով տարված՝ կամասարյանը գրեթե չէր մասնակցում հացկերույթին, այլ միայն կրկնում էր մեքենայաբար» (ՍՉՀԲ, 21)։

զ) (Ո+ենթ.)+Ստ⟷Ստ+Ո+Հ+Ո. ինչպես՝ «Դիսերտացիոն աշխատանքները չպետք է լինեն ինքնանպատակ, այ պետք է լինեն գիտական հետազոտությունների տրամաբանական ամփոփում» (ԺԺ, 431)։

է) (ենթ.)+Ստ⟷ՉՊ+Ստ+Ո+Հխ. ինչպես՝ «Նա ոչ միայն չմոտեցավ, այլ բնավ ուշադրություն չդարձրեց չարաբաստիկ օղերին» (ՆԴ, 311)։

ը) (Հ+ենթ.)+Ստ+Հխ⟷Ստ+Ո+Հխ. օրինակ՝ «Ջո խոսքերը չազդեցին նրա վրա, այլ ազդեցին ինձ մոտ կանգնած մարդկանց վրա»։

թ) (Ո+ենթ.)+Ստ—Ո+Հխ⟷Ստ—Վխ. ինչպես՝ «Նրանց արտահայտած գործողությունը կապվում է ոչ թե որևէ դեմքի հետ, այլ վերաբերում է ընդհանուրին» (ԺՀԼ, 161) և այլն։

Ինչպես տեսնում ենք, ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասության ամենաբնորոշ առանձնահատկությունը ժխտման ներհակության դրսևորումն է։ Դա էլ պայմանավորում է այս նախադասության կառուցվածքային հիմնական յուրահատկությունը՝ բաղադրիչներից մեկի ժխտական և մյուսի հաստատական, իսկ սակավադեպ էլ երկու բաղադրիչների ժխտական լինելը։ Ըստ այդմ էլ ժխտման միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) մեկ հաստատական ու մեկ ժխտական բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասություններ և բ) երկու ժխտական բաղադրիչ նախադասություններով միավորյալ նախադասություններ։ Առաջին խմբի միավորյալ նախադասությունները նույնպես միատարր չեն՝ պայմանավորված հաստատական ու ժխտական բաղադրիչների շարադասությամբ։ Ժխտական բաղադրիչի

նախադաս կամ ետադաս լինելը կարևոր է թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային առումով: Ժխտական բաղադրիչը միաժամանակ պայմանավորում է բաղադրիչ նախադասությունների համապատասխան կապակցումը (շաղկապական, շարահարական), իսկ վերջինս էլ՝ ժխտական բաղադրիչի տրամաբանական շեշտակիր անդամի շարադասությունը (տրամաբանական շեշտը մեծ մասամբ ընկնում է ստորոգյալի վրա): Ավելի հաճախ ժխտական է լինում միավորյալ նախադասության առաջին բաղադրիչ նախադասությունը: Այսպիսի ժխտումն արտահայտվում է.

1. Ստորոգյալի ժխտական ընույթով: Այս դեպքում միավորյալ նախադասությունը կապակցվում է.

ա) այլ շաղկապով ու շարահարությամբ: Ժխտվում է առաջին բաղադրիչ նախադասության բովանդակությունը, և հաստատվում է երկրորդ բաղադրիչի բովանդակությունը. ինչպես՝ «Ներանք չգնացին դրոսանքի, այլ վերադարձան տուն»:

Ակնհայտ է, որ միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության մեջ հաճախ այլ «շաղկապը ղորացվում է ընդհակառակ(ը) միջանկյալ բառով, որով ավելի է շեշտվում հակադրությունը» (38, էջ 140). ինչպես՝ «Նա մեզ չի միացել, այլ, ընդհակառակ, բոլորովին ուրիշ դիրքորոշում է ընտրել»: XIX դ. մեր արձակում հանդիպող նման կառույցում նկատելի է ընդհակառակ եղանակավորող բառի՝ միջանկյալ բառի գործառույթով հանդես գալու դեռևս կայունացած չլինելը: Այդ պատճառով էլ շատ հեղինակների մոտ այն կետադրված չէ. ինչպես՝ «Որդեսեր և հավատացյալ մայրը, որքան էլ առողջ ոտքեր ունենա, այնուամենայնիվ յուր հետևից քարշ չի տալ մանուկին, այլ ընդհակառակ կհարմարեցնի յուր քայլերը տղայի դողդոջուն քայլիկներին» (Մուր. 2, 42): Պետք է ենթադրել, որ մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը ընդհակառակ-ի, իբրև միջանկյալ բառի, գործածության կայունացած չլինելն է հիմք ընդունել, երբ այլ ընդհակառակն-ը դիտել է իբրև մեկ շաղկապ (3, էջ 666): Այժմ արդեն օրինաչափականը տվյալ դեպքում ընդհակառակն-ի, իբրև միջանկյալ բառի, երկկողմյա տրոհումն է:

բ) ոչ միայն...այլ տարանդամ զուգաշաղկապով, որի առաջին բաղադրիչը, որպես կանոն, գործածվում է միավորյալ նախադասության առաջին բաղադրիչ նախադասության ժխտում արտահայտող անդամից (հիմնականում ստորոգյալից) առաջ: Այս դեպքում միավորյալ նախադասության «առաջին մասում ժխտվում է մի բան, որի գոյությունը կամ որի կատարումը, սակայն, ինչ-որ չափով սպասելի էր, իսկ նախադասության երկրորդ մասում հաստատվում է առաջին մասում սպասված միանգամայն հակառակ դրությունը, հակառակ վիճակը» (10, էջ 436). ինչպես՝ «Նա այդ դեպքից ոչ միայն չհուզվեց, այլ ուրախացավ: Նմա-

նապես ոչ միայն...այլ շաղկապի երկրորդ բաղադրիչին երբեմն հաջորդում է ընդհակառակն բառը, որը ժխտման ներհակությունն ավելի է շեշտում։ Ակնհայտ է, որ այս դեպքում միջնադարյան բառի գործառույթով ընդհակառակն-ի հանդես գալն ավելի է կայունացել։ Նույնիսկ Մուրացանի մոտ, ուր այլ-ով կապակցված միավորյալ նախադասության մեջ ընդհակառակն բառը տրոհված չէ, հանդիպում ենք դրա տրոհմանը. ինչպես՝ «Կաթողիկոսի վարմունքը ոչ միայն չհուսահատեցրեց, այլ, ընդհակառակն, ավելի ևս ոգևորեց նրան յուր մտադրության առաջ տանելու» (Մուր., 2, 241)։

2. Ոչ թե...այլ տարանդամ զուգաշաղկապի առաջին բաղադրիչով՝ ոչ թե-ով, որը համարժեք է ժխտական ստորոգյալի չ մասնիկին և օժանդակ բայի ժխտական ձևերին։ Տվյալ դեպքում կարևոր է ոչ թե-ի շարադասությունը միավորյալ նախադասության առաջին բաղադրիչում։ Այն, որպես կանոն, դրվում է հիմնականում ժխտվող անդամից կամ անդամներից առաջ։ Այդ շաղկապի այլ բաղադրիչն էլ միշտ գործածվում է երկրորդ բաղադրիչ նախադասության սկզբում։ Օրինակ՝ «Մաղարթախիտ ծառերը, երփներանգ ծաղիկները ոչ թե օրորվում էին ամառվա թեթև հովից, այլ երաշտից ցած էին հառել իրենց գլուխները»։

Տրամաբանական շեշտով պայմանավորված՝ ժխտման ներհակությունն ընդգծվում է, երբ ժխտվող անդամը ոչ թե շաղկապական բաղադրիչի հետ գործածվում է առաջին բաղադրիչ նախադասության մեջտեղը կամ վերջում. ինչպես՝ «Արամն ու Վարդանը այդ օրը ոչ թե դիտավորյալ նեղացրին իրենց ընկերոջը, այլ անգիտակցորեն սխալ գործեցին»։ Նման ժխտումն ունի ճշգրտող բնույթ։

Միավորյալ նախադասության մեջ ոչ թե...այլ շաղկապի ոչ թե բաղադրիչի փոխարեն սակավադեպ գործածվում է ոչ ձևը (հմմտ. 38, էջ 141), որն ավելի շատ տարածված էր գրաբարում և նվազ չափով՝ միջին հայերենում։ Դա հանդիպում է մասնավորապես այն դեպքում, երբ միավորյալ նախադասության առաջին եզրը հակասման հարաբերությամբ երկբաղադրիչ համադասական կապակցություն է. ընդ որում, ոչ-ը հանդես է գալիս այդ եզրի կամ անմիջական կազմիչի երկրորդ բաղադրիչում, իսկ հակասման շաղկապը տվյալ դեպքում կարծես փոխարինում է զեղչված թե-ին. ինչպես՝ «Հայկն ու Գուրգենը հանդիմանում էին իրենց ընկերոջը, բայց ոչ հակակրանք դրսևորում նրա նկատմամբ, այլ պարզապես ցանկանում էին նրան ուղղել»։

Միավորյալ նախադասության առաջին բաղադրյալ անդամի յուրաքանչյուր բաղադրիչի սկզբում ոչ-ը կարող է կրկնվել՝ ստեղծելով ո՛չ... ո՛չ...այլ (նաև՝ ո՛չ...և ո՛չ...այլ) շաղկապը։ Այս դեպքում ժխտման ներ-

հակուբյունը մասամբ թուլանում է. ինչպես՝ «Ո՛չ խոսում է, ո՛չ գրում, այլ պարզապես մտորում է»։

Ժխտման հակադրությունն ավելի է ընդգծվում, երբ միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչում, այլ-ից հետո, գործածվում է ընդհակառակն բառը, որն այս դեպքում ավելի շատ է դրսևորում ոչ թե... այլ շաղկապին (ավելի ճիշտ՝ նրա այլ բաղադրիչին) ձուլվելու միտում։ Այդ է պատճառը, որ Վ. Առաքելյանը ոչ թե...այլ ընդհակառակն-ը դիտում է իբրև առանձին շաղկապ և այն տարբերակում ոչ թե...այլ-ից (28, էջ 342)։ Օրինակ՝ «Ոչ թե չեմ ցանկացել աշխատանքս ավարտել, այլ ընդհակառակն շատ եմ ձգտել»։ Ավելացնենք, որ ոչ թե...այլ շաղկապով կապակցված միավորյալ նախադասության մեջ սակավադեպ էլ ժխտվում է ստորոգյալի որևէ հատկանիշը։ Դա առկա է մասնավորապես այն դեպքում, երբ առաջին բաղադրիչ նախադասության մեջ ոչ թե շաղկապական բաղադրիչին հաջորդում է սահմանափակման եղանակավորող բառ (սոսկ, միայն և այլն), որպիսի դեպքում նախադասությունը բաղադրված է լինում մեծ մասամբ անվանական ստորոգյալներով. ինչպես՝ «Դա ոչ թե սոսկ քաղաք էր, այլ մի յուրօրինակ թանգարան...» (ԹՆԺ, 297)։

Ինչպես նշեցինք, հավասարապես ժխտական կարող է լինել միավորյալ նախադասության նաև երկրորդ բաղադրիչը։ Մ. Աբեղյանը նման կառուցվածքի բարդ համադասական նախադասությունները դիտում է իբրև շուտ տված ձևով արտահայտված ժխտական կապակցություններ (3, էջ 666), որոնցում հաստատվում կամ ընդունելի է դիտվում առաջին բաղադրիչի բովանդակությունը։ Այսպիսի միավորյալ նախադասության կազմում կապակցման բառական միջոցի դերով հանդես են գալիս ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե բաղադրյալ շաղկապները, որոնք, որպես կանոն, գործածվում են երկրորդ բաղադրիչի սկզբում։ Ընդ որում, այս շաղկապներից յուրաքանչյուրով կապակցվելիս միավորյալ նախադասությունը ստանում է ժխտման ներհակության արտահայտման ոճական տարբեր յուրահատկություններ։ Այսպես՝ այլ ոչ թե-ով կապակցվելու դեպքում միավորյալ նախադասության ժխտման ներհակության իմաստը շատ ավելի է ընդգծվում։ Նմանապես ոչ թե-ով կապակցված միավորյալ նախադասության մեջ ժխտման իմաստն ավելի զորեղ է, քան և ոչ թե-ով կազմվածի մեջ, որովհետև վերջին շաղկապի և բաղադրիչը մասամբ մեղմացնում է ներհակության իմաստը։ Համմտ. «Նա ամբողջ օրը թափառում է, այլ ոչ թե աշխատում»։ «Նա ամբողջ օրը թափառում է, ոչ թե աշխատում»։ «Նա ամբողջ օրը թափառում է և ոչ թե աշխատում»։

Ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե շաղկապներով կապակցված միավորյալ նախադասությունները համանիշ են նույն նախադասությունների՝ ոչ

թե...այլ, այլ շաղկապներով կազմված ձևերին։ Սա շարահյուսական համանիշության հետաքրքրական դրսևորումներից մեկն է։ Համմտ. «Ազատ ժամերիդ օգնիր ծնողներիդ, այլ ոչ թե (ոչ թե, և ոչ թե) ժամանակդ ավելորդ վատնիր։ «Ժամանակդ ավելորդ չվատնես, այլ ազատ ժամերիդ օգնիր ծնողներիդ»։ «Ոչ թե ժամանակդ ավելորդ վատնիր, այլ ազատ ժամերիդ օգնիր ծնողներիդ» և այլն։ Այս համանիշ ձևերի տարբերությունը ոճական է, վերաբերմունքային։

Ժխտական կարող են լինել միավորյալ նախադասության նաև երկու բաղադրիչները միաժամանակ։ Այսպիսի կառուցվածքները բաժանվում են երկու հնթախմբի.

ա) միավորյալ նախադասություններ, որոնց երկու բաղադրիչներն արտահայտում են ժխտում։ Նման ժխտումն անվանում ենք կրկնակի ժխտում։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը կապակցվում է ոչ միայն...այլ շաղկապով, որն այս կառուցվածքում մասամբ համարժեք է ոչ միայն...այլև շաղկապին. ինչպես՝ «Նա ոչ միայն չեկավ մեզ մոտ, այլ նույնիսկ չմտաբերեց մեզ»։ Այսպիսի միավորյալ նախադասությունները համանիշ են ո՛չ...ո՛չ (ո՛չ...և ո՛չ, ո՛չ...և ո՛չ էլ) միավորիչ շաղկապով կապակցված միավորյալ նախադասություններին, այն տարբերությամբ, որ առաջինները ժխտման, իսկ վերջինները միավորական հարաբերությամբ միավորյալ կառուցվածքներ են։ Համմտ. «Նա ո՛չ եկավ մեզ մոտ, ո՛չ նույնիսկ մտաբերեց մեզ»։

բ) ձևական ժխտումն ու բուն ժխտումը համատեղող միավորյալ նախադասություններ, որոնց բաղադրիչներից մեկի ժխտումն ունի ձևական նշանակություն, ժխտական ձևով հաստատում է հատկանշի առկայությունը, իսկ մյուսն ունի ժխտական նշանակություն։ Ընդհամին, ձևական ժխտումն առաջին բաղադրիչով արտահայտվելու դեպքում նախադասությունը կապակցվում է ոչ թե...այլ շաղկապով, իսկ երկրորդ բաղադրիչով արտահայտվելու դեպքում՝ ոչ թե, այլ ոչ թե, և ոչ թե շաղկապներով։ Համմտ. 1. «Արամը ոչ թե չի եկել, այլ գիրքը չի բերել»։ 2. «Արամը գիրքը չի բերել, այլ ոչ թե չի եկել»։ Այս նախադասությունները համանիշ են «Արամը եկել է, բայց գիրքը չի բերել» կառուցին։ Դրանք իմաստով նույնն են, իսկ քերականական կառուցվածքով՝ տարբեր. այն է՝ միևնույն ներհակական կապակցության տարբեր դրսևորումներն են. առաջինները ժխտման, իսկ վերջինը հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասություններ են։

Հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասության մեջ իրար հանդիպադրվում են միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հատկանիշները. *ինչպես՝ «Հարցուփորձ անում էի արտաքին անտարբերությամբ, իսկ պատասխանները լսում ներքին լափող հետաքրքրությամբ» (ՆԴ, 212)։ «Ծկողին պատմում էր բոլորը, ինչ որ գիտեր, իսկ չմացածը, հարկավ, հնարում էր» (ԱՇՔ, 218)։*

Հանդիպադրական միավորյալ նախադասության բաղադրիչները կապակցվում են իսկ, եթե...ապա, ապա, միայն հանդիպադրական շաղկապներով և շարահարությամբ։ Այդ շաղկապներից գործառական ավելի մեծ ակտիվություն ունի իսկ-ը, մյուսները սակավ են գործածվում և հաճախ նաև համատեղում են այլ նրբիմաստներ։

Շարահարական կառուցվածքի հանդիպադրական միավորյալ նախադասությունները հիմնականում համապատասխանում են իսկ-ով կապակցված միավորյալ նախադասություններին։

Հանդիպադրական միավորյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ շարադասությամբ այդ հարաբերության ընդգծումն է։ Դա արտահայտվում է երկրորդ բաղադրիչ նախադասության անդամների շարադասության կայունությամբ. հանդիպադրվող անդամը, որպես կանոն, գործածվում է այդ բաղադրիչի սկզբում։ Ընդամին, միավորյալ նախադասության մեջ, բացի ենթակայից, բոլոր անդամները հանդիպադրմամբ հակադրվում են, միայն թե տարբեր չափով։ Թվում է՝ ենթակաների մասնակի հակադրություն պետք է դիտել այն, երբ ստորոգյալների հանդիպադրմամբ միավորյալ նախադասության 1-ին բաղադրիչում գործածված ընդհանուր ենթական 2-րդ բաղադրիչում արտահայտվում է ինքը դերանվամբ. *ինչպես՝ «Գոլիցինը ինչ-որ մեկին հրամայեց հայերին տեղավորել, իսկ ինքը Դոլգորուկի հետ մտավ իր խցիկը» (ՍԽՄՍ, 3, 166)։* Սակայն այստեղ ենթակաների լիարժեք հակադրություն չկա. հակադրությունն առկա է միևնույն անձի (Գոլիցինի) երկու տարբեր գործողությունների միջև։ Ինքը դերանվամբ արտահայտված ենթական, որ առաջին բաղադրիչում գոյականով արտահայտված նույն ենթական է, ավելի շատ ոճական նշանակություն ունի. այն բաղադրիչ նախադասությունների կապը սերտ է դարձնում և, որ առավել կարևոր է, շեշտում է այդ բաղադրիչների գործողությունների կատարումը միևնույն անձի կողմից։ Միևնույն սուբյեկտը ցույց տվող գոյականի ու դերանվան նման գործածությունը, ինչպես վերն արդեն նշել ենք, ենթակայի յուրատիպ կրկնություն է։

Հաճախ էլ առաջին բաղադրիչ նախադասության գոյական ենթական շեղչվում է, իսկ իենք դերանուն ենթական հաջորդ բաղադրիչում արտահայտվում է։ Այս դեպքում դերանվամբ արտահայտված ենթակայի ինքնուրույնությունը մեծանում է, ընդգծվում. այն իր վրա է կրում տրամաբանական շեշտը։ Դրանով պայմանավորված՝ որոշակիորեն զգացվում է իենք դերանուն ենթակայի ու առաջին բաղադրիչի ենթադրյալ գոյական ենթակայի հակադրությունը. ինչպես՝ «Կրակ է վառել, իսկ իենք չկա» (ԵՀ, 1, 286)։ Այստեղ առկա է նաև դիջականության որոշ երանգ. երկրորդ բաղադրիչը հակադրվում է առաջինի բովանդակությունից սպասվող հետևանքին։

Այս կառուցվածքում ենթական երբեմն հանդիպադրվում է ուղիղ խնդրին. ինչպես՝ «Գնդի սուրհանդակներին ուղարկիր մոտս, իսկ դու զորագունդ հավաքիր իսկույն» (ԴԴվ, 2, 25)։ «Իենք տիկ է դառել, ուրիշին բերան շինել» (Ա, 95)։

Հանդիպադրական միավորյալ նախադասության մեջ ստորոգական հակադրությունն ավելի հաճախադեպ է ու շեշտված, իսկ դա առկա է, երբ խոսողը (գրողը) նշում է միևնույն առարկային (առարկաներին) ստորոգվող հատկանիշների հակադրությունը։ Ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները, որպես կանոն, մեծ մասամբ զուգադրվում են իրենց լրացումներով։ Նշենք, որ ընդհանուր հղանակիչ ունեցող բայական բաղադրյալ ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասության մեջ ևս գործածվում է մասնակի ստորոգական հակադրությունը։ Օրինակ՝ «Երեկ ընթերցում էր, իսկ այսօր պատմում է»։ «Մոքում դրել է կաթսան հարմարեցնել արագ քաշելու, իսկ մնացած երկաթեղենը ծախել» (ԱԲ, 1, 147)։

Միավորյալ նախադասության ստորոգական հակադրությունը վերանում է, չեզոքանում, երբ նրա բաղադրիչներն ունենում են մի ընդհանուր ստորոգյալ կամ բայական գերադաս անդամ։ Այս դեպքում միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչում ստորոգյալը կամ բայական գերադաս անդամը դեղչվում է, և հակադրվում են միայն երկրորդական անդամները. ինչպես՝ «Սուփրեն ֆցելուս հասի, ժամը՝ դուրս գալուս» (Ա, 203)։

Հանդիպադրական միավորյալ նախադասության մեջ ևս հակադրությունն իր բնույթով ու քերականական ընդգրկմամբ լինում է ճամասեռ և անհամասեռ։ Ընդամին, համասեռ հակադրությունն արտահայտվում է միավորյալ նախադասության հանդիպադրված բաղադրիչ նախադասություններում զուգահեռ գործածված բոլոր անդամների և ամենից առաջ ստորոգյալների կամ գերադաս անդամների միջև։ Հանդիպադրված բաղադրիչների միջև առաջանում է իմաստային ու բառաքերականական

զուգահեռություն. առաջին բաղադրիչ նախադասության անդամները հաջորդ բաղադրիչում ունենում են իրենց հանդիպադրված զուգահեռ ձևերը։ Հետևաբար ամբողջ նախադասությունը կառուցվում է իր բոլոր անդամների (բացառությամբ ընդհանուր անդամների) հակադրության սկզբունքով։ Բացի այդ, զուգադիր բաղադրիչ նախադասությունների շարադասությունը և ստորոգյալների կամ գերադաս անդամների քերականական արտահայտությունը հիմնականում նման են լինում իրար։ Հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասություններում համաձև հակադրությունն արտահայտվում է հետևյալ կաղապարներով.

ա) (ենթ.)+ՈՒհ+Ստ կամ ԲԳԱ←→ՈՒհ+Ստ կամ ԲԳԱ. ինչպես՝ «Նա հեքիաթը պատմեց, իսկ բանաստեղծությունն արտասանեց»։ «Հեքիաթինը ուտենք, խելոքինը պահենք» (Ա, 180)։

բ) Ո+Ստ+Համ հ←→Համ հ+Ո+Ստ. ինչպես՝ «Փրփրած գետակ էիր ճահիճների կողքին, խոր ձորերի կողքին մի պարզ լճակ էիր» (ՀՍՍՌ, 243)։

գ) (ենթ.)+Ստ+Սհ←→Սհ+Ստ. ինչպես՝ «Նա անգութ էր կռվում, գոտեմարտում՝ դաժան» (ՊՍ, 1, 13)։

դ) Ստ+ԺՊ←→ԺՊ+Ստ. ինչպես՝ «Կատու էր գառել այն ժամանակ, իսկ հիմա... հոխորտում է» (ՍհՄՄ, 3, 179)։

ե) ԺՊ+ՈՒհ+ԲԳԱ←→ԺՊ+ՈՒհ+ԲԳԱ. ինչպես՝ «Գիշերը մարդ կմորթե, ցերեկը ճամփա կհարդեն» (Ա, 30)։

զ) ՏՊ+ԲԳԱ կամ ԱԲԱ←→ՏՊ+ԲԳԱ կամ ԱԳԱ. ինչպես՝ «Տանը ասլան, չոլումը կատու» (Ա, 58)։

է) ՄՊ+ԱԳԱ←→ՄՊ+ԱԳԱ. ինչպես՝ «Ինձ հետ խոով է, շվաքիս հետ՝ հաշտ» (առած)։

ը) (ենթ.)+Մհ+Ստ←→Մհ+Ստ. ինչպես՝ «Նա գրիչով գրում է, իսկ մատիտով՝ նկարում»։

թ) ՄՊ+ՈՒհ+ԲԳԱ←→ՄՊ+ՈՒհ+ԲԳԱ. ինչպես՝ «Խելոքի հետ քար կրե, խևի հետ ստակ (փող) մի՛ բաժանի» (Ա, 11)։

ժ) ԺՊ+ԲԳԱ←→ԺՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Առաջ միտք արա, հետո խոսք ասա» (Ա, 6)։

ժա) ՉՊ+ԲԳԱ←→ՉՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Տասը չափի, մեկ կտրի» (Ա, 6)։

ժբ) Հ+ՏՊ+ԲԳԱ←→Հ+ՏՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Գայլի բերանից հանեցի, օձի բերանը գցեցի» (Ա, 73) և այլն։

Միավորյալ նախադասության մեջ երբեմն էլ հակադրվում են բաղադրիչ նախադասությունների ոչ բոլոր անդամները. ինչպես՝ «Երեկ գնացի Երևան, իսկ այսօր շտապ վերադարձա»։ Այստեղ հակադրության ծիրից դուրս են ընդգծված պարագաները։ Նմանապես հանդիպադրված բաղադրիչներից մեկը մյուսից կարող է տարբերվել գոյականական ան-

դամի լրացումով. ինչպես՝ «Անուշը դասարանում նկարեց ծաղիկ, իսկ տանը գրեց մի գողտրիկ բանաստեղծություն»։

Համասեռ հակադրությունը գործառվում է նաև ընդհանուր ստորոգյալով կամ բայական գերադաս անդամով միավորյալ նախադասության մեջ, երբ ստորոգյալը կամ բայական գերադաս անդամը երկրորդ բաղադրիչում զեղչվում է, և հակադրվում են երկրորդական անդամները։ Նման հակադրություն ստեղծում են հետևյալ քերականական միավորների կառուցվածքները.

ա) ՈՒՆ+ՏՊ ←→ ՈՒՆ+ՏՊ. ինչպես՝ «Մի թևը դրել է հեռադիտակին, իսկ մյուսը՝ «Արարոյի» վրա» (ՍԳ, 1976, № 8, էջ 29)։

բ) Ո+ՈՒՆ+ՏՊ ←→Ո+ՈՒՆ+ՏՊ. ինչպես՝ «Վիթխարի գլուխը տարածել էր դեպի արևելք, իսկ ստվար գավակը՝ դեպի արևմուտք» (ՐՍ, 289)։

գ) Հ+ՏՊ←→Հ+ՏՊ. ինչպես՝ «Կծողի հետևին կանգնիր, քացի տվողի՝ առաջին (Ա, 7)։

դ) ՈՒՆ+ՄՆ←→ՈՒՆ+ՄՆ. ինչպես՝ «Նամակը մատիտով ես գրել, բանաստեղծությունը՝ գրչով»։

ե) Հ+ՈՒՆ←→Հ+ՈՒՆ. ինչպես՝ «Ելնողի տեղը կառնին, մեռնողի՝ կնիկը» (Ա, 317)։

զ) Ո+ՏՊ+(ենթ.)+ՋՊ←→Ո+ՏՊ+ՋՊ. ինչպես՝ «Առաջին նախադասության մեջ մասնական բացահայտիչը նախադաս է կիրառվել, վերջին օրինակում՝ ետադաս» (ԺՀԼ, 3, 218)։

է) (ենթ.)+ՈՒՆ+Մատն←→ՈՒՆ+Մատն. ինչպես՝ «Նա գիրքը հանձնեց, ինձ, իսկ տետրը՝ Վարդանին» և այլն։

Հանդիպադրական միավորյալ նախադասության մեջ քերականական անհամասեռ հակադրությունն արտահայտվում է ամենից առաջ նրա բաղադրիչների՝ տարբեր կազմություն ունենալու դեպքում. ինչպես՝ «Նա ցերեկը եկել էր հոր մոտ և չէր վերադարձել, իսկ այժմ քնել էր բակի մի անկյունում՝ չոր խոտերի վրա...» (ՍՁՀԲ, 366)։

Անհամասեռ է նաև միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների միջև գործառվող հակադրությունը։ Ընդամին, մասնավորապես հանդիպում են անհամասեռ հակադրության հետևյալ կառուցվածքները.

ա) ՏՊ+Ստ+ԾՊ ←→ԾՊ+Ստ+ՄՊ. ինչպես՝ «Քաղաք էր գնացել դեռ պատանի..., իսկ այժմ վերադառնում էր կնոջ ու աղջկա հետ» (ԱԲ, 1, 97)։

բ) ԾՊ+(ենթ.)+Ստ+ՈՒՆ+ԱՆ←→ԾՊ+Բ+ՈՒՆ+Ստ. ինչպես՝«Առաջ նա դեռ կհամաձայներ «մի բան էլ դրամագլխից բաշխել», իսկ այժմ, Միքայելի վարմունքից հետո, տոկոսն էլ կառնի» (ԱՇՔ, 327)։

գ) ՋՊ+Ստ+Հ+ՈՒՆ⟷ՈՒՆ+ՈՒՆ+ԺՊ+ՋՊ+Ստ. ինչպես՝ «Անշատ սիրում էի Բաֆֆիի գրվածքները, ընդհակառակն, Շերենցը և Պռոշյանը միշտ ձանձրույթով եմ կարդացել (ՆԴ, 9)։

դ) (ԵՆԲ.)+ԺՊ+Ստ⟷ԺՊ+Ստ+ՈՒՆ. ինչպես՝ «Մանուշակը ցերեկը աշխատում է, իսկ երեկոյան օգնում մորը»։

ե) (ԵՆԲ.)+Ստ+ՏՊ⟷ԺՊ+Ստ+Ո+ՈՒՆ. ինչպես՝ «Նա աշխատում է բակում, իսկ հետո պետք է ընթերցի օրվա լրագրերը»։

զ) ՈՒՆ+ԲԳԱ⟷ԺՊ+ԲԳԱ. ինչպես՝ «Բանն արա, հետո պարծեցիր» (Ա, 16)։

է) ՏՊ+ԲԳԱ⟷ՈՒՆ+ԲԳԱ. ինչպես՝ «Գոգիդ նստեմ, միրուքդ փետեմ» (Ա, 28) և այլն։

Միավորյալ նախադասության մեջ հակադրության ուժեղ լինելը, զուգադիր անդամների բառական հականշությունից բացի, պայմանավորված է լինում նաև այլ հանգամանքներով։ Հակադրությունը խիստ ուժեղ է լինում, երբ հանդիպադրված երկրորդ բաղադրիչում գործածվում է ընդհակառակն բառը, կամ երբ նախադասության սկզբում ընդհանուր անդամի գործառույթով հանդես են գալիս տեղի և ժամանակի պարագաները, որոնք, բաղադրիչ նախադասությունների կապը շեշտելուց բացի, ընդգծում են զուգադրության՝ տարածական կամ «ժամանակային նույն պլանով կատարվելը» (84, էջ 52). ինչպես՝ «Վարդանն անցյալ տարի հետադիմում էր, իսկ այս տարի, ընդհակառակն, ուսման առաջավոր է»։ «Երկու ամսում կոլտնտեսականները ավարտեցին բերքահավաքի աշխատանքները, իսկ անասնակերի հավաքման բնագավառում զգալի հաջողություններ չունեցան»։

Իսկ շաղկապով ու շարահարությամբ կապակցված հանդիպադրական միավորյալ նախադասություններից որոշակիորեն տարբերվում են եթե...ապա, ապա, միայն շաղկապներով կապակցված ձևերը։ Եթե...ապա զուգադրական շաղկապը հանդիպադրական հարաբերությունն նշանակությամբ միավորյալ նախադասության մեջ սահմանափակ կիրառություն ունի։ Այդ շաղկապի բաղադրիչներից ամեն մեկը գործածվում է հանդիպադրված բաղադրիչներից յուրաքանչյուրի սկզբում՝ կապակցվող միավորների կապը դարձնելով ավելի սերտ։ Զուգադրված անդամներն էլ անմիջապես հաջորդում են եթե և ապա շաղկապական բաղադրիչներին. ինչպես՝ «Եթե նա կենցաղային հարցերում թերանում է, ապա հասարակական աշխատանքներում առաջավոր է»։

Ապա շաղկապն իր հակադրության իմաստով մոտ է իսկ-ին, միայն թե գործածվում է հարցական երանգի միավորյալ նախադասություններում. ինչպես՝ «Վարդանը նրան որ չի սիրում, ապա ո՞ւմ է սիրում»։

Հանդիպադրական հարաբերությունը միավորյալ նախադասության մեջ սակավադեպ արտահայտվում է նաև միայն շաղկապական բառով։ Այս դեպքում հակադրությունը թույլ է արտահայտվում, և հանդիպադրվող երկրորդ բաղադրիչ նախադասությունը առաջին բաղադրիչին «մի հակադրություն ավելացնելով՝ չափավորում կամ սահմանափակում է նրա բովանդակությունը և նրանից սպասած հետևության առաջն առնում» (3, էջ 667). ինչպես՝ «Մենք ողջ և առողջ ենք, միայն քո առողջությունն ենք ուզում»[5] (ՀԲ, 247)։

Հաճախ հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների կապակցմանը նպաստում են նաև բառաքերականական որոշ միջոցներ՝ մի կողմից...մյուս կողմից, երբեմն...երբեմն, մեկ...մեկ, մերթ...մերթ և այլ զուգադրական կապակցություններ, որոնց բաղադրիչները գործածվում են հանդիպադրվող եղերի սկզբում՝ ավելի սերտ դարձնելով կապակցվող միավորների կապը։ Այս կարգի միավորյալ նախադասությունները կարող են կապակցվել իսկ շաղկապով և շարահարությամբ։ Այնուհետև. երբեմն...երբեմն, մեկ...մեկ, մերթ...մերթ կապակցություններով կազմված միավորյալ նախադասության բաղադրիչները, որոնց հակադրությունը համեմատաբար թույլ է լինում, կապվում են նաև ոչ կանոնավոր տարժամանակությամբ։ Օրինակ՝ «Արամը այդ ուշ ժամին մի կողմից շարունակում էր գեղարվեստական երկի ընթերցումը, մյուս կողմից մտածում էր հաջորդ օրվա իր անելիքների մասին»։ «Մերթ հրում է նա, մերթ՝ խոտում բերում ինձ նման հյու-հնազանդ պատին» (ՊՍ, 1, 124)։

Միավորյալ նախադասության մեջ հանդիպադրական հակադրությանը հաճախ զուգակցում են այլ հարաբերություններ՝ ժամանակային, պատճառահետևանքային, զիջական և այլն։ Ավելին. նույնիսկ նույն նախադասության մեջ կարող են արտահայտվել երկուսից ավելի հարաբերություններ։ Այսպես, օրինակ, «Վարդանը սկզբում դժգոհում էր, իսկ այսօր ղջրում է իր արարքի համար» կառուցվածքում հակադրությանը զուգորդում է տարժամանակային հարաբերությունը։ Ժամանակային հարաբերությունն ավելի ակնառու է արտահայտվում, երբ հանդիպադրվում են բաղադրիչ նախադասությունների ստորոգյալները կամ բայական գերադաս անդամներն իրենց ժամանակի պարագաներով։ Նման կառուցվածքում ավելի հաճախադեպ են ժամանակային հաջորդականությունը և ժամանակի պարագայի գործառույթ ունեցող բառերի յուրատիպ զուգորդումները՝ առաջ...հետո, այսօր...վաղը, երեկ...այսօր

---

5 Այստեղ առկա է նաև սահմանափակման երանգը՝ պայմանավորված միայն-ի բառիմաստով։

և այլն. ինչպես՝ «Այսօր նոքա սպանում են իշխան ու նախարար, վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» (ՍԶՀՔ, 290)։ «Կանայք շատ անգամ առաջ խղճում են, հետո սիրում» (ԱՇՔ, 277)։ Շարահարական այս նախադասությունները կարելի է ըմբռնել նաև իբրև միավորական հարաբերությամբ կառույցներ[6] (հենց ժամանակային հարաբերությունը պայմանավորված է միավորական հարաբերությամբ), սակայն իշխողը հանդիպադրական հակադրություն է (Համմտ. «Այսօր նոքա սպանում են իշխան ու նախարար և վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» և՝ «Այսօր նոքա սպանում են իշխան ու նախարար, իսկ վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» և այլն)։ Միավորյալ նախադասության բաղադրիչների քերականական հարաբերության ըմբռնման այսպիսի երկակիությունը պայմանավորված է շարահարական կապակցության՝ բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերություններն ավելի պակաս որոշակիությամբ դրսևորելու հանգամանքով, ինչպես նաև միևնույն նախադասության մեջ տարբեր հարաբերությունների զուգակցմամբ։

ՀԱԿԱՍՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ[7]

Հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ցույց է տալիս միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող այնպիսի հատկանիշներ, որոնք իրար նկատմամբ հակասական են։ Այսպես՝ «Նա իր կտակի մեջ քիչ է գրել, բայց շատ է ասել» (ԱՇՔ, 30) նախադասության մեջ առկա է հակասում, անհամապատասխանություն միևնույն սուբյեկտի երկու տարբեր գործողությունների (և դրանց հատկանիշների) միջև։

Հակասման հարաբերություն արտահայտող միավորյալ նախադասությունն ունի կառուցվածքային ու իմաստային մի շարք առանձնահատկություններ։ Նրա բաղադրիչ նախադասություններից մեկի ստորոգյալը կարող է լինել պարզ, մյուսինը՝ բաղադրյալ. ինչպես՝ «Գանձերից է, բայց երես է տալիս ոսկիկ մարդկանց, ինչ-որ փախստականների» (ՍԽՄՄ, 3, 193)։

Երբեմն միավորյալ նախադասության ստորոգյալներից մեկը լինում է հաստատական, իսկ մյուսը՝ ժխտական։ Ընդ որում, ժխտական ստո-

---

6 Առաջին օրինակում առկա է նաև պայմանի հարաբերություն (Համմտ. «Եթե այսօր նոքա սպանում են իշխան ու նախարար, ապա վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա»)։

7 Այս հարցի մանրամասն քննությունը տե՛ս 53, էջ 47—53։

րոգյալի՝ առաջին կամ երկրորդ բաղադրիչում հանդես գալը կարևոր է ոչ այնքան կառուցվածքային, որքան իմաստային առումով։ Առաջին բաղադրիչի ստորոգյալը ժխտական լինելու դեպքում այդ բաղադրիչով ժխտվածը հաստատվում է երկրորդ բաղադրիչով, և կամ միևնույն առարկայի (առարկաների) մի հատկանշին հակադրվում է մեկ այլ հատկանիշ։ Նմանապես, երբ ժխտական ստորոգյալը գործածվում է երկրորդ բաղադրիչում, այդ բաղադրիչը սահմանափակում, ժխտում է առաջին բաղադրիչում հաստատական եղանակով հաղորդվածը։ Համմտ. «Ինձ չի ճանաչում, բայց ինձ հետ սիրով և քնքշությամբ է խոսում» (ՆԴ, 255)։ «Վարդանը նկատեց Ատոմի վիրավորվելը, բայց ցույց չտվեց ոչինչ»։ (ԴՎվ, 2, 518)։

Հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասությանը բնորոշ է երկրորդ բաղադրիչում ստորոգյալի դեղչումը, որի մասին վերն արդեն խոսել ենք։

Միավորյալ նախադասության մեջ հակասումը ևս լինում է ճամասեռ ու անճամասեռ։ Իհարկե, ժխտման ու հանդիպադրության համեմատությամբ հակասումն ավելի պակաս որոշակիությամբ է դրսևորում հակադրության նման տարբերակումը։ Համասեռ է միավորյալ նախադասության բաղադրիչների միևնույն անդամների միջև գործառվող հակասությունը։ Այն նույնպես մասնակի է և հիմնականում ունի ստորոգական բնույթ, քանի որ տվյալ դեպքում ամենից առաջ հակադրվում են ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները։ Հակադրության եղրերը ավելի հաճախ ունենում են նույն ծավալը. ինչպես՝ «Երեկ որոշեցինք գնալ, բայց այսօր չգնացինք»։

Անհամասեռ է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների և տարբեր կառուցվածք ունեցող բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող հակասումը. ինչպես՝ «Երկինքներին՝ հեռավո՜ր, հեռավո՜ր Դու մանկորեն ժպտացիր-չգտար» (ԵՉ, 1, 103)։

Միավորյալ նախադասության կազմում հակասման հարաբերությունը սովորաբար արտահայտվում է բայց, սակայն, բայց և, բայց և այնպես, սակայն և, և սակայն, ու սակայն, միևչդեռ, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուհանդերձ, այդուհանդերձ, այսուհանդերձ, միայն, միայն թե հակասման շաղկապներով ու շաղկապական բառերով և շարահարությամբ։ Այս շաղկապներից ամեն մեկը պայմանավորում է միավորյալ նախադասության իմաստային ու կառուցվածքային որոշ յուրահատկություններ։ Դրանցից գործառական առավել մեծ ակտիվությամբ աչքի են ընկնում բայց*-ն ու* սակայն*-ը և դրանցով ու և-ի հարադրությամբ բաղադրված ձևերը՝* բայց և, սակայն և, և սակայն։

Շարահարական կառուցվածքի հակասման միավորյալ նախադասություններն իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով հիմնականում համապատասխանում են բայց և սակայն շաղկապներով կապակցվածներին։

Արդ՝ հակասման միավորյալ նախադասության իմաստային առանձնահատկությունների մասին։ Այս նախադասության իմաստային ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա բաղադրիչների բովանդակությունների անհամապատասխանությունն է, իրար հակասական լինելը։ Առաջին բաղադրիչ նախադասության բովանդակությունը պայմանավորում է երկրորդ բաղադրիչով արտահայտված համապատասխան գործողությունը, որը, սակայն, չի կատարվում և կամ էլ կատարվում է որպես հակադիր գործողություն. ինչպես՝ «Մենք բոլորս ծնվում ենք բնածին ազատ զգացմունքներով, բայց ընկնելով այս ղառամյալ աշխարհը, ստիպված հարմարվում ենք նրա նեղ վանդակներին» (ԷՂԳՀ, 51)։

Հաճախ էլ առաջին բաղադրիչ նախադասությունն արտահայտում է գործողության կատարման ցանկություն, ձգտում, մտադրություն, իսկ երկրորդը՝ մի երևույթ, իրողություն, որը խոչընդոտում, արգելակում է առաջին գործողության կատարումը կամ էլ պարզապես հակադրվում է նրան։ Գործողության արգելակման դեպքում հակասումը վերաճում է ժխտման։ Օրինակներ՝ «Կամեցավ հետ նայել, ձեռքը տանելով ծոցի դրպանը, բայց չկարողացավ շարժվել» (ԱՇՔ, 233)։ «Նորից փորձեց դուրսը վեր հանել, դարձյալ չկարողացավ» (ԱՔ, 1, 302)։

Շատ հաճախ միավորյալ նախադասության մեջ հակասման ընդհանուր իմաստին զուգակցում են իմաստային այլ երանգներ։

1. Այդ երանգներից ամենից առաջ նշելի է ժիջական հարաբերությունը (հմմտ. 17, էջ 587)։ Սա ավելի ակնառու է արտահայտում, երբ միավորյալ նախադասության առաջին բաղադրիչում նկարագրվում է մի գործողություն, եղելություն, իսկ երկրորդ բաղադրիչում՝ այդ գործողությունից, եղելությունից սպասվող հետևանքին բոլորովին հակառակ գործողություն, եղելություն, այսինքն՝ երկրորդ բաղադրիչի բովանդակությունը հակադրվում է առաջին բաղադրիչի բովանդակությունից սպասվող հետևանքին. ինչպես՝ «Ես հարուստ ծնողների զավակ չեմ, բայց հպարտ եմ...» (ԱՇՔ, 258)։ «Սերն ուժեղ է մահից, Բայց մահից չի փրկում» (ԳՂՔԴ, 99)։ Հակասման հարաբերությանը ժիջականության իմաստի զուգակցումն է հավաստում այս նախադասությունների՝ ժիջական շաղկապներով կապակցված կառուցվածքի փոխակերպման հնարավորությունը. ինչպես՝ «Թեև ես հարուստ ծնողների զավակ չեմ, բայց հպարտ եմ» և այլն։

Ժիջական հարաբերությունն ավելի ընդգծված է արտահայտվում

բայց և, սակայն և, բայց և այնպես, այնուամենայնիվ, այնուհանդերձ, շաղկապներով կազմված կապակցություններում։ Այս դեպքում զիջականության հետ մեկտեղ մասամբ առկա է լինում նաև սահմանափակման թույլ երանգը. ինչպես՝ «Այս միտքը նկավ, բայց և իսկույն թռավ նրա գլխից» (ԴՂվ, 2, 286)։ «Նա հասկանում էր քեզ, այնուամենայնիվ օգնել չէր ուզում»։

Զիջական հարաբերության իմաստը նվազ չափով առկա է նաև և սակայն, ու սակայն բաղադրյալ շաղկապներով կապակցված միավորյալ նախադասություններում, որոնք կազմվում են հետևյալ ձևով։ Երբ միավորյալ նախադասությունը կապակցվում է տվյալ դեպքում (պայմանավորված բաղադրիչ նախադասությունների ներքին-իմաստային փոխհարաբերություններով) հակադրություն արտահայտող և, ու միավորիչ շաղկապներով, այդ հակադրության իմաստը սաստկացնելու նպատակով նշված շաղկապների հետ գործածվում է սակայն-ը՝ կազմելով և սակայն, ու սակայն շաղկապները։ Այս դեպքում նախադասությունը համատեղում է այդ բաղադրյալ շաղկապների բաղադրիչների միավորական և հակաման իմաստները. ինչպես՝ «Բաժակներում ցոլում է հոնի վճիտ օդին ու սակայն չի ըրում մեր լուսթյունն, ավազ...» (ՎԴԱՄ, 58)։ Այստեղ, առանց սակայն-ի գործածության էլ, միավորական հարաբերության հետ մեկտեղ առկա է զիջականության իմաստը, բայց սակայն-ը ավելի շատ շեշտում է այդ ածանցյալ իմաստը՝ այն դարձնելով նախադասության բաղադրիչների միջև գործառվող հիմնական հարաբերությունը, որով ու սակայն-ը (նաև և սակայն-ը) ստանում է հակաման շաղկապի գործառություն։

Միավորյալ նախադասությունը զիջական երանգ է ունենում նաև սակայն-ի միջադաս և վերջադաս շարադասության դեպքում[8]։ Ընդ որում, առաջին դեպքում սակայն-ը միջանկյալ բառի գործառույթով հանդես է գալիս առաջին բաղադրիչին կամ նրա որևէ անդամին հակադրված անդամից առաջ և երկու կողմից տրոհվում է ստորակետով, իսկ երկրորդ դեպքում նրան նախորդում է մեծ մասամբ ժխտական ստորոգյալը. ինչպես՝ «Հանդիպեցի քեզ, կատարվածի մասին, սակայն, չկարողացա պատմել»։ «Նայում էի անվերջ, չդիտեի սակայն, Քարափնե՞ր են արդյոք, թե՞ ավերված բերդեր...» (ՎԴԱՄ, 55)։ «...պատանությունս վարդից հեռին, վաղը կարոտով, չհասավ սակայն» (Ն. ո., 166)։ Առաջին նախադասության մեջ սակայն-ը ունի երկակի նշանակություն. և՛ հակասման հարաբերություն է արտահայտում, որի հետևանքով այդ նախադասությունը համարժեք է «Հանդիպեցի քեզ, սակայն կատարվածի

---

8 Շարադասության նման ճկունությամբ սակայն-ը տարբերվում է բայց-ից։

մասին չկարողացա պատմել» կառուցվածքին, և միաժամանակ միջանկյալ բառ է։

2. Հակասման միավորյալ նախադասությունը հաճախ էլ ստանում է սահմանափակման երանգ։ Վերջինս արտահայտվում է այն դեպքում, երբ երկրորդ բաղադրիչը որևէ մասնավոր երևույթով սահմանափակում է մտցնում առաջին բաղադրիչի բովանդակության մեջ։ Սա մասամբ դառնում է նաև ամբողջի ու մասի հարաբերություն. առաջին բաղադրիչը արտահայտում է ընդհանուր գործողություն, իսկ երկրորդը սահմանափակում, մասնավորում, նաև ճշգրտում է նախորդ մասով հաղորդվածի ընդհանուր իմաստը։ Սահմանափակման ճշգրտող նշանակությունը միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչի՝ առաջին մասի բովանդակությունն այս կամ այն տեսակետից ճշտելն է և որոշ վերապահությամբ ընդունելի դարձնելը։ Այսպիսի միավորյալ նախադասությունը կապակցվում է սակայն, բայց շաղկապներով և շարահարությամբ. ինչպես՝ «Հաճախ մասնակցում էր մեր խոսակցություններին, զրույցներին, հարցերին, սակայն սովորաբար սակավախոս էր» (ԱԻե, 369)։

Սահմանափակումն ավելի ընդգծված է արտահայտվում, երբ իբրև կապակցման բառական միջոցներ հանդես են գալիս միայն թե շաղկապը և միայն շաղկապական բառը, որոնք տվյալ դեպքում ունենում են «պայմանով որ» նշանակությունը։ Օրինակ՝ «Տեր-Հայկազունը կաշվից դուրս էր գալիս, միայն թե ամայության մեջ և մահվան բովում գտնվող իր հոտին ներշնչեր այս պատրանքը» (ՖՎՄԼՔՕ, 323)։

3. Հակասման միավորյալ նախադասության մեջ գործածվող ածանցյալ հարաբերություններից մեկն էլ պայմանի նշանակությունն է։ Այս դեպքում հակասումը կապվում է որևէ պայմանի հետ. առաջին բաղադրիչի բովանդակությունը պայմանավորվում է հաջորդի բովանդակությամբ. ինչպես՝ «Շան հետ ընկերացիր, փետը ձեռքիդ մի՛ գցիր» (Ա, 7)։ Սակավադեպ պայման արտահայտում է միավորյալ նախադասության առաջին բաղադրիչը. ինչպես՝ «Քիչ բարձի՛, շուտ դարձի» (Ա, 205)։

4. Բայց, սակայն շաղկապներով միավորյալ նախադասության բաղադրիչները կարող են կապվել նաև, այսպես կոչված, փոխհատուցման հարաբերությամբ (հմմտ. 28, էջ 333)։ Այդ դեպքում առաջին բաղադրիչը, որի ստորոգյալը հիմնականում ունենում է թեական իմաստ, արտահայտում է ժխտվող կամ երկբայական գործողություն, վիճակ. ինչպես՝ «Ով մինչև հիմա ուրիշ տեղ չի ասել, բայց մտքից էլ չի հանել» (ԱՔ, 1, 118)։ Երբեմն էլ փոխհատուցման տեղը բռնում է պարզ փոխաբինումը. ինչպես՝ «Գելից փախա, արջի ճանկն ընկա» (Ա, 73)։

5. Միավորյալ նախադասության մեջ հակասման հարաբերությունը հաճախ արտահայտվում է երկբայության ձևով, երկբայության երանգով։

Ըստ այդմ էլ հակաստման միավորյալ նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ երկբայական-հավանականություն և երկբայական հարցում արտահայտող միավորյալ նախադասություններ։ Երկբայական-հավանականություն արտահայտող միավորյալ կառույցն ունենում է հավանականության թվացողության երանգ, և նրա երկրորդ բաղադրիչում գործածվում են համապատասխան եղանակավորող բառեր. ինչպես՝ «Աղջիկը բառեր է որոնում, երևի չի գտնում» (ՎՊՀԲԱ, 118)։

Երկբայական-հարցական միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչն ունենում է երկբայությունը շեշտող հարցական երանգ, իսկ ամբողջ նախադասությունը՝ անվանական ստորոգյալ+պարզ ստորոգյալ կառուցվածքը. ինչպես՝ «Հրավիրը պատիվ էր, բայց ինչո՞վ կվերջանար» (ՍՋՀԲ, 331)։

6. Հակաստման հարաբերությանը հաճախ էլ ուղեկցում է ժամանակային հարաբերությունը։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը ցույց է տալիս միևնույն առարկային (առարկաներին) ա) միաժամանակ կամ բ) տարբեր ժամանակներում վերագրվող և հակաստման հարաբերության մեջ գտնվող հատկանիշներ. ինչպես՝ ա) «Փոքրիկ եմ ես բոլորովին, բայց հարուստ եմ իմ տվածով» (ՀՍՔԲ, 169)։ բ) «Նապաստակ մի ծանր, խորհրդավոր բան գուշակեց սպարապետի հրամանից, բայց գնաց կատարելու» (ՍԽՄՍ, 3, 50)։

Այսպիսով, միավորյալ նախադասության մեջ բուն հակաստման հարաբերությանը շատ հաճախ զուգակցում են այլևայլ հարաբերություններ։ Սակայն այդ ամենատարբեր իմաստների մեջ միշտ էլ գերիշխողը հակաստման հարաբերություն է։

ՊԱՅՄԱՆԱՆՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանաներհակական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ցույց է տալիս միևնույն առարկային կամ առարկաներին առորոգվող այնպիսի հատկանիշներ, որոնց միջև առկա ներհակությունը զուգակցվում է որոշ պայմանականությամբ։ Այսպես՝ «Պարոն Սենեքերիմը իր աշակերտին չնկատեց, այլապես կարող էր կանգնեցնել և հարցնել...» (ԽԴՌԿ, 15) նախադասության բաղադրիչները հիմնականում կապված են ներհակական հարաբերությամբ, միայն թե այնքանով, որքանով երկրորդ բաղադրյալ եզրի բովանդակությունը պայմանավորվում է առաջինով, ներհակությանը զուգորդում է պայմանի հարաբերությունը։

Պայմանաներհակական միավորյալ նախադասության բաղադրիչները կապակցվում են հետևյալ շաղկապներով ու շաղկապական կապակ-

ցուցմունքներով՝ եթե ոչ, թե չէ, ապա եթե ոչ, ապա թե ոչ, այլապես, ճակատակ դեպքում, որոնք թեև համանիշ ձևեր են, բայց և այնպես գործառական-ոճական տեսակետից իրարից տարբերվում են: Այդ շաղկապները արտահայտում են միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության բաղադրիչները կապող պայմանի հարաբերությունը, այսինքն՝ դրանց «իմաստային վերաբերությունից որոշակիորեն հասկացվում է պայմանը» (17, էջ 593): Իսկ ընդհանրապես դրանք ունեն զեղչված պայմանի պարագա երկրորդական նախադասության նշանակություն:

Պայմանաներհակական միավորյալ նախադասության մեջ զուգակցում են պայմանի ու հետևանքի հարաբերությունները: Առաջին բաղադրիչի բովանդակությունը դառնում է երկրորդի բովանդակության իրականացման պայմանը, իսկ այս վերջինի բովանդակությունը՝ առաջինի բովանդակության իրականացման հետևանքը: Պայմանի ու հետևանքի զուգակցումը դառնում է յուրատիպ հակադրություն, իսկ տվյալ միավորյալ նախադասությունը՝ այդ ներհակությունն արտահայտող համադասական կապակցություն. ինչպես՝ «Պետք է շտապենք, եթե ոչ կուշանանք»: «Քննությանը հանգամանորեն նախապատրաստվիր, թե չէ դրական գնահատական չես ստանա»: Այս օրինակներում առաջին բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողություն, որի չկատարումը դառնում է երկրորդ բաղադրիչի բովանդակության իրականացման պայման: Իսկ այդ առաջին գործողության չիրականացման հետևանքը կդառնա երկրորդ բաղադրիչով արտահայտված գործողությունը:

Պայմանավորված բաղադրիչ նախադասությունների ներքին-մտային փոխհարաբերությամբ՝ պայմանաներհակական միավորյալ նախադասությունն արտահայտում է տարբեր նրբերանգներ: Ամենից առաջ նրա առաջին բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողություն, եղելություն, որի չկատարումը դառնում է պայման երկրորդ բաղադրիչի անցանկալի գործողության, եղելության կատարման համար (Համմտ. 17, էջ 594): Այս դեպքում բոլոր բաղադրիչներն ունենում են հաստատական ստորոգյալ. ինչպես՝ «Պետք է պայքարենք արտադրության որակի բարձրացման համար, այլապես ետ կմնանք մյուս արտադրական ձեռնարկություններից»:

Երբեմն էլ միավորյալ նախադասության առաջին բաղադրիչն արտահայտում է այնպիսի գործողություն, եղելություն, որի, իբրև պայմանի, չկատարումը սպասելի է դարձնում երկրորդ բաղադրիչի գործողության չկատարումը, եղելության բացառումը (Համմտ. 17, էջ 594): Նման կառույցում, որպես կանոն, երկրորդ բաղադրիչի ստորոգյալը լինում է ժխտական. ինչպես՝ «Սերոբն ու Վարդանը շտապում են, հակառակ դեպքում գնացքին չեն հասնի»:

Տրոհական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը[9] ցույց է տալիս միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հատկանիշներից մեկի ճշարավոր կամ իրական դիտվելը: *Օրինակ՝ «Ես կա՛մ պետք է սովորեմ համալսարանում, կա՛մ պետք է հրաժարվեմ սովորելու ցանկությունից»:* Այստեղ հնարավոր է համարվում երկու գործողություններից միայն մեկը:

Տրոհական միավորյալ նախադասություններն ունեն կառուցվածքային ու իմաստային մի շարք առանձնահատկություններ: Դրանք ևս հիմնականում ունեն երկանդամ կառուցվածք: Անգամ երկուսից ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված լինելու դեպքում էլ միավորյալ նախադասությունը բաժանվում է տրոհական հարաբերությամբ կապված երկու անդամի կամ եզրի: Ավելի հաճախ բաղադրյալ է լինում միավորյալ նախադասության առաջին եզրը. *ինչպես՝ «Ոմանք ստեպ-ստեպ թևքվում էին և փակ դռների բանալիի անցքով նայում մանամեծի սենյակը կամ ականջ էին դնում՝ ճգնելով մի բան տեսնել կամ լսել» (ԱՇՔ, 6):* Այստեղ տրոհական հարաբերությունը հիմնականում գործառվում է ընդգծված կից բաղադրիչ նախադասությունների միջև: Երբեմն էլ բաղադրյալ, այդ թվում ստորադասական, կազմություն է ունենում տրոհական միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչը. *ինչպես՝ «կա՛մ պետք է ժամանակին վճարեք, կա՛մ, եթե չեք կարող, դատարկեք սենյակը» (ՆԴ, 141):*

Հնարավոր է նաև տրոհական միավորյալ նախադասության երկու եզրերի բաղադրյալ լինելը: Այսպիսի կառուցվածքները բաժանվում են մի քանի ենթախմբի.

ա) *բուն միավորական հարաբերությամբ կապված բաղադրիչներից կազմված նախադասություններ, որոնցում զուգակցում են միավորական ու տրոհական հարաբերությունները. ինչպես՝ «Իսկ կճղակավորներին, հատկապես եղնիկներին ու եղջերուներին, քշում են դեպի սառած գետերը (1), սառույցի վրա ճղատում (2) ու վրա թափում (3) [I] կամ քշում են դեպի բարձր ժայռերը (4), ժայռերից թռցնում (5) ու իջնում ներքև լափում» (6) [II] (ՀՔ, 319):* Այստեղ 1—3-րդ և 4—6-րդ բաղադրիչ նախադասությունները իրար հետ կապված են միավորական, իսկ այդ երկու միավորական խմբերը միմյանց հետ՝ տրոհական հարաբերությամբ: Ինչպես տեսնում ենք, 1—3-րդ և 4—6-րդ բաղադրիչ նախադասությունները դառնում են ամբողջ նախադասության անմիջա-

9 Այս կառույցի համակողմանի քննությունը տե՛ս 54, էջ 40—51:

կան կազմիչները, որոնց միջև գործառվող տրոհական հարաբերությունը նույն կառուցվածքում առկա միավորական հարաբերության համեմատությամբ ավելի բարձր աստիճան է։

բ) նախադասություններ, որոնց եզրերից ամեն մեկն առանձին բարդ ստորադասական նախադասություն է։ Ստորադասական հարաբերությունը այս կառուցվածքում հանդես է գալիս իբրև ստորին օղակ. ինչպես՝ «Նա կգնա Երևան (1), որպեսզի հանդիպի եղբորը (2) [I], կամ կմեկնի Կիև (3), որովհետև այնտեղ էլ աննելիք ունի» (4) [II]։

Այսպիսով, քննված օրինակների՝ բաղադրյալ կազմություն ունեցող բաղադրիչները թեև առանձին վերցրած բարդ համադասական կամ բարդ ստորադասական նախադասություններ են, բայց դրանցից ամեն մեկը կազմում է մեկ ամբողջություն և տրոհական հարաբերությամբ կապվում մյուս եզրի հետ։ Հետևաբար տրոհական միավորյալ նախադասությունն էլ հիմնականում երկանդամ է և ունի փակ կառուցվածք[10]։

Տրոհական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը կապակցվում է կամ, կամ թե, և կամ, և կամ թե, կամ էլ, և կամ թե չէ, թե շաղկապներով ու շարահարությամբ։ Միավորյալ նախադասության իմաստային ու կառուցվածքային տարբեր յուրահատկություններ պայմանավորող այդ շաղկապներից գործառական ամենամեծ ակտիվությունն ունի կամ-ը, իսկ ամենաքիչը՝ թե-ն։

Շարահարական կառուցվածքի տրոհական միավորյալ նախադասությունները, որ սակավ են հանդիպում, հիմնականում լինում են հարցական երանգի և համապատասխանում են նույն նախադասությունների թե-ով կապակցված տարբերակին։

Տրոհական միավորյալ նախադասության առանձնահատկություններից մեկն էլ երկրորդ բաղադրիչ նախադասության ստորոգյալի կապային գերադաս անդամի զեղչումն է։ Այս մասին վերն արդեն խոսել ենք։

Արդ՝ քննության առնենք տրոհական միավորյալ նախադասության իմաստային առանձնահատկությունները։ Բարդ համադասական (այդ թվում և միավորյալ) նախադասության կազմում գործառվող տրոհական հարաբերությունը միատարր չէ։ Պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանը տարբերակում է բարդ համադասական կապակցության մեջ արտահայտվող տրոհական հարաբերության հետևյալ տեսակները՝ բացառական կամ բացառական, մասնակի-իրադրական, բնութագրական, հարցական, երկբայական (տե՛ս 17, էջ 595—598), որոնք հավասարապես բնորոշ են նաև

10 Բացառություն է կազմում միայն կա՛մ...կա՛մ կրկնադիր շաղկապով կապակցված միավորյալ նախադասությունը, որն ունի բաց կառուցվածք։

միավորյալ նախադասությանը՝ որոշ առանձնահատկություններով հանդերձ։

Միավորյալ նախադասության մեջ ամենից առաջ պետք է տարբերակել ընդհանուր և մասնակի-իրադրական տրոհումները։ Ընդհանուր տրոհումը այս կառուցվածքում բնորոշվում է բաղադրիչ նախադասությունների մեկի բովանդակության լրիվ բացառումով և մյուսի «բովանդակության իրական լինելու հնարավորության նշումով» (17, էջ 955)։ Ակնբախ է, որ նման տրոհական հարաբերությունն ամենից առաջ ունի ստորոգական բնույթ, քանի որ այն ավելի շատ արտահայտվում է ստորոգյալների կամ բայական գերադաս անդամների միջև. ինչպես՝ «Գնացեք կամ մնացեք»։ «Բերե՞լ, թե՞ թողնել»։

Ստորոգային տրոհումը արտահայտվում է ոչ միատեսակ՝ պայմանավորված միավորյալ նախադասության ստորոգյալների արտահայտությամբ։ Պարզ և անվանական բաղադրյալ ստորոգյալների միջև տրոհական հարաբերությունը արտահայտվում է սովորական ձևով (տե՛ս վերևի օրինակները)։ Քննվող հարաբերությունն այլ յուրահատկությամբ է դրսևորվում միավորյալ նախադասության՝ ընդհանուր եղանակիչ ունեցող բայական բաղադրյալ ստորոգյալների միջև։ Այստեղ առաջին բաղադրիչ նախադասության ստորոգյալի եղանակիչ բայը հաջորդ բաղադրիչում կամ բաղադրիչներում, բնականաբար, չունի տրոհության եզր, և ստորոգային տրոհումն արտահայտվում է դերբայական ձևերի միջև, ուստի այն կարելի է դիտել որպես մասնակի ստորոգային տրոհում։ Օրինակ՝ «Ուզում էիմ մեզ հետ տանել կամ նորից մի կերպ ետ բերել ավանակին և լուռը բարձրանալ» (ԽԴՒԿ, 266)։

Ծանոթություն։ Երբ ոճական նկատառումով շեշտվում են միավորյալ նախադասության բաղադրյալ ստորոգյալների դերբայական բաղադրիչները, կա՛մ...կա՛մ կրկնադիր շաղկապի առաջին բաղադրիչը առաջադաս բաղադրիչ նախադասության մեջ գործածվում է եղանակիչ բայից հետո, նրա ու անորոշ դերբայի միջև. ինչպես՝ «Վճռել էր կա՛մ մահապարժանաւել, կա՛մ ընկնել ռազմաճակատ» (Ս. Խանշ.)

Երբ միավորյալ նախադասության ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները լինում են հականիշ բառեր, ստորոգային տրոհումն ունենում է հակադրության բնույթ։ Այս դեպքում ամբողջ նախադասությունը ցույց է տալիս միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող ներհակ հատկանիշներից մեկի հնարավոր լինելը, այսինքն՝ բաղադրիչ նախադասությունները կապվում են բացառման հարաբերությամբ. օրինակ՝ «Դարերի ընթացքում զանազան քաղաքական հանգամանքների պատճառով նրանց թիվը կա՛մ ավելանում էր, կա՛մ պակասում էր» (ՐՍ, 173)։

Հակադրությունը համեմատաբար թուլանում է, երբ գործածվում են խոսքային հականշություն կազմող ստորոգյալներ. ինչպես՝ «Կա՛մ նիմար է, կա՛մ շատ խոհեմանկ ու նենգ» (ՀՔ, 1, 384)։ «Կա՛մ թող ներս գան և կա՛մ ճեռանան» (ԽԴՌԿ, 136)։

Միավորյալ նախադասության մեջ ընդհանուր կամ բացարձակ տրոհումը ստորոգային միավորներից (ստորոգյալներ, գերադաս անդամներ) բացի ներառում է բաղադրիչ նախադասությունների նաև մյուս անդամները։ Այնուհանդերձ այն գրեթե միշտ կենտրոնանում է ստորոգային միավորների միջև. ինչպես՝ «Կա՛մ այս ծայրից մի հարվածով մենք նրանցից առաջ կընկնենք, կա՛մ պոչում կմնանք (ԴԴվ, 2, 412)։

Միավորյալ նախադասության մեջ ևս «մասնակի-իրադրական տրոհումը այն երևույթն է, երբ տրոհումը ոչ թե բացարձակ է, այլ միայն տվյալ համադաս նախադասությունում ներկայացվող այս կամ այն երևույթի, գործողության տեսակետից» (17, էջ 596)։ Այս տրոհումը միավորյալ նախադասության մեջ արտահայտվում է մասնավորապես այն դեպքում, երբ նրա բաղադրիչները չեն բացառում իրար, այլ, ընդհակառակն, երկուսի բովանդակություն էլ իրական է, հնարավոր, և «հարցին ընդհանուր ձևով մոտենալու դեպքում դրանք կարելի է կապակցել նույնիսկ միավորական շաղկապներով» (17, էջ 597)։ Օրինակ՝ «Կուլ էր գալիս խըղճալի Օջախի շուրջ օտարի կամ թափառում մենմենակ Մեր հանդերում շարունակ» (ՀՔ, 148)։ «Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում» (Ն. տ., 261)։ Այս օրինակների բոլոր գործողությունները իրական են ու հնարավոր։ Եվ քանի որ տրոհումն այդ նախադասություններում ըմբռնվում է միայն տվյալ պահի ու տվյալ գործողության տեսակետից, ուստի դրանցում ունենք և նաև տարծամանակության հարաբերությունը։

Տրոհական միավորյալ նախադասության մեջ գերիշխողը բացառման հարաբերությունն է, քանի որ այս կառուցվածքի ամենատարբեր իմաստների մեջ հիմնականը ստորոգային հատկանիշներից մեկի իրական, հնարավոր լինելն է և մյուսի բացառումը։ Նման միավորյալ նախադասությունը կապակցվում է մեծ մասամբ կամ-ով և հանդիպում է գործառական տարբեր ոճերում. ինչպես՝ «Մակայն հոգին իր՝ հավիտյան խուլ խոլ պայքարին այդ աշխարհաշեն՝ Քաշվում էր մեջն իր, ինչպես խխունջ, կամ տրորվում էր, ինչպես տաշեղ» (ՆՁԾ, 384)։

Բացառման հարաբերությունն ավելի ընդգծված է արտահայտվում միավորյալ նախադասության բաղադրիչների սկզբում կամ շաղկապի կրկնությամբ։ Ընդսմին, կամ-ի՝ երկու կամ ավելի անգամ կրկնվելը պայմանավորված է տրոհվող միավորների՝ բաղադրիչ նախադասությունների քանակով։ Թվարկվող վերջին կամ-ից առաջ հաճախ գոր-

ծածվում է և միավորիչը՝ կազմելով կա՛մ...և կա՛մ, կա՛մ...կա՛մ...և կամ շաղկապական կապակցությունները։ Այնուհետև. վերջին և կամ-ը, որ սահմանափակում է թվարկվող շարքը, երբեմն ստանում է էլ միավորիչ շաղկապը, որով տրոհական հարաբերությունն ավելի է շեշտվում։ Օրինակներ՝ «նամակը կա՛մ պիտի ավերեր որդու առողջությունը, կա՛մ պիտի դուժեր նրա մահը» (ՐՍ, 461)։ «Պատմությունն անելիս պապս միշտ կա՛մ ջահել օրերին էր երանի տալիս, կա՛մ էլ առանձին շեշտով խոսքը վերջացնում» (ԱՔ, 1, 209)։

Ինչպես տեսնում ենք, միավորյալ նախադասության մեջ կամ-ը, որպես կանոն, կրկնվում է տարրոգյալներից (ու նրանց լրացումներից), իրև բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից, առաջ։ Սակավադեպ էլ, երբ խոսողի (գրողի) նպատակն է լինում շեշտել միավորյալ նախադասության երկրորդ բաղադրիչի հետ առաջին բաղադրիչի տարրոգյալի որևէ լրացման ունեցած բաժանական հարաբերությունը, բաժանականությունը հիմնականում գործածվում է առաջին բաղադրիչ նախադասության տվյալ լրացման և երկրորդ բաղադրիչ նախադասության տարրոգյալի ու նրա լրացումների միջև, և կամ-ը առաջին բաբաղադրիչում գործածվում է տարրոգյալի ու նրա հետադաս լրացման միջև. ինչպես՝ «Զանազան գաղտնի անցքեր, տարբերկրյա ճանապարհներով, իջնում էին ամրոցի բարձրությունից կամ դեպի գետը՝ պաշարման ժամանակ ջուր ստանալու համար, և կամ տանում էին դեպի անտառի խորքերը՝ որսի հետ գաղտնի խորհրդակցություն ունենալու համար» (ՐՍ, 24)։

Հաճախ էլ միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության մեջ կա՛մ...կա՛մ կրկնադիր շաղկապի վերջին բաղադրիչին հավելվում են ընդհանուր կապակցությունը տարբեր նրբերանգներով հարստացնող թե, թե չէ բաղադրիչները՝ կազմելով կա՛մ...կա՛մ թե, կա՛մ...կա՛մ թե չէ բաղադրյալ ձևերը։ Այս դեպքում բացառման հարաբերությունը զգալապես թուլանում է՝ փոխարկվելով թվարկման, հնարավորության, ընտրության երանգներով։ Օրինակ՝ «Երկուսից մինը. կա՛մ կհաղթեմ, կա՛մ թե իմ խմբով խապար կընկնեմ» (ՄԴՄ, 288)։ «Դու կա՛մ պետք է սովորես, կա՛մ թե չէ պետք է աշխատես»։ Ինչպես երևում է, այս օրինակներում տրոհական հարաբերությանը զուգակցում է պայմանների հակական հարաբերության որոշ տարր։ Վերջինս ավելի շատ արտահայտվում է երկրորդ նախադասության մեջ՝ պայմանավորված թե չէ շաղկապական բաղադրիչով։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տրոհական միավորյալ նախադասությունները, բացառումից բացի, արտահայտում են նաև այլ հարաբերություններ (իհարկե, ոչ միևնույն հաճախականությամբ)։

1. Այդ տարբեր իմաստներից ամենից առաջ նշելի է միավորական հարաբերությունը։ Այն դեպքում, երբ քերականական տրոհումը ըմբռնվում է որպես նույնականություն, համասեռություն, բացառման նշանակությունը մեղմանում է և մոտենում միավորական հարաբերությանը, իսկ տրոհական շաղկապը տվյալ կառուցվածքում կարող է փոխարկվել միավորիչ շաղկապով։ Համմտ. «Խաղաղության օրերին նույնպես ժուռնալիստը սովորական հանդիսատես չէ կամ սառը արձանագրող» (ՎՊՀԲԱ, 7)։ «Խաղաղության օրերին նույնպես ժուռնալիստը սովորական հանդիսատես չէ և ոչ էլ սառը արձանագրող»։

Երբ ստորոգյալները լինում են իմաստով մոտ բառեր, քերականական տրոհումը, բաժանումն ըմբռնվում է իբրև նույնականություն. ինչպես՝ «Իրերը տրվում կամ ուղարկվում են Երևանի կենտրոնական հանրախանութի կողմից... (ՍՀ, 25. 11. 1978 թ., 4)։

Միավորական հարաբերության բնույթ ունեցող տրոհական միավորյալ նախադասությունը ավելի հաճախ արտահայտում է թվարկում, որն իր հերթին միատարր չէ և ստանում է տարբեր դրսևորումներ։ Թվարկում արտահայտող միավորյալ նախադասության բոլոր գործողությունները տեղի են ունենում, և դրանցից մեկի ընդունելի լինելը «այլևս չի ենթադրում մյուսի ժխտումը» (38, էջ 162)։ Ընդհակառակն, միավորյալ նախադասության բաղադրիչները փոխադարձաբար լրացնում են իրար, և փոխադարձ բացառման իմաստն էլ փոխարկվում է թվարկման։ Պրոֆ. Վ. Առաքելյանը գրում է. «Կամ շաղկապը արտահայտում է նաև թվարկման հարաբերություն, այսինքն՝ համադասության մեկ կամ մյուս մասի առանձին նախադասությունների մեջ հաղորդված գործողությունները իրար չեն բացառում, այլ թե՛ մեկն է տեղի ունենում, թե՛ մյուսը...» (28, էջ 347)։ Նման միավորյալ նախադասությունները կապակցվում են հիմնականում և կամ-ով, սակավադեպ էլ կամ-ով։ Ընդ որում, և կամ-ով կապակցվելիս տրոհական հարաբերությունը ավելի շատ ձևական է լինում, և, ընդհակառակն, գերակշռում է և-ի միավորական հարաբերության իմաստը. ինչպես՝ «Շատերն էլ խմբվել էին քաղաքից դուրս գտնվող պատնեշների շուրջը և կամ բարձրացել հանդիպակաց բլուրների վրա՝ անցնող զորահանդեսը ավելի լավ դիտելու համար» (ՄԳՄ, 453)։ Այս նախադասությունը հեշտությամբ փոխակերպվում է և (ու)-ով կապակցված տարբերակի. «Շատերն էլ խմբվել էին քաղաքից դուրս գտնվող պատնեշների շուրջը և բարձրացել հանդիպակաց բլուրների վրա...»։ Այս և նախորդ միավորյալ նախադասությունները բովանդակությամբ նույնն են, իսկ քերականական կառուցվածքով՝ տարբեր. առաջինը տրոհական հարաբերությամբ է, իսկ երկրորդը՝ միավորական։

Բվարկում արտահայտող միավորյալ նախադասության բաղադրիչների միջև գործառվող իմաստային կապերից ամենաբնորոշը ժամանակային հարաբերությունն է, որը, ինչպես միշտ, ունենում է երկու դրսևորում՝ համաժամանակություն և տարժամանակություն։ Ավելացնենք, որ ժամանակային հարաբերությունը, իբրև լրացուցիչ իմաստային երանգ, երբեմն առկա է լինում նաև բացառման հարաբերության դեպքում։ Ընդամին, միշտ էլ ավելի հաճախադեպը համաժամանակությունն է, որն արտահայտվում է բայական երեք ժամանակներով էլ։ Բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները դրսևորվում են միևնույն ժամանակաձևով (լիակատար համաժամանակություն) կամ միևնույն ընդհանուր ժամանակի տարբեր ժամանակաձևերով (մասնակի համաժամանակություն), իսկ անվանական ստորոգյալներն ունենում են քերականական միևնույն ժամանակն ունեցող հանգույց. ինչպես՝ «Իրեղեն ապացույցները պահվում են գործում կամ հատուկ ցուցակով հանձնվում են դատարանի՝ իրեղեն ապացույցների պահպանության սենյակ» (ՔԴՕ, 29)։ «Կա՛մ գնացել է, կա՛մ հրաժարվել է գնալուց»։

Տարժամանակությունը տրոհական միավորյալ նախադասության մեջ գործառվում է, երբ նրա բաղադրիչների արտահայտած բոլոր իրողություններն էլ իրական են համարվում։ Ընդ որում, տվյալ դեպքում տարժամանակությունն արտահայտվում է գործողությունների թե՛ հաջորդմամբ և թե՛ նախորդմամբ։ Գործողությունների հաջորդումն արտահայտվում է բայ-ստորոգյալների ինչպես տարբեր, այնպես էլ միևնույն ժամանակով. օրինակ՝ «Այնուհետև կա՛մ միասին ոտքով էինք գնում, կա՛մ հերթով էինք ձի նստում» (ՀԲ, 333)։ Տարժամանակության հարաբերությունն ավելի ակնառու է արտահայտվում, երբ ստորոգյալների գործառույթով հանդես են գալիս միևնույն բայի անցյալի ու ներկայի, ներկայի ու ապառնու ձևերը. ինչպես՝ «Նա կա՛մ հիմա է գալիս, կա՛մ կգա վաղը»։ Տարժամանակությունը սակավադեպ էլ երևան է գալիս նկարագրված գործողությունների նախորդմամբ՝ արտահայտվելով ստորոգյալների գործառույթով հանդես եկող միևնույն բայի ներկայի ու անցյալի կամ ապառնու ու ներկայի ձևերով. «...Մեր գրականության նախապատրաստական շրջանը անցնում է կամ անցել է» (ՎՏ, 2, 275)։

2. Տրոհական միավորյալ նախադասությունը կամ թե չէ, կա՛մ... կա՛մ թե չէ բաղադրյալ շաղկապներով կապակցվելու դեպքում ունենում է պայմանաներհակական հարաբերության որոշ երանգ։ Ընդամին, տվյալ դեպքում նախադասությանն այդ երանգը հաղորդում է նշված շաղկապների թե չէ բաղադրիչը (ՀՄմտ. 10, էջ 446)։ Այսպիսի կառուցվածքներում առաջին բաղադրիչի գործողության չկատարումը դառնում է հաջորդ

բաղադրիչի գործողության կատարման պայմանը. ինչպես՝ «կա՛մ լավ սովորիր, կա՛մ քե չէ դուրս կմնաս ինստիտուտից»:

3. Տրոհական միավորյալ նախադասությունը երբեմն էլ արտահայտում է փոխարինման կամ փոխանորդման հարաբերություն (համմտ. 28, էջ 346): Այս դեպքում երկրորդ բաղադրիչի գործողությունը կարող է փոխարինել նախորդ բաղադրիչի գործողությանը: Այսպիսի միավորյալ նախադասությունները մոտենում են թվարկում արտահայտող կառույցներին՝ կապակցվելով կամ, կա՛մ...կա՛մ, քե շաղկապներով. ինչպես՝ «Երևի կշարունակի հին կյանքը կամ նույնպես կթափառի երկրեր-կիր...» (ՎՊՀԲԱ, 112):

4. Այս կառուցվածքի միավորյալ նախադասությունը երբեմն էլ արտահայտում է մեկնական հարաբերություն, երբ երկրորդ բաղադրիչը ճշտում է առաջին բաղադրիչի բովանդակությունը՝ դառնալով նրա մեկնությունը: Մեկնումը շատ ավելի ակնառու է արտահայտվում, երբ տրոհական շաղկապին հաջորդում են ավելի ճիշտ ասած, ավելի ճիշտ, այլ կերպ ասած, ուրիշ խոսքով, ուրիշ բառերով ասած և այլ արտահայտություններ, որոնք լրացուցիչ երանգներ են հաղորդում ամբողջ նախադասությանը: Պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանը բարդ համադասական նախադասության մեջ գործածվող նման հարաբերությունը դիտում է արտահայտական կամ բնութագրական տրոհում (տե՛ս 17, էջ 397): Հետևելով նրան՝ մենք այս կարգի միավորյալ նախադասություններն անվանում ենք բնութագրական տրոհմամբ միավորյալ նախադասություններ: Օրինակներ՝ «Մի քանի րոպեից հետո այլևս չեմ լինի կամ, այլ խոսքով ասած, կլինեմ գալիք անդորության մեջ» (ՆԴ): Այդ բանը չէի տեսնում կամ, ավելի ճիշտ ասած, չտեսնելուն էի տալիս» (Ն. տ.)[11]: Առաջին նախադասության բաղադրիչները իրենց նշանակությամբ համարյա նույնանում են, և ընդգծված այլ խոսքով ասած կապակցությունը ավելի է շեշտում կամ-ի մեկնական իմաստը, ուստի կամ-ը տվյալ դեպքում ստանում է այսինքն շաղկապի իմաստը, և ամբողջ նախադասությունն էլ կարող է փոխակերպվել այսինքն-ով տարբերակի. «Մի քանի րոպեից հետո այլևս չեմ լինի, այսինքն՝ կլինեմ գալիք անդորության մեջ»:

Մեկնական հարաբերությունն ավելի ընդգծված է արտահայտվում մասնակի շարահարությամբ այն տրոհական միավորյալ նախադասության մեջ, որի առաջին բաղադրիչը, դուրս լինելով տրոհության ծիրից, արտահայտում է ընդհանուր գործողություն, վիճակ, որին հաջորդում են նրա բովանդակությունը մեկնող և տրոհական հարաբերությամբ կապ-

---

11 Օրինակները քաղել ենք «Հայոց լեզու» աշխատությունից (Հ. Բ, Երևան, 1975, էջ 345):

ված բաղադրիչները։ Նման մեկնական հարաբերությունը մասամբ դառնում է նաև ամբողջի ու մասերի հարաբերություն. առաջին բաղադրիչը ներկայացնում է ընդհանուրը, ամբողջը, իսկ տրոհական հարաբերությամբ կապված բաղադրիչները մեկնում են այդ ամբողջի մասնավոր դրսևորումները։ Առաջին բաղադրիչից հետո տրվող դադարը լինում է ավելի տևական, որը գրավոր խոսքում արտահայտվում է միջակետով։ Այսպես՝ «Նա կատարել է իր սպառնալիքը. կա՛մ ծովն է ընկել, կա՛մ պարանով խեղդվել, կա՛մ ռևոլվերով իրեն սպանել» (ԱՇՔ, 236—237) նախադասության մեկնական հարաբերությունը հաստատվում է առաջին բաղադրիչից հետո այսինքն, այն է մեկնական կամ բացահայտման շաղկապների «վերականգնման» հնարավորությամբ. «Նա կատարել է իր սպառնալիքը, այսինքն (այն է)՝ կա՛մ ծովն է ընկել, կա՛մ պարանով խեղդվել, կա՛մ ռևոլվերով իրեն սպանել»։

5. Տրոհական միավորյալ նախադասությունները կարող են ունենալ նաև հարցական ու երկբայական երանգներ՝ կապակցվելով թե շաղկապով, սակավադեպ էլ շարահարությամբ։ Ինչ խոսք, ավելի հաճախադեպը հարցում արտահայտելն է։ Նման միավորյալ նախադասության մեջ բացառման հարաբերությունը ուղիղ համեմատական է հարցական երանգին. որքան ուժեղ է «հարցական առոգանությունը, այնքան ընդգծվում է կապակցվող մասերի փոխադարձ բացառման հարաբերությունը» (38, էջ 166)։ Հարցական միավորյալ նախադասության առաջին բաղադրիչում հարցումը ընկնում է ստորոգյալի, իսկ երկրորդ բաղադրիչում՝ թե-ի վրա։ Այնուհետև. առաջին բաղադրիչի հարցումը ավելի է ընդգծվում շրջուն շարադասությամբ. ինչպես՝ «Ա՞ղց էր դա, թե՞ անեծք» (ԴՈՎ, 2, 288)։

Ավելացնենք նաև, որ «Թե շաղկապով սկսվող համադասության երկրորդ մասը կարող է համադասել իրենից առաջ գտնվող ոչ միայն մի, այլև երկու կամ ավելի նախադասություններ. այս դեպքում համադասության առաջին մասում գտնվող հարցական նախադասությունները թվարկվում են առանց շաղկապի, իսկ հաջորդ թե շաղկապով նախադասությունը հավասար կերպով բացառում է երկուսն էլ և ավարտում թվարկումը» (28, էջ 349). ինչպես՝ «Կգնա՞ արդյոք հայրենիք, կհանդիպի՞ հարազատներին, թե՞ կտառապի կարոտից»։ Նման միավորյալ նախադասությունը լինում է նաև միակազմ. ինչպես՝ «Հանդիպե՞լ նրան, պատմե՞լ դեպքի մասին, թե՞ առայժմ հետաձգել հանդիպումը»։

Հաճախ հարցական երանգ է ունենում միավորյալ նախադասության միայն առաջին բաղադրիչը. ինչպես՝ «Նրան օգնե՞լ, թե թողնել անօգնական»։ Նման հարցումը կարող է ընկնել նաև որևէ լրացման վրա։ Այս դեպքում հարցումը երկու բաղադրիչներում էլ թուլանում է. ինչպես՝

«Ալադին Միսակին ուղարկեմ մշեցի Տիգրանին օգնության՝ Հեղինեին երգո՞վ փախցնելու վան, թե նրան առաքեմ Արտոնք» (ԽԴՌԿ, 272)։

Երկբայական եղանակավորող բառերի գործածության դեպքում թե-ով կապակցված միավորյալ նախադասությունն ստանում է երկբայության երանգ։ Ընդ որում, այդ բառերը առաջին բաղադրիչում գործածվելու դեպքում երկբայությունը տարածվում է ամբողջ նախադասության, իսկ երկրորդ բաղադրիչում արտահայտվելու դեպքում՝ միայն այդ բաղադրիչի վրա։ Համմտ. «Վարդանն ու Դավիթը երևի կօգնեն մեզ, թե չեն օգնի»։ «Վարդանն ու Դավիթը կօգնեն մեզ, թե երևի չեն օգնի»։

Հաճախ միևնույն միավորյալ նախադասության երկու բաղադրիչներում էլ միաժամանակ գործածվում են երկբայական եղանակավորող բառեր՝ ավելի շեշտելով երկբայությունը։ Այսպիսի կառուցվածքները բաժանում ենք երկու ենթախմբի.

ա) *Միատարր երկբայությամբ միավորյալ նախադասություններ, որոնց բոլոր բաղադրիչներում էլ գործածվում են երկբայության միևնույն իմաստային երանգն արտահայտող եղանակավորող բառեր. ինչպես՝ «...Մի՞թե ուզում է Շուշանիկի հանդուգն երևակայության վրա սառը ջուր ածել կամ զո՞ւցե վճռել է ազատություն տալ իր եղբորը» (ԱՇՔ, 268—269)։ Ընդգծված երկու բառերն էլ երկբայական-հարցական եղանակավորող բառեր են։*

բ) *Անմիատարր երկբայությամբ միավորյալ նախադասություններ, որոնցում զուգակցում են երկբայության տարբեր ձևեր՝ հարցման երկբայությունն ու հավանականության երկբայությունը և այլն. ինչպես՝ «Երևի կպատմի դեպքի մասին կամ չլինի՞ թե որոշել է ամեն ինչ թաքցնել»։*

Ավելացնենք, որ հայ (ոչ միայն հայ) քերականագիտության մեջ տրոհական հարաբերությամբ բարդ համադասական նախադասությունները հաճախ չեն սահմանափակվում վերը նշված շաղկապներով ու շարահարությամբ կապակցված կառուցվածքներով։ Տրոհական շաղկապներ են դիտվում նաև այլ բառեր, և, հետևաբար, դրանցով կազմված նախադասություններն էլ՝ տրոհական հարաբերությամբ բարդ համադասական նախադասություններ։ Այսպես՝ Հար. Թումանյանը տրոհական շաղկապ է դիտում նաև մերթ...մերթ-ը (տե՛ս 46, էջ 51), պրոֆ. Վ. Առաքելյանն ու դոցենտ. Գ. Գարեգինյանը՝ մերթ...մերթ-ն ու մեկ...մեկ-ը (տե՛ս 23, էջ 352—353. 38, էջ 168—171)։ Ժամանակակից ռուս քերականագիտության մեջ նույնպես մերթ...մերթ-ը և մեկ...մեկ-ը դիտվում են տրոհական շաղկապներ (տե՛ս 123, էջ 289, 432. 128, էջ 142—143. 164, էջ 324. 134, էջ 243—246)։

Մենք համամիտ չենք այս բառերը տրոհական շաղկապներ, իսկ դրանցով կազմված (ու իրենց կազմում շաղկապներ չունեցող) նախադասությունները տրոհական հարաբերությամբ բարդ համադասական (այդ թվում և միավորյալ) նախադասություններ դիտելու կարծիքին։ Այդ զուգադիր ձևերը, մեր կարծիքով, ընդհանրապես շաղկապներ չեն և ոչ էլ նույնիսկ շաղկապական բառեր։ Ի տարբերություն բուն շաղկապների, դրանց մեջ զգալի չափով ուժեղ է նյութական իմաստը։ Դրանք երբեմն...երբեմն զուգադրության հետ կազմում են բառական համանիշների եռանդամ շարք՝ մեկ...մեկ—մերթ...մերթ—երբեմն...երբեմն։ Այս զուգադիր կապակցությունները միավորյալ (և ընդհանրապես բարդ համադասական) նախադասության բաղադրիչների կապակցմանը նպաստող օժանդակ բառաքերականական միջոցներ են, որոնց բաղադրիչները դրծածվում են զուգորդվող եղրերի սկզբում՝ ավելի սերտ դարձնելով կապակցվող միավորների կապը։ Հետևաբար դրանցով կազմված այս միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասությունները, որոնք շաղկապով կապակցված չեն, ունեն շարահարական կառուցվածք։ Արդ՝ իսկ շարահյուսական ի՞նչ հարաբերությամբ են կապված դրանք՝ տրոհակա՞ն, թե՞ այլ հարաբերությամբ։ Այստեղ տրոհական հարաբերության մասին խոսք լինել չի կարող, որովհետև այդ նախադասություններում բացակայում է այդ հարաբերության բուն էությունը՝ արտահայտված երևույթներից մեկի հնարավոր լինելը և մյուսի բացառումը ցույց տալը։ Տվյալ դեպքում բաղադրիչ նախադասությունների գործողությունները կատարվում են որոշակի ոչ կանոնավոր ընդհատումներով։ Ժամանակային հաջորդականության ընդգծված արտահայտումը ևս հաստատում է նշված զուգադիր ձևերով կազմված նախադասությունների տարբեր լինելը տրոհական կապակցությունից։ Ահավասիկ, մեկ...մեկ, մերթ...մերթ ու երբեմն...երբեմն զուգադիր ձևերով կազմված շարահարական կառուցվածքի միավորյալ նախադասությունները գնահատելիս պետք է հանդես բերել տարբերակված մոտեցում, այն է՝ դրանք պետք է դիտել ա) կա՛մ իբրև հանդիպադրական և բ) կա՛մ իբրև միավորական հարաբերությամբ միավորյալ նախադասություններ։ Ընդ որում, այս դեպքում կարևոր նշանակություն են ստանում ստորոգյալների կամ բայական գերադաս անդամների բառիմաստները և դրանց ներքին-մտային հարաբերությունը։ Շաղկապի (միավորիչ, հանդիպադրական) առկայության դեպքում երկվությունն արդեն վերանում է։

Առաջին. քննության առարկա զուգադիր ձևերով կազմված միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության բաղադրիչների ստորոգյալները ավելի հաճախ լինում են բառային կամ խոսքային հականիշներ։ Այս դեպքում նախադասությունը պետք է դիտել իբրև հանդիպա-

դրական հարաբերությամբ կառույց, որովհետև այս ստորոգյալների արտահայտած գործողությունները, իբրև միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հակադիր հատկանիշներ, կարող են ամենից առաջ հանդիպադրվել: Այնուհետև. գործողությունների՝ տարբեր ժամանակներում կատարվելն էլ ինքնին դառնում է հակադրություն, այսինքն՝ ստորոգվող հատկանիշների հակադրությունն ունենում է նաև ժամանակային բնույթ: Օրինակներ՝ «Խեղանդամը երբեմն երջում էր տարօրինակ, բարձրաձայն, երբեմն լաց լինում» (ՍԽՄՄ, 3, 197): «Դու մերթ գերվել ես, մերթ գերել նրան»: «Նկարագրելով իր անել վիճակը՝ մերթ նախատում էր, մերթ աղերսում օգնել իրեն այս կամ այն կերպ» (ԱՇՔ, 221): «Մերթ անհայտանում էր նա, մերթ երևան էր գալիս ավելի ահարկու կերպարանքով» (ՐՍ, 19): «Հայկն ու Վարդանը մեկ ուրախ են, մեկ՝ տխուր»:

Այս նախադասությունները հանդիպադրական հարաբերությամբ շարահարական միավորյալ նախադասություններ են՝ համազոր նույն նախադասությունների իսկ շաղկապով տարբերակին: Դրանում համոզվելու համար քննենք դրանցից առաջինը, ուր միևնույն առարկային վերագրվում են տարբեր, հակադիր հատկանիշներ (քրջջալ—լաց լինել), որոնք տվյալ դեպքում կարող են միմիայն հանդիպադրվել: Ներհակության արտահայտմանը նպաստում է նաև երբեմն...երբեմն զուգադրությունը, որը բաղադրիչ նախադասությունների ընդհանուր հակադրությանը հավելում է ժամանակային հակադրությունը: Այդ նախադասությունը շաղկապավոր կառուցվածքի փոխարինվելու դեպքում ներհակությունն ավելի որոշակի է արտահայտվում. ինչպես՝ «Խեղանդամը երբեմն քրջջում էր տարօրինակ, բարձրաձայն, իսկ երբեմն լաց (էր) լինում»:

Նմանապես հաջորդ նախադասությունների ստորոգյալները կազմում են բառական (անհայտանում էր—երևան էր գալիս, ուրախ էր—տխուր էր), խոսքային (նախատում էր—աղերսում էր), քերականական (գերել ես—գերվել ես) հականշություն, իբրև հակադիր հասկացությունների լեզվական նշանակումներ: Ուստի այդ նախադասությունների շաղկապավոր կառուցվածքը կլինի միայն իսկ-ոչ ձևը:

Ծանոթություն: Մեկ...մեկ, մերթ...մերթ, երբեմն...երբեմն զուգադիր կապակցությունների բաղադրիչները երկուսից ավել կրկնվելու դեպքում հակադրումը բաւանում է և հակվում դեպի պարզ թվարկումը. ինչպես՝ «Անտառապահի որսան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ Դիլան դայուն, մոռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բևռանը բաց՝ հուզմունքից հորանջում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թփրտում էր միրհավը» (ԱԲ, 1, 80):

Ավելացնենք նաև, որ մեկ...մեկ, մերթ...մերթ, երբեմն...երբեմն զուգադիր ձևերով կազմված նախադասությունների՝ ավելի շատ հանդի-

պադրական հարաբերությամբ լինելն է վկայում նաև այն հանգամանքը, որ դրանք հաճախ կապակցված են լինում իսկ-ով (ինչպես՝ «Հայկը մեկ մեզ մոտ էր գալիս, իսկ մեկ էլ լինում էր իր բարեկամներից մեկի տանը»), իսկ շարահարությամբ կապված լինելու դեպքում հեշտությամբ կազմվում է նրանց իսկ-ով տարբերակը (համմտ. «Մերթ դաժան ես եղել, Մերթ՝ մեղմ ու բարի» (ՊՍ, 1, 156)→Մերթ դաժան ես եղել, իսկ մերթ՝ մեղմ ու բարի»), մինչդեռ կամ-ով կազմված տարբերակով փոխարկելիությունը նախադասության իմաստի պահպանման սահմաններում հիմնականում բացառվում է։

Երկրորդ. մեկ...մեկ, մերթ...մերթ, երբեմն...երբեմն զուգադիր ձևերով կազմված միավորյալ (և առհասարակ համադասական) նախադասությունները ոչ հակադիր նշանակություն ունեցող ստորոգյալներով բաղադրված լինելու դեպքում ավելի շատ մոտենում են միավորական հարաբերությամբ կապակցությանը։ Այս դեպքում արդեն բաղադրիչ նախադասությունների միջև գործածվող ոչ կանոնավոր տարժամանակությունն իբրև հակադրություն վերանում է՝ փոխարինվելով պարզ թվարկման։ Օրինակներ՝ «Նա մերթ հազում էր, մերթ ռնգում...» (ԷՋԴՀ, 34)։ «Իսկ Շուշանը իր լաթերի վրա տանջանքով մերթ պպզում, մերթ բավալգոռ է գալիս վիրավորված անասունի պես...» (ՆԴ, 94)։ Այս նախադասությունների բաղադրիչները ավելի շատ միավորական հարաբերությամբ են կապված, և դրանք շաղկապավոր ձևի փոխակերպվելու դեպքում դուրինը և (ու)-ով տարբերակն է, քան իսկ-ով ձևը (կամ-ով կապակցվելու մասին էլ խոսք լինել չի կարող)։ Տվյալ դեպքում միավորական հարաբերությանը նպաստում է բայ-ստորոգյալների բառիմաստային մոտիկությունը։ Համմտ. «Նա մերթ հազում էր և մերթ ռնգում»։ Պատահական չէ, որ ստորոգյալները իմաստով մոտ լինելու դեպքում (հատկապես երբ դրանք ցույց են տալիս մի ընդհանուր գործողության տարբեր աստիճանները) բաղադրիչ նախադասությունները կարող են կապակցվել և-ով՝ կազմելով մերթ...և մերթ, մեկ...և մեկ, երբեմն...և երբեմն կառուցվածքները. ինչպես՝ «Նա մերթ քերում էր խորաձորի ժայռերը և մերթ բարձրանում թմբերի վրա» (ՄԳՄ, 329)։

Այսպիսով, մեկ...մեկ, մերթ...մերթ (նաև՝ երբեմն...երբեմն) զուգադիր կապակցությունները տրոհական շաղկապներ չեն, և դրանցով կազմված միավորյալ (և առհասարակ համադասական) նախադասությունները մեծ մասամբ հանդիպադրական, մասամբ էլ միավորական հարաբերությամբ կառույցներ են։

Այժմ երկու խոսք տրոհական հարաբերությամբ միավորյալ նախադասության կետադրության մասին։ Գործառական գրեթե բոլոր ոճերում հանդիպող շարահյուսական այս կառույցի կետադրության հարցում չկա

միօրինակություն։ Ավելին. առկա են կամայական մոտեցումներ. նույն կառուցվածքը ոմանք տրոհում են (ստորակետով), իսկ ուրիշները՝ ոչ։ Հայոց լեզվի տեսական ու մեթոդական աշխատություններում էլ, ուր տրոհական միավորյալ նախադասության կետադրությանը քիչ է անդրադարձվել, բացակայում է միասնական ըմբռնումը։ Միօրինակության հասնելու համար պետք է հանդես բերել միասնական մոտեցում։ Տրոհական միավորյալ նախադասության կետադրության միօրինականացմանը, կանոնարկմանը նպաստելու նպատակով առաջարկում ենք.

ա) կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ, կա՛մ...և կա՛մ, կա՛մ...և կա՛մ էլ շաղկապներով ու շաղկապական կապակցություններով կազմված միավորյալ նախադասությունները չտրոհել։ Տվյալ դեպքում ամենաէֆեկտավորվողը կամ-ով կապակցված միավորյալ նախադասության կետադրության հարցն է։ Այս դեպքում կամ-ից առաջ ստորակետ դնելը չի արդարացվում։ Նախ՝ կետադրությունը պայմանավորված է ամենից առաջ հնչերանգով։ Ստորակետը վերհնչութային հատկանիշներից կցույթի դադարային դրսևորման նշանակումներից մեկն է։ Ահավասիկ, կամ-ով կապակցված միավորյալ նախադասությունը չի արտասանվում «ստորակետի հնչերանգով»։ Նրա բաղադրիչների միջև տրվող դադարը շատ անշան է և համարյա հավասար է և (ու)-ով կազմված միավորյալ նախադասության բաղադրիչների միջև տրվող դադարին։ Սա վերաբերում է նաև և կամ, կամ թե, կամ թե չէ, կա՛մ...և կա՛մ, կա՛մ...և կա՛մ էլ շաղկապական կապակցություններով կազմված միավորյալ նախադասություններին։

Երկրորդ՝ այս շաղկապներով կապակցված միավորյալ նախադասության տրոհումը չի արդարացվում նաև իբրև ընդհանուր ենթակայով (կամ ենթականերով) նախադասության։

Այսպիսով, նշված շաղկապներով կապակցված միավորյալ նախադասության ստորակետով տրոհումը չի հիմնավորվում[12]։

բ) Ստորակետով տրոհել թե, կա՛մ...կա՛մ (կամ...կամ էլ) շաղկապներով ու շարահարությամբ կապակցված միավորյալ նախադասությունները, որոնք արտասանվում են «ստորակետի հնչերանգով»։ Թե-ով կապակցված միավորյալ նախադասության բաղադրիչների միջև տրվող դադարը տեսական է, և, հետևաբար, նրանում ստորակետի գործածությունն էլ՝ բնական։ Նույնը վերաբերում է նաև շարահարական կառուցվածքի տրոհական միավորյալ նախադասությանը։ Կա՛մ...կա՛մ (կա՛մ...

12 Մեր ձեռքի տակ եղած բնագրային այս կարգի օրինակների մի մասը եղել է տրոհված, իսկ մյուս մասը՝ առանց տրոհման։ Կանոնարկման նպատակով մեր շարադրանքում դրանք ներկայացրել ենք առանց տրոհման։

կա՛մ էլ) կրկնադիր շաղկապով կազմված միավորյալ նախադասության բաղադրիչներից յուրաքանչյուրը արտասանվում է շեշտված, և դրանով իսկ ընդգծվում են նաև այդ բաղադրիչների միջև գործառվող բաժանականությունն ու դադարը, ուստի տվյալ դեպքում ստորակետով տրոհումը դառնում է անհրաժեշտ։

Ինչ վերաբերում է տրոհական հարաբերությամբ տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասություններին, դրանք միշտ էլ պետք է տրոհել ստորակետով՝ պայմանավորված տվյալ դեպքում տրոհական հարաբերությունը նաև ենթակաների միջև գործառվելու հետևանքով բաղադրիչ նախադասությունների միջև տրվող դադարը տեսական լինելու, ինչպես նաև և-ով կապակցված տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասության համաբանությամբ տրոհվելու հանգամանքով։ Համմտ. «Վարդանը խոստացած գիրքը կհանձնի քեղ, կամ դու ինքդ կվերցնես նրանից»։ Լուսինեն կատարեց Կոմիտասի ստեղծագործություններից, և ներկաները հաղորդակից եղան մեծ երաժշտի արվեստին»։

Մեկնական հարաբերություն

Մեկնական հարաբերությամբ միավորյալ նախադասության վերջադաս բաղադրիչը (բաղադրիչները) մեկնաբանում կամ մասնավորում է նախադաս բաղադրիչի (բաղադրիչների) բովանդակությունը։ *Այս կառույցն արտահայտում է նույնական իրողությունները որպես միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հատկանիշներ։*

Մեկնական միավորյալ նախադասության բաղադրիչների միջև մասամբ առկա է լինում լրացում-լրացյալի հարաբերություն։ Որքանով երկրորդ (կամ հաջորդ) բաղադրիչը մեկնաբանում է առաջինի իմաստը, այդքանով այն լրացական կապի մեջ է նախադաս բաղադրիչի հետ, և ամբողջ նախադասությունն էլ աղերսվում է ստորադասական կապակցությանը։ Սակայն այդ լրացականությունը հեռու է բուն ստորադասական հարաբերություն լինելուց։ Նախ՝ ստորադասական կապակցության մեջ գերադաս նախադասության լրացյալ անդամը կանխորոշում է ստորադաս նախադասության բնույթը, որը քննության առարկա կառույցին (և առհասարակ մեկնական հարաբերությամբ բարդ նախադասությանը) բնորոշ չէ։ Երկրորդ՝ այս նախադասությունը ստորադասական կապակցությունից տարբերվում է նաև բաղադրիչների կապակցման բառական եղանակի գործառությամբ, այն է՝ ստորադասական շաղկապները կապակցում են միայն բարդ նախադասության բաղադրիչներ (մակաբերա-

կանոնները՝ նաև ինքնուրույն նախադասություններ), իսկ մեկնական կամ բացահայտման շաղկապները (այսինքն, այն է)՝ և՛ նախադասության անդամներ, և՛ բարդ նախադասության բաղադրիչներ, և՛ ինքնուրույն նախադասություններ, մի հատկանիշ, որ համադասական շաղկապների գործառական յուրահատկությունն է։ Երրորդ՝ մեկնական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչները մյուս համադասական նախադասությունների նման պակաս սերտությամբ են կապված։ Եվ, վերջապես, այս նախադասության հնչերանգը շատ ավելի նման է համադասական նախադասության հնչերանգին։ Ահա այս բոլոր հատկանիշների հաշվառումով էլ մենք մեկնական հարաբերությամբ ընդհանուր ենթակայով բարդ նախադասությունը դիտում ենք համադասական, տվյալ դեպքում՝ միավորյալ նախադասություն։

Մեկնական միավորյալ նախադասությունն ունի կառուցվածքային ու իմաստային իր առանձնահատկությունները։ Նրա բաղադրիչները կապակցվում են այսինքն (քն), այն է (քն), նշանակում է շաղկապներով ու կապակցություններով, որոնք չունեն գործածության միևնույն հաճախականությունը. այսինքն շաղկապը համագործածական է, այն է-ն հիմնականում գրավոր խոսքում է հանդես գալիս, իսկ նշանակում է ձևը մեկնական շաղկապի իմաստով հազվադեպ է հանդիպում։

Միավորյալ նախադասության մեջ մեկնաբանող, ճշգրտող բաղադրիչը, որպես կանոն, մեծ մասամբ լինում է ետադաս (հաճախ էլ պարզաբանումն արտահայտվում է երկու կամ ավելի բաղադրիչներով)։ Բաղադրիչ նախադասությունների շարադասությունը պայմանավորում է ամբողջ կառույցի հնչերանգային յուրահատկությունը. առաջին բաղադրիչից հետո ձայնի տոնը իջնում է, և որոշ դադար է տրվում, որը նախապատրաստում է անցումը մեկնաբանող բաղադրիչի (բաղադրիչների) արտասանությանը։ Օրինակ՝ «Պետք է ապրել օրվա պահանջներով, այսինքն՝ մոռացության տրվել» (ԼՏԱԿ, 4)։

Միավորյալ նախադասության մեջ գործառվող մեկնական հարաբերությունը միատարր չէ և ունի իմաստային տարբեր երանգներ։ Ամենից առաջ այն ունենում է ճշգրտող, պարզաբանող բնույթ, երբ առաջին բաղադրիչ նախադասությունն արտահայտում է ընդհանուր իրողություն, որը պարզաբանվում է հաջորդ բաղադրիչով կամ բաղադրիչներով. ինչպես՝ «Արամը անբարեխիղճ աշակերտ է, այսինքն՝ հաճախակի է բացակայում դասերից, չի կատարում տնային աշխատանքները, լավ չի նախապատրաստվում դասերին»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ պարզաբանումը մասամբ կրում է նաև ընդհանուրի ու մասերի հարաբերության բնույթ։

Երբեմն էլ միավորյալ նախադասության առաջին բաղադրիչի բովանդակությունը ըմբռնվում է որպես անհասկանալի կամ պակաս հասկանալի, և վերջին բաղադրիչը մեկնում է այն. ինչպես՝ «Ես երկար անալիզ եմ արել, այսինքն՝ վերլուծել եմ երևույթները և եկել եմ այն եզրակացության...» (ՆՋՀ, 478)։ Այս դեպքում այսինքն-ի իմաստով գործածվում է նաև նշանակում է կապակցությունը. ինչպես՝ «Ես այլ եմ հիմա, այլևս այն չեմ- նշանակում է՝ նոր հոն եմ մտել» (ՆՋԲ, 375)։

Մեկնական հարաբերությունը դրսևորվում է նաև մասնավորման ձևով. ինչպես՝ «Նա ցանկանում է մտնել արվեստի աշխարհ, այսինքն՝ երաժիշտ դառնալ»։

Միավորյալ նախադասության մեջ մեկնական հարաբերությունը երբեմն էլ ստանում է ընդհանրացման բնույթ, երբ վերջին բաղադրիչն ունենում է հետևության նրբերանգ. ինչպես՝ «Նա խուսափում է երեխաներին քերականական կանոնները սերտել տալուց և ավելի շատ գործնական աշխատանքներ է կատարում, այսինքն՝ մեծ ուշադրություն է դարձնում մայրենի լեզվից աշակերտների գործնական հմտությունների զարգացմանը»։

Մեկնական միավորյալ նախադասության ընորոշ կիրառություններից մեկն էլ ամբողջի ու մասերի հարաբերության դրսևորումն է։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը, որպես կանոն, լինում է բազմաբաղադրիչ։ Ընդ որում, առաջին բաղադրիչն արտահայտում է առարկայի ընդհանուր հատկանիշը (գործողություն, եղելություն, վիճակ և այլն), իսկ հաջորդ բաղադրիչները՝ այդ հատկանշի մասնավոր դրսևորումները, այսինքն՝ ամբողջի մասերը։ Նման միավորյալ նախադասությունը կապակցվում է թե՛ շաղկապով և թե՛ շարահարությամբ։ Օրինակ՝ «Հայկը իրականացրեց տարիների ընթացքում փայփայած երազանքը. համալսարանն ավարտեց և հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում անցավ աշխատանքի»։ Այստեղ ամբողջի ու մասերի հարաբերությունը կարող է արտահայտվել նաև շրջված ձևով։ Այս դեպքում ընդհանուր հատկանիշը ցույց տվող բաղադրիչը հաջորդում է նույն հատկանշի կոնկրետ դրսևորումներն արտահայտող բաղադրիչներին, և նախադասության շաղկապավոր կապակցումը դառնում է պարտադիր։ Համմտ. «Հայկը համալսարանն ավարտեց և հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում անցավ աշխատանքի, այսինքն՝ իրականացրեց տարիների ընթացքում փայփայած երազանքը»։ Բերենք մեկ այլ օրինակ՝ «Վահրամն ու Գևորգը Երևանում բնակարան են ստացել և աշխատանքի ընդունվել մեքենաշինական գործարանում, այսինքն՝ դարձել են քաղաքաբնակներ»։

Մեկնական միավորյալ նախադասությունը սակավադեպ էլ դրսևոր-

վում է հավելական (հարակցական) կապակցության ձևով. ինչպես՝ «իսկ ամբոխը գիտեր իր բանը. սպասում էր վերջին գործողությանը» (ԼԳե, 149)։

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Յուրաքանչյուր երկբաղադրիչ միավորյալ նախադասություն, որպես կանոն, արտահայտում է համադասական հարաբերության քննված տարատեսակներից մեկը, թեպետ չի բացառվում դրա գոյությունը նաև բազմաբաղադրիչ կառույցում։ Ուսումնասիրությունները հավաստում են միևնույն բազմաբաղադրիչ միավորյալ նախադասության մեջ երկու կամ ավելի հարաբերությունների համատեղման հնարավորությունը, որը բնորոշ է նաև տարբեր ենթականերով բարդ համադասական նախադասությանը (տե՛ս 17, էջ 600—602)։ Միավորյալ նախադասության մեջ տարբեր հարաբերությունների համատեղումը իրագործում է ոչ միանման՝ պայմանավորված այդ հարաբերությունների դրսևորման հաճախականությամբ, զուգակցման առանձնահատկություններով և, որ առավել կարևոր է, նրանով, որ այդ հարաբերությունները լինում են հավասարարժեք ու անհավասարարժեք։ Ըստ այդմ էլ տարբեր հարաբերություններ համատեղող միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) հավասարարժեք հարաբերությունների համատեղմամբ նախադասություններ և բ) անհավասարարժեք հարաբերությունների համատեղմամբ նախադասություններ, որոնք դրսևորում են կառուցվածքային ու իմաստային տարբեր առանձնահատկություններ։

Քննենք միավորյալ նախադասության այս տարատեսակներն առանձին-առանձին։

Ա. Հավասարարժեք հարաբերությունների համատեղմամբ միավորյալ նախադասություններ

Ավելի հաճախ միավորյալ նախադասության մեջ համատեղված հարաբերությունները լինում են հավասարարժեք։ Սա գործառվում է, երբ զուգակցված շարահյուսական հարաբերությունները և դրանցով պայմանավորված իմաստներն ու իմաստային նրբերանգները հաղորդակցման գործընթացում հավասար նշանակություն են ստանում։ Հավասարարժեքությունը տվյալ դեպքում առկա է լինում հարաբերությունների ոչ թե ընդգրկման, այլ գործառական առումով։ Հարկ է նշել, որ ընդգրկման

տեսակետից միավորյալ նախադասության մեջ տարբեր հարաբերությունների համատեղումը միատարր չէ. դրանք առկա են լինում թե՛ հավասարաչափ և թե՛ անհավասարաչափ։ Դրան համապատասխան էլ հավասարժեք հարաբերությունների համատեղմամբ միավորյալ նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի.

1. Տարբեր հարաբերություններ հավասարաչափ համատեղող միավորյալ նախադասություններ. *Այս դեպքում միավորյալ կառույցում շարահյուսական հարաբերությունները արտահայտվում են հավասար ընդգրկումով՝ աստիճանական կամ խառը հաջորդականությամբ։ Ըստ այդմ էլ միավորյալ նախադասությունները հանդես են բերում տարբեր յուրահատկություններ՝ բաժանվելով երկու ենթախմբի՝ ա)* հարաբերությունների աստիճանական հաջորդմամբ նախադասություններ և *բ)* հարաբերությունների խառը հաջորդմամբ նախադասություններ:

Միավորյալ նախադասության մեջ հավասարարժեք հարաբերությունների աստիճանական հաջորդումը ավելի հաճախադեպ է։ Այս դեպքում առաջին բաղադրիչը երկրորդի հետ կապվում է մի հարաբերությամբ, երկրորդը երրորդի հետ՝ ուրիշ հարաբերությամբ և այլն։ Նման նախադասությունները համատեղում են՝

ա) Միավորական *ու* ևերհակական *հարաբերությունները, որպիսի դեպքում երկրորդը նույնպես միատարր չէ՝ պայմանավորված ներհակական հարաբերության անմիատարրությամբ։ Ըստ այդ էլ տարբերակվում են* միավորական հարաբերություն+հակասման հարաբերություն, միավորական հարաբերություն+հանդիպադրական հարաբերություն, միավորական հարաբերություն+ժխտման հարաբերություն *կառուցվածքները. ինչպես՝ «Մի վայրկյան Արշակը նայեց Փառանձեմի բռնկված դեմքին և ցանկություն զգաց իր հիացումն հայտնել նրան՝ այդ խիզախության համար, բայց իսկույն էլ զգուշացավ» (ՍՋՀԲ, 197)։ «Բայց այստեղից էլ սոիպվեց հեռանալ և ըերեկները դուրսն էր անցկացնում, իսկ գիշերները քնում էր մի տրակտիրում՝ բիլիարդի սեղանի տակ» (ՎՏ, 2, 232)։ «...մի՛ վրդովվիր. այդպիսով եղածից ոչինչ չես փոխի, այլ միայն քեզ կտանջես»*[31] *(ՄԳՄ, 43)։*

բ) Միավորական *ու* տրոհական *հարաբերությունները. ինչպես՝ «Նա երբեմն մոտենում է մեզ, առաջարկում է ծխել կամ ջուր է հյուրասիրում» (ՎՊՀԲԱ, 167)։*

գ) Ընդհանուր ևերհակական հարաբերության մասնավոր դրսեորումները. *ինչպես՝ «Իմ հա՛յ ժողովուրդ, դու փորր ես եղել, Աղբյո՛ւր ես եղել*

---

13 Նախադասությունը մասամբ փոփոխել ենք։

և ո՛չ թե հեղեղ» (ՊՍ, 1, 101)։ Այստեղ համակցում են հակասումն ու ժխտումը։

Ինչպես նշեցինք, միավորյալ նախադասության մեջ շարահյուսական հարաբերությունները երբեմն էլ հանդես են գալիս խառը հաջորդմամբ։ Այսպես, օրինակ. «Արդար մարդը սրբերի հետ շրջում է դրախտում, ուտում է շատ համեղ և լքնաղ պտուղները, խմում է անմահական աղբյուրներից, բայց բնավ համ չի առնում» (ԱՒ, 3, 247) նախադասության առաջին երեք բաղադրիչները կապված են միավորական հարաբերությամբ, իսկ վերջին (4-րդ) բաղադրիչը հակասման ներհակությամբ առանձին-առանձին հակադրվում է 2-րդ և 3-րդ բաղադրիչ նախադասություններին։ Հետևաբար այս կառուցում միավորական ու հակասման հարաբերություններն ունեն հավասար ընդգրկում, գործածվում են հավասար թվով (3-ական) բաղադրիչ նախադասությունների մեջ, միայն թե արտահայտվում են ոչ աստիճանական հաջորդմամբ։ Ավելացնենք նաև, որ վերջին բաղադրիչ նախադասությունը, հակադրվելով նախորդ երկու բաղադրիչներին, սահմանափակում է թվարկումը՝ ստեղծելով փակ կառուցվածք։

2. Տարբեր հարաբերությունների անհավասարաչափ համատեղմամբ միավորյալ նախադասություններ. Միավորյալ նախադասության մեջ համատեղված հարաբերությունները երբեմն էլ լինում են անհավասարաչափ. նրանցից մեկը (կամ երկուսը) ընդգրկման տեսակետից գերակշռում է։ Նման նախադասությունը հատկանշվում է նաև կառուցվածքային յուրահատկությամբ. այն կազմված է լինում չորս կամ ավելի բաղադրիչներից։ Այստեղ հարաբերություններից մեկի գերակշռումը պետք է հասկանալ երկակի նշանակությամբ՝ ա) երբ տվյալ հարաբերությունն ավելի շատ բաղադրիչների միջև է գործածվում, բ) երբ այն գերակշռում է ներքին-տրամաբանական ընկալմամբ։

Միավորյալ նախադասության համատեղած հարաբերությունների հավասարարժեք չլինելը պայմանավորված է լինում ամենից առաջ բաղադրիչ նախադասությունների քանակով։ Տարբեր հարաբերությունների հետ կազմած համակցությունների մեջ հիմնականում գերակշռում է միավորական հարաբերությունը, որի հետ հանդես են գալիս տրոհական ու ներհակական (ներառյալ հանդիպադրական, ժխտման, հակասման) հարաբերությունները՝ կազմելով միավորական հարաբերություն + միավորական հարաբերություն + տրոհական հարաբերություն, միավորական հարաբերություն + միավորական հարաբերություն + հանդիպադրական հարաբերություն և այլ կազապարները. ինչպես՝ «Վերան երբեմն շրջխոցով բացում էր իմ սենյակի դուռը, քարշ էր տալիս ինձ հյուրասենյակ, ստիպում էր պարել իր որևէ ընկերուհու հետ կամ ինքն էր ինձ

պարի հրավիրում» (ՀՔ, 1, 292—293)։ «Ճշտախոս էին աստվածները հին, ճշտախոս էին՝ երեխայի պես. Մարդկանց մարդ էին նրանք անվանում, իսկ իրենց՝ աստվածք» (ՊՍ, 1, 246)։

Միավորական հարաբերության գերակշռումը երբեմն էլ արտահայտվում է ընդհիջարկված ձևով. նրանով կապվում են առաջին և վերջին դույզ բաղադրիչները, իսկ միջադաս բաղադրիչները միավորվում են այլ հարաբերությամբ։ Չի բացառվում նաև հարաբերությունների «ներթափանցվածք», ոչ աստիճանական հաջորդմամբ դրսևորումը։ Օրինակներ՝ «Պատրիկյանը ձեռքով հուսահատական մի շարժում արավ, գլխարկը ոչ թե ծածկեց, այլ ծածկելիս ուղղակի խփեց գլխին և դուրս գնաց» (ՆԴ, 151)։ «Կոմիտասի երաժշտությունը մեղ տեղափոխում է մեր պատմության խորքերը, հուզում, բայց նաև ոգևորում է ու տոգորում հավատով գալիքի հանդեպ»։

Առանձին խումբ են կազմում այն միավորյալ նախադասությունները, որոնցում տվյալ հարաբերությունը գերակշռում է ոչ թե քերականական արտահայտությամբ, այլ ներքին-տրամաբանական ընկալմամբ։ Այսպես, օրինակ, ըսված է՝ «Հարգում էինք նրան, հպարտանում էինք նրանով, բայց չէինք սիրում» (ՀՔ, 1, 343) նախադասությունը միավորական և հակասման հարաբերությունների հավասարաչափ ընդգրկումով կառուցվածք է։ Բայց իրականում հակասման հարաբերությունն այստեղ գերակշռում է, քանի որ վերջին բաղադրիչ նախադասությունը հավասար չափով հակադրվում է 1-ին և 2-րդ բաղադրիչներին։ Հենց այդ հակադրությունն էլ կազմում է բերված նախադասության բաղադրիչների ներքին-մտային հարաբերությունը։ Եվ, իրոք, այդ եռաբաղադրիչ միավորյալ նախադասությունը երկբաղադրիչ կառույցների տարալուծելու դեպքում նրա բովանդակությունը, հետևաբար նաև բաղադրիչ նախադասությունների միջև գործառվող հարաբերությունները (ներառյալ հակասմանը զուգակցող դիջականությունը) պահպանվում են։ Համմտ. «Հարգում էինք նրան, հպարտանում էինք նրանով, բայց չէինք սիրում» = «Հարգում էինք նրան, բայց չէինք սիրում», «Հպարտանում էինք նրանով, բայց չէինք սիրում»։ Ինչպես տեսնում ենք, քննված օրինակում միավորական հարաբերությունը գործառվում է երկու (1-ին ու 2-րդ), իսկ հակասման հարաբերությունը՝ երեք (1-ին ու 3-րդ, 2-րդ ու 3-րդ) բաղադրիչների միջև, ուստի ընդգրկման ծավալով գերակշռում է հակասման հակադրությունը։

Միավորյալ նախադասության մեջ հարաբերություններից մեկի գերակշռումը, ուրեմն, երբեմն էլ հատկանշվում է ոչ այնքան քերականորեն, որքան տրամաբանական ընկալմամբ։ Այս դեպքում հիմնականում գերակշռում է ներհակական հարաբերությունը։ Մասնավորապես

կազմվում են՝ ա) միավորական հարաբերություն+հակասման հարաբերություն, բ) միավորական հարաբերություն+ժխտման հարաբերություն, գ) տրոհական հարաբերություն+ժխտման հարաբերություն կառուցվածքի նախադասություններ, որոնցում գերակշռում է ներհակության տվյալ տարատեսակը։ Բերենք օրինակներ՝ ա) «Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսա, բայց լույսից անհրաժեշտ բան չգտա» (ԱԻ, 3, 259)։ բ) «Մերուժանի մասին գաղափար անգամ չուներ, նրան երբեք չէր տեսել, այլ լսել էր նրա անունը միայն» (ՐՍ, 415)։ գ) «Նրանք ոչ թե կգան կամ լուր կուղարկեն իրենց մասին, այլ միայն կլռեն»։

Բ. Անհավասարաժեք հարաբերություններին համապատասխան միավորյալ նախադասություններ

Կառուցվածքային ու իմաստային այլ յուրահատկություններով են հատկանշվում այն բազմաբաղադրիչ միավորյալ նախադասությունները, որոնցում համակցված հարաբերությունները հավասարարժեք չեն։ Այս նախադասությունների մասին, որպիսիք հիմնականում լինում են ներհակական ու տրոհական հարաբերությամբ, վերն արդեն խոսել ենք։ Այստեղ միայն ամփոփման կարգով նշենք, որ նման կառույցներում համապատասխան հարաբերություններից մեկը ոչ թե գերակշռում է, այլ գերիշխում է՝ պայմանավորված խոսքի նպատակադրմամբ. խոսողը (գրողը) հաղորդակցման պրոցեսում առաջնությունը տալիս է տվյալ հարաբերությանը։ Այս դեպքում խախտվում է համապատասխան հարաբերությունների հավասարարժեքությունը, և դրանցից մեկը առաջնային պլան է մղվում՝ դառնալով գերիշխող, հետևաբար նաև նախադասության կառուցվածքային տարբերակման հիմունք հանդիսացող հարաբերություն[14]։ Դրա հիման վրա միավորյալ նախադասությունը բաժանվում է ներհակական կամ տրոհական հարաբերությամբ կապված երկու անդամի կամ եզրի, որոնք դառնում են բարդության անմիջական կազմիչները, իսկ նրանց միջև գործառվող գերիշխող հարաբերությունը՝ դրանք կապող հարաբերությունը։ Գերիշխող հարաբերությունը ստանում է գործառական, հետևաբար նաև հաղորդակցական առավել կարևոր նշանակություն։ Ինչ վերաբերում է միավորյալ նախադասության բաղադրյալ եզրի կամ եզրերի ներսում արտահայտվող հարաբերությանը, այն գերիշխող հարաբերության համեմատությամբ կազմում է ստորին օղակ՝ ամբողջ նախադասության մեջ ստանալով երկրորդական, ածանց-

14 Սա բնավ չի հակասում միավորյալ (և ընդհանրապես բարդ համադասական) նախադասության բաղադրիչների համազորությանը կամ համադասությանը։

յալ դեր ու նշանակություն։ Միավորյալ նախադասության պարզ կազմությամբ եղրը տվյալ (գերիշխող) հարաբերությամբ կապվում է բաղադրյալ եղրի բոլոր բաղադրիչ նախադասություններին միասին վերցրած (ներառյալ այս վերջինները կապող հարաբերությունը)։ Այսպես՝ «Այծերը քարի ծերպին նոսր մացառի կանաչ տերևները չեն ուտում, խլշած նայում են ներքև, ձորի անդունդին և մկկում» (ԱՒ, 1, 90) կառույցն ունի երկանդամ կամ երկեղր կառուցվածք։ Ընդ որում, վերջին երկու բաղադրիչները կազմում են մեկ ամբողջի՝ հակադրության երկրորդ եղրի ստորին օղակները, իսկ դրանք կապող միավորական հարաբերությունը՝ այդ օղակում գործառվող հարաբերությունը։ Մինչդեռ ժխտման հակադրությունը, որպես բարդության անմիջական կազմիչների միջև արտահայտվող հարաբերություն, ամենաբարձր աստիճանն է։ Եվ քանի որ ամբողջ նախադասության կառուցվածքը գնահատվում է այդ անմիջական կազմիչների միջև գործառվող հարաբերությամբ, ուստի բերված կառույցը ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասություն է։

Այսպիսով, անհավասարարժեք հարաբերությունների համատեղմամբ միավորյալ նախադասությունները, որոնցում շարահյուսական հարաբերությունները տարբեր աստիճանի վրա են գտնվում, պետք է գնահատել տվյալ գերիշխող հարաբերությամբ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., *Աշխարհաբարի քերականություն*, Վաղարշապատ, 1906։
2. Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն*, Վաղարշապատ, 1912։
3. Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965։
4. Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Երևան, 1953։
5. Աբրահամյան Ա. Ա., *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962։
6. Աբրահամյան Ա. Ա., *Ժամանակակից հայերենի կերպավորության վերլուծական մի քանի դրսևորումների բնութագրման փորձ*, ԼՀԳ, Երևան, 1972, № 10։
7. Աբրահամյան Ա. Ա., *Վերլուծականությունը արդի հայերենի տարբեր մակարդակներում*, ՊԲՀ, Երևան, 1972, № 3։
8. Աբրահամյան Ս. Գ., *Արդի հայերենի դերանունները*, Երևան, 1956։
9. Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր*, Երևան, 1962։
10. Աբրահամյան Ս. Գ., *Չեզոքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1965։
11. Աբրահամյան Ս. Գ., *Աշակերտի խոսքի զարգացումը*, Երևան, 1973։
12. Աբրահամյան Ս. Գ., *Ժամանակակից հայերենի քերականություն*, Երևան, 1974։
13. Աբրահամյան Ս. Գ., *Հայոց լեզու. բառ և խոսք*, Երևան, 1978։
14. Աբրահամյան Ս. Գ., Վերդյան Բ. Հ., Քոսյան Վ. Ա., *Հայերեն լեզվի դասագիրք*, Երևան, 1966։
15. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., *Հայոց լեզու, մաս Բ, Շարահյուսություն*, Երևան, 1975։
16. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օճանյան Հ. Ա., *Ժամանակակից հայոց լեզու, հ. 2*, Երևան, 1974։
17. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օճանյան Հ. Ա., Բաղինկյան Խ. Գ., *Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն*, Երևան, 1976։
18. Աբայան Է. Ռ., *Լեզվի շարահյուսական մակարդակի միավորը և նրա ձևաբանական արտահայտությունը*, ԲԵՀ (հաս. գիտ.), Երևան, 1967, № 2։
19. Աբայան Է. Ռ., *Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը*, Երևան, 1982։
20. Ալեքսանյան Զ., *Բազմաբարդ նախադասության ուսուցումը*, ՍՄ, Երևան, 1956, № 9։
21. Ամիրյան Ա., *Քերականական վերլուծությունները 5—8-րդ դասարաններում*, Երևան, 1961։
22. Աղայան Է. Բ., *Հայ լեզվաբանության պատմություն, հ. հ. 1—2*, Երևան, 1958—1962։

23. Աղայան Է. Բ., Լեզուն իբրև համակարգ և իբրև կառուցվածք, ԲՅՀ (հաս. գիտ.), Երևան, 1972, № 2։
24. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967։
25. Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։
26. Այտընյան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866։
27. Առաքելյան Վ. Դ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958։
28. Առաքելյան Վ. Դ., Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964։
29. Առաքելյան Վ. Դ., Ներածություն «Հայերենի շարահյուսության», Երևան, 1959։
30. Առաքելյան Վ. Դ., Հայերենի պարբերությունը, Երևան, 1968։
31. Առաքելյան Վ. Դ., Կրկնության արվեստի մի քանի առանձնահատկությունների մասին, ՍԳ, Երևան, 1969, № 1։
32. Առաքելյան Վ. Դ., Դրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975։
33. Աստուրյան Մ. Ս., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959։
34. Աստուրյան Մ. Ս., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. հ. 2—3, Երևան, 1973—1977։
35. Աւետարանեան Ա., Տարրական քերականութիւն հայոց աշխարհաբար լեզուի, Ալեքսանդրապօլ, 1903։
36. Բաղդասարյան Էմ., Միավորյալ նախադասությունների և բացահայտիչ-բացահայտյալի կնոտադրությունը, ՀԼԴԴ, Երևան, 1978, № 1։
37. Բարսեղյան Հ. Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953։
38. Գաբեզիձյան Գ. Լ., Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։
39. Գաբեզիձյան Գ. Լ., Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1984։
40. Գյուլբուդաղյան Ս. Վ., Քերականության ուսուցման մի քանի հարցերի մասին, ՍՄ, Երևան, 1955, № 3։
41. Գյուլբուդաղյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։
42. Գյուլբուդաղյան Ս. Վ., Ակնարկներ հայոց լեզվի մեթոդիկայի, Երևան, 1970։
43. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978։
44. Գրիգորյան Ա.Հ., Շարահյուսական մի քանի հարց, ՀԼԴԴ, Երևան, 1970, № 3—4։
45. Եղիազարյան Հովհ., Քերականութիւն հայկական լեզուի, Մոսկով, 1839։
46. Թումանեան Հար., Հայոց աշխարհաբար լեզուի համաձայնութիւն, Թիֆլիս, 1911։
47. Իշխանյան Ռ. Ա., Բանավոր լեզվական արվեստը, Երևան, 1965։
48. Իշխանյան Ռ. Ա., Լեզվաբանական վերլուծության սահմանը արդի հայերենի շարահյուսական մակարդակում, ՀԼԴ, 1977, № 12։
49. Ոլոգբյան Ֆ. Հ., Ոճաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները, Երևան, 1971։
50. Ոլոգբյան Ֆ. Հ., Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երևան, 1976։
51. Ծրագրեր հայոց լեզվի և գրականության (4—8-րդ դաս. համար), Երևան, 1972։
52. Կարապետյան Ա. Ս., Միավորյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները, «Թեզիսներ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի 4-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների», Կիրովական, 1976։

53. Կարապետյան Ա. Ս., Հակասման հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳԴ, Երևան, 1980, № 4։

54. Կարապետյան Ա. Ս., Տրոհական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳԴ, Երևան, 1980, № 6։

55. Կարապետյան Ա. Ս., Հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳ, Երևան, 1981, № 5։

56. Կարապետյան Ա. Ս., Ստորոգյալի զեղչումը միավորյալ նախադասության մեջ, Երևան, 1982, № 1։

57. Կարապետյան Ա. Ս., Ժխտման հարաբերությամբ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳ, Երևան, 1982, № 9։

58. Կարապետյան Ա. Ս., Բարդ համադասական նախադասության դասակարգման հարցի շուրջը, «Ենգիսներ Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի երիտասարդ գիտնականների ու մանկավարժների հանրապետական գիտական նստաշրջանին», Երևան, 1982։

59. Կարապետյան Ա. Ս., Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳԴ, Երևան, 1983, № 3։

60. Կարապետյան Ա. Ս., Ստորոգյալի կրկնությամբ միավորյալ նախադասության ոճական նշանակությունը, ՀԼԳ, Երևան, 1983, № 11։

61. Կարապետյան Ա. Ս., Միավորյալ նախադասության ենթական, ՀԼԳԴ, Երևան, 1984, № 4։

62. Կարապետյան Ա. Ս., Միակազմ միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում, ՀԼԳ, Երևան 1985, № 10։

63. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1976։

64. Հարությունյան Հ. Ա., Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1978։

65. Հարությունյան Հ. Ա., Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983։

66. Ղազարյան Ս. Ղ., Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961։

67. Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954։

68. Ղարիբյան Ա. Ս., Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969։

69. Ղուկասյանց Հ., Քերականութիւն գրաբար լեզուի հայոց ի պէտս նորավարժից, Թիֆլիս, 1884։

70. Մալխասեան Ստ., Գրաբարի համաձայնութիւն, Թիֆլիս, 1892։

71. Մաեուկյան Ա. Ա., Խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, Երևան, 1969։

72. Մաեուկյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976։

73. Մարգարյան Ա. Ս., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966։

74. Մելիք-Թանգյան Ն., Աշխարհաբարի քերականութիւն, Շուշի, 1893։

75. Մխիթարյան Հ. Ն., Շարահյուսության ուսուցումը ութամյա դպրոցում, Երևան, 1962։

76. Մխիթարյան Հ. Ն., Ստ. Պալասանյանի դերը հայոց լեզվի շարահյուսության մշակման գործում, ՀԼԳԴ, Երևան, 1970, № 3—4։

77. Շալուեց Ռ. Ն., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979։

78. Պալասանեան Ս., Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, Թիֆլիս, 1874։

79. Պալասանեան Ս., Քերականութիւն մայրենի լեզուի, Տփխիս, 1894։

80. Պապոյան Աւտ. Հ., Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1964։

81. Պապոյան Աւտ. Հ., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Երևան, 1970։

82. Պապոյան Աւտ. Հ., Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976։

83. Պառնասյան Ն. Ա., Մատրադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961։

84. Պառնասյան Ն. Ա., Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, 1964։

85. Պառնասյան Ն. Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։

86. Պառնասյան Ն. Ա., Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան,

87. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975։

88. Պողոսյան Ա., Նախադասության դետերմինացվող և չդետերմինացվող անդամներ, ԼՀԳ, Երևան, 1974, № 8։

89. Պողոսյան Պ. Մ., Բայի նղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959։

90. Պողոսյան Պ. Մ., Հայոց լեզու, ուսումնաժանդակ ձեռնարկ, Երևան, 1976։

91. Ջահուկյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954։

92. Ջահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, հ. հ. 1—2, Երևան, 1960—1962։

93. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։

94. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։

95. Ջահուկյան Գ. Բ., Դրարարի քերականության պատմություն, Երևան, 1974։

96. Ջահուկյան Գ. Բ., Ալղաթյան Ֆ. Խ., Հայոց լեզու. ոճաբանություն, Երևան, 1976։

97. Չոբաշյան Է. Մ., Դրականության տեսություն, Երևան, 1974։

98. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։

99. Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1978։

100. Վանեցյան Գ., Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Երևան, 1956։

101. Վանեցեան Գ., Դպրոցական քերականութիւն, Այնթափ, 1906։

102. Վերդյան Բ., Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970։

103. Տեր-Գևոնդյան Ն., Մայրենի լեզուի քերականութեան տարերքը, առաջին և երկրորդ մասը, Թիֆլիս, 1906։

104. Քյուրքչյան Ա. Ն., Անվանական բազադրյալ ստորոգյալը և նրա խնդիր ու պարագա լրացումները, Երևան, 1975։

105. Քյուրքչյան Ա. Ն., ԵՄ էական բայն իբրև ինքնուրույն ստորոգյալ, ԲԵՀ, Երևան, 1979, № 1։

106. Քոսյան Վ. Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1976։

107. Քոսյան Վ. Ս., Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976։

108. *Адмони В. Г.*, Введение в синтаксис современного английского языка, Москва, 1955.

109. *Адмони В. Г.*, Типология предложения и логико-грамматические типы предложения, ВЯ, 1973, № 2.

110. *Апресян Ю. Д.*, Идеи и методы современной структурной лингвистики, Москва, 1966.

111. *Арутюнова Н. Д.*, Предложение и его смысл, логико-семантические проблемы, Москва, 1976.

112. *Атаян Э. Р.*, Проблемы и методы структурного синтаксиса, Ереван, 1962.

113. *Атаян Э. Р.*, Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964.

114. *Ахманова О. С.*, Словарь лингвистических терминов, Москва, 1966.

115. *Ахманова О. С., Микаелян Г. Б.*, Современные синтаксические теории, Москва, 1963.

116. *Балли Ш.*, Общая лингвистика и вопросы французского языка, Москва, 1955.

117. *Бенвенист Э.*, Уровни лингвистического анализа, в кн. «Новое в лингвистике», вып. IV, М., 1965, стр. 439—449.

118. *Бондаренко А. В.*, Грамматическая категория и контекст. М., 1971.

119. *Будагов Р. А.*, К теории синтаксических отношений, ВЯ, 1973, № 1,

120. *Буслаев Ф. И.*, Опыт исторической грамматики русского языка, ч. 2, Москва, 1858.

121. *Белошапкова В. А.*, Современный русский язык, Синтаксис, Москва, 1977.

122. *Валгина Н. С.*, Синтаксис современного русского языка, М., 1978.

123. *Волгина Н. С., Розенталь Д. Э., Фомина Н. И., Цанукевич В. В.*, Современный русский язык, изд. 4, М., 1971.

124. *Васильева Н. М.*, Структура сложного предложения, Москва, 1967.

125. *Виноградов В. В.*, Введение. В кн. Грамматика русского языка, т. 2, ч. 1, 1954.

126. *Виноградов В. В.*, Основные вопросы синтаксиса предложения. В кн. «Вопросы грамматического строя», М., 1955.

127. *Виноградов В. В.*, Русский язык, Москва, 1947.

128. *Вомперский В. П., Панюшева М. С., Почтенная Т. Г., Солганик Г. Я., Формановская Н. И.*, Современный русский язык, ч. 2, Синтаксис, изд. 2, М., 1976.

129. Вопросы грамматики, М.—Л., 1960.

130. Вопросы синтаксиса современного русского языка, Москва, 1950.

131. *Востоков А. Х.*, Русская грамматика по начертанию его же сокращенной грамматики полного изложения, изд. 2, сп. 5, 1835.

132. *Гвоздев А. Н.*, Современный русский литературный язык, ч. 2, Синтаксис, Москва, 1973.

133. *Горнунг Б. В.*, О характере языковой структуры, ВЯ, 1959, № 1.

134. Грамматика русского языка, т. 2, ч. 1, Москва, 1954.

135. Грамматика русского языка, т. 2, Синтаксис, Москва, 1960.

136. Грамматика русского современного литературного языка, Москва, 1970.
137. *Греч Н. С.*, Практическая русская грамматика, изд. 2, 1834.
138. *Гужва Ф. К.*, Современный русский язык, ч. 2, Москва, 1979.
139. *Золотова Г. А.*, О синтаксической форме слова («Мысли о современном русском языке», Москва, 1969).
140. *Звегинцев В. А.*, Язык и лингвистическая теория, Москва, 1973.
141. *Земский А. М., Крючков С. Е., Светлаев М. В.*, Русский язык, ч. 2, Синтаксис, Москва, 1971.
142. *Зинтер Л. Р., Строева Т. В.*, Современный немецкий язык, изд. 3, Москва, 1957.
143. Исследования по общей теории грамматики, Москва, 1968.
144. *Коротаева З. И.*, Академик *А. А. Шахматов* о положениях с однородными членами и о сложном предложении. Материалы архива АН СССР. В кн. Доклады и сообщения института русского языка. Вып. 1, М.—Л., 1948.
145. *Колшанский Г. В.*. Логика и структура языка, Москва, 1965.
146. *Коротков Н. Н., Панфилов В. З.*, О типологии грамматических категорий, ВЯ, 1965, № 1.
147. *Кусикян И. К.*, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959.
148. *Малащенко В. П.*, Детерминанты как общий второстепенный член предложения, РЯШ, 1971, № 5.
149. *Мещанинов И. И.*, Части речи и члены предложения. М.—Л., 1945.
150. *Мухин А. М.*, Структура предложения и их модели, Ленинград, 1968.
151. *Мухин А. М.*, Лингвистический анализ, теоретические и методологические проблемы, Ленинград, 1976.
152. *Овсянико-Куликовский Д. Н.*, Синтаксис русского языка. Спб, 1912.
153. *Панфилов В. Э.*, Языковые универсалии и типология предложения, ВЯ, 1974, № 5.
154. *Пешковский А. М.*, Русский синтаксис в научном освещении, изд. 6, Москва, 1938.
155. *Пешковский А. М.*, Интонация и грамматика. Известия русского языка и словесности, Москва, 1928.
156. *Поспелов Н. С.*, Выражение временного соотношения между однородными глагольными сказуемыми в строе слитного предложения. В кн. сб. статей по языкознанию (профессору МГУ В. В. Виноградову-акад.) изд. МГУ, Москва, 1958.
157. *Потебня А. А.*, Из записок по русской грамматике, т. 1—2, изд. 2, Харьков, 1888.
158. *Почтенная Т. Г.*, Русский язык, Синтаксис, Москва, 1977.
159. *Распопов И. П.*, О так называемых детерминирующих членах предложения, ВЯ, Москва, 1972, № 6.
160. *Розенталь Д. Э.*, Справочник по правописанию и литературной правке изд. 2, Москва, 1971.
161. *Руднев А. Г.*, Синтаксис осложненного предложения, Москва, 1959.
162. *Руднев А. Г.*, Синтаксис современного русского языка, М., 1968.

163. Русская грамматика, т. 2, Синтаксис, Москва, 1982.
164. Русский язык. Энциклопедия, Москва, 1979.
165. *Реформатский А. А.*, Введение в языкознание, Москва, 1967.
166. *Скобликова Е. С.*, Современный русский язык, Синтаксис простого предложения, Москва, 1979.
167. Современный русский язык, ч. 2, Морфология, Синтаксис, Москва, 1964.
168. Современный русский язык, Синтаксис, под ред. проф. Е. М. Галкиной-Федорук, Москва, 1957.
169. Современный русский язык, ч. 2, Синтаксис, под ред. Д. Э. Розенталь, Москва, 1979.
170. Структурный синтаксис английского языка, Ленинград, 1972.
171. *Туманян Э. Г.*, Армянский язык, «Языки народов СССР», Москва, 1966.
172. *Финкель А. М., Беженов Н. М.*, Курс современного русского литературного языка, Киев, 1965.
173. *Хомский Н.*, Синтаксические структуры. В кн. «Новое в лингвистике», вып. 2, Москва, 1962.
174. *Шапинский Н. М., Распопов И. П., Тихонов А. Н., Филипов А. В.*, Современный русский литературный язык, Ленинград, 1981.
175. *Шапиро А. Б.*, Современный русский язык. Пунктуация, М., 1974.
176. *Шахматов А. А.*, Синтаксис русского языка, изд. 2, Ленинград, 1941.
177. *Шведова Н. Ю.*, Детерминирующий объект и детерминирующее обстоятельсто как самостоятельные распространители предложения, ВЯ, 1964, № 6.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա— *Ա. Դանալեանյան, Հայկական առածանի, Երևան, 1960։*
ԱՔ— *Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1975։*
ԱՔԸ— *Ա. Բակունց, Ընտիր երկեր, Երևան, 1955։*
ԱՒ— *Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. հ. 1, 3, Երևան, 1973, 1975։*
ԱՒԸ— *Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, Երևան, 1955։*
ԱՒՀ— *Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977։*
ԱՀԱ— *Ալազան, Հյուսիսային աստղ, Երևան, 1956։*
ԱՇ— *Ալ. Շիրվանզադե, Երկեր, հ. 4, Երևան, 1950։*
ԱՇՔ— *Ալ. Շիրվանզադե, Քաոս, Երևան, 1976։*
ԲՆՀ— *«Բանբեր Երևանի համալսարանի» (ամսագիր)։*
ԲՀՍՁ— *Բ. Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962։*
ԳԷՔԴ— *Գ. Էմին, Քսաներորդ դար, Երևան, 1970։*
ԳՄ— *Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966։*
ԳՍ— *Գ. Սարյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան 1969։*
ԴՎՀ— *Դ. Դեմիրճյան, Վարպանանք, հ. 2, Երևան, 1968։*
ԵՁ— *Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962։*
ԵՁԸ— *Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1983։*
ԵՁԺ— *Ե. Չարենց, Ժողովածու, Երևան, 1973։*

ԷՋԴՀ— Էքերման, Ջրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975։

ԹՆԾ— Ա. Ամիրյան, Տ. Էլոյան, Հ. Մխիթարյան, Թևագրության նյութերի ժողովածու, Երևան, 1977։

ԾԾ— Հայկական ՍՍՀ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՀ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու (1961—1962 թթ.), հ. 9, Երևան, 1966։

ԾՀԼ— Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բագիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976։

ԼԱ— Լևո, Անի, Երևան, 1963։

ԼԳՆ— Լևո, Գեղարվեստական երկեր, Երևան, 1959։

ԼՀԳ— «Լրաբեր հասարակական գիտությունների» (ամսագիր)։

ԼՀՊ— Լևո, Հայոց պատմություն, Երևան, 1946։

ԼՏՍԿ— Լ. Տոլստոյ, Աննա Կարենինա, հ. 1, Երևան, 1957։

ԽԱ— Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959։

ԽԴՌԿ— Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը, Երևան, 1979։

ՀՔ— Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. հ. 1—6, Երևան, 1940—1960։ Ընտիր երկեր, Երևան, 1978։

ՀՔՍ— Հր. Քամարազյան, Սիամանթո, Երևան, 1964։

ՀԼԳԻ— «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» (ամսագիր)։

ՀՋ— «Հայրենիքի ձայն» (շարաթաթերթ)։

ՀՍՍՐ— Հ. Սահյան, Սևզա՛մ, բացվի՛ր, Երևան, 1976։

ՀՍՔՏ— Հ. Սահյան, Քարափների երգը, Երևան, 1968։

ՀՔ— Հր. Քոչար, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1975։

ՀՔՄՏՋ— Հր. Քոչար, Մեծ տան զավակները, հ. 1, Երևան, 1979։

ՄԱՀԼՏ— Մ. Արևշյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։

ՄԳՄ— Մուրացան, Գեորգ Մարզպետունի, Երևան, 1977։

Մուր.— Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1951։

ՄՄ— Մ. Մնձարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1981։

ՄՆԵՏ— Մ. Նալբանդյան, Երկու տող, Երևան, 1954։

ՄՓՀՔ— Մ. Փափազյան, Հուշի թևերով, Երևան, 1978։

ՆԴ— Նար-Դոս, Երկեր, Երևան, 1977։

ՆՋՀ— Ն. Զարյան, Հացալվան, Երևան, 1947։

ՆՋԱԴ— Ն. Զարյան, Արա Գեղեցիկ, Երևան, 1967։

ՆՊՔՀԺՀ— Ն. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979

ե. ա.— նույն տեղում։

ՇՏ— Շիրին, Տաղեր, Երևան, 1956։

Շիրվ.— Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. հ. 4, 8, Երևան, 1934, 1950։

ՊԲՀ— «Պատմա-բանասիրական հանդես» (ամսագիր)։

ՊՊԵԾ— Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1953։

ՊՍ— Պ. Սևակ, Երկեր, հ. հ. 1—5, Երևան, 1972—1974։

ՍԱՃՀ— Ս. Այվազյան, Ճակատագիրն հայոց, Երևան, 1967։

ՍԳ— «Սովետական գրականություն» (ամսագիր)։

ՍՋՄԿՊ— Ստ. Զորյան, Մի կյանքի պատմություն, Երևան, 1955։

ՍՋՀՔ— Ստ. Զորյան, Հայոց բերդը, Երկեր, հ. 6, Երևան, 1962։

ՍԽԱ— *Ս. Խանզադյան, Ավանդաւոն, Երևան, 1976։*
ՍԽՄՍ— *Ս. Խանզադյան, Մխիթար սպարապետ, Երկեր, հ. 3, Երևան, 1968։*
ՍՄ— *«Սովետական մանկավարժ» (ամսագիր)։*
ՍՀ— *«Սովետական Հայաստան» (օրաթերթ)։*
ՍՀԱ— *«Սովետական Հայաստան» (ամսագիր)։*
ՎԱ— *Վ. Առաքյան, Սևանի ափին, Երևան, 1951։*
ՎԳԴ— *Վ. Գաբրիելյան, Դիմանկարներ, Երևան, 1976։*
ՎԴ— *Վ. Դավթյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1975։*
ՎԴԱՄ— *Վ. Դավթյան, Անկեզ մորենի, Երևան, 1972։*
ՎՊՀԲԱ— *Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Երևան, 1978։*
ՎՏ— *Վ. Տերյան, Երկեր, հ. հ. 1—3, Երևան, 1960—1966։*
ՎՓ— *Վ. Փափազյան, Երկեր, հ. 3, Երևան, 1958։*
ՎՓՀՀ— *Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, հ. 1, Երևան, 1956։*
ՎՓՍՊ— *Վ. Փափազյան, Սրտիս պարտքը, Երևան, 1959։*
ՐԵԺ— *Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. հ. 1—4, Երևան, 1955—1956։*
ՐՍ— *Բաֆֆի, Սամվել, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1956։*
ՔԴՕ— *ՀՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Երևան, 1978։*
ՖՎՄԼՔՕ— *Ֆ. Վևրֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964։*
ВЯ—«Вопросы языкознания».
РЯШ—«Русский язык в школе».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Առաքյան. Պարբերության կազմակերպման առանձնահատկությունները վիսկոզի բանաձևրական տեքստում 5
Ռ. Մ. Թոխմախյան. Հայերենի հնչույթների կապակցելիությունը դրային և արտասանական մակարդակներում 69
Ղ. Լ. Ստեփանյան, Գ. Կ. Ղազաճյան, Ե. Ս. Սահինյան, Գ. Հ. Սուքիասյան. Հաշվողական տեխնիկայի կիրառումը տեքստի արշակիացման հարցում . 136
Ա. Ս. Կարապետյան. Միավորյալ նախադասությունը ժամանակակից հայերենում 152
Ներածություն 152
Գլուխ առաջին
Միավորյալ նախադասությունը քերականագիտական մտքի գնահատմամբ . . 158
Գլուխ երկրորդ
Միավորյալ նախադասությունը բարդ համադասական նախադասության հատկագրում 173
Գլուխ երրորդ
Երկկազմ միավորյալ նախադասության 201
Գլուխ չորրորդ
Միակազմ միավորյալ նախադասության 267
Գլուխ հինգերորդ
Միավորյալ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները 292